



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտերջագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել կյուրը զանկաջած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա կյուրը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material





5tn  
917



ՄԵՐՄՆԵԿԵՆ ԵՒ ԲԵՐՈՅԵԿԵՆ

ՇՐՐԿՐՈՒԹՅՈՒՆ

Ա. Կարս

ԿՈՄԲԻ



Այս Կոմբի-Պատուհանը բնական և Էղեմբուրգի սրբանի թմբակեան Համալսարանի անդամի:

ՅԱԻԵԼՈՒՍԹԻ ՏՊԱԳՐՈՂԻ

- Ե. Յուցակ յատուկ անուանց Հայոց:
- Բ. Տիւրքի տեսուիթիւնը բոյսերի, կենդանիների և մարդերի մէջ արական և իգական սերմեր յառաջանալու մասին:
- Գ. Որորոցի (օրորոցի) երգեր:
- Դ. Ըղեմասկ պարզ տոկոսի, հարիւրին 4% 5% և 6%, մէկ բուրձի դրամագլխից սկսուած մինչև մէկ միլիոն և նոցա շահը մէկ օրից մինչև մէկ տարի:

Հայ անունը ոչ թէ դարձնելով իմանալ կու ճարձի Սէյնազ:

Ս. ՊԵՏԵՐՐՈՒԹՅՈՒՆ

ВЪ ТИПОГРАФИИ О. И. ВАКСТА, НЕВСКИЙ, 71.



720

Մանկաիք, զիս Հայոց հողն ու ջուրն սնուցել,  
Ես այն հողն ու ջուր սրտով եմ սիրել,  
Հայրենեաց հարուստ է հողն, ջուրն անուշ,  
Քանց օտար վարդ, քաղցր հայրենեացն փուշ:

Չեզ կ'ասեմ մանկաիք սիրուն, նազելիք,  
Որոնց է բնական Հայոց աշխարհիկ,  
Մի ուրանայք զերկիրդ և զազգդ սիրուն,  
Օտան արմատով ծառ, տուն հիմամբ է տուն:

Հ. Ղեւոնդ Ալիշանեան,  
Ղենեակու Միխիմարեան վարդապետ:

39 918

4 917 - 60

ԲԱԶՄԵՐԱՆՑ ՄՕՐՍ

ԵՂԻՍԱԲԷԹ ԱՐՐԱՀԱՄԵԱՆԻ

ԸՆԴՈՒՆՆԵԼԻ ՅԻՇԱՏՍՊԻՆ ՆՈՒԷՐ:

Շնաւ մարտին 1807 թուականի, հանգեաւ 'ի Տէր <sup>23 մայիսի</sup> <sub>4 յունիսի</sub> 1865 թուականի, յիսուն և ութ տարեկան հասակի; և թող երեք զաւակ. Միքայէլ—35 տարեկան, Ըրշակ-Նիկողայոս—24 տարեկան և Սաւառա 20 տարեկան հասակի; թաղեցաւ Տփլիսու Սերայի գերեզմանատանը, եկեղեցւոյ արեւմտեան կողմը:

ՅԻՐԻՄԻ ԱՐՅԱՆԱԳԻՐԸ:



Կրթաց ձայնի վերջին փողոյ  
 Կրթեալ զիս, Տէր, յայսմ հողոյ;  
 Եւ իմաստուն սուրբ կուսանաց,  
 Ի՞նչ զիս 'ի տուն քոյ հարսանեաց:

Վանի որ քեզ միտ ենք ածում—սրաներիցս արիւն է վազում,  
 Ըմեն գիշեր մեր կողինքը դառն արցունքով թացվում,  
 Վաշած ցաւերդ եօթնադիտեան վիշապի պէս խայթում,  
 Հազար տեղից սրաներս ծակում, հազար վէրքեր բացանում:  
 Բայց և այնպէս տափերն կանանչ, սարերն ամեն ծաղկել են;  
 Ըմեն բաղչում վարդ, մանուշակ, ռեհան, սմբուլ բացվել են.  
 Ըփսոս, մեր բախտի օրերումն թառամեցար մեր մեղքէն,  
 Ըաղմալաստակ, անմխիթար, անգին մայր մեր Աղիսարէթ ջան:



## ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՏԵՂ:

Երբ որ իմաստութեան սէրն  
Մէկ ազգի միջին տարածուեց,  
Իմացիր, երկնային Տէրն  
Գլխած, նորա բազուր բացուեց:

Սէյեազ:

Կումրի այս շարագրութեան բովանդակութիւնը և յառաջաբանութիւնը կարգալով, իւրաքանչիւր մտածող մարդ կհասկանայ, թէ ինչ նպատակով առաջարկեցինք մերայնոց այս գրքի հայերէն թարգմանութիւնը: Մենք կամենումէինք մեր կարողութեան շահով նպաստամատոյց լինել հայ ժողովուրդի մէջ տարածելու ուսումնական առողջ գաղափարներ, վերաբերութեամբ երեսանների ֆիզիկական և բարոյական դաստիարակութեան, դեռահաս մեռնողների թիւը պակասացնելու, և առ հասարակ ազատ պահելու այն, մեծ մասամբ անուղղելի, սխալներից, որ սակաւակիրթ ազգերի մէջ կապակից են ծննդեան և գալոց սերունդի դաստիարակութեան հետ:

Ընձամբ կրելով այդպիսի դժուարութիւնք, մենք յանձնառու եղանք իրագործել մեր այս գիտաւորութիւնը:

1865 թ. Ըստուած պարգևեց մեզ զաւակ. շունենալով սկզբնական տեղեկութիւնք անգամ նորածնի ինամարկութեան մասին, մենք ստիպուած էինք գրել թէ ամեն ժամ դիմել բժշկի և մանկաբարձի խորհուրդներին: Ըհա գտանվելով այսպիսի աննախանձելի դրութեան մէջ, մեզ հասկանալի եղաւ, եթէ մենք,—վայելելով փոքրի շատէ յարմարութիւնք—բնակվելով Պետերբուրգի պէս քաղաքում, ուր ամենայն հնար կարող ենք ունենալ ձեռքի տակ,—հանդիպումենք այսպիսի դժուարութեան, այն ժամանակ երեակայեցինք յայտնապէս, թէ ի՞նչ դրութեան մէջ պէտք է լինին մեր համազգայիններից շատերը,—որոնք, երկրիս զանազան տեղերում ցրուած

գոյով, ապրումեն կարօտութեան մէջ, զուրկ գիտութեան օգնութիւնից և գրեթէ իւրեանց փորձով միայն գոհ լինելու ստիպուած: Այս իրողութիւնքը աչքի առաջ ունենալով, ուխտ արինք, ըստ շափու կարողութեան, օգուտ տալու մերայնոց, հրատարակելով մի այնպիսի գիրք, որ գիւրացուցանէր երեխայի հոգևոր և մարմնաւոր դաստիարակութիւնը: 1866 թ., յունվարի սկզբում, մենք առաջարկեցինք Սիքայէլ Տէր Գրիգորեանցին (\*Ասիիջևանցի, նախկին աշակերտ Լ. Ուսում.), թարգմանել Ալեստի շրագրութիւնը. «Объ угодѣ за божьины дѣтими».

Հանգամանքները արգելք եղան մեր առաջարկութիւնը շուտով իրագործելու, մանաւանդ այն պատճառով, որ պ. Տէր Գրիգորեանցը, առ ժամանակ, ստիպուած էր իւր հայնէիքը գնալ: 1866 թ. յուլիսի մէջ, նա նամակ գրեց մեզ, այն մեր նորան առաջարկած գրքի թարգմանութեան մասին, բայց որովհետև այդ ժամանակամիջոցին դուրս եկաւ սուսերէն լեզուով Աոմբի երեւելի շրագրութիւնը, մենք այնուհետև առաջարկեցինք պ. Տէր-Գրիգորեանցին սկսել այդ շրագրութեան թարգմանութիւնը, 1867 թ., մայիսի մէջ, առաջի շորս թերթը տպուեցաւ Տրանշէլի տպարանում; յետոյ, Գեկտեմբերի վերջերում, սկսեցինք շարունակել տպագրութիւնը Բակստի տպարանում; ահա այժմ, 1868 թ. այս մտաւ ամուսն, ամբողջ գրքի տպագրութիւնը վերջապէս աւարտուեցաւ: Ընդ ամենը տպուած է 1,210 օրինակ: Աոմբի տպագրութեան, նոյնպէս Լաբուէի «Ղզգային կրթութեան» վերնագրով տետրակի տպագրութեան համար, մենք, մեր հաշուով, գնեցինք Լեմանի ձուլարանից եօթն պուգի մօտ հայոց տառեր, իսկ մի քանի տեսակ բոլոր տառեր—գլխատառեր և ծաղկատառեր, առինք Հովհաննէս Ստեփանոսեան Լնանեանցից, որ սա ձեռք էր ձգած փարիզում պ. Լըրամից: Տասերը մեզ նստաւ 244 սուրբի: Լաբուէի թարգմանութեան տպագրութիւնը 1,200 օրինակ—նստաւ 195 ր.: 600 օրինակ տուած է թարգմանչին; 300 օրինակ ուղարկուած է զանազան հայկական դպրոցներ և զանազան անձանց.—Լջմիածին, Տփիսիս, Գորի, Վուլթայիս, Տրապեզունդ, Կ. Պօլիս, Սօլդո-Սլալաքիս, Սեննա, Սենեակի, Փարիզ և այլ քաղաքներ: Դասուս մնաց 300 օրինակ; գինն է 40 կ. կամ 1 ֆրանկ 50 սանթիմ:

Աոմբը, հանգերձ յաւելուածներով, տպուած է 1210 օրինակ: Սորա տպագրութիւնը նստաւ, վարձատրութեամբ թարգմանչին,



առանց ճանապարհի ծախսի, 805 բուրլի. Գինն է մի բուրլի 20 կուպէկ կամ 4 Փրանկ 80 սանտիմ, յաւելուածներով հանգերձ:

Գրապաճառներին և 25 օրինակից աւել անոնցներին լինումէ զիջումն 20<sup>0</sup>/<sub>0</sub>:

Այս տեղեկութիւնքը հաղորդեցինք այն նպատակով, որ մեր համազգայինքը ինքեանք տեսնեն, որ այս գրքերը հրատարակելու շարժառիթը չէ եղել մեր անձնական շահը, այլ մեր փափազը, ըստ չափու կարողութեան, ձեռնառու լինել մեր ազգի յառաջադիմութեանը լուսաւորութեան ասպարէզում: Այս գիրքը մասամբ կարող է օգտակար լինել և նոցա համար, որոնք կամենումեն այս տեսակ բաներ գրել կամ թարգմանել, անտարակոյս, աւելորդ չի լինիլ այսպիսի գրքեր թարգմանելու կամ այսպիսի նիւթերի վերայ մի բան գրելու ժամանակ տեսնել, թէ ինչպէս թարգմանել է թարգմանիչը գիտութեան վերաբերեալ զանազան բառերը և դարձուածները: Սեփական զգուշացումով են պատահել գիտնական բառերը ճիշդ նշանակութեամբ թարգմանելու: Շատ քիմիական և բժշկական բաների թարգմանութիւնքը հարցուցել ենք Ալենայի և Վարիզի մէջ կացող Սիւրբարեանց վարդապետներին: Կոստ չկայ, որ Աոմբի շարագրութիւնը գրած է համեմատ այն ազգի կարօտութեանց, որիմէջ հեղինակը ինքը պարել է. ասել է թէ մեզ առաւել համապատասխան կլինէր . . . . եթէ մի այսպիսի շարագրութիւն գուրս գար հայերի մէջ այնպիսի մարդու ձեռքով գրած, որ, բացի տեղեակ լինելուց բժշկութեան, մանաւանդ Ֆիզիոլոգիային, նաև հիմնաւորապէս ծանօթ լինէր մեր հայերի սովորութեանց, կանխակալ կարծիքներին և երեխաների դաստիարակութեան մասին ունեցած գաղափարների հետ; բայց որովհետև մեր այդ յոյսը շուտով իրագործելու հնար չունինք, մանաւանդ միտ ղնելով, որ մեր ազգը, զանազան տեղեր ցրուած լինելուն պատճառով, ունի զանազան սովորութիւնք և նախապաշարմունք, որ գրեթէ անկարելի է և անհնարին մի մարդու գիտնալ, այդ բոլորը, մանաւանդ այժմս, մնաց որ ներկայումս շատ և շատ զգուշար է հայերի հաղորդակցութիւնը միմեանց հետ, այս պատճառով կարծումենք, որ Աոմբի այս գիրքը անկասկածելի օգուտ կտայ նոցա, որոնք կաշխատեն իմաստասիրել և իւրացուցանել սորա բովանդակութիւնը, մանաւանդ որ ընդհանուր ֆիզիոլոգիական օրէնքները, որոնցից կախ է մեր կազմուածքի աճեցողութիւնը, միօրինակ են բոլոր կլիմաների (օդաբաժին) մէջ:

Ունենալով այս բոլորը մեր աչքի առաջ, նմանապէս և անուանի փիլիսոսփայ Րէկոնի խօսքերը. — «Մենք բանից աւելի մեր վերայ ազդեցութիւն անողը սովորութիւնն է, ուրեմն պէտք է աշխատենք գոնէ մեզ լաւ բաներու վարժեցնենք, եթէ որ չենք ուզում ախտաւոր լինել և դորա բանութեան տակ նուաճիլ, որ, քան ամեն բընաւոր, աւելի անողը է»:

«Ունայնամիտ մարդը, գիտութիւնը արհամարհում: պարզապիտը յարգում և զարմացմամբ գովում, իսկ իմաստունը ընդունում և գործ է դնում, միշտ աշխատելով պատուել»:

«Կարգալը, իմաստուն և խելօք մարդերի հետ զրուցել է, որոնցից միշտ մարդս բան կարող է սովորել; իսկ աշխարհի հետ կենցաղավարելը, գրեթէ խենթերի հետ խօսակցիլ ասել է, որոնց հետ որչափ աւելի խօսիս, այնչափ խելքդ աւելի կցնդեցնես»: (Շայերլէն թարգ. «Բազմավէպի» 1860 թուականի, եր. 357)—մեր կըցանկայինք, որ բոլոր ուսումնասէրք և ազգասէրք աշխատէին այս գրքի մէջ պարունակուած տեղեկութիւնքը տարածել մեր ժողովուրդի մէջ, թէ մասնաւոր ընթերցանութեամբ, թէ հրատարակական: (Րիմակի համար. դպրոցների վերին դաստան աշակերտների համար կարելի էր նշանակել հրատարակական գատախօսութիւնք այս գրքի բովանդակութիւնը բերանացի պատմելու: Մեր սրբակրօն քահանայքը ևս մեծապէս կարող էին նպաստամատոյց լինել այս գործին, եթէ քաջալերութիւն ստանային վիճակաւոր առաջնորդներից, ծուխի նշանաւոր անդամներից և այլն: Մայրապէս, մի գիրքը կարող էր ոչ սակաւ օգուտ բերել բազմաթիւ չքաւոր և անգրագէտ հայերին: Մո հասարակ, տարածել մեր ազգի մէջ ճիշդ տեղեկութիւնք ընդհանուր և մասնաւոր առողջարանութիւնից (гигиена), համարումներք անհրաժեշտ և ամենակարեւոր բաներից մինը, նորա մարմնական և բարոյական բարեկեցութեան համար, մանաւանդ քաղաքաբնակների համար, որովհետեւ առողջարանական պայմանները քաղաքների մէջ ամենաթշուառ և ամենաստիճախի դրութեան մէջ են գտնվում, բնակիչների ազիտութեան և անտարբերութեան պատճառով. . . . . :

Մյս մեր ասածը կատարելու, բնաւ դժուարութիւն չկայ քաղաքներում: Ղորա համար բաւական է նշանակել տօն օրերը, հրատարակախօսութիւնք, տեղական ծխական և քաղաքական դպրոցների շինուածքի մէջ; լաւ եզանակին, երեկոյեան ժամից յետոյ, եկե-

զեցու բակերում; կարելի է կատարել այդ բանը մի և նոյն ժամանակ զանազան տեղերում ևս: Արպէս զի ամենքը, և հոգևորականք ևս, հնարք ունենային լսել այդ դասախօսութիւնքը, վիճակաւոր առաջնորդները կարող են նշանակել առանձին ժամեր: Այդ դասախօսութեանց կարող էին պարագլել գլխաւորապէս բժշկական կրթութիւն ստացողները, յետոյ համալսարանում, գիմնազիայում և օեմինարիայում կրթուածները, կարճ ասեմ—բոլոր կրթուած մարդիկ: Սուսիարնակ հայերից այդ սրբազան գործը լցուցանել կամեցողները կարող են, բացի յատկապէս բժշկական գրքերից, իրրև նիւթ, ձեռքի տակ ունենալ այս Կոմբի մեր առաջարկած շարագրութիւնը, Լստէրքենը (Человѣкъ и сохраненіе его здоровья. Общепонятныя гигиеническія письма. Перев. съ нѣмецкаго. Спб. 1866 и 1867. II. 2 руб.), նմանապէս և հանգուցեալ բժշկապետ Բօնչէվսկիու ժողովրդական շարագրութիւնը, որ տպուած է Տփիսիում: Մեր հայերից հազարաւոր երիտասարդներ աւարտած են իրանց կրթութիւնը վերին և միջին ուսումնարաններում Սուսաստանի և Աւրոպայի մէջ. միթէ դոքա չեն կամենալ լցուցանել ազգի այս անհրաժեշտ և ամենազգալի կարօտութիւնը. յանուն լուսաւորութեան, մարդասիրութեան և ազգասիրութեան . . . . .

Յանկալի է նաև, որ մերայինք հասկանային վերջապէս դրացոցների մէջ կանոնաւոր գրատուններ հիմնելու անհրաժեշտ կարեւորութիւնը: Այդ նպատակով մենք տպեցինք Աբուլէյի, ֆրանսիացոց երևելի գիտնականի, շարագրութեան թարգմանութիւնը, ա) Ազգային կրթութիւն, բ) Ինքնակրթութիւն և գ) Ազգային կամ ժողովրդական գրատուններ: Վարան կպուցինք, իրրև յաւելուած, ցուցակ սուսերէն լեզուով տպած լուսագոյն գրեանց, որպէս զի կամեցողները գծուարութիւն չկրեն ընտրողութիւն անելու ժամանակ; նաև դոքա գինէրը և երևելի գրափաճառների հասցէնները ևս նշանակեցինք:

Ըստ գրքի մէջ, բացի Հեղինակի յաւելուածից, մենք տպեցինք յետագայ յօդուածները, իբրև առանձին յաւելուածք.

Ը. շայ յատուկ արական և իգական անունների ցանկը, շայոց պատմութիւնից առած:

Թ. թէ ինչպէս յառաջանումեն բոյսերի, կենդանիների և մարդերի մէջ արական կամ իգական սեռեր:

Պ. Ըղիւսակ պարզ տոկոսի, հարիւրին  $4\frac{0}{10}$ ,  $5\frac{0}{10}$  և  $6\frac{0}{10}$ , մէկ մանէթ գրամագլխից սկսուած մինչև մէկ միլիօն և նոցա շահք մէկ օրից մինչև մէկ տարի: Ըղիւսակին յաւելցրած է համառօտ մէկնութիւն տոկոսի աղիւսակը գործածելու մասին և աղիւսակ գլխաւոր ազգաց գրամների Պապղիոյ և Վ. Պօլոյ գրամներուն հետ բաղդատուած (վերջինը առած է Պ. Միքայէլեանցի շարագրած և պ. Ըրամի տպած թուարանութիւնից):

Պ. Որորոցի (օրորոցի) երգեր:

Չուրկ լինելով մի այնպիսի տոկոսի աղիւսակից, որով դիւրութեամբ կարելի լինի գտանել որ և է գրամագլխի շահք, որ և է ժամանակի համար, գործածելով միմիայն հասարակ թուարանական յաւելումն (որով կարելի է շատ ժամանակ վաստակել), կարծումենք, որ մեր առաջարկած շահու աղիւսակը անօգուտ չի լինիլ մերայնոց: Ունենալով աչքի առաջ, թէ որ և է գրամագլուխ ունեցողները, մեծ մասամբ, բնտանիքի տէր են: Միւս կողմանէ, որպէս զի Կոմրի շարագրութիւնը տեղի ունենայ վաճառականների խանութների մէջ ևս, որ այդ վաճառականները, աղատ ժամերում, ծանօթանային գրքի բովանդակութեան, տոկոսների աղիւսակը, իբրև յաւելուած, տպեցինք Կոմրի թարգմանութեան հետ միասին, նախատեսանելով մի և նոյն ժամանակ այն բոլոր հերքողութիւնքը, որ մեզ անելու են. թէ ինչու համար աղիւսակը առանձին տետրակով չտպեցինք:

Որանից յետոյ մենք տպելու ենք, Ըտօուծոյ օգնականութեամբ, լիակատար ժողովածու հայկական երգերի, որոնց մէջ կպարունակուին յետագայ հատուածները. 1) «Մանկական կամ որորոցի երգեր», 2) «Պատկական կամ ժողովրդական երգեր», 3) «Մզգասիրական երգեր», 4) «Խնճղիքի և սիրոյ երգեր», 5) «Տխուր երգեր», 6) «Խառն երգեր», 7) «Նօգևոր երգեր», 8) «Շայախօս առածներ և ասացուածներ»: Ըստ երգարանի նիւթերը քաղեցինք բոլոր եղած երգարաններից, օտանաւորներից և

չարականներից, Պետերբուրգ, Մոսկվա, Տփլիս, Պոլիս, Ալեքսանդր, Ալեքսանդր և այլ քաղաքներում, թէ առանձին և թէ օրագրիչների մէջ տպածներից: Բոլոր օրագրիչները և հեղինակները ամբողջապէս կնշանակուեն: Տիպը և թուղթը այս գրքի նման կլինին, դիրքը սակաւ ինչ փոքր, 25 թերթից առաւել, գինն մօտաւորապէս 80 կոպ. կնշանակուի: 25 օրինակից պակաս շառնողներին և գրավաճառներին 20% զեղումն: Արգելի սկզբում երկու յօդուած կը տպուին. 1) երգերի նշանակութիւնը և այլն և 2) շին հայկական ժողովրդական երգերի վերայ . . . . .

Այլ շարունակ արդէն մենք զիտաւորութիւն ունէինք տպել մի հայերէն այրենարան, որ մանկավարժութեան (պեդագոգի, педагогiя) գիտութեան արդի պահանջողութեանց համապատասխան լինելու, երկու մասն բաժանակ. 1 մասը վարժապետների համար, զոչ ց տալով կարգալ գրել սովորեցնելու բոլոր եղանակները, կրիտիկական քննութեամբ և 2-դ մասը աշակերտների համար: Եւրո խնդիրը լցուցանելու համար ուսաց գրականութեան մէջ, հանդերձ այլովք, ձեռնառու կարող են լինել «Աշխատել» լրագիրը 1861—1867 թ. Պատուսանի, Օջոտափի, Ուշինսկիու, Շարլոյսկիու և Կատրեա Մայկոյի այրենարանները: Աերկայումս այս տեղ, Պետերբուրգում, այդ գործի վերայ աշխատում մեր քանքարաւոր երիտասարդներից մինը: Ացանկայինք նորան կատարեալ յաջողութեամբ վերջացնել այս գործը:

Այնք մտածել էինք կանոնաւոր և վայելուչ գրութեան գասագիրք հրատարակելու մասին մի և նոյն գաղափարով: Սորա նիւթերը գրեթէ պատրաստ ունինք մեր ձեռքի տակ: Աթէ ժամանակը, հանգամանքները և միջոցները կը ներէն, կ'աշխատենք մեր կարողութեան շարիվ կատարել այս գործը: Անբնէք մեզ այս տեղ տակու, որ այս հարցը մենք բաւական երկար ժամանակ իմաստասիրել ենք, խորհրդակցելով այս գործին հիմնաւորապէս տեղեակ մարդոց հետ Պետերբուրգում և Աւրոպայում:

Բայց երբ վերջապէս մեր հայերը ձեռնամուխ կ'լինեն մի կա-

նոնաւոր վարժապետական ուսումնարան հիմնելու: Վիտցած լինինք, որ առանց գորա, ազգային լուսաւորութեան գործերի վերաբերութեամբ, միշտ պէտք է խորխարենք խաւարի մէջ: Ինչ դպրոցներ պէտք է լինին այն դպրոցները, որոնք շունին պատշաճաւոր կերպով պատրաստած վարժապետներ: Ազաղուց և շատ վաղուց արդէն հարկաւոր էր ձեռք դնել այդ գործին: Վա գլխաւոր և միակ միջոցն է ազգային դպրոցների յաջողութեան, սակ է և ազգային լուսաւորութեան: Ուստիարնակ հայերի համար այդ հիմնարկութիւնը (վարժապետական դպրոցը) յարմարագոյն է Ներսիսեան դպրոցի մէջ հաստատել: Ընդ դպրոցի մէջ ուսման ընթացքը աւարտող աշակերտներից լաւագոյնները ընտրել և կազմել դոցանից առանձին դասեր; պարապեցնել նոցա ընթերցանութեան հայ մատենագիրների; տալ կարգալ դոցա ուսերէն և ֆրանսիարէն (եթէ աշակերտք իմանումն գաղղիարէնը) թարմանութիւնքը հայ մատենագրութեանց; ուսուցանել, մեկնութեամբ, Ըստուածարանութիւն, եկեղեցական պատմութիւն և բոլոր Ըստուածաշունչը; պարապեցնել գերմանական լեզուի: Արբ որ գերմանական լեզուն կիմանան այնքան, որ կարող կլինին ազատ կարգալ և հասկանալ, այն ժամանակ ուղարկել Վերմանիայի վարժապետական ուսումնարանները, յանձնելով նոցա Ներսիսեան համալսարանի հոգաբարձութեան: Ընդ մասին կաթուղիկոսը, յանուն ազգի, քրիստոնէութեան և լուսաւորութեան, դիմումէ այն համալսարանին խնդիրքով և այլն, և այլն. . . : Աթէ ժամանակը ներէ, մենք մասնաբար կմշակենք մեր ենթագրութիւնքը այս խնդրի մասին:

«Աբուլէի» և «Աոմբի» հայերէն տպագրութիւնքը կարելի է ստանալ:

Տփլիս. պ. պ. Ս. Ըլաղաթեանցի և Ը. Ընֆիաճեանցի գրաւաճառանոցներումը. Въ Тифлисѣ, въ книжныхъ магазинахъ С. Аладатова и Амбарцума Эндияджьянца, на Эриванской площади.

Ս. Պետերբուրգում Ուսաց գրաւաճառանոցումը (առաջ Տիբլէնինը), Նեվսկի Պրոսպէկտ, շայոց եկեղեցոյ տանը; Բազուկոնոցի գրաւաճառանոցումը, Նեվսկի Պրոսպէկտ, Վաղանու կամուրջի մօտ, Օլխինի տանը; Իսակովի գրաւաճառանոցումը, Նեվսկի Պրոսպէկտ, Վաստինոյի Վալօր, № 24: Իսակովի միջնորդութեամբ

կարելի է ստանալ Վ Կնեպու և Վ Կննայի շ. շ. Մխիթարեանց տպագրութիւնքը ևս, հաշուելով ամեն մի ֆրանկը 40 կոպէկ, գրեանց ճանապարհի ծախսով միասին: Въ С.-Петербургѣ: въ Русской Книжной торговлѣ (бывшей Тиблена), на Невскомъ проспектѣ, въ домѣ Армянской церкви; въ книжномъ магазинѣ Базунова, на Невскомъ проспектѣ, у Казанскаго моста, домъ Ольхиной; въ книжномъ магазинѣ Якова Алексѣевича Исакова, въ Гостинномъ дворѣ, № 24. Чрезъ посредство Исакова также можно получать армянскія изданія венеціанскихъ и вѣнскихъ Мехитаристовъ, считая каждый франкъ вмѣстѣ съ пересылкой книгъ, по 40 копѣекъ.

Կոստանտինուպօլիս. պ. Հարութիւն Մարգարեանի գրասենեակը, Մերձան-շարշի, Եօլու շքմաղ-խան, № 11.

Չմիւսնիա (Կովիբ) կը խնդրէինք Տէտէան գրատունէն միջնորդել մեր տպագրութիւնքը վաճառելու.

Մենք յանձնառու ենք ինքներս ուղարկել ցանկացողներին մեր տպագրութիւնքը այն ժամանակ միայն, երբ 25 օրինակից պակաս չեն խնդրիլ, զիջելով հարիւրին 20%:

### Մեր հասցէն.

Միքայէլ Մեսրոպեան Միանսարեանցին, Ս. Պետերբուրգ.

Ротмистру Михаилу Месроповичу Миансарову, въ С. Петербургѣ, на Михайловской площади, домъ № 2/3 Жербина, кв. № 5. Michel Miansaroff, S.-Pétérsbourg, place Michel, maison № 2/3 de Gerbinne, log. № 5.

Ծանօթ. 1. Երեք գլխաւոր ջերմաչափներ կան, որոնց բաժանումն, այսինքն աստիճանները, զանազան են. Ֆարէնհէյտի, Բեովիւրի և Հելսի'ի ջերմաչափները առաւել գործածական են եւրոպացւոց մէջ: Շ'իշդ և մանրամասն տեղեկութիւնք դոցա մասին կարելի է գտանել Ֆիզիկայի մէջ: Ըյս տեղ, զգուշացուցանելու համար միայն, որ երեք այլ և այլ ջերմաչափների զանազան բաժանմունքը չգիտողներուն վտանգաւոր սխալմունքներից ապահովացնել, նշանակումներ առաւել գործնական Սուսիայի մէջ Բեովիւրի և Ֆարէնհէյտի ջերմաչափների քանի մի աստիճանաց համեմատութիւնքը, կամ զանալանութիւնքը ջերմութեան վերաբերութեամբ:

ԲՆՈՄԻՒՐԻ:

28  
23  
18  
13  
8  
4  
0

ՔՍՄԻՆԷԼՆՆԵՐ:

95  
83<sup>3</sup>/<sub>4</sub>  
72<sup>1</sup>/<sub>2</sub>  
61<sup>1</sup>/<sub>4</sub>  
50  
41  
32

Առ հասարակ Պարենհէյտեան (այս շարագրութեան մէջ գործածական) ջերմաչափի վերայ ցոյց տուած աստիճանը Բեովիւրի վերայ փոխելու, հարկաւոր է նկատել, որ Պարենհէյտեան ջերմաչափի 32° (աստիճանը) մի և նոյն է թէ 0° (սառուցման կէտ) Բեովիւրի ջերմաչափի վերայ: Ուստի Պարենհէյտեան ջերմաչափի վերայ նշանակուած բարեխառնութիւնը Բեովիւրի վերայ փոխելու, հարկաւոր է Պարենհէյտեան աստիճանի թուահամարից

հանել 32; մնացորդը <sup>3</sup>/<sub>4</sub> բազմապատկել, այսինքն բազմապատկել 4-ով և ստացուած գումարը բաժանել 9, կամ բազմապատկել 9 և բաժանել 4:

Մանօթ. 2: Առաջին անգամ Կոմրի շարագրութիւնը ձեռք առնողներին, խորհուրդ ենք տալիս նախ և առաջ ուշագրութեամբ կարգալ հեղինակի յառաջաբանութիւնը, գրքի I և XV գլուխները և ապա մնացածները, ըստ կարգին:

Մանօթ. 3: Այս 1868 թուականի յունիս ամսին, պատրաստ կը լինի նաև (եթէ որ և իցէ արգելքի չենք հանդիպիլ), Էրզարանի հետ, առանձին տպագրութիւն կանոնաւոր «Յուցակի», թէ առանձին շարագրութեանց և թէ օրագիրների և լրագիրների հատուածների. Ուուսաց, Ատսինացւոց, Իտալացւոց, Վաղղիացւոց, Վերմանացւոց, Անդղիացւոց և Ահհաց (պօլեակի) լեզուաւ գրած, — հին ժամանակներից մինչև այս 1868 թ. ապրիլ ամիսը, — Այաստանի և Այաստան կեցած հայոց մասին և այն հայերի և օտար երկիրների, ուր հայերը բնակվում են այժմ և կազմում են փոքր 'ի շատէ ականաւոր թիւ:

Մ. Մ. Միանսարեանց:

26 մարտի 1868 թուականի  
7 ապրիլի  
Ս. Պետերբուրգ:



## ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ:

Կան շատ պատուական շարադրութիւնք երեխաների խնամատարութեան համար գրուած, բայց ծնողների համար, յատկապէս սոցա հարկաւոր տեղեկութիւնք հաղորդող գրուածներ, շատ սակաւ են: Այդ տեսակ գրքերի մեծ մասի մէջ երեխաների ընդհանուր խնամատարութեան վերայ շատ համառօտաբար է խօսւում, և այն իբրև ներածութիւն երեխայական հիւանդութեանց նկարագրութեան, և ընթերցողը, մասնաւորապէս անձանթ լինելով առարկային, և հիմնուելով այդ գրքերի վերայ, այնպիսի գործողութեանց է դիմում, որոնց հետեանքը շատ վտանգաւոր է լինում երեխայի կեանքի համար: Աւստի այդ գրեանքը կարող են ուղղեցոյց լինել միայն բազմակողմանի տեղեկութիւնք ունեցողներին: Իսկ մի քանիսը գոցանից, որ գրուած են յատկապէս մայրերուն առաջնորդելու համար, թէև այդ պակասութիւնքը չունին, և շատ հարուստ են գեղեցիկ գործնական խրատներով, այսու ամենայնիւ չեն հասանում իրանց նպատակին, ըստ որում նոցա մէջ գործնական կանոնները և ցոյցերը առաջարկւում են իբրև վերացական, անձնական կարծիքներ, մնաց որ ցոյց չէ տուած նոցա կապակցութիւնը Փիղիօլօգիայի այն օրէնքների կամ սկզբունքների հետ, որոնց վերայ հիմնուած են նօքա և որոնց զօրութեամբ յառաջանումէ այս կամ այն հետեանքը:

Երեխաների խնամատարութեան վերաբերեալ ամենալաւ շարադրութիւնքը անգամ, թէև շատ արժանաւորութիւնք ունին ուրիշ կողմից, այդ անկատարելութեանց պատճառով, կարող չեն լինել պիտանի մասնաւոր տեղեկութիւնք չունեցող ընթերցողներին առաջնօր-

գուժեան: Կոստովանելով այդ բանը, ահա յղացաւ իմ մէջ միտք գրելու մի այնպիսի գասագիրք, որի մէջ բոլոր գործնական կանոնները, որքան որ կարելի է, հիմնուած լինելին ֆիզիոլոգիկան սկզբունքների վերայ: Եւս տարիներ ես հաւաքումէի նիւթեր, բայց յանձնառու չէի լինում գիտաւորութիւնս իրագործելու, երկիւղ կրելով, որ մի գուցէ չկարողանամ առարկան մինչև այն աստիճան ժողովրդականացնել, որ զա միանգամայն հասկանալի լինի ամենահասարակ ընթերցողիս համար անգամ: Իմ միւս շարագրութեանցս ունեցած յաջողութիւնքը և բազմաթիւ վկայութիւնքը նոցա բերած օգտի մասին քաջալերեցին ինձ ձեռք զարկելու այս գործին, և ահա վերջապէս յանձնառու եղայ հրատարակելու այս գիրքը: Ընդունելութիւնը, որ այս գիրքը գտաւ Մեգլիայումը, որպէս և արասահմանում, վկայումէ, որ սա, որքան և իցէ, լցուցանումէ ընդհանուր կարօտը,—և այդ կարծիքի մէջ ես առաւելապէս հաստատումս ժողովուրդի ամեն դասակարգի ծնողների խոստովանութեամբ, թէ այս գրքի ընթերցանութիւնը հարկադրել է նոցա աւելի խորին ուշադրութեամբ նայելու իրանց գէպի զաւակները ունեցած պարտականութեանց վերայ և լաւապէս սպասաւորել է նոցա այդ գծուար խնդիրը կատարելու:

Ինչպէն նկատու էր, որ ըմբարդս, բնութեան տէրը և թարգմանը, կարող է իշխել բնութեան վերայ և հասկանալ նորան այնքան, որքան իրականապէս կամ մտաւորականապէս կարողացել է գիտել նորա կարգը, գորանից աւելի նա կարող չէ, ոչ իմանալ և ոչ անել: Ընդ ասացումս համեմատ, ես իմ բոլոր շարագրութեանցս մէջ, չեմ բաւականացած անձնական գատողութիւններով, այլ հետեւել եմ այն կանոնին, թէ բոլոր գործնական ցոյցերը և խրատները պիտոյ է հիմնել մարդկային գործարանի օրէնքների, այսինքն Մարիշի կամքի վերայ: Սորա ակներև օգուտը այն է, որ այնպիսի դիպուածում, մեր իմաստասիրած իւրաքանչիւր ճշմարտութիւնը երևան է գալիս մեր առաջ, իբրև յայտնութիւն աստուածային հանճարի, և հետևաբար նորանից յառաջացած բոլոր գործ-

նական կանոնները լինումեն մեզ համար պարտականութիւն, իբրև յայտնութիւն Աստուածային կամքի: Իսկ եթէ անցանենք մի առարկայից դէպի միւս առարկան, մի կանոնից դէպի միւս կանոնը, առանց մտադիր լինելու նոցա կապակցութեան մին մինի և մարդկային կազմուածքի օրէնքներին հետ, այն ժամանակ, թէև և կհարստացնենք մեր տեղեկութեանց պաշարը, բայց շատ հեշտութեամբ կարող ենք միանգամայն սխալ դատողութիւնք անել և, նոցանից օգտակար գործադրութիւն անելու ժամանակ, մեծապէս շփոթուիլ, զժուարութեանց հանդիպելով, մինչ դեռ պատշաճաւոր գործադրութեամբ նոքա կարող են շատ արդիւնաւոր լինել: Միտքս աւելի լաւ բացատրելու համար ես մի համեմատութիւն կանեմ: «մարդս, որ պարագումէ մարդկային կազմուածքի խնամատարութեան, առանց հետեւելու որ և իցէ սկզբունքների, նմանումէ մի ճանապարհորդի, որ, առանց աշխարհագրական քարտի և ուղղեցոյցի, ճանապարհ է ընկնում մի տեղ գտնելու դէպի այնպիսի երկիր, որ նորան միանգամայն անծանօթ է: Կարող է պատահել, որ նա առաջին անգամից ոտքը նոյն իսկ իւր հարցասիրած տեղը դնէ, կամ վերջապէս երկար ու ձիգ պտրելուց յետոյ գտնէ այդ տեղը, բայց աւելի հաւանական է, որ նա իւր նպատակին չհասած և երկատև ու անօգուտ ճանապարհորդութիւնից հոգնած տուն կվերադառնայ: Ընդ հակառակն, սկզբունքների հետևող մարդուն կարելի է համեմատել մի ուղևորի հետ, որ ճանապարհ է ընկնում քարտը ձեռին, որի վերայ նշանակած են երկրի բոլոր շրջանագրութիւնքը<sup>1)</sup>, նա որքան և իցէ հաւաստիութեամբ գիտէ, թէ որ ճանապարհով պիտոյ է գնայ իւր նպատակին հասնելու համար, և եթէ, քարտի անկատարելութեան կամ անճշգրտութեան պատճառով, մոլորուի ճանապարհից, մի և նոյն քարտան, որ իւր թերութիւններով սորան մոլորութեան մէջ էր ձգել, կրցուցանէ սխալը և հնար կը տայ ուղղելու այն: Աս ամենևին չեմ կարծում, որ այս գրքի մէջ ես մի նոր բան եմ ասել. դորա առանձին յատկութիւնն այն է, որ ցոյց է տուած դորա մէջ

<sup>1)</sup> Очертавія страны.

իմ վերոյիշած կանոնների գործադրութիւնը, այսինքն գործնական խրատները հիմնել մարդկային կազմուածքի օրէնքների վերայ: Աթէ ինձ յաջողի այդ կանոնի օգտակարութիւնը գէթ մասամբ համոզելի կացուցանել, այնուհետև ուրիշների աշխատութիւնքը սոյն ասպարէզում աւելի շահաւէտ ուղղութիւն կրտսանան, և մենք աւելի հնար կունենանք նշմարելու և ուղղելու այն սխալները, որ կարող էինք անել—ես կամ ուրիշները:

Իմ աչքի առաջ և ես ունէի գլխաւորապէս ծնողները և զեռահաս և անփորձ բժիշկները: Բայց այս առարկան, որի վերայ խօսումենք, ուրիշների համար ևս արժանի է ուշադրութեան. երեխայական կազմուածքի իմաստասիրութիւնը մի շատ հետաքրքրական բան է, հարուստ վերին գործադրական խորհուրդ ունեցող ճշմարտութիւններով, ուստի և արժանի բոլոր մտածող մարդերի ուշադրութեան: Արովհետև այս տեղ խօսվումէ այնպիսի առարկայի վերայ, որ հազարաւոր գալոց մարդերի համար ունի կենսական նըշանակութիւն, ուստի զեռ այս յառաջաբանութիւնս չաւարտած, կընեբեմ ինձ մի կամ երկու նկատողութիւն անել յատկապէս ընթերցողներիս վերաբերութեամբ: Շատ անգամ պատահել է, որ ինձ, իբրև հեղինակի, դիմել են այնպիսի հարցուածներով երեխաների խնամատարութեան մասին, որով հաւաստեալ հաստատվել է, թէ հարցանողները ներգործել են ոչ միայն իմ բացադրած կանոններին համաձայն, այլ միանգամայն նոցա հակառակ:

Այսպիսի դիպուածներում գրեթէ միշտ երևումէ, որ հարցանողները գլխացաւութիւն չեն արած հիմնաւորապէս ծանօթանալու գրքի բովանդակութեան, որն որ համարել էին իրանց ուղղեցոյցը. բացայայտ երևումէ, որ նոքա երբէք սովորութիւն չեն ունեցած հարկաւոր եղած ժամանակը նայելու այդ գրքի մէջ ծանօթութեան համար: Ս'ի անգամ կարգալով նոքա արդէն բաւականացել են և սկսել ներգործել իրանց մութն ու խառն գաղափարների հիման վերայ, կարծելով որ զոքա սոյն գրքի մէջ պարունակուած գաղափարներն են: Բայց այս գրքի առարկան անփոփոմէ

իւր մէջ այնպիսի ծանրակշիռ և բազմատեսակ հանգամանքներ և կանոններ, նաև ընթերցողիս շատերին համար այնպիսի նոր բաներ, որ դոցա լիապէս իւրացուցանելու և պատշաճապէս գործ դնել կարողանալու համար, հարկաւոր է ուշադրութեամբ քանիցս անգամ կարգալ և որքան կարելի է շուտ շուտ դիմել նորան տեղեկութեան համար: Ահա այսպիսի ուսումնասիրութեամբ միայն բժիշկները ընդունակ են լինում պատասխանելու, թէ այս կամ այն դիպուածում ինչ պիտոյ է անել: Աւակի առողջութեան մեծախորհուրդ նշանակութիւնը մօր համար ոչ պակաս շարժառիթ է այդ գիտութիւնը սեպհականելու, քան թէ այն գիտութեան սէրը կամ պարտականութեան զգացողութիւնը, որով ոգևորվում են բժիշկները: Ով որ իմ գիրքը կը կարգայ այնպէս, ինչպէս կարգացվում են վիպասանութիւնքը կամ լրագիրները, սակաւ օգուտ կարող է քաղել դորանից, և ես, թէև շատ ուրախ եմ, որ հաւանել են իմ գրքին և դիտաւորութիւն ունին իմ բացատրած կանոններին համեմատ ներգործել, բայց անտարբեր եմ մնալու դէպի նոցա ճշմարտախօս գովեստները, մինչև որ դոցա հետ կապակից չեն իրական արդիւնքներ, որ պիտոյ է լինին ամենալաւ առհաւատչեան նոցա անկեղծաւորութեանը: Այս այն պատճառով աւելորդ չհամարեցի անել այս նկատողութիւնը, որ յոյս ունիմ համողել ընթերցողներիցս շատերին աւելի ուշադրութեամբ կարդալու, ուրեմն և աւելի օգտակար կացուցանելու այս գիրքը:



ԳԼՈՒԽ III. — Մեծ մահը երեխաների մէջ յառաջանումէ այնպիսի պատճառներից, որոնց առաջը ըստ մեծի մասին կարելի է բռնել; գլխաւորաբար դա յառաջանումէ ծնողաց տգիտութիւնից:

Մեծ մահ երեխաների մէջ մինչև նոցա հինգ տարեկան լինելը	Երես 35
Երեխաների մահի թիւը բժշկապետ Ֆարրի հաշուին համեմատ . . . . .	37
Երեխաների մահի պատճառները . . . . .	39
Ընդհանրական հնարների ազդեցութիւնը առողջութեան բարելաւութեան վերայ քաղաքների մէջ . . . . .	45
Երեխաների մահի սակաւանալը վերջին ժամանակներումս . . . . .	46
Երեխաների մահի առաջը բռնելու կարևոր գիտութիւն մօր համար . . . . .	51

ԳԼՈՒԽ IV. — Երեխաների առողջութիւնը մի պատահական բան չէ, այլ կախում ունի մշտական օրէնքներից:

Երեխաների կազմուածքը . . . . .	53
Շիւանդութիւնը և վաղահաս մահը յառաջանումեն առողջութեան բնական պայմանների խանգարվելուց . . . . .	54
Ստ առ առողջութեան պայմանները . . . . .	56
Շիւանդութեան կրօնական նշանակութիւնը . . . . .	57
Ֆիզիօլօգիայի գիտութեան կարևորութիւնը . . . . .	59

ԳԼՈՒԽ V. — Երեխայի գրութիւնը ծննդեան ժամանակ:

Կորածին մանուկի առողջութեան վերայ անմիջապէս ներգործող պատճառները . . . . .	61
Մանուկը սկսումէ շնչել . . . . .	62
Մանուկի ջղերի զգայականութիւնը . . . . .	63
Ըրիւնի շրջանադարձութիւնը և կենդանական ջերմութիւն . . . . .	64
Մանկական հասակում կենդանական ջերմութիւնը չէ պատրաստվում բաւականաչափ . . . . .	65
Մանուկների անկարողութիւնը ցրտի դիմանալու . . . . .	66
Երեխաների ցրտի ազդեցութիւնից պահպանելու կարևորութիւնը . . . . .	66
Երեխայի մարտողութեան սկիզբը . . . . .	67
Երեխայի նախկին կերակուրը կամ սնունդը . . . . .	—
Ըրտաթորման գործարաններ, աղիքներ, երիկամունք, մորթ և թոքեր . . . . .	68
Մորթի արտաշնչութիւնը և թոքերի արտաթորութիւնը . . . . .	69
Ծանրակշիռ նշանակութիւնը կանոնաւոր արտաթորութեան . . . . .	70
Գործարանական և կենդանական կամ կենսական գործողութիւնը մարմնի . . . . .	71

Սարգու առանձնական յատկութիւնքը . . . . .	73
Կազմուածքի համապատասխանութիւնը արտաքին պայմանների	74

ԳԼՍԻԽ VI. — Կորածին մանուկի խնամելու եղանակը

Կորածին մանուկին հարկաւոր է փաթաթել կակուղ, տաք կտաւեղէնի մէջ . . . . .	76
Լցրելայի առաջին լուացումն . . . . .	—
Լուանալու ժամանակ հարկաւոր է զգաստ լինել, որ աչքերը չփնասուին . . . . .	77
Լուացման ջրի բարեխառնութեան աստիճանը . . . . .	77
Լուանալուց յետոյ ինչպէս պէտք է սրբել մանուկին . . . . .	—
Հագուստ . . . . .	79
Կտաւեղէն հագուստի օգուտը . . . . .	—
Չափազանց շատ փաթաթելու և սննեակի մէջ շափազանց ջերմութեան փնասը . . . . .	80
Սանուկի գիշերազգեստը . . . . .	81

ԳԼՍԻԽ VII. — Սանուկի կերակուրը

Ընորժակ . . . . .	83
Կաթի որակութիւնը սկզբում զկնի որդէծնութեան և նորա ազդեցութիւնը մանուկի վերայ . . . . .	84
Քանի անգամ հարկաւոր է կերակրել երեխային . . . . .	86
Պէտք է կերակրել մանուկին որոշ ժամերում . . . . .	—
Սանուկին գիշերով կերակրելը . . . . .	88
Հարկաւոր է ուշ դարձնել մօր կերակրի վերայ մանուկին կերակրելու ժամանակ . . . . .	89
Սանուկի ամենալաւ ծծմայրը մայրն է . . . . .	90
Ղօր կենցաղավարութիւնը մանուկին կերակրելու ժամանակ . . . . .	90
Օձով կերակրելու ժամանակ մի ուրիշ երկրորդական կերակուր տալու կարևորութիւնը . . . . .	95
Ըռաջին առաձները . . . . .	96
Սանուկի կերակուրը ծծից կտրելուց մի քանի օր առաջ . . . . .	97
Սանուկի ծծից կտրիլը . . . . .	98
Որպիսի վտանգների է ենթարկվում մանուկը ծծից կտրելու ժամանակ . . . . .	100
Պիտոյ է զգուշանալ ըստկական հնարներ գործածելուց . . . . .	101

ԳԼՍԻԽ VIII. — Հստակութիւն, մարմնամարզութիւնք և քուն երեխայական հասակում

Իւղային նիւթի արտաթորութիւնը մորթի մակերևութից . . . . .	103
Ըմեն օր հարկաւոր է լուանալ և լողացնել երեխային . . . . .	104



Չրի բարեխառնութիւնը պէտք է որոշել ջերմաչափի օգնականութեամբ . . . . .	106
Երբեկոյական ջերմ ջրով վաննայի օգտաւէտութիւնը . . . . .	—
Սառն ջրով վաննաները փնասակար են . . . . .	107
Սարմնամարզութիւնք . . . . .	108
Սարմնամարզութիւնք բաց օդի մէջ . . . . .	109
Ընդ միջոցին որպիսի զգուշութիւնք կարևոր են . . . . .	—
Ինչպէս պէտք է բռնել երեխային ձեռքի վերայ . . . . .	110
Երեխայի հագուստը պէտք է յարմար լինի նորա մարմնամարզութեանց . . . . .	112
Ս նասակար է յորդորել երեխային վաղաժամ ման գալու . . . . .	—
Երեխայի քունը . . . . .	114
Ըշխատելու է, որ երեխան որոշ ժամերում քնէ . . . . .	115
Քնահաստութեան պատճառները . . . . .	116

ԳԼՈՒԽ IX. — Ընտրութիւն ծծմայրի և սորա կենցաղաւարութիւնը:

Որպիսի յատկութիւնք կպահանջուին ծծմայրից . . . . .	119
Ինչ պատճառներով մայրը անկարող է լինում ծիծ տալ իւր զւսակին . . . . .	120
Ծծմայր ընտրելու ժամանակ հարկաւոր է խորհրդակցել բժիշկի հետ . . . . .	123
Ծծմօր սովորական պակասութիւնքը . . . . .	124

ԳԼՈՒԽ X. — Ըրուեստական սնունդ:

Ս տանգը և դժուարութիւնքը «ձեռքից» կերակրելու . . . . .	129
Ըրուեստաբար սնուցանելու կերակուրի լուսազոյն տեսակը . . . . .	130
Որպիսի ջերմութիւն պէտք է ունենայ երեխայի կերակուրը . . . . .	—
Ինչպէս պէտք է տալ կերակուրը երեխային . . . . .	131
Նարկաւոր է միշտ թարմ կերակուր տալ երեխային . . . . .	131
Կերակուրի քանակութիւնը . . . . .	132
Նարկաւոր բան է որ երբեմն կերակուրների մէջ փոփոխութիւն կամ զանազանութիւն լինի . . . . .	133

ԳԼՈՒԽ XI. — Սանկանոց:

Լ աւ մանկանոցի պայմանները . . . . .	136
Տան տեղադրութիւնը . . . . .	138
Սանկանոցի ընտրողութիւնը . . . . .	140
Սանկանոցի օդափոխութիւնը . . . . .	140
Սանկանոցի բարեխառնութիւնը . . . . .	144

ԳԼՈՒԽ XII. — Խնամատարութիւն երեխային ատամնաճանու-  
թեան ժամանակը:

երև.

Փոփոխութիւնք երեխայի կազմուածքի մէջ . . . . .	147
Ճամանակաւոր կամ կաթի ատամներ . . . . .	148
Մշտական ատամներ . . . . .	149
Մտամնաճանութիւնը ունի երկու աստիճան . . . . .	149
Խնամատարութիւն երեխային ատամնաճանութեան ժամանակը	151
Չերմ վանաններ և երեխայի կերակուրը ատամնաճանու- թեան ժամանակ . . . . .	152
Նարկաւոր և հեռացնել այն բաները, որ կարող են գրգռել երեխային . . . . .	153
Նարկաւոր և զիմել բժիշկի խորհուրդին . . . . .	154
Երկրորդ ատամնաճանութիւնը . . . . .	155
Նարկաւոր և ատամները յստակ պահել . . . . .	—

ԳԼՈՒԽ XIII. — Խնամատարութիւն երեխային ծծից կտրելուց  
մինչև երկրորդ տարեկան հասակը:

Երեխային ծծից կտրելու ժամանակը . . . . .	156
Երեխաների մահը կեանքի առաջին և երկրորդ տարում . . . . .	—
Երկրորդ տարում մեռող երեխաների մահի պատճառը . . . . .	157
Երեխաների հրեանդութիւնքը գլխաւորապէս յառաջանումեն մարսողութեան գործարանների խանգարուելուց . . . . .	158
Մոլորութիւն երեխաների կերակուրի վերաբերութեամբ . . . . .	159
Որպիսի կերակուր պէտք է տալ երեխային . . . . .	—
Երեխային պէտք է կերակրել կանոնաւորապէս, որոշ ժամե- րում . . . . .	162
Կերակուրի քանակութիւնը . . . . .	—
Կարևոր է փոփոխութիւն կամ զանազանութիւն կերակուրի մէջ . . . . .	163
Յստակութիւն: Մուացնան ջրի բարեխառնութիւնը . . . . .	164
Վանանների օգտաւէտութիւնը . . . . .	—
Երեխայի հագուստը . . . . .	165
Մարմնամաքութեանց և մաքուր օդի կարեւրութիւնը . . . . .	168
Ընտրողին պէտք է արգելել երեխային վաղաժամ ման գալ սովորցնելը . . . . .	—
Օքոսանքի լուսադոյն ժամանակը օրուայ մէջ . . . . .	—
Նարկաւոր և ուշադիր լինել երեխայի հագուստին զրօսան- քի ժամանակ . . . . .	169
Երեխայի քնի վերաբերութեամբ ևս կարգ ու կանոն պէտք է պահել . . . . .	—

Երբ հարկաւոր է թողնել տալ երեխային ցերեկով քնելու սովորութիւնը . . . . .	—
Սեծապէս հարկաւոր է զգուշանալ, որ երեխայք զարթելուց յետոյ անկողնի մէջ չմնան . . . . .	—
Ըմեն երեխայ պէտք է ունենայ առանձին անկողին . . . . .	170
Վնասակար է քնացնել երեխային ձեռքի կամ ծունկի վերայ, շարժելով . . . . .	—
Նոգատարութիւն հիւանդութեան ժամանակ . . . . .	171
Սեծամեծ փնաններ անկանոնաւորապէս զեղեր գործածելուց . . . . .	172
Սայրերին և ծծմայրներին սխալ հասկացողութիւնը հիւանդութեան վերայ . . . . .	173
Նարկաւոր չէ օտարների խորհուրդներին հաւատ ընծայել և իւր գործողութիւնքը ծածկել բժշկից . . . . .	174
Թժիշկի հետ հարկաւոր է ճշմարտութեամբ խօսել . . . . .	175
Նիւնդ երեխային հարկաւոր է խաղաղ, օդ բանուկ սենեակի մէջ պահել . . . . .	—
Նիւնդ երեխայի կերակուրը . . . . .	176
Ճամանակին հարկաւոր է դիմել բժշկի օգնութեան . . . . .	177
Ինչ կանոններ պէտք է պահել, երբ որ բժիշկ կանչելու մարդ են ուղարկուած . . . . .	—
Նարկաւոր չէ բժիշկի անունով վախցնել երեխաներին . . . . .	178

ԳԼՈՒԽ XIV. — Երեխայի մտաւոր զրութիւնը և կրթութեան կանոնները:

Կրթութիւնը պէտք է աշխատէ զարգացնել մարմնի մէջ առողջ միտք և ոյժ . . . . .	180
Ընն փնանները, որ յառաջ են գալի մտքի զարգացման բնական պայմանները չկատարելուց . . . . .	181
Երեխայի մտաւոր զրութիւնը . . . . .	—
Ըրտաքին զգայարանքների կրթութիւնը . . . . .	182
Կարճատեսութեան (հաւկուրութեան) պատճառները . . . . .	185
Նոգեկան և մտաւորական կարողութեան կրթութիւնը . . . . .	186
Ստքի և ուղեղի զրութիւնը երեխայական հասակում . . . . .	—
Ստաբանութեան (ֆրէնձօլոգիա) գործազրութիւնը կրթութեան . . . . .	191
Ըմենայն ընդունակութիւն պիտոյ է զարգացնել, ներգործելով նորա վերայ իրան համապատասխան աւարկաներով . . . . .	195
Բարոյական կրթութիւնը պէտք է սկսուի ամենամատաղ հասակից . . . . .	197
Նարկաւոր է իմանալ մտաւոր ընդունակութեանց յատկութիւնը և նոցա գործունէութիւնը գրգռող առարկաները . . . . .	198

ԳԼՈՒԽ XV. — Բարոյական կրթութիւնը մանկական և տղայական հասակում:

Բարոյական կրթութիւնը սկսումէ ծննդից շատ ժամանակ շնչած . . . . . ! . . . . .	երեւ. 202
Երկու միօրինակ փնասակար ծայրեր, անսահման ազատութիւն տալ երեխային և միանգամայն խափանաօրթ լինել նորա ինքնուրոյն գործունէութեան . . . . .	204
Սովորական մոլորութիւնքը երեխաների բարոյական կրթութեան վերաբերութեամբ . . . . .	205
( )րինակ ստորակարգ կենդանիներից . . . . .	206
Ինքնուրոյն գործունէութեան և անձնաառաջնորդութեան զարգացումն երեխայի մէջ . . . . .	210

ԳԼՈՒԽ XVI. — Շարունակութիւն, բարոյական կրթութիւն մանկական և տղայական հասակում:

( )րինակները մէծ ազդեցութիւն ունին երեխաների վերայ . . . . .	211
Սխալ կարծիք է կիրքերը և բարոյական յատկութիւնքը մշտաւոր կրթութեան հետեանք համարել . . . . .	212
Մօր ազդեցութիւնը . . . . .	214
Լաւ մանկական դպրոցների մեծակշիռ նշանակութիւնը . . . . .	216
Դաստիարակները պէտք է հիմնաւորապէս իմաստասիրեն մանկավարժութիւնը . . . . .	218
Երեխայի կրօնական կրթութիւնը . . . . .	220
Երեխայի կրթող ազդեցութեան բաղմակերպութիւնը . . . . .	226
Հարկաւոր է վարժել երեխայի բոլոր ընդունակութիւնքը . . . . .	227
Պարապմանց բաղմակերպութեան ծանրակշիռ նշանակութիւնը . . . . .	229
Ստաւոր ընդունակութեանց աստիճանաբար զարգացողութիւնը . . . . .	230
Չղային համակարգութեան շափազանց գրգռողութիւնից յառաջացած փեսար . . . . .	232
Ստ կրթուած երեխայք . . . . .	233
Լաւ կրթութեան հետեանքները . . . . .	236

Հ աւ ե լ ու ա ծ ք:

Ը. Ըրինակից ազդականների մէջ եղած ամուսնութիւնքը . . . . .	241
Բ. Երեխայական հիւանդութիւնք . . . . .	244
Գ. Կաթի և այլ ուտելիքների բաղադրութիւնը . . . . .	249
Գ. Ըտամնահամուցութիւն . . . . .	259
Ե. Բժիշկների կարծիքը ժողովրդական ֆիզիոլոգիայի կարևորութեան և հասարակած վարժարաններում առողջաբանութեան դասեր կարգալու մասին . . . . .	261

Յ ա լ ե լ ու ա ծ ք տ պ ա գ բ ո շ ի :

	Երես.
Ը. Հայ յատուկ արական և իգական անունների ցանկը, Հայոց պատմութիւնից բազած . . . . .	263
Բ. Թէ ինչպէս յառաջանումն բոյսերի, կենդանիների և մարդերի մէջ արական կամ իգական սեռերը: Տիրի պրոֆէսորի շարագրութիւնից . . . . .	266
Գ. Որորոցի (օրորոցի) երգեր. . . . .	271
Վ. Աղիւսակ պարզ տոկոսի, հարիւրին 4%, 5% և 6%, մէկ մանէթ գրամագլխից սկսուած մինչև մէկ միլիօն և նոցա շահք մէկ օրից մինչև մէկ տարի: Աղիւսակին յաւելցրած է համառօտ մէկնութիւն տոկոսի աղիւսակը գործածելու մասին և աղիւսակ գլխաւոր ազգաց դրամների Գաղղիոյ և Կ. Պօլսոյ դրամներուն հետ բազգասուած (վերջինը առած է Պ. Միքայէլեանցի շարագրած և պ. Արամի տպած Թուարանութիւնից) (առանձին) ե. ե. . . . .	I—VI և 1—28

## ԳՂՈՒԽ I.

ԻՆՉ ԱՋԴԵՑՈՒԹԻՒՆ ՌԵՆԻ ԵՆՈՂՍԵՑ ՍՌՈՂ, ՀՈՒԹԻՒՆԸ

ՋԵՒՍԿՆԵՐԻ ՍՌՈՂ, ՀՈՒԹԵՍԸ ՎԵՐՍԵՑ.

Նրա անգամ տեսնումներ, որ հարուստ և ունևոր մարդոց զաւակները, թէև շրջապատած են ըստ երևութին կեանքի ամեն տեսակ վայելչութիւններով, այսու ամենայնիւ տարիները շտապ մեռանումեն ցնցողականութիւնից<sup>1</sup>, խուլից<sup>2</sup>, թոքախտութիւնից<sup>3</sup>, և այլ ցաւերից, իսկ կենդանի մնացածները շատ նուազ են լինում ու մեծամեծ խնամքների կարօտ: Եւ ընդհակառակն, շատ անգամ աղքատ և չունևոր մարդոց զաւակները, որոնց ապրելու արտաքին յարմարութիւնքը համեմատաբար շատ սակաւ են, մեծանումեն առանց հիւանդութեան, կամ իրանց հասակի բոլոր սովորական հիւանդութեանց այնպիսի հեշտութեամբ են տանում, որ ասես թէ այդ հիւանդութիւնքը նոցա կազմուածքի խորհրդական գործողութիւնքն լինին: Ով սովոր է ուշադրութեամբ նայել իւր շորս կողմը, նա անպատճառ տեսած պէտք է լինի այդ տարբերութիւնը ընտանիքների մէջ: Պատճառը ինչ է այդ տարբերութեան: Ըստ հարցը շատ ծանրակշիռ և խորին ուշադրութեան արժանի հարց է:

Ըսանց դժուարութիւն կրելու, որքան և իցէ մենք կարող ենք պատասխան տալ այդ հարցին: Վիտողութիւնը ասումէ, որ այս կամ այն ընտանիքի երեխաների տարապայման հիւանդութեան կամ տարապայման առողջութեան պատճառը ոչ արտաքին հանգամանքներն են և ոչ ծնողաց նոցա վերայ ունեցած մասնաւոր խնամքը,

<sup>1</sup>) Судороги. <sup>2</sup>) Золотуха. <sup>3</sup>) Чихотка.

այլ յառաջանումն այնպիսի պատճառներից, որ պիտոյ է պարել նոյն իսկ երեխաների և նոցա ծնողաց մարմնակազմութեան մէջ, ըստ որում այդպիսի յատկութիւնքը ժառանգարար են ստացվում հօրից կամ մօրից և կամ երկուսից միասին: Այլ արդարեւ այդ այդպէս է: Ծնողաց առողջութեան ազդեցութիւնը զուակների կազմվածքի և որակութեանց վերայ այնպիսի ակներև փաստ է, որ արդէն հին ժամանակների մարդիկը ուշ էին դարձուցել այդ բանի վերայ: Ըստ երևութիւն պատահումն բացառութիւնք, որ զուակները ամենեւին նմանութիւն չեն բերում իրանց ծնողաց, բայց այդ բացառութիւնքը սակաւամիւ են և ամենեւին ընդհանուր կանոնին չեն հակառակում, մանաւանդոր դոցա պատճառները ևս յայտնի են:

Ըստպէս, խոստովանելով առողջութիւնը ենթակայ ժառանգական ազդեցութեան, մեզ մնում է վճռել յետագայ ինդիքը, որ ունի մեծ խորհուրդ և նշանակութիւն կեանքի համար. — սրբիսի պայմանների մէջ ծնողաց առողջութիւնը աւելի մեծ ազդեցութիւն է անում զուակների առողջութեան վերայ:

Ըհա այն պայմանները, որ աւելի արժանի են ուշադրութեան. ա. Ծնողաց իրանց ծնողներից ժառանգարար ստացած բնածին պակասութիւնքը, այսինքն մարմնական և մտաւորական պակասութիւնքը:

բ. Աղտօրօք ամուսնութիւնքը, մանաւանդ եթէ ամուսնացողքը թոյլ ու տկար կազմուածքի աէր մարդիկ են, նաև տրամադրուած դէպի ժառանգական հիւանդութիւնք:

գ. Ըմուսնութիւնք արևնակից մօտ ազգականների մէջ, մանաւանդ երբ աղջիկն էլ և տղամարդն էլ յառաջացած են հիւանդոտ նախորդներից:

դ. Տարածամ ամուսնութիւնքը:

ե. Ըօր և մօր հասակների մեծ զանազանութիւնը:

զ. Ծնողաց գրութիւնը յղանալու ժամանակ:

է. Սօր առողջութիւնը և վարքը յղի ժամանակ:

Ըյս բոլոր պայմանները ևս մի առ մի կը քննեմ:

Կարող են մտածել, թէ այսպիսի գրքում, որ ծնողացը և դաստիարակներին առաջնորդելու համար է գրած, միանգամայն աւելորդ է կանգ առնելը այդ իմ վերոյիշած հինգ պայմանների վերայ, ըստ որում երեխայի գոյաւորութիւն ստանալուց և աշխարհ գալուց յետոյ, մեւք կարող չենք հետացնել այն հետեւանքները, որ յառաջա-

նուսնն ծնողաց բնածին պակասութիւններից կամ անյարմար և անպատշաճ պայմանների մէջ կատարուած ամուսնութիւններից: Վայց այս նկատողութիւնը բոլորովին անհիմն է. որքան թոյլ է երեխայի առողջութիւնը, այնքան աւելի հարկաւոր է այդ թուլութեան ճրջմարիտ պատճառը քննել, որպէս զի կարող լինինք պատշաճաւոր զգուշութեամբ ընտրել ամենահարկաւոր միջոցները նորան օգնութիւն հասցնելու: ( ) Բինակի համար. կայ միջոց, որ շատ օգտակար է այն երեխային, որի վատառողջութեան պատճառը հօր կամ մօր ժառանգական հիւանդութիւնն է. բայց այդ մի և նոյն միջոցը կարող է միանգամայն անօգուտ, վնասակար անգամ լինել նոցա համար, որոնց վատառողջութիւնը յառաջանումէ մի որ և իցէ մասնաւոր պատճառից, մօր յղութեան ժամանակ պատահած: Աւրեմն մեզ բաւական չէ միայն գիտենալ, թէ ինչ պատճառներից երեխաները լինումեն տկար, այլ հարկաւոր է ձեռք բերել այն հմտութիւնը, որով ընդունակ լինելինք ամենայն պատահած դիպուածում երեխայի հիւանդութեան բուն պատճառը զանազանելու:

Աթէ մենք ենթադրէինք անգամ, որ առաջի երեք պայմանների քննութիւնը կարող չէ մի օգտակար գործադրութիւն ունենալ արդէն ծնուածների համար, այսու ամենայնիւ տարակոյս չկայ, որ դա գործադրելի է գալոց ծնունդների համար, ըստ որում եթէ այդ քննութեան գործադրութեամբ բարւոքի ծնողաց առողջութիւնը, խօսք չկայ, որ կը բարւոքի և նոցա գալոց զաւակների առողջութիւնը, և այսպէս սօքա ազատ կը մնան այն ախտերից և թշուառութիւններից, որոնց ենթարկուած էին առաջուայ ծնուածները նոյն ծնողներից: Կէն և այս նկատողութիւնը ևս բաւական է միանգամայն մեզ արդարացնելու — թէ ինչու համար հարկաւոր ենք համարում ծնողաց և դեռահաս դաստիարակների ուշը ժառանգական հիւանդութեան հինգ պայմանների վերայ զարձնել, սակայն մեր կարծիքը աւելի լաւ հաստատելու համար, առաջ ենք բերում այստեղ մի այլ տեսակ խորհրդածութիւն: Մտողքը, իբրև փորձառու առաջնորդողք իրանց զաւակների, ունին միշտ որքան և իցէ ձայն և իշխանութիւն նոցա ամուսնութեան վերաբերութեամբ, ուրեմն մտողքը, ներգործելով իրանց զաւակների իմացականութեան վերայ այն ժամանակից սկսած, երբ նոցա կիրքերը զեռ ևս չեն զարթած, կարող են այնպիսի ուղղութիւն տալ նոցա, որ նոքա ինքեանք կը զգուշանային ցաւագար և պակասաւոր ընտանիքների հետ կա-



պակցութիւն ունենալու: Առգացող և խելացի ծնողքը այդ բանի մէջ կարող են փրկաւէտ ազգեցութիւն ունենալ իրանց զաւակների վերայ, և երբ որ երեխաները տեսնեն, որ ծնողաց ամեն մի գործողութիւնը խոհեմութեամբ, յայտնի ու հաստատ կանոններով է կատարվում, ինքեանք ևս կը հետեւին նոցա օրինակին, կաշխատեն զսպել կիրքերը, մանաւանդ ամուսնութեան վերաբերութեամբ, որից անմիջապէս կախուած է նոցա բախտաւորութիւնը: Իսկ երբ երեխաները մեծանումեն առանց իրատներ լսելու, առանց բարի օրինակներ տեսնելու, բնաւ զարմանալի երևելու չէ, որ վերջը, ամուսնանալու ժամանակ, նոքա իրանց տրամադրութեան կամ որ և իցէ հաշիւների են հետևում. զարմանալի երևելու չէ, որ նոքա ուշադրութեան անարժան են համարում առողջութիւնը, Փիղիքական և մտաւորական որակութիւնքը այն ընտանիքների, որոնց հետ կապակցուելու են: Այժմէ իմ ցոյց տուած կանոններն ու պայմանները չկատարուին, երբեք անհետանալու չեն այն ցաւերը և նոցա հետեանքները, որոնց մասին վերևումը խօսեցինք:

#### ԺՆՈՆԵՒԳՆԵՆ ՏՐՄԵՄԻՆՈՒԹԻՒՆ

##### ԴԷՊՒ ՀԻՒՆԵՒՈՒԹԻՒՆԷ.

Ըստ անգամ ժառանգական հիւանդութիւնը տեսանելի է լինում այն ընտանիքներում, որոնց զաւակները պատանեկութեան հասակը առած շուտ, գրեթէ անհրաժեշտապէս ենթարկվում են մահի, զոհ գնալով անողորմ թոքախտութեան, թէև այդ ահարկու ցաւի առաջը բռնելու համար հազար ու մի նախազգուշութիւնք են գործ դրվում: Ի՞նչ իրօք առողջութիւնը ժառանգարար է հազորդվում, առնելով այդ խօսքը իւր ընդարձակ նշանակութեամբ, պատմութիւնը մեզ ցոյց է տալիս, որ գրեթէ բոլոր երկարակեաց մարդիկը երկարակեաց ծնողք են ունեցել. և արգարե, ամենեին տարակուսելի չէ, որ ուժեղ և առողջ ծնողքը, եթէ այլ հանգամանքները բարեկարգող են, ունենում են ուժեղ և առողջ զաւակներ: Այս օրէնքը տեսանելի է ոչ միայն կենդանիների, այլ և բուսականների թագաւորութեան մէջ, ըստ որում բուսականների սերմերի որակութիւնը ոչ պակաս նշանակութիւն ունի, քան թէ հողի որակութիւնը և լաւ մշակութիւնը: Այդի ազնվութեան և անարատութեան

վերայ առանձին ուչ են դարձնում կենդանիներ, մանաւանդ ձիեր բազմացնելու ժամանակ, ըստ որում այդ բանի մէջ որակութեանց ժառանգական հաղորդութիւնը ունի այնպիսի մեծ նշանակութիւն, որ ընտիր և աղնիւ ձիու ցեղը համարվում անժխտելի հիմն գալոց ծնունդի որակութիւնքը քննադատելու: Աչ ոքի համար երկբայելի չէ, որ շները, ոչխարները և ուրիշ անասունները վերաստեղծում են իրանց մէջ ծնողաց որակութիւնքը: Մարգս, իրրև շրնչաւոր (գործարանաւոր) էակ, բացառութիւն չէ ընդհանուր կանոնից, միայն աւելորդ նրբագացութիւնը և սուտ ամսթիտածութիւնը, որոնց վաղուց հետէ ենթարկուած են շատ բնարաններ և բժիշկներ անգամ, խափանառիթ են լինում մարդոց արժանապէս ուչ դարձնելու ճշմարտութեան վերայ, որ այնպիսի մեծ խորհուրդ ունի նոցա բարեբախտութեան համար: Առաջակաւոր Առաջերը պատմում յետագայ նշանաւոր զիպուածը ժառանգականութեան վերաբերութեամբ, երկու գրեթէ միանգամայն ապուչ կանայք, կարողութեան տէր լինելով, մարդու են գնացել, և մի ամբողջ դարի ընթացքում ինչքի պակասութիւնը այնպէս զգալի է եղել նոցանից յառաջ եկած գերգոստանների մէջ, որ յետագայ չորրորդ և հինգերորդ սերունդը միանգամայն ապուչ են դարձել<sup>1</sup>:

«Նոողքը», ասում Վրէգորի բժշկապետը, «յաճախ վերածնվում են իրանց յաջորդների մէջ, ըստ որում յիրաւի զուակները նմանում են իրանց ծնողաց ոչ միայն կերպարանքով և մարմնակազմութեամբ, այլ և իրանց մտքի ընդհանուր որակութեամբ, իրանց աստքինութիւններովը և արտութիւններովն անգամ: Այսպէս ասա Առումում երկար ժամանակ ծաղկումէր Ալաւգիտսի կամակոր, իւրատասիրտ և բարբարոս ցեղը, այդ ցեղից յառաջ եկան անգութ, վատմար և բարբարոս Տիրերիան, արիւնարբու Վալիգուլան, Ալաւգիտը, Վիրրիէնը և հրէշարարոյ Աերոնը. վերջապէս վեց հարիւր տարի ապրելուց յետոյ այդ ցեղը անհետ կորաւ<sup>2</sup>:

Որակութեանց ժառանգական հաղորդութեան լաւ օրինակ կարող է լինել, իմ գիտցածներիցս, մի կոյր մարդ, Մովսէս Ա կիօնդ անունով, որ երեսուն եօթը զուակ ու թոռն ունէր, գոքա ամենքը տասներհինգ կամ տասներկուց տարեկան եղած չեղած սկսումէին կոր-

<sup>1</sup>) Elem. Physiol., lib. XXIX, sect. 2, 8.

<sup>2</sup>) Conspectus Medic. Theor., cap. 4, sect. 16.

ցնել իրանց տեսողութիւնը, իսկ քսաներկու տարին լրացածովը միանգամայն կուրանումէին<sup>2)</sup>։ Առջանգը բերումէ մի քանի այդ տեսակ գիպուածներ<sup>3)</sup>։ Առհասարակ այդպիսի փաստերը մի առանձին հապուապիւս բաներ չեն, ամեն մարդ քիչ թէ շատ կարող է նկատել իւր չորս կողմը, ուստի ես աւելորդ եմ համարում ուրիշ օրինակներ բերել։

Մեր առջևը այսպիսի ակներև փաստեր ունենալով, կարող ենք հիմնաւորապէս հաստատել, որ եթէ ծնողքը առողջ և ամրակազմ են, գործունեայ և կանոնաւորապէս զարգացած մաքով, նոցա յաջորդներն էլ նոյն իսկ որակութիւնքը կունենան։ Այլ ընդհակառակն, եթէ ծնողներից մինը ժառանգաբար ստացել է իւր վատառողջ կամ տարօրինակ ցեղից մի տկարութիւն կամ որ և իցէ մտաւորական յատկութիւն, մեծ առիթ կայ կարծելու, որ ապագայ զաւակներն էլ կունենան նոյն պակասութիւնքը, կարճ ասել, որ օրէնքով որ հաղորդվումէ մի սերունդից միւսին հակու մեանգամալուծութեան, խելագարութեան, տկարամտութեան, խուլի, բարակացաւի, իրաւունք կայ եղբափակելու, որ ժառանգաբար նոյն օրէնքով ևս հաղորդվումէ առողջութիւնը, ոյժը և այլն, թէ որ դժբաայդ ծնողաց ժառանգական յատկութիւնքն են։

Աւստի ով ուղումէ, որ իւր զաւակները հոգով և մարմնով առողջ լինին, նա պէտք է զգուշանայ ամուսնանալու տկարակազմ մարդու հետ, մանաւանդ եթէ զաւակականապէս ենթարկուած է որ և իցէ վտանգաւոր ցաւի, օրինակի համար, խելագարութեան, քաղցկեղի<sup>4)</sup>, տկարամտութեան, խուլի և այլն։ Ամուսնոյ հարկաւոր է զգուշանալ այն ամուսնութիւններից, երբ որ երկու կողմիցն էլ տրամադրութիւն կայ դէպի մի և նոյն հիւանդութիւնը։ Այթէ ծնողներից մինը իւր կազմուածքի մէջ ունի որ և իցէ պակասութիւն, եթէ մանաւանդ այդ պակասութիւնը այնքան ծանր և զգալի չէ, լաւ կենցաղաւարութեամբ ու յարմար ամուսնութեամբ կարելի է մի քանի աստիճան թեթեւացնել այդ պակասութեան ազդեցութիւնը զաւակների վերայ, բայց եթէ միւս ծնողն էլ այդ պակասութեան

<sup>2)</sup> Baltimore Medical and Physical Repository.

<sup>4)</sup> Medical Notes and Reflections.

<sup>3)</sup> Рахъ.

տէր է, այն ժամանակ դորա ազդեցութիւնը սաստկանումէ և անպատճառ հաղորդումէ յաջորդներուն: Այս շատ ընտանիքներ գիտեմ, որոնք զանց աննելով այս կանոնը, շատ դառն հետևանքներ են ունեցել. զուակների մեծ մասը խուլից և բարակացաւից մեռել են, իսկ կենդանի մնացածները միանգամայն ապուշ են դարձած: Ինչ է դորա պատճառը. — ի հարկէ այն, որ ծնողքը արենակից մօտ ազգական են եղած և երկուքն էլ սաստկապէս տրամադրուած մի և նոյն հիւանդութեան:

Արկնելով քանիցս անգամ թէ հարկաւոր է աւելի ուշ դարձնել այդ ժառանգական հիւանդութեան օրէնքի վերայ, ևս ամենևին չկամիմ հաստատել, թէ զուակները անպատճառ են թարկվումեն նոյն իսկ հիւանդութեան, որից շարշարվում, տանջվումէին նոցա ծնողքը. ո՛չ, ևս ասումեմ միայն, որ այս ու այն հիւանդութիւն ունեցող ծնողաց զուակները աւելի են թարկուած են նոյն հիւանդութեան, քան թէ այդ հիւանդութիւնը չունեցող և առողջ՝ ծնողաց զուակները, և թէ այդ հիւանդութիւնից ազատուելու համար նոքա մեծամեծ զգուշութեանց և խնամքների են կարօտ: Թէ որ գիտենայինք ժառանգական ազդեցութիւնը առողջութեան վերայ որպիսի յատկութիւն ունի, այն ժամանակ, անշուշտ, լնդունակ կը լինէինք նորա առաջը բռնելու բժշկական այն եղանակով, որի նպատակն է սաստկացնել կազմուածքի թոյլ կողմերը:

( ) րինակ, եթէ երեխան ունի ժառանգական տրամադրութիւն խուլի և զատախարակվումէ նոյն արտաքին հանգամանքների մէջ, որոնք պատճառել ու զարգացրել են այդ հիւանդութիւնը նորա ծնողաց մէջ, մեծ անզիք կայ կարծելու, որ սա մի օր այս կամ այն խուլական հիւանդութեան զո՛հ կը դառնայ, իսկ եթէ տանէ ևս այդ հիւանդութեան, դարձեալ բոլոր իւր կեանքը վատառողջ կը լինի: Իայց եթէ իւր ժամանակին զգուշութեան միջոցներ դորձ գրուի, եթէ երեխայի վերայ պատշաճաւոր խնամք ունենան, որքան կարելի է երկար պահեն բաց օդի մէջ, կամ մի քանի տարով տանեն նորան այնպիսի տեղ, ուր եղանակը աւելի շոր ու տաք է, այն ժամանակ նա կարող է միանգամայն ազատ մնալ հիւանդութիւնից և իւր բոլոր կեանքը վայելել լաւագոյն առողջութիւն, քան թէ իւր ծնողքը:

Այդնը կարելի է նկատել վերաբերութեամբ ժառանգական այլ հիւանդութեանց: Գիւրազրգիւ և կամակոր երեխայք, որոնց

ծնողքը կամ խելագար են և կամ տրամադրուած խելագարութեան, շատ հեշտ կարող են խելագարուիլ, եթէ մեծանան և կրթութիւն այնպիսի հանգամանքների մէջ, որոնք սաստկացնումն ուղեղի գիւրարորդութիւնը և կամ պատճառ են լինում զգացողութեանց և կիրքերին աւելի արագ և անկանոն գործողութեան: Բայց եթէ առաջուց պատշաճաւոր միջոցք գործ դրուի ուղեղի գիւրարորդութիւնը թուլացնելու, մարմինը ամրացնելու, և միտքը հանգրստացնելու համար, այն ժամանակ վտանգը մշտապէս շատ և շատ կը պակասի:

Արեւմե ծնողքը ոչ թէ հիւանդութիւնն են հաղորդում իրանց զաւակներին, այլ հակումն հիւանդութեան:

#### ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆԷ ՄՕՏ ԱՐԵՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆՆԵՐԻ ՄԷՔ.

Ծնողաց ժառանգական հիւանդութիւնից յետոյ աւելի մեծ փնասակար ազդեցութիւն է ունենում զաւակների վերայ նոցա մօտ արեւակից ազգակցութիւնը, ևս առաւել եթէ երկուքն էլ ծնուած են հիւանդոտ ցեղից: Թէ որպիսի վտանգաւոր հետեանքներ են յառաջանում արեւակից մօտ ազգականների մէջ եղած ամուսնութիւններից, բաւական է ցոյց տալ այն մի քանի թագաւորական և Աւրոսպի աղնուականների ցեղերը, որոնք իրանց մէջ ամուսնանալով, առանց ամենեին ուշ դարձնելու այս կամ այն կողմի ժառանգական հիւանդութեան վերայ, միանգամայն անհետացան աշխարհիս երեսից: Մասնաւոր մարդկանց մէջ էլ շատ անգամ պատահումն այդպիսի մօտ ազգակիցների ամուսնութիւնք, մասնաւոր հրէաների մէջ այդ մի սովորական բան է: «Անգլիայի հարուստ հրէաները», ասում է Ալիստասոն բժշկապետը<sup>1)</sup>, «ունին նոյնպէս վատ սովորութիւն երկրորդ պորտի հետ ամուսնանալու, և ես միայն նոցա մէջ եմ տեսած անհամար շիլ, թոթով, յիմար, զանազան աստիճանի խելագարներ, ուղեղի գիւրարգրութիւնից չարաչար տանջվող մարդիկ»: Մօտիկ ամուսնութիւններից (նաև հիւանդոտ ազգակիցների մէջ եղած) սովորաբար կամ ամենեին զաւակ չէ լինում, կամ չափազանց թոյլ կազմուածքով են լինում: Ամերիկայի հիւսիսային նահանգներում այդպիսի ամուսնութիւններից յառաջացած փնասակար

<sup>1)</sup> Elliotson's Human Physiology, 5-րդ սպառութիւն, էրես 1098.

Հետեանքները բոլորովին համապատասխան են այն Հետեանքներուն, որ մենք նկատուամենք Մեգլիայում և այլ եւրոպական երկիրներում\*:

ՀՍՍԵԿԸ, ԵՐԲ ՀԵՐԿՍԵՌ Է ՍՄՈՒՍՆԵՆՍԸ.

Ս շ ղ օ ր օ ք ամուսնութիւն. — Մագալ սերունդի առողջութեան և որակութեան վերայ մեծ ազդեցութիւն ունի հասակը, երբ որ ամուսնանումեն ծնողքը: Եթէ ծնողքը դեռ ևս իրանց կազմուածքը կատարելապէս չզարգացած ամուսնացել են, նոցա անգրանիկ զաւակները աւելի սակաւ կենսական զօրութիւն են ունենում, քան թէ վերջինները: Մտարակոյս, այդ է գլխաւոր պատճառներից մինը, որ մի և նոյն ծնողաց զաւակները շատ անգամ թէ կազմուածքով և թէ բնաւորութեամբ անչափ զանազանւումեն մէկ մէկուց, այդ է պատճառը, որ քաջառողջ գերդաստանների մէջ անդրանիկները տկար և նուազ են լինում: Սրբմե կատարելապէս չզարգացած, հարկաւոր չէ ամուսնանալ, այլ պէտք է սպասել մինչև մարմինը բաւականապէս ամրանայ, որպէս զի կարողանայ կատարել ծննդականութեան մեծակշիռ պայմանը. ապա թէ ոչ, թէ ծնողքը և թէ զաւակները շարաշար կը տանջուին այդ տեսակ զանցաութիւններից: Մեգլիայում կնամարդոց կատարեալ չափահասութեան համար, իբրև ընդհանուր կանոն, կարելի է ընդունել քսանից մինչև քսանըհինգ տարեկան հասակը. իսկ տղամարդոց — քսանըհինգից մինչև երեսուն: Մայց շատ անգամ տեսնուամենք, որ զանց առնելով այս կանոնը, տասնըեօթը տարեկան, դեռ ևս Ֆիզիքապէս և մտաւորապէս չզարգացած աղջիկներուն յորդորումեն մարդու գնալ, միանգամայն մոռանալով, որ այդպիսի ամուսնութիւնը թէ նոցա և թէ նոցա զաւակների առողջութեան անուղղելի վնասներ է տալու. և այսպէս յաւիտեանս փշաջնումեն նոցա կեանքը: Մյս կանոնին ենթարկուած են անասունքը ևս, և որովհետև դոցանից դրամական օգուտ կայ, ուստի ամենքը զգուշութեամբ և ճշդութեամբ գործ են դնում այդ կանոնը, և այսպէս անասունքը ազատ են մնում այն վնասներից, որոնց անդադար ենթարկվումէ մարդս:

Մ ն ա գ ա ն ամուսնութիւն. — Մնագան ամուսնութիւնքը զաւակների առողջութեան համար գրեթէ նոյնպէս անբարեյաջող

\*) Տես յաւելում Ե:

են, որպէս և վաղորօք ամուսնութիւնքը: Սահմանուած հասակը առնելուց յետոյ, թէ կենդանիք և թէ բուսականք ընդունակ չեն քաջառողջ պտուղներ ունենալու, և անագան ամուսնութիւնքը, որ խիստ շատ են լինում այժմ, մանաւանդ օրական ապրուստը դժուարութեամբ ճարող գործաւորների մէջ, անասելի վնասներ են պատճառում նոցանից յառաջացած զուակներին: Վեռ ևս քառասուն տարեկան հասակից վաղ ծննդականութեան զօրութիւնը արդէն չափաւորապէս թուլանումէ, և, համեմատարար խօսելով, քառասուն տարեկանից յետոյ շատ սակաւ են ծնանում այն ծնողքը, որոնք իրանց կատարեալ հասակը առած չառած ամուսնացել են: Բացի դորանից հարկաւոր է նկատել, որ անագան ամուսնացող ծնողաց առողջութիւնը ըստ մեծի մասին, դեռ ևս ամուսնանալուց առաջ, խանգարված է լինում մտաւորական և ֆիզիքական վաստակներով, անառակ կենցաղաւարութեամբ, և վերջապէս առհասարակ ամուրի կեանքից յառաջացած հետեւեալներով:

Սեփ զանազանութիւնը հօր և մօր տարիքներին մէջ. — Վմանապէս հարկաւոր չէ մտանալ, որ մեծ զանազանութիւնը ծնողաց հասակների մէջ սաստիկ ազդեցութիւն ունի զուակների հիւանդոտութեան վերայ: Այժմ ծնողաց մինը շատ ջահիլ է, իսկ միւսի տարիքները արդէն անցած, դոցա զուակները ըստ մեծի մասին վատառողջ են լինում:

#### ԾՆՈՂԱՅ ԴՐՈՒԹԻՒՆԸ.

Նոցաց զրութիւնը յղանալու ժամանակ նոյնպէս ազդեցութիւն ունի զուակների առողջութեան վերայ: Սմանց ծնողաց զուակները ունենումեն որքան և իցէ ընդհանուր նմանութիւն մէկ-մէկու, բայց երբէք չէ պատահում, որ երկուքն էլ նոցանից միանգամայն մէկ մէկու նման լինէին: Վիխաւոր պատճառը այդ զանազանութեան այն անհրաժեշտ փոփոխութիւնն է, որ լինումէ ծնողաց զրութեան մէջ մասամբ ժամանակի ազդեցութիւնից, մասամբ էլ նոցա ֆիզիքական և մտաւորական կեանքի վերայ ներգործող արտաքին հանգամանքներից: Բազմաթիւ դիտողութիւններից կարելի է հաւաստիութեամբ եզրափակել, որ յղանալու միջոցին ծնողաց առողջութեան ժամանակաւոր խանգարումն անգամ մեծ ազդեցու-

Թիւն ունի զաւակների վերայ: Ակատողութիւնը վկայումէ, որ հօր հոգեկան անհանգստութիւնը և անսովոր ուժաթափութիւնը անջնջելի հետքեր են թողած երեխայի կազմուածքի վերայ: Այն օրինակներ, որ սովորապէս համեստ ու պարկեշտ կեանք վարող հօր պատահական արբեցողութիւնը պատճառ է եղել նորա զաւակի ապուշ լինելուն: Ազգի թէ բարերարոյ ծնողը կանոնաւոր կեանք վարելու և իւր կիրքերը չափաւորելու համար ուրիշ աւելի շարժառիթ պատճառ ունենայ, բայց եթէ ճանաչողութիւնը այն հետեանքների, որոնք յառաջանալու են զաւակների համար նորա այսպէս կամ այնպէս կեանք վարելուց: Շատ ծնողք վշտացած և տանջուած են իրանց զաւակների վատթար արարողութեանց համար, առանց ամենեւին կասկածելու, որ այդ արարողութեանց պատճառը իրանք են, իրանց որ և իցէ թուլութիւնն է, որ վաղուց արդէն մոռացած են\*:

Մտաւոր անգաղար խանգարուած առողջութիւնը, որ յայտնի է լինում նոցա բոլոր կենդանական գործողութեանց թուլութիւնից, մի ուրիշ և աւելի զօրաւոր պատճառ է զաւակների տկարակազմ լինելուն: Այդպիսի մշտական վատառողջութիւնը շատ տեսակ տեսակ է լինում, բայց որ աւելի յաճախ է պատահում և որ աւելի վնասակար է ներգործում զաւակների վերայ, ստամոքի անմարսողութիւնն է, և, իբրև գորա հետեանքը, վատ սննդառութիւնը: Շատ ծնողք բոլոր իրանց կեանքը շարաշար մաշվումեն մաղձից կամ ստամոքական ցաւերից, ինչու որ արժանապէս ուշ չեն դարձնում կերակուրի, մարմնամարզութեան, յտակութեան, օդամաքութեան, լուսի և տեղի գործած ազդեցութեան վերայ և այլն. հետեաբար և նոցա անմեղ յաջորդները այդ զանցառութեան պատճառով ենթարկվումեն մասամբ նոյն տանջանքներին: Արքա միանգամայն անտեղեակ լինելով, թէ այս կամ այն գործողութիւնը ինչ հետեանքներ կարող է յառաջացնել, չունին ևս մի ազգու շարժառիթ իրանց առօրեայ սովորութիւնքը փոխելու, կամ այնպիսի միջոցներ գործ դնելու, որոնք անհրաժեշտապէս հարկաւոր են իրանց յատուկ առողջութիւնը բարւոքելու և պահպանելու համար, և յետոյ զարմանումեն սաստիկ, երբ որ ասումեն նոցա, թէ

\* Թէ որպիսի նշանակութիւն ունի ծնողաց անչափաւորութիւնը վերաբերութեամբ երեխաների ապուշութեան (ИДИОТІЗМЪ), տես բժշկ. Howe'ի շարագրութիւնը On the Causes of Idiocy in Massachusetts.



խնամք տանելով իրանց առողջութեան նոքա մի և նոյն ժամանակ ձեռնառու են լինում իրանց զաւակների բարեկեցութեան և բախտաւորութեան, սպասաւորումեն այն անմեղ մանկանց, որոնց վերայ յետոյ պէտք է կենտրոնանայ բոլոր նոցա սէրը :

Աստրակաց կարծիք է եղել, թէ խելացի հայրերից ծնվումեն յիմար երեխայք, որից և եղբայրակումեն, թէ հայրը փոքր ազդեցութիւն պէտք է ունենայ իւր զաւակների կազմուածքի վերայ: Արդարև, սակաւ է պատահում, որ հանճարաւոր մարդոց զաւակները իրանց հօր նման հանճարաւոր լինին, բայց այդ փաստից ես միանգամայն հակառակ ձեր ընդունածին եղբակացութիւն եմ անում, ես հաստատումեմ, որ իսկ այդ փաստը մեծ ապացոյց է հօր ճշմարիտ ազդեցութեանը զաւակների կազմուածքի վերայ, և այդ փաստը միայն այդ նշանակութեամբ պիտոյ է ընդունենք: Այո՛ղ այն, որ հանճարաւոր մարդիկը ըստ մեծի մասին շատ ուշ են ամուսնանում, նոքա մի առանձին յատկութիւն ևս ունին, որ գրեթէ ամենեցուն յայտնի է. դոքա թէ իրանց առողջութեամբ և թէ առհասարակ կենցաղավարութեան կերպով առաւել քան թէ ուրիշները շեղվումեն բնութեան ուղիղ կանոններից: Կոքա մեծ մասամբ երեւակայիչ, դիւրագրգիռ և շտիպանց գիւրազգաց մարդիկ լինելով, ամենեին կարգ ու կանոն չեն պահում իրանց սովորութեանց մէջ, և գրեթէ ամենքը առանց բացառութեան ենթարկուած են ստամոքի անմարսողութեան, շատ անգամ և մեղմամղձութեան: Բայց մի թէ ֆիզիքականապէս և մտաւորապէս զօրեղ ու առողջ զաւակներ ունենալու համար այդպիսի պայմաններ է պահանջում բնութիւնը: Բացի դորանից մի մոռանաք մօր ազդեցութիւնը և այն հասարակաց յայտնի փաստը, որ հանճարաւոր մարդիկը, ըստ մեծի մասին, անհանճարաւոր կին են անում. ուրեմն, ասացէք, կայ արդեօք տեղիք և հիմն սպասելու, որ ընդունակ և խելացի զաւակներ ծնուէին այն ծնողներից, որոնց մինը սահմանափակ խելքի տէր է և զուրկ ամենայն ընդունակութիւնից, իսկ միւսը, իւր մտաւորական աստիկ զբաղմունքներից առողջութիւնը փշացնելով, շատ անգամ նոյնպէս սահմանափակվումէ և ոչ մի բանով չէ գերազանցում կնոջ: Այլ ընդհակառակն, զարմանալի չէ՛ր լինիլ արդեօք, եթէ, շնայելով այդ անբարեյաջող հանգամանքներին, հանճարը, առանց իւր զօրութիւնը թուլացնելու, գէթ առաջի սերունդին անցանէր: Այդպիսի նիւթերից հանճարաւոր մարդ կարող չէ գոյանալ: Կարող են պատա-

Տել և այնպիսի բարեյաջող դիպուածներ, որ հանձարաւոր հայրերից ծնունդն և հանձարաւոր զաւակներ, բայց դոքա, անտարակոյս, դեռ ևս իրանց հանձարը յայտնի չկացուցած, բնկնում մեռնումեն: Առողջ և գործունեայ հայր, Ֆիզիքականապէս առողջ և հաստատ բնաւորութեան տէր մայր, որի մտաւորական և Ֆիզիքական գործակատարութիւնքը անդադար ոչ կորվումեն ուղղուելով զէպի մի որ և իցէ նշանաւոր նպատակ, — ահա այն ամենաբարեյաջող հանգամանքները, որ հարկաւոր են շնորհալի զաւակներ ունենալու համար: Ահարագրութեան նայելով, Ասպուլճօնի մայրը այդպիսի կին էր, և Անգլիոյ երեւելի մարդոց մայրերը, ըստ մեծի մասին, այդպիսի որակութեանց տէր կանայք էին: Ահա ինչու համար շատ անգամ, կարգաւրով երեւելի մարդոց վարքագրութիւնքը, մենք տեսնումենք, որ մայրը առաջինը նշմարումէ և պահպանում այն կրակը, որ յետոյ պայծառ բոցով վառվումէ: Ասածներէիցս հեռւումէ, որ հօր ազդեցութիւնը զաւակի բնաւորութեան վերայ ոչ պակաս զօրաւոր է, քան թէ մօր ազդեցութիւնը, և եթէ այդ բանը չեն խոստովանում, դորա պատճառը այն է, որ միանգամայն մոռանումեն հօր առողջութեան թոյլ կողմերը և անկարգ կենցաղավարութիւնը, որոնք փոխումեն և մինչև անգամ բոլորովին խանգարում այն բնական ազդեցութիւնը, որ նորա հանձարը պէտք է ունենար երեխայի վերայ: Բացի դորանից, լինումեն և այնպիսի դիպուածներ, երբ հայրը անուղղակի կերպով մեծապէս ներգործումէ իւր գալոց զաւակի կազմութեան և նորա որակութեան վերայ, այն է, երբ որ մայրը սաստիկ պաշտելով կամ սիրելով և կամ մի որ և իցէ ուրիշ պատճառով բոլոր իւր հոգեկան զօրութիւնը կենտրոնացնումէ նորա կերպարանքի և բնաւորութեան վերայ: Աուցէ այդ բնաւ չկարծած պատճառից ևս յատմանումէ այն երեւոյթը, որ մի քանի գերդաստանի մէջ բոլոր երեխայքը մեծ նմանութիւն են բերում ծնողներից մինին և գրեթէ ոչ մի նմանութիւն միւսին:

Օճողաց Ֆիզիքական և մտաւորական ազդեցութիւնը զաւակների առողջութեան, զարգացման և բնաւորութեան վերայ — է մի ծանրակշիւ և սոհասարակ մեծ ուշադրութեան արժանի ինդիք, և որքան որ աւելի տարածվումեն բնապատմական գիտութիւնքը, այնքան ևս զա գրաւումէ մտածող մարդոց միտքը: Մինչև որ հասարակութիւնը բնահանրապէս քաջ տեղեակ չի լինի — թէ ժառանգական և պատահական պայմանները ծնողաց գրութեան մէջ

Ինչ Փնասակար ազդեցութիւնք են ունենում զաւակների վերայ, և մինչև որ այդ գիտութիւնը կենցաղաւարութեան և ամուսնութեան ուղեորիչ չլինի,—մարդկային ցեղը անդադար վաթարանալու է կամ գէթ երբեք հասանելու չէ այն կատարելութեան, որ նախասահմանած է Արարչից և որին նա, անշուշտ, ընդունակ է հասնելու: Ս՛կնք արդէն անցողաբար ցոյց տուինք, թէ ինչ հետեւանքներ կարելի է ստանալ, եթէ տնական կենդանիներու որակութիւնքը բարելաւացնելու համար պատշաճաւոր և զգուշաբար խնամք գործ գրուի: Թէև համեմատութիւնը մարդուս կենդանիներու հետ կարող է անպատվութիւն թուել նորան, սակայն այսու ամենայնիւ մարդուս Ֆիզիոլոգիայի գիտութիւնը բերումէ մեզ այն եզրակացութեան, որ մարդկային ցեղը իւր Ֆիզիքական բնաւորութեամբ նոյն կանոններին է ենթակայ, ինչպէս և կենդանիք, նորա սերունդի առողջութիւնը և առհասարակ դրութիւնը գլխաւորապէս կախում ունի ծնողաց դրութիւնից: Վուցէ թէ ժառանգական պակասութիւնքը և տկարութիւնքը երբեք կարելի չէ միանգամայն վերացնել, բայց եթէ ծնուած օրից սկսած մինչև կատարեալ հասակը պատշաճաւոր խնամք տարուի երեխային, այն ժամանակ որքան և իցէ կարելի է մեղմացնել այդ պակասութիւնքը և տկարութիւնքը: Առհասարակ ժառանգականութեան խնդիրը առողջութեան վերաբերութեամբ այնպիսի մեծակշիռ և զեռ ևս մի քանի հանգամանքներում այնպիսի մութ խնդիր է, որ մեծ ուշադրութիւն է պահանջում Ֆիզիոլոգների և Ֆիլանթրոպների (մարդասէրների) կողմից:



ԻՆՉ ԱԶԳԵՑՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ ԶԱՒԱԿԻ ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ ՎԵՐՍԵ ՄՈՐ  
ԿԵՆՑԱԳԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՅՂՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

Մտուելու զաւակի առողջութեան վերայ ազդեցութիւն ունեցող պայմաններին վերաբերումն, ինչպէս որ արդէն ասել եմ, մօր հոգեկան դրութիւնը, առողջութիւնը և վարքը յղութեան ժամանակ: Թէև այդ պայմանների վերայ սովորաբար շատ սակաւ են ուշ դարձում, բայց այդու ամենայնիւ դճքա անասելի մեծ նշանակութիւն ունին մեզ համար, և որովհետև զոցա քննողութիւնը մօտ կապակցութիւն ունի մեր գրքի նպատակի հետ, ուստի ես նուիրումեմ դորան մի առանձին գլուխ:

Մայրերի անուշադրութիւնը գէպի իրանց առողջութիւնը յղութեան ժամանակ յառաջանումէ նորանից, որ նոքա բնաւ չեն իմանում, թէ որպիսի հետեանքներ կարող է ունենալ այդ անուշադրութիւնը իրանց զաւակների համար: Շատ մայրեր, որոնք այժմ ամենայն կերպ աշխատում են իրանց փոտերին և ամենաչնչին ցանկութիւններին անգամ կատարումն տալ, գուցէ միանգամայն դիմադարձ կը լինէին ամեն տեսակ գայթակղութեանց, եթէ համոզուած լինէին այն աներկբայելի ճշմարտութեան մէջ — որ իւրաքանչիւր խոտորումն առողջապահութեան օրէնքից մի հարուած է նոցա ապագայ զաւակների առողջութեանը:

## ՀՈՒԵՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ.

Աս արդէն մի քանի ապացոյց բերի Հաստատելու Համար, թէ մօր դրութիւնը իրականապէս ազդեցութիւն ունի զեռ ծնուելու երեխաների մարմնակազմութեան վերայ, և եթէ Հարկաւոր լինէր, ես կարող էի առանց դժուարութեան մի քանի օրինակներ էլ բերել: Էջնագոյ փաստերը ուշադրութեան արժանի փաստեր են. հոգեկան սաստիկ վրդովմունքի ենթակայ մայրերը ունեցած են այնպիսի զաւակներ, որոնք մինչև իրանց մահը ջրային ցաւերով կամ վերնոտութեամբ\* շարաշար տանջուել են, նաև արտայայտել այնպիսի վախկոտութիւն, որը ոչ մի կերպով կարողացած չեն անհետացնել նորանից: Այստեղ յարմար ենք համարում նկատել, որ ժողովրդի հաւատը եղելութեան չափից անցանումէ, վերագրելով միայն մօր երեակայութեան ազդեցութեանը այն խաւերը և բիծերը, որոնցով երբեմն ծնվում են երեխայք:

Հասարակաց Համար վտանգաւոր և անակնունելի դժբաղդութեանց ժամանակները մեզ շատ օրինակներ են բերում թէ մօր տրտրութիւնը և առհասարակ հոգեկան վրդովմունքը որպիսի ազդեցութիւն են ունենում երեխայի մարմնակազմութեան վերայ, և եթէ մենք սակաւ ենք տեսնում այդ տեսակ օրինակներ, որոնք խաղաղ ժամանակների և մասնաւոր կեանքի շրջանից դուրս չեկող մարդոց վերաբերուէին, դորա պատճառը այն չէ, որ այդպիսի օրինակներ այն տեղ չեն գտնվում, այլ այն է, որ մենք զոցա վերայ աւելի սակաւ ենք ուշ դարձնում: Մասնաւոր կեանքից ևս յայտնի են փաստեր, որ մեծ և անակնունելի փոփոխութիւնքը կամ դիպուածքը, չափազանց վրդովելով կամ գրգռելով յղի կանանց հոգեկան դրութիւնը, երեխային միանգամայն ուրիշ բնաւորութիւն են տալիս, այնպէս որ նա բնաւ նմանութիւն չէ ունենում գերդաստանի միւս անդամների հետ: Այսպէս Էջակոր I, Անգլիոյ թագաւորը, ի բնէ այնպիսի յատկութիւն ունէր, որ մերկ սուսեր կամ մի այլ որ և իցէ վտանգ աւետածովը սիրտը խկոյն սաստիկ դող էր ընկնում, այդ իրողութիւնը վերագրում են, և ըստ երևութին ոչ առանց հիման, այն հանգամանքին, որ նորա մայրը, Մարիամը, նորանով

\*) Падучая болѣзнь.

յղի ժամանակը անդադար երկիւղի և սաստիկ հոգեկան վրդովմունքի մէջ էր եղած:

Մեզ յայտնի է, որ մօր սաստիկ բարկութիւնը կարող է այն սաստիճան փշացնել նորա կաթը, որ ծծող երեխայի մէջ կարող է դորանից յառաջանալ փորացաւ և ստամոքսի անմարսողութիւն<sup>1)</sup>: Բայց եթէ մօր դրութիւնը կարող է այդպիսի ազդեցութիւն ունենալ իւր արդէն ծնուած երեխայի վերայ, որ հարկաւ որքան և իցէ նորանից անկախ է, ապա ուրեմն որքան առաւել ևս մեծ պէտք է լինի այդ ազդեցութիւնը այն երեխայի վերայ, որ դեռ ևս մօր արգանդումն է, նորա արիւնով է սնանվում և, ասես թէ, նորա մարմնի մի մասն է կազմում: Թէ փաստերը և թէ մարդուս բանականութիւնը համահասարակացումն այդ ազդեցութեան գոյութիւնը, և խօսք չկայ, որ դորա շափը և պայմանները գիտնալուց մեծ գործնական օգուտ է յառաջանալու երկուսի համար էլ, թէ երեխայի և թէ մօրը:

Երկար ժամանակ կարծումէին, որ մօր երեակայութիւնն է միակ պատճառը այն ամենայն մասնաւոր յատկութեանց և անկատարելութեանց, որոնցմով երեխայք աշխարհ են գալիս: Բայց աւելի ճիշդ քննութիւնը ցոյց տուաւ, որ այդ յատկութիւնքը և այլանդակութիւնքը շատ սակաւ են համապատասխանում մօր երեակայութեան վերայ ներգործող առարկաների բնաւորութեանը: Ըստ մեծի մասին երեխաների կազմուածքի մէջ ոչ մի տարօրինակ յատկութիւն չէ յառաջանում յղի կանանց ստացած տպաւորութիւններից, այլ ընդհակառակն, շատ անգամ ծնվումն առանձին յատկութիւններով երեխաներ այնպիսի մայրերից, որոնք ամենեւին ենթարկուած չեն սաստիկ տպաւորութեանց: Ըրդարեւ, — բերումն այնպիսի դիպվածներ, երբ երեխայի այլանդակութիւնը, ըստ երեւութին, ուղիղ հետեանք էր մի սաստիկ տպաւորութեան, որ նորա մայրը իւր յղի ժամանակ որ և իցէ կերպով ստացել էր մի այլանդակ առարկայից: Բայց եթէ մեր աչքի առաջ ունենանք, թէ որքան շատ են պատահում այդ տեսակ տպաւորութիւնքը և որքան սակաւ — գոցա համապատշաճ այլանդակ հետեանքներ, այն ժամանակ կը տեսնենք

<sup>1)</sup> Неварение желудка.

և կը համոզուինք, որ առ հասարակ այդ մասնաւոր այլանդակութեանց պատճառը պէտք է աւելի խորունկ որոնել:

Աւրեմն, օրինակների սակաւութիւնը հերքումէ այն կարծիքի հնարաւորութիւնը, որ ասումէ թէ երեխայի մասնաւոր յատկութիւնքը և այլանդակութիւնքը ուղիղ հետեանք են մօր յղի ժամանակ ստացած տպաւորութեանց, բայց մենք ունինք առաւել շատ օրինակներ, քան թէ որքան հարկաւոր է, որոնցից կարող ենք ճիշդ եզրափակութիւն անել, որ երեխայի կազմուածքի և մօր ընդհանուր առողջութեան ու զգացողութեան մէջ կայ սերտ կապակցութիւն: Առանց որ և իցէ փորձի անգամ մեր բանականութիւնը մեզ նոյն եզրակացութեան է բերում. ինչ որ ներգործումէ ամբողջ կազմուածքի ընդհանուր առողջութեան և գործողութեան վերայ, նոյնը պիտի ներգործէ և նորա բաղկացնող մասերի վերայ: Արովհետեւ երեխան իսկութեամբ կազմումէ մօր մի մասն, քանի որ նորա արգանդումն է, ուստի բնական է կարծել, որ այն միջոցին նա ենթադրած է նոյն ազդեցութեանց, որոնք ներգործումն մօր կազմուածքի վերայ: Թէ որ հոգեկան վերջովմանց կամ դէպի իւր առողջութիւնը միշտ անուշադիր լինելուն պատճառով մօր մարտոզականութիւնը աւրուած է և արիւնը փշացուած, մի թէ այդպիսի դրութիւնը վնասարար ներգործելու չէ և երեխայի վերայ, որովհետեւ դա պէտք է անանուի նոյն իսկ արիւնով, որ չէ բաւականանում մօր սննդեան համար անգամ:

Այժմէ հոգեկան սաստիկ վրդովմունքը, որին ենթարկվումէ մայրը իւր յղութեան ժամանակ, անսովոր և առանձին դիպուածներում նկատելի կերպով ներգործումէ երեխայի կազմուածքի վերայ, ուրեմն ամենեին տարակոյս չկայ, որ մօր հոգու սովորական դրութիւնը, — թող այդ դրութիւնը գրգռած կամ թուլացած, հանգիստ կամ զայրացած լինի, — նոյնպէս տեղական ու դրական ազդեցութիւն է ունենում երեխայի վերայ, թէ և այդ ազդեցութիւնը այնքան նկատելի չէ: Աւստի երեխայի հոգեկան արամագրութիւնքը շատ անգամ ուրիշ բան չեն, բայց եթէ ճիշդ նկարագիր մօր յղութեան ժամանակ ունեցած զգացողութեանց: Ահա գլխաւոր պատճառը, ինչպէս վերեն էլ արդէն ասացի, ինչու համար երեխայք մի և նոյն գերդաստանի մէջ զանազան բնաւորութիւնք են ունենում: Շատ անգամ պատահումէ, որ կրտսեր զաւակը մեծապէս զանազանվումէ անդրանիկից թէ մտաւորապէս և թէ ֆիզիքականա-

պէս. զորս պատճառն էլ այն է, որ նոյն իսկ քսան կամ քսանը-  
հինգ տարեկան ծնողաց զգացողութիւնքը, կիրքերը և ֆիզիքական  
առողջութիւնը շատ և շատ փոխվումեն, երբ որ նոքա արդէն քա-  
ռասունից անցնումեն, կեանքի զժուար և անյաջող իրողութեանց  
հանդիպելով:

Աս արդէն ցոյց տուի, որ բոլոր երեւելի մարդիկ քանքարա-  
ւոր և գործունեայ մայրերից են ծնուած. այդ փաստը նոյնպէս վը-  
կայումէ, որ մայրը մեծ ազդեցութիւն ունի իւր յաջորդների վը-  
րայ: Աւ ընդհակառակն, շատ սակաւ օրինակներ կան, որ քանքա-  
րաւոր հայրերը քանքարաւոր զուակներ ունենային: Այս վերջին  
իրողութեան պատճառը, ինչպէս ես արդէն ասացի, մասամբ այն  
է, որ քանքարաւոր մարդոց կանայքը սակաւ է պատահում, որ նոցա  
նման քանքարաւոր լինին, մասամբ էլ այն է, որ այդպիսի մարդոց  
սովորաբար վարած կեանքը միանգամայն հակառակ է առողջութեան  
օրէնքներին, մնաց որ զոքա չափազանց թոյլ կազմուածքի տէր են  
լինում: Կօսք չկայ, որ թէ մայրը և թէ հայրը անմիջապէս ազ-  
դեցութիւն են ունենում իրանց զուակների վերայ, բայց մօր ազ-  
դեցութիւնը, նայելով նորա յատկական դրութեանը, իբրև ծնողի,  
աւելի երկար է շարունակվում: Այս հանգամանքը մեզ լաւ բա-  
ցատրումէ, թէ ինչու համար քանքարաւոր երեխայոց ծնունդը վը-  
րագրումեն զխառորապէս մօր որպիսութեանը և ոչ թէ հօրը:

Այժմէ մի տկարակազմ երեխայ, որի նուազ մայրը իւր կեանքը  
մայրաքաղաքի մեղկացուցիչ զուարճութեանց մէջ է անց կացնում,  
համեմատենք մի ուրիշ, առողջ և ամբակազմ գիւղացի երեխայի  
հետ, կունենանք արդեօք տեղիք և իրաւունք կասկածելու, գէթ  
մի բոլոր, որ դիպուածն է միայն այդպէս տնօրինում, դիպուածն է,  
որ մինին առողջութիւն է պարգևում, իսկ միւսին տկար կազմուածք,  
և կարելի է արդեօք կարծել, որ ապագայ երեխայի համար մի-  
րինակ ներգործութիւն ունի յղի մօր այսպէս կամ այնպէս կեանք  
վարելը: Աւ մի թէ խստագոյն դատապարտութեան արժանի չէ այն  
մայրը, որ աններելի տգիտութեամբ կամ տղայական անձնատիրու-  
թեամբ անձնատուր է լինում շնչին զուարճութեանց, որով յախ-  
տեանս ժամանակի խանգարումէ իւր զուակների առողջութիւնը և  
բարեբախտութիւնը: Ամենայն կնոջ, իւր յղացած բոլորից սկսած,  
առաջին և վերջին պարտականութիւնն է ըստ կարողութեան հո-  
գալ իւր ֆիզիքական և մտաւորական առողջութիւնը, պահպանել և



բարեբաւացնել որքան ներուձէ կազմուածքի որակութիւնը: շար-  
կաւոր է մանաւանդ այն պատճառով, որ մի որ և իցէ զոհարերու-  
թիւն չէ մօր կողմանէ այդ պարտականութեան կատարելը, որի փո-  
խանակ նա արժանապէս և շահով վարձատրուելու է վերջը իւր և  
իւր զաւակի առողջութիւնը ապահովացնելով:

Շատ կանայք յղութեան վերայ ահով ու զոգով են նայում,  
ասեա թէ դա նոցա համար մի վտանգաւոր դրութիւն է, և վախ-  
ճանք շատ կասկածելի և երկիւղալի: Բայց անպատճառ հարկաւոր  
է իմանալ, որ յղութիւնը ինքն ըստ ինքեան, բնական պայման-  
ներով, ամենեին վտանգաւոր դրութիւն չէ, և եթէ լինումէ վտան-  
գաւոր, գորա միակ կամ գլխաւոր պատճառը այն է, որ մայրը իւր  
վերայ ուշ չէ դարձնում կամ պատշաճաւոր կեանք չէ վարում այդ  
միջոցին: Աթէ յղի կիներ, առանց ապագայի վերայ մտածելու, ինչպէս  
որ սովորաբար պատահումէ, արհամարհումէ առողջութեան սկզբնա-  
կան օրէնքը, կամ անձնատուր է լինում անգործութեան, հեշտական  
կիրքերի, շնչին բաների, որկորապաշտութեան, ամենեին զարմա-  
նալի չէ, որ նա այդպիսի դիպուածում աւելի սաստիկ կը շարժա-  
րուի, քան թէ երբ յղի չլինէր: Արովհետեւ մայրերը շատ անգամ  
սղիստութեան պատճառով այդպիսի անպատշաճ կեանք են վարում,  
ուստի անպատճառ հարկաւոր է ցոյց տալ նոցա, որ յղի մօր կեն-  
ցապաւարութեան և ծնուելու երեխայի առողջութեան մէջ սերտ  
կապակցութիւն կայ, որպէս զի նոքա խոհեմաբար պահպանելով  
առողջութեան օրէնքները, աւելի յաջողութեամբ ձեռնառու լինին  
իրանց զաւակների բարեբախտութեան:

Ի հարկէ կարելի է ցոյց տալ օրինակներ, որ մեռնող մայրերն  
անգամ ծնել են առողջ և ամրակազմ երեխայք, բայց այդ հաղուա-  
ղիւտ դիպուածները, եթէ ընդարձակ նշանակութիւն անգամ տալու  
լինինք նոցա, դարձեալ չեն հաւասարակազմում այն յաճախ պատահած  
դիպուածների հետ, որոնք միանգամայն գորա հակառակն են ասում:  
Բացի գորանից, պիտոյ է ասել, որ կանայք թէև երբեմն լինու-  
մն ծանր և մահացու հիւանդ, բայց այդ հիւանդութիւնը այնպիսի  
հիւանդութիւն է, որ ներգործումէ կազմուածքի միայն մի մասնի  
գերայ, և որ, համեմատաբար խուսելով, սակաւ սպրեցութիւն է  
գործում ամբողջ կազմուածքի վերայ: Ապտահում ևս, որ յղու-  
թեան ժամանակ հիւանդութիւնը կանգ է առնում և կազմուածքի  
ըլլոր զօրութիւնը կենտրոնացնումէ արգանդի մէջ նոր էակի կազ-

մաւորութեան համար. բայց երբ այդ գործը վերջանումէ, հիւանդութիւնը կրկին ստանումէ իւր առաջնայ սաստկութիւնը և աւելի արագութեամբ անգամ, քան թէ առաջ, մտանումէ իւր տխուր վախճանին: Այդ իրողութիւնը յաճախ պատահումէ ծիրական ակտուանցողներին: Օրիական ակտուանցող կանայք կարող են ծնել և արդարեւ երբեմն ծնումն, համեմատաբար խօսելով, առողջ երեխայք, որոնք յետոյ, լաւ խնամարկութեան տակ և առողջ ծծմայրների ձեռք ընկնելով և գնալով գնալով, ողջ առողջ մեծանում և կազդուրվումն: Բայց այդպիսի դիպուածները ոչ թէ հերքումն մօր ազդեցութիւնը զուակի վերայ, այլ ընդհակառակն, աւելի հաւանական ու ճիշդ կերպով վկայումն այդ ազդեցութեան լինելութիւնը: Այլ արդարեւ, եթէ ծիրական ակտի զարգացումը յղութեան ժամանակ կանգ է առնում, նշանակումէ, որ այդ միջոցին մայրը աւելի առողջ և աւելի զօրեղ է լինում քան թէ յղանալուց առաջ էր, ուստի ծնուելու երեխան ևս, հաղորդակից լինելով նորա մէջ վերանորոգուած առողջութեան, աւելի լաւ յատկութիւններով աշխարհ է գալիս, քան թէ այն ժամանակը, երբ մօր հիւանդութիւնը առ ժամանակ դադարած չլինէր: Այդ փաստը հիմնաւորապէս հաստատումէ, որ մայրը մեծ ազդեցութիւն ունի իւր զուակների վերայ:

Շատ անգամ էլ օրինակ են բերում խուլաւոր՝ ծնողաց զուակներին, իրրեւ բացառութիւն ժառանգական հիւանդութեան կանոնից: Արդարեւ, խուլաւոր ծնողաց զուակները տղայական հասակում, ըստ երևութին այնպէս առողջ են երևում, որ վայրի վերոյ և անփորձ գիտողներին կարող են մոլորութեան մէջ ձգել: Արբեմն դոքա այնպէս կլորակ, վարդագեղ և լաւ կազմուած են լինում, որ ասես թէ կատարեալ առողջութիւն են վայելում, բայց արի տես, որ այդ գեղեցիկ և շատ բան խոստացող արտաքին կերպարանքի տակ ծածկվումն քնքուշ, տկար կազմուածք և դիւրագրգռութիւն, որ վկայումն կենսական զօրութեան նուազութիւնը: Այդպիսի երեխայքը լինումն սովորաբար երկարահասակ, լղար և դիւրագրաց, կամ հասարիկ, գէր ու ծանրաշարժ, և ուշ թէ կանուխ զոհ են դառնում այն ժառանգական հիւանդութեան, որից, ըստ երևութին, իրանց տղայական հասակում միանգամայն ազատ էին:

1) Золотушный.

Արուհետե մօր գրութիւնը ունի այդպիսի մեծ ազդեցութիւն զաւակների բարեբախտութեան վերայ, հաւանական է, որ հարկաւոր է լաւ խնամք տանել նորա առողջութեան, յարմարակեցութեան և առհասարակ բաւականութեան, մանաւանդ յղի ժամանակը: Այդ վախճանին հասնելու համար հարկաւոր է կատարել այն օրէնքները, որոնցից կախում ունի կազմուածքի այլ և այլ գործողութիւնքը, և ոչ թէ անմտաբար լցուցանել նորա ունայն ցանկութիւնքը: Հարկաւոր է նորան ազատ պահել ամեն տեսակ մտայլ և վշտացուցիչ տպաւորութիւններից, չվրդովել նորա հոգեկան հանգստութիւնը, և խնամք տանել, որ շրջապատած առարկաները ուրախ պահէին նորա սիրտը: Բարւոք է, եթէ նա մի որ և իցէ հաստատ ու կազդուրեցուցիչ բանի պարապէր, որ մի և նոյն ժամանակ նորա մտաւորական և բարոյական ընդունակութեանց առողջ կերակուր տար և թողլ չտար նորան ուշը միտքը միայն իւր վերայ կենտրոնացնելու: Կողմնա ազատութեան ժամերին իւր համար մի կանոնաւոր, միտքն ու մարմինը կազդուրող բանի պարապէ, զգուշանայ ազատութիւն տալ իւր տարապայման ցանկութեանց, անհոգութեան, աննպատակ վիպասանութիւնք կարգալու և, կարճ ասեմ, ամեն տեսակ հասարակական զուարճութեանց: Աշրբեմն կարող են օգկտաար լինել սովորական տնական պարտաւորութեանց ընդհատութիւնը, կամ կենցաղաւարութեան առօրեայ սովորութեանց փոփոխութիւնը, եթէ այդ փոփոխութիւնը փորձով առողջարար է համարվում: Հղի ժամանակ առաւել, քան թէ երբ և իցէ, հարկաւոր է զովարար և պարզ օդ շնչել, քնել այնպիսի սենեակում, որի մէջի օդը անզաղար պիտի մաքրուի, չարակել չափազանց կակուղ անկողնի մէջ, որպէս զի թուլութիւն չտանայ. նաև անկողնի վերայ ամենևին վարագոյր հարկաւոր չէ, ամենայն օր կանոնաւոր կերպով պէտք է ման գալ պարզ օդի մէջ, ուշադրութիւն դարձնել յստակութեան, զգեստի, կերակուրի և առհասարակ կեանքի սովորական պայմանների վերայ: Այս առարկաներից մեծ մասը ես արդէն միւս շարագրութեանցս մէջ քննել եմ, ուստի այստեղ պիտի կրկնեմ այն, ինչ որ արդէն ասած եմ, միայն թէ մի քանի փոփոխութիւնք անելով, ինչու որ այժմ մեր քննելի առարկան յատկապէս կանանց յղի գրութիւնն է: Այս կսկսեմ կերակուրից:

## ԳՆԵՐԿՈՒՐ՞.

Հասարակաց մէջ տարածուած կարծիքով, յղի կնոջ հարկաւոր է տալ սովորականից շատ սննդաբար կերակուր, ըստ որում նորա արգանդի մէջ կայ մի նոր էակ, որ արագապէս աճումէ և զարգանում: Այբրևմն, երբ որ կինը յղանումէ, առողջութիւնը, մարսողութիւնը և ակտիւութիւնը լուանումեն, ուստի կերակուրի շատցնելը կարևոր և օգտաւէտ է լինում նորա համար. բայց ըստ մեծի մասին, յղանալուց յետոյ, կնոջ առողջութիւնը ամենեկին լուանում և փոխվում չէ, և որովհետև յղի կնոջ ակտիւութիւնը, համեմատաբար նորա մարսական գործարանների հետ, չափազանց մեծ է լինում, ուստի կերակուրի շատցնելը բացի վնասից ուրիշ բան կարող չէ բերել: Ճշմարիտ է, — երեխայի զարգացման համար վճարվումէ նիւթ, բայց բնութիւնը ինքը արդէն հոգացել է նորա համար հարկաւոր եղած նիւթը. յղի ժամանակը բնութիւնը զազարեցնումէ

\*) Գերակուրը մարդու համար մի պարզեւ է, որ տուել է նորան Արարիչը, կեանքի վերին նպատակները իրագործելու համար. կերակուրը մի պարզեւ է, որ մենք պիտոյ է գործ դնենք մեր անձնական օգտի և մարդկային ցեղը պահպանելու և կատարելագործելու համար: Արջին նպատակը, որին հասնելու նպատակարար է այդ անգին պարզեւը, անշուշտ ամենից ծանրակշիւն է, քանզի նորա խորհուրդը ուրիշ բան չէ, բայց եթէ պատրաստել զեղեցիկ, առողջ և մտաւորապէս զարգացած մարդկային ցեղեր: Անզանում կայ մի բժշկական ընկերութիւն, որ հոգաբարձութիւն է անում ժողովրդի առողջութեանը. այդ ընկերութեան 17 սեպ. 1864 թուին ներկայացրել էին մի ինչորոշիք, որի բովանդակութիւնը և միտքը այս էր. — Լաւ կերակուրը պատշաճապէս գործածելով յառաջացնում է առողջ գործարաններ, մինչդեռ անպիտան կերակուրը յառաջացնում է անպիտան գործարաններ, և մինչև անգամ կարող է կազմուածքին հիւանդութիւն պատճառել: Եւ որովհետև ուղեղը, թոքը և սիրտը համարվում են զլիաւոր գործարաններ, ուստի մենք կարող ենք մեր խօսքը փոխել այսպէս. Լաւ կերակուրը յառաջացնում է առողջ ուղեղ, առողջ թոք և առողջ սիրտ, իսկ անպիտան կերակուրը — անառողջ ուղեղ, անառողջ թոք և անառողջ սիրտ. կամ, փոխելով գործարանների անունները նոցա գործակառարութեամբ (отправление), — անպիտան կերակուրը պատճառում է բիւստութիւն, ընդհանուր թուլութիւն, թոքախտութիւն, իսկ սրտի հիւանդութեան ժամանակ, յանկարծական մահ: Եթէ այս կարծիքը ուղիղ է, ապա ուրեմն այդ անարկան արժանի է խորին ուշադրութեան:

(Эразмусъ Вилъсонъ. «0 пицѣ какъ средствѣ предупрежденія болѣзней». 1867. С.—Петербургъ).

այն պարբերական արտաթորութիւնքը, որին ենթակայ են անյղի կանայք, և որ միանգամայն վերջանումէ, երբ նոքա, հասակները առնելով, կորցնումեն իրանց ծննդականութիւնը: Աւստի եթէ յղի կինը առողջ է ու ախորժակը սովորական կարգով, ամենեին հարկաւոր է նորա կերակուրի քանակութիւնը շատացնել ու որակութիւնը փոխել, այն կերակուրի, որ փորձով նորա կազմուածքին յարմար է սեպուած. իսկ աւելի սննդարար կերակուրներով զօրութիւնը ամրացնելու փորձերը յառաջացնումեն անասելի վնասներ կազմուածքի համար:

Այժմէ, առողջութեան պահանջմունքը սխալ հասկանալով, սովորական պարզ և սննդարար կերակուրը աւելի շուտ ու ճոխ կերակուրի փոխեն. եթէ, մանաւանդ, այնուհետև ևս Ֆիզիքական վարժութիւնքը սովորականից սակաւ լինին, անհրաժեշտապէս կը յառաջանայ պարարտութիւն, որ թէ մօր և թէ սաղմին հաւասարապէս վնասակար է. — կամ պարարտութեան փոխանակ մարսական գործարանների գործակատարութեան մէջ կը մտնի անկարգութիւն, որից հեռաւար յառաջանումէ փեխս, կիղոզութիւն<sup>1</sup>, բուք<sup>2</sup>, անկարգ գալարումն<sup>3</sup>, նուազութիւն արտաշնչութեան<sup>4</sup> և այլ անախորժ նշանք: Արբ որ, կերակուրի այդ փոփոխութիւնից յետոյ, մարսողութիւնը շարանունակվումէ կանոնաւորապէս կատարուիլ և յաւելուածը կերակուրի անցանումէ կազմուածքի մէջ, այն ժամանակ մարմինը պարարտանումէ, կազմուածքին շարժանց ծանրութիւն պատճառելով, որ, եթէ բնութիւնը կամ արհեստը փութապէս նպաստ չմատուցանեն, մեծամեծ վտանգաւոր հետեանքներ է յառաջ բերում: Արբեմն այդպիսի պարարտութեան ժամանակ ինքն իրան քթից, կամ թոքերից և կամ երաստանից արիւն է հոսում, որով իսկոյն ցրվումէ ահեղ վտանգը: Գայց երբեմն կարևոր է վտանգը հեռացնելու համար արիւն առնել երակից: Արբեմն բնութիւնը ինքը ևս օգնութիւն է հասցնում և վտանգը խափանումէ, վերանորոգելով սովորական արտաթորութիւնքը արգանդից. այդպիսի ժամանակ մօր անխոհեմ և թեթեւամիտ վարմունքը կարող է պատճառ լինիլ տարածամ ծնդեան և մեծ վտանգի մէջ ձգել իւր կեանքը: Կարճ ասեմ, — կերակուրի անխոհեմ փոփոխութիւնից

<sup>1</sup>) Изжога. <sup>2</sup>) Вѣтры. <sup>3</sup>) Неправильныя натуги. <sup>4</sup>) Ослабление испарини.

պատճառուած պարարտութիւնը այս կամ այն ելքը պիտի ունենայ, թէ որ գործարանի միջնորդութեամբ և որպիսի ճանապարհով կը կատարուի այդ ելքը, և թէ այդ միջոցին որքան մեծ կը լինի վըտանգը, այդ բոլորը կախուած է կազմուածքի մասնաւոր պակասութիւններէց և այլ պատահական հանգամանքներէց: Աորա հետեւանքները, որչափ ծնուելու երեխայի համար, նոյն չափով էլ փնասակար են մօրը, և փնասակար են ոչ միայն այնոր համար, որ կարող են պատճառել տարածամ ծնունդ, այլ և այն պատճառով, որ առհասարակ դա փնասակար ներգործումէ նորա կազմուածքի վերայ: Աւրեմն մօր վերայ դրած է վերին աստիճանի մեծ բարոյական պարտականութիւն, — իւր անձը յօժարակամ չձգել այն գրութեան մէջ, որ կարող է ոչ միայն չբացնել նորա ամենալաւ յոյսերը, դառն կրակի՞ծ պատճառելով, այլ և կարող է անփարատելի փնաս տալ նորա ապագայ երեխայի բարեկեցութեան:

Սակայն մի շարիքից ազատուելով, պիտոյ է մի և նոյն ժամանակ զգուշանալք շընկնիլ նորա հակառակ տարասահման գրութեան մէջ և շենթարկուիլ այն շարիքին, որ կարող է յառաջանալ կերակուրի սակաւութիւնից: Այդ շարիքին յաճախ ենթարկվումեն աղքատ դասակարգի կանայքը: Հարկաւոր եղածին չափ սննդարար կերակուր չունենալով, նոքա ծնումեն տկար և վատաւորջ երեխայք, որոնց կեանքը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մշտական շարշարանք. բայց բարեբախտաբար այդ տղայքը երկար չեն ապրում: Սննդարար կերակուրի պակասութիւնը, արգարե, գլխաւոր պատճառներէց մինն է, որ աշխատաւորների դասակարգի տղայքը մարմնական պակասութիւնք են ունենում, որից գրեթէ անհրաժեշտապէս յառաջանումէ բարոյական պակասութիւնքը, ահա ինչու համար այդպիսի մեծ մահ է տարածուած նոցա մէջ: Տէրութեանական նշանաւոր մարգիկը պարտաւոր են խորին ուշադրութեամբ վերահասու լինել այդ իրողութեան: Ինչպէս որ չորացած հողը կարող չէ լաւ պտուղ և առատ հունձ տալ, նոյնպէս ուժաթափ, ֆիզիքական ծանր աշխատութիւնից և կերակուրի պակասութիւնից մաշուած ու հալուած ծնողքը կարող չեն ունենալ լաւ զաւակներ: Այդ շարիքը մի առանձին սաստկութեամբ դիպչումէ մարդուս աչքին աշխատանոցների մէջ, որոնք լի են չբաւոր, ըստ մեծի մասին հիւանդոտ և անզգոյշ ծնողաց զաւակներով: Աորա, ծնած օրից սկսած սնանուելով ամենամակիտան կերակուրով և հագուստի մեծ

պակասութիւն կրելով, սաստիկ նուազում ու տկարանումն. նոցա մտաւորական և բարոյական զօրութիւնքը փչացվում ու չքանումն: Եթէ աշխատանոցների երեխայքը բերենք կանգնեցնենք Հասարակ գիւղական երեխաների մօտ անգամ, իսկոյն յայտնապէս կերևի, որ առաջինները շատ հեռու են մնում երկրորդներից թէ ֆիզիքական և թէ մտաւորական կողմանէ, և մանաւանդ զարմանալին այն է, որ առաջինների մէջ ամենևին աշխուժութիւն և ուրախութիւն չկայ, որ առողջ և բարեբաւտիկ երեխայի յատկական նշաններն է:

Թէ սննդարար կերակուրի պակասութիւնը արգելք է լինում երեխայի զարգացմանը մօր արգանդի մէջ, դա այնպիսի յայտնի փորձերով ապացուցած փաստ է, որ ոչ ոք, եթէ խոր մտածէ այդ առարկայի վերայ, կարող չէ տարակոյս ունենալ այդ մասին, և եթէ այստեղ անտեղի չլինէր, ես կարող էի ցոյց տալ, որ շափազանց խնայութիւնը աշխատանոցների մէջ, վերաբերութեամբ կերակրեղէնի, պատճառումէ մեծամեծ չարիքներ, բոլորովին փչացնումէ երեխայի կազմուածքը, և աշխատանոցները դարձնումէ աղքատութեան կենտրոն: Սակայն ես կարող եմ միայն ցոյց տալ անցողարար այդ չարիքի եղելութիւնը, որպէս զի նոքա, որոնց վերաբերվումէ այդ, զգուշանան, արժանապէս ուչ դարձնելով դորա վերայ:

Եթէ չքաւոր դասակարգի երեխայքը իրանց մօր յղութեան ժամանակ զրկողութիւն են կրում անբաւականապէս անանուելուց, դա շատ բնական է: Բայց նոյնը տեսնումնք մենք և ունեւոր դասակարգերում, միայն այնտեղ պլլապէս է պատահում բանը: Աղքատութիւնը այն ժամանակ միայն պատշաճապէս սնանվումէ, երբ որ տալիս են նորան յարմար կերակուր, և երբ որ այդ կերակուրը պատշաճաւոր կերպով է մարսվում. բայց եթէ մարսողութիւնը վատ է, ամենայն կերակուր, որքան էլ որ ինքն ըստ ինքեան սննդարար լինի, դարձեալ նորա համար առողջարար անուեղ կարող չէ լինել: Անանաւոր սննդաութեան այդ պայմանների վերայ արժանաւոր ուչ շղարձնելու պատճառով, ժողովրդի վերին դասակարգի մայրերը ևս շատ անգամ ծնումն տկար և մեծ մասամբ տհաս երեխայք: Ընդհատարակ ամեն տեսակ ճոխութեամբ մեղկացած մայրերը ուտումն միշտ անժամանակ և շատ անգամ էլ շափազանց շատ, այս պատճառով նոցա ստամոքի գործունէութիւնը թուլանումէ և մարսողութիւնը ի վերջոյ այն աստիճան փչացվումէ, որ կերակուրը դառնումէ միանգա-

մայն անսննդական: Արեխանների համար հետևանքը մի է. թէ սննդեան պակասութիւնը կերակուրի քչութիւնից յառաջացած լինի, թէ մարսողութեան թուլութիւնից. ուստի մօր վերայ մեծ բարոյական պարտականութիւն կայ, եթէ ոչ իւր, գէթ զաւակի համար, կերակուրը ընտրողութեամբ ուտելու, որպէս կը պատշաճի մի բանաւոր արարածի: Գարոյական կէտից նայելով, մայրը, որ գիտակցաբար ստնակոխ է անում իւր սնուցանելու կարողութիւնը և այդպէս երեխային քաղցած է պահում իւր արգանդումը, ոչ պակաս մեղաւոր է, քան եթէ նա կերակուր շտար արդէն աշխարհ եկածին:

Վիխաւոր նպատակը, որին հարկաւոր է դիմել, է ներգործել մարդու կազմուածքի օրէնքների համեմատ, որից հետևաբար ծագումէ յետագայ կանոնը կերակուրի վերաբերութեամբ. կերակուրի տեսակը և քանակութիւնը պէտք է համապատշաճ լինին մարդու պահանջողութեան և մարսական գործարանների գրութեան: Այդ կանոնին հետևելով, կը գանք այն եզրակացութեան, որ յղութիւնը, ընդհանրապէս խօսելով, կերակուրի առաւելութեան կարօտ չէ, բայց կան կանայք, որոնք ամուսնական դրութեան մէջ, և մանաւանդ յղի ժամանակը, իրանց անձը աւելի առողջ են զգում, քան թէ ամուսնութիւնից առաջ էին, հետևաբար և նոցա ախորժակը այդ միջոցին շատ բացօժումէ յատուկ այն պատճառով, որ մարսողութեան գործունէութիւնը և այլ գործարանների պաշտօնը սաստկանումէ, ուստի այդպիսի դիպվածում կերակուրի շտոցները ոչ թէ վնասակար է, այլ բնական և շատ կարևոր բան է: Սակայն այդպիսի դրութեան մէջ պիտոյ է զգուշանալ, որպէս զի շափից դուրս չելանենք և գորանով կազմուածքին վնաս չպատճառենք. իսկ որոշել շափը, որից որ հարկաւոր չէ անցանել, շատ հեշտ բան է, թող միայն ամենայն մարդ որքան և իցէ ուշագիւր լինի դէպի իւր անձը: Վասնի որ նորա մտաւորական և ֆիզիքական գործունէութիւնը, մարմնավարժութիւն անելու կարողութիւնը և կենդանական գործողութիւնքը մնումն նոյն իսկ անփոփոխ դրութեան մէջ, վախենալու ամենեւին տեղիք չկայ. բայց հէնց որ կզգայ ծանրութիւն, թուլութիւն, կամ երբ կերակին ուրիշ որ և իցէ գործարանական խանգարման նշաններ<sup>1)</sup>, պիտոյ է

<sup>1)</sup> Признаки органического расстройства.



իսկոյն, հարկաւոր եղածին շափ, սակաւացնել կերակուրի քանակ -  
 թիւնը:

Ճշուժեան ժամանակ առաւել, քան թէ երբ և իցէ, հարկա-  
 ւոր է շափաւոր և պարզ կերակուր ուտել, նաև չգործածել ոչ մի  
 տաքացնող և գրգռիչ բան: Ճշուժեան ժամանակ կազմուածքը լի-  
 նումէ խիստ դիւրազգաց և ամենաչնչին պատճառներից խանգարուե-  
 լու ընդունակ. բացի դորանից, ջղական կանանց ստամոքքը յաճախ  
 լինումէ չափազանց դիւրագրգիռ, որից յառաջանումէ անյազ և ան-  
 տեղի ախորժակ, որ երբեմն պատճառ է լինում կերակուրը և գի-  
 նին աւելի շատ քանակութեամբ գործածելու: Շատ անգամ հար-  
 կաւոր է մեծ առողջամտութիւն և անձնազոհութիւն մօր կողմից,  
 որ կարող լինի դիմադարձութիւն անելու այդ ախտաւոր ցանկու-  
 թեանց, որոնք յղուժեան վերջին ժամանակները աւելի վտանգաւոր  
 են լինում: Այն վերին աստիճանի վտանգաւոր և ծննդական ջերմ-  
 ախտի նման անսովոր հիւանդութիւնը, որ յառաջանումէ իսկոյն  
 ծննդական ցաւից ազատուելուց յետոյ և որ մեծապէս ուժամափ է  
 անում մօրը, բժշկապետ Իրերը իրաւաբար վերագրումէ աղիքների  
 երկարատև խանգարման, որ ծագումէ բազմատեսակ կերակուրներից  
 և նոցա խիստ շատ գործածելուց: Այդպիսի դիպուածներում առող-  
 ջութեան խանգարումը, որ պատճառուած է ծնունդից առաջ, շօ-  
 շափելի նշաններով չէ յայտնվում, և թէպէտ փորձառու աշքերի  
 համար ակներև է, բայց դիւրաւ կարող է փախչել անցողաբար և հա-  
 սարակապէս նայողի աչքից. ուստի երբ որ ծնունդից յետոյ այդ  
 խանգարման պատճառով վտանգաւոր հիւանդութիւն է յառաջա-  
 նում, սովորաբար այդ հիւանդութեան վերայ նայումեն իբրև մի  
 անակնուռնելի դիպուածի — մինչդեռ եթէ պատշաճաւոր կեանք վա-  
 րէին, ոչ միայն նախատեսնել կարող էին, այլ և մեծապէս արգելք  
 լինել նորա յայտնութեան:

Եթէ մարդիկ աւելի լաւ մարսած լինէին այն ճշմարտու-  
 թիւնը, որ ասումէ. «առանց պատճառի չկայ գործողութիւն», այն  
 ժամանակ նոքա դիւրաւ կը կարողանային ազատուել շատ ցաւերից  
 և հիւանդութիւններից, որոնք շարաշար տանջումեն նոցա այժմ:  
 Եթէ կանայք հաստատապէս համողուած լինէին, թէ այն վտանգը,

\* On the Diseases and Physical Education of Children. (Երեխայոց հիւանդութեանց  
 և նոցա ֆիզիքական դաստիարակութեանց վերայ. Իրերը բժշկի շարագրութիւնը):

որին նոքա ենթարկվում են ծննդեան ժամանակ, համահասարակ է ծնունդից առաջ ունեցած այս կամ այն, առողջ կամ հիւանդ, դրութեան, լուր կամ վատ կենցաղավարութեան, — այն ժամանակ նոքա աւելի, քան թէ այժմ, կաշխատէին իրանց վարքը առողջութեան կանոններին յարմարեցնել, որպէս իրանց օգտի համար, նոյնպէս և զաւակների, որոնց բարեբախտութիւնը մեծապէս և անմիջաբար կախուած է նոցանից:

#### ՄԱՆԻ ԾՆՆԿՈՒԹՅՈՒՆԷ:

Մոլի ցանկութիւնքը անսովորական կերակուրների շատ և շատ փասակար են առողջութեան համար. հարկաւոր է անպատճառ դոցա առաջը բռնել: Յիզիքականապէս և մտաւորապէս առողջ կանայքը երբէք չեն ունենում այդպիսի ցանկութիւնք, այլ դիրարբորոք և տկարակազմ կանայք, որոնք սովոր են իրանց կամքը պաշտել, սրտի ամեն ուղեցածին կատարում տալ, որոնք ոչ մի առողջարար պարապմունքով չեն զբաղած և ժամանակը անգործութեան մէջ են անց-կացնում, միայն դոքա յատկապէս ունենում են այդ տեսակ ցանկութիւնք: Այդ ցանկութեանց առաջը բռնելու համար, հարկաւոր է խափանառիթ լինել նոցա կատարման, անգործութեամբ օրերը շանցընել, այլ աշխատել գտնել մի այնպիսի զբաղմունք, որ գրաւէր կնոջ սիրտն ու միտքը. նաև այդ ժամանակ ստամոքքը սովորաբար թուլացած է լինում, ուստի կերակուրը պէտք է պարզ և չափաւոր լինի, որպէս զի նա կարողանայ լաւապէս մարսել: Արբեմն, և այդ միայն տարապայման դիպուածներում, խոհեմութիւնը պահանջում է լցուցանել առ ժամանակ այդ ցանկութիւնքը, բայց դարձեալ այստեղ ևս հարկաւոր չէ մոռանալ մեր գլխաւոր նպատակը, որ է չքացնել իսպառ այդ ցանկութիւնքը:

Աւրեմն յղութեան ժամանակ հարկաւոր է, թէ մօր և թէ զաւակի օգտի համար, հոգալ որքան կարելի է մօր առողջութիւնը լուր դրութեան մէջ պահելու: Այդ նպատակին հասանելու համար, մայրը պիտոյ է շարունակէ իւր սովորական պարապմունքը և կենցաղավարութիւնը, եթէ դոքա առողջութեան կանոններին հակառակ չեն: Աօրեայ կանոնաւոր մարմնամարզութիւնքը, սովորական ուրախացուցիչ պարապմունքը և հասարակութիւնը, յստակութիւնը,

չափաւոր կերակուրը, մաքուր ու պարզ օդը, կանուխ վեր-կենալը, տարուայ եղանակի պատշաճ հագուստը, մորթի առողջ գործունէութիւնը, — այս բոլորը յղութեան ժամանակ առաւել մեծ նշանակութիւն ունին, քան թէ երբ և իցէ, ըստ որում այստեղ մեր աչքի առաջ պիտի ունենանք ոչ միայն մօր, այլ և մի ուրիշ էակի ապագայ երջանկութիւնը:

Իսկոյն յղութեան օրից սկսած ճշգրութեամբ կատարելով այս բոլոր կանոնները, ոչ միայն ժամանակաւորապէս լաւանումէ մօր և ապահովվումէ ապագայ զւաւկի առողջութիւնը, այլ և մօր առողջութիւնը առաւել կազդուրվում ու բարելաւանումէ քան թէ յղութիւնից առաջ էր: Բացի դորանից, պիտոյ է նկատել, որ եթէ թուլակազմ յղի կինը զանց է աւնում առողջութեան կանոններով, և եթէ մանուանդ վաղօրօք ամուսնացած է, նորա կազմուածքը շատ անգամ գրեթէ բոլորովին խանգարվումէ:

#### ՀՄԻՌՈՍԸ:

Շատ տարիներից ի վեր բանականութիւնը և գիտութիւնը պատերազմումն կանանց հագուստի սովորական ձևերի և նորաձեւութեանց, մանաւանդ պինդ կրծանոցների<sup>1</sup> և նոցա թելերի դէմ. բայց մինչև այսօր մի ակներև յաջողութիւն չեն ունեցած: Սակայն վերջին ժամանակներս սկսան հասկանալ, որ, բնութեան և բանականութեան խրատները ճշգրութեամբ կատարելով, աւելի լաւ կարելի է հասանել կրծանոցներ գործածելու նպատակին, քան թէ արհեստական միջոցներով, և եթէ երբ և իցէ այդ ծանրակշիռ ճշմարտութիւնը կարողանայ վերջապէս յաղթող հանդիսանալ, այն ժամանակ նորաձեւութիւնը կը դրուի ուղիղ ճանապարհի վերայ և կերպարանքի բնական գեղեցկութիւնը նախամեծար կը համարուի այդ այլանդակ արհեստական գեղեցկութիւնից, որ փշացած և բթացած ճաշակի պտուղ է: Շատ մայրեր, ծանօթանալով կենդանական տնտեսութեան օրէնքներին<sup>2</sup>, նաև փորձի տխուր օրինակներին, արդէն համոզուել են, որ իրանց կերպարանքին անճոռնի և իրանին<sup>3</sup>

<sup>1</sup>) Корсетъ. <sup>2</sup>) Законъ животной экономіи. <sup>3</sup>) Станъ.

անշնորք ձև տալու համար ուրիշ բան հարկաւոր չէ, բայց եթէ որքան կարելի է անտես առնել մարմնազարթութիւնքը և պինդ ու կոշտ կրծանոցներով արգելք լինել կուրծքի խոռոչի ազատ զարգացման, իսկ դորա ներհակ նպատակին հասնելու համար — միանգամայն ներհակ կերպով գործ տեսնել: Հունաստանի և Լոմի դասական<sup>1)</sup> ձևերը առանց կրծանոցների, առանց սղմող թելերի էին զարգացած, և եթէ կամենումենք կենդանացնել այն ձևերը, հարկաւոր է առաջ ու առաջ ազատութիւն տալ մկնակների համակարգութեան<sup>2)</sup>: Արբ որ կազմուածքը զարգանումէ բոլորովին ազատապէս, առանց որ և իցէ բռնարարութեան, այն ժամանակը ողնաշարը ևս ոչ միայն կանոնաւոր, ուղիղ և պինդ կազմութիւն է ստանում, այլ և լինումէ ճկուն, որից բոլոր ձևը ստանումէ մի առանձին շնորհք և գեղեցկութիւն, բացի գորանից, յառաջանումէ և այն մեծ օգուտը, որ այդպիսի պայմանների մէջ մարդուս կազմուածքը, որքան որ այդ կարելի է նորան, առողջանում և ամրանումէ: Արեմն, հէնց որ մատաղահաս կինը զգումէ իւր յղութիւնը, իսկոյն ամենայն զգուշութեամբ պիտի հոգայ պատշաճաւոր հագուստ հագնելու, որպէս զի նեղութիւն չպատճառէ կուրծքի կամ արգանդի խոռոչներուն և արգելք չլինի շնչառութեան: Միայն որդեծնութիւնը չէ, որ մեծամեծ վնաս է կրում այդ տեսակ տեսակ թելերից: Թելերի ճնշողութիւնը, արգելք լինելով կուրծքի և պտուկների կատարեալ զարգացման, միանգամայն սոցա անընդունակ է անում այն կերակուրը մատակարարելու, որից գլխովին կախուած է երեխայի կեանքը. — մնաց որ շատ մայրեր, շնչառութեան լիակատար ազատութիւն տալու համար, հանում կամ թուլացնումեն կրծանոցները, և մարմնազարգութեան<sup>3)</sup> պողպատեայ կամ փղոսկրեայ վնասարեւ պատկանելիքը դէն են ձգում միայն այն ժամանակ, երբ յղութիւնը իւր վերջակէտին է մօտենում, երբ որ անհրաժեշտ հարկաւորութիւնը արգէն ստիպումէ այդ անելու:

Այս ամենայն զօրութեամբ պնդումեմ, որ մատաղահաս օրիորդներին բնաւ հարկաւոր չէ թելերով քաշքշել իրանց կուրծքը, իսկ տկարակազմ մայրերուն խորհուրդ չեմ տալիս միանգամից թողնել կրծանոցի գործածութիւնը, ըստ որում նորա այնպէս են սովորած,

1) Классическія. 2) Мускульная система. 3) Туалеть.

որ կրծանոցը նոցա համար մի անհրաժեշտ հարկաւորութիւն է դարձել, թէև գիտեմ շատ օրինակներ, որ դորա չգործածելուց մեծ օգուտներ է յառաջացել: Իմ կարծիքով աւելի լաւ է, որ առաջի անգամ սովորական պողպատեայ պինդ կրծանոցների փոխանակ, փղի մարակ ընչացքներ գործ դրուին և թելերը որքան կարելի է թոյլ քաշուին: Այժմ այդ զգուշութիւնքը չկատարուին, անշուշտ մեծամեծ վնասներ կարող է յառաջանալ թէ մօր և թէ երեխայի համար, որգեծնութիւնը կարող է աւելի գժուարանալ և այլ և այլ ցուներ յառաջ բերել: Հիշութեան վերջին ամիսները շատ անգամ օգտաւէտ է մարմինը ձգական լաթերով փաթաթել, բայց այնպէս, որ նա ամենեւին չսեղմուի:

#### ՄՐՄԻՆՆՎԱՐԺՈՒԹԻՒՆՔ.

Այժմ մի բան այնքան ձեռնտու չէ լինում մօր առողջութեանը յղութեան ժամանակ և որգեծնութիւնից յետոյ, որքան կանոնաւոր մարմնավարժութիւնքը: Հիշի կինը սովորական զգուշութեամբ կարող է կատարել իւր առօրեայ շարժողութիւնքը գրեթէ մինչև ծննդական ցաւից ազատուելու ժամը, ըստ որում այդ շարժողութիւնքը լաւ ազդեցութիւն են ունենում կազմուածքի բոլոր գործողութեանց վերայ: Սան-գալու համար, մանաւանդ ձմեռուայ ժամանակ, հարկաւոր է նախամեծար համարել առաւօտը, ի հարկէ կառքով ևս կարելի է ման-գալ, բայց այդ երկրորդական բան է և կարող չէ փոխարինել ոտքով ման-գալուն: Շատ և շատ ակներև փաստեր կան, որ յղութիւնից պատճառուած վտանգի աստիճանը մեծապէս և զխաւորապէս կախուած է մօրից: Ահա հասարակ երեխաների ծնունդը մի բնական բան է, և ոչ թէ առողջութիւնը խանգարող երևոյթ, նա մանաւանդ այն դիւրութիւնը, որով առողջ և կանոնաւոր կեանք վարող կանայք ծնումն, ճշգրտապէս հաստատուէ, որ, ըստ նախասահմանութեան Արարչին, յղութեան և որգեծնութեան հետ կապակից չեն չարաչար տանջանք և վտանգներ: Սովորաբար եթէ մայրը կանոնաւոր և խոհեմ կեանք է վարում, և եթէ յղութեան ժամանակ աւելի ճշգրտեամբ է կատարում կենցաղավարութեան այդ կանոնները, տարակոյս չկայ, որ նոյն չափով օգուտ են քաղելու թէ ինքը մայրը և թէ նորա զուակը:

## ԼՈՒՍՅՈՒՄՆ

Յստակութիւնը, զովարար ու պարզ օգը ամենայն ժամանակ շատ օգտակար են առողջութեան համար, իսկ յղութեան ժամանակ դոքա կրկնապատիկ հարկաւոր են: Հղի կանանց, մանուանդ այնպիսիներու համար, որոնց ջիղերը շափազանց դիւրագրգիռ են, շատ և շատ շահակար է ջերմ ջուրի մէջ լուացուելը: Այդպիսի լուացումը նպաստաւորուած մորթու կանոնաւոր գործունէութեանը, մեղմացնուած ջիղերի դիւրագրգռութիւնը, թոյլ չէ տալիս, որ արիւնը մարմնի մի մասնումը միայն հաւաքուի և առհասարակ առողջութեան համար շատ օգտակար է: Շատ դիպուածներում յղի կանանց առողջութեան համար շատ օգտակար է լուացուել վաննայի մէջ, որի ջրի ջերմութիւնը պիտոյ է լինի Ֆարընհէյթի ջերմաչափի վերայ 24—26<sup>o</sup>: Բաւական է քառորդ ժամ մնալ վաննայի մէջ, բայց ճաշից յետոյ իսկոյն երբէք հարկաւոր չէ վաննա մտնել: Արեւի էր բերել էլի ուրիշ հանգամանքներ, որոնք մօր յղի ժամանակը ներգործումն նորա առողջութեան վերայ և հետեւաբար երեխայի առողջութեան, բայց որովհետեւ դոքա առանց բացառութեան գործադրելի են ամենեցուն հաւասարապէս և ուրեմն առողջութեան ընդհանուր կանոններին վերաբերելի, ուստի ինձ անտեղի է այստեղ կանգ առնել զոցա վերայ: Շատերը, որոնք այս առարկայի վերայ երբէք չեն մտածած, կարող են կարծել, որ ես խիստ մեծ նշանակութիւն եմ տալիս մօր յղի գրութեան, որից կախուած է ապագայ զաւակի առողջութիւնը. բայց եթէ դոքա արժանաւոր ուշադրութեամբ նայեն իրանց շորս կողմը, իսկոյն կընդունեն խօսքերիս ճշմարտութիւնը և կը հասկանան որպիսի ծանրակշիռ հետեւանքների կարելի է գալ, եթէ ճշգրտութեամբ կատարուին ասածներս:

Այս գլուխը վերջացնելուցս առաջ աւելորդ չեմ համարում մի քանի խօսք ասել ստիւնքների վերայ և ցոյց տալ, թէ յղութեան վերջին ժամանակները ինչպէս պիտոյ է խնամք տանել նոցա: Արկաւոր չէ գործածել կօրսէաներ և այնպիսի բաներ, որոնք ներութիւն են պատճառում թէ ստիւնքներուն և թէ պտուկներուն, ըստ որում պտուկները ծածկող թաղանթը (բարակ կաշին) շատ քնքուշ և դիւրագրգիռ է: Հղութեան սկզբներում, որդեծնութիւնից մի ամիս կամ էլ առաջ, հարկաւոր և օգտակար է, որ բժիշկը ուշի ուշով դիտէ ստիւնքները, ըստ որում երբեմն պատահուած, որ մինը

կամ երկու պտուկն էլ լինումեն ճնշուած և տափակացած, ուստի այդպիսի դիպուածներում անհրաժեշտապէս հարկաւորումէ արհեստական կերպով զարգացնել պտուկները, որպէս զի երեխան կարողանայ ծծնել: Եթէ այդ զգուշութիւնը գործ չի դրուի, շատ հաւանական է, որ միանգամայն առողջ մայրը անգամ անընդունակ կը լինի ծիծ տալ զաւակին. սորանից կարող է յառաջանալ բորբոքողականութիւն, որի վախճանը շատ անգամ լինումէ ուռոյցք ստինքների վերայ, որ անտանելի կսկիծ և ցաւ է պատճառում նոցա:

ԳՂՈՒԽ III.

ՄԵԵՄ ՄՇԿԸ ԵՐԵՄԵՆԵՐԻ ՄԵՋ ԵՇՈՒՇԱՆՈՒՄԷ ՆՅՆՊԻՍԻ ՊՇՏՃՈՒՆԵՐԻՑ,  
 ՈՐՈՆՑ ՆՈՒՇԸ ԸՍՑ ՄԵԵՄԻ ՄՇՍԻՆ ԿՇՐԵԼԻ Է ԲՈՒՆԵԼ. ԳԼԻՇՈՐՊԷՍ ԴՇ  
 ԵՇՈՒՇԱՆՈՒՄԷ ՄՕՐ ՏԳԻՏՈՒԹԻՒՆԻՑ:

Ունենալով մեր աչքի առաջ այնպիսի անհերքելի փաստ, թէ բոլոր ծնուած երեխաների երրորդ մասից մինչև կէսը հինգ տարեկան չհասած մեռնումն, մենք բնականաբար գալիս ենք ենթադրութեան, որ այդպիսի սարսափելի մահը ծագումէ ծնողների մէջ ընդհանրապէս տարածուած որ և իցէ ծուռ և մոլար գաղափարից, վերաբերութեամբ երեխաների խնամածութեան: Ըստ ենթադրութեան ճշշ մարտութիւնը հաստատվումէ նորանով, որ այդպիսի մահ չէ պատահում այն կենդանիների մէջ, որոնք իրանց մարմնի կազմուածքով աւելի մօտ նմանութիւն ունին մարդուն և զանազանվումն նորանից միայն զաւակներին վերայ ունեցած խնամատարութեամբ, որ կատարվումէ իրանց բնազգութեանը համեմատ: Եթէ այդպիսի սաստիկ մահ վայրենի և բարբարոս երկիրներում պատահէր, ներելի կը լինէր կարծել, որ այդ բնական հետեանք է այն զրկողութեանց, որոնց ենթակայ են այն տեղերի երեխայքը. բայց զարմանալին այն է, որ այդ բանը պատահումէ ամենալուսաւոր երկիրներում, ուր կարելի է գտնել կեանքի ամեն տեսակ յարմարութիւնքը, այն երկիրներում, որոնք գիտութեան և հարստութեան կենտրոն են համար-



վում, — և եթէ այդ փաստը մեզ զարմացք չէ բերում, գորա միակ պատճառը այն է, որ մենք ընտելացած ենք այդ իրողութեան և նայումենք գորա վերայ իբրև մի բնական երևութի, որի առաջը բռնելը ու խափանելը անկարելի ենք համարում: Այժմ ուզումենք մի որ և իցէ շարիքի առաջը բռնել կամ հնար գտնել միանգամայն սնչացնելու գորան, պիտոյ է առաջ ու առաջ լաւ ծանօթանանք այդ շարիքին և նորա յատկութեան, ահա ինչու համար ես նախ և առաջ հարկաւոր եմ համարում մերկացնել բանը այնպէս, որ ամենակասկածաւոր մարդիկ անգամ լաւ համողութիւն, որ մահճը երեխաների մէջ չափազանց մեծ է, որ գորա թիւը բաւականապէս կարելի է սակաւացնել, եթէ օրինաւոր և պատշաճաւոր խնամք տարուի նոցա: Այժմ ինձ յաջողի այդ բանը ուղեցածիս պէս գլուխ հանել, կարծեմ այնուհետեւ երեխաների մահճը սակաւացնելու հնարների հետազոտութիւնը աւելի մեծ նշանակութիւն կստանայ և յաջողութիւնը աւելի հնարաւոր կը լինի:

Թէ ներկայումս որքան մեծ է մահճը երեխաների մէջ, բաւական է ցոյց տալ այն անհերքելի վիճակագրական տեղեկութիւնքը, որ աստրակական Ալարչութիւնը՝ տալիս է պարլամենտին իւր հաշիւների մէջ, այն հաշիւների, որոնց մէջ պարունակվում են Մեգլիայում ծնվող, մեռնող և պատկուղների թիւը: Մեգլ տեղեկութեանց նայելով, Մեգլիայում և Աւելում 1838 թ. մեռնող երեխաների թիւը նոյն տարուայ մէջ բոլոր մեռնողների գրեթէ երրորդ մասն է կազմում: Մասեղ նաև պիտոյ է նկատել, որ 1838 թուականին ոչ մի առանձին հիւանդութիւն կամ ցաւ չկար, և մենք յատկապէս այդ տարին վեր առինք այն նպատակով, որ գորան է վերաբերում առաջին հաշիւը աստրակական Ալարչութեան, որ այն ժամանակ զեռ նոր էր հիմնուած: Մեգլ հաշիւի եզրակացութեանց ճշգրտութիւնը վաւերացաւ յետագայ տարիների և այլ երկիրներում եղած փորձերով: Օրինակ, 1841 թուականի հաշիւի մէջ տեսնում ենք, որ Մեգլիայում 343,847 հոգի առհասարակ բոլոր մեռնողներից 101,478 հոգի, այսինքն 29<sup>0</sup>/<sub>10</sub>-ից աւելի, երեխայք են երկու տարեկանից վաղ մեռած: Բնութիւնում, ուր այդ տեսակ հաշիւները ոչ սակաւ զգուշութեամբ են կատարվում քան թէ Մեգլիայում, և որի բնակիչքը տնական մեծ յարմարութիւնք

են գտնում և աւելի կրթուած են, կենդանի ծնւոյններից 10-ից մինը մի ամսական չեղած մեռնումէ, իսկ 10,000-ից միայն 5733 հոգի, այսինքն կէսից մի փոքր շատ, հասնում են հինգ տարեկանի: Մանչեաստում և Սարջօրտում մեռնողների թիւը, ի հարկէ, առաւել շատ է. Վլխաւոր Ալարչուժեան երկրորդ վիճակագիր ցուցակին նայելով, երևումէ, որ 9276 մեռնողներից 1838—39 թ. (հաշուելով տարին յուլիսի մէկից) 2384-ը, կամ գրեթէ չորրորդ մասը, մի տարեկանից փոքր երեխայք են եղել, — 3680-ը, կամ երրորդ մասից աւելին, երկու տարեկանից փոքր, — և 5145-ը, կամ կէսից բաւական շատ, հինգ տարեկանից փոքր:

Սակայն պիտոյ է նկատել, որ բերած օրինակներում մեռնող երեխաների թիւը բաղդատուում ընդհանրապէս ամեն հասակում մեռնողների թուի հետ, բայց որովհետեւ թուերի անշուժիւնը երեխաների և հասակաւորների մէջ զանազան տեղերում միանգամայն զանազան են, ուստի այդ բաղդատուութիւնը կարող չէ կշռաշափ լինել երեխաների մահի մեծութիւնը բացատրելու: Գորա համար հարկաւոր է վախճանող երեխաների թիւը բաղդատել նոյն հասակում ողջ մնացածների թուի հետ: Գրառ բժշկապետը, Վլխաւոր Ալարչուժեան պաշտօնատարներից մինը, հնար տուաւ մեզ այդ բաղդատուութիւնը անելու, յօրինելով յետագայ աղիւսակը, որի մէջ նշանակած է, թէ 100,000 կենդանի ծնուածներից Մեզլիայում և Նորա վախճումն և երեք նահանգներում որքան հոգի վախճանումէ ամեն տարի մինչև հինգ տարեկան հասակը. նաև բաղդատուութեան համար աւելցրած է նոյնպիսի տեղեկութիւն Մանչեստրի վերաբերութեամբ:

Արեմն եթէ ենթադրենք, որ 1838 թուականի յունուարի 1-ին 100,000 մարդ է ծնուել Մեզլիայում, այդ վիճակագիր աղիւսակի վերայ հիմնուելով, կը տեսնենք, որ այդ թուից կենդանի է մնացել մինչև 1839 թ. յունուարի 1-ը միայն 85,412, իսկ յունվարի 1-ին 1840 թուականին — 80,034. այսինքն առաջին տարին պիտոյ է վախճանած լինէին 14,588, իսկ երկրորդ տարին — 5378: Մեզլիայի վախճումն և երեք առողջարար նահանգներում մահը համամատարար բովանդակ անգլիայի հետ սակաւութիւ է, այսինքն

1) Quetelet, sur l'Homme et le Développement de ses facultés, vol. I, pp. 161 — 67 Paris, 1835.

Այս աշխատքը ցոյց է տալիս, թէ 100,000 կնիցանի ծնունդներէն Սեզէիայում, Սեզէիայի վարժարան եւ երկր առողջարար նահանգներում եւ Մանչեսթրում որքան հոգի ոչ է ձուլ եւ ձուլ եւ որքան ամեն տարի վարձարանում մինչեւ հինգ տարեկան դարձաւ:

Հասիւնք:	Սեզէիայում 1838—44 թ.		Սեզէիայի վարժարան եւ երկր առողջարար նահանգներում 1849—53 թ.		Մանչեսթրում 1838—44 թ.	
	100,000 ծնունդներէն որքան կնիցանի է մը: Նուստ մինչեւ 5 տարեկան հասակը:	Մինչեւ 5 տարեկան հասակը վարձարաններէն թի թիւը:	100,000 ծնունդներէն որքան կնիցանի է մը: Նուստ մինչեւ 5 տարեկան հասակը:	Մինչեւ 5 տարեկան հասակը վարձարաններէն թի թիւը:	100,000 ծնունդներէն որքան կնիցանի է մը: Նուստ մինչեւ 5 տարեկան հասակը:	Մինչեւ 5 տարեկան հասակը վարձարաններէն թի թիւը:
0	100,000	14,588	100,000	10,295	100,000	26,822
1	85,412	5,378	89,705	3,005	79,118	11,486
2	80,034	2,914	86,700	1,885	61,632	4,680
3	77,120	1,944	84,815	1,305	56,952	3,296
4	75,176	1,407	83,510	1,051	53,716	2,967
	Ընդամենը հինգ տարեկան լեզան վարձարաններէն	26,231	Ընդամենը հինգ տարեկան լեզան վարձարաններէն	17,541	Ընդամենը հինգ տարեկան լեզան վարձարաններէն	48,561

100,000 ծնունդից յունվարի 1-ին 1849 թուականին կենդանի մնացել էր յունուարի 1-ին 1850 թուականին 89,705, իսկ յունուարի 1-ին 1851 թ. 86,700 մարդ, ասել է առաջին տարին նոցանից մեռել է 10,295, իսկ երկրորդ տարին 3,005: Մանչեստրում մահը առաւել մեծ է. 100,000 ծնունդից յունուարի 1-ին 1838 թուականին կենդանի մնացել էին առաջին տարուայ ընթացքում 73,118, իսկ երկրորդ տարուայ ընթացքում — 61,632: Ընդհանուր բժշկապետ Ֆրանսի ազիւսակի վերայ հիմնուելով, կարող ենք հաշուել մինչև հինգ տարեկան երեխաների մահը և կըստանանք յետագայ ընդհանուր եղրակացութիւնը. Ընդլիայում կենդանի ծնուածներից առաջի տարին վախճանուած  $14\frac{1}{2}\%$ , և գրեթէ  $20\%$  կամ վեցերորդ մասը առաջի երկու տարին, մինչդեռ Մանչեստրում  $26\frac{1}{2}\%$  աւելի վախճանուած առաջին տարին և  $38\%$  աւելի առաջի երկու տարին: Գաղղատելով մինչև հինգ տարեկան հասակը մեռնողների բոլոր թիւը, տեսնուամենք, որ Ընդլիայում կեանքի առաջի հինգ տարին մեռնուած  $26\%$  կամ աւելի քան թէ քառորդ մասը բոլոր ծնուածների. Մանչեստրում  $48\frac{1}{2}\%$  աւելի կամ գրեթէ կէսը բոլոր ծնուածների, իսկ վաթսուն և երեք ասողջարար նահանգներում Ընդլիայի ոչ աւելի քան թէ  $17\frac{1}{2}\%$ :

Աւրեմն եօթնից մինը մի տարեկան և հնգից մինը երկու տարեկան շեղած վախճանուած. — ահա այս է եղրակացութիւնը այն անհերքելի փորձերի, որոնց ճշգրութիւնը ուրիշ երկիրներում հաւաքուած տեղեկութիւններով ևս հաստատուած: Սորանից ընթերցողը կարող է եղրափակել, որ փաստակար տարերքը մինչև այսօր մեծամեծ կոտորածներ են անում Աւրոպայի այն երկիրներում անգամ, ուր գիտութիւնը մեծ յառաջագիմութիւն է արած, ուր երեխաներին առհասարակ խելացի և կանոնաւոր խնամք են տանում:

Տեսնելով որ ամենաբարեյաջող հանգամանքներում անգամ այդպիսի մեծ մահ է պատահում երեխաների մեջ, բնականաբար յառաջ է գալի յետագայ հարցը, արդեօք այդ մահը Ընտուծոյ Ախասահմանութիւնն է, թէ՞, ընդհակառակն, յառաջանուած գլխաւորապէս այնպիսի պատճառներից, որոնց վերայ մարդս իշխանութիւն ունի և կարող է մասամբ անհետացնել նոցա կամ անփաստակար կացուցանել, մօտաւորապէս ծանօթանալով երեխայի կազմուածքին և զգուշութեամբ կատարելով զորա պահանջողութիւնքը: Հետագայ մտածողութիւնքը հնար կըտան ընթերցողին այդ հարցին պատասխանելու:

Այժմէ դասնանք դէպի անցեալ մարդկութիւնը, կը տեսնենք և կը համոզուինք, որ այդ սարսափելի մահը երեխաների մէջ Աստուծոյ անհրաժեշտ Ատիասահմանութիւնը չէ, այլ գլխաւորաբար, թէև ոչ ամբողջապէս, յառաջանումէ մեր սեփական տգիտութիւնից և մեր անպիտան խնամածութիւնից, և ուստի մենք կարող ենք յուսալ, որ որչափ մեր գիտութիւնը զարգանայ և մեր հոգաբարձութիւնը երեխաներին բարւոքի, նոյն շափով կը սակաւանայ և այդ մահը. — այլապէս ասնք, որքան որ լաւ հասկանանք և կատարենք այն օրէնքները, որ Մտեղծողը սահմանել է մեզ առաջնորդելու և պահպանելու համար, այնքան ևս կը սակաւանայ այդ մահը: Այս մտածողութեան հետեանքը մեծ խորհուրդ և մեծ նշանակութիւն ունի մեր կեանքի համար, ուստի ևս հարկաւոր եմ համարում մանրամասնաբար խօսել այդ մասին:

Այժմէ երեխաների մէջ բնական երեղոյթ է այդ տարապայման մահը, որ յառաջանումէ մարդկային կեանքի հետ կապակից դիպվածներից և յեղափոխութիւններից, հաւանական է, որ մեր փոյթը և ջանքը այդ մահի թիւը սակաւացնելու համար պէտք է ի զուր լինին, ուրեմն միանգամայն անօգուտ է գլխացաւութիւն անել դորա պատճառները գտնելու կամ հնարներ պտրել նորան անհետացնելու համար: Բայց միւս կողմից, եթէ ուղիղ է, որ այդ մահը յառաջ է գալիս գլխաւորապէս մարդուս կազմուածքի օրէնքները չգիտեալուց և չկատարելուց, և եթէ յաջողի մեզ ապաւորել այդ ճշմարտութիւնը ծնողների և բժիշկների մօքերի մէջ, այն ժամանակ մենք առաւել զօրութիւն կստանանք այդ շարիքի դէմ պատերազմելու:

Այժմէ այդ բաղմամբիւ մահը երեխաների մէջ Ատիասխնամութեան անփոփոխելի կամքն է, որ կատարվումէ ինքն ըստ ինքեան, առանց կախում ունենալու մանկածութեան լաւ կամ վատ եղանակից, ապա ուրեմն պիտոյ է ենթադրել, որ միշտ և քաղաքակրթութեան իւրաքանչիւր աստիճանի վերայ միօրինակ էր այդ մանկակոտոր մահը և բնաւ կախում չունէր մարդուս կենցաղաւարտութեան կերպից, իսկ եթէ դա գլխաւորապէս յառաջանումէ այնպիսի պատճառներից, որոնցից կարող ենք ազատ պահել մեզ, կը նշանակէ միօրինակ լինելու չէ, պիտոյ է փոխուի, — բաղմանայ կամ սակաւանայ, նայելով բարեյաջող կամ անբարեյաջող հանգամանքներին, որոնց մէջ ապրումեն երեխայք, նայելով նմանապէս, թէ որպիսի

ինամբ են տարածում երեխաների վերայ ուրիշները: Թէև շատ սակաւ կը գտնուին այնպիսի մարդիկ, որոնք կտակած կրէին, թէ որը այդ երկու ենթադրութիւնից ճշմարիտ է և որը սխալ, սակայն որպէս զի երկրայութեան և անապացոյց ենթադրութեանց տեղիք չլինի, ես յոյց կը տամ մինչև որ աստիճան երեխաների կեանքը անցած ժամանակներում զոհ էր եղած տգիտութեան և անպիտան ինամատարութեան, և անցեալի հետեանքը կը բաղդատեմ այժմեան ինամատարութեան եղանակից յառաջացած հետեանքի հետ. տարակոյս չկայ, որ այժմեան ինամատարութեան կերպը առաւել յաջող և գերազանց է, քան թէ առաջուանը, թէև կատարեալից տակաւին հեռու է:

Սննք արդէն տեսանք, որ Մեզլիայում առհասարակ թէ հարուստ և թէ աղքատ երեխաներից մի տարին չլրացած եօթը ծրնունդի դիմաց վաճանումէ միջին հաշուով մինը: Բայց հոգաբարձութիւնը երեխաներին այնպիսի անմիջական ներգործութիւն ունի սոցամահի վերայ, որ, մի հարիւր տարի սորանից առաջ, Սօնդոնեան աշխատանոցները սարսափելի երևոյթ էին ներկայացնում. քսանըչորս ծնունդի դիմաց քսան երեք հոգի մի տարեկան չեղած մեռնումէին: Ըստպէս շարունակուեցաւ բաւական երկար ժամանակ, և դորա առաջը բռնելու համար ոչ մի հնար գործ զնող չկար. ամենեքեան կարծումէին այդ բանը անխափանելի: Բայց երբ պարլամենտը քննեց բանի էութիւնը և երեխաներին խնամելու լաւագոյն կերպը մտցրաւ ժողովրդի մէջ, այնժամանակ և այնուհետև իւրաքանչիւր տարին մեռնողների թիւը շատ շուտ սակաւացաւ 2600-ից մինչև 450: Եւ այսպէս Սօնդոնի աշխատանոցներումը միայն ամեն տարի մեռնումեր 2150 մարդ ոչ թէ Մտտուծոյ կամքով, ինչպէս ոմանք հաստատումէին իրանց աններելի անհոգութիւնը արդարացնելու համար, այլ մարդոց տգիտութեան, անտարբերութեան և խտտարտութեան պատճառով: Մշ ապաքէն այս իրողութիւնը լինելու է մեղ խրատատու դաս և քաջալերութիւն մեր հետազոտութիւնքը յառաջ տանելու, եթէ այժմ անգամ, շնայելով այն բոլոր բարօրութեանց, որոնցով հպարտանումենք, զարձեալ տասներորդը մի ամօտի կան չեղած մեռնումէ:

Սակայն ապացուցանելու համար, թէ գիտութիւնը ունի մեծ նշանակութիւն մահի համար, հարկաւորութիւն չկայ անցած զնացած ժամանակներին դիմելու: Պ. Սակ-Լինը, որ 1838 թուականն-

սուրբ Աիլզեան կղզիուն այցելութիւն էր արել, բերումէ մի հարցասիրելի օրինակ այդ կղզիու նկարագրութեանը մէջ<sup>1)</sup>: 'Ահատելով որ Սուրբ Աիլզէի բնակիչքը սակաւանումնն, փոխանակ բազմանալու, պ. Մակ-Վինը հաստատումէ, որ այդ երևոյթը մասամբ յառաջանումէ օտարոտի ժանտախտներից, բայց թէ գլխաւորապէս մշտաօտ և անպատմելի մահացից, որ տարածուած է երեխաների մէջ: «Տասը երեխայից», ասումէ նա, «ուժը հոգի ծնուած օրից զեռութն կամ տասներկու օր շանցած անմիջապէս վախճանումնն»: Ըստ թուանշանները գէթ մօտաւորապէս ուղիղ ճանաչելով, շատ հաւանական է, որ ընթերցողս կը մտածէ, թէ Սուրբ Աիլզէի օգը կամ հոգը մի որ և իցէ առանձին թունաւոր յատկութիւն ունի, որ այդպիսի սարսափելի կտորածներ է անում երեխաների մէջ, կամ թէ, վերջապէս, այնպիսի մահաբեր պատճառներ կան այնտեղ, որ մարդս միանգամայն անզօր է նոցա առաջը բռնելու. բայց իսկապէս, ոչ մի այդպիսի բան չկայ այնտեղ: Պ. Մակ-Վինը ասումէ, որ «օգը կղզիու մէջ շատ լաւ է, և ջուրը պատուական», — որ այնտեղ «աննկատելի է բնութեան մէջ մի որ և իցէ պակասութիւն»: Բայց թէ «այդ մահի գլխաւոր, շանք միակ, պատճառը այն է, որ այնտեղի ժողովուրդը սաստիկ կեղտոտութեան մէջ է ապրում և բնակարանները միշտ վարակուած են ապականուած և ժանտահատ օգով»: 'Աս իւր խորքերը հաստատելու համար օրինակ է բերում քահանայի գերդաստանը, որ ապրումէ միօրինակ ուրիշների հետ, բայց միայն այն զանազանութեամբ, որ սորա տունը առաւել լաւ է նայվում, այդ քահանան ունի շորս զուակ, որ բոլորն էլ քաջառողջ են, մինչդեռ, վախճանողների միջին հաշուին նայելով, շորսից գոնէ երեքը, զեռ երկու շարաթական շեղած, պիտոյ է մեռնէին: Եթէ դորա վերայ աւելացնենք և այն, որ այնտեղի ժողովուրդը բնակվումէ փոքրիկ ցած, անլոյս խրճիթներում, որոնք մի և նոյն ժամանակ և աթարի մթերանոցներ են (ձմեռուայ ժամանակ աթարը փռումնն տան յատակի վերայ և օտով կոխումնն վերան, մինչև որ մի քանի օտնաչափ բարձրանայ գեանից), այն ժամանակ ընթերցողը, անտարակոյս, կը համաձայնի պ. Մակ-Վինի մակարեութեան հետ — որ եթէ քահանայի զուակներն էլ շրջապատած լինէին նոյն հանգամանքներով, որոնց մէջ ապրումնն միւս կղզիաբնակների զա-

<sup>1)</sup> Chamber's Edinburgh Journal, Nov. 1838.

ւակները, այն ժամանակ, անտարակոյս, ոչ մինը նոցանից ողջ չէր մնալու, և միւս կողմից, եթէ խեղճ կղզիաբնակ երեխաներին նոյն խնամքը տարուէր, որ քահանայի զուակներին են տանում, խօսք չկայ, որ նոքա ևս ողջ կը մնային և վերջիններից ոչ պակաս քաջառողջ կը լինէին:

Ընդ օրէնքը, որի վերայ հարկաւ մատնացոյց են լինում բերած օրինակներս, ամենայն ճշդութեամբ յանդիման կացուցանելու համար, մեզ բաւական է բաղդատել չունեոր դասակարգի զուակների մահը ունեոր դասակարգի զուակների մահի հետ, — մարդաշատ քաղաքների բնակիչների մահը գիւղացիների մահի հետ, առաջվայ ժամանակները հիւանդանոցներում մեռնողների թիւը այժմեան մեռնողների թուի հետ, և վերջապէս այն ահարկու մահը, որ պատահումէ ազբատանոցներում, ուր երեխաները զրկուած են բնական կերակուրից և մայրախնամ հոգաբարձութիւնից, բաղդատել գերդաստանների մէջ մեծացած երեխաների մահի հետ, որ համեմատաբար, աւելի սակաւաթիւ է: Աս համոռատապէս կանեմ այդ բոլոր բաղդատութիւնքը:

Աս արդէն ասացի (տես գլ. II.), թէ մօր առողջութիւնը և կենցաղավարութեան կերպը յղութեան ժամանակ որպիսի մեծ ազդեցութիւն է գործում երեխայի վերայ: Առողջ և բաւականութեան մէջ ապրող մայրերից, եթէ միւս հանգամանքները բարեյաջող են, ծնվումն առողջ և ամրակազմ, ամենայն վնասակար ազդեցութեանց դիմացող երեխաներ: Բնդհակառակն, եթէ յղի մօր առողջութիւնը լաւ չէ, և եթէ նա, բացի գորանից, ենթակայ է զրկողութեանց, այն ժամանակ երեխային սպառնումէ մեծ վտանգ, այսպիսի պարագաների մէջ մեռած ծնուածների թիւը սովորականից շատ և շատ անցանումէ: Եւ աս անգամ ամեն տեսակ զրկողութեանց ենթարկվումն ապօրինաւոր երեխաների մայրերը, ուստի այդ վերջինները աւելի յաճախ ծնումն մեռած զուակներ, քան թէ օրինաւորները: Չոր օրինակ. Գերլինումը անցեալ դարի կէսի ընթացքում 100 ապօրինաւոր ծնունդից մեռած ծնուածների թիւը երեք անգամ աւելի է եղել, քան թէ 100 օրինաւոր ծնունդիցն էր<sup>1)</sup>: Այս փաստը հարկաւ վկայումէ, որ մօր զրութիւնը ունի անմիջական ազդեցութիւն երեխայի վիճակի վերայ դեռ նորա ծնուելուց առաջ, իսկ

<sup>1)</sup> Quetelet sur l'homme etc., v. 1 p. 429.



Թէ ինչ ազդեցութիւն ունի նա երեխայի գրութեան վերայ արդէն սորա ծնուելուց յետոյ, այդ մասին եւ խօսեցի երկրորդ գլխումը: Ըստ յարմարութիւնք, կեանքի համար մի քանի կարևոր բաները անգամ ներկայումս անհասանելի են ժողովրդի շունեւոր դասակարգին, ուստի այդ դասակարգի երեխաների մէջ մահը առաւել բազմաթիւ է, քան թէ ունեւոր դասակարգի երեխաների մէջ: Ընդհանրապէս Ընդլիայի առողջարար նահանգներում, ինչպէս որ տեսանք, երկու տարեկան չհասած երեխաներից միջին հաշուով եօթնից մինն է վախճանում.— իսկ շունեւոր դասակարգի մէջ, մանաւանդ մեծ քաղաքներում, այդ հասակում վախճանող երեխաների թիւը եռապատիկ աւելի է:

Սոյն բանը հաստատումէ և այն ազիւսակով, որ ցոյց է տալիս թէ 1000 մեռնողից որքան է իւրաքանչիւր հասակին ընկնում բողմանգակ Ընդլիայում և Ուելսում, և իւրտքանչիւր 25 նահանգում: Ընդ ազիւսակը գտանվումէ մեր վերոյիշած Վլիտաւոր Ա շարունակեան հաշուի մէջ: Արթանից երևումէ, որ «Ստաֆօրդշէյրի և Ըրօպշէյրի հանքային մասներում, Վիգսում և նորա շրջակայ աւաններում, Կեմրիթշէյրում, Լունդինստօնշէյրում և Վինքօշնշէյրի ցածագոյն տեղերում, հասարակապէս 1000 հոգի մեռնողներից 270 հատը մի տարեկանից պակաս երեխաներ են, մինչդեռ Ընդլիայի հարաւային կոմսութեանց մէջ, Սիլիքշէյրում, Գօրսետշէյրում և Գեվօնշէյրում, Լերֆօրգաշէյրում և Սոմմաւսշէյրում, և Ուելսում, 1000 հոգի ամեն հասակում մեռնողներից մի տարեկան չհասած մեռնող երեխաների թիւը 180 է, և ոչ աւելի, կամ այլապէս ասենք.— այս վերջին կոմսութեանց մէջ, ուր ժողովուրդը շատ մեկ մեկու կպած չէ ապրում և բաւականին մաքուր ոգ է վայելում, մի տարեկանից պակաս երեխայք եռապատիկ սակաւ են մեռնում, քան թէ մեր այն առաջին յիշած տեղերում, ուր հողը շատ ցած և ճախնային է, և ժողովուրդը մեծ բազմութեամբ գրեթէ մեկ-մեկու կպած գործարաններում է կենում: Կատարեալ ճշդութեան համար հարկաւոր էր իմանալ, թէ այդ երկու մեծ մասներում իւրաքանչիւր հասակից որքան կեցող կայ, բայց առանց դորա ևս այդ երկու մասների զանազանութիւնը վերաբերութեամբ երեխաների մահին այն աստիճան մեծ է, որ աներկբայապէս վերկայումէ արտաքին պատճառների ազդեցութիւն ունենալը: Սանչեսարում 1000 կենդանի ծնուածներից 384 վախճանումէ երկու

տարեկան հասակից վաղ, մինչդեռ Մնգլիայի վաթսուն և երեք առողջարար նահանգներում 1000-ից միայն 133-ը մեռնում են նոյն հասակում, այս օրինակները հաստատապես վկայում են, որ անպիտան օդը և յարմարակեցութեան պակասութիւնը քաղաքներում և առևտրական նահանգներում կործանիչ ազդեցութիւն ունին երեխաների վերայ: Հետագայ աղիւսակը մի հիանալի ապացոյց է տալիս մեզ, թէ որպիսի մեծ ազդեցութիւն են ունեցել քաղաքացիների առողջութիւնը բարելաւացնելու համար այն նախազգուշացուցիչ հնարները, որ գործադրուեցան հասարակաց առողջութեան մասին հրատարակուած հրամանագրի առիթով: (Public Health Act):

Քաղաքների անունները.	1000 մարդից իւրաքանչիւր տարին որքան է մեռնում:		Մահի սականաւել հասարակաց առողջութեան համար հրատարակուած հրամանագրի գործադրութիւնը.
	Մինչև հասարակաց առողջութեան համար հրատարակուած հրամանագրի գործադրութիւնը.	Միջ հրամանագրի գործադրութիւնից յետոյ.	
Ենձիկ . . . . .	35.2	28.3	6.9
Իերնորդ-Կեսզլ . . . . .	33.3	23.9	7.4
Իերզին . . . . .	28.5	21.2	7.3
Բանգօր . . . . .	35.1	80.9	4.2
Դուրգամ . . . . .	26.0	22.7	3.3
Էլի . . . . .	25.6	19.3	6.3
Սալիսբուրի . . . . .	32.2	27.0	5.2
Ս. Թամայի . . . . .	26.9	23.0	3.9

Այստեղ ի դէպ է մեզ նկատել, որ մեծ մահը երեխաների մէջ առևտրական քաղաքներում և նահանգներում ծագումն ոչ թէ միայն վատ օդից և յարմարութեանց պակասելուց, այլ և զորապատճառը մասամբ այն է, որ մայրերը ունին վնասակար սովորութիւն մեծ շափով և ստեպ ստեպ լաւտան՝ տալու իրանց զաւակներին, որպէս զի սոքա տանը հանդարտ մեան, մինչև նոցա գործատուն գնալ բանելը և այնտեղից վերագառնալը: Այդ սովորութիւնը

1) Տես Մնգլիական առողջապահութեան օրենքների գործնական արդիւնքը, որ օգտակար զիտութիւնք տարածող ընկերութիւնը հրատարակել է Բրիտանիական տարգրի մէջ, 1859 թ. Art. 3, p. 67

2) Որի ափսոսի մի հոտուետ և շեմահամ հեղանիւթ է. բնութեամբ զրգռիչ և թմրեցուցիչ: Սովորաբար լաւտանը տալիս են քահանաներին, նոցա թմրեցնելու և քունը զրգռելու համար. ահասարակ զորա շափից զօրս և ստեպ ստեպ գործածութիւնը շատ վնասակար է կազմուածքի համար:

տարեց-տարի շքացնում Հազարաւոր երեխայք, նաև միանգամայն անհետացնում մայրերի սրտերից այն բնածին, քնքուշ և գորովալի զգացողութիւնը, որ ամենագեղեցիկ պահպանիչն է երեխաների առողջութեան:

Թէ կանոնաւոր խնամք տանելով երախաներին մինչև որ աստիճան կարելի է սակաւացնել մահը նոցա մէջ, կարող ենք յառաջ բերել, իբրև խրատական օրինակ, բժիշկ Յովսէփ Վլէրքի 107-վածը, որ նա քաղել է 'Վուրլինեան ծննդանպաստ' հիւանդանոցի թղթերից: Ընդ քաղուածից երևում, որ այդ հիւանդանոցում 1782 թուականի վերջերումը 17,650 կենդանի ծնուածներից մեռել է, երկու շաբաթ շապրած, 2944 կամ գրեթէ վեցից մինը: Բժիշկ Վլէրքը կարծում, որ այդպիսի տարապայման մահը յառաջացած է հիւանդանոցում օդի չափազանց անպիտան լինելուց, ըստ որում երբ օդը մաքրելու համար դանազան հնարներ գործ դրուեցան, մեռնողների թիւը 8033-ից եկաւ հասաւ 419, որ գրեթէ 19<sup>1</sup>/<sub>2</sub>-ից մէկն է, մինչդեռ առաջ վեցից մէկն էր: Ընտել պարզ կացուցանելու համար, թէ երեխաների մահը մեծապէս կախում ունի խնամատարութեան եղանակից, ձեր ուշը կը դարձնեմ յետագայ գիպվածի վերայ, երբ որ վերասած հիւանդանոցի վերատեսուչը բժիշկ Վուլլինան էր, եօթը տարուայ ընթացքում սենեակները յստակ և մէջի օդը մաքուր պահելու պատճառով trismus-ից՝ մեռնողների թիւը անչափ սակաւացաւ. միջին հաշուով տարին երեք կամ չորս մահ էր պատճառվում գորանից, մինչդեռ 1782 թ. բոլոր մեռնողներից <sup>19</sup>/<sub>30</sub>-ը միայն այդ ցաւիցն էին մեռանում<sup>3</sup>: Բժիշկ Մակ-Վլինասօրը, հիւանդանոցի այժմեան վերատեսուչը, վկայում, որ ներկայումս trismus-ից տարին մի կամ երկու մահ է պատճառվում և թէ առողջութեան պայմանները լաւապէս կատարվումն այդ հիւանդանոցի մէջ<sup>4</sup>: շաղի կարելի է գտնել մի ուրիշ աւելի շօշափելի օրինակ ցոյց տալու համար, թէ ինչպէս բարերար ազդեցութիւն ունի մաքուր օդը երեխաների վերայ, և թէ, ընդհակառակն, ինչպէս վնասակար ազդեցութիւն ունի փչացուած և ապականուած օդը:

<sup>1</sup>) родовспомогательный.

<sup>2</sup>) Գրումն ծածկելիքների.

<sup>3</sup>) Collins Practical Treatise on Midwifery, p. 513, London, 1836.

<sup>4</sup>) Letter to the Editor, July 18, 1859.

Թէ մինչև որ աստիճան երեխաների կեանքը կախ է ինամատարութիւնից, Լօնդօնի երեխաների մահի մասին հրատարակված տեղեկութիւնքը շատ ազդու և զօրաւոր ապացոյց են մեզ համար: Սակ-Աուլօխի (Երեսանիոյ Տէրութեան վիճակագրութեանը<sup>1</sup>) մէջ կայ մի աղիւսակ, որի վերայ ցոյց է տուած, թէ 100 տարուայ ընթացքում որքան ծնունդ է եղել և որքան այդ թուից 5 տարեկան չդարձած մեռել են, իւրաքանչիւր 20 տարուայ համար առանձին համարելով, և 100 ծնունդին որքան ընկնումէ մեռնող 5 տարեկանից փոքր: Ընդ աղիւսակը, որ շինուած է Յառ թժչի պատվական մետոդով, վկայումէ, որ երեխաների մահը Լօնդօնում այս վերջին դարումս անդադար սակաւանումէ: Ըհա այն աղիւսակը.

	1730—49	1750—69	1770—89	1790—1809	1810—29
Ծնաւ.	315,456	307,395	349,477	386,893	477,910
Իրեաւ հինգ տարեկանից փոքր	235,087	193,694	180,058	159,571	151,794
100 ծնունդին որքան ընկնումէ մեռնող 5 տարեկանից փոքր.	74.5	63.0	51.5	41.3	31.8

Ինչպէս երևումէ այս աղիւսակի վերայ, 5 տարեկան չեղած մեռնողների թիւը անդադար սակաւանումէր 74,5-ից մինչև 31,8 հարիւր ծնունդի դիմաց: Ի դէպ է մեղ նկատել այստեղ, որ Վլիսաւոր Ալարչութեան տեղեկութեանց նայելով, երեխաների մահի սակաւանալը գնալով գնալով ևս առաւել սակաւացել է, այնպէս, որ ներկայումս 100 ծնունդի դիմաց հինգ տարեկան հասած մեռնումեն 28,5: Հետագայ աղիւսակը, որ շինած է Վլիսաւոր Ալար-

<sup>1</sup>) Չորրորդ ապագրութիւն. vol. II. p. 343.

չութեան տուած տեղեկութեանց համեմատ, Ճշգրութեամբ ցոյց է տայիս այդ բանը:

	1840—44	1845—49	1850—54	1855	1856	1857
Երես.	302,957	348,089	401,253	85,532	87,430	89,577
Իրեւա. 5 տարեկանից փոքր.	98,422	111,387	118,329	25,025	24,128	25,512
100 մեռնողին որքան ընկնում է երեսնոց 5 տարեկանից փոքր.	32,5	32,0	29,5	29,3	27,6	28,5

Երբա՞ծ օրինակներս վկայում և յայտնի են կացուցանում, թէ մինչև որ աստիճան հնարաւոր է սակաւացնել մահը երեխաների մէջ, եթէ լաւ և կանոնաւոր խնամք տարուի սոցա: Ասե ցոյց տալու համար, թէ վատ խնամատարութիւնը ունի կորստաբեր ազդեցութիւն, ես կարող էի յառաջ բերել մի քանի փաստեր որբանոցներում պատահած մահի վերաբերութեամբ, այն որբանոցներում, ուր ողորմելի ընկեցիկ երեխայքը զրկուած են մայրախնամ հոգաբարձութիւնից և վիճակուած են զանազան անյարմարութեանց, որոնք մեծ վնասներ են պատճառում նոցա մատաղ կազմուածքին և առհասարակ առողջութեան: Եւ այց այդ վախճանի համար բուական է ինձ ձեր ուչը դարձնել այն բազմաթիւ մեռնող որբերի վերայ, որոնք, ընկեցիկներից յետ, ապրումն առողջութեան և յարմարակեցութեան համար միանգամայն անբարեյաջող հանգամանքներում: Մահը այդպիսիների մէջ աւելի շատ է, քան թէ մայրենի խնամատարութեան տակ մեծացող երեխաների մէջ: Մի զարմանալի օրինակ է ներկայացնում մեզ որբանոցը Ալքանիայի, որ Աիւ-Աջօրք նահանգումն է. դա մի շատ խրատական և ուրախացուցիչ օրինակ է.

ըստ որում ակներև համոզումէ մեզ, թէ որքան օգուտ կարելի է տալ այդ խեղճ երեխաների դասակարգին, եթէ կանոնապատշաճ կերպով հոգարարձութիւն անենք նոցա: Այլանիայի որբանոցը հիմնած էր 1829 թուականի վերջերումը. սկզբումը նորա մէջ կար միայն 70 որբ, իսկ ապա գոցա թիւը հետզհետէ շատացել էր և օգոստոսի մէջ 1836 թ. այդ թիւը հասել էր մինչև 80: Այդ որբանոցի հիմնարկութեան առաջի երեք տարին խնամատարութիւնը երեխաներին չափազանց թոյլ էր և հիւանդների ցուցակում միշտ չորսից մինչև վեց հոգի, երբեմն և աւելի ևս, երեխայք էին նշանակուած. իսկ երեք տարուայ ընթացքում ընդամենը երեսունից մինչև քառասուն հոգի մեռան, որ միջին հաշուով ամիսը գրեթէ մի հոգի է անում: Այդ երեք տարին անցնելուց յետոյ խնամատարութիւնը երեխաներին առաւել բարելաւացաւ, և, շնայելով այն բոլոր անբարեյաջող պայմաններին, որ կապակից են որբ երեխաների դրութեան հետ, այդ բարելաւութեանց արդիւնքը շատ մեծ եղաւ. «երկու տարուց աւելի ոչ մի մեռնող և մինչև անգամ հիւանդ չէր եղել. հետեւեալ տարին մեռել էր երեք հոգի, բայց այդ մեռնողները դեռ նոր մտել էին հիւանդանոց և արգէն մտնելուց հիւանդ էին, նաև երկուքը նոցանից միանգամայն ապուշ էին»: Իացի գորանից, հիւանդանոցի գլխաւոր վերակացուն վկայումէ, որ «խնամատարութեան նոր եղանակը գործադրուած օրից երեխաների դրութիւնը փոխուել է դէպի լաւը. նոքա աւելի առողջ, ամուր, գործունեայ, աւելի աշխոյժ, ուրախ և զուարթ են եղել. նոցա բնաւորութիւնը ևս շատ փոխուել է. էլ չէր նշմարվում առաջուայ կատաղութիւնը, դիւրագրգռութիւնը և կամահաճութիւնը, և առհասարակ նոքա աւելի հնազանդ ու խոնարհ էին եղել, և մինչև անգամ նոցա յարակցութիւնքը մէկ-մէկու հետ շատ և շատ քնքուշացել էր»:

Այսպէս, անտարակուսելի է, որ մարդս կարող է բաւականապէս մեղմացնել, և երբեմն միանգամայն անհետացնել այն թշուառութիւնքը, որոնց ենթարկվում են երեխայք: Այժմէ համեմատենք, թէ որպիսի առողջութիւն և յարմարութիւն վայելում են որբ երեխայքը մի տեսակ խնամատարութեան տակ, և, ընդհակառակն, որպիսի հիւանդութիւն ու մահ զարգանում են նոցա մէջ մի օւրիշ

խնամատարութեան տակ; կարող չենք շնորհներ, որ երեսաների վիճակը մեծապէս կախում ունի իրանց ծնողներից, և թէ ծանր պատասխանատուութեան տակ ընկնում են այն ծնողները, որոնք արհամարհութեամբ նայում են իրանց պարտականութեանց վերայ և չեն աշխատում ընդունակ լինելու այդ պարտականութիւնքը օրինաւոր կերպով կատարելու: Այս ամենայն կերպով աշխատում եմ, որ ընթերցողիս սրտի մէջ որքան կարելի է սաստիկ դրոշմեմ այն ճշմարտութիւնը, թէ մեր ձեռքն է ազատել երեսաներին այն շարիքներից, որոնց սովորաբար ենթակայ են նոքա: Այս համոզուած եմ, որ երբ ծնողքը միանգամայն կրմբունեն այդ ճշմարտութիւնը, այն ժամանակ երեսաների համար փեսաբեր պատճառների քննութիւնը կստանայ նոցա աչքում մի կենդանի խորհուրդ և այն ժամանակ նոքա փոյթով և եռանդով կաշխատեն ճշգրտապէս կատարելու այն ամենայն բանը, որ հարկաւոր կը համարուի այդ թշուառութեանց առաջը բռնելու կամ նոցա բոլորովին անհետացնելու: Այժմ ծնողքը միանգամ համոզուին, որ այդպիսի զանցառութիւնը իրանց կողմից աղետալի հետևանքներ է բերում, և թէ պատշաճաւոր հոգատարութեամբ և լաւ խնամարկութեամբ կարելի է միանգամայն անհետացնել մի քանի ցաւեր, որոնց այնքան յաճախ զոհ են գնում երեսալքը, այն ժամանակ ամեն մինը նոցանից, անտարակոյս, բոլոր ջանքը գործ կը դնէ հիմնովին ծանօթանալու այն ճանապարհին, որով կարելի է հասանել այդ ցանկալի նպատակին:

Կարող են նկատել, որ այս օրինակներս այնպիսի փաստերու են վերաբերում, որոնք դուրս են սովորական կարգից, և թէ սովորական մասնաւոր կեանքի մէջ այդպիսի բաներ չեն պատահում: Եւ այդ նկատողութիւնը մասամբ ուղիղ է, ուստի հարկաւոր եմ համարում մեկնել, որ ես այդպիսի տարապայման օրինակներ ընտրեցի այն նպատակով, որ ցոյց տամ, թէ մենք որչափ կարող ենք ձեռնառու լինել երեսաների բարեբախտութեան և որպիսի հնարներով մեր խնամատարութիւնը կարելի է համաձայնեցնել երեսաների կազմուածքի պահանջողութեանց և առողջութեան պայմաններին: Թէև բոլոր իմ բերած օրինակներս հիւանդանոցներին և այլ հիմնարկութեանց են վերաբերում, բայց սխալ կը լինէր մտածել, թէ մասնաւոր գերդաստանների մէջ ամենևին չեն պատահում այդպիսի բաներ. ընդհակառակն, ամենահարուստ դասակարգի գերդաստանների մէջ անգամ խնամատարութիւնը երեսաներին շատ պարսա-

ւելի է և շատ անգամ լուսաւորուած գերդաստանների մէջ երե-  
խայքը մեռնումեն յատուկ այն պատճառով, որ խնամող չունին,  
մինչդեռ կարող էին փրկուել, եթէ նոցա ծնողքը ունենային մի  
փոքր աւելի գիտութիւն և գործնական խոհեմութիւն, որ յետոյ  
երբեմն ծանր և զժուար փորձերով թէև ստանումեն, բայց ի զուր,  
ըստ որում ժամանակը արդէն անցած է լինում:

Թե՛ ծնողքը և թէ՛ բժիշկները միշտ պէտք է իրանց աչքի  
առաջ ունենան այն մեծ սկզբունքը, որ մարդկային կեանքին նա-  
խասահմանուած չէ դեռ չծաղկած թառամելու, բայց եթէ երե-  
խայքը մեռնումեն, դա յառաջանումէ այնպիսի պատճառներից, որոն-  
ցից շատերը կարելի է միանգամայն հեռացնել, իսկ միւսները եթէ  
ոչ բոլորովին հեռացնել, գէթ կարելի է նոցա ազդեցութիւնը չա-  
փաւորապէս նուազեցնել: Պարզ և հասկանալի է, որ ծնողների  
պարտականութիւններից մինը է իմաստասիրել երեխայի կազմուած-  
քի որակութիւնքը, որպէս զի կարող լինին կանոնաւոր կերպով  
խնամք տանել նոցա, հարկադրուած չլինին երեխաների վիճակը և  
իրանց անձնական բարեբախտութիւնը թողնել կոյր դիպուածի ձեռ-  
քը, քանզի ըստ մեծի մասին և սովորաբար վարձկան դաստիարակ-  
ները պատկանումեն աւելի ստորին և աւելի անկիրթ դասակար-  
գին, քան թէ՛ ինքեանք ծնողքն են: Շ՛ումարիտ մայրը իւր զաւակ-  
ների կրթութեան վերայ, իբրև իւր պարտականութեան վերայ է  
նայում, այդ նորա բնական և գլխաւոր կոչումն է: Իւր մայրական  
պարտականութիւնքը կատարելու համար նա պէտք է նոյն չափ ևս  
պատրաստուի, որչափ նորա հայրը կամ ամուսինը նախապատրաստ-  
վումեն մի բանի պարագելու, որ ամբողջ գերդաստանի համար հաց  
ճարեն: Ինձ կարող են այսպիսի նկատողութիւն անել. մենք հա-  
մաձայն ենք, որ ամենայն մայր պարտական է հիմնական տեղեկու-  
թիւնք ունենալ երեխայի կազմուածքի որակութեանց և այն պայ-  
մանների վերայ, որոնք կարևոր են նորա կազմուածքը կանոնաւո-  
րապէս զարգացնելու համար. բայց սրտեղից ստանալ այդ տեղեկու-  
թիւնքը, մինչ դպրոցումը և տանը չեն ուսուցանում, մինչ գրեթէ  
ամենեկին չկան այնպիսի դասագրեանք, որոնք յարմարեցուցած լի-  
նէին նորան այդպիսի տեղեկութիւնք հաղորդելու: Աւ արդարև, դա  
մի մեծ զժուարութիւն է: Մինչև այսօրս շատ սակաւ են այնպիսի  
մարդիկ, որոնք համոզուած լինէին, թէ օգտակար և շատ կարևոր է  
տալ կանանց այնպիսի կրթութիւն, որ ընդունակ անէր սոցա պատշա-



ճապէս կատարելու մայրական պարտականութիւնքը, և առհասարակ պէտք է ասել, որ այդ մասին դեռ ևս ոչ մի բարելաւութիւն չէ եղած: Ըստ այդ պահանջողութիւնը օր-ըստ-օրէ լինումէ աւելի զգալի, ուստի և հրատարակուեցան արդէն մի քանի դասագիրքք, ուղղապէս այդ նպատակին յարմարեցուցած: Ըստ այդ ոչ մինը այդ դասագրքերից առարկան ամբողջապէս չէ ներկայացնում. ուստի ես ևս յանձնառու եղայ այս գիրքը գրելու, բայց ոչ թէ այն նպատակով, որ դա միւս գրքերի տեղը բռնէ, ոչ, այլ լրացնէ նոցա բերած օգուտը:

Իբրև վերջաբանութիւն այս գլխին, աւելորդ չեմ համարում բերել այստեղ պ. Սիմօնի յետագայ մեծակշիռ նկատողութիւնը, որ նորա բազմակողմանի փորձառութեան արդիւնքն է.

«Մեր խաների մահը — ասումէ նա — ոչ միայն նոյն իսկ մահի համար մի ծանրակշիռ առարկայ է իմաստասիրելու, այլ և նորա համար, որ դա կարող է շափ լինել այս կամ այն տեղի առողջութեան վերաբերեալ պայմանները բացարձակապէս որոշելու: Մեր խաների մեջ եղած մահից կարելի է եզրակացութիւն անել կենդանի մնացածների հիւանդոտութեան մասին: Այժմ էրեխայք այլապէս չեն հասանում չափահասութեան, բայց եթէ իրանց ցաւագար տղայութիւնը հիւանդութեան մեջ անցնելով, հաւանականապէս պէտք է յուսալ, որ նոցա զաւակները աւելի հիւանդոտ պիտոյ է լինին, աւելի անընդունակ աշխատելու և զարգանալու, աւելի տկար թէ մարմնով և թէ խելքով: Այժմ մի որ և իցէ տեղ մեծ մահ կայ, անտալ կարելի է եզրափակել, որ այնտեղ կան այնպիսի պայմաններ, որոնք անհրաժեշտ պիտի երբ և իցէ անհետացնեն այնտեղի ցեղը»:

<sup>1</sup>) Introductory Report on Papers relating to the sanitary State of the People of England, by E. Headlam Greenhow, M. D. By John Simon, Esq., the Medical Officer of the Privy Council.

## ԳԼՈՒԽ IV.

ԵՐԵՎԱՆԵՐԻ ԸՌՈՂԱՌԻՔԻՆԸ ՊԵՏԵՂԿԱՆ ԲԱՆ ԶԻՆՆԻ ԿՍԻ Է  
ՄՇՏԵՎԱՆ ՕՐԷՆՔՆԵՐԻՑ:

Այս գլխի մէջ եւ գիտաւորութիւն ունիմ հաղորդելու ձեզ մի քանի տեղեկութիւնք երեխաների կազմուածքի և նոցա առողջութեան վերայ գլխաւորապէս ներգործող պայմանների մասին. բայց այդ տեղեկութիւնքը գրելու եմ այնպէս, որ ամենատգէտ ծնողքը անգամ կարգալով իրական օգուտ քաղեն: Այս կաշխատեմ այստեղ երեխաների առողջութեան վերաբերեալ բոլոր ճշմարտութիւնքը մանրամասնաբար քննել. կաշխատեմ հետու կենալ այն ամեն բանից, որից որքան և իցէ կարող է վերաւորուիլ մարդու քաղաքավարութիւնը և նրբազգացութիւնը: Չգիտեմ որքան կը յաջողի ինձ այս նպատակը իրագործել. բայց կը յուսամ, որ բարեմիտ ընթերցողս չի մոռանալ, որ այդ նպատակին հասնելու համար պիտոյ է մեծամեծ գիտաւորութեանց յաղթել:

Արրորդ գլխի մէջ ասածներիցս անհրաժեշտապէս հետևումէ, որ երեխաների առողջութիւնը և կեանքը էապէս կախում ունին շրջապատող հանգամանքների յատկութիւններից և այն հոգաբարձութիւնից, որ ծնողքը անումեն նոցա: Արբ որ այդ երկու պայմանները բարեյաջող են լինում, այն ժամանակ երեխան լաւագոյն առողջութեան է վիճակվում, այսինքն վայելումէ այնպիսի առողջութիւն,

որին ընդունակ է նորա կազմուածքը: Այց եթէ երեխաների հոգաբարձութիւնը անպիտան է, կամ եթէ շրջապատող հանգամանքները անբարեխաղոք են, այն ժամանակ դոցա համեմատ նորա առողջութիւնը, և կեանքը անգամ, ենթարկուած են լինում վտանգի:

Այդ սկզբունքի ծանաչողութիւնը վերին աստիճանի շահաւէտ գործադրութիւն ունի կեանքի համար, և ես, դորա մեծ նշանակութիւնը հասկանալով, բոլոր զօրութիւնս գործ եմ գրած հաստատապէս սպաւորելու այդ սկզբունքը ընթերցողիս մտքի մէջ: Աս է եղել գլխաւոր պատճառը, որ երեխաների մահը արդէն բուականապէս սակաւացել է, և դարձեալ այդ սկզբունքին ենք պարտական, որ յոյս ունինք մեր սպագայ վիճակը ևս առաւել բարելաւացնելու, ըստ որում հետեւելով նորա կանոններին, համաձայնեցնելով երեխաների հոգաբարձութիւնը մարդկային կազմուածքի պահանջողութեան և օրէնքներին, մեզ հնարաւոր կը լինի մեռողների թիւը հետ զհետէ սակաւացնել և զանազան հիւանդութեանց առաջը բռնել: Ա՛րջին տարիներս երեխաների խնամատարութեան կերպը մեծապէս բարեկարգուեցաւ, բայց դեռ ևս շատ բաներ պակասուեան նորան: Մինչև այսօրս աւելորդ էին համարում բացատրել այն պայմանները, որոնք անհրաժեշտ հարկաւորին կենդանական գործողութիւնքը առողջապէս լցուցանելու համար: Մեր մեծ յոյսերը դրած են այն ժամանակների վերայ, երբ վերջապէս ֆիզիօլոգիայի սկզբունքները կուսանուն նախապատրաստական դպրոցներումը և ծնողներին ու բժիշկներին ուղեցոյց կը լինին երեխաների հոգաբարձութիւն անելու միջոցին:

Միշտ պիտոյ է մեր աչքի առաջ ունենանք, որ հիւանդութիւնքը և վաղաժամ մահը պատահական երևոյթներ չեն, կամ մի որ և իցէ վերացական պահանջողութեան ծնունդ, այլ ծագումն այն պայմանները չկատարելուց, որոնցից կախ է մեր մարմնի զանազան գործարանների կանոնաւոր գործունէութիւնը և որոնց այդ պատճառով իսկ իրաւաբար անուանուեան գործարանական օրէնքներ: Արբ որ այդ պայմանները կատարվումն, մարդուս առողջութիւնը գտանվումէ լաւ գրութեան մէջ. բայց, ընդհակառակն, երբ այդ պայմաններովը զանց են առնում կամ ծուռ կերպով են կատարում, այս կամ այն գործարանի ընթացքը արգելվումէ կամ խանգարվում. այլապէս ասեմ, սկսվումէ հիւանդութիւնը: Ա՛հա օրինակի համար. երբ կերակուրի կամ խմելքի ան-

չափաւորութիւնը (առաւելութիւնը) պատճառուի անմարտողութիւն, առողջութեան խանգարուիլը այդպիսի դիպուածում յառաջանում ոչ ուրիշ պատճառներից, եթէ ոչ զանց առնելուց այն կանոնով, որ պահանջուի, որ կերակուրը և խմելիքը թէ քանակութեամբ և թէ որակութեամբ համապատասխան լինին կազմուածքի դրութեան, կենցաղաւարութեան և ստամոքսի մարտղական զօրութեան: Ամանապէս երբ որ երկար ժամանակ նայումենք չափազանց պայծառ կամ կենտրոնացած լուսի՝ վերայ, յառաջանում բորբոքողականութիւն աչքի<sup>2</sup>. գորա պատճառը այն է, որ շնք կատարում վերոյիշած օրէնքները, այսինքն մեր աչքի շինուածքին անհամեմատ լուսի վերայ ենք նայում: Այնք մենք, այդ օրէնքների հակառակ, ենթարկենք մեր աչքը չափազանց սաստիկ կամ չափազանց նուազ լուսի, կամ եթէ երկար ժամանակ նայենք մի առարկայի վերայ այնպիսի ակնոցով, որ լուսի ճառագայթները միաւորում կամ տարածում աւելի, քան թէ պահանջուի աչքի շինվածքը, այդ ժամանակ աչքի շինուածքը անհրաժեշտապէս կը խանգարի, կամ, այլապէս ասեմ, աչքացաւ կը յառաջանայ: Քանի որ աչքին ցաւ տուող պատճառը շարունակուի ներգործել, անօգուտ են լինելու բոլոր գործ դրուած հնարները այդ աչքի ցաւը բժշկելու համար: Բայց եթէ այնպիսի պայմանների մէջ գնենք աչքը, որ լոյսը համեմատ լինի նորա փոխարկուած դրութեան, և այսպէս բնութեան ուժերուն տանք լիակատար ազատութիւն ներգործելու, կամ, այլապէս ասենք, եթէ տեսական գործարանի կանոնաւոր ընթացքի օրէնքը ճշգրութեամբ կատարենք, այն ժամանակ նոյն հնարները, որոնք առաջ անօգուտ էին եղել, այժմ փութապէս կարող են փարատել ցաւը: Ամանապէս ինչ դեղ էլ որ գործ գնենք ստամոքսի անմարտողութեան դէմ, բոլորը անօգուտ է լինելու, եթէ մի և նոյն ժամանակ ճշգրութեամբ չկատարենք ստամոքսի կանոնաւոր գործողութեան պայմանները, այսինքն եթէ հոգաբարձութիւն չանենք մեր կերակուրը և կենցաղաւարութեան կերպը մարտղական գործարանի խանգարուած դրութեանը յարմարեցնելու:

Մեր ասածից պարզ երևում, որ առաջ ու առաջ միշտ հարկաւոր է քննել, թէ վատառողջութեան պատճառը ինչ է և ո՞ր գործարանների վերայ գլխաւորապէս ներգործում է այդ պատճառը:

<sup>1</sup>) Сосредоточенный свѣтъ. <sup>2</sup>) Воспаленіе въ глазу.

Ահա օրինակի համար, երեխայք յաճախ ենթարկվումեն ցնցողականութեան, որ շատ վտանգաւոր է առողջութեան համար. եթէ, առանց քննելու ցնցողականութեան սկզբնական պատճառը, սկսենք դորա դէմ զանազան հնարներ գործ դնել, անշուշտ մեր բոլոր հնարները ըստ մեծի մասին ի զուր պէտք է լինին և կարողանալու չեն զազարեցնել ցաւը, ինչու որ այդ ցաւը յառաջացնող պատճառը դեռ ևս չարունակելու է ներգործել նորա վերայ. և ընդհակառակն, եթէ նախ և առաջ իմանանք պատճառը, որից յառաջացել է ցնցողականութիւնը, այն ժամանակ կարելի է դժուար չի լինիլ մեզ անհետացնել այդ պատճառը և այսպէս ցնցողական յայտնութեանց վերադարձի առաջը փակել: Այդպիսի յայտնութիւնքը յառաջ են գալիս օգի անպիտանութիւնից կամ ընտերքի գրգռութիւնից առաջնահանութեան ժամանակ, կամ վերջապէս կերակուրի անյարմարութիւնից, և այդ յայտնութեանց դէմ բոլոր գործ դրած միջոցները միանգամայն անօգուտ կը լինին, եթէ առաջ ու առաջ դոցա պատճառը չցրենք. այսինքն, մինչև որ երեխան մարուր օգ չծծէ, լինաւորքի գրգռութիւնը չզաղարի, կամ մինչև որ կերակուրը աւելի յարմարաւոր չլինի նորա դրութեան, այդ ցաւից բնաւ նա չէ փարատուելու:

Արեւմտեան հիւանդութիւնը յառաջանումէ գործարանների կանոնաւոր գործողութեան համար կարեւոր պայմանները չկատարելուց, և եթէ մենք կարողանայինք այդ պայմանները բովանդակութեամբ երևան հանել և ամենայն ճշդութեամբ կատարել, այն ժամանակ մեզ հնարաւոր կը լինէր հաստատապէս առաջը բռնել ամեն տեսակ հիւանդութեանց և մեր կեանքը կը տէր բնական ընթացքով մինչև իւր վերջակէտը, մինչև բնական կերպով մարիլը: Արեւմտեան երեխաների ինամատարութեան եղանակը բարելաւացնելու խորհուրդը պիտոյ է լինի երևան հանել և լցուցանել այն պայմանները, որոնցից կախ է մեր գործարանների կանոնաւոր գործողութիւնը:

Աթէ այդ կանոնը այնպէս հասկանայինք, ինչպէս որ հարկն է, և իւրացուցանէինք, մեզ համար շատ օգտակար երկու իրական հետեանքներ կատանայինք. մի հիւանդութիւն կամ ամենաքիտ անսամներովս իսկոյն օգեւորուելով կաշխատէինք դոցա պատճառը գրտնել և խափանել նորան, կամ այս ու այն հնարով նորա ապագայ վերադարձի առաջը փակել. — բացի գորանից զանազան հանգամանք-

ների ազգեցութիւնք ատողութեան վերայ անդադար գրգռելով մեր ուշադրութիւնը, կարողութիւն կը տային մեզ նշմարելու այն մոլորութիւնքը և սխալները, որ, այլապէս, եթէ շայտնուէին, վտանգ և կորուստ էին պատճառելու:

Մեր բերած օրինակը հիւանդութեան ծագման մասին հերքումն յետագայ խօսքերով, հիւանդութիւնը, ատումն, յառաջանում և ոչ թէ մի որ և իցէ մոլորութիւնից վերաբերութեամբ բնական օրէնքներին կամ այդ օրէնքները խանգարելուց, այլ թէ Աստիանամութիւնը ինքը փխտակրի հոգեկան օգտի համար այդպիսի տնօրէնութիւն է անում:

Եւ այդ պատասխանը ցոյց է տալիս նոցա սահմանափակ հասկացողութիւնը Մատուածային Աստիանամութեան մասին և հերքվում և մարդկային կեանքի ատօրեայ փորձերով: Մենայն մարդ, որ փոքր ի շատէ իմանումէ գիտել ու մտածել, անպատճառ կը խոստովանի, որ իւր ատողութիւնը ենթակայ է իւր կենցաղափարութեան և մշտական օրէնքների, և չկայ մի այնպիսի կենդանի արարած, որ, եթէ ոչ գիտակցարար, գէթ բնազդադարար այդ օրէնքների համեմատ գործ շտանէր:

Եւ ատ ճշմարիտ է, որ թէ հիւանդութիւնը և թէ բժշկութիւնը Մատուածայ կամքով են կատարվում և, որպէս Մատուածայ բոլոր տնօրէնութիւնքը, ծառայումն ոչ միայն ատողութեան օրէնքները լուսապէս պահելու, այլ և սպասուորումն մեր բարոյական և կրօնական լրագործութեան: Եւ այց ոչ պակաս ուղիղ է և այն, որ Մատուածայ կամքը, մի քանի տանձին տարապայման գիպուածների բացառութեամբ, անմիջապէս չէ յայտնվում, այլ ներգործում կողմնակի պատճառների միջնորդութեամբ մի անգամ սահմանուած օրէնքների համեմատ, որոնց և մենք, իրրև բանաւոր արարածներ, պիտոյ է յարմարեցնենք մեր արարմունքը: Մտել է, ամեն մարդու անհրաժեշտապէս հարկաւոր է իմանալ այդ օրէնքները, մանաւանդ տաւելապէս հարկաւոր է նոցա, որոնց Մատուած ինքը յանձնել է ամբողջ գերդաստանի ատողութեան և բարեբազդութեան պահպանութիւնը: Եւ անդութեան պատճառը գիտնել թէ ոչ, բայց այսու ամենայնիւ իւրաքանչիւր հիւանդութիւն ունի իւր բնական պատճառը, որ մենք հիմնաւոր քննութեամբ միշտ կարող ենք գտնել, — ուստի մեր սրբազան պարտականութիւններից մինն է իմաստասիրել երեխաների կազմուածքը և նոցա հիւանդութեանց պատճառները:

Մշխատելով տպաւորել այս համոզմունքները բնթերցողիս մտքի մէջ, ես ամենեին գիտաւորութիւն չունիմ թուլացնելու նորա հաւատը գէպի Վատախնամութիւնը, այլ ընդհակառակն, իմ գլխաւոր նպատակն է ամրացնել նորա մէջ այդ հաւատը, հասկացնելով նորան թէ ինչպէս յայտնուեալ աստուածային կամքը, և ցոյց տալով այն ուղիղ ճանապարհը, որի վերայով նա պիտոյ է յտառել իազայ, որպէս զի Մտուածոյ օժանդակութեամբ կարող լինի մի բարի նպատակի հասանելու: Մտուած ներգործուեալ իւր սահմանած անփոփոխելի օրէնքների համեմատ, այն կանոնները, որ կարելի է մակարերել այդ օրէնքները իմաստասիրելուց և որի գործադրութիւնից կախե է մեր բարեկեցութիւնը. — այդ կանոնները ոչ այլ ինչ են, եթէ ոչ աստուածային կամքի արտադրութիւնը, ասել է թէ մեր կողմից այդ կանոնների շխտաբար նոյնպիսի անհնազանդութիւն է Մտուածոյ կամքին, որպէս և դանջաուութիւնը աստուածային միւս պատուէրներովը, որ հազրոգուած են մեզ գրաւոր Հայտնութեանց մէջ: Մայց որպէս զի մենք կարողանայինք ընդունակ լինել ճանաչելու հիւանդութեանց արտաքին պատճառները, պիտոյ է ծանօթանալ կենդանական գործողութեանց պայմաններին և յատկութեանց: Մտանց այդ ծանօթութեան մենք չենք կարող իւր ժամանակին Նշմարել անկարգութիւնքը կազմուածքի գործողութեանց մէջ, ասել է և չենք կարող անհետացնել այն շարիքը, որ ծագելու է այդ անկարգութիւններից, և որի առաջը, գուցէ, շատ հեշտ կը լինէր բռնել, եթէ իւր ժամանակին Նշմարէինք նորան յատկացնող պատճառը: Թեև և շատ անգամ հիւանդը կամ նորա ծնողքը հաստատուեն, թէ առաջիկայ դիպուածում չկայ մի արտաքին պատճառ, որին կարելի լինէր վերագրել հիւանդութիւնը, բայց բժիշկը այսու ամենայնիւ իսկոյն նկատուեալ այդ պատճառը: Թող այդ շատ անգամ պատահուեալ, որ ծնողքը, անձանօթ լինելով կենդանական գործողութեանց օրէնքներին, հիւանդութեան պատճառը չեն հասկանում և այն միջոցին անգամ, երբ որ ուրիշներն են ցոյց տալիս նոցա, և, կարծելով որ այդ հիւանդութիւնը փաստ չէ բերում, ոչ մի հնար գործ չեն դնում նորա պատճառը անհետացնելու համար<sup>1)</sup>:

Մհա ինչու համար փափաքելի է, որ ծնողքը տեղեկութիւն

<sup>1)</sup> Տես Գաւելուած Բ.

ունենան կազմուածքի և նորա գործողութեան վերայ, ահա ինչու համար իւրաքանչիւր բժիշկ, ցոյց տալով նոցա առողջութիւնը բարելաւացնելու և հիւանդութեանց առաջը բռնելու կանոնները, պիտոյ է ամենայն յարմարաւոր դիպուածում աշխատէ մեկնել կազմվածքի օրէնքները և այն գործողութիւնքը, որոնց վերաբերվումն այդ կանոնները, և այսպէս համոզէ նոցա, թէ որքան օգուտ կայ առողջութեան վերայ ներգործող հանգամանքները ճշգրութեամբ դիտելուց: Այս գրքի նպատակն ևս է որքան կարելի է պարզ մեկնել և դիւրամբօնելի կացուցանել առողջութեան կանոնները:

Արք որ մենք, հետեւելով այն սկզբունքին — թէ ամենայն հիւանդութիւն յառաջանում է մի որ և իցէ գործարանական օրէնքի խանգարուելուց, սկսումենք քննել պատճառները, թէ ինչու համար մի գերդաստանի մէջ բոլոր երեխայքը քաջառողջ են, իսկ միւսի — գրեթէ բոլորը հիւանդոտ, — այդ քննութիւնը սովորաբար ցոյց է տալիս, որ դորա պատճառը լինում ոչ այլ ինչ, եթէ ոչ զանազանութիւնը ծնողների կազմուածքի մէջ, զանազանութիւնը երեխաների խնամատարութեան, վերջապէս զանազանութիւնը այն արտաքին պայմանների, որոնց մէջ ապրումն այս ու այն գերդաստան: Ի հարկէ, թէ և երբեմն մենք ամենեին չենք կարող ցոյց տալ և ճիշդ բացատրել հիւանդութեան ծագման բուն պատճառը, բայց այսու ամենայնիւ բանականութիւնը և համեմատութիւնը այդպիսի դիպուածում ևս տալիս են մեզ մեծ իրաւունք հաստատելու, որ կայ մի պատճառ այդ հիւանդութեան, բայց թէ միայն մեզ յայտնի չէ, միայն մենք չենք գտած գեո ևս: Ըստ անգամ մեզ, բժիշկներիս, այդ պատճառները մութ են մնում յատուկ այնոր համար, որ չէ պատահել մեզ անձամբ դիտել այդ պատճառները, իսկ ծնողքը շփազանց տգէտ լինելով, կարողանում չեն ցոյց տալ մեզ, թէ երբ և ինչ բանում սխալուել են իրանց երեխաների խնամատարութեան վերաբերութեամբ: Այս շատ անգամ դիպուած եմ ունեցել փորձով համոզուելու այդ ճշմարտութեան մէջ, պատահումէր, որ ես ամենեին չէի կարողանում որոշել, թէ որպիսի սխալ են գործել երեխաները խնամելու միջոցին, բայց յետոյ, երբ որ մտաիկ ծանօթանում էի ընտանեկան հանգամանքներին, այդ պատճառը պարզվումէր ինձ համար: Բժիշկը երբէք բաւականանալու չէ կարծաւոր պատասխաններով, և միշտ պիտոյ է իւր աչքի առաջ ունենայ, որ մի և նոյն խօսքը և ցոյցը զանազան մարդոց բերաններում



զանազան նշանակութիւն ունին: Այս վերջին հանգամանքը շատ ան-  
 գամ առիթ է լինում բժիշկներին մեծամեծ սխալներ անելու իրանց  
 գործողութեան մէջ: Բժիշկը ամենայն մտադրութեամբ պիտոյ է  
 զգուշանայ մի որ և իցէ սխալ նշանակութիւն տալու ծնողների խօս-  
 քերուն, և որքան կարելի է իւր սեփական գիտողութեամբ վաւե-  
 րացնելու է լրածը: Ամանապէս անհրաժեշտարար հարկաւոր է, որ  
 բժիշկը ինքը անձամբ տեղեկանայ, թէ արդեօք իւր տուած խրատ-  
 ները ծնողքը ուղիղ են հասկանում, թէ ոչ. նա պարտաւոր է դի-  
 տել ժամանակ առ ժամանակ նոցա գործողութիւնքը վերաբերու-  
 թեամբ զաւակների խնամատարութեան, որպէս զի կարող լինի իւր  
 ժամանակին ուղղել, եթէ տուած խրատները սխալ են հասկացած:  
 Ամենայն ծնողք, անտարակոյս, արժանապէս կը գնահատեն այդ-  
 պիսի ուշադրութիւնը բժշկի կողմից և կաշխատեն օգնել նորան իւր  
 կոչումը պատշաճապէս կատարելու:

## ԳԼՈՒԽ V.

ԵՐԵՒԱՅԻ ԴՐՈՒԹՒՒՆԸ ԵՆՆԴԵՆ ԺԱՄԱՆԱԿ.

Առաջին գլխումը տեսանք, թէ ինչպէս ծնողների առողջութիւնը կողմնակի ներգործումէ երեխայի առողջութեան վերայ, այժմ ես քննելու եմ այն պատճառները, որ ուղղակի սկսումեն ներգործել երեխայի առողջութեան վերայ այն օրից, երբ որ սկսվումէ սորա անկախ գոյութիւնը:

Մինչև աշխարհ գալը, երեխան մօր կազմուածքի մի մասն է կազմում, ընդունելով այդ խօսքը իւր բառական նշանակութեամբ, բայց այն ինչ նա ելանումէ մօր արգանդից, որպիսի մեծ յեղափոխութիւն է պատահում նորա բոլոր գոյութեան մէջ: Մի ակրն-թարթում նա անգիտակցական անշարժութիւնից (դադարողութիւնից), առանձնական և խաւար գրութիւնից անցնումէ գէպի կեանք, լոյս և գործունէութեան ասպարէզ: Մինչև այդ բոպէն նա շրջապատած էր մի հեղանիւթով անփոփոխելի ջերմութեամբ, իսկ այժմ յանկարծ նորան շրջապատումէ մշտափոփոխ և աւելի պազ օդ, և նորա մարմինն դաշումէ մի ծածկոց, որ օրքան էլ բարակ ու կակուղ լինի, այսու ամենայնիւ աւելի հաստ և կոշտ է, քան թէ այն թաղանթը, որի մէջ նա ապրումէր առաջ: Մինչև այդ օրը նա անանկումէր իւր մօր արիւնով, իսկ այժմ նա ինքը պէտք է ընդունէ սննդանիւթը, ինքը մարսէ և ինքը կատարէ արտաթորութիւնքը: Արեխայի արիւնը մինչև այս օրս մօր միջնորդութեամբ

էր յստակում, այժմ այդ արիւնը նոյն իսկ երեխայի թոքերի մէջ պէտք է թթուի. կենդանական ջերմութիւնը, որ երեխան մինչև այդ օրը մօրիցն էր ստանում, այժմ այդ ջերմութիւնը նորա սեփական մարմինը պէտք է պատրաստէ: Մինչև այդ օրը մօր գիրազգացութիւնը պատասպարումէր նորան փնասական ազդեցութիւններից, իսկ այժմ նա ինքն է ընդունում արտաքին տպաւորութիւնքը իւր ջղերի միջնորդութեամբ, այժմ նորա ժպիտը կամ աղաղակը իմաց են ապիւս մեզ նորա դրութեան առողջ կամ անառողջ լինելը:

Մշա սրպիսի փոփոխութիւնք են պատահում երեխայի կեանքի մէջ նորա ծնուելու ժամանակ: Մայր փոփոխութիւնքն են, որ երեխայական հասակի առաջին շրջանը չափազանց վտանգաւոր են անում, եթէ նոցա հոգաբարձութիւնը վիճակվումէ տգէտ մարդոց և չէ համապատասխան նոցա կազմուածքի պահանջողութեանց: Մայժմ մենք քննենք երեխայի կազմուածքի մասնաւոր յատկութիւնքը և տեսնենք թէ ինչպէս է կատարվում այդ փոփոխութիւնքը:

Տարակոյս չկայ, որ, երեխայի մօր արգանդից դուրս գալուց յետոյ, առաջ ու առաջ ջիղերը և մկնակներն են գրգռվում գէպի գործունէութիւն և շարժողութիւն: Մայն ինչ երեխան դադարումէ լինել մօր կազմուածքի մի մասն, նորա կեաքնի սեռողութիւնը հնարաւոր է շնչառութեամբ: Աթէ շնչառութիւնը կանգ առնի գէթ մի կամ երկու րոպէ, երեխան իսկոյն կը մեռնի, ասես թէ մինը նորան խեղդամահ արած լինէր: Մայց որպէս զի սկսէր շնչառութիւնը և արիւնի շրջանաւարտութիւնը, հարկաւոր է մի գրգռեցուցիչ պատճառ, որ սկիզբն տար շնչառութեան: Մշա այսպէս հէնց որ երեխան ելանումէ մօր արգանդից, նորա կազմուածքի գործունէութիւնը գրգռվումէ օդի անտոլոր և անտխորժ հպաւորութեամբ մերթի գիրազգաց ջիղերին, և երեխան անմիջապէս սկսումէ շունչ առնել: Մայսպէս ջիղերի համակարգութեան գրգռած զգայականութիւնը է այն սկզբնական գրգռչը, որ ընթացք է ապիւս թոքերի գործողութեան, թէև, անտարակոյս, այդ շնչառութիւնը մասամբ յառաջանումէ և այն մասնաւոր գրգռութիւնից, որ պատճառվումէ թոքերի մէջ եղած երակական մոյգ կարմիր արիւնով: Մայգպիսի շուտ տպաւորութիւն ստացող զգայա-

\*) - Венозная кровь.

կանութիւնը և նորա հակառակ ազդեցութիւնը, որ կատարվում է ջիզերի անդրադարձական գործողութեամբ, պայմանաւորվում է ջրային թելերի լուս զարգացած լինելուց և նոցա շատութիւնից դիւրազգաց մորթի վերայ: Ինչ ինչպէս ջրային թելերը դառնում են շնչառութեան գործիք, դժուար չի լինիլ հասկանալ, եթէ մեր աչքի առաջ ունենանք այն, որ երեխան այդ միջոցին յանկարծապէս 98 կամ 100 աստիճան ջերմութիւնից անցանում է (6) կամ 65 աստիճան. — և եթէ մտաբերենք, թէ որպիսի սարսուռ և արագ շնչառութիւն է պատճառում շնչառական գործարանների անկանոն գործողութիւնը, երբ որ սառն ջրի մէջ ենք մտնում, մենք, հասակաւորներս անգամ, իսկ քնքուշ և դիւրազգաց կազմուածքով մարդիկը ևս առաւել: Աչքը որ երեխան դուրս է գալիս մօր արգանդից, օդի ներգործութիւնը նորա վերայ այնպէս արագ և անախորժ է, որ այդ միջոցին երբեմն նա սկսում է ազդակ բարձրացնել, և որովհետեւ ազդակից շնչառութիւնը լինում անկանոն և արագ, ուստի այդ ազդակը նպաստաւորում է թոքերի շուտ շուտ պարզուելուն (լայնանալուն) և շատ օգտակար գրգիռ է պատճառում արիւնի շրջանառութեան թոքի անոթների մէջ: Ահա ինչու համար առողջութեան նշան է համարվում, երբ որ երեխան ազդակ է բարձրացնում ծնուելու ժամանակ:

Մորթի դիւրազգացութեան միւս մեծախորհուրդ նշանակութիւնը այն է, որ պահպանում է երեխային արտաքին փնասակար ազդեցութիւններից: Արածին մանուկի կազմուածքը այնպէս թոյլ և քնքուշ է, որ ամենաշնչին պատճառը անգամ կարող է խանգարել նորա առողջութիւնը: Մի փոքր աւելի ցուրտը կամ ջերմութիւնը, հազուստի աննշան կոշտութիւնը, աննշան անմաքրութիւնը, ըստ երեւութի ամենաշնչին ֆիզիքական անյարմարութիւնը, — այս բոլորը կարող է պատճառել կազմուածքի մէջ ընդհանուր կամ մասնաւոր տեղական խանգարում, և եթէ երեխան շունենար այնպիսի նրբազգացութիւն, որ հարկադրում նորան վտանգ մտակցածովք ազդակ բարձրացնել, այն ժամանակ կարող էր յառաջանալ ծանր հիւանդութիւն, նախ քան մենք կը նկատէինք հիւանդութեան նշանների յայտնութիւնքը: Բայց հարկաւոր չէ մտնանալ, որ ջրային համակարգութեան սաստիկ զգայականութիւնը, թէ և պահպանում է երեխային փնասակար ազդեցութիւններից, սակայն մի և նոյն ժամանակ սոցանից յառաջացած վտանգը առաւել սաստկացնում է, եթէ իւր

ժամանակին առաջը չբռնեն. ահա այդ պարագան յայտնապէս ցոյց է տալիս. թէ ինչու համար մի քանի երեխայական հիւանդութիւնք արագ ընթացքով յառաջ են գնում և շատ անգամ մահով են դադարում. ահա ինչու համար ստաւել լաւ է և ստաւել իրական օգուտ ունին երեխայի համար նախագգուշութեան հարմերը, քան թէ որ և իցէ բժշկական հնար:

(Տիղբրի զգայականութիւնից և մկնակների շարժողութիւնից յետոյ սկսում են այն գործողութիւնքը, որ կատարվում են թոքերի և սրտի միջնորդութեամբ, այսինքն— շնչառութիւնը և արիւնի շրջանագարձութիւնը: Այս այսպէս երեխան լոյս տեսածով ենթարկվում է երեք փոփոխութեան. ջղային համակարգութիւնը զարթնում է գէպի գործունէութիւն, թոքերը պարզվում են և շնչառութիւնը հաստատվում է, և վերջապէս փոխվում է երակական արիւնի շրջանառութեան ընթացքը: Այդ արիւնը այժմ սկսում անցանել թոքերի միջով, մինչդեռ առաջ նա իւր ընթացքը կատարում էր ուղղապէս սրտի անկողնից գէպի ձախակողմը: Բայց բացի դրանից կայ մի ուրիշ պայման ևս, որ կարեւոր է երեխայի կեանքը պահպանելու համար, և որ մինչև այս բոլորն էր կատարում, այն է կենդանական ջերմութիւնը:

Բոլոր ջերմարիւն անասունները կարօտ են մի որոշեալ աստիճանի ջերմութեան: Այժմ այդ ջերմութեան աստիճանը շափազանց բարձր կամ շափազանց ցած է, մարմնի բոլոր գործողութիւնքը մնասվում են, և երբեմն տարապայման գիպուածներում մահ անգամ յառաջանում է գորանից: Այդ վտանգից ազատ պահելու համար, բնութիւնը մարդու կազմուածքը շինել է այնպէս, որ նա կախ չէ շրջակայ հանգամանքներից, և ցուրտ կամ ջեմ օդի մէջ անկորուստ պահպանում է մի և նոյն աստիճանը:

Աստիճանը առողջ մարդու մէջ ներքին ջերմութիւնը մօտ 98<sup>o</sup> է, այսինքն 50<sup>o</sup> ստաւել Մեծ-Վրիտանիոյ միջին ջերմութիւնից<sup>\*)</sup>. սորանից պարզապէս երևում է, որ եթէ մարմնին ջերմութիւն մատակարարող ասանձին աղբիւրներ չլինէին, նա ամառային ժամանակը անգամ կստա չէր մինչև այն աստիճան, որի մէջ արդէն մարդս սպրկելու կարողանալու չէր: Ար տեղից ուրեմն ջերմութիւն է ստանում կազմուածքը:

\*) 96 մինչև 98 աստիճան Փարնէկյիթեան ջերմաչափի վերայ է. իսկ Ռեւմիթեան ջերմաչափի վերայ ջերմութեան աստիճանը 28 մինչև 29.

Կենդանական ջերմութեան գլխաւոր աղբիւրը կերակուրն է. իսկ ջերմութիւնը գոյանում և մասնաւորվում մարսողութեան, շնչառութեան և արիւնի շրջանադարձութեան միջնորդութեամբ: Արբ որ կերակուրը շափաւոր քանակութեամբ ընդունվումէ, և միւս բոլոր պայմանները բարեյաջող են, կենդանական ջերմութիւնը պատրաստվումէ արագութեամբ, համեմատ թոքերի տարածութեան և ազատութեան, որով կատարվումէ սոցա գործունէութիւնը պարզ և բարեխառն օդի մէջ: Բայց դժուար չէ համոզուիլ, որ տղայական կազմուածքի մէջ ջերմութեան այդ աղբիւրը խիստ նուազ պէտքէ լինի. բաւական է դորա համար մի հայեացք ձգել մանուկի փոքրիկ կուրծքի և դեռ կիսաղարգացած թոքերի վերայ. նաև հարկաւոր չէ մոռանալ, որ մանուկը իւր գոյութեան առաջին ամիսներում, համեմատութեամբ խօսելով, գրեթէ կատարեալ անշարժողութեան մէջ է գտանվում:

Չ ջերմութեան միւս աղբիւրի — առատ և սննդարար կերակուրի վերաբերութեամբ ևս բարեյաջողագոյն չէ կազմուածքի որպիսութիւնը, կաթը, որով սնանվումէ մանուկը երեխայութեան սկզբներում, ջրալի և սակաւագրգիռ է, և միայն փոքրիկ քիմիական փոփոխութիւնք է անում, որ ծնուցանումէ ջերմութիւն:

Բացի դորանից պիտոյ է նկատել, որ ջղային համակարգութիւնը նմանապէս մեծ ազդեցութիւն է գործում այս ջերմութեան գոյանալու վերայ, թէև ոչ ուղղակի կերպով: Արբ ջղային համակարգութիւնը աստիկ գրգռուած է, ջերմութիւնը աւելի արագութեամբ է գոյանում, և ընդ հակառակն, երբ նա հանդարտ է, օրինակ քնած ժամանակը, ջերմութիւնը շատ ծանր է պատրաստվում: Սորանով ահա բացատրվումէ թէ ինչու համար աստիկ ցըրտում քնելը կորստարեր հետեանքներ է յառաջացնում և թէ ինչու համար մարդս քնած ժամանակը կարօտ է առաւել տաք ծածկոցի, քան թէ արթուն ժամանակը: Իսկ մանուկը, ինչպէս յայտնի է, քնումէ աւելի շատ, քան թէ հասակաւոր մարդը:

Արեւնն, եթէ առատ սննդառութիւնը, ազատ շնչառութիւնը և ջղային աստիկ գործունէութիւնը կենդանական ջերմութեան գըլխաւոր աղբիւրներն են, աւել է կարելի չէ ևս սպասել, որ երեխայական կազմուածքի մէջ արագապէս գոյանայ այդ կենդանական ջերմութիւնը, ըստ որում վերոյիշած գործակատարութիւնքը երեխայական հասակում ամենանկատար գրութեան մէջ են գտանվում:

Բայց այսու ամենայնիւ ոչ միայն Հին ժամանակները հաւատացած էին, այլ և մինչև այժմ անգամ հաւատումեն, թէ երեխայք առանց փեսայ կարող են դիմանալ արտաքին սաստիկ ցրտի: Բայց բժիշկ Լչուարզսը ապացուցեց, որ, սկզբնական եղրակացութեանց համեմատ, բոլոր նոր աշխարհ նկած անասունների մէջ այդ ջերմութեան պատրաստութիւնը շատ թոյլ ու նուազ է և թէ գնայով գնալով սաստկանում կազմուածքի զարգացման, ամբացութեան և նորա գործունէութեան ընդարձակութեան շարժով: Սոյնպէս տարածում ծնուած երեխաների մարմնի ջերմութիւնը բնականից մի քանի աստիճան ցած է և շատ շուտ սառում: շրջակայ ատմօսֆերայի ազդեցութիւնից: Աշղել էր մի օրինակ, որ եօթնամսեայ երեխայի ներքին ջերմութիւնը ունեցել էր 89 աստիճ. Պարնհէյթեան ջերմաչափի վերայ, փոխանակ 98օի, այսինքն ինն աստիճան պակաս հասակաւորների սովորական ջերմութեան աստիճանից:

Ստաբերեցէք որպիսի ջանքով և փոյթով անասունները պահպանում են իրանց ձագերին ցրտից: Բժիշկ Լչուարզսի գիտողութեան նայելով, և թէ գիշակեր կենդանիներու նորածին ձագը առնենք մօր տակից, ձագի ջերմութիւնը արագապէս ցածանում, բայց եթէ թողնենք մօր տակը, այն ժամանակ ցածանում միայն 2 կամ 3 աստիճ.: Ստաղ ճնճղուկները, ձուերից դուրս գալուցը մի շարաթ յետոյ, ունենում են 95 կամ 96 աստիճ. ջերմութիւն, եթէ մնում են բունների մէջը. բայց եթէ նոցա առնենք բունիցը, մի ժամ միջոցում ջերմութիւնը իջանում մինչև 66<sup>1</sup>/<sub>2</sub>օ, երբ որ ատմօսֆերայի մէջ լինում 62օ: Սարգս բացառութիւն չէ ընդհանուր կանոնից, և որովհետև երեխայական կազմուածքի մէջ կենդանական ջերմութեան պատրաստութիւնը համեմատաբար խիստ նուազ է, մինչդեռ մարդու գոյութեան համար անպատճառ հարկաւոր է մի որոշ քանակութեան ջերմութիւն, ուստի այն բանը, որ ծախսում ջերմութիւն աւելի շուտ, քան թէ դա պատրաստում, փնտսակար է կազմուածքին համար, և որքան որ աւելի թոյլ է կազմուածքը, որքան որ մեծ քանակութեամբ և մեծ արագութեամբ է կատարվում այդ ծախսը, այնքան ևս սաստիկ է փնտսը:

Այս փաստերի գործնական հետեւութիւնքը, ինչպէս կտեսնենք վերջը, շատ խորհրդաւոր են և ընդարձակ գործադրութեան ընդունակ: Այդ հետեւութիւններից մինը այն է (միւսները զանց ենք առնում այժմ), որ մանուկները ոչ միայն կարող չեն առանց

փնաս կրելու տանել սաստիկ ցուրտի, այլ ընդ հակառակն. որպէս բոլոր ջերմարիւն կենդանիների ձագերը, նմանպէս և նորա ինքեանք կարող չեն իւրեանց սեփական ջերմութիւնը անգամ պահպանել, ուստի իսկոյն ընկնում մեռնումեն, եթէ պատշաճաւոր միջոցներ գործ չեն գրվում նոցա ցրտից պահպանելու համար, և թէ մանկական կազմուածքը միայն այն ժամանակ սկսումէ կեանքի տեղութեան համար բաւականաչափ կենդանական ջերմութիւն պատրաստել, երբ հիմնապէս հաստատումեն այս երեք մեծ գործողութիւնքը. շնչառութիւնը, արիւնի շրջանադարձութիւնը և մարսողութիւնը: Այս վերջին գործողութեան վերայ կդարձնեմ ընթերցողիս ուշիւր:

Նորածին մանուկը, կրած յեղափոխութիւնից փոքր ինչ հանգստանալով, սկսումէ յայտնել իւր ախորժակի պահանջողութիւնը: Այժմ նա առաջին անգամը ընդունումէ կերակուր իւր սեպհական ստամոքի մէջ և սկսումէ մարսել յատկապէս իւր սննդեան համար: Այդ գործողութիւնը կարևոր է ոչ թէ կեանքի տեղութեան համար, ինչպէս որ այդ նկատել ենք շնչառութեան և արիւնի շրջանադարձութեան վերաբերութեամբ, այլ այն պատճառով, որ աճեցողութիւնը և նուազութիւնը (ростъ и уменьше) անհրաժեշտապէս հետևումեն մէկ մէկու, և հետևաբար աճեցողութեան կարօտը և նուազութեան փոխարէնը մատակարարելու համար նիւթի կարևորութիւն կայ: Աւրեմն կերակուրը չէ մի այնպիսի անհրաժեշտ կարևոր բան, որպէս շնչառութիւնը, և կարելի է մի քանի ժամ առանց փնաս կրելու բան չուտել, որ շահաւէտ է անգամ, բայց այդ ժամանակը անցանելուց յետոյ, մարսողական գործարանների գործողութիւնը պիտոյ է անհրաժեշտապէս սկսուի և ապա շարունակուի, սակաւատե ընդհատութեամբ, մինչև կեանքի վերջը:

Նորածին մանուկը, գրտից ընդունած կերակուրը մարսելու և իւր կազմուածքին նմանեցուցանելու (ассимилировать) համար, ունի բաւական զարգացած գործարաններ: Արովհետև նորա կերակուրը խիստ պարզ է և ընդունվումէ փոքր քանակութեամբ, ուստի մարսողութիւնը կատարվումէ շատ շուտ, սննդահիւթը (питательный сокъ) պատրաստվումէ արագութեամբ և ընդունվումէ ծծողական երակների մէջ, որոնց խորհուրդը ուրիշ բան չէ, բայց եթէ այդ սննդահիւթը ծծել աղիքների ներքին մակերևութից և ուղարկել



գէպի աջակողմեան սրտասննեակը, ուր դա խառնվումէ վենային (երակական) արիւնի հետ և, հաղորդուելով օդի թթուանիւթի հետ, ստանումէ բաց կարմիր գոյն, այսինքն լինումէ արտերիական: Արով-հետև երեխայի թոքերը և կուրծքը դեռ սակաւ են զարգացած և շնչառութիւնը շատ նուազ ու թոյլ է, ուստի եթէ նա չափազանց շատ կամ չափազանց շուտ շուտ ծծէ կաթը, այսինքն եթէ այդ սննդական հիւթը ընդունէ իւր թոքերի մէջ աւելի մեծ քանակութեամբ կամ աւելի արագութեամբ, քան թէ որքան հարկաւոր է դորանից պատշաճաւոր կերպով լաւ արիւն պատրաստելու համար, այն ժամանակ արիւնի շրջանառութեան մէջ կը մտնի անպիտան արիւն, որից հետևաբար նորա առողջութիւնը ևս անպատշաճ կը խանգարուի: Ամանապէս, թէ որ թուլակազմ մանուկին կազդուրելու համար, վաղաժամ տան նորան աւելի սննդարար կերակուր, օրինակի համար հաւի կամ կովի մսի արգանակ, նորա թոքերը բնաւ չեն կարողանալ այդ նիւթերից կանոնապատշաճ կերպով սննդական հիւթ պատրաստել, և այսպէս երեխային մէջ կը յառաջանայ ջերմախտական հիւանդութիւն: Այս իրողութիւնը պատահումէ շատ յաճախ և առողջութեան ծանր վնասներ է հասուցանում:

Ահա այսպէս կատարվումեն երեխայի սննդառութիւնը և աճելութիւնը: Ի հարկէ, բացի դորանից, հարկաւոր է կանոնաւոր կերպով դուրս ձգել անպիտանացած նիւթը, որ արդէն լցուցած է իւր պաշտօնը կաղմուածքի մէջ, նաև կարևոր է հեռացնել կերակուրի զժուարամարս մասերը, ապա թէ ոչ կը յառաջանայ ծանրութիւն ստամոքսի և ի վերջոյ մահ: Այս վտանգը ցրվումէ արտաթորութեան գործարաններով, որոնց միջնորդութեամբ հեռանումեն կաղմուածքից կերակուրի զժուարամարս մասերը և բոլոր անպիտանացած, իւրեանց պաշտօնը լցուցած, նիւթը:

Արտաթորութեան գլխաւոր գործարաններն են. աղիքները, երիկամուռքը, մորթը և թոքերը: Աացայայտ է, որ ոչ միայն մանկական, այլ ամենայն հասակի համար առողջութեան էական պայմանն է մի սահմանեալ հաւասարակշռութիւն սննդառութեան և արտաթորութեան գործողութեանց մէջ, այսինքն ելք ու մուտքի մէջ: Այժմէ գերակշռութիւնը սննդառութեան գործարանների կողմին է անցանում, հիւանդութիւն կը յառաջանայ ստամոքի ծանրութեան պատճառով. իսկ եթէ արտաթորութեան գործարանների գործողութիւնը աւելի զօրաւոր ու սաստիկ է, քան թէ սննդառու-

Թեան գործարաններինը, այն ժամանակ մարմինը կսկսէ նուազիւ և վերջնապէս, եթէ իւր ժամանակին պատշաճաւոր միջոցք գործ չը գրուին, մահ կը յառաջանայ:

Աւրեմն արտաթորութեան գործողութիւնը անհրաժեշտ ուղիկից կամ անհրաժեշտ հետեանք է անդառութեան, և երբ որ մանուկը աշխարհ է գալիս, բոլոր գործարանները, որոնց միջնորդութեամբ պիտոյ է կատարուին այդ գործողութիւնքը, արդէն միանգամայն պատրաստ են գործ տեսնելու: Աղիքները և երիկամունքը իրանց գործունէութիւնը սկսելու համար կարօտ են մի զրգուցուցիչ պատճառի: Այրեխայի աշխարհ գալուց մի քանի ժամ անցած շանցած, մօր կաթը, որ սկզբներում լինումէ բաւականին ջրային, արդէն սկսումէ մաքրել և դուրս ձգել աղիքների մէջ հաւաքուած ապականութիւնը, որ իւր սե գունի պատճառով աստուծէ երկխայի ձիւթ կամ մեկոնիում (meconium): Այսօրինակ աղիքները պատրաստվումեն մարսելու աւելի իւղոտ կաթ, որ կարճ միջոցից յետ սկսումէ թորել մօր կուրծքից առաջուայ ջրային արտաթորութեանց փոխանակ: Արովհետև երկխայն շատ շուտ շուտ է ընդունում կերակուրը և մի և նոյն ժամանակ մաղձային և այլ ջրային նիւթերը արտաթորումեն բաւականին մեծ քանակութեամբ, այս պատճառով աղիքները անդադար պարապած են և դուրս են քշում աւաւել ջրոտ նիւթ, քան թէ յետոյ, երբ որ կազմուածքը աւելի զարգացած է լինում: Սոյնպէս երիկամունքը ևս, նախկին ջրային կերակուրներից զրգած, սկսումեն իրանց գործակատարութիւնքը և փոքր առ փոքր արձակումեն մէզ:

Սեզ մնումէ խօսել զեռ ևս արտաթորութեան երկու միջնորդների — մորթի և թոքերի վերայ: Մարմնի և ատմօփերայի մի որոշ գրութեան մէջ, արտաշնչութիւնը մորթի միջնորդութեամբ լինումէ այնքան սաստիկ, որ այդ ճանապարհով մարմնից աւելի շատ նիւթ դուրս է գալիս, քան թէ որքան աղիքները և երիկամունքները միասին կարողանումեն դուրս բերել: Այս փաստը յայտնապէս ցոյց է տալիս թէ առողջութեան համար օրպիտի ծանրակշիւ խորհուրդ ունին մորթի արտաշնչութիւնքը: Արբ որ կազմուածքը իւր սովորական դրութեան մէջ է գտնվում, արտաշնչութիւնը կատարվումէ անշմարելի կերպով. բայց սաստիկ շարժողութիւնից յետոյ կամ տաք եղանակում արտաշնչութիւնը սաստկանումէ և ստանումէ քրտինքի ձև:

Սոյնպէս և թոքերը մի ծանրակշիւ միջնորդ են արտաթորութեան: Իսոնաւ եղանակում մորթի արտաշնչութիւնքը և թոքերի արտաթորութիւնքը լաւ չեն կատարում, հետեւաբար յառաջանում է այն ծանր և անխորժ գրութիւնը, որ սովորաբար զգումենք ծանր և խոնաւ ատմօսֆերայի մէջ եղած ժամանակներս: Իսկ երբ որ օդը լինում է խիստ չոր և տաք, այդ երկու գործողութիւնքը չափազանց արագ են կատարում և ծնուցանում են տենդ ու ծարաւ, որից, եթէ նոյն գրութիւնը երկարատեւ է, անհրաժեշտապէս յառաջանում է հիւանդութիւն: Աւրեմն երեխայք խնամելու ժամանակ պիտոյ է անզաղար մեր աչքի առաջ ունենանք օդի ջերմութիւնը, խոնաւութիւնը և մաքրութիւնը: ( ) րինակ, դիցուք թէ սառն և խոնաւ օդի երկարատեւ ազդեցութիւնից զազարում են երեխայի մորթի արտաշնչութիւնքը, այդպիսի դիպուածում արտաթորութեան միւս գործարաններից մինը աւելի սասակացնում է իւր զորութիւնը, որպէս զի կազմուածքի միջից զուրս հանէ արիւնի այն փնասարեր մասունքը, որ պիտոյ է մորթի միջով զուրս գային, բայց չէին եկած, սակայն այս գործողութիւնը, որ կատարվելու էր մորթի միջնորդութեամբ, թէև յաջողապէս մի ուրիշ գործարանի միջնորդութեամբ կատարվեցաւ, այսու ամենայնիւ մի գործարանի չափազանց սասականալը ի փնաս միւսին պատճառում է խանգարումն բոլոր կազմուածքի մէջ. ահա այս պատճառով հարկաւոր է ամենայն ջանադրութեամբ պահպանել երեխային այն ամեն ազդեցութիւններից, որ կարող են խանգարումն պատճառել արտաթորութեան զանազան գործարաններին:

Արտաթորութեան հետեւանքի մեծախորհուրդ նշանակութիւնը լաւապէս գնահատելու համար, հարկաւոր է քաջ տեղեակ լինել թէ մինչև որ աստիճան փնասակար ազդեցութիւն է անում կազմուածքի վերայ այն անպիտանացած նիւթը, որ մնում է նորա մէջ և, բնութեան կանոնին հակառակ, զուրս չէ գալիս: ( ) րինակ, եթէ շնչաուութիւնը դժուարանայ, երակական (վենական) արիւնը կը դադարի թթուել և չէ բաժանուիլ օձիւնիւթից (ածխածին, углеродъ) և ուրիշ նիւթերից, որ նա թոքերի միջով անցանելու ժամանակ սովորաբար արտաթորում էր: Այսպիսի դիպուածում արիւնը առանց փոխակերպուելու կանցանէ թոքերի միջով, և որովհետև այդ վիճակում գա ընդունակ չէ կեանքը պահպանելու, ուստի կազմուածքը շուտ կսկսի աւերուիլ ու եղծանիլ: Ամանապէս եթէ մորթի ար-

տաշնչութիւնը դադարէ, զորա անմիջական հետևութիւնն է ջերմախտական դրութիւն: Այրը մէզը օրինաւոր դուրս չէ թափում, կնշանակէ արիւնի մէջ մնումէ մարմնի համար այն անպէտք նիւթը, որ պիտոյ է երիկամունքների միջնորդութեամբ արտաթորվէր, այսպիսի պարագայում այդ նիւթը ներգործումէ արիւնի վերայ իրրե թոյն, խանգարումէ առողջութիւնը և արագապէս մահ է պատճառում: Այոյնը պիտոյ է ասել և աղիքների մասին, եթէ մարմնի համար անպիտանացած նիւթը, որ ասվումէ կղկղանք, կանոնաւոր կերպով աղիքներից դուրս չէ ձգվում, զորա արտաթորումը դժուարանումէ մածուցիկ թաղանթի ներկայութեամբ, և հետևաբար փրջացվումէ արիւնը: Այսպիսի պարագայում այդ նիւթի առաւել ջրային մասունքները ներս են ծծվում կազմուածքի մէջ, իսկ մնացորդը ստանալով անսովոր կոշտութիւն պատճառումէ բորբոքումն աղիքների:

Ընցայայտ է, որ բոլոր մեր աչքէ անցուցած գործողութիւնքը ուղղապէս մի գլխաւոր նպատակի են ծառայում — կեանքի պահպանութեան և տևողութեան, առանց այդ գործողութեանց մարմինը կարճ միջոցում կը դառնար մի անկենդան առարկայ և կսկսէր փրտել և եղծանիլ: Այնքէ մարդս բացի զոցանից զուրկ լինէր և ուրիշ գործողութիւններից, այնուհետև նա բուսականի նման լոկ աճելու էր: Ակրոյիչած գործողութիւնքը ասվումեն օրգանական (գործարանական) գործողութիւնք: Անք կեանքի տևողութիւնը էապէս զոցա գործունէութեամբ է պայմանաւորվում, և այդ գործունէութիւնը բնաւ ուրիշ խորհուրդ չունի, նա մեր կամքից ամենևին կախ չէ, կատարվումէ առանց մեր գիտակցութեան, իւր ընթացքը կատարումէ իւր կարգով, թէ քնած կամ արթուն լինինք, մտածենք նորա վերայ կամ թէ ամենևին անտարբեր մնանք, փոյթ չէ նորան: Այդ գործողութիւնքը հասարակաց սեփականութիւն են բոլոր կենդանական և, ընդհանրաբար խօսելով, բոլոր բուսական սեռերին, կարճ ասեմ — այն բոլոր արարածների, որոնք օրգանաւոր կազմուածքի տէր են: Սորանից ահա յառաջանումէ և նոցա անունը — օրգանական գործողութիւնք:

Այժմ մենք խօսենք միւս բարձրագոյն գործողութեանց գասակարգի վերայ, որ ասվումեն կենսական գործողութիւնք, որոնց նըպատակն է ոչ միայն պահպանել մարդուս կեանքը, այլ և կատարել գիտակցական կեանքի խորհուրդները: Արպէս օրգանական

գործողութիւնքը, նոյնպէս և սօքա իրանց կոչումը կատարելու համար կարօտ են գործարաններէ: Աւղեղը, զգայարանքը, կամաւոր շարժողութեանց գործարանքը, մկնակները և ոսկորները, իրանց ջիւղերով — ահա կենսական գործողութեանց մեծախորհուրդ գործարանքը. գօքա այն գործիքն են, որոնցմով կատարվումէ ամբողջ իմացական և հոգեկան գործունէութիւնը, այսինքն այն բոլոր գործողութիւնքը, որ միայն շնչաւորների յատուկ սեփականութիւն է: Աւղեղի և զգայարանքների օգնականութեամբ երեխան ստանումէ գիտակցութիւն իւր գոյութեան վերայ և զանազանումէ թէ ինչ առարկաներ ծառայումեն իւր յարմարութեան և բարեկեցութեան, — տեսանումէ, հոտոտումէ, լսումէ և շօշափում, և գնալով գնալով սովորումէ որոշել մի առարկան միւսից: Մի որ և իցէ առարկայից ախորժ տպաւորութիւն ստանալով, նա մկնակների և ոսկորների օգնականութեամբ կարկառումէ ձեռքերը դէպի այդ առարկան, զոր օրինակ, դէպի լոյսը կամ դէպի մօր կուրծքը. իսկ երբ որ ստանումէ առարկայից անախորժ տպաւորութիւն, նա նոյն գործարանների օգնականութեամբ հեռացնումէ իրանից այդ առարկան և երեսը յետ է զարձնում նորանից: Աճելութեան, ուղեղի զարգացման և ամրացութեան համեմատ, երեխայի զգացողութիւնքը ևս զօրանումեն և տեղական են լինում. նորա մէջ ծնվումէ սէր և համակրութիւն դէպի ուրիշները, այս վերջինների սիրոյն նա սիրով է պատասխանում, եթէ մինը գիտաւորութիւն է ունենում նորա վերայ յարձակուելու, նա զգումէ այդ և աշխատումէ ընդդիմանալու. նորա մէջ յառաջանումէ սեփականութեան զգացողութիւն, նա աշխատումէ գրաւել իրան շրջապատողների համակրութիւնը, հետևումէ նոցա օրինակներին, արդարութիւնը անարդարութիւնից որոշումէ, և սովորումէ իւր զգացմունքները ուժքերը խօսքերով արտայայտել. հասակը աւնելով, նա առ փոքր փոքր ծանօթանումէ իւր գրութեան մարդկային մեծ գերդաստանի մէջ, խոստովանումէ հասարակութիւնից իւր վերայ գրուած պարտականութիւնքը, զգումէ գիտութիւն ձեռք բերելու և դատողութիւնը վարժելու անհրաժարելի կարևորութիւնը, որպէս զի ընդունակ լինի անկախաբար կեանք վարելու: Այս բոլոր մտաւորական և հոգեկան գործողութիւնը ուղեղի միջնորդութեամբ է կատարվում: Այդ գործողութեամբ ահա մարդս զանազանվումէ ուրիշ կենդանիներից, գորանով նախագաս է միւս կենդանիներից, ըստ

որում նա կարող է ճանաչել միայն մի ճշմարիտ Աստուած և միայն տիեզերքը ստեղծողին և պահպանողին երկրպագութիւն անել:

Ստորակարգ կենդանիների մէջ, կազմուածքի մասնաւոր գերազանցութեան պատճառով, մի քանի կենդանական գործողութիւնքը կատարելագոյն են, քան թէ մարդու մէջ: ()րինակ, կան կենդանիք, որոնց հոտառութիւնը և լսողութիւնը աւելի նուրբ են, հետատեսութիւնը և վաւաչոտութիւնը աւելի սաստիկ, քան թէ մարդունը. բայց մարդս իւր խելքի զօրութեամբ և մեծութեամբ, բարոյական յատկութիւններով և կրօնական խորին զգացմունքներով գերազոյն է քան միւս արարածները: Այդ վերին ընդունակութեանց համեմատ, մարդու գիտին մէջ գրած է այնպիսի զարգացած ուղեղ, որի նմանը ստորին կենդանիների ոչ մինի մէջ չենք նկատում, և որ յատկապէս միայն մարդկային կազմուածքին է սեփական:

Այս վերին կամ կենսական գործողութեանց կարճառօտ նրկարագրութիւնից բացայայտ երևումէ, որ դոցանով պայմանաւորվումէ մարդու այն առանձին յատկութիւնքը, որոնցմով նա գառնումէ մարդ, և թէ բոլոր օրգանական գործողութեանց խորհուրդն է յառաջ տանել մեքենայի ընթացքը, որի միջնորդութեամբ կատարվումեն ուրիշ վերին գործողութիւնք: Մարդս մարդ է ոչ թէ այնոր համար, որ ուտումէ և կերածը մարսում, շնչումէ, ածումէ, թառամումէ և մեռանում. նոյնը կատարում են ճնճղուկը և ճանճը: Մարդ է այն պատճառով, որ նա մտածումէ, զգումէ, գիտակցարար է վարվում և բարոյապէս պատասխանատու է իւր արարողութեանց համար: Աս պիտոյ է ուտէ և կերածը մարսէ, ըստ որում գործարանների տէր է, որոնց միջնորդութեամբ նա զգումէ, մտածումէ և վարվում, հետևարար այդ գործարանքը իրանց մէջ կեանք և զօրութիւն պահպանելու համար կարօտ են կերակուրի: Տեսանելու համար նորան հարկաւոր են աչքեր, պատճառ որ եթէ մարդս չունենար մի այդպիսի գործարան, լուսի և իւր մէջ միջնորդ լինելու յարմարեցուցած, այն ժամանակ նա ամենևին կարող չէր լուսից տպաւորութիւն ստանալ: Ասելու համար նա պիտոյ է ականջներ ունենայ, որ միջնորդ լինին նորա և օդի զօղզողուն շարժողութեան մէջ: Գործողութեան համար նա պիտոյ է ունենայ ջղեր, մկնակներ և ոսկորներ: Այսպէս մեզ հասկանալի է լինում այն ակներև ճշմարտութիւնը, թէ խելքը ևս, որի մէջ ամփոփվումեն բոլոր տպաւորութիւնքը, և որից ծագումէ մեր գիտակցական կամքը,

պիտոյ է նոյնպէս կապակցութիւն ունենայ կազմուածքի հետ: Ազգ-  
մակողմանի քննութիւնը բացայայտ ցոյց է տուած, որ խելքի անմի-  
ջական գործարանը ուղեղն է: Աւրեմն խելքը և նորա գործիքը—  
ուղեղը մարգուս այն առանձին յատկութիւնքն են, որով նա դառ-  
նումէ մարդ. աչքերը, ականջները, ոտքերը և ձեռքերը կարևոր են  
նորան, ըստ որում նա ապրումէ նիւթական աշխարհի մէջ և նորա  
խելքը այլապէս կարող չէ ներգործել նիւթական առարկաների վերայ  
և տպաւորութիւն ընդունել նոցանից, եթէ ոչ նիւթական գործիք-  
ների միջնորդութեամբ:

Այ մի բան այնքան բացերև կարող չէ վկայել Աստուծու ամե-  
նագէտ և ամենակարող լինելուն, որքան այն զարմանալի համապա-  
տասխանութիւնը առանձին գործարանների յատկութեանց և բնա-  
զգոցութեանց մէջ, որով յատկապէս պայմանաւորվումէ կենդա-  
նական կեանքը իւր զանազան աստիճանակարգի վերայ: Այ միայն  
կենդանիների կազմուածքը լիապէս համապատասխանումն բոլոր  
իրանց պահանջողութեանց և կենցաղավարութեան, այլ և կերպա-  
րանափոխութիւնքը անգամ, որոնց ենթարկվումն մի բանի արարած-  
ների կազմուածքը իրանց զանազան հասակներում, շափազանց համա-  
ձայն են այն դրութեան, որ վկայելովէ արարածը շրջապատած աշ-  
խարհի մէջ, և այն հանգամանքներին, որոնց մէջ ապրումէ նա:  
( )րինակ. ուշ դարձուցէք դեռ նոր ծնված երեխայի վերայ, որպի-  
սի քնքուշ կազմուածք, որպիսի կակուղ ոսկորներ, որպիսի թոյլ  
մկնակներ և թոյլ զգայարանք, որպիսի պակասութիւն իմացակա-  
նութեան: Ահայն մի և նոյն ժամանակ որպիսի արագութեամբ կա-  
տարվումէ նորա սնունդը և որպիսի ներգաշնակութիւն կայ սննդ-  
ղեան և ամբողջ երեխայական կազմուածքի ու նորա պահանջողու-  
թեան մէջ: Աստատես ընութիւնը, երեխայի մտաւորական դրութեան  
համեմատ, պարզեկելով նորան կակուղ ոսկորներ և թոյլ մկնակներ,  
անընդունակ է արել նորան անկախաբար ներգործելու, և նորա կեան-  
քի պահպանութիւնը մօր սիրոյն է յանձնել: Որքան որ երեխայն  
մեծանումէ և գնալով գնալով ծանօթանում արտաքին աշխարհի  
հետ, դորա համեմատ նա առաւել և առաւել ընդունակ է լինում  
անկախապէս ներգործելու, ըստ որում նորա մէջ այդպիսի փոփո-  
խութիւն լինելուց յետոյ նա առանց վտանգի կարող է գործ զնել  
և շահաւէտ կացուցանել իւր ընդունակութիւնը: Որպիսի զարմա-  
նալի ներգաշնակութեամբ, ըստ նախասահմանութեան Արարչին,

կատարվում է աստիճան առ աստիճան նորա բոլոր գործողութեանց զարգացողութիւնքը, և որպիսի կատարելութեամբ սորա առ հասարակ նպաստաւորումեն ընդհանուր նպատակի հասանելու — էակի պահանջութեան և բարեկեցութեան:

Արեւիստան գալով աշխարհ, ուր ամենայն բան նորա համար միանգամայն նոր է և ուր նորա գոյութիւնը ամենայն բոլոր կախուած է նորա վերայ ունեցած խնամքից, միանգամայն թողած է մօր խնամատարութեան, և այդ սուրբ պարտականութիւնը երաշխաւորվում է այն մայրական զգացողութեամբ, այն սաստիկ և անձնանուէր սիրով, որով մայրը միշտ, իւր մահի գուռը եղած բոլորէին անգամ, պատրաստ է խնամել իւր զաւակը: Արբ որ երեխան աշխարհ է գալիս, նա ոչ իւր բնութեան վերայ հասկացողութիւն ունի և ոչ շրջագատած առարկաների, և ահա ինչու համար Աստիւստանութիւնը չէ տալիս նորան կարողութիւն շարժելու, որ առաւել փնասակար կլինէր նորան, քան թէ օգտաւէտ. և որովհետեւ անկախաբար ներգործելու նա տակաւին անզօր է, ուստի գիտակցութիւն ևս չէ տալիս, պատճառ որ գիտակցութիւնը նորա համար միանգամայն անօգուտ էր լինելու և մանաւանդ նորա գրութիւնը ձանձրալի էր կացուցանելու: Իւր գոյութեան առաջին օրերը երեխայն անցուցանում է քունի մէջ և զարթում է միայն իւր սնունդ առնելու ձգտողութիւնը բաւականացնելու, որից կախ է նորա գալոց զարգացողութիւնը:

Այս երեխաների կազմուածքի յատկութեանց կարճապատ նրկարագիրը անշուշտ շատ պակասաւոր է, բայց, կարծեմ, բաւական կլինի ընթերցողիս ընդհանուր տեղեկութիւն տալու համար: Արեւիստաների խնամատարութեան գործնական կանոնները պատմելուս, հարկաւոր եղածին չափ ես կլրացնեմ այս նկարագիրը, որպէս զի առաւել հասկանալի և գիւրբմբոնելի կացուցանեմ այն ֆիզիօլոգիկական սկզբունքները, որոնց վերայ հիմնած են այդ կանոնները:



## ԳԼՈՒԽ VI.

ՆՈՐԱԿՆԻՆ ԿՐԵՆՈՒԿԸ ԽՆՍՄԵԼՈՒ ԵՂՆԵՍԿԸ:

**Ց**ՈՅՑ տալով մանուկի կազմուածքի առանձին յատկութիւնքը, ես այժմ յառաջ եմ բերելու նորածնի խնամատարութեան վերաբերեալ գործնական կանոնները, և բացատրելու եմ այն ֆիզիոլոգիկական սկզբունքները, որոնց վերայ այդ կանոնները հիմնած են:

Արեխայն, մօր արգանդից դուրս գալու ժամանակ, որի մէջ նա շրջապատած է անփոփոխ բարձրաստիճան ջերմութեամբ, լինում է այնչափ դիւրազգաց, որ մեր ամառուայ միժնորտական օդը անգամ նորան ցուրտ է թվում: Ահա ինչու համար, հենց որ նա աշխարհ է գալիս, հարկաւոր է փաթաթել նորան փափուկ տաք կտանակէնի մէջ. իսկ եթէ այդպիսի դիպուածում եղանակը ցրտային լինի, առաւել բարւոք է պահել (բռնել) նորան տաքացրած սենեակի մէջ, բայց ոչ մօտ հնոցի: Եթէ երեխայն առողջ է և ազատօրէն է շնչում, հարկաւոր է իսկոյն լուանալ նորան, որպէս զի անհետանայ նորա մարմնին կպած այն մածուցիկ հեղանիւթը, որ պահպանում էր նորա առողջութիւնը մինչ նա մօր արգանդումն էր գտանվում, բայց այժմ միմիայն գրգռում է և մորթի առողջարար գործունէութեան արգելք է լինում: Այդ լուացումն աւելի դիւրին կերպով կատարելու համար պէտք է երեխային ջերմ ջուրի մէջ ընկզմել ձախ ձեռքով գլուխը դէպի վեր պահած: Այս տեսակ լուացման ժամանակ նորա թոյլ կազմուածքը զտանվում է ամենայարմար դրութեան մէջ և մարմնի բոլոր մասները պատասպարուած են լինում ցրտից, նաև այս դրութեան մէջ աւելի դիւրին է պատշաճապէս լուանալ նորա գլուխը ու երեսը առանց երկիւղ կրելու, որ մի

գուցէ կեղտոտ ջուրը լցուի նորա աչքի մէջ: Օգուշարար լուսնալուց յետոյ, հարկաւոր է սպունգով կամացուկ սրբել նորան, բայց այնպէս որ այդ բանը անելուց մորթը չափազանց չգրգռի և առ հասարակ մի որ և իցէ փնաս չստանայ երեխան: Ծեքով ջրով մածուցիկ հեղանիւթը շատ հեշտութեամբ բաժանվումէ մարմնից և դորա համար օճառի կամ որ և իցէ իւղային նիւթի գործադրութեան կարևորութիւնը շատ սակաւ է պատահում: Այդ լուացումը պիտոյ է կատարուի ամենայն դուրսութեամբ, ապա թէ ոչ մածուցիկ հեղանիւթի մասունքները դիւրաւ կարող են մնալ մորթի ծալուածքների, յոդուածների, աչքերի, թերթերուկների մէջ և առ հասարակ մարմնի մակերևութի անհարթ տեղերում: Արովհետև նորածին մանուկի աչքերը խիստ քնքուշ են և ընդունակ դիւրաւ փնասուելու, ուստի յետ լուացման, մարմինը սրբելու ժամանակ հարկաւոր է որքան կարելի է զգաստ լինել, որ մի գուցէ սպունգը, որով սրբել էին մարմնի միւս մասները, դպչի աչքերին և մէջը կեղտոտ ջուր կաթնեցնէ: Այս բանը եթէ զանց առնուի, հետևումէ աչքի բորբոքումն, որ երկու երեք օր անցանելուց յետոյ արտայայտվում է ի վերջոյ կատարեալ կուրութիւն է պատճառում աչքերին: Արպէս զի մի որ և իցէ վտանգաւոր հետևանք չյառաջանայ, հարկաւոր է լուանալ թերթերուկները պարզ և մաքուր ջրով և ապա մաքուր սպունգով սրբել:

Լուանալու ջուրը պիտոյ է նոյն իսկ մարմնի ջերմութիւնը ունենայ, այսինքն 96°ից մինչև 98° Գարընհէյթեան ջերմաչափի վերայ: Արբեմն կարելի է երկու կամ երեք աստիճան առաւել ջերմ ջրի մէջ ընկղմել երեխայն, և այդ լինում է շատ օգտակար, եթէ նա տկար կամ ծանրաչարժ մանուկ է, ըստ որում այդ մի քանի աստիճան առաւել ջերմութիւնը գրգռումէ նորա մէջ կենսական զօրութիւնը:

Ամենայնից հանելուց յետոյ պիտոյ է երեխային փաթաթել ջերմ կտանեղէն լաթի մէջ և ապա դնել բարձի վերայ, իսկ բարձը աւելի յարմարադոյն է դնել ծունկի վերայ: Արեխային այս դրութեան մէջ բռնելով, հեշտութեամբ կարելի է սրբել և չորացնել նորա մարմինը, նմանապէս կարելի է մի և նոյն ժամանակ ձեռքով կամացուկ շփել, մինչև որ մարմնի մակերևութի վերայ երևի բընական կարմրութիւն: Այսպիսի միջոցին պիտոյ է որքան կարելի է զգուշանալ, որ երեխայն որ և իցէ կերպով չմտէ, ուստի ամեն-

նայն ջանք և փոյթ գործ զնեւու է, որ խնամատարութեան բոլոր պատկանելիքը չափաւորապէս ջերմ լինին, որ սենեակը տաք լինի և թափանցիկ քամի ներս չմտնէ: Բայց տաքացրած հնոցի մօտ երեխային բնաւ հարկաւոր չէ պահել:

Երեխային պատշաճապէս սրբել չորացնելուց յետ, ամենայն զգուշութեամբ հարկաւոր է զննել նորա մարմինը, թէ մի գուցէ մարմնի վերայ մի գրգռած տեղ լինի, և եթէ արգարե պատահի այդպիսի գրգռած տեղ, փութապէս հարկաւոր է ցաննել վերան փոքրը ինչ պուզրա (пузыря):

Երեխային այս ձևով լուանալ ու չոր լաթով սրբելուց յետոյ, պէտք է փաթաթել նորան փափուկ և նուրբ կաւակղէնի մէջ հինգ կամ վեց մատնաշափ լայնութեամբ և նոյն չափ երկայնութեամբ, որպէս զի մի կամ երկու անգամ կարելի լինի նորանով շրջապատել մարմինը: Այս զգուշութիւնը հարկաւոր է մասամբ ջերմութեան համար, մասամբ էլ պորտի պահպանութեան և առանձին զգուշութեան համար, ըստ որում, եթէ այդ հնարները գործ չգրուին, աղաղակելուց և սաստիկ ճիգն թափելուց աղիքները կարող են պորտի ծակից դուրս ելաննել: Չմեռը և ցուրտ եղանակում երեխային փաթաթելու համար հարկաւ ֆլանելը նախամեծար է համարվելու. բայց եթէ նորա մորթը շատ քնքոյշ է և եղանակը չափազանց տաք, կարելի է ֆլանելի փոխանակ հաստ կամ բարակ քաթման գործ ածել: Երբեմն այդ վախճանին համար գործ են ածում ֆլանել հաստ կամ բարակ քաթմանէ աստառով. առ հասարակ պիտոյ է նկատել, որ մեր կլիմայում այս տեսակ դիպուածներում ֆլանելը գրեթէ միշտ նախամեծար է համարուելու: Սակայն, թո՛ղ փաթաթոցը որպիսի նիւթից ուղէ պատրաստած լինի, այսու ամենայնիւ հարկաւոր է մեծ զգուշութիւն գործ զննել, որ երեխայի մարմինը պինդ չտեղմուի, հետեւաբար և շնչառութիւնը չզժուարանայ:

Այս բոլորը կատարելուց յետոյ, ոմանք ուղղապէս առնում փաթաթումն երեխային ֆլանելիցէն վերմակի մէջ առանց մի որ և իցէ զգեստ հագցնելու, և այդպէս քնացնումն, իսկ շորը զարթելուց յետոյ են հագցնում: Ոմանք էլ յառաջագոյն երեխային շոր են հագցնում և ապա պառկեցնումն քնելու: Ի՞նչ ո՞րն է այս երկու եղանակից լուսազոյնը, պէտք է նայել երեխայի գրութեան, ըստ որում այդ միանգամայն կախ է նորա գրութիւնից: Եթէ երեխայն շատ սկար է կամ թէ վաննայից և սրբուելուց շատ ձանձրացած,

այդպիսի պարագայում յարմարագոյն և շահաւէտ է անմիջապէս առանց մի շոր հագցնելու պատկեցնել, փաթածելով միայն ֆլանելիցէն վերմակի մէջ: Ան հասարակ, երբ որ երեխային վաննայից և սրբուելուց յետոյ դնումեն օրորոցի մէջ, նա իսկոյն քուն է մտնում: Արպէս զի կարգարանութիւն լինի այս մեր մեկնարանութեանը մէջ, դառնանք դէպի երեխայի հագուստեղէնը:

ԱՅՊՈՒՍՑ. — Արեխայի հագուստը պիտոյ է լինի թեթև, կակուղ և բաւականին տաք, կլիմային և տարուայ եղանակին համեմատ: Աագուստը պիտոյ է այնպիսի ձև ունենայ, որ առանց դժուարութեան կարելի լինի հանել ու հագնել, որ լաւ ծածկէ ամբողջ մարմինը, առանց նեղութիւն պատճառելու կուրծքին և որովայնին, որ առ հասարակ երեխայն միանգամայն աղատ լինի բոլոր իւր շարժողութեանց մէջ: Ահա սոքա են երեխայի հագուստի յատկութիւնքը, մօր ճաշակը և նորաձևութեան պահանջողութիւնքը անտեղի և աւելորդ են համարուելու այս գործում: Ալիտոյ է ուշագիւր լինել և աշխատել, որ մարմինը միանգամայն աղատ լինի և ոչ մի կերպով չսեղմուի, որ ձեռքերի և ոտքերի շարժողութիւնքը կատարուին առանց որ և է դժուարութեան. նա մանաւանդ հարկաւոր է զգուշանալ հետեւելու այն փնտասկար ուղորութեան հագուստի վերաբերութեամբ, որ մինչև ցարդ տիրապետած է Աւրոպայում, այն է պատել երեխային խոնձարուրի մէջ:

Այժմ երեխայն վաղժամ է ծնած կամ ձմեռն, կամ եթէ թոյլ կաղմուածքի տէր է, հագուստի առ հասարակ այն մասները, որոնք անմիջապէս զպչումեն մարմնին, պիտոյ է լինին ֆլանելից, որովհետև դա լաւ պահպանումէ մարմինը փնտասկար ազդեցութիւններից և ծառայումէ իրրև մի թեթև գրգիշ մորթի գործունէութեան, և ուստի շատ օգտակար բան է, իրրև խափանառիթ ներքին հոսանքների, այլ և բորբոքողական և աղիքային ցաւերի, որոնց ենթակայ են տկարակազմ երեխայք: Ըայց պատահումէ երբեմն, որ մորթի տարապայման զիւրազգացութեան կամ ուրիշ պատճառով ֆլանելը չափազանց զրգուումէ մարմինը կամ արտաշնչութիւն է յառաջացնում. այսպիսի պարագայում բարուք է փոխանակ ֆլանելի հաստ կամ բարակ քաթան գործածել, միայն թէ այդ հաստ կամ բարակ քաթանը չափաւորապէս տաք լինի:

Աագուստի միւս մասերի համար չկայ մի այնպիսի ընդհանուր կանոն, որ ամենայն զիպուածում լինի գործագրելի. կայ միայն մի

պայման, որ պիտոյ է միշտ ունենանք մեր աչքի առաջ, այսինքն, աշխատելու է, որ հագուստը կուրծքին և աղիքներուն նեղութիւն չպատճառէ և առ հասարակ արգելք չլինի երեխային իւր բոլոր անդամներով ազատօրէն շարժողութիւնք անելու: Արովհետեւ կենդանական ջերմութիւնը երեխայական հասակում պատրաստութեամբ ոչ այնպէս արագ, որպէս յետագայ հասակներում, ուստի հարկաւոր է ուշադիր լինել, որ հագուստը բաւականապէս կարողանայ տաքացնել երեխայի մարմինը: Սակայն թէև ցուրտը փնասակար է երեխայի առողջութեան, բայց կարգից դուրս ծածկել ու փաթաթելը նորան և շփազանց տաքութիւնը սենեակի մէջ ոչ պակաս փնասակար են, ուստի հարկաւոր է մեծապէս զգուշանալ այդ կողմանէ ևս: Անշուշտ, արդէն ինքն ըստ ինքեան բացայայտ է, որ երեխայի հագուստի մէջ բնաւ հարկաւոր չէ գնդասեղներ գործ ածել, այլ դոցա փոխանակ պիտոյ է գործ ածել ժապաւէն և կոճակներ:

Առաջին ամիսներում սովորաբար երեխային երկար զգեստ են հագցնում: այդ սովորութիւնը շատ օգտակար է, ըստ որում երկար զգեստը աւելի լաւ է պատսպարում մարմինը և ստորին ծայրերը (НИЖНЯЯ ОКОЛЕЧНОСТИ) ցուրտից և թափանցիկ հողմից: Հօւրս եղանակում ոտքերը կակուղ մազեղէն գուլպաներ պիտոյ է հագցնել, բայց ուշ դարձնելու է, որ գուլպաները նեղ չլինին և չսեղմնն ոտքերը:

Արեխաների գլուխը սովորաբար շփազանց տաք են պահում, որ շատ և շատ փնասակար է նոցա համար, վասն զի երեխայն իւր զեռափթիթ հասակում ունի բնածին տրամադրութիւն դէպի ջղային գրգռողականութիւն: Տաք եղանակում բաւական է ծածկել նորա գլուխը մի թեթեւ գլխանոցով (ЧЕПЧУКЪ), իսկ տաք գլխարկ ցուրտ եղանակում անգամ կարելի է հագցնել միայն այն ժամանակ, երբ երեխային դուրս են հանում սառն օդի մէջ ման ածելու: Սենեակի մէջ ջերմութեան աստիճանը պիտոյ է լինի սլնքան, որ կարտաութիւն չլինի երեխային կարգէ դուրս փաթաթելու: Ալիսի մրտողութիւնը երեխաների մէջ յառաջանումէ ոչ թէ գլուխը բաւականապէս ծածկուած չլինելուց, այլ դորա պատճառը այն է, որ քնած ժամանակը տաք և կակուղ բարձից գլուխը սաստիկ տաքանումէ, այդ տաքութիւնից արիւնը առաւելապէս ընթանումէ (վազումէ) դէպի գլուխը և պատճառում մեծաքանակ արտաշնչութիւն: Այս եղելութեան առաջը բռնելու համար հարկաւոր է ոչ թէ առաւել տաք

պահել երեխայի գլուխը քնած ժամանակ, այլ հարկաւոր է պառկեցնել նորան այնպիսի բարձի վերայ, որից գլուխը շափազանց չէ տաքանալու քնած ժամանակը: Առ հասարակ թիւ երեխայի գլուխը շատ տաք պահենք, ջղերի գրգռականութիւնը մեծապէս սաստկանումէ, և երեխան լինումէ մինչև այն աստիճան դիւրագգաց, որ եղանակի ամենաչնչին փոփոխութիւնը անգամ սաստիկ ներգործումէ նորա վերայ, այսպիսի գրութեան մէջ մի շնչինգրգռողութիւն կարող է պատճառ լինել ցնցողական երեւոյթներին:

Արբ որ երեխայի զրութիւնը ամբանումէ, երբ նա լինումէ աւելի աշխոյժ և սկսումէ արտայայտել շարժողութեան կարօտութիւն, — որ սովորաբար ծնունդից մի քանի ամիս անցնելուց յետոյ է պատահում, — այն ժամանակ հագուստը ևս պէտք է լինի յարմար նորա ոտքերի ազատ շարժողութեան: Ստքի հագնելիքները պիտոյ է լինին տաք և փափուկ գուլպաներ և կակուղ մաշիկներ, բայց հարկաւոր է այս պարագայում մեծ ուշ դարձնել, որ ոտքերը բնաւ չսեղմուին, որ նեղ կամ վատ կարուած մաշիկներից մազոշներ չյառաջանան և ոտքի մատերը անբնական զրութեան մէջ չգտնուեն: Արկար հագուստը կարճ հագուստի փոխանակելու ժամանակ միտ դնելու է եղանակի զրութեան և զգուշութեամբ հոգալու է, որ երեխայի ազգրները և ոտքերը բաւականաչափ պատսպարուած լինին ցրտից, երբ որ նորան դուրս են հանում պաղ օդի մէջ մանածելու:

Վմանապէս անկողնի պատկանելիքը պիտոյ է լինին ջերմութեան կողմանէ համապատասխան այն պեւտին, որ հագցնումեն երեխային արթուն ժամանակը. ամենայն տարապայման փոփոխութիւն շատ և շատ փնասակար է:

Սովորաբար անհրաժեշտ հարկաւորութիւն են համարում պառկեցնել երեխային կակուղ փետրալից անկողնի վերայ և անխտիր փաթաթումեն սորան ծածկոցներով, թող սա կոշտ կամ ուղէ կակուղ անկողնի վերայ քնած լինի: Խնամք տանելով երեխային տաք պահելու, մայրերը սովորաբար կարծումեն թէ երեխայն տաքութիւնը ըստանումէ միայն վերմակից, որով ծածկումեն նորան, միանգամայն մոռանալով, որ փետրալից անկողինը աւելի ևս տաքացնումէ, քան թէ վերմակը:

Աս արդէն վերելում յիշած եմ թէ կենդանական ջերմութիւնը երեխաների մէջ շատ կամաց է պատրաստվում, ուստի սոցա հարկաւոր է արտաքին ջերմութիւն առաւել շատ, քան թէ հասակաւոր-

ներին <sup>1)</sup> (չափահասներին), սակայն այս պարագայում ևս պիտոյ է զգուշանալ շափից դուրս ելանելու, պատճառ որ անելի տաքը նոյն-չափ փնասակար է երեխային, որչափ և ցուրտը:

<sup>1)</sup> Սորանից մի քանի տարի առաջ Էդինբուրգի աշխատանոցների մինի մէջ եղած եր մեծ զանցառու թիւն երեխաների խնամատարութեան վերաբերութեամբ, ցուրտ ձը-մեռուայ ժամանակ երեխաներին պահեցնումնին ոչ թէ անկողնի վերայ, այլ բարակ բարձրի եւ վերաները ծածկումնին միայն մի թիւթիւ վերմակով, ուստի երեխայքը զոգումնին ցրտից, չլին կարողանում քնել, եւ շտաբը նոցանից սաստիկ հիւանդա-ցնէ ինն:

## ԳԼՈՒԽ VII.

ԵՐԵՒԱՅԻ ԿԵՐԵՎՈՒՐԸ.

ԱՍՒՐԸ ԵՒՆ, շարաթները ծննդից յետոյ երեխայն մի միայն քնում և ուտումէ: Ակզբում կազմուածքի գլխաւոր գործողութիւնքը սոքա են — մարսողութիւն, սննդառութիւն և արտաթորութիւն: Արեմն, որպէս վերեում բացադրեցի, հենց որ սկսումն այդ գործողութեանց ընթացքը, որից անմիջապէս կախուած է կեանքի տեսողութիւնը, կազմուածքի համար անհրաժեշտ հարկաւորութիւն է դառնում կանոնաւոր կերպով նիւթ ընդունել սննդեան, մարմնի աճեցման և իւր այն պահասութիւնքը լցուցանելու համար, որ յառաջանումն արտաթորութեամբ: Հենց որ երեխայն զարթում է իւր առաջին քնից, իսկոյն յայտնի է կացուցանում իւր հզօր բնազդողութիւնը (ИНСТИНКТЪ), որ գրգում է նորան կերակուր ընդունելու: Ըյդ բնազդողութիւնը անուանվում է ախորժակ, Արեխայի այս կարօտութիւնը լցուցանելու համար, պիտոյ է մօտեցնել սորան մօր ստինքներին, երբ սա ծննդական ցաւերից փոքր ինչ արդէն հանգստացած լինի, իսկ այդ ցաւերից հանգստանալու համար ութն կամ ինն ժամ սովորապէս բաւական է համարվում: Ակզբում մօր կաթը շատ սակաւ է արտաթորում և իւր ջրային բաղադրութեամբ առաւել նմանում է շիճուկի (СЫВОТКА), քան թէ կաթի, բայց հետզհետէ կաթը լաւանում է. մի քանի օրից յետոյ լինում է աւելի առատ և աւելի սննդաբար: Աթի այդ անզազար լաւանալը մի հրաշալի կերպով համապատասխանում է երեխայի դրութեան և կարօտութեան: Արածնի աղիքները, ինչպէս արդէն ասացի, լցուած են սեւադոյն,



ապականուած հեղանիւթով, որ ասվումէ մեկոնիուամ: Արպէս զի մարտոզութեան գործարանները կարող լինին կատարել իւրեանց կոչումը, առջ ու առջ հարկաւոր է աղիքները մաքրել, հեռացնելով նոցա միջից այդ նիւթը, ըստ որում այժմ դա ոչ միայն անօգուտ, այլ և վնասակար է, եթէ մնայ կազմուածքի մէջ: Այս հարկաւորութեան մեծապէս համապատասխանումէ մօր կաթը, որ, ըսկզբում լինելով ջրային, չէ պատճառում աւելորդ գրգիռ աղիքների մէջ և ունի այնքան ազդեցութիւն աղիքների գործունէութեան վերայ, որքան որ այդ հարկաւոր է մեկոնիումը հեռացնելու համար: Մեկոնիումից աղիքները ազատվումեն մի կամ երկու օրուայ ընթացքում: Այսպէս մօր կաթի որակութիւնը միանգամայն համապատասխանումէ երեխայի մարտական գործարանների գրութեան և որքան որ այդ կաթը առաւել առատանում և սննդարար է լինում, այնքան ևս ըստամօքսը և աղիքները լինումեն ընդունակ այդ կաթը մարսելու:

Աւրեմն բնութիւնը արդէն ինքը նախատեսել է երեխայի աղիքները մեկոնիումից մաքրելու կարեւորութիւնը և հոգարարձութիւն է արել այդ մասին: Բայց անգիտութեամբ ծիծ տալուց առջ սովորարար տալիս են երեխային լուծողական, կարծելով թէ այդ բանը անպատճառ հարկաւոր է ստամօքսը և աղիքները նախապատրաստելու մօր կաթը ընդունելու համար. մինչդեռ շատ զիպուածներում ոչ միայն աւելորդ է այդ բանը, այլ և շատ վնասակար: Անշուշտ, երբեմն պատահումեն այնպիսի զիպուածներ, երբ շահաւէտ է համարվում տալ երեխային թեթեւ լուծողական, բայց ոչ այլապէս, եթէ ոչ բժշկի խորհրդատուութեամբ: Մօր ջրային կաթը երեխայի համար ամենալաւ լուծողականն է, նորա քնքոյշ կազմուածքի համար բնութեան ձեռքով պատրաստած. ուստի, երբ որ առանց հարկաւորութեան տալիս են երեխային լուծողական դեղ, յառաջանումէ կրկին վնաս. գրգռումէ երեխային աղիքները և արգելք է լինում մօր կաթի պատշաճաւոր արտաթորութեան, որից հետեւումէ ձգտումն կուրծքի (напряжение груди), իսկ սորա հետեւանքը շատ անգամ լինումէ սուր բորբոքողութիւն կուրծքերի մէջ և ուսոյցք:

Եթէ երեխայի ծնունդից մի քանի ժամանակ անցանելուց յետոյ նկատելի լինի, որ սորա աղիքները խսպտա անգործութեան մէջ են գտանվում և թէ սա յայնանպէս նեղութիւն է կրում այդ պատճառով, այսպիսի միջոցում կարելի է տալ նորան մի փոքրիկ թէյի գրգալով քաղցրացրած ջուր կամ թէյի կէս գրգալ տղենի անուանած

տունկի հունդի թարմ իւղ (клевещевинное масло). \*) իսկ բժշկական ուրիշ աւելի զօրաւոր դեղեր բնաւ կարելի չէ գործ ածել:

Պատահումն այնպիսի դիպուածներ, որ հիւանդութեան պատճառով, կամ մի ուրիշ որ և է մարմնաւոր պակասութեան պատճառով մօր կաթի արտաթորութիւնը մինչև այն աստիճան կամաց է կատարուում, որ, երեխայի զօրութիւնը պահպանելու համար, հարկն արդէն ստիպումէ տալ նորան կերակուր, չսպասելով այն ժամանակին, երբ պիտոյ է սկսի մօր կաթի կանոնաւոր արտաթորութիւնը: Այս բանը ըստ մեծի մասին յառաջանումէ մօր դէպի իւր անողջութիւնը անուշադիր լինելուց: Այսպիսի դիպուածներում, բնութեան նպաստամատոյց լինելու համար, ժամանակ առ ժամանակ պիտոյ է երեխային մօտեցնել մօր կուրծքին, շնայելով որ կաթի արտաթորութիւնը դեռ ևս սկսած չէ:

Արեւմե կերբ որ հարկաւորութիւնը ստիպումէ տալ երեխային կերակուր յառաջ քան թէ կաթը սկսումէ արտաթորել, պիտոյ է որքան կարելի ճիշդ կատարել բնութեան ցոյցերը (указание), տալով նորան այնպիսի կերակուր, որ մօտաւորապէս նման է մօր կաթին: Ի հարկէ շատ և շատ լաւ կլինի, եթէ երեխային ծիծ տայ այնպիսի կնամարդ, որ նորա մօր հետ մերձաւորաբար մի և նոյն ժամանակ ազատուած է յղութիւնից. բայց որովհետև միշտ կարելի չէ այդպիսի կնամարդ գտնել, ուստի բարւոք է տալ երեխային ուտելու էշի կամ կովի կաթ, կիտով շափ կամ կէօից աւելի ևս ջուր խառնած և փոքր ի շատ քաղցրացրած: Այսօրինակ պատրաստած կաթը պիտոյ է տալ իւրաքանչիւր նուազին մի փոքրիկ թէյի դրօզալ և կրկնել ժամանակ առ ժամանակ, նայելով երեխայի կարօտութեան, մինչև որ մայրը ինքը կարողանայ սնուցանել նորան իւր կուրծքով: Քրտանակ թէյի դրօզալի առաւել լաւ է կերակրել երեխային արհեստական պտուկներով (искусственный сосок): Այսպիսի միջոցներում կովի կաթը միանգամայն պիտոյ է նախամեծար համարուի զանազան խիւսերից (кашица), արգանակներից և այդ տեսակ բաներից, պատճառ որ այդ դեռափթիթ հասակում երեխայի մարտողական գործարանները տակաւին պատրաստած չեն որպիսի և

\*) Le ricin, palmae-cristi, — գինի, տունկ ինչ ազակերպ ևս լուծական ընդօժք (գենադերչակի ձեթ), ասումն նաեւ, բայց սիւււլ, касторовое масло. Касторъ, — կուրք, իբրցին կենդանի է: Շանաճանճ՝ ևս ասումն, ըստ որում այդ տունկի հունդերը լաւաճանճաճեւ են:

իցէ բուսական կերակուր ընդունելու. բուսական կերակուրը գրեթէ միշտ գրգռումէ երեխայի ստամոքսը և աղիքները: Պատշաճապէս ջուր խանած և քաղցրացրած կովի կաթը իւր քիմիական բաղադրութեամբ շատ մօտ է մօր կաթին, հետևաբար լաւապէս կարող է փոխարինել նորան <sup>1)</sup>: Աշրկու կամ երեք ժամը մի անգամ հարկաւոր է կերակրել երեխային այդ կաթով, բայց ոչ շատ շատ տալ, այլ չափաւորապէս. մի ունկի (УНЦІА) լաւապէս մարսած կաթը առաւել սննդարար է երեխայի համար, քան թէ երկու ունկին, եթէ այդ երկու ունկին լաւ չեն մարսվում և ծանրաբեռնումեն նորա թոյլ ստամոքսը:

Աթէ մօր առողջութիւնը սովորական դրութեան մէջ է գտանվում և նորա շրջապատած հանգամանքները իւրեանց սովորական կարգով յառաջ են գնում, կաթի արտաթորութիւնը հաստատապէս սկսվումէ երեք օրից յետոյ զկնի ծննդեան, և, երեխայի կարօտութեան համեմատ, սոյն իսկ կաթի որակութիւնը անդադար փոխվումէ — որ առաջ ջրային էր, այժմ աւելի առատ և աւելի սննդարար է լինում: Աթէ այս բոլորը պատշաճաւոր կերպով է կատարվում, և մօր առողջութիւնը միօրինակ շարունակվումէ, մի քանի ամիս բնաւ հարկաւորութիւն չկայ ուրիշ կերակուր տալու երեխային, բացի մօր կաթից, որ շատ և շատ բաւական է նորա համար:

Սրբեմն մօր կաթը երեխային համար բնական և ամենալաւ կերակուրն է: Այժմ մեզ մնումէ բացատրել թէ օրը քանի անգամ պիտոյ է ծիծ տալ երեխային: Աս հասարակ հարկաւոր է մեծապէս զգուշանալ կերակուրը չափից աւելի տալու, ըստ որում եթէ ստամոքսը յաճախապէս լցուի կերակուրով կամ չափազանց ընդլայնանայ, մարսականութիւնը անպատշառ կխանգարուի, երեխայի փորի մէջ կգոյանան խիթք և փուք, ուստի սա շարաշար կտանջուի: Սովորաբար անփորձ և անհմուտ մայրերը կերակրումեն երեխային ամենայն անգամ, երբ սա աղաղակ է բարձրացնում կամ որ և է նշանով յայտնումէ իւր անբաւականութիւնը, ասես թէ նա բացի քաղցից ուրիշ զգայութիւն կարող չէ ունենալ: Ծնած օրից սկսած հարկաւոր է կերակրել երեխային կանոնաւորապէս — որոշած ժամերում: Արեխայն զիւրաւ և շատ շուտ ընդելանումէ այս կանոնին և այնուհետև մընումէ միանգամայն հանգարտ, որ շատ շահաւէտ ոչ միայն իւրեան, այլ և մօր համար. նաև այս բանը մօր համար կրկնապատիկ վարձա-

<sup>1)</sup> Ձանազան կենդանիների կաթի որակութեանց վերայ. տես յաւելում զ.

տրութիւն է այն մասնաւոր անհանգստութեանց փոխանակ, որ անխափանելի են քանի որ երեխան չէ ընդելացած այդ կանոնին:

Սխալ կարծիք է երեխայի աղաղակը քաղցի անհրաժեշտ հետեանք համարել: Արբ որ երեխայն ենթարկվումէ սաստիկ զգայութեան, նա այդ զգայութիւնը անգիտակցաբար աղաղակով է յայտնում: Արբ որ նա քաղցած է, կամ զգումէ տաքութիւն, երբ մի բան ծակումէ նորան, կամ լաւ չեն պառկացրած, ձանձրանումէ միօրինակ դրութեան մէջ պառկելով, զգեստը նեղութիւն է պատճառում, լոյսը կամ հնչիւնը անախորժ է թվում նորան, — այս բոլոր նա անխորապէս յայտնումէ աղաղակով, և բացի աղաղակից նա չունի ուրիշ միջոց յայտնելու իւր զգայութիւնքը: Բայց տգէտ մայրերը սովորաբար ուշ չեն դարձնում, թէ ինչու համար երեխայն աղաղակումէ և իսկոյն ծիծ են տալիս, երբ որ լուսմեն նորա աղաղակը:

Վմանապէս բոլորովին աւելորդ է չափազանց խնամք տանել, որ երեխայն չաղաղակէ: Արեխայն միշտ որ և իցէ անախորժ զգայութիւնից գրգռած աղաղակ է բարձրացնում, բայց այդ աղաղակը ունի և իւր խորհուրդը. դա մասամբ նպատատւորումէ բնութեան նըպատակը իրագործելու: Աղաղակը վնասակար է երեխային միայն այն ժամանակ, երբ յաճախ է կրկնվում, երկարատև է և իրօք յառաջանումէ մի որպիսի և իցէ ցաւից: Ատերը մայրերից հետեութեամբ կարող են նշմարել թէ ինչու համար աղաղակումէ երեխայն — անախորժ զգայութիւնից, թէ մի որ և է ցաւից: Արովհետև երեխայն աղաղակով անխորապէս յայտնումէ իւր անբաւականութիւնը որ և իցէ բանից, և որովհետև այդ վախճանին համար նա չունի ուրիշ միջոց, ուստի հարկաւոր չէ նորա աղաղակը ընդունել իբրև քաղցութեան նշան և անդադար կերակուր տալ բաւականացնելու մտքով, այլ պէտք է անպատճառ գտնել և անհետացնել նորա անբաւականութեան ստոյգ պատճառը, բացի դորանից անախորժ զգայութիւնից յառաջացած աղաղակը պիտոյ է որոշել այն աղաղակից, որ հետեանք է մի որ և իցէ ցաւի կամ հիւանդութեան:

Կերակուրի քանակութիւնը պիտոյ է համապատասխան լինի այն նիւթի քանակութեան, որ գործածվումէ աճեցման կամ արտախորութեան համար. այս մեծ օրէնքը, որ իմ «Մարտոյութիւն և կերակուր» վերնագրով շարագրութեանս մէջ մանրամասնաբար մեկնած եմ, միօրինակ գործադրելի է և չափահասներին և անչափահասներին: Աշխարհ գալուց յետոյ առաջին շաբաթներում երեխայն

մի միայն բնումէ, մարտումէ կերակուրը և աճումէ, ուստի այդ միջոցին պիտոյ է տալ նորան կերակուր աւելի շուտ շուտ, քան թէ վերջը: Իբրև ընդհանուր կանոն կարելի է ընդունել այն, որ սկզբում երկու կամ երեք ժամը մի անգամ բաւական է կերակրել երեխային, իսկ յետոյ, երեխայի աճեցողութեան համեմատ, կարելի է անդադար երկարատեսել այդ ժամանակամիջոցը: Աթէ մայրերը սովորութիւն չունենային իսկոյն ծիծ տալու երեխային, որպէս միակ հնար նորա ազաղակը դադարեցնելու, հազիւ թէ նա երկու ժամ ու կէս կամ երեք ժամ շանցած ուտելու ախորժակ կը յայտնէր: Բայց այսու ամենայնիւ երբ որ երեխան իրապէս յայտնումէ ուտելու փափաք, մայրը աներկիւղաբար կարող է լցուցանել այդ փափաքը, միայն վերահասու է լինելու, որ մի գուցէ երեխայն կերակուրը չափազանց շատ ընդունէ և ծանրաբեռնէ իւր ստամոքսը: Առ հասարակ դեռափթիթ երեխային կերակուր տալու ժամանակ հարկաւոր է հետևել նորա ախորժակի թեւադրութեան, բայց ամենայն զգուշութեամբ որոշելու է առողջ ախորժակը այն ատից, որ գոյանումէ երեխայի մէջ մայրերի անպիտան սովորութիւնից, այն է ամեն ազաղակ բարձրացնելիս ծիծ տալ երեխային:

Արեխայն պահանջումէ կերակուր ոչ միայն ցերեկը, այլ գիշերը ևս, բայց ոչ այնքան շուտ շուտ: Ակզբներում մայրը գիշերը երեք անգամ ծիծ է տալիս, յետոյ երկու, և վերջապէս մի անգամն էլ բաւական է լինում: Աթէ մայրը տկար կազմուածքի տէր է, սակայն ինքն է կամենում ծիծ տալ իւր զաւակին, այսպիսի դիպուածում, որպէս զի նա գիշերը հանգիստ անցուցանէ, կարող է տալ երեխային գիշերուայ մէջ մի կամ երկու անգամ փոքր առ փոքր կովի կաթ ջրով խառնած: Այդ բանը օգտաւէտ է ոչ միայն մօր առողջութեան, այլ և երեխայի առողջութեան համար, ըստ որում եթէ տկարակազմ մայրը ծիծ ապ գիշերը, շուտով կարող է թուլանալ և լինել միանգամայն անընդունակ ծիծ տալու, հետևաբար և վնաս պատճառել երեխայի առողջութեան: Արեխայը շատ զանազան կազմուածքի տէր են լինում, ոմանք համեմատաբար ուրիշների հետ պահանջումեն կաթ երկու անգամ առաւել քանակութեամբ: Բացի դորանից, նայելով մօր առողջութեան, կաթի որակութիւնը ևս լինումէ զանազան, անտարակոյս, որքան առաւել կաթը սննդաբար է, այնքան ևս սակաւ է պահանջուում, և ընդ հակառակն: Աւստի մայրը անպատճառ պէտք է գիտենայ ճշգրութեամբ որոշել թէ երբ երե-

խայն իրօք յայտնումէ անդառութեան կարօտութիւնը, ապա թէ ոչ երկկիզ կրելով շափազանց շուտ շուտ ծիծ տալու նորան, գուցէ զրկէ երեխային կերակուրից այնպիսի ժամանակ, երբ արդարեւ այդ կերակուրը կարևոր և շատ օգտաւէտ է նորան: Բայց միւս կողմից, եթէ անբաւականութեան նշանը նա սխալմամբ համարէ ակործակի ապացոյց և սկսէ ծիծ տալով հանգստացնել նորան, փոխանակ անբաւականութեան բուն պատճառը անհետացնելու, նա կարող է երեխայի ստամոքսի աւերման և իւր կուրծքի բորբոքման պատճառ լինել: Այժմէ երեխան աշխուժութիւն և ուրախութիւն է ստանում կուրծքերը տեսանելով, այդ ճիշդ նշան է նորա քաղցութեան. բայց եթէ մնումէ անշարժ և ուշ չէ դարձնում նոցա վերայ, կամ եթէ յաճախ կամը բերանից դուրս է թափում, նաև ակներեւ է կացուցանում ստամոքսի խանգարում կամ փորի ցաւ, կամ մանաւանդ եթէ կզկզանքը անառողջ են և ինքը ջերմութիւն ունի, — յայտնապէս ասել է թէ նորան շափազանց յաճախ ծիծ են տալիս, ուստի այսպիսի դիպուածում հարկաւոր է անմիջապէս գործ դնել պատշաճաւոր միջոցներ և ծիծ տալ նորան ոչ այնքան յաճախ: Ամենապէս մի և նոյն ժամանակ հարկաւոր է ուշ դարձնել և մօր կերակուրի վերայ — գուցէ լինի հարկաւորութիւն սորա կերակուրը ևս փոխելու: Այժմէ այսպիսի պարագաներում արհամարհեն և չկատարեն մեր առած խորհուրդները, երեխայք ենթարկվումեն դալկան (желтуха): Այդ դալկան ցրելու համար միակ միջոց կայ, այն է պատշաճապէս փոխել կերակուրը. բայց սովորապէս այդ փոփոխութիւնը չեն անում, այլ ունայնարար դիմումեն բազմատեսակ բժշկական հնարների, — քնարեր, փքատար և այլ այդ տեսակ հնարների, որոնք կարող են միայն մեղմացնել երեխայի շարշարանքը կամ առ ժամանակ դադարեցնել ցաւի արտաքին նշանները, բայց կարող չեն բուն ցաւը փարատել, մինչև որ դորա պատճառը չէ անհետացած:

Ֆիզիքական վաստակը, հոգեկան սաստիկ վրդովմունքը և առ հասարակ ամենայն ինչ, որ սաստկապէս ներգործումէ մօր կազմուածքի վերայ, ունին անմիջական և փնասակար ազդեցութիւն կաթի որակութեան վերայ: Ամենայն խելացի մայր պիտոյ է հասկանայ, որ կարևոր է հոգալ իւր հոգին միշտ սովորական խաղաղ դրութեան մէջ պահելու, և թէ փնասակար է մի որ և իցէ վաստակեցուցիչ ֆիզիքական աշխատութիւնից յետոյ անմիջապէս ծիծ տալ երեխային, ևս առաւել հոգեկան սաստիկ վրդովմունքից յետոյ: Այս կանոնի զան-

ցառութիւնը ունեցել է շատ աղէտայի հետեանքներ, ասածս վաւերացնելու համար վերջը ես կրեբեմ մի սարսափելի օրինակ:

Շատերից աներկբայապէս ընդունած է, որ առաջի վեց ամսուայ ընթացքում երեսայի համար ամենաոռոջարար կերակուրը մօր կաթն է: Աշրեխայի և մօր մէջ կայ մի բնական մօտ նմանութիւն ըստ արեան և ըստ մարմնակազմութեան, երբ որ նոքա առողջ են, այնպիսի համաձայնութիւն և ներդաշնակութիւն կայ նոցա մէջ, որ հազիւ թէ նոյնը կարող է լինել երեսայի և մի օտար կնամարդու մէջ: Արեմն մայրերը ինքեանք պէտքէ ծիծ տան իւրեանց զաւակներին, զաւակասիրութիւնը չէ միայն, որ դրդումէ նոցա անձամբ ծիծ տալու, այլ այդ նոցա ուղղակի պարտականութիւնն է, և մի միայն վատառողջութիւնը և ակներե անընդունակութիւնը ծիծ տալու կարող են իրաւացի պատճառներ լինել այդ պարտականութիւնը անձամբ չկատարելու, այլ մի ուրիշ կնամարդու յանձնելու: Բնաջուայ ժամանակները նորաձեւութեան սիրող և հետեող հասարակութեան (դասակարգի) մէջ շար սովորութիւն կար, այն է մայրը, առանց մի որ և իցէ ներելի պատճառ ունենալու, ինքը իւր զաւակին ծիծ չէր տալիս, այլ այդ պաշտօնը յանձնումէր օտար կնամարդերի: Այդ սովորութիւնը միօրինակ փնասակար էր թէ մայրերին և թէ նոցա զաւակներին: Բայց այժմ մարդկային բանականութիւնը և վեհագոյն զգացողութիւնքը յաղթող են հանդիսացել մինչև այն աստիճան, որ մայրերը ինքեանք են ծիծ տալիս զաւակներին, եթէ միայն բժիշկները չեն արգելում նոցա որ և է պատճառով:

Հիրաւի է, որ շատ մայրեր կազմուածքի թուլութեան կամ վատառողջութեան պատճառով իրօք ինքեանք չեն կարողանում կերակրել իւրեանց զաւակներին և, չնայելով որ ուրախութեամբ կամէին կատարել այդ մայրական պարտականութիւնը, ստիպած են ուրիշներին յանձնել: Սակայն ոչ պակաս ուղիղ է և այն, որ մայրերը անընդունակ են լինում ծիծ տալու յատկապէս իւրեանց անշափաւոր և անպատշաճ կեանք վարելուց: Աթի արաթորութիւնը ըստ ամենայնի ֆիզիքական գործողութիւն է, ուստի առողջութեան որպիսութիւնը ունի մեծ ազդեցութիւն դժուար վերայ: Աթէ մայրը առողջ է, նորա կաթը ևս առատ և աննդարար է, իսկ եթէ մայրը անառողջ է կամ թէ անպատշաճ կեանք է վարում, այն ժամանակ նորա կաթն էլ փոքր է և սակաւ սննդարար: Վանի որ խնդիրը ընդ հանրապէս է քննելում, առանց դպչելու նորա մասնաւոր պարագա-

ներուն, այդ կանոնները ամենեցուն ընդունելի են, բայց երբ որ, այդ կանոնների համաձայն, սկսենք հասկացնել անհմուտ մօր, թէ նորան ահրաժեշտապէս հարկաւոր են մաքուր օդ, մարմնամարզութիւնք, պարապմունքք, հոգու խաղաղ գրութիւն, կանուխ վեր կենալ, շափաւորութիւն կենցաղավարութեան մէջ, — թէ միայն այս պայմանները կատարելով նա կարող է վայելել լաւ առողջութիւն և լինել ընդունակ ծիծ տալու, ձեր այդ ցոյցները հազիւ թէ մի բոսակահան տպաւորութիւն կգործեն նորա վերայ և ըստ մեծի մասին ձեր ասածը առանց որ և է հետեանքի կմնայ: Տղէտ մայրը, լինելով միանգամայն անձանօթ կենդանական կարգի օրէնքներին, չէ հասկանում մեծակշիռ նշանակութիւնը այն կանոնների, որոնց հետեանքը անմիջապէս մի քանի ժամուայ ընթացքում յայտնի նշաններով չեն երևում: և երբ որ դուք ցոյց էք տալիս թէ նա սրբախի կեանք պիտոյ է վարէ իւր ապագայի բարեբաղդութեան համար, նոյն բոսակին նա շատ անգամ համաձայնումէ ձեզ հետ, բայց յետոյ դարձեալ հետեւում է իւր փոտերի թելադրութեան և ուրիշների քմահաճոյ խորհուրդներին: Չունենալով իւրեան առաջնորդող հաստատ կանոններ, նա կարող չէ հիմնաւորապէս դատել և որոշել թէ ո՞րն է համաձայն և ո՞րը չէ համաձայն բնութեան օրէնքներին, և հետեւաբար նորա գործողութիւնքը լինումն անկարգ և կամահաճ, նաև շատ անգամ շափաղանց փնասակար երեխայի համար, որի բարեբաղդութեան վերայ թէև նա առ երեսս շատ մտածում է:

Դացի կերակուրից, կաթի որակութեան վերայ ազդեցութիւն ունեցող գլխաւոր պատճառներից մինն է և շարժողութեան պակասութիւնը, ուստի և այս խնդիրը արժանի է խորին ուշադրութեան: Մայրերը սովորաբար չհասկանալով, որ մարմնամարզութիւնքը մեծապէս նպաստաւորումն կազմուածքը առողջ գրութեան մէջ պահելու, անմտաբար հետեւումն մի միայն իւրեանց երեակայութեան կամ քաղաքավարութեան պահանջմունքներին, երկարատեւութիւնը, ձեր, ժամանակը և կանոնը մարմնամարզութեան — այս բոլորը նոքա առ ոչինչ են գրում: Դաց իրօք մարմնամարզութիւնքը բաց օդի մէջ շատ կարևոր են առողջութեան համար, ապա թէ ոչ կազմուածքի բոլոր գործողութիւնքը, մանաւանդ մարտողութիւնը և արտահոսութիւնքը, սաստիկ փնասումն: Սակայն, որովհետև այս գրքի նիւթը յատկապէս երեխաների խնամատարութիւնն է, ուստի ես այս տեղ կանգ չեմ առնուլ մարմնամարզութեան և մարտողութեան ընդհանուր օրէնքների վեր-



բայ, այլ առաջարկումեմ մայրերին դիմել զէպի իմ միւս շարագրութիւնքս, որոնց մէջ մանրամասնաբար խօսվումէ այդ բաների վերայ:

Այժմէ մայրը պատշաճապէս ուշ դարձնէ իւր առողջութեան վերայ, շատ սակաւ կպատահի, որ նա լինի անընդունակ իւր երեխային ինքը կերակրելու. բայց պատահումն և բացառութիւնք, մանաւանդ այն դիպուածներում, երբ մայրը շափաղանց տկար կազմուածքի տէր է և մինչև այն աստիճան վատաողջ, որ նորան բնաւ հարկաւոր չէր ամուսնանալ, կամ եթէ նա պատահաբար ենթարկուած է ծանր հիւանդութեան: Այս ճշմարտութիւնը հաստատելու համար բաւական է մեզ մի օրինակ բերել գործաւորների դասակարգի միջից: Այդ դասակարգի մէջ սակաւ կպատահի այնպիսի կնամարդ, որ, վայելելով կեանքի սովորական յարմարութիւնքը, անկարող լինի կերակրել իւր զաւակին: Արքա պատճառը այն է, որ գործաւորների դասակարգի որքան և իցէ բաւականութեան մէջ ապրող կնամարդիկը առողջութեան համար շատ բարեյաջող կեանք են վարում: Արքա ամեն օր պարապումն մարմնամարդութեան, երկար միջոց մնումն բաց օդի մէջ, վայելումն բաւականին սննդաբար կերակուր, առանց գայթակղուելու ծոխ կերակուրների հրապոյրներով, շափաւորութիւն են պահում և ամենեին չեն գործածում գրգռեցուցիչ բաներ, վեր են կանում շատ վաղ և միանգամայն ազատ են այն վրդովմունքներից և նեղութիւններից, որոնց ենթակայ են նորածնութեան հեռուողները: Այժմ իւրեանց յղութեան ժամանակ և օրդէժնութիւնից յետոյ հարուստ կնամարդիկը ևս կատարէին առողջութեան օրէնքները այնպէս, որպէս կատարումն գործաւորների դասակարգի կնամարդիկը, կարող եմ հաստատապէս ասել, որ նոքա ևս կլինէին պատուական ծիծ տուողներ:

Այն պատճառները, որ հասարակութեան միջին և վերին դասակարգերում յատկապէս քննու են հասուցանում ծիծ տալու ընդունակութեան, մի և նոյն ժամանակ ունին քննասակար ազդեցութիւն կնամարդի ընդհանուր առողջութեան վերայ ևս: Արդարև այդ դասակարգերի կնամարդիկը արհամարհումն մարմնամարդութիւնքը, քնումն փեարալից կակուղ անկողինների վերայ, որ ունի շատ թուլացուցիչ ներգործութիւն, ցերեկը անցնումն տաք և վատ մաքրած սենեակներում, իսկ գիշերը շնչումն աւելի ապականած և ճրնչած օդ, ըստ որում սովորութիւն ունին քնել վարագոյրների ներքև, շատ ցրուած են, չեն պարապած մի հաստատ և առողջացու-

ցիչ գործով, գիշերը պահուումն շատ ուշ և շատ ուշ էլ զարթու-  
մն, հնազանդումն ախտերի թելադրութեան և չնն զսպում իւ-  
րեանց կիրքերը, ուտումն առաւել, քան թէ որքան ստամոքսը ընդ-  
ունակ է մարսելու, կամ թէ որքան պահանջում կազմուածքը, —  
գործածումն անժամանակ և չափից աւելի պինդ թէ՛յ կամ գարնջուր  
(ПНВО), և սյգտեսակ խմելիքներ, բնակւումն անառողջարար տե-  
ղերում, հագնւումն անպատշաճ կերպով և ուշագիւր չնն մորթի  
գործունէութեան, չափազանց շատ կարգումն սիրավէպէր, — կարճ  
ատեմ, զբաղումն այնպիսի բաներով, որ, ինչպէս բացատրած եմ  
իմ միւս շարագրութեանցս մէջ, <sup>1)</sup> ունին վնասակար ազդեցութիւն  
առողջութեան վերայ: Այնքան ալ տեսակ կենցաղաւարութիւնից կազ-  
մուածքը վերջապէս խանգարումէ մինչև այն աստիճան, որ մայրը  
լինումէ անընդունակ իւր զուակին ծիծ տալու, մեղաւորը, անտա-  
րակոյս, ինքն է, և ոչ թէ բնութիւնը:

Արովհետև լաւ ծծմայր լինելու գլխաւոր պայմանը առողջու-  
թեան լաւ դրութիւնն է, ուստի իւրաքանչիւր մայր, որ կամենումէ  
ինքը ծիծ տալ իւր զուակին, պիտոյ է ամենայն զօրութեամբ աշ-  
խատէ այնպիսի կեանք վարելու, որ, փորձերին նայելով, իւր մար-  
մնակազմութեան համար ամենայարմարն է համարվում:

Առցա, որոնց իմ խօսքերս չկարողացան համոզել թէ ծիծ տա-  
լու ժամանակ պիտոյ է գործածել պարզ և սակաւազգիւ կերա-  
կուր, ինդրումեմ ուշ դարձնել յետագայ անժխտելի փաստերի վե-  
րայ: Ամենալաւ և ամենաառողջ ծծմայրեր մէք գտնումնք հողագործ  
դասակարգի կնամարդերի մէջ, որոնք թէև միշտ զբաղած են գոր-  
ծերով և ժամանակի մեծ մասը անցնումն բաց օդի մէջ, բայց շատ  
սակաւ գործածումն կենդանական կերակուր և գրգռեցուցիչ իւր-  
մելիքներ, այլ կերակրւումն բուսական և խմորեղէն կերակրով: Այս  
օրինակ կեանք վարող մայրերը, եթէ կարտուութիւն չունին այդ  
պարզ կերակուրին և չափազանց չեն ծանրաբեռնած աշխատութեամբ,  
սակաւ կպատահի, որ դժուարութիւն կրեն իւրեանց զուակներին  
ծիծ տալու <sup>2)</sup>: Այս հարցը արդէն ինքն ըստ ինքեան բաւականա-

<sup>1)</sup> Տես իմ միւս շարագրութիւնըը. „Physiology applied to Health and Education“  
(Ֆիզիոլոգիա առողջութեան և դաստիարակութեան գործագրութեամբ), — „Dige-  
stion and Diet“ (Մարսողութիւն և կերակուր):

<sup>2)</sup> Ենդ լոյսի մի քանի նահանգներում հողագործերի կենրը այնպիսի կարտուութիւն  
են քաշում ապրուստի, և մինչև այն աստիճան ծանրաբեռնած են աշխատութեամբ,

պէս վկայումէ, թէ առողջ կաթ ունենալու համար բնաւ հարկաւորութիւն չկայ շատ աննդարար կերակուր ուտելու, այլ թէ գորա համար պիտոյ է գործ ածել պատշաճաւոր քանակութեամբ բուսական, խմորեղէն և ջրալի կերակուր, փոքր ինչ մէջը միս աւելցնելով, և ամենեւին կարեւորութիւն չկայ գինի և գարեջուր գործ ածելու: Արթի որակութեան համար ևս, անտարակոյս, օգտաւէտ է գործածել շափաւոր և պարզ կերակուր, ըստ որում շատ աննդարար նիւթից գոյացած կաթը երեխային համար չափազանց իւղոտ և զրգոցեցիչ է:

Այժմէ մօր և երեխայի առողջութիւնը լաւ դրութեան մէջ է գտանվում, և եթէ մօր կաթը առատ է, ասելէ բոլորովին աւելորդ և անհիմն է, մինչև ատամների դուրս ցցուիլը, որ սովորաբար վեց կամ եօթն ամիս անցնելուց յետոյ է կատարվում, մի ուրիշ կերակուր տալ երեխային: Առաջուայ ժամանակներում ոչ միայն մայրերը, այլ բժիշկները անգամ շահաւէտ էին համարում տալ երեխային, գրեթէ նոյն իսկ ծննդեան առաջի ամսից սկսած, մի որպիսի և իցէ իրև, ջրով խառնած, առուսուտ (арбузты) \*) կամ մի ուրիշ խմորեղէն կերակուր, իբրև յաւելուած մօր կաթին. գորանից սովորաբար երեխայի ստամոքսը խանգարվումէր և նա ենթարկվումէր ցնցողութեանց և գրգռողականութեան վնասակար հետևանքներուն, մանաւանդ ատամահանութեան ժամանակ: Այց ներկայումս աւելի մերձաւոր ծանօթութիւնը կենդանական օրենքներին համողեց մեզ, որ դաստիարակութեան մէջ կարելի է լաւագոյն հետևանքների հասանել, հետևելով բնութեան ցոյցերին և գնալով Արարչից սահմանած ճանապարհով:

Գծադրաբար երբեմն մօր կաթը չէ բաւականանում երեխայի աննդեան համար, և հետևաբար մէջ տեղը խնդիր է ծագում թէ ինչպէս օգնել կաթի պակասութեան: Այժմէ մայրը առողջ է և կաթը լաւ, բայց ոչ այնքան առատ, որ բաւական լինի երեխայի յազեց-

որ նոցա կաթը հազիւ թէ բաւականանում է երեք ամիս կերակրելու իրեանց զաւակներին:

\*) Առուսուտը գաղտնաստիումն Հնդկաստան և այլ տար երկիրներում *arundinacea indica* ասուած բոյսի զանազան տեսակների արմատից: Այս բոյսից ստացուած միջուկը (կակուզ մասը) լուսանումն մազի մէջ: Լուսանալու ժամանակ օտլան թափվում ամանի մէջ և նստումը նրա տակը, եթէ ամառը խաղաղ դրութեան մէջ է լինում: Այդ տակը նստած օտլան շրջանումն և առուսուտ անուամբ ծախումն: Առուսուտը գործածական է մանաւանդ բժշկութեան մէջ:

ման, այսպիսի պարագայում նա հրաժարուելու չէ ծիծ տալուց, այլ պիտոյ է շարունակէ և մի և նոյն ժամանակ, իրրև յաւելուած, տայ նորան մի ուրիշ որ և է դիւրամարս կերակուր: Բայց եթէ կաթի պակասութիւնը երեխայի յաղեցման համար յառաջանումէ մօր խանգարած առողջութիւնից, կամ կաթի որակութիւնը երեխայի պահանջողութեանց անյարմար լինելուց, կամ վերջապէս մի ուրիշ որ և իցէ երեխայի համար վնասակար պատճառից, այսպիսի դիպուածում, անտարակոյս, մեծ կարևորութիւն կայ փոխարինել մայրը ծծմայրի, և որքան շուտ լինի այդ փոխարինութիւնը, այնքան շահաւէտ է այդ երեխայի և մօր համար:

Արբ որ հարկը պահանջումէ տալ երեխային, բացի մօր կաթից, մի ուրիշ կերակուր, հարկաւոր է այնպիսի ընտրողութիւն անել, որ այդ երկրորդական կերակուրը կարելի եղածին չափ մօտ նմանութիւն ունենայ մօր կաթին: Արդի կամ էշի կաթը ջրով խառնած և փոքր ինչ շաքարով քաղցրացրած իւր որակութեամբ շատ մօտ նմանութիւն ունի կնամարդու կաթին, և այս պատճառով եթէ մօր կաթը չէ բաւական, կարելի է տալ այդ երկրորդական կերակուրը, իրրև յաւելուած<sup>1)</sup>: Աթէ երևում է, որ այդպիսի յաւելուածը համապատասխան է երեխայի կարօտութեանց, ուրեմն հարկաւոր էլ չէ բացի դորանից տալ նորան ուրիշ կերակուր, մինչև որ ատամնահանութիւնը ցոյց տայ թէ օրպիսի փոփոխութիւն հարկաւորումէ անել կերակուրի մէջ: Սակայն պատահումէ երբեմն, որ այդ տեսակ պատրաստած էշի կամ կովի կաթը ծանրացնումէ երեխային և ստէպ ստէպ պատճառումէ փսխում, թթվութիւն (кислота), կուտակումն փքերի (скопленіе вѣтровъ), խոստուկ, խիժք (փորի ցաւ), այսպիսի դիպուածում, ջրի փոխանակ, բարւոք է խառնել այդ կաթը լաւ եփած խիւսի կամ առսոռուտի հետ: Արեխայի երկրորդական կերակուրը շահաւէտ է պատրաստել յետագայ կերպով, պարսիմաւոր, այսինքն եփած կտոր կտոր մանրած և շորացուցած հացը, պիտոյ է դնել ջրի մէջ և միասին եռացնել կրակի վերայ և ապա աւելցնել դորա վերայ կաթ: Այդ կերակուրը լաւապէս ներգործումէ երեխայի ստամոքսի վերայ և վերանորոգումէ արտաթորութեան կանոնաւորութիւնը: Առաջին ամիսները, ինչպէս ևս արդէն ատացի, սակաւ օգտակար է լինում տալ երեխային որպիսի և իցէ երկրորդա-

<sup>1)</sup> Տես Գ յաւելուածը ևւ էրես 86:

կան կերակուր. թող այդ, եթէ կովի կամ էշի կաթը, ջրով խառնած, համապատասխան չէ երեխայի գրութեան, հարկաւորէ,—կերակուրի մէջ որ և է փոփոխութիւն անելուց առաջ, որը նմանապէս իւր կողմից կարող է նորանոր փնանների աղբիւր լինել, — բժիշկ կանչել, որ ամենայն կողմից ստուգէ, թէ արդեօք պատշաճապէս է՞ կատարվում՝ երեխայի անդառութիւնը, թէ շարժանց շուտ շուտ և շարժանց մեծ քանակութեամբ է տրվում կերակուրը:

Արբոր հարկաւորումէ տալ երեխային երկրորդական կերակուր, պիտոյ է աշխատել, որ այդ կերակուրի ընդունելութեան եղանակը որքան կարելի է համաձայն լինի բնութեան ցոյցերին: Աւստի եթէ հարկաւորութիւն կայ երեխային կովի կամ էշի կաթով կերակրելու, այդ վախճանին համար պիտոյ է գործածել պտուկ, որից կաթը արտահոսէ այնպիսի յապաղութեամբ, որպիսի յապաղութեամբ հոսումէ մօր ծիծերից: Այդ կաթը պիտոյ է նոր կթած և ջերմ լինի, այսինքն նորա բարեխառնութեան (температура) աստիճանը կարելի եղածին չափ մօտ պէտք է լինի մօր կաթի բարեխառնութեան աստիճանին: Այդ նպատակին կարելի է լաւապէս հասանել ձգելով պտուկը ջերմ ջրի մէջ, յառաջ քան կերակրելը երեխային: Արպէս զի երեխայն դիւրաւ կարողանայ կուլ տալ կերածը, պիտոյ է կերակրելու ժամանակ նորան փոքր ինչ ծուծ բռնել: Իսկ սովորաբար երեխայի պտուկած ժամանակը գնումն բերանը պտուկ առանց ամենին մտածելու, որ այդ կերպով կարելի է խեղդամահ անել նորան: Ամենին հարկաւոր չէ երեխային կերակուր առաջարկել, եթէ նա դէպի այդ կերակուրը տհաճութիւն է ցոյց տալիս:

Առողջ երեխաների ատամները սկսումն դուրս ցցուիլ վեց կամ եօթն ամիս անցնելուց յետոյ. իսկ թուլակաղմ երեխաներինը—աւելի ուշ, երբեմն տասն և երկու և մինչև անգամ տասնըհինգ ամիս անցանելուց յետոյ: Մի քանի ընտանիքներում անագան ատամնահանութիւնը ժառանգական որակութիւն է: Իբրև ընդհանուր կանոն կարելի է ընդունել այն, թէ հարկաւոր է շարունակել ծիծ տալ երեխային մինչև այն ժամանակ անգամ, երբ արդէն սկսումն դուրս ցցուիլ ատամները, միայն եթէ մայրը առողջ է, կաթը լաւ ու առատ է և համապատասխան երեխայի պահանջողութեանց: Առ հասարակ կերակուր ընտրելու ժամանակ պիտոյ է միտ գնել մօր և երեխայի առողջութեան որպիսութեան և ոչ թէ սորա աշխարհ եկած օրից անցած ամիսների որքանութեան: Այս այնպիսի երեխայ, որ մի ամ-

սուայ ընթացքում աճումէ առաւել, քան թէ միւսը—վեց ամսուայ ընթացքում: ուրեմն եթէ, սովորաբար, վեց կամ եօթն ամիս անցնելուց յետոյ համարվումէ շահաւէտ տալ երեխային երկրորդական կերակուր, չէ թէ այն պատճառով շահաւէտ է համարվում, որ նա վեց կամ եօթն ամսական է, այլ այն պատճառով, որ այդ միջոցին սկսումն զուրս ցցուիլ առջևի առամները, որ պարզ ցոյց է տալի, թէ նորա մարսական գործարանները պատրաստ են ուրիշ կերակուր ընդունելու: Վճանապէս ինն կամ տասն ամիս անցնելուց յետոյ երեխային կտրումն ծծից ոչ թէ այն պատճառով, որ այսքան կամ այնքան ամիս անցել է նորա ծննդեան օրից, այլ այն պատճառով, որ մօտաւորապէս այդ ժամանակներում կազմուածքի մէջ կատարվումն այնպիսի փոփոխութիւնք, որոնք ակներեւ են կացուցանում նորա պատրաստականութիւնը ուրիշ կերակուր ընդունելու: Աւստի եթէ այդ փոփոխութիւնքը կազմուածքի մէջ կամաց են կատարվում, կերակուրի փոփոխութիւնը ևս սահմանած ժամանակից ուշ պիտոյ է լինի, եթէ երեխայի գրութիւնը այդպէս պահանջումէ: Վարձեալ կրկնումէմ. երեխայի կերակուրի փոփոխութիւնը և նորան ծծից կտրելու ժամանակը պիտոյ է որոշուի նորա կազմուածքի գրութեան նայելով, և ոչ թէ ծնած օրից անցած ամիսներու որքանութեան:

Ուրեմն մօտաւորապէս առջևի առամները զուրս ցցուելու ժամանակ կարելի է տալ երեխային քաղցրացրած կաթ, աւելցնելով մէջը փոքր ինչ առուօուտ և գարէ խիւս: Եւր կերակուրից կարելի է տալ օրը երկու անգամ, բայց միայն թէ այնուհետև ծիծ տալու է աւելի ուշ ուշ: Եթէ այդ կերակուրը երեխայի կազմուածքին անյարմար թուի, այն ժամանակ փոխանակ զորա կարելի է տալ գարէ խիւս, վառեակի կամ հորթի մսի ջուր, մէջը աւելցնելով որպիսի և իցէ ալիւրեղէն նիւթ, բայց այսպիսի դիպուածում պիտոյ է հոգարարձութիւն անել, որ կերակուրի քանակութիւնը համեմատ լինի երեխայի մարսական գործարանների զօրութեան: Եթէ երեխայն ժիր և զիւրազրգիւ բնութեան տէր է, բարւոք է տալ նորան խիւս. իսկ եթէ նա զանգաղ, աւիշկային (анфатическiй) բնութիւն ունի, վառեակի կամ մինչև անգամ կովի մսի ջուրը նախամեծար համարուելու է: Արրեմն պատահումէ, որ այս կամ այն կերակուրը մի երկու շաբաթ միանգամայն համապատասխանումէ երեխայի կազմուածքին, իսկ յետոյ սկսումէ խանգարել ստամոքսը, այսպիսի պարագայում պիտոյ է փոխել կերակուրը, միտ դնելով հանգամանքներին, և առ

Հասարակ բնաւ հարկաւոր չէ տալ երեխային միշտ միատեսակ կերակուր: Այժմէ աղէքների գործողութիւնը զժուարութեամբ է կատարվում, գարէ խիւսը արժանի է նախամեծար համարուելու ուրիշ որ և իցէ կերակուրի առաջ, իսկ եթէ գիւրաւ և ազատօրէն է կատարվում, առողջութեամբ երբեք կաթը նախադասելի է:

Պտուկները պիտոյ է միանգամայն մաքուր լինին և բոլորովին անհոտ: Կաթի մէջ ալիւրեղէն բաներ կարելի է յաւելցնել կերակրելու ժամանակ միայն: Արեխային կերակրելուց յետոյ, իսկոյն ամենայն զգուշութեամբ հարկաւոր է պտուկը լուանալ և պաղ ջրի մէջ դնել: Աւազոյն արհեստական պտուկները մաշկհազուզից (ԷՅՎՎԿԷ) են պատրաստում:

#### ԵՐԵՒՆԵՆԻ ՄՕՐ ԾԾԻՑ ԿՏՐԵԼԸ՝

Թէ երբ կպատկանի երեխային ծծից կտրել, այդ գլխաւորապէս կախուած է երկու հանգամանքներից, մօր առողջութիւնից ու դրութիւնից, և երեխայի աճելութիւնից ու առողջութիւնից: Այժմէ մայրը առողջ է և կաթը առատ, կարելի է ընդունել իրրե ընդհանուր կանոն—ինն կամ տասն ամիս անցնելուց յետոյ երեխային կրտրել ծծից, ըստ որում մինչև այս ժամանակը ատամները արդէն դուրս են ցցվում, որով իմացվում է թէ հարկաւոր է փոփոխութիւն անել կերակուրի մէջ: Տկարակազմ երեխաների ատամները դուրս են ցրցվում սովորականից մի քանի ամիս ուշ, ուստի այդպիսի դիպուածում նշանակած ժամանակը անցնելուց յետոյ ևս կպատկանի շարունակել ծիծ տալը, մինչև որ երեխայի կազմուածքը կերակուրի փոփոխութեան համար միանգամայն պատրաստ լինի: Արբեմն առջևի ատամները սկսում են դուրս ցցուիլ մի տարի անցնելուց յետոյ, իսկ երբեմն երկու տարուց յետոյ ևս, և այս պատահումէ նաև ոչ շատ սկարակազմ երեխաների մէջ: Մի քանի ընտանիքներում անագան ատամնահանութիւնը է մի ժառանգական յատկութիւն: Այս մեծի մասին հարկաւոր է առանձին ուշ դարձնել ոչ թէ ատամների, այլ երեխայի ընդհանուր աճեցողութեան վերայ<sup>1)</sup>: Կուլաւոր թոյլ երեխաների ատամները երբեմն շատ ուշ են դուրս ցցվում, և այս

<sup>1)</sup> Տես յաւելում Դ:

բացայայտ ցոյց է տալիս, թէ նոցա համար մօր կաթը պիտոյ է լինի գլխաւոր միջոց սննդեան, առանց միտ դնելու թէ որքան անփառ անցել է նոցա ծննդեան օրից: Այս միջոցին կարելի է տալ երեխային օրը մի կամ երկու անգամ վառեակի մսի ջուր, և եթէ նկատելի լինի, որ այդ արգանակի ներգործութիւնը լաւ է, այն ժամանակ կարելի է կամաց կամաց երեխային ծծից կտրել:

Այժմէ, ծծից կտրելու սովորական ժամանակը գեռ չեկած, մօր կաթը սակաւանայ և լինի անբաւական երեխայի սննդեան համար, և նորա առողջութիւնը գնալով գնալով վատթարանայ, այսպիսի դիպուածում մօր և երեխայի առողջութիւնը պահպանելու համար, հարկաւոր է կամաց կամաց երեխային ծծից կտրել, յառաջ քան սորա առամների դուրս ցցուիլը: Այդ միջոցին ծծից կտրելը ինքն ըստ ինքեան օգտաւէտ չէ, այլ երկու շարիքներից փոքրագոյնն է:

Թէ շատ անգամ և թէ շատ կանուխ ծծից կտրելը երեխայի համար միօրինակ փնասակար է: Գորա ժամանակը որոշելու համար պիտոյ է միտ դնել ատամնահանութեան և երեխայի ընդհանուր դրութեան, իսկ եթէ սոցա հետ կապակից են ուրիշ առանձին հանգամանքներ, հարկաւոր է դիմել բժշկի և խորհուրդ հարցանել նորանից: Բարւօք է, եթէ ծծից կտրելու ժամանակը կապակից լինի այնպիսի եղանակի հետ, որ երեխային հնար լինի երկար ժամանակ պահել բաց օդի մէջ, ըստ որում սննդառութեան ձեւի այդ փոփոխութիւնը շատ անգամ պատճառում է ջղային գրգռողութիւն, որ ոչ մի բանով այնպէս չէ մեղմանում, որպէս մաքուր պարզ օդով:

Գլխաւոր կանոնը, որ պիտոյ է ունենանք մեր աչքի առաջ ծծից կտրելու ժամանակ, ուրիշ բան չէ, բայց եթէ կամաց կամաց սովորեցնել երեխային ուրիշ կերակուր ընդունելու և սորա համեմատ ծիծ տալը անդադար սակաւացնել: Ընթացող ժամանակները սովորաբար մեկէն ի մէկ կտրումէին ծծից, պատճառելով մեծ փնաս և մօր և երեխային: Բայց այժմ ըստ մեծի մասին նոյն բանը անում են գնալով գնալով (съ постепенностію), և հետեւաբար ոչ մայրը և ոչ երեխան փնաս են կրում: Այրը սկսում են դուրս ցցուիլ առջևի առամները (օրինակի համար—վեցերորդ կամ եօթներորդ ամսում), հարկաւոր է տալ երեխային որպիսի և իցէ թեթեւ կերակուր օրը մի կամ երկու անգամ, իսկ յետոյ այդ կերակուրի քանակութիւնը



անդադար շատացնել, որով և ծիծ ուտելու ցանկութիւնը հետ քղ-  
հեռէ կնուաղի, և հետևաբար ծծից կտրելը, համեմատութեամբ խո-  
սելով, աւելի դիւրին կլինի և մօր կամ երեխայի համար փրասակար  
հետեանքներ բնաւ չունենալ: Արբէք չէ հարկաւոր ծծից կտրել  
այն ժամանակ, երբ երեխան հիւանդ է կամ տանջվում ատամնա-  
հանութեամբ, ըստ որում դա մեծապէս սաստկացնումէ ցնցողականու-  
թիւնքը կամ աղիքների խանգարումը:

Ծծից կտրելուց յետոյ, երեխան պիտոյ է անանուի նոյն իսկ  
ջրային կամ կիսաջրային կերակուրով, որ մինչև այդ ժամանակը տա-  
լիս էին նորան իբրև երկրորդական կերակուր: Մինչև ժանիքների  
(глазные зуды) դուրս ցցուիլը, ոչ մի նկատելի փոփոխութիւն հար-  
կաւոր չէ անել: Երեխայի աճեցողութեան համեմատ կտրելի է ա-  
ւելացնել առաջուայ կերակուրը, բայց ինչ և իցէ, ծծից կտրելուց  
յետոյ, իսկոյն հարկաւոր չէ տալ երեխային չափազանց առատ և  
չափազանց անդարար կերակուր:

Վիճակոր վտանգներից մինը, որին ենթարկվումէ երեխայն  
ծծից կտրելուց յետոյ, այն է որ մայրերը և ծիծմայրերը նորա ա-  
մեն ազազակը սովորաբար ընդունումն իբրև քաղցութեան նշան և  
անմիջապէս աշխատումն բաւականացնել նորան կերակուր տալով:  
Ըստպէս, անդիտութեամբ, նորա սաստկացնումն այն բնական գրգ-  
գողութիւնը, որ պատճառվումէ ծծից կտրելուց: Եւ չափաւոր կերա-  
կրելուց երեխայի ստամոքսը աւերվումէ և թեթեւ գրգողութիւ-  
նը ծանր հիւանդութեան է փոխվում: Մշուշա, մօր համար դա-  
ռն է տեսնել իւր զուակի շարշարանքը, բայց աւելի դառն կլինի  
նորա համար, եթէ իւր սգիտութեան պատճառով այդ անցանելի  
ցաւը ծանր և վտանգաւոր հիւանդութեան փոխուի: Այժմ երեխային  
պատշաճաւոր հոգաբարձութիւն են անում, նա շատ շուտ սովորումէ  
կերակուրի փոփոխութեան և գտնումէ իւր սովորական խաղաղ գը-  
րութիւնը:

Արբ որ երեխայն ծծից կտրելուց յետոյ յայտնումէ չափազանց  
մեծ ախորժակ, ազահութեամբ ընդունումէ կերակուրը, և մանաւանդ  
երբոր յայտնապէս երևումէ, որ այդ կերակուրից փրվումէ նորա  
փորը, այս բանի վերայ պիտոյ է մեծ ուշադրութեամբ նայել: Անդ-  
հանրապէս խօսելով, այդ նշանները ոչ այլ ինչ են, եթէ ոչ հե-

տեանք չափազանց առատ կամ աննդարար կերակուրի, և եթէ գոցա գոյացուցիչ պատճառները չանհետանան, երեխայի աղիքները անհրաժեշտապէս կխանգարուին, առողջութեան մեծ վնաս հասուցանելով<sup>1)</sup>:

Մյս գլուխը դեռ չվերջացրած, ես կարեւոր եմ համարում մայրերին և ծիծ տուողներին նախազգուշացուցանելու համար ասել, թէ ամենայն անգամ ծիծ տալու ժամանակ կամ ծծից կտրելուց յետոյ հիւանդութեան մի շնչին նշան նկատելով հարկաւոր չէ իսկոյն դիմել բժշկական հնարներին: Տարարազգարար, կայ ընդհանուր հակամտութիւն հիւանդութեան վերայ նայելու, իրրև մի արտաքին բանի, դուրսից ներս մտած կազմուածքի մէջ, որտեղից, առողջութիւնը բարելաւացնելու համար, պիտոյ է իրր թէ բոնութեամբ քըչել և թէ սորա զէմ ամենանորը հոգտրարձութիւն երեխային ամենեկն կամ գրեթէ ամենեկն անօգուտ է: Բայց արի տես, որ հիւանդութիւնը իրօք ուրիշ բան չէ, բայց եթէ խոտորումն կազմուածքի կանոնաւոր գործակատարութեան ընթացքից, անկանոն կենցաղաւարութեան պատճառով, որի անհետանալովը շատ անգամ իսպառ անհետանումէ նոյն իսկ հիւանդութիւնը: Սխալ հայեացքը հիւանդութեան վերայ ունի այն հետեանքը, որ, նկատելով հիւանդութեան առաջին նշանը, դիմումն բժշկական հնարների և բնաւ չեն աշխատում դորա յառաջացնող պատճառը անհետացնել: Մյսպէս վարուելով ոչ թէ բարելաւանումէ առողջութիւնը, այլ ընդհակառակն, սաստկանումէ հիւանդութիւնը, և շատ անգամ բժշկական հնարների գործածութիւնը միանգամայն խանգարումէ երեխաների առողջութիւնը, մինչդեռ նոցա առողջութիւնը զօրացնելու համար բնաւ կարօտութիւն չկայ բժշկական զեղերի, այլ հարկաւոր է լաւ և երկայնամիտ հոգտրարձութիւն: Շատ անգամ պատահում է լսել մայրերից թէ «երեխայն հիւանդ է, թէ ջերմ ունի կամ փորի ցաւ, բայց «ես տուի նորան այս և այն», իսկ թէ ինչ պատճառով յառաջացել է այդ հիւանդութիւնը և ինչ է արած այդ պատճառը անհետացնելու համար. ոչ ինչ յիշա-

<sup>1)</sup> Մի բանի նկատուածքները երեխային ծիծ տալու և ծծից կտրելու վերաբերութեամբ քաղած եմ Ֆրան-Մամմերի, Սակսոնական բժշկի շարագրութիւնից: Գերմանիայում շատ տեղեր մեռնով կերակրելը աւելի գործածական է: Բան թէ Մեյլիտյում, և որովհետեւ պ. Ֆրան-Մամմեր միջոց ուներ բազմութիւ գիտաբանութիւնը անելու, ուստի նորա կարծիքները առանձին ուշագրութեան արժանի են (Die ersten Mutterpflichten und die erste kindespflege, Leipzig, 1839).

տակ անգամ կայ դորա մասին: Աչ մի բան այնքան վտանգաւոր չէ  
 երեսխայի առողջութեան համար, որքան վտանգաւոր է բժշկական  
 զեղերի անտեղի գործածութիւնը, — և այն մայրերը կամ ծնամայրերը,  
 որ սովորութիւն ունին, առանց որից և իցէ խորհուրդ հարցնելու,  
 մի շնչին նշան հիւանդութեան նկատելով իսկոյն բժշկական զեղեր  
 գործածել, դժբա շնն ընդունակ իւրեանց պարտաւորութիւնքը կա-  
 տարելու: >

ԳՂՈՒԽՈՒՅՑ VIII.

ՅՍՏԵԿՈՒԹԻՒՆ, ՄԱՐԿՆԵՄԱՐԿԱՆՔԻՆԵՐ ԵՒ ԳՈՒՆ ԵՐԵՒՆԵՆԵՐԻ ԸՆԴՈՒՄԻՆ ԸՆԴՈՒՄԻՆ

Պետափթիթ երեխաների խնամատարութեան մասին բերած ցոյցերս լրացնելու համար, ես այժմ ընթերցողիս ուշը դարձնումեմ յստակութեան, մարմնամարզութեան և երեխայի քունի վերայ:

Տնտեսութիւնը երեխայի առողջութեան համար ունի մեծախորհուրդ նշանակութիւն ոչ թէ միայն այն պատճառով, որ նորա մորթը չափազանց քնքուշ, դուրազաց և դուրեղձական է, այլ և այն պատճառով, որ մորթի միջնորդութեամբ արտաթորում և կամ արտաշնչում կազմուածքից անպէտք և արդէն իւր պաշտօնը լցուցած նիւթ: Արտաշնչութեան մէջ գտանվում են գործարանաւոր (organическія) նիւթեր և զանազան աղեր լուծուած վիճակում: Ասել մորթի մակերեսից արտաթորում իւղային նիւթ, որ պահպանում մորթի փափկութիւնը և առանցքայինութիւնը և մասամբ խափանառիթ է լինում նորա եղծման: Իւղային նիւթի արտաթորութիւնը աւելի առատօրէն է գաղաթի վերայ, թեև տակ և յօգուածակապերի մէջ (въ сочлененіяхъ), նմանապէս և ճակատի ու քթի վերայ, դա է պահպանում մորթը շորութիւնից, դա է պատճառը, որ մորթի վերայ թափած ջուրը գնտակաձեւ մի տեղ է ամփոփվում: Տնտեսականապէս կաշին, որ վրայ վրայ ծալուած է, շփելուց կարող էր սաստիկ գրգռել, բայց այդ իւղային նիւթը արգելք է լինում գորան:

Սակաւ կպատահէ երեխայական հասակում, որ այդ խզույթն նիւթը առաւել մեծ քանակութեամբ արտաժորէ, քան թէ որքան կարեօր է մորթի փափկութիւնը և առանցականութիւնը պահպանելու համար, և երեխայի առողջ ժամանակը զա ոչ մի անախորժ հոս չէ արձակում, եթէ ջանադիր լինին, որ մի անգ միայն շրջաւարուի:

Աթէ կազմուածքից արտաժորութեամբ կամ արտաշնչութեամբ զուրս եկած ապականութիւնքը երկար ժամանակ հազորդութիւն ունենան մորթի հետ, մորթին զրգոտութիւն են պատճառում և, փակելով ծակախրը (шорид), արգելք են լինում արտաժորման շարունակութեան: Էտակարար, ի փեսս առողջութեան, կազմուածքին անպէտք նիւթի արտաժորութիւնը կանգ է առնում, կամ ուրիշ զօր ծարանների միջնորդութեամբ է կատարում, որինակ — աղէքների, երկկամուռքների կամ թօքերի միջնորդութեամբ, որով զոյն այդ գործարանները մեծապէս խանգարում են, ըստ որում զոցա գործունեութեան ընթացքը շարժանց արագանում: Աշրբեմն էլ նաև մեծապէս փնտրում են մարմինը, կարմրուկներով ծածկուելով:

Միտ զնելով մորթի միջնորդութեամբ արտաժորված նիւթի բազազրութեան, մենք պիտոյ է գործ զնենք յետագայ հնարները, որ անարգել կատարուին այն անտեսանելի արտաշնչութիւնքը, որոնց մէջ մեծ քանակութեամբ գտանվում է այդ նիւթից, երկրորդ — որ ցրուի փարատուի մորթի մակերևութի վերայ մնացած կարծր աղային մրուրները: Առաջի վախճանին կարելի է զխրաւ հասանել, գործածելով թեթե և ծակոս (свержестым) զգետաւ, այս պարագայում պիտոյ է զգետար շուտ շուտ փոխել և վերահասու լինել, որ մարմինն շատ մտա շղպչէ ու շեղմէ: Աշրկրորդ վախճանին հասանելու ամենալաւ միջոցն է — շուտ շուտ և անզաղար լուանալ երեխային ջերմ ջրի մէջ: Ամանք խորհուրդ են առիտ սապոնով լուանալ, բայց որովհետև աղային մասուրները լուծվում են ջրի մէջ և ջրով հեշտութեամբ բաժանվում են մորթից, և որովհետև սապոնը խոնուելով խզույթն նիւթերի հետ, հեռացնում մարմնից այդ նիւթը, ուստի իմ կարծիքով սապոն գործածելը այդ զիպուածում ոչ թէ կարեօր բան է, այլ յաճախ փնտաակար է ևս: Սապոնի գործածութիւնը օգտակար և կարեօր է անգամ, երբոր հարկաւորում ենք ի կամ երեսի վերայի կեղտը սրբել, իսկ ամբողջ մարմինը սապոնով լուանալ փնտաակար է, պատճառ որ, բաժանելով մարմնից ի-

զային նիւթը, մորթը շոր, կոշտ, ճաթուտած և առհասարակ առաւել գիւրեղմանելի է անուռ: Այս նշմարեցի այդ հետեւանքները շափահասաների մէջ ևս, որոնք բնա սոփորութեան ամբողջ մարմինը սապոնով լուանումեն: Աչրկար ժամանակ ևս չէի կարողանում բացատրել թէ ինչու համար ոմանք վաննայից (աւաղանից) դուրս ելանելուց յետոյ պաղութիւն զգումեն, բայց վերջապէս երկարաատե գիտողութիւնը ցոյց տուաւ ինձ, որ այդ յատկապէս սապոնի գործածութիւնից է յտանջանում, ինչու որ մորթը պատասպարող իւղային նիւթը բաժանուի մարմնից սապոնի գործածութեամբ: Արեմն մարմինը, առանց սապոնի, մաքուր վերմ ջրով լուանալը նախանձար է համարուելու:

Վաննապահօջ և ամենայարմար եղանակը վերմ ջրով երեխային լուանալու է, անշուշտ, որպէս ասած եմ այդ մասին վեցերորդ գրութումը, բնկզմէլ նորան վաննայի մէջ: Այսպիսի լուացման ժամանակ սորա թաց մարմինը միայն մի վայրկեան—վաննայից հանելու և սրբելու ժամանակամիջոցում— չէ պատասպարած շրջապատող օդի ազդեցութիւնից: Կորսա հակառակ, երբոր լուանումեն երեխային այլապէս, այսինքն երբ նստեցնումեն նորա մի ջրով լի ամանի մէջ, մարմնի մեծ մասը ջրից դուրս պահելով, և ապա ձեռքով կամ սպունգով լուանումեն,— երեխայի քնքուշ մորթը բաւական երկար ժամանակ ենթարկվում և մերթ վերմ ջրի ազդեցութեան և մերթ օդի ազդեցութեան, որ կարող է պատճառել մրտողութիւն, կամ ուրիշ փնասակար հետեւանքներ: Արեմն երեխային վաննայի մէջ լուանալը նախանձար պիտոյ է համարուի, քան թէ ուրիշ կերպ լուանալը: Պահելով նորան վաննայի մէջ, հարկաւոր է զգուշարար կակուղ ըսպունգով սրբել բոլոր մարմինը, մանաւանդ մորթի ծալուածքները և յոգուածակայները, որպէս զի մորթի վերայ բնա կեղտ չմնայ: Վուանալուց յետոյ հարկաւոր է շուտով, բայց զգուշութեամբ, սրբել նորա մարմինը սաք կտաւեղէն լաթով, և ապա ափով չփել ու անյարպող զգեստաւորել նորան:

Վուանալու ամենալու ժամանակը առաւօտն է, իսկոյն զարթելուց յետոյ, իսկ լողացնելու ժամանակը— երեկոն, վերջին անգամը ծիծ տալուց և քնացնելուց առաջ: Այժմ կազմուածքի թուլութեան կամ որ և է ուրիշ պատճառով պահանջվում ատաւօտեան զարթած շրջարթած ծիծ տալ երեխային, այսպիսի պարագայում բարեւոք է լուանալ և զգեստաւորել նորան մի ժամ աւելի անցանելուց յետոյ, որ-

պէս զի այդ միջոցում կարողանայ նա կերածը մարսել: Այդ նախա-  
զգուշութիւնը ծանրակշիւ է մանաւանդ առաջին շարաթմներում յետ  
ծննդեան, որովհետեւ ծանրաբեռնած ստամոքսով լուացուիլը կարող  
է մեծ վնասներ պատճառել:

Արովհետեւ գեւաթթիթ կրեխայք, լինելով շափաղանց դիրքա-  
զգաց, շատ շուտ պաղ են առնում և ամենայն տարասահման յեղա-  
փոխութիւն սաստիկ ազդեցութիւն է ունենում նոցա վերայ, ուստի  
վաննայի ջուրը պիտոյ է ունենայ նոյն բարեխառնութիւնը, որ ունի  
մարմինը, այսինքն 96°—98 Գարնհէյթման ջերմաչափի վերայ<sup>1)</sup>:  
Ծրի բարեխառնութիւնը պիտոյ է բացատրել ջերմաչափով և ոչ թէ  
ձեռքով, ըստ որում այդ վերջին եղանակով գիրքա կարելի սխալուել,  
մի քանի սասիճան աւելի կամ պակաս անելով: Արքան մատաղա-  
հաս է երեխան, այնքան ևս ճշգրտութեամբ պէտք է կատարել այդ  
կանոնը, որ լուանալու ջուրը ունենայ նշանակած բարեխառնութիւ-  
նը, իսկ երբոր երեխայն փոքր ի շատ է կամրանայ և կաճի, այն  
ժամանակ միայն կարելի է առանց երկիւղի սակաւացնել մի քանի  
սասիճան ջրի բարեխառնութիւնը: Կորա պատճառները ևս բուս-  
կանապէս բացատրած եմ վերևում:

Բացի այդ ամենայն ստաւօտ լուանալուց, ամենայն երեկոյ պէտք  
է նստեցնել երեխային ջերմ ջրով վաննայի մէջ: Այս վերջինս ունի  
կրկին օգուտ. հանգրաութիւն է ապիս ջղերին և նպաստաւորում  
արիւնի կանոնաւոր շրջանառութեան, ևս առաւել դա շահաւէտ է  
անհանգիստ և գիրազրզիս երեխաներին, ըստ որում դա խաղաղ  
և ամբացուցիչ քուն է բերում: Սակայն պիտոյ է զգուշանալ կերած  
չկերած երեխային վաննա նստեցնելու և շափաղանց երկար ժամանակ  
վաննայի մէջ պահելու, նաև այդ միջոցին առնը պէտք է բուսկա-  
նին տաք լինի: Ատարելով այս պայմանները, երեկոյական ջերմ ջր-  
րով վաննաները մեծ օգուտ են բերում, մանաւանդ խուլուոր և աը-  
կարակազմ երեխաներին: Իսկ եթէ վաննայի ջուրը շափաղանց ջերմ  
լինի, կամ եթէ երեխային վաննայի մէջ շափաղանց երկար ժամա-  
նակ պահեն, արտաշնչութիւնը կարող է կարգէ դուրս սաստկանալ և  
մրսեցնել երեխային:

Պատահել է ինձ տեսնել, թէ և սակաւարար, որ ունաք երե-  
խայք երկիւղ էին կրում վաննա մանելու, անպիտան խնամարկու-

<sup>1)</sup> Ցեա ծանօթութիւնը 64 էրեսում:

թեան կամ որ և է ուրիշ պատճառով, իսկ ոմանք միանգամայն արհաճութիւն էին ցոյց տալիս դէպի վաննան: Այսպիսի դիպուածում հարկաւոր չէ երեխային վաննայի մէջ բնկղմել, այլ զորա փոխանակ կարելի է սրբել նորա մարմինը տաք ջրի մէջ թրջած կակուղ բուսուկով: Ինչ և իցէ, պիտոյ փայթ տանել երեխայի մարմինը օդի ազդեցութեան շնթարկելու, մինչև որ մարմինը բարբոսվին չորանայ, ապա թէ ոչ կը յառաջանայ բորբոքողական դրութիւն: Այժմ է երբեմն ջերմ վաննան ունենում վատ հետեանքներ, զորա միակ պատճառը այն է, որ բանը անպաշտճ կերպով են կատարում և ամենակարեւոր զգուշութեամբը անգամ զանց են աւնում:

Մի քանի բժիշկ և ծնողք նորածին երեխաների համար անգամ սառն ջրով վաննաները նախադաս են համարում, քան թէ տաք ջրով վաննաները. բայց բանականութիւնը և փորձը զորա հակառակն են հաստատում, թէ սառն ջրով վաննաները միայն ամբակազմ երեխաների համար մնասակար չեն: Առաւօտեան լուանալու ջրի բարեխառնութիւնը աստիճան առ աստիճան կարելի է ցածացնել, բայց միայն ծնած օրից մի քանի ամիս անցանելուց յետոյ, և այն եթէ երեխայն առողջ է ու եղանակը ջերմ: Զազիւ թէ հարկաւորութիւն կայ ասելու, թէ երբ սառն ջրով վաննայի գործածութեան հետ կապակից չէ շափաւոր գործունեութիւն կազմուածքի, այսինքն չէ յառաջանում մարմնի մէջ շափաւոր ներքին ջերմութիւն, պիտոյ է սառն ջրով վաննայի փոխանակ ջերմ ջրով վաննա <sup>1)</sup>:

Առացման ջրի բարեխառնութեան աստիճանը որքան ուղէ լինի, բայց այսու ամենայնիւ ամենայն անգամ լուանալուց յետոյ շահաւէտ է սրբել երեխային կակուղ շոր երեսորիչով կամ ֆլանելով: Այդ բանը ոչ միայն շահաւէտ, այլ և շատ ախորժելի է երեխային: Չկրմ եղանակում, լուանալուց յառաջ, երեխային կարելի է մի քանի վայրկեան տկլոր պահել օդի մէջ, որ Արանկլինը անուանում օդային վաննա, բայց այս մասին միտ դնելու է երեխայի ցանկութեան: Այժմ սա այնքան ամբակազմ է, որ այդպիսի օգեղէն վաննան օգուտ է բերում նորան, այն ժամանակ նա ինքը կցանկանայ այդ բանին, եթէ ոչ, դարձեալ ինքը ջանադիր կլինի ծածկելու իւր

<sup>1)</sup> Այս առարկայի վերայ աւելի մանրամասն տեղեկութիւնք կարելի է ստանալ իմ շարագրութիւնից. «Physiology applied to Health and Education» (Ֆիզիոլոգիա գործադրելի առողջութեան և դաստիարակութեան), գլուխ V.



մարմինը օգի ազդեցութիւնից: Գիւղերում շատ անգամ պատահում է տեսնել, որ գիւղացի երեխայք ամառը ուրախ ուրախ խաղում են միանգամայն սկզբը—*in puris naturalibus*.

Բացի դորանից երեխային պատշաճաւոր յստակութեան մէջ պահելու համար կարեւոր է կեղտոտած կամ թրջած զգեստը փութապէս փոխել և լաւապէս մաքրել մարմնի վերայի կղկղանքից մնացած հետքերը: Շատ փոքր հասակում ապականութիւնքը թէ աղիքներից և թէ միզափամփռից (мочевоёй пугзырь) դուրս թափվում է յաճախաբար և առանց երեխայի կամեցողութեան, սակայն պատշաճաւոր հոգաբարձութիւն անելով երեխային, կարճ միջոցում կարելի է հմտութիւն ստանալ ճանաչելու թէ երբ երեխայն պիտոյ է կղկղանքը դուրս արձակէ, և հետեւաբար այդ զիպուածում իսկոյն կարելի է գործ դնել յստակութեան համար կարեւոր միջոցներ: Այն թէ խոհեմութեամբ և ջանադրութեամբ խնամեն երեխայն, տարակոյս չկայ, որ սա կսովորէ իւր ամենամատաղ հասակի մէջ անգամ կանոնաւորապէս, որոշ ժամում դուրս թափել կղկղանքը:

#### ՄՐՐՄԵՆՄՐՐԶՈՒԹԻՒՆՔ:

Տղայական հասակում առողջութեան համար ամենակարեւոր բաներից մինն է մարմնամարզութիւնքը. այդ հասակումը ևս մարմնամարզութեանց կարօտութիւնը անժխտելի է, որպէս և միւս հասակներում: Այս պարագայի մէջ պիտոյ է գլխաւորապէս միտ դնենք երեխայի կազմուածքի որպիսութեան և այն օրէնքներին, որոնց համեմատ կատարվում են գործարանական պաշտօնները. նաև թոյլ տրվելու չէ նորան իւր ուժից դուրս և ոսկորների ու մկնակների ամրութեան անհամեմատ շարժողութիւնք անելու: Ամենամատաղ հասակում երեխայի համար ուրիշ մարմնամարզութիւնք հարկաւոր չեն, բայց եթէ ձեռքի վերայ բռնած ման ածել սենեակներում, կամ բաց օդի մէջ, հորիզոնական կամ հակած դրութեան մէջ պահելով, և յետ լուացման ձեռքով շփել մարմինը, որ ոչ միայն ախորժ, այլ և շատ շահաւէտ է նորա համար, ըստ որում նպաստաւորում է արիւնի կանոնաւոր շրջանադարձութեան: Խոտազոյն և ծանր մեղադրանքի արժանի են այն ծնողքը, որոնք, իւրեանց անձնական զուարճութեան համար, հարկադրում են զաւակներին այնպիսի շարժողութիւնք անելու, որ միանգամայն անյարմար են նոցա կազմուածքին: Այն հասա-

կում, երբ որ երեխայք զեռ անընդունակ են անկախ մարմնամարդութեան, շատ օգտաւէտ է ձեռքի վերայ մանածել նոցա և բաց օդի կազգուրեցուցիչ ազդեցութեան ենթարկել: Հանկալի է, որ այդ տեսակ մարմնամարդութիւնքը սովորականից աւելի երկարատե լինին: Ի հարկէ այնպիսի եղանակում, որ Մեդիայինն է, պիտոյ է տարուայ ժամանակին համեմատ զգեստաւորել երեխային. իսկ թաց եղանակում, եթէ առանձին կարեւորութիւն չկայ, բնաւ հարկ չէ երեխային տանից դուրս հանել: Աթէ երեխայն ամառը կամ գարնան վերջերին աշխարհ գայ, նորան կարելի է դուրս հանել տասն կամ տասնչորս օր անցնելուց յետոյ, բայց ամենայն անգամ տասնհինգ կամ քսան վայրկենից աւելի կարելի չէ պահել նորան բաց օդի մէջ: Իայց եթէ ձմեռն կամ աշնան վերջերին երեխայն աշխարհ գայ, չորս կամ հինգ շաբաթ անցանելուց յետոյ կարելի է նորան դուրս հանել, և այն լաւ ու բարեխառն եղանակում և կարճ ժամանակուայ, մինչև որ օդին սովորի, իսկ յետոյ այդ զբօսանքի տեղութիւնը կարելի է անդադար երկարացնել:

Տարուայ որ ժամանակը ուզէ լինի, այսու ամենայնիւ հարկաւոր է մեծապէս զգուշանալ օրական սաստիկ լուսի ազդեցութեան ենթարկելու, նա մանաւանդ հարկաւոր է պատսպարել նորան արեգակի բոցավառ ճառագայթներէ: Առաջին շաբաթներում երեխայի աչքերը չափազանց տկար են լինում, և տեսողութիւնը անկատար, ուստի ամառուայ արեգակի բոցավառ ճառագայթներէ, կամ օրական սաստիկ լոյսը անգամ, կարող են աչքերին փնաս պատճառել և նուազեցնել կամ խանգարել տեսողութիւնը:

Մտառուայ տաք եղանակում երեխային որքան երկար պահեն բաց օդի մէջ, այնքան շահաւէտ է. միայն թէ հարկաւոր չէ երեխային դուրս հանել առաւօտները և երեկոները, երբ դուրսը ցուրտ է և ցօղ է իջած: Արեմն անդադար և զգուշութեամբ պիտոյ է երկարացնել զբօսանքի ժամանակը. սկզբում պահել նորան բաց օդի մէջ տասնհինգ կամ քսան րոպէ, իսկ յետոյ օրը մի կամ երկու ժամ, և առաւել անգամ, նայելով առողջութեան օրպիսութեանը: Արեխայք ըստ մեծի մասին ինքեանք մեծ ուրախութիւն են գրտնում բաց օդի մէջ, եթէ միայն բաւականապէս պատսպարուած են ցրտից: Ամառանդ առանձին փոյթ տանելու է ձմեռուայ և գարնան ժամանակը լաւապէս զգեստաւորելու, ըստ որում մատաղահաս երեխայք շատ դիւրաւ պաղ են առնում, և առ հասարակ ցրտի ներ-

գործութիւնը նոցա համար շատ վտանգաւոր է, վասն զի, որպէս արդէն վերեւումը բացատրեցի, նոցա մէջ շատ կամաց է պատրաստվում կենդանական ջերմութիւնը: Ինչ որպիսի բարեյաջող ազդեցութիւն ունի երեխաների վերայ բարեխառն տաք եղանակը, և ընդ հակառակն, որպիսի վնասակար ազդեցութիւն ունի նոցա վերայ ցուրտը, կարելի է իմանալ բարեխառն և ցուրտ կլիմայում մեռանող երեխաների թուի բաղդատութիւնից: Այլ միայն ցուրտ, այլ ձմեռուայ ժամանակ բարեխառն կլիմայում անգամ երեխաների մահը շատ նշանաւոր է: Ղօթօթօր Սիլին-Լյուարդօր քննեց, թէ ինչու երեխայք Պրանսիայում աւելի են մեռանում ձմեռուայ ժամանակ, քան թէ ամառը. հիւսիսային նահանգներում աւելի, քան թէ հարաւային, և մակարերեց, որ այդ տարբերութիւնը յառաջանում է այն պատճառով, որ երեխաներին ծնած օրից մի քանի օր անցանելուց յետոյ տանում են քաղաքապետի մօտ անունները գրելու համար և այսպէս վաղաժամ սոցա ենթարկում են սառն օդի ազդեցութեան: Այդ փաստերից ստացած եզրակացութիւնքը հաստատվում են բժիշկների փորձերով: Ասեմանրաման և բաղմակողմանի քննութիւնքը ապացուցած են, որ իւրաքանչիւր տարի մեռնում են շատ երեխայք թոքերի բորբոքողութիւնից և այլ բորբոքողական հիւանդութիւններից, որոնց պատճառը ուրիշ բան չէ, բայց եթէ աններելի անհոգութիւն պաղ օդի ազդեցութիւնից պատասպարելու և պատշաճապէս հագուեցնելու կողմանէ:

Այսպէս փորձը և մօտիկ ծանօթիւնը երեխայի կազմուածքին ստիպում են մեղ զեռօտիթիթ երեխաներին լաւապէս պահպանել ցուրտի ազդեցութիւնից ձմեռուայ և գարնան ժամանակ: Այժմ է երեխայն առողջ է, ձմեռուայ մէջ ևս լաւ եղանակին կարելի է նորան դուրս հանել տաք շոր հագուցած, բայց ոչ առաջ, եթէ ոչ ծննդից մի ամիս անցանելուց յետոյ, նաև աշխատելու է զրօսանքի համար այնպիսի տեղ ընտրել, ուր քամի չէ փչում և օդը բոլորովին մաքուր է: Ասկ եթէ տեսնուի, որ, չնայելով այդ բոլոր նախազգուշութեանց, երեխայն մրտուէ, կամ թէ օդը անախորժ է թուում նորան, այն ժամանակ հարկաւոր չէ նորան դուրս հանել օդի մէջ, այլ մանածել օգամաբրած (пробѣтренный) սենեակում:

Առաջին շորս կամ հինգ ամիսը, գոնէ, հարկաւոր է զգուշանալ, որ—ձեռքի վերայ ման ածելու ժամանակ—չլինի թէ նորան նստողական դրութեան մէջ պահեն, ըստ որում այդ դրութեան մէջ երե-

խայի գլուխը մի կողմ կախ է ընկնում և հետևաբար դժուարանում է շնչառութիւնը: Այուֆեյանդը յառաջ է բերում մի մահառիթ դիպուած, որ յառաջացած է այդ գրութիւնից: Ուրեմն, եթէ անհնար է լինակէս հաւատ ընծայել աղախնոյն, մայրը ամենայն դժուշութեամբ վերահասու է լինելու, որ աղախինը երեխային ման ածելու ժամանակ չպահէ նորան նստողական գրութեան մէջ: Արեխային ձեռքի վերայ ման ածելու ժամանակ հարկաւոր է փոխ առ փոխ, առաջ մի ձեռքի, յետոյ միւսի վերայ բռնել, այդ միօրինակ շահաւէտ է և երեխային և ման ածողին: Ծննդից շորս կամ հինգ ամիս անցանելուց յետոյ կարելի է պահել երեխային նստողական գրութեան մէջ, բայց իւրաքանչիւր անգամը ոչ աւելի քան թէ մի քանի րոպէ, և այն եթէ երեխային ախորժ է թվում:

Արեխային ձեռքի վերայ վեր վեր ձգելու կամ շարժելու սովորութիւնը արժանի է ծայրագոյն պարսաւանքի: Եւսդ տեսակ շարժողութիւնքը, եթէ չափաւոր և զգուշութեամբ են անում, ախորժ են թվում երեխային և այդ բանը արգելելու պատճառ չկայ, բայց սովորաբար արածները միայն վնաս կարող են պատճառել:

Արբ որ երեխայն բաւականապէս կամրանայ և առանց վնասի կարելի կլինի պահել նորան նստողական գրութեան մէջ, այնժամանակ փոխանակ ձեռքի վերայ ման ածելու, բարւոք է սայլակի մէջ նստեցրած ման ածել, միայն այս պարագայում կարևոր է մեծ ուշ գարձնել երեխայի հագուստի վերայ, որ նա ցուրտից լաւապէս պատսպարուած լինի: Թէև և երեխայական սայլակները շատ անգամ անօգուտ գործածվում են, այսու ամենայնիւ կարելի է հերքել նոցա օգտաւէտութիւնը, թէ որ պատշաճապէս գործածուելու լինին:

Վասնի որ երեխաների ոյժը գնալով գնալով զօրանում է, նոքա սկսում են արտայայտել անկախ շարժողութիւնք անելու ցանկութիւն, իսկ աղախինները, տեսնելով այդ, շատ անգամ ըստ սովորութեան քաջալերում են նոցա այնպիսի շարժողութիւնք անելու, որ դեռ շատ վաղ է նոցա համար: Եւս դիպուածում ամենալաւն է այսպէս գործ տեսնել, նստեցնել երեխային գորգի վերայ, ուր նա կարող լինի ազատօրէն բոլոր իւր անդամներով շարժողութիւնք անել, սողալ, թաւալգլոր խաղալ և այլն, իսկ շարժութիւնք անել տալու համար, կարելի է խաղալիքներ դարսել նորա մօտ այնպիսի հետաւորութեամբ, որ մի շարժողութիւն անելով կարողանայ ձեռքով հաս-

ներ: Արբ որ երեխայն հինգ կամ վեց ամսական կլինի, կամ առ հասարակ երբ նա կը յայտնի իւր կարողութիւնը ինքնուրոյնաբար շարժելու, երկար զգեստը պիտոյ է փոխանակել կարճ զգեստի, որ շարժողութեանց զժուարութիւն չպատճառէ. բայց այսու ամենայնիւ երբ որ պաղ եղանակում նորան տնից դուրս են հանում, ցրտից պատուպարելու համար հարկաւոր է երկար զգեստ հագցնել նորան:

Ըստ իմ ցոյց տուած կերպով երեխայն աւելի շուտ ամրանումէ և աւելի շուտ սովորումէ շրջել, և նորա գնացքը անգամ լինումէ աւելի հաստատուն և վստահ, քան թէ երբ վաղաժամ կանգնացնումն նորան ոտքի վերայ և ձեռքով բռնելով, հարկադրումն ման գալ: Բացի գորանից այդ կերպը գործածելով շատ լաւ զարգանումէ երեխայի կուրճքը, և առ հասարակ ամբողջ կազմուածքը կանոնաւորապէս և բնականապէս զարգանումէ: Աթէ ամենայն պատշաճաւոր զգուշութիւնք գործ են դրած, այդ բանը բնաւ վտանգաւոր չէ երեխային, այլ թէ ծաղրաշարժ է անգամ նայել ինչպէս երեխայն, շարժողութեան ազատութիւն ստանալով, սկսումէ ինքն իւր անձը պահպանել: Արբ որ մայրերը ինքեանք յատկապէս յանձնառու են լինում զաւակները խնամելու, սովորաբար մոլորութեան մէջ են ընկնում, կամենալով լաւ հոգաբարձութիւն անել նոցա, և նոքա այն բանը վտանգաւոր են համարում, որ բնաւ չէ վտանգաւոր: Ընացնելով այն բոլոր մտակալ առարկաները, որոնք կարող են վնասել մանուկին, համարձակաբար կարելի է տալ սորան շարժողութեան ազատութիւն, ըստ որում զժուարին է կարծել, որ նա ինքն իրան վնաս հասուցանէ. նա կտողայ և ոտքի վերայ չի կանգնիլ, մինչև որ ոսկորները ամրանան իրանը հաստատա պահելու չափ, և մկնակները պնդանան ոտքով շարժելու համար:

Ուրեմն հարկ չէ մանուկին վաղաժամ զրգել ման գալու: Ընն ինչ նա կզգայ իւր մէջ բաւականին զօրութիւն և կարողութիւն մրկնակներին կառավարելու, նա ինքը կսկսի ճիզն թափել ոտքի վերայ կանգնելու: Սկսելով ման գալ, մանուկները առաջ ու առաջ սովորաբար արտաքին նեցուկ են բնդուում բռնուելու, աթոռից են բռնում կամ օգնութիւն են խնդրում աղախինից. բայց այս պարագայում վերահասու պէտք է լինել, որ նոքա չսովորեն կարգից դուրս օտարի օգնութեան վերայ յոյս դնել: Ըստ հասարակ, քանի որ մանուկի ոսկորները և մկնակները բաւականաչափ չեն ամրացած, որ և

է արհեստական միջոց, նորան վաղաժամ ման գալ սովորցնելու համար, շատ վատ հետևութիւնք է ունենում: Արբ որ մանուկի թեքի տակից թաշկինակ անցուցած և թաշկինակի երկու ծայրից բռնած ման են ածում նորան, գորանով նեղութիւն են տալիս կուրծքին և արգելումն սորա կանոնաւոր զարգացման. իսկ եթէ ձեռքիցը բռնած ման ածումն, ողնաշարը ծռւումէ և բոլոր իրանը փշացվում: Թէ այս և թէ այն դիպուածում մանուկի ոտքերը կարող են ծռուիլ, և ուրիշի օգնութեան վերայ յոյս դնելու սովորութիւնը նորան անուշադիր է անում դէպ իւր շարժողութիւնքը, որ միօրինակ վեճնասակար է և՛ խելքին և՛ մարմինն: Այս դիպուածում մանուկը չունէ շարժողութեան համար ճիգն թափելու շարժառիթ, որի պակասութիւնը մեծ վնաս է մկնակների զարգացման: Անշուշտ, չունենալով արտաքին նեցուկ, մանուկը քանիցս վայր կգլորվի, մինչև որ սովորէ ման գալ. բայց եթէ— թողնելով նորան իւր կարողութեանը— գործ դնենք նախազգուշութեան պատշաճաւոր միջոցներ, նստեցնենք նորան գորգի կամ կակուղ մարգագետնի վերայ և հեռացնենք բոլոր կարծր առարկաները, որոնցից կարող է նա ստանալ հարուած, այն ժամանակ նորա գետին գլորվիլը բնաւ այնքան վտանգաւոր չէ, որքան վտանգաւոր է թաշկինակների և այլ միջոցների գործադրութիւնը, որպէս զի նա քալած ժամանակը վայր չընկնէ: Բոլոր արհեստական միջոցները— մանուկին շուտով քալել սովորցնելու համար— վտանգաւորագոյն են նաև այն պատճառով, որ շատ անգամ սխալանքի մէջ են ձգում մեզ նորա ուժի մասին և հետևաբար արգելք են լինում նախազգուշութեան կարևոր միջոցները գործ դրվելու: Արկաւոր չէ շափից դուրս հոգս տանել և ամենայն անգամ երկիւզ կրել, երբոր մանուկը մի շնչին շարժողութիւն է անում և երբ որ մի մօտակայ աննշան վտանգ կայ: Անձնական փորձը աւելի լաւ կուսուցանէ նորան փախչել վնասից, քան թէ կարգէ դուրս ջերմեռանդ աղախիմների բարձրաձայն աղաղակները: Առ հասարակ երբ որ մանուկի իւրաքանչիւր քայլափոխը չափում կտրումն, նոքա դառնումն վախկոտ, անվճռողական, և արտայայտումն խելքի ու դատողութեան պակասութիւն: Առաջին, որպէս և յետագայ հասակներում, դաստիարակութիւնը գլխաւորապէս զարգացնելու է անկախ գործունէութեան ընդունակութիւնը, թէ մարմնականի և թէ մտաւորականի, և ուսուցանելու անփորձ մանուկներին բնութեան ցոյցերին համեմատ գործ տեսնելը: Վրանի որ մենք, իբրև մեքենայ, ուրիշների կամքովն ենք գործ

տեսնում և ուրիշի խելքով ենք պահպանվում, երբէք կարողանալու չենք ամբացնել մեր մարմինը և կատարելագործել մեր իմացականութիւնը այնքան, որքան Հնարաւոր է այդ ըստ բնութեան. այս բանը միշտ պիտոյ է մեր աչքի առաջ ունենանք նորածին անգամ մանուկները խնամելու ժամանակը: Չքաւոր դասակարգելու շատ անգամ տեսնում ենք, որ երեք կամ երկու տարեկան երեխայքը պահպանում են իւրեանցից փոքրներին, այդ միջոցին նոքա այնպիսի խելահասութիւն և գիտակցութիւն են արտայայտում, որ դժուար է սպասել երեխայից այդ մանուկ հասակում:

✦ Ո Ւ Ն:

Առաջին կամ առաջի երկու ամսուայ ընթացքում կազմուածքի բոլոր զօրութիւնքը զբաղած են մի միայն մարտդութեամբ, սննդառութեամբ և աճեցողութեամբ. մանուկը ուրիշ ոչ մի բանով չէ պարապած, բայց եթէ քնելու և ուտելու, կարելի է ասել, որ նա գրեթէ ամենեին չէ զարթում: Մանուկից մի քանի շաբաթ անցանելուց յետոյ միայն նա արտայայտում է դիւրագոյութիւն (впечатлительность) և գիտակցութիւն այնքան, որ պարզապէս կարելի է որոշել քունը հսկողութիւնից: Աացայայտ է, որ մանկութեան այդ առաջի շրջանում, խնդիրը քնի վերաբերութեամբ այն չէ, թէ երբ և որքան ժամանակ պիտոյ է քնէ մանուկը, այլ թէ ինչպէս կպատկանի պառկեցնել նորան քնելու և թէ որպիսի պայմաններ կհարկաւորէ լցուցանել այդ միջոցին:

Ախտապէս ամենակարեւոր պայմաններից մինն է քնացնել մանուկին առանձին անկողնի մէջ և ամենայն զգուշութեամբ պատսպարել նորան ցրտից: Աացի սովորական վերմակներից, լաւ է ծածկել նորան փոքրիկ փետրալից անկողնով, ըստ որում ամեն տեսակ վերմակներից այս ամենաթեթեւը և ամենալեւնամացուցիչն է. սակայն այդ տեսակ վերմակը գործածելու ժամանակ, անշուշտ, հարկաւոր է միտ դնել սենեակի բարեխառնութեան:

Երբ որ երեխայն մի տարեկան կլինի, բարւոք է չքնացնել նորան վարագուրի տակ: Աայց որպէս զի լոյսը արգելք չլինի նորան քնելու, հարկաւոր է պատահանը վարագուրով կամ կափարիչով ծածկել: Եթէ երեխայի պառկած սենեակը այնպէս վատ է շինած, որ

նորա մէջ երկու հակառակ կողմից քամի կամ օդ է մտնում սաստիկ հոսանքով, հարկաւոր է պատնէշներ դնել անկողնի շուրջը և այդպէս պատսպարել նորան յառաջիկայ վտանգից: Արդի մանկական կախուն մահիճները արժանի են նախամեծար համարուելու առաջուայ օրորոցներից, և որովհետև այդ մահիճները յատակի վերայ բաւական բարձրութեամբ է կախուած, ուստի հնարաւոր է այդ մօր անկողնի մօտ շինել:

Իսկ թէ որքան ժամանակ տեւելու է նորա քունը, այս մասին եւս վերելում արդէն ասած եմ, թէ առաջին երեք ամիսը նորա բոլոր կեանքը գրեթէ յատկապէս սննդառութեամբ և քնով է անցանում. մանուկը զարթնումէ միայն կշտանալու համար, և ապա զարձեալ քուն է մտնում: Իայց կազմուածի զարգացման համեմատ զօրանումէ գործունէութեան կարեւորութիւնը, և քնի երկարատեւութիւնը անդադար սակաւանումէ: Այս պարագայում մեր բոլոր փոյթը և ջանքը ուղղուելու են այն վախճանին, որ մանուկի բնութիւնը արգելքներու չպատահի:

Պիտոյ է կարելի եղածին չափ աշխատել, որ մանուկը միշտ մի և նոյն ժամերում քնէ և զարթնի, ապա թէ ոչ մայրը և մանուկը ամբողջ գիշեր հանգստութիւն չեն ունենալ, որ առողջութեան համար մեծ վնաս է: Այժմէ մանուկին նպաստաւոր լինին շուտ շուտ զարթելու, գիշեր, ցերեկ և ամենայն անգամ, հէնց որ նա աղաղակ բարձրացնէ, ծիծ տան նորան, առանց քննելու թէ իրօք քաղցած է մանուկը, նա առ ժամանակ կարող է հանգստանալ, բայց այդ բանը, սովորութիւն դառնալով, կիսէ մօր հանգստութիւնը և նոյն իսկ մանուկի առողջութեան ու բարեկեցութեան վնաս կրպատածուէ:

Աշխատելով սովորցնել մանուկին որոշ ժամերում ուտել, քնել և այլ բնական գործողութիւնքը լցուցանել, միշտ ունենալու է աչքի առաջ, որ գիշերը քնելու ամենալաւ ժամանակն է, հեռաւարար կարեւոր է հոգալ, որ և է կերպով արգելք չլինել գիշերը քնելու ցանկութեան: Ատեւելով այս կանոնին, հարկաւոր է սովորցնել մանուկին օրուայ մէջ մի կամ երկու ժամ քնել, ինչու որ օրական քունը քիչ թէ շատ կարեւոր է բոլոր մանուկներին, մինչև նոցա երկու կամ երեք տարեկան հասակը: Պատշաճաւոր խնամք տանելով մանուկներին, կարելի է այնպէս տնօրինել, որ նա յատկապէս կէս



օրին քնէ: Բայց եթէ թոյլ չտան նորան այդ միջոցին քնելու, այն ժամանակ նա քուն կմտնէ երեկոյեան դէմ և գիշերուայ մի մասը արթուն կմնայ: Աէսորուայ քունը ջղային մանուկների վերայ բարեյաջող ազդեցութիւն է գործում, և ցերեկը քնելը շատ անգամ շահաւէտ է լինում նոցա համար ոչ թէ միայն մինչև երկու կամ երեք տարեկան հասակը, այլ աւելի ուշ ևս:

Սնուկի քնած ժամանակը, թէ գիշերով և թէ ցերեկով, պէտք է աշխատել, որ լոյս և աղմուկ չլինի սենեակում: Այսը և քունը, թէ և ասնք որ քունը չեն ընդհատում, այսու ամենայնիւ փնասակար են մանուկին, ըստ որում քունը անհանգիստ են անում, խըլումն նորա կազդուրեցուցիչ ներգործութիւնը, շարժառիթ են լինում ցնցողական յուզմունքների վերադարձին: Հատերը վարվումն այդ կանոնին միանգամայն ներհակ, և կարծումն որ խօսակցութիւնը կամ առ հասարակ ձայնը չեն փնասում մանուկին, եթէ որ դա չէ զարթում. սակայն այդ կարծիքը մոլորութիւն է, և շատ փնասակար մոլորութիւն:

Արբոր մանուկի ստամոքսը կերակուրով լի է և մարսողութիւնը դեռ չէ սկսած, այդ միջոցին քունը լինումէ ծանր և անհանգիստ: Ուստի հարկաւոր չէ մանուկին իսկոյն կերած չկերած պառկեցնել: Խօսք չկայ, առաջին ամիսը մանուկը միշտ կերած չկերած իսկոյն քնումէ, բայց այդ փնասակար չէ նորան, իսկ յետոյ պիտոյ է զգուշանալ այդ մասին:

Թէ՛ որ ժամերին յատկապէս հարկաւոր է պառկեցնել մանուկին — այդ կախ է նորա մարմնակազմութիւնից, առողջութիւնից և խնամարկութեան եղանակից, ուստի այդ մասին չկայ մի ընդհանուր կանոն: Եթէ մանուկի քունը հանգիստ է, իսկ զարթուն ժամանակը նա աշխոյժ և զուարթադէմ է, նաև եթէ մարմնական գործողութիւնքը կատարվումն կանոնաւոր կերպով, ասել է թէ խնամարկութեան կողմից ոչ մի նշանաւոր սխալ չէ եղած, այդպիսի դիպուածում բնաւ հարկաւոր չէ երկիւղ կրել կամ անհանգստանալ, եթէ մանուկը իւր հասակակիցներից մի ժամ աւելի կամ պակաս քնէ: Բայց եթէ երեխայի քունը ծանր և անհանգիստ է, իսկ ինքը արթուն ժամանակը մռայլ ու տխուր է, նաև եթէ մարմնական գործողութիւնքը այդ միջոցին կատարվումն անկանոն կերպով, այդ ցոյց է տալիս թէ խնամարկութեան մէջ մի սխալ է մտել, կամ կերած չկերած իսկոյն պառկեցնելով կամ մի ուրիշ պատճառով:

Խնամածու մայրերին և աղախիններին ոչ մի բան այնքան տըխրութիւն և գլխացաւութիւն չէ պատճառում, որքան մանուկի քրնահատութիւնը (տքնութիւն), ինչու համար և սովորապէս այդպիսի դիպուածներում դիմումեն այլ և այլ միջոցների նորան քնացնելու համար: Վաջառողջ մանուկը սովորական ժամին դիւրաւ և շուտով քուն է մտնում, եթէ պատշաճաւոր խնամք է տարւում նորան և եթէ մի որ և իցէ կերպով չափազանց գրգռողութիւն չէ պատճառած նորա մէջ, բայց երբ որ նկատելի է մանուկի մէջ մի առանձին գրգռողութիւն, ուստի նա կարողանում չէ սովորական ժամին քնել, այդ նշանակում է թէ կայ մի պատճառ, որ կարեւոր է գտնել և ցրել իսկ եթէ չէ երևում մի արտաքին, մանուկի քունը խանգարող, պատճառ, իրաւունք ունինք եզրափակելու թէ նորա առողջութիւնը աւրուել է և նա չէ կարողանում քնել, պատճառ որ հիւանդ է: Ըստպիսի դիպուածներում հարկաւոր է դիմել բժիշկների խորհրդին, երբոր մանուկի առողջութիւնը կվերագառնայ, մի և նոյն ժամանակ սորա հետ միասին կվերագառնայ և քունը: Բայց մայրերը և աղախինները ըստ մեծի մասին պարզապէս չեն հասկանում քնատութեան ճշմարիտ պատճառը և կարծումեն, որ այդ մի հասարակ եղելութիւն, մի անհանգիստ և ձանձրացուցիչ դրութիւն է, և ահա մանուկին քնացնելու համար անյայտ գործածումեն զանազան հնարներ, օրինակի համար, լավտան, քնաբեր հեղանիութեր, մեկոնի շարաբ, ոգի և այլն, առանց ամենևին ուշ դարձնելու թէ այդ հնարները որպիսի ազդեցութիւն ունին մանուկի առողջութեան և առ հասարակ նորա կազմուածքի վերայ. նոքա սովորաբար մի միայն աշխատում են շուտով մանուկին քնացնել, և—միանգամ հասանելով այդ վախճանին— շատ բաւական մնումեն, առանց մտածելու որ նոցա գործ դրած հրնարները պատճառում են ոչ թէ իսկ քուն, այլ արբեցողութիւն կամ անզգայականութիւն: Սորանից յառաջանումէ չափազանց մեծ շարիք. պարլամենտին ներկայացուցած հաշիւները, վերաբերութեամբ հասարակաց առողջութեան որպիսութեանը քաղաքների մէջ, նմանապէս գլխաւոր վարչութեան հաշիւները, Ընդլիայում ծնուածների, պակվողների և վախճանողների մասին, անհակառակելի կերպով վկայումեն, թէ մեծ քանակութեամբ գործածումեն զանազան ամրացուցիչ և հանգարտեցուցիչ բաներ, և թէ այդ բաների անխոհեմ գործածութիւնը յաճախ մահուան պատճառ է լինում: Մանուկի քնած սենեակում բնաւ հարկաւոր չէ ծաղիկներ և այլ հոտաւէտ

բաներ պահել, ըստ որում դա փնասակարարար ներգործումէ մանուկի ջղայի համակարգութեան վերայ:

Թէ քնի համար և թէ առ հասարակ առողջութեան համար մեծապէս շահաւէտ է գիշերազգեստները և մահիճի ձերմակեղէնը ամեն օր մի ժամ դուրսը բաց օդի մէջ կախել: Առ հասարակ խօսելով, յստակ գիշերուայ ձերմակեղէնը կազմուածքի վերայ շատ ախորժ և առողջարար ազդեցութիւն է գործում:

## ԳՂՈՒԽ IX.

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԾԾՄՍՅՐԻ ԵՒ ՆՈՐԱ ԳԵՆՏԵՂԱԿԱՐՈՒԹԻՒՆԸ:

Երբեմն պատահումէ որ մայրը, թէև անպարսաւելի կեանք է վարում, բայց ինքը չէ կարողանում իւր զաւակը սնուցանել, ուստի ստիպուած է լինում իւր պաշտօնը ծծմօր յանձնելու: Ընթմ ես կարդացողիս ուշը կդարձնեմ այն կանոնների վերայ, որ հարկաւոր է աչքի առաջ ունենալ ծծմայր ընտրելու ժամանակ:

Աս արդէն ասացի, որ մօր ու զաւակի կազմուածքի մէջ սերտ կապակցութիւն կայ, հետևաբար մօր կաթը, եթէ նա բոլորովին առողջ է, երեխայի սննդեան համար լաւագոյն կերակուրն է. ուստի երբոր հարկաւորում է նորա փոխանակ մի ծծմայր վարձել, պէտք է աշխատել, որ այդ ծծմայրն որքան կարելի է մօտ նմանութիւն ունենայ մօրը: Իբրև ընդհանուր կանոն, այդ բանը անհերքելի է. բայց կեանքի մէջ շատ անգամ հարկը ստիպումէ զանց առնել այդ կանոնը և երեխան յանձնել այնպիսի ծծմօր, որի կազմուածքը միանգամայն տարբեր է մօր կազմուածքից, ինչու որ անկարելի կամ շատ դժուար է այդպիսի նմանութիւն ունեցող ծծմայր գտնել:

Սովորական զիպուածներում միշտ ցանկալի է, որ մայրը և ծծմայրը մօտաւորապէս մի տարիքի լինին: Իմ խօսքերից հարկաւոր չէ հետևեցնել որ, եթէ մայրը տասնը եօթը կամ տասն և ութը տարեկան կլին է, ուրեմն պէտք է ծծմայրը ևս այդպիսի մատաղահաս կլին լինի,—կամ եթէ մի կլին ծնանումէ զաւակ այն հասակում,

երբ նորա որդեծնութեան կարողութիւնը իւր վերջակէտին է հասել, ծծմայրը ևս այդ հասակի պէտք է լինի: Այդպիսի ծայրայեղ դրութիւնքը բոլորովին աւելորդ են, ցանկալի է միայն, որ եթէ երեխայի մայրը դեռահաս կին է, ծծմայրն էլ դեռահաս լինի, ծեր չլինի, իսկ եթէ երեխայի մայրը հասակը առած է, ծծմայրն էլ հասակը առած լինի: Այդպիսի համապատշաճ դրութիւնը երեխայի և ծծմօր մէջ օգտակար է այնոր համար, որ հասակը ազդեցութիւն ունի կաթի որակութեան վերայ, քառասուն տարեկան կնոջ կաթը այն յատկութիւնը չունի, որ ցանկալի և կարևոր է քսան տարեկան մօրից եղած երեխայի համար: Ամանապէս շատ օգտակար է ընտրել այնպիսի ծծմայր, որ մօտաւորապէս երեխայի մօր հետ մի և նոյն ժամանակ ազատուած լինի յղութիւնից, ըստ որում կաթի որակութիւնը զանազան է լինում, նայելով որքան ժամանակ է անցել մանկածնութիւնից յետոյ: Բացի դորանից ցանկալի է, որ մօր ու ծծմօր կազմուածքի մէջ նմանութիւն լինի, որովհետև փորձը վկայում է, որ կարծահասակ ու պնդակազմ ծծմայրերը ըստ մեծի մասին չեն կարողանում սնուցանել լղար ու բարձրահասակ մայրերից եղած երեխաներին: Այլ վերջապէս ծծմայր ընտրելու ժամանակ առանձին ուշադրութեամբ պէտք է նայել, թէ հարկաւոր է արդեօք խփանառիթ կամ ձեռնառու լինել երեխայի մօրից ստացած այս կամ այն յատկութիւնը լրագործել:

Արկու տեսակ պատճառներից մայրերը անընդունակ են լինում իւրեանց զաւակները կերակրելու: Առաջի տեսակին վերաբերում են այն դիպուածները, երբ միանգամայն առողջ և լաւ կազմուած մայրը անընդունակ է լինում կերակրել իւր զաւակը անակնունելի հիւանդութեան կամ կազմուածքի մի որ և իցէ յանկարծական խանգարման պատճառով, որոնց առաջը կարելի չէ փութապէս բանել: Այդպիսի դիպուածներում ընդհանուր կանոնը գրեթէ առանց մի փոփոխութեան գործադրելի է: Աթէ կարելի լինէր գտնել կին, որ ամենայն բանով նմանէր մօրը, տարակոյս չկայ, որ այդ կինը մօր լաւագոյն փոխանորդը կլինէր: Սիւս տեսակին վերաբերում են աւելի սովորական դիպուածները, երբ մայրը իւր տկար կազմուածքի պատճառով ինքը չէ կարողանում կերակրել իւր զաւակը, այդպիսի պարագայում անպատճառ հարկաւոր է, որ ընտրելի ծծմայրը մօրը նման, այսինքն նոյնպէս նուազ կազմուածքի տէր չլինի, այլ ընդհակառակն դա պէտք է ունենայ այն յատկութիւնքը, որոնք պա-

կատուներն մօրը: Այդ կերպով միայն կարելի է պահպանել երեխայի մօր վատ կազմուածքի վատ հետեանքներին: Փորձը ապացուցել է, որ տկարակազմ մայրերինց ծնուած տկար երեխաների համար շատ և շատ օգտակար է ունենալ առողջ և ուժեղ ծծմայր, մի խօսքով—այնպիսի ծծմայր, որ յատկապէս մօրը պակասած յատկութիւնքը ունենայ: Ասե հարկաւոր չէ մոռանալ, որ ծծմօր կազմութեան ընդհանուր յատկութիւնը շատ զանազանվելու չէ մօր կազմութեան ընդհանուր յատկութիւնինց, ապա թէ ոչ ծծմօր կաթը համապատասխան չի լինիլ երեխայի կազմուածքի պահանջողութեան: Այս արդէն վերը ասացի, որ ինչպէս և իցէ պէտք է աշխատել ընտրելու այնպիսի ծծմայր, որ երեխայի մօր հետ մի և նոյն ժամանակ ազատուած լինի յուլութիւնինց: Այդ պայմանը հարկաւոր է կատարել անպտօճառ, ըստ որում կաթի որակութիւնը հետ զհետէ փոխվումէ, համեմատ ժամանակին, որ անցանում է մանկածնութիւնինց յետոյ: Արբ ծծմօր կաթը մօրը կաթինց հին է, այսինքն երբ որ ծծմայրը մօրինց յառաջ է ծնել, այդ պակասութիւնը չափաւորապէս կարելի է հետացնել, եթէ ծծմայրը մի քանի շաբաթ թեթեւ և գլխաւորապէս ջրալի կերակուր ուտէ. այս պատուէրը անհրաժեշտ հարկաւոր է կատարել այդպիսի դիպուածում: Առ հասարակ ծրմօր կերակուրի վերայ հարկաւոր է մանուար ուշ դարձնել, քանի որ նա շարունակումէ ծիծ տալ երեխային: Ամանապէս հարկաւոր է խնամք տանել, որ ծծմօր սիրտը միշտ ուրախ և հանգիստ լինի:

Իժիշկ Գոն-Մամօնի փոքրիկ պատուական շարագրութեան մէջ, որի մասին ես արդէն յիշած եմ, բերած է մի վերին աստիճանի զարմանալի օրինակ—թէ ծծմօր կիրքերի յուզմունքը որպիսի վրտանգաւոր ազդեցութիւն կարող է ունենալ երեխայի կազմուածքի վերայ: Մի օր մի ատաղձագործ կովումէ իւր տան մէջ կացող զինուորի հետ, զինուորը մերկ սուրը ձեռին յարձակվումէ ատաղձագործ, ծի վերայ: Այս տեսարանը առաջ ու առաջ սարսափ է բերում ատաղձագործի կնոջ վերայ. բայց յետոյ յանկարծ մինչև տեսնես ընկնումէ նա կովողների մէջ, խլումէ զինուորի ձեռինց սուրը, կտոր կտոր փշրում ու շարտումէ: Գրացիները, լսելով դոցա աղաղակը, շուտով գալիս ու վերջացնումեն կռիւր: Ատաղձագործի կինը, դեռ ևս չհանգստացած և նոյն իսկ վրդոված գրութեան մէջ, հանումէ օրորոցին իւր կայտառ և միանգամայն առողջ երեխան, որ հիւան-

դուժիւն ասած բանդ ամենեին չէր իմանում մինչև այդ օրը, և ըսկսումէ ծիծ տալ նորան, բայց միևնոյն ժամանակ տալիս է և վերջին վճիռը երեխայի կեանքին: Մի քանի վայրկեան անցնելուց յետոյ, երեխան իսկոյն դադարումէ ծծել մօր կաթը, սկսումէ անհանգստանալ, նուազիւ և վերջապէս անկենդան ընկնումէ մօր կուրծքի վերայ: Իսկոյն կանչումեն բժիշկ, իսկ երեխային տանում պաակեցնումեն օրորոցի մէջ: Վալիս է բժիշկը, բայց իզուր, ըստ սրում բոլոր ջանքը ու աշխատանքը լինումեն անօգուտ, երեխան արդէն մեռած է լինում, թէև երեսի գծագրութիւնքը ամենեին չեն փոխվում և կարծես թէ մեռած չէ, այլ խաղաղ քուն է լինում:» Այսպիսի իրողութիւնք, անշուշտ, սակաւաթիւ են, բայց տարարադարար խիստ շատ են այն դիպուածները, երբ վատթար կիրքերու յուզմունքը, մանաւանդ ծիծ աալու ժամանակ կամ ծիծ տալուց առաջ, նոյն ներգործութիւնն են ունենում, թէև այդ ներգործութիւնը այնպէս անակնունելի ու սարսափելի կերպով չէ յայտնվում, ուստի դիւրաշարժ կիրքերով մայրերը միշտ իրանց աչքի առաջ պիտի ունենան այն ատղձագործի կնոջ օրգու վիճակը:

Վարձեալ հարկաւոր չէ երեխային վատ բնութեան և այլ բարոյական պակասութեանց տէր ծծմօր յանձնել, պատճառ որ այդպիսի ծծմայրը լաւ չէ պահում երեխան, բարեխղճաբար չէ լցուցանում այն հաւատարմութիւնը, որ ունին նորա վերայ, և որ ամենավատն է, շատ անգամ երեխայի մայրը մեծամեծ գժուարութիւնք է կրում համոզվելու ծծմօր այդպիսի յատկութեան մասին: Այդպիսի ծծմօր ձեռին շատ անգամ երեխայի առողջութիւնը խանգարվումէ, մինչդեռ նայումես ամենեին պատճառ չկայ այդպիսի խանգարման: Ծծմօր բնաւորութիւնը երեխան խնամելու ժամանակ ամենաչնչին բաներու մէջ անգամ երեւումէ և հետեւաբար կարող է այնպիսի մեծ ազդեցութիւն ունենալ երեխայի վերայ, որ նա յայտնապէս տանջվումէ այդ անպիտան խնամատարութիւնից, թէև անցողաբար նայողի աչքին միանգամայն անպարսակելի է երեւում այդ խնամատարութիւնը: Այդպիսի դիպուածներում շատ անգամ անհնարին է մատնացոյց լինել որ և է զանցառութեան վերայ ծծմօր գործողութեան կողմանէ, և միայն մայրը իւր նուրբ զգացողութեամբ և զգուշաւոր դիտողութեամբ կարող է նշմարել, որ ծծմօր խնամատարութիւնը մի առանձին բնաւորութիւն ունի, որով կարելի է մեկնել երեխայի կրած նեղութիւնը: Աչ մի խորհրդով, ոչ մի խրատով կամ

յորդորանքով կարելի չէ անհետացնել ծծմօր այդ պակասութիւնը խնամատարութեան մէջ, միակ հնարը դորա առաջը բռնելու է մեծ զգուշութիւն գործ դնել ծծմայր ընտրելու ժամանակ:

Այժմ մայրը ինքն է ծիծ տալի երեխային, անշուտ, նա կաշխատէ իսկոյն ամենայն հնար գործ դնել, երբ նկատէ, որ իւր կաթը բաւականաւոր չէ երեխայի աննդեան համար. իսկ այն ծծմայրը, որ չունի մի առանձին սէր դէպի երեխան և բնաւ չէ մտածում նորա բարեկեցութեան վերայ, ընդհակառակն է վարվում: Այսիննալով զրկուել իւր սեղից, նա աշխատում է ծածկել իւր կաթի սակաւութիւնը և, որպէս զի չյայտնուի այդ, սկսում է մի ուրիշ կերակուր տալ երեխային: Առատալի չէ, որ այդ աւելորդ կերակուրը երեխայի գրութեան յարմար կլինի, իւր ժամանակին և պատշաճաւոր կերպով կտրուի: Սովորաբար այդ անտեղի կերակուրներից երեխայի ստամոքսը աւերվում և նա ընդունածը չէ կարողանում մարսել, ուստի աղիքներին մէջ յառաջանում են զանազան ցաւեր, որոնց պատճառը միանգամայն անկարելի է գտնել, քանի որ ծծմօր վերայ մեծ հաւատարմութիւն կայ: Ահա ինչու համար հարկաւոր է ծծմայր ընտրելու ժամանակ մեծ ուշ դարձնել նորա բնաւորութեան վերայ, նա մանուանդ այն պատճառով, որ շատ զժուարին բան է ծծմայր փոխելու:

Ծծմայր ընտրելու ժամանակ միշտ հարկաւոր է մի հմուտ և փորձառու բժիշկ հրաւիրել, որ ամենայն ուշագրութեամբ քննէ նորա առողջութիւնը: Բայց իրօք այդ վերին աստիճանի մեծակշիռ և սրբազան պարտաւորութիւնը մեծ անհոգութեամբ է կատարվում: Արբեմն արտաքին նշանները խաբերայական են լինում, և այն կինը, որ միանգամայն առողջ է երևում, իրապէս կարող է անընդունակ լինել ծծմայրութիւն անելու: Ծծմայր ընտրելու ժամանակ հարկաւոր չէ մտանալ, որ կան մի քանի նշաններ, որոնց վերայ հիմնուելով, կարելի է հաստատել թէ անսխալ գուշակել կնոջ ընդունակութիւնը կամ անընդունակութիւնը երեխային ծիծ տալու. օրինակի համար—ծծմայրը պէտք է լաւ առողջութիւն ունենայ, ամուր կազմուածք, այլևայլ ժառանգական պակասութիւններից ազատ, չափաւոր գիտութիւն, մաքուր և պայծառ երես, պարզ և ուրախ նայուածք, սիրուն արտեանունք, թուխ-կարմիր և չմաթառած շրթունքներ, ամուր ու սղիտակ ատամներ, զեղեցկակազմ և չափաւորապէս ամուր ծծեր, բայց այնպիսի ծծեր, որոնց պտուկները զուրս տուած ու



գրգռած շլինին: Սակայն պէտք չէ բաւականանալ միայն այդ նշաններով, հարկաւոր է նաև ուշ դարձնել մարմնի գլխաւոր գործողութեանց վերայ և ստուգապէս իմանալ թէ արդեօք կաթը լաւ է և ազատապէս է բղխում: Դժմօր կաթի որակութիւնը և քանակութիւնը իմանալու համար, բաւական է նայել որպիսի գրութեան մէջ է նորա հարազատ որդու առողջութիւնը: Դացի դորանից կարելի է ասել, որ կաթը լաւ որակութիւն ունի, եթէ սպիտակ ու կապուտագոյն է, փոքր ինչ ջրոտ ու քաղցրահամ,—եթէ բնաւ հոտ չունի ու թանձր թանձր կաթիլներով չէ նստում ջրով ամանի տակը, այլ լուծվում, իւր շորս կողմի ջուրը ամպագոյն ներկելով: Սակայն ծծմօր լաւ յատկութեանց ամենալաւ երաշխաւորը նորա որդին է, եթէ սա առողջ է, ժիր, ուրախ և լաւ խնամած:

Արբ մանուկը կը յանձնեն ծծմօր, ցանկալի է, որ մայրը նոյն օրից սկսած ուշի ուշով վերահասու լինի նորա գործակատարութեան, ստէպ ստէպ մտնէ երեխայի սենեակը և անձամբ տեղեկանայ—ինչպէս արդեօք կատարում է ծծմայրը իւր գործը: Եթէ մայրը տեսնէ, որ ծծմայրը մեծ եռանդով ու յօժարակամ լցուցանում է իւր պարտականութիւնը, սիրով ու ուրախութեամբ ծիծ է տալի երեխային, աշխատում է կարողութեան շափ մաքուր պահել նորան, նաև ինքը խոնարհ և համբերող է, չէ նեղանում, որ երեխան անհանգստացնում է իրան կամ գիշերով քունը խանգարում: միշտ բաւական, ուրախ և գործունեայ է,—եթէ այս բոլորը տեսնէ մայրը, պէտք է շնորհակալ լինի ճակատագրից, որ նա այդպիսի բաղձ է տուել իրան: Դայց եթէ մայրը, յանկարծ մտնելով երեխայի սենեակը, նրկատէ, որ երեխան քաղցած, անհանգիստ ու կեղտոտ է, սենեակը խիստ խոնաւ կամ խիստ տաք, մեջի օդը վատ մաքրած, իսկ ինքը ծծմայրը անտարբեր, ակուր, խոժուադէմ և ծոյլ—այդ բոլորը պարզապէս վկայում է, որ ծծմայրը անընդունակ է իւր պարտականութիւնը պատշաճապէս կատարելու: Համոզուելով որ ծծմայրը լաւ է կատարում իւր պարտականութիւնը, մայրը ևս պարտական է արժանապէս գնահատել նորան, սիրով ու յարգանքով վարուել հետը, և աշխատել որ նա սիրէր իրան և զաւակին: Սակայն որքան էլ որ ծծմայրը լաւ կատարէ իւր գործը, այնու ամենայնիւ մայրը անտարբեր մնալու չէ, միշտ պէտք է վերահասու լինի երեխայի առողջութեանը: Իսկայցի դեռահաս մայրը, փութաջանութեամբ կատարելով մայրական պարտականութիւնը դէպի իւր անդրանիկ զաւակը, աւելի

ընդունակ է երեխայ նայելու, քան թէ այն ծծմայրերը, որոնք, մի քանի երեխայի ծիծ տալով ու մեծացնելով, համարումեն իրանց խիստ փորձուած. (այս ստուգում ես հիմնուելով զանազան գիտողութեանց վերայ) դորա պատճառը այն է, որ ըստ մեծի մասին անկիրթ կանայքը լինումեն ծծմայր, որոնք իրանց տգիտութեամբ շնն կարող փորձերից օգուտ քաղել, և ուստի ինքնահաւան ու նախապաշարած են լինում:

Պաղտնի կամ ակներե անշափաւորութիւնը, թունդ խմիչների կամ այլ գրգռիչ բաների գործածութիւնը զօրութիւնը կազդուրելու և հանգստութիւն ստանալու համար—ահա ամենափնասակար արատութիւններից մինը, որից պիտի զգոյշ կենայ ծծմայրը: Պորտերի, պիվայի կամ էլի (портерь, пиво или эль) չափազանց գործածութիւնը անգամ, որ Մեգլիայում մի սովորական բան է մայրերու և ծծմայրերու մէջ անգամ, մշտական վտանգներու հետ է կապակից: Շատ պատահել է, որ կանայք, կարծելով թէ ծիծ տալու ժամանակ իրանց զօրութիւնը պահպանելու ու կազդուրելու համար անպատճառ հարկաւոր է առանձին միջոցներ գործ դնել, սկսել են թունդ խմիչներ խմել ու հետ զհետէ յայտնի արբեցող են եղել: Այսխատեսս բնութիւնը, ինչպէս ես արդէն ասացի վերը, ինքը հոգացել է այդ կարևորութիւնը, տալով նոցա բնական միջոց իրանց զօրութիւնը կազդուրելու: Ընդ միջոցին ախորժակը և մարտողութեան գործունէութիւնը չափազանց սաստկանումեն, ուստի հարկաւոր է ախորժակի սաստկութեան համեմատ առատ և առողջարար կերակուր, և ոչ թէ գրգռիչ թունդ խմիչներ: Ի հարկէ, զինին և զարեջուրը երբևմն շատ օգտակար են առողջութիւնը ու զօրութիւնը կազդուրելու համար, բայց այն ժամանակ միայն օգտակար են, երբ զոցա գործածութիւնը չափաւորվումէ կազմուածքի պահանջողութեան համեմատ: Մեգլիայի ծծմայրերը սովորութիւն ունին ծիծ տալու ժամանակ զարեջուր խմել մեծ քանակութեամբ, որ շատ փնասակար է ոչ թէ միայն իրանց համար, այլ ևս առաւել նոցա սնուցած երեխայոց համար: Աւել ծծմայրերը իրանց զօրութիւնը կազդուրելու համար ոչ մի խմիչքի կարօտութիւն ունենալու չեն, բայց բժիշկի թոյլ տվութեամբ և չափաւորապէս կարելի է գործ անել:

Բայց մայրերու և ծծմայրերու սովորութիւններից ամենավատթարը և երեխայոց առողջութեան համար ամենավտանգաւորը, անտարակոյս, այն է, որ ոչ միայն ծծմայրերը, այլ և շատ մայրեր

իրանց դատողութեամբ տալիս են երեխաներին զօրեղ և վտանգաւոր գեղեր: Թողնելով անհամար օրինակներ, որ գեղերի անկանոն գործածութիւնից սաստիկ խանգարվումէ երեխայոց առողջութիւնը, — բաւականանում եմ յիշել այս տեղ 1837 և 1838 թուականներին Մնգլիայում և Աւելսում եղած քննութեանց հաշիւը, որ տպած էր հասարակաց տեսանի (пазата общинъ) տնօրէնութեամբ: Այդ հաշիւը ցոյց է տալի, որ թունաւորութեամբ մեռնողների գրեթէ եօթներորդ մասը պատճառուել է այն գեղերից, որ մայրերը և ծծամայրերը անդիտութեամբ, առանց բժիշկների թոյլտվութեան, տուած են եղել երեխաներին, նաև աւելի մեծ շափով, քան թէ որքան կպատկանէր: Այդ հաշիւի մէջ յիշուած է 72 այգպխի դիպուածներ, որոնցից 52-ը ափիոնից և ափիոնից պատրաստած զանազան գեղերի գործածութիւնից է յառաջացած, իսկ 20-ը սխալմամբ երեխաներին ափիոն կամ ափիոնի ոգի (լաուտանում) տալուց, փոխանակ ուրիշ գեղերի:

Բացի այդ դիպուածներից, երբ երեխայք ուղղակի թունաւորվում են գեղերի անկանոն գործածութիւնից, ես կը յիշեմ այս տեղ և այն վտանգաւոր սովորութիւնը, որ այս վերջին ժամանակներս մտել է Մնգլիայի աշխատաւոր դասի մէջ, (զորա մասին ես արդէն խօսած եմ անցողաբար միւս գլուխներում): Մայրերը մշակութեան գնալու ժամանակ տալիս են իրանց երեխաներին ափիոնի ոգի (լաուտանում), որպէս զի իրանց բացակայութեան ժամանակ նոքա հանդարտ տունը նստեն: Ասան բժշկական փորձառութիւնը վկայումէ, որ երեխաներին մեծ մասը մեռնումէ կալումելի <sup>\*)</sup> և բժշկական գեղերի անկանոն գործածութիւնից, որոնք սկզբից ասես թէ օգնումն, բայց իրապէս շատ անգամ այնպէս խանգարումն առողջութիւնը, որ անկարելի է լինում որևիցէ օգնութիւն հասցնել ցաւին: Այս դիտեմ շատ օրինակներ ծայրացեալ անհոգութեան, որով մայրերը և ծծամայրերը, ամենաչնչին հանգամանքներից ստիպուած, երբեմն այնպիսի գեղերի են դիմում, որոնք նոցա վերայ սարսափ կրերէին, եթէ իմանային այդ գեղերի յատկութիւնը և այն բոլոր մեծութիւնը վտանգի, որ յառաջանումէ դոցա անկանոն գործածութիւնից: Աչբ որ երեխայի մէջ յայտնվում են հիւանդութեան

<sup>\*)</sup> կալումելը կամ քաղցր սնդիկ (сладкая ртуть), գործածվում է բժշկականութեան մէջ իբրևս լուծողական (փոր բացանող գեղ) ընդդէմ աստղիկան (веперическая болгизнь կամ сифились) հիւանդութեանց և այլ զանազան ցաւերի:

նշաններ, փոխանակ քննելու թէ այդ հիւանդութիւնը կարելի է առաջ է եկած խնամատարութեան մի որեւիցէ կանոնը սխալ կատարելուց, փոխանակ աշխատելու այդ սխալը ուղղել ու խնամատարութեան բոլոր պայմանները ճշգրտակէս լցուցանելու, շատ մայրեր և ծծմայրեր հարկաւոր են համարում իսկոյն բժշկական զօրեղ զեղեր գործ ածել, և եթէ այդ զեղերը չեն օգնում, նոյն բույէին դարձեալ կրկնումեն տուած բաժինը (приемъ): Այդպիսի արարողութիւնից յետոյ, երբ որ վերջապէս երեխայի դրութիւնը վտանգի մէջ է ընկնում, կանչումեն բժիշկ և ահ ու գողով պատմումեն, որ թէպէտ հիւանդութեան նշանները նկատելուց յետոյ անյապաղ տուել են մեծ բաժին կալումել, լաուատան կամ խաշնդեղ, թէպէտ քանիցս կրկնել են այդ զեղերի բաժինը, բայց այդու ամենայնիւ երեխայի դրութիւնը առաւել վատացել է, և ուստի, եթէ իսկոյն օգնութիւն չհասցնեն, երեխան մահակործան է լինելու: Իսկ բժշկական զընութիւնը յայտնումէ, որ սկզբից երեխայի առողջութիւնը թեթեւ խանգարուած է եղել և անկարօտ այդպիսի ծանր բժշկութեան, բայց հիւանդութիւնը սաստկացել և առողջութիւնը վտանգի մէջ է ընկել զանազան զեղերի անկանոն գործածութիւնից:

Ի հարկէ, լինումեն դիպուածներ, երբ երեխայի մահից կամ վտանգից ազատելու համար հարկաւոր է անյապաղ, առանց այլևայլութեան, բժշկական միջոցների դիմել, բայց այդ պէտք է անպատճառ կատարուի բժիշկների խորհրդով, և ոչ թէ մօր կամ ծծմօր խելքով: Պէտք է ընդունել իբրև ընդհանուր կանոն, որ եթէ օրինաւոր կերպով խնամք տարուի երեխայի վերայ, շատ սակաւ կհարկաւորի բժշկական հնարներ, և եթէ մայրերի ու ծծմայրերի մէջ տարածուած լինէին աւելի ուղիղ տեղեկութիւնք հիւանդութեանց վերայ, նոքա, անշուշտ, այդպիսի շտապով չէին դիմել բժշկական հրնարների, այլ առաւել կհոգային առաջը բռնել և անհետացնել այն պատճառները, որոնցից յառաջանումէ հիւանդութիւնը, և նոցա գործակատարութիւնը աւելի յաջողապէս յառաջ կգնար: Բժշկական հրնարներ գործածելու կարեւորութիւնը գրեթէ միշտ դրականապէս ապացուցանումէ, որ խնամատարութիւնը երեխայի վերայ մի որեւիցէ էական պակասութիւն ունի:

Պատահումէ, որ ծծմօր կամ ըր անպիտանանումէ գաշտանի (МѢСЛЯНО) անակնկալ և յանկարծակի հոսման պատճառով, և երբ որ ծծմայրը հարկաւոր է համարում ծածկել այդ, դժուար է լինում

գանել երեխայի հիանդութեան իսկական պատճառը: Այդպիսի դիպուածներում երբեմն անպատճառ հարկաւոր է փոխել ծծմայրը, — իսկ երբեմն այդ հանգամանքը վնասակար հետեանք կարող չէ ունենալ, մանաւանդ եթէ պահանջողութեան համեմատ աւելորդական կերակուր տան երեխային, և առ հասարակ եթէ ծծմայրը քաջառողջ է և մի առանձին տկարութիւն չունի: Ինչ և իցէ հարկաւոր չէ մոռանալ, որ ծծմօր կաթի որակութիւնը կարող է փոփոխութեան ենթարկվել, ուստի երբ այդ փոփոխութիւնը կպատահի, հարկաւոր է ամենայն միջոց գործ դնել դորա վտանգաւոր հետեանքներու առաջը բռնելու համար: Այժմէ այդպիսի փոփոխութիւն պատահումէ ծիծ տալու առաջի ամիսներում, երեխային կարող է դա սաստիկ վնաս պատճառել, բայց եթէ այդ պատահումէ ծիծ տալու վեցերորդ կամ եօթներորդ ամսում, սովորաբար ոչ մի մեծակշիռ հետեանք չէ ունենում:

## ԳԼՈՒԽ X.

ՄՐՈՒԵՍՏՈՒԿԱՆ ՄՆՈՒՆԴ ԵՐԵՄԵՍԻՒ

Երբ որ մայրը ինքը չէ կարողանում ծիծ տալ իւր զաւակներին, նաև չունի հնար մի ծծմայր վարձելու, բնականաբար նա ստիպուած է լինում արուեստական կերակուրների գիմել:

Նարկուօր չէ մտանալ, որ արուեստական կերակուր կարելի է գործածել մի միայն այն ժամանակ, երբ որ ամենևին հնար չկայ ծծով կերակրելու երեխային: Արբակազմ և նուազ, մանաւանդ վաղաժամ ծնած երեխաները սակաւ կենդանի են մնում այդ տեսակ սնանվելուց, իսկ առողջակազմ երեխաները այդ արուեստական կերակուրը գործածելու միջոցին մեծամեծ խնամքի և փութաջան հոգարարձութեան են կարօտ: Տկարակազմ երեխաներին և՛ս առաւել զժուար է արուեստաբար կերակրելը, ըստ որում նոցա ստամոքսը և աղիքը գրեթէ միշտ գրգռականութեան են ենթակայ: Ալիման և տարուայ ժամանակը ունին նմանապէս մեծ ներգործութիւն այգօրինակ կերակրելու վերայ: Ըստ հասարակ արուեստական սնունդը պահանջումէ մօրից անգուլ և անընդհատ հօգացողութիւն, և միայն այդ պայմանը կատարելով կարելի է յաղթել այն զժուարութեանց, որ կապակից են այդ տեսակ սնուցանելու հետ: Պատահումէ, որ արուեստական կերակուրներով ևս մեծանումեն առողջ և ուժեղ երեխաներ, բայց դորա համար անպատճառ հարկաւոր են լաւ խնամաձութիւն և բարեյաջող պայմաններ: Պօն-Լ'մօն բժիշկը վկայումէ, որ

Հարաւային Վերմանիայումը սովորաբար արուեստական կերակուր են գործածում, երբ որ մայրը անընդունակ է լինում կամ չէ կամենում ինքը կերակրել երեխային, և թէ այդ բանը այն տեղ բաւական յաջողութեամբ է կատարվում, — իսկ Հիւսիսային Վերմանիայումը այդպիսի դիպուածներում ըստ մեծի մասին մօր փոխանակ ծծմայր են վարձում:

Այս տեղ մեզ պիտոյ է քննել երկու խնդիր, որ վերաբերվում են արուեստական սնուցման. 1) օրպիսի կերակուր առաւել յարմարուոր է գործածել մօր կաթի փոխանակ, և 2) ինչպէս պիտոյ է տալ երեխային այդ կերակուրը:

ԱրովՏետե նորածին երեխայի մարտողական գործարանները խիստ թոյլ են, և այն կաթը, որ սահմանած է բնութիւնից նորան կերակրելու համար, խիստ թեթեւ, պարզ և բոլորովին անփաստակար է, մանաւանդ քանի որ դեռ մանկածնութիւնից յետոյ շատ ժամանակ չէ անցկացած, ուստի հաւանական է, որ մօր կաթի փոխանակ այն կերակուրը նախամեծարաբար պիտի սրուի, որը առաւելագէս նմանութիւն ունի այդ կաթին: Այդ հիման վերայ իշակաթը ուրիշ կերակուրների առաջ նախադաս է համարվելու. բայց եթէ անկարելի է ճարել իշակաթ, կովի կամ այծի կաթը ևս գործադրելի է, միայն հարկաւոր է մէջը ջուր խառնել և փոքր ինչ քաղցրացնել: Կղզումը հարկաւոր է կովի կաթի մէջ երեք մասից մի մասը ջուր աւելցնել, իսկ այծի կաթի մէջ առաւել շատ, բայց մի կամ երկու շարաթից յետոյ ջրի քանակութիւնը կարելի գնալով գնալով պահասացնել, — սակայն այդ բանը մեծ կախում ունի անասունի կերած կերակուրից: Առ հասարակ պէտք է իմացած, որ առաւել լաւ է ջուրը չափից շատ յաւելացնել կաթի մէջ, քան թէ պակաս, ինչու որ աւելորդ ջուրը դիւրաւ արտաթորվում է երեկամուռքների միջնորդութեամբ. խօսք չկայ, որ ջրայի կաթը պիտոյ է տալ երեխային այնքան, որքան հարկաւոր է նորա մարմինը սնուցանելու համար<sup>1)</sup>:

Կրեխայի կերակուրը պիտոյ է նոյն վերմութիւնը ունենայ, որ ունի մօր կաթը, այսինքն 96 կամ 98 աստիճան Պարնէէյտի վերմաշափով, որովՏետե այդ աստիճան վերմութիւնը առաւել յարմար է սեղվում երեխայի կազմուածքին: Ծծմայրերը առ հասարակ խիստ փոքր ուշ են դարձնում այս բանի վերայ, թէ և այս

<sup>1)</sup> Տես յաւելում Գ:

պայմանը կատարելը ամենեւին դժուար չէ և եթէ մի փոքրիկ սխալ անգամ պատահի, ջերմաչափի օգնականութեամբ հեշտութեամբ կարելի է դորա առաջը բռնել: Այդ կերակուրը պատրաստուած այսպէս. հարկաւոր է տաքացնել ջուրը և յետոյ լցնել կաթի մէջ, և ոչ թէ ընդհակառակն: Արկու բաղադրեցուցիչ մասն էլ, այսինքն ջուրը և կաթը, պիտոյ է միանգամայն թարմ լինին, և երբէք տաքացրած մնացորդներով հարկաւոր չէ կերակրել երեխային, այլ ամենայն անգամ կերակուրը պիտոյ է պատրաստել նորից: Այս պայմաններէ զանցառութիւնից մեծապէս խանգարուած երեխայի մարտզութիւնը:

Կերակուրը ինչպէս պէտք է տալ երեխային: Այս խնդիրը շատ ծանրակշիռ խնդիր է, որը պատշաճապէս լուծելու համար հարկաւոր է ամենայն ճշգումթեամբ կատարել բնութեան ցոյցերը, այսինքն աշխատել, որ երեխան որքան կարելի է կամաց կամաց ընդունէ կերակուրը: Առաւել լաւ է երեխային մանրածակ արուեստական պտուկներով կերակրել, քան թէ դրգալով: Ամենալաւ արուեստական պտուկները մաշկահոլից (կաուչուկից) են պատրաստուած: Բայց ինչ բանից ուզէ շինած լինի պտուկը, նորա ծակերը պէտք է անպատճառ մանր լինին, ապա թէ ոչ երեխան մի ակնթարթում կձձէ բոլոր կաթը: Պտուկը միշտ պէտք է մաքուր պահել, և ամեն անգամ երեխային կերակուր տալուց յետոյ — լուանալ տաք ջրի մէջ և ապա դնել պաղ ջրի մէջ: Աթէ չկատարուին այս զգուշութիւնքը, պտուկի մէջ մնացած կաթը կթթուի և պտուկը կստանայ թթու հոտ: Առ հասարակ պտուկի անմաքրութիւնից կարող է յառաջանալ սաստիկ խանգարումն մարտզութեան: Ասե հարկաւոր է ուշ դարձնել, որ պտուկի այն մասը, որը երեխան դնում է բերանի մէջ, խիստ երկար չլինի, ապա թէ ոչ ծծելու ժամանակ երեխան կարող է բերանով այնպէս սաստիկ սեղմել, որ խկոյն կղաղարի կաթի հոտումն պտուկի ծակերից:

Արեւմն հարկաւոր է միշտ որքան կարելի է պտուկը մաքուր պահել, իսկ երեխային ամեն անգամ տալ անարատ կաթից նոր պատրաստած կերակուր, և ոչ երբէք տաքացրած մնացորդները, — այս բոլորը յայանի և հասկանալի է նորա համար, ով որ փոքր ի շատէ տեղեակ է, թէ ինչպէս շուտով քացխում կաթը և պտուկը ստանում մի անխորժ թթու հոտ, որը, ժամանակ անցնելուց յետոյ, շատ դժուար է լինում անհետացնել:



Այժմ մեզ մնում է քննել, թե երբ և քանի անգամ օրը և ո՞ր պիսի քանակութեամբ հարկաւոր է տալ երեխային կերակուրը: Այս կողմանէ ևս բնութիւնը ամենալաւ առաջնորդողն է մեզ:

Աս արդէն ասացի, որ երեխան առաջին երկու կամ երեք շաբաթում համարեա թէ միշտ քնած է և զարթում է այնօր համար, որ ծծէ մօր ծիծը և յետոյ դարձեալ քնէ: Աորա ստամոքքը զեռ ևս խիստ փոքր է և անսովոր կերակուրը մարսելու, և ուստի ընդունում է կերակուրը շատ փոքր քանակութեամբ: Արուեստարար անուցանելու ժամանակ պիտոյ է աչքի առաջ ունենալ բնութեան այս ցոյցերը, և եթէ երեխան երբեմն ցոյց է տալիս տհաճութիւն դէպի կերակուրը, այդ անտարակոյս նշանակում է, որ նա այդ միջոցին կարօտ է կերակուրի: Արեւելի է ընդունել իբրև ընդհանուր կանոն, որ առաջի երկու կամ երեք շաբաթում երեխային բաւական է տալ կերակուրը վեցից մինչև ութը ճաշի դրոշմով: Այս տեղ հարկաւոր է մոռանալ, որ արուեստական անունդը խիստ շատ անգամ անյաջող է լինում միայն կերակուրի աւելորդութեան պատճառով: Ծծմայրերի մէջ տարածած է մի բոլորովին սխալ հասկացողութիւն, իբր թէ ջրալի կերակուրը այնքան անզարար է, հետեւաբար կարևոր է համարվում ստէպ ստէպ կերակրել երեխային, որից սորա ստամոքքը ծանրանում է և երեխան դուրս է թափում կերածը— փսխում: Ահա տելով որ ստամոքքը իսկոյն դուրս է թափում կերակուրի աւելորդը, ծծմայրերը միանգամայն սխալ եզրակացութիւն են անում դորանից, կարծելով թէ փսխումն առողջութեան նշան է, ուստի և առաւելապէս յորդորվում են կերակուրի բաժինը շատացնելու ի վնաս երեխային: Եթէ երեխան ուրախ է, հանգիստ է քնում, և աղիքները կանոնաւոր կերպով են կատարում իրանց պաշտօնը, առաջին երեք կամ չորս շաբաթից յետոյ կարելի է փոքր առ փոքր պակասացնել ջրի քանակութիւնը, որ աւելացնում են կաթի մէջ. իսկ չորս կամ հինգ ամիս անցնելուց յետոյ, համարեա թէ առանց ջրի կարելի է տալ կաթը, եթէ միայն երեխան ուրախ և աշխոյժ է և ոչ մի հիւանդութեան նշան չէ բացայայտում: Պիտոյ է ուշ դարձրած, որ երեխայի կերակուրի համար գործածելի կաթը առողջ կովի կաթ լինի, նա մանաւանդ այն պատճառով, որ քաղաքների կովերը, ինչպէս յայտնի է, ըստ մեծի մասին բարակացաւով են վարակված:

Մեր բացատրած արուեստական անունդի եզանակը ամենալաւն է: Եթէ այդ եզանակը, որպէս և իսկ ծծով կերակրելը, յաջողա-

պէս յառաջ է գնում, պիտոյ է առանց այլ և այլ փոփոխութեան շարունակել մինչև առաջևի առամեների դուրս ցցուիլը: Առ հասարակ, թէ բնականաբար և թէ արուեստաբար կերակրելու միջոցին, պիտոյ է ամենայն փութաջանութեամբ զգուշանալ կերակուրը վաղաժամ փոխելուց, քանի որ երեխայի կազմուածքը գեռ այդ չէ պահանջում:

Կան այնպիսի երեխաներ, որոնց կազմուածքին սովորական կերպով ջուր խառնած և քաղցրացրած կովի կաթը անյարմար է, նոցա համար առաւել լաւ է պատրաստել կերակուրը այսպէս.— աւելացնել կաթի մէջ սովորականից շատ ջուր և մի փոքրիկ բաժին էլ ալիւրից լաւ պատրաստած կերակուր: Արբ որ ծնունդից մի կամ երկու ամիս անցնելուց յետոյ սովորական ջրալի կաթը էլ չէ բաւականացնում երեխային, պիտոյ է աւելացնել կաթի մէջ մի փոքրիկ քանակութեամբ որդիսի և իցէ խմորեղէն կերակուր, օրինակ, առուուուա (տես երես 94), սագօ, վարսակի աճար կամ վերջապէս պաքսիմաս: Ահա այսպէս պիտոյ է աւելացնել այդ բաները, վերոյիշած ալիւրեղէն նիւթերից մինը եփել ջրի մէջ և ապա քամել, իսկ քամածը ածել կաթի մէջ: Գրանսխայում առ հասարակ գործածուածն արգանակ ցորենի ալիւրից, որ առաջ ու առաջ բովումն հնոցի մէջ և յետոյ բաւական երկար ժամանակ եփ են տալիս լոկ ջրի կամ կաթ խառնած ջրի մէջ, վերան աւելացնելով շաքար: Այսպէս պատրաստած արգանակը (բուլիոնը) թանձր լինելու չէ: Արբ որ կաթնեղէն կերակուրը կազմուածքին անյարմար է սեպւում և յառաջացնում որովայնալուծութիւն (բանոս) և կտրատումն փորի մէջ (ՐՅՅԵ ԵՆ ՔԻՅՕԵՒՆ), այն ժամանակ, դորա փոխանակ, վերոյիշած կերակուրը կարելի է տալ: Առ հաստակ կաթնեղէն կերակուրը այդ արգանակին փոխանակելով ոչ սակաւ բարւոքումէ մարտողականութիւնը, իսկ կղկղանքը լինումէ առողջագոյն և կանոնաւոր կերպով դուրս է թափում:

Արբեմն, մանաւանդ երբ աղերքների գործակատարութիւնը թոյլ է, բարւոք է կերակրել մանուկին ջրալի գարէ խիւսով, առանց մէջը բան աւելցնելու, կամ աւելցնելով վառեակի կամ կովի մսի թեթեւ արգանակ: Առ հասարակ պէտք է միտքը պահել գլխաւոր կանոնը— թէ մանուկի համար կերակուր ընարելու ժամանակ կարեւոր է միտ գնել և յարմարուիլ նորա կազմուածքի որդիսութեան: Աթէ մանուկը ծանրաշարժ է և թոյլ, շահաւէտ է տալ նորան

վառեակի կամ կոփի մօխ արգանակ, իսկ լղար, աշխոյժ և դիւրագրգիռ մանուկներին առաւել օգտակար է տալ կաթմնեղէն և խմորեղէն կերակուր: Ինչ և իցէ, կերակուրի փոխանակութեան ժամանակ հարկ չէ շուտով եղբակացութիւնք անել և կարծել, թէ այդ փոխանակութիւնը անյաջողակ կերպով է արած, ինչու որ մի կամ երկու օր նկատելի փոփոխութիւն դէպի լաւը մանուկի դրութեան մէջ բնաւ չէ տեսնուում: Հաճախ կերակուրի այդ փոխանակութեան հետեանքը շատ կամաց է յայանձնում, երբեմն մի կամ երկու շաբաթ անցանելուց յետոյ նկատելի է լինում դա, իսկ երբեմն առաւել ուշ ևս:

Մշիշկային (лимфатический) կազմուածքի տէր մանուկներին, որոնց կենսական զորութիւնքը թոյլ ու նուազ են, հարկաւոր է վառեակի, ոչխարի, կամ եգի մօխ արգանակը սովորականից առաջ տալ: Բայց առ հասարակ իրրե կանոն ընդունելու է, որ մեղէն արգանակները կարող են գործադրելի լինել մանուկի աննդեան համար միայն այն ժամանակ, երբ արդէն դուրս են ցցուած նորա առջևի ատամները: Արպէս և իցէ, երբ կաթմնեղէն և խմորեղէն կերակուրները յարմարաւոր չեն մանուկի կազմուածքի որպիսութեան, դոցա փոխանակ պէտք է անպատճառ և անյապաղ տալ վառեակի կամ ոչխարի թեթե արգանակ, աւելցնելով մէջը փոքր ինչ առուօռուտ, բրինձ կամ սպարսիմատ. բայց այդպիսի դիպուածներում, կերակուրը փոխելուց առաջ, միշտ հարկաւոր է ճիշդ իմանալ, թէ արդեօք մարտողութեան խանգարումը ինչից է յառաջացած, կերակուրի անյարմարութիւնից թէ առաւելութիւնից: Շատ անգամ վատ մարտողութեան պատճառը վերագրումեն կերակուրի որակութեան, մինչդեռ դորա միակ պատճառը կերակուրի առաւելութիւնն է կամ մանուկին խիստ ստէպ ստէպ կերակրելը:

Վրխաւոր զանազանութիւնը խմորեղէն կերակուրի և մեղէն արգանակի մէջ այն է, որ այս վերջինս ունի գրգռեցուցիչ ազդեցութիւն կազմուածքի վերայ, իսկ խմորեղէն կերակուրը բնաւ չունի այդպիսի ազդեցութիւն: Բայց որովհետև մանուկի կազմուածքը առ հասարակ ունի բնածին տրամադրութիւն գրգռուելու, ուստի կաթմնեղէն և խմորեղէն կերակուրները սովորական պայմանների մէջ նախամեծար են համարուելու, և մի միայն տարապայման դիպուածներում, երբ որ մանուկի մէջ երևումէ մի առանձին թուլութիւն, շահաւէտ է տալ նորան գրգռեցուցիչ կերակուր: Այդպիսի պարագա-

ներում շահաւէտ է գործածել վառեկի կամ եզան մսի անգամ արգանակ: Սակայն աշարջութեամբ զգուշանալու է, որ մի՛ գուցէ կերակուրը չափազանց սննդարար լինի մանուկի համար և մեծ քանակութեամբ տրուի, և եթէ երեխի մի որ և է կերպով, որ այդ զրգուեցուցիչ կերակուրը փնասակար ազդեցութիւն է գործում մանուկի վերայ, կարեօր է խելոյն դադարել տալ այդ կերակուրը: Ընկելանոցներում և այլ այդ տեսակ հասարակաց բնակարաններում, որոնց մէջ մեծանում և դաստիարակվում են չքաւոր դասակարգի երեխայքը, մեղէն արգանակի գործածութիւնը լինումէ շատ և շատ օգտաւէտ, ըստ որում այդպիսի հասարակաց տներում մեծացողների մեծ մասը լինումէ թոյլ և նուաղ, հետեւարար կարօտ զրգուիչ և կազդուրեցուցիչ կերակուրի: Սակայն սխալ կլինէր սորանից եղբակացութիւն անել, թէ միջին և հարուստ դասակարգի երեխաներին համար ևս օգտաւէտ է կամ, գոնէ, փնասակար չէ մեղէն կերակուրի վաղաժամ գործածութիւնը, թէև դա պատրաստուած լինի խիստ զուրամարսելի կերպով:

Թող որպիսի եզանակով կամին կերակրեն մանուկին — ծծով կամ թէ արուեստական միջոցներով, բայց կարեօր է լաւ խմանալ, թէ քնչպէս կպատկանի վարուել մանուկի հետ սորա կշտանալուց յետոյ: Ըռաջին շաբաթներում զկնի ծննդեան նա յագեցած չյագեցած խելոյն քնումէ, և հարկաւոր չէ գորան խափանառիթ լինել: Իսկ եթէ ծծմայքը սկսի զբաղեցնել մանուկին մի որ և իցէ բանով և այսպէս ցրէ նորա քունը, անտարակոյս, նորա մարտողութիւնը կխանգարուի և հետեւարար կը յառաջանայ ջղային զրգուողութիւն, կտրատումն կամ խանգարումն աղէքների մէջ: Այն հասակում անգամ, որի մէջ մանուկը արդէն դադարումէ քնել խելոյն կերածին պէս, օգտակար է տալ նորան այդ միջոցին կատարեալ հանգստութիւն, որովհետև մարմնամարդութիւնքը խելոյն կերակուրից յետոյ դժուարացնում են մարտողութիւնը, մանաւանդ թուլակազմ երեխաների մէջ:

## ԳԼՈՒԽ XI.

Մ Ն Ն Կ Ն Ն Ո Ց .

Արձանագրելով ընդհանուր տեղեկութիւնքը մանկական կազմուածքի յատկութեանց մասին և նորածին մանուկը խնամելու կանոնները — ծիծ տալու և ծծից կտրելու ժամանակ, այժմ կամենումեմ քննել այն պայմանները, որոնք, փորձի վկայութեամբ, առաւելապէս ներգործումեն կազմուածքի կանոնաւոր զարգացման և մանուկի առողջութեան պահպանութեան վերայ: Այդ պայմաններից մի քանիսը, օրինակ, մեր կեցունի տեղը, մեր շնչած օդի մաքրութիւնը ունին այնպիսի անփոփոխ և որոշակի ազդեցութիւն մանկական կազմուածքի վերայ, որ այդ կողմանէ բնաւ դժուարութիւն չկայ հասարակաց գործադրելի կանոնները պարզաբանելու: Իսկ միւս պայմանները, օրինակ, կերակուրը, հագուստը, մարմնամաքրութիւնքը, ներգործումեն խիստ բազմակերպ, հասակին և մարմնակազմութեան համաձայն, և հետեւաբար դժբա պիտոյ է փոփոխական լինին հանգամանքներին համեմատ, և ահա յատկապէս այդ պայմանների մասին շատ շահաւէտ է դիմել բժիշկների խորհուրդներին: Մանուկի առողջութեան վերայ ազդեցութիւն ունեցող բոլոր ընդհանուր արտաքին պայմանները ևս միաւորեցի մի գլխի մէջ, որ անուանեցի «մանկանոց», բայտ որում այդ պայմանների մեծ մասը մերձաւոր կապակցութիւն ունի սորա հետ:

Մանկանոցի տեղագրութիւնը, բարեկարգութիւնը առաւել մեծ ազդեցութիւն ունին մանուկի առողջութեան վերայ, քան թէ որքան մեծ մասը մայրերից կարծումէ սովորաբար, պատճառ որ այս տեղ, թէ և անտեսանելի կերպով, բայց շարունակաբար կատարվումէ զանազան պայմանների գործունէութեան ընթացքը, ուղղելով մանուկի բոլոր կենսական զօրութիւնքը դէպի լաւը կամ դէպի վատը: Մասկան է մեզ յիշել, որ, Անգլիայի կլիմայական պայմանների պատճառով, միջին և վերին դասակարգի երեխայքը տարուայ մեծ մասը օրը քրսանական ժամ չորս պատի մէջն են անցնում, և ահա ինչու մանկանոցի մէջ օդի մաքրութիւնը մեծախորհուրդ նշանակութիւն ունի մանուկի առողջութեան համար: Այրը վատ տեղագրութեան, կամ բնակարանի անպիտան և անյարմար շինութեան պատճառով, տեղական ազդեցութիւնքը անբարեյաջող են առողջութեան համար, շատ մանուկներ յաճախ զոհ են գնում այդ ազդեցութեանց, և ընդհակառակն, երբ որ այդ ազդեցութիւնքը բարեյաջող են, յաճախ ամենատկար կազմուածքի տէր երեխայքը անգամ քաջառողջ և զօրեղ մեծանումեն: Ատուալարութեան հետազօտութիւնքը քաղաքների և գիւղաքաղաքների մէջ, առողջաբանական պայմանների վերաբերութեամբ, ներկայացնումեն մեզ այդ մասին բազմակերպ և շատ խրատական ապացոյցներ:

Արող են նկատել, թէ ժողովուրդի չքաւոր դասակարգերը, նաև միջին դասակարգի ստորին մասը անգամ, ընտրումեն բնակութեան տեղ և տներ ոչ թէ յարմարակեցութեան, այլ իրանց կարողութեան և անհրաժեշտ կարեորութեան համեմատ: Թէ և այդ ճշմարիտ է, բայց այսու ամենայնիւ այդ դասակարգերին ևս շահաւէտ է իմանալ, թէ տեղական պայմանները և տան շինուածքը ինչ ազդեցութիւն ունին մանուկի առողջութեան վերայ: Մշակների մէջ անգամ հազիւ թէ գտնուի այնպիսի մարդ, որ չունենայ կարողութիւն այդ պայմանների վնասակար ազդեցութեանը դէմ կենալու, և եթէ ոչ իսպառ անհետացնելու, գէթ մեծագոյնը փոքրագոյն շարիքի փոխանակելու: Թէ և զօքա ստիպուած են բնակելու ոչ հետի իւրեանց ամենօրեայ մշակութեան տեղերից, բայց այսու ամենայնիւ այս պարագայում ևս կարելի է որքան և իցէ ընտրողութեամբ գործ տեսնել, բարւոք է իւրեանց բնակութեան համար ընտրել լաւ տեղը, քան թէ վատը, լաւ շինած տունը, քան թէ վատ շինածը: Մայց որպէս զի նոցա ընտրողութիւնը լինի անսխալ և կանոնաւոր, նոցա

հարկաւոր է իմանալ, թէ շրջապատող պայմանները ճրպիսի ազդեցութիւն ունին իրանց և զաւակների առողջութեան վերայ: Աւրեմն առողջութեան վերայ լաւ կամ վատ ազդեցութիւն ունեցող տեղական պայմաններին ծանօթ լինելը գրեթէ նոյնչափ օգտակար է գործաւոր դասակարգին, որչափ և հարուստ դասակարգին:

Տան տեղագրութիւնը.— Լաւ մանկանոցի առաջին և գըլ խաւորագոյն պայմանը այն է, որ նորա միջի օդը միշտ մաքուր և պարզ լինի: Այս վախճանին հասանելու համար պիտոյ է ընտրել բնակութեան համար չոր և բարձրագիւր տեղ, որ խոնաւ տեղերից և առ հասարակ օդը փշացնող բաներից հեռաւոր տարածութեամբ բաժանած և քամիներից պատսպարած լինի: Այժմ հնար կայ ընտրողութիւն անելու, հարկ է միշտ գիւղը նախամեծար համարել, քան թէ քաղաքը: Այսելով վերջին վիճակագրութեան տեղեկութեանց, յայտնապէս երևում է, որ առողջութեան, մանաւանդ երեսանների առողջութեան համար գիւղը մեծ գերադանցութիւն ունի քաղաքի առաջ: Անտառի, խիտ թփերի, լճակների, չորացուցած մարգագետինների, անշարժ կամ սակաւաշարժ ջրերի խիտ մօտ բնաւ հարկաւոր չէ տուն ընտրել, դոքա տեղագրութեան համար վայելուչ զարգարանք կարող են լինել, բայց այսու ամենայնիւ առողջութեան համար ոչ պակաս վնասակար են. դոքա ոչ միայն նպաստաւորումն խոնաւութեան և երբեմն, մանաւանդ գիշերները, փշացնում օդը, այլ և միանգամայն խափանաւիթ են լինում օդամաքրութեան: Այն պատճառներով հարկ չէ շինել տուն կամ գիւղ նեղ հովիտներում և առ հասարակ այնպիսի տեղերում, որոնք շրջապատած են խիտ անտառներով, բարձր բլուրներով կամ լեռներով: Առանց միտ դնելու, թէ ճրպիսի վնասակար ազդեցութիւն ունի լաւ չմաքրած խոնաւ օդը, շատ գերդաստաններ գնումն գիւղ իւրեանց առողջութիւնը բարեւաւացնելու համար, բայց ոչ միայն չեն հասանում այդ վախճանին, այլ ընդհակառակն վնասումն առողջութեան. նոքա շատ անգամ անգիտութեամբ ընտրումն այնպիսի տեղեր, ուր երբէք չէին փոխադրուիլ, եթէ իմանային թէ այդ տեղերը ճրպիսի անբարեյաջող պայմաններ ներկայացնումն առողջութեան համար:

Վմանապէս նոցա համար, որոնք ստիպուած են քաղաքներում բնակվելու, շատ և շատ օգտաւէտ է գիտենալ բնակութեան համար լաւ տեղ ընտրել: Տնտեսական նկատմամբ անգամ, թող տանջանքները և հիւանդութեան միւս հետեւանքները, շահաւէտագոյն է

Թանկ գնով բարեյարմար բնակարան վարձել քաղաքի չոր և դիրաւ օդամաքրելի (провѣтриваемый) մասնում, քան թէ վարձել աժան գնով—ցածագոյն և բազմամարդ մասնում:

Արեխայի համար բնակարան ընտրելու ժամանակ պիտոյ է փոյթ տանել ոչ թէ միայն տեղի չոր և բաց լինելուն, այլ նմանապէս աշխատելու է, որ շրջակայքը ևս լինին գեղեցիկ և ակնահաճոյ: Այն երկիրներում, ուր եղանակը ըստ մեծի մասին ամպամած է և փոփոխական, ցանկալի է, որ տունը դէպի հարաւ նայէ, ասումեմ ցանկալի է ոչ թէ միայն այն պատճառով, որ տունը այդպիսի պայմանի մէջ աւելի տաք, աւելի ուրախ է լինում և օդամաքրութիւնը լաւապէս է կատարվում, այլ և այն պատճառով, որ արեղակի լոյսը ունի շատ լաւ գրգռիչ ներգործութիւն, որ միօրինակ կարևոր է թէ կենդանական և թէ բուսական կեանքի: Արեգական լուսի կենդանարար ներգործութիւնից զուրկ երեխաների երեսը դեղնած և հիւանդոտ է լինում. նոցա արիւնը վատ է թթվում, և հետևարար նոքա ենթակայ են ընդհանուր թուլութեան:

Արեմն գեղեցիկ և ուրախ տեղադրութիւնը այն պայմաններից մինն է, որ, թէ և աննկատելի կերպով, ներգործումէ մանուկի առողջութեան և բնաւորութեան վերայ: Արբէք հարկաւոր չէ մոռանալ, որ կազմուածքը որքան առաւել դիրարդգաց է, այնքան ևս ուշադրութիւն հարկաւոր է դարձնել այն բոլոր, ըստ երևութին աննշան, պայմանների վերայ, որոնց ներգործութեան ենթակայ են նոքա: Տխուր և մոայլ տեղադրութիւնը յառաջացնումէ երեխայի մէջ վրհատութիւն և տխրութիւն, իսկ հոգու այդպիսի դրութիւնը վնասակար ներգործումէ նորա առողջութեան և աճեցողութեան վերայ, ասել է թէ ոչ միայն մարմնական, այլ և հոգեկան առողջութեան համար ցանկալի է, որ երեխայի առաջ ներկայանայ ուրախ և կենդանի տեսարան:

Յատկութիւնը հօղի, որի վերայ շինած է տունը, և ցամաքութիւնը նորա, ոչ սակաւ նշանակութիւն ունին առողջութեան համար: Այս կողմանէ հարկաւոր է առ հասարակ նախամեծար համարել չոր, աւաղուտ կամ գոնէ լաւ ցամաքացուցած հօղը: Այժմ տունը շինած է թաց հօղի վերայ, նորա ստորին յարկը ևս անպատճառ թաց կլինի: Տեղի բարձրութիւնը բնաւ ապացոյց չէ հօղի բաւականաչափ ցամաք լինելուն, պատահումն այնպիսի բարձրագիր տեղեր, որ ոչ պակաս խոնաւ են, քան թէ ցածագիր տեղերը, և



ահա անուշադիր լինելով դէպի այս իրողութիւնը, շատ անգամ սը-  
խալ ընտրողութիւն են անում տան շինութեան համար:

Մանկանոցի ընտրողութիւնը.— Երգէն վերեւում իմ մեկ-  
նած պատճառների զօրութեամբ, մանկանոցի համար սենեակ ընտրելու  
ժամանակ, հարկաւոր է նախադասելի համարել այն, որ դարձած է  
դէպի հարաւային կողմը: Մանկանոցը պետք է լինի լայնարձակ,  
լոյս և տաք և մէջի ոգը դիւրամաքրելի, որ երեխայի առողջութեան  
համար ամենակարևոր բաներից մինն է: Լաւ արիւն պատրաստե-  
լու համար մաքուր օդը կարևորագոյն է անգամ, քան թէ առող-  
ջարար կերակուրը, քանզի սորա ազդեցութիւնը մինչև կեանքի վեր-  
ջը մի վայրկեան ևս չէ դադարում: մենք գիշեր—ցերեկ անընդհատ  
շնչումենք այդ օդը, ուրեմն, նայելով դորա յատկութեան, միշտ և  
հանապազ գտանվումենք դորա լաւ կամ վատ ազդեցութեան տակ:  
Եւս ասածներիցս յետոյ ամենեին զարմանալի չէ, որ այդ անընդ-  
հատ ներգործող պատճառը ունի ահագին ազդեցութիւն առողջու-  
թեան վերայ, ուստի հարկաւոր է փոյթ և ջանք չինայել օդը միշտ  
մաքուր և պարզ պահելու: Աչ մինը վատ ազդեցութիւններից,  
որոնց ենթակայ է երեխայն, այնքան սաստիկ չէ ներգործում սորա  
վերայ, որքան ապականած օդը, և ընդհակառակն, ոչ մի բան չունի  
այնքան բարեխաջող և կենդանացուցիչ ներգործութիւն տկար մա-  
նուկի վերայ, որքան մաքուր և պարզ օդը:

Վաղականած օդը և վատ կերակուրը— ահա երկու գլխաւոր պատ-  
ճառը խուլի, այն ախտի, որից բազմաթիւ երեխայք և պատանիք  
մեծամեծ և անասելի վնասներ են կրում: Եւրաքանչիւրը այս պատ-  
ճառներից ինքն ըստ ինքեան, առանց միւսի գործակցութեան, կարող է  
ծնուցանել խոյլ, բայց երբ նոքա միասին ներգործումեն, ինչպէս որ  
պատահումէ քաղաքների չքաւոր բնակիչների մէջ, այն ժամանակ նոցա  
հետեւանքը լինումէ սաստկագոյն խուլաւոր հիւանդութիւն: Բննայն  
կենդանու մէջ հնարաւոր է խոյլ յառաջացնել, պահելով նորա ապա-  
կանած օդի մէջ և տալով անպիտան կերակուր: Ի՞նչ վատ կերա-  
կուրը ինչ նշանակութիւն ունի խուլական հիւանդութեան համար,  
ես յետոյ առիթ կունենամ այդ մասին խօսելու:

Մանկանոցի օդափոխութիւնը.— Խոյլը, իւր անթիւ և ան-  
համար տեսակներով ու ճիւղերով, անտարակոյս, տիրապետող կոր-  
ստաբեր ախտերից մինն է, որին յատկապէս երեխայքը ենթակայ  
են: Ընդգիայում ամեն տարի միջին հաշուով մեռանումէ 65,000 մարդ

տեսակ տեսակ խուլաւոր ախտերից, սոցա մէջ առնելով թորախտութիւնը ևս: Անդադար պաղ, խոնաւ և ապականած օդ շնչելը մի այնպիսի զօրաւոր պատճառ է խուլական հիւանդութիւն գոյացնելու, որ այդ միջոցին առողջութեան համար միւս պայմանների բարեյաջող լինելը շատ անգամ անզօր է շարիքի առաջը բռնելու: Բօղեւոյկը հաստատումէ, որ անմաքուր օդը գլխաւոր, գրեթէ միակ պատճառն է խուլական հիւանդութեանց. ուր կայ խուլական հիւանդութիւն, այն տեղ օդը ապականած է, և ընդհակառակն. ուր օդը ապականած է, այն տեղ կայ խուլական հիւանդութիւն,— մինը առանց միւսի չէ պատահում: Աս համաձայն եմ պ. Ջէմս Ալէրկի հետ, թէ պ. Բօղեւոյկի մակարերութիւնը փոքր ինչ առաւելացուցած է. սակայն այսու ամենայնիւ այդ մակարերութիւնը ոչ սակաւ խրատական է, ըստ որում հաստատումէ թէ որպիսի փնասակար և վտանգաւոր ազդեցութիւն ունի ապականած մթնոլորտական օդը: Պ. Ջէմս Ալէրկը ասումէ, թէ մարդուս առողջութեան վերայ, քանի որ դեռ նա աճումէ, երկու բան խիստ սաստիկ ներգործումն. կերակուրը— հասակին և մարմնակազմութեան համեմատ, և մաքուր օդը <sup>1)</sup>»: Ուրիշ տեղում նա յայտնումէ իւր կարծիքը, թէ ապականած մթնոլորտական օդը առողջութեան վերայ ունենումէ աւելի վտանգաւոր ազդեցութիւն, քան թէ վատ կերակուրը, և թէ առաջին պատճառից մեռնումն աւելի շատ երեխայք աշխատանոցներում, քան թէ երկրորդից:

Բիշարդ Արմիտեյը (Վուրլին քաղաքից) իւր պատուական փոքրիկ գրքի մէջ, որ տպուեցաւ 1810 թուականին «Խուլական ախտ» վերնագրով, անկասկածելի բացայայտութեամբ ապացուցեց, թէ այնժամանակ խուլական հիւանդութեանց սաստիկ զարգացումը Վուրլինի աշխատանոցի երեխաների մէջ յառաջ էր դալի օդի անմաքրութիւնից: Աս արդէն յիշած եմ այն մասին, թէ Վուրլինեան մանկաբարձական տան մէջ շատ տարուայ ընթացքում ապականած օդի պատճառով մեռնումէին խիստ շատ երեխայք, և թէ— երբ որ վերջապէս պատշաճաւոր օգափոխութեան համար գործ դրին հարկաւոր միջոցներ— այն ժամանակ մահը սկսաւ պակասիլ: Առաջ, ծննդից յետոյ ինն օր չանցած, վեցից մինը մեռնումէր, իսկ յետոյ քսանից միայն մինը, այժմ քառասունից մինը միայն: Թէև գովելով գովումն ներկայիս կատարելագործութիւնքը, սակայն մինչև

<sup>1)</sup> On Consumption and Scrofula, p. 233.

այսօրս օգի անմաքրութիւնը հիւանդութեանց գլխաւոր պատճառներից մինն է: Այս բանի մէջ համոզուելու համար բաւական է համեմատել քաղաքներում մեռնող երեխաների թիւը գիւղաքաղաքներում մեռնողների թուի հետ:

Գօհտօր Գրառը, ընդհանուր վիճակագրական տեղեկութեանց վերայ հիմնուելով, մակարերումէ թէ երեխայք չափազանց շատ մեռնումեն յատկապէս օգի անմաքրութիւնից: «Վշխատութիւնքը քաղաքներում, ասումէ նա, ծանրագոյն չեն, քան թէ գիւղերի մէջ. քաղաքացի աշխատաւորների մեծագոյն մասը գրեթէ միշտ գտնումէ աշխատութեան գործ և ստանումէ աւելի մեծ վարձատրութիւն, քան թէ գիւղերում: Այն քննութիւնքը, որ եղած են աղքատների համար հաստատած մասնաժողովի և պարլամենտական յանձնաժողովների շնորքով, բացայայտ կացուցին թէ գիւղական մշակ գերդաստանը կենդանական կերակուր աւելի սակաւ է գործածում, քան թէ քաղաքականը, իսկ հաց և կարսօֆիլ անհամեմատ շատ: Ուրեմն, քաղաքներում երեխայք առաւել շատ մեռնումեն, քան թէ գիւղերում, այն պատճառով, որ քաղաքի օդը ապականած է <sup>1)</sup>»: Այս եզրակացութեան համաձայն, ուշի ուշով վերաքննելով զանազան տեղերի հաշիւները, պ. Գրառը հաստատումէ, որ մեռնողների թիւը աւելանումէ—աւելանալով բնակիչների թիւը, և թէ, երբ որ բնակիչների թանձրութիւնը միօրինակ է, մեռնողների շատութիւնը կամ քչութիւնը կախ է օդամաքրութիւնից և ապականութիւնքը հեռացնելու համար գործ դրուած հնարներից <sup>2)</sup>»: Բոլոր յետագայ քննութիւնքը վաւերացնումեն այս եզրակացութեանց ճշգրութիւնը, և հետեւաբար ընթերցողս բնաւ զարմանալու չէ, որ ես մինչև այս աստիճան պնդումմմ մաքուր օգի անհրաժեշտ կարեւորութիւնը մանուկի առողջութիւնը պահպանելու համար:

Կարող են նկատել, թէ ես փչացուած մթնոլորտի կորստաբեր ազդեցութիւնը ապացուցանելու համար յառաջ եմ բերում միայն տարասահման զիպուածներ: Այդ նկատողութիւնը բոլորովին ուղիղ է: Այս 'այդպիսի տարասահման զիպուածներ յառաջ եմ բերում այն նպատակով, որ յայտնապէս և առաւել պարզ երևի շարիքը: Սակայն մի և նոյն բանը, թէև ոչ այնքան նկատելի կերպով, պատահումէ

<sup>1)</sup> Եռօրին հաշիւը ընդհանուր բնօրհարատուրայի, երես 50:

<sup>2)</sup> Նոյն, երես 51:

և այն դիպուածներում, երբ օգի անմաքրութիւնը և նորա փաստակար ազգեցութիւնը չեն հասանում այդպիսի բարձրագոյն աստիճանի անգամ: Այժմէ վատ օդ ծծելը Գուրլինեան մանկարարձական տան մէջ ունեցել է այնպիսի փաստակար ազգեցութիւն արիւնի վերայ, որ վեցից մինը ցնցողականութեամբ շարաշար տանջուելով ինը օր շաղրած մեռել է, ապա ուրեմն մանկանոցի օդը ևս, որ փոքր ինչ պակաս է փշացած, նմանօրինակ ներգործումէ արիւնի վերայ և նոյն հետեանքին է բերում, միայն թէ ոչ այնպիսի արագութեամբ: Այս տեղ ահա ինչ զանազանութիւն կայ, առաջին դիպուածում վտանգաւոր հետեանքը յայտնվումէ կարճ միջոցում. իսկ երկրորդում — առողջութիւնը խանգարվումէ կամաց կամաց և փոքր առ փոքր հիմն է դրվում հիւանդութեանց, որոնց վճռողական ելքը յայտնվումէ ժամանակ ինչ անցանելուց յետոյ:

Մանկանոցի համար սենեակը ընտրելու է, անտարակոյս, տան վերին յարկում, դա պէտք է լինի ուրախ, մեծ և լայնարձակ, որպէս զի հնարաւոր լինի լաւապէս օդը մաքրել, շնթարկելով նորա մէջ եղողները սառն կամ խոնաւ օդի հոսանքին: Մայրը պէտք է ճիգն թափէ, որ մանկանոցը համապատասխան լինի մանկական կազմուածքի պահանջողութեանց, պէտք է փութաջան աշխատէ սենեակը յստակ պահելու և հետացնելու այն բոլոր բաները, որ կարող են օդը փշացնել: Այժմէ բնակարանի մեծութիւնը ներումէ, բարւոք է ունենալ երկու առանձին մանկանոց, օրական և ննջելու համար: Արբ որ մանուկը միշտ, գիշեր ու ցերեկ, մի և նոյն սենեակի մէջ է գտանվում, գրեթէ անկարելի է օդը պատշաճապէս մաքրել, բւտ որում, ամառուայ ժամանակ անգամ օգի հոսանքը բաց պատուհանից ներս մանելով կարող է լինել վտանգաւոր, իսկ ձմեռուայ ժամանակ օդը պատշաճապէս մաքրելու համար բոլորովին անկարելի է բանալ պատուհանը երկար ժամանակուայ և շուտ շուտ: Իսկ եթէ լինի երկու մանկանոց — օրական և գիշերը ննջելու համար, այն ժամանակ օդամաքրութիւնը շատ դիւրին է:

Բացատրելով նախընթաց գլխում մանկական կազմուածքի առանձին յատկութիւնքը, ևս ասել էի, թէ մանկական հասակում ջիղերը շատ դիւրազգաց են և թէ բոլոր մանկական հիւանդութեանց մէջ այդ դիւրազգացութիւնը ունի մասն, և հետեաւար ամենայն ինչ, որ նպաստաւորումէ մանուկի ջիղերի դիւրազգացութիւնը մեղմացնելու, մասամբ նպաստաւորումէ և նոցա առողջութեան: Այս պա-

բազայում մաքուր և պարզ օդը ունի վերին աստիճանի բարերար ազդեցութիւն ջրային համակարգութեան վերայ, մաքուր օդն է անփնասակար և ամենազօրաւոր հնարներից մինը, ջիզերը հանգստացնելու և ամրացնելու համար: Ահա ինչու համար գիւղացի երեխայք, որոնք գրեթէ միշտ բաց օդի մէջ են, չեն ենթակայ, կամ սակաւաբար ենթարկւում են այն ջրային գրգռողութեանց, որոնց յաճախ ենթակայ են քաղաքացի երեխայքը և հարուստների զաւակները, որոնք օրուայ մեծ մասը աների մէջ են անցուցանում: Սորա համաձայն, ատամնահանութեան ժամանակ գրգռողութիւնը մեղմացնելու համար, մաքուր օդը դարձնալ ամենաթանկագին հնարներից մինն է:

Մանկանոցը որքան էլ որ բարեյաջող պայմաններ ունենայ, այսու ամենայնիւ առողջութեան համար անհրաժեշտապէս հարկաւոր է ըստ հարկին օդը մաքրել, այսինքն յաճախարար, կամ որ առաւել լաւն է, անընդհատ վերանորոգել ապականած օդը: () զամաքրութիւնը պիտոյ է կատարուի մեծ զգաստութեամբ, մանաւանդ ձմեռը: Յառաջ քան պատուհանների և դռների բանալը օդը նորոգելու համար, հարկաւոր է միւս սենեակը տանել երեխային, և առ հասարակ պէտք է ամենայն կերպ պատսպարել նորան օդի բուռն հոսանքից, փոշուց—տունը աւելելու ժամանակ, խոնաութիւնից—տախտակը լուանալու ժամանակ: Ահա ինչու համար ցանկալի է, որ լինի երկու մանկանոց—մինը օրական, և միւսը գիշերական:

Արբ որ եղանակը ցուրտ է և օդը խոնաւ, հարկ չէ բանալ պատուհանները, մինչև արեգակը փոքր ինչ տաքացնէ եղանակը. իսկ երեխային այդ միջոցում պէտք է տանել միւս սենեակը: Արբ որ երեխայն կզարթի քնից, հարկաւոր է իսկոյն անկողնի կտաւեղէնքը դուրս հանել և օդի մէջ կախել, որպէս զի գիշերուայ ընթացքում նորա մէջ հաւաքուած արտաշնչութիւնքը ցնդի: Սակայն, սակաւաբար այս պարագայի վերայ պատշաճաւոր ուշ են դարձնում:

Մանկանոցի բարեխառնութիւնը (температура). — Ըոպ տանելով մանկանոցի օդի մաքրութեանը, հարկաւոր է ուշ դարձնել նաև օդի բարեխառնութեան վերայ, որ ունի նոյնպէս ծանրակշիռ նշանակութիւն, որովհետև գրեթէ անընդհատաբար ներգործուած առողջութեան վերայ: Առաջին քանի մի շաբաթների ընթացքում մանկանոցի օդի բարեխառնութեան աստիճանը պէտք է լինի 65, իսկ առաջին օրերը 71 աստիճանից ոչ պակաս, եթէ միայն օդը

լուսապէս է մաքրվում, նաև ուշի ուշով զգուշանալու է աւելորդ ջերմութիւնից, և աշխատելու է, որ օդը ճնշած չլինի:

Մշակույթում սովորաբար մանկանոցներում շինումնն բաց բերան հնոցներ (բուխարի), որոնք ոչ միայն տաքացնումն սենեակը, այլ մէջի օդը ևս մաքրումն: Բայց այդ հնոցները ևս ունին մեծամեծ անյարմարութիւնք: Օդի հոսանքը, ընթանալով դէպի հնոցը, պատճառ է լինում զբոսի պաղ օդին պատուհաններից և դռներից ներս մտնելու, և հետևաբար դժուար է լինում երեսային մրտողութիւնից ազատ պահել:

Մանուկի սառն օդի հոսանքից պահպանելու համար, օգտակար է զբան առաջ մեծ պատնէշ կանգնել, մանաւանդ ձմեռ ժամանակ, երբ ամենայն անգամ զուրը բանալիս սենեակի մէջ սառն օդի հոսանք է մտնում, որ միանգամայն բաւական է տկարակազմ երեսային մրտեցնելու. նոյնպիսի հնարներով հարկաւոր է պահպանել մանուկին օդի միմեանց հանդիպող հոսանքներից: Հնոցները պիտոյ է լինին վանդակապատ, որպէս զի որ և է անբաղդութիւն չպատահի: Հնոցի մէջ կրակ վառելու ժամանակ հարկաւոր է երեսային հետու պահել կրակի կուրացուցիչ նշոյլներից և ջերմադին բոցերից. այս մասին մտադիր լինելու է մանաւանդ այն պատճառով, որ երեսայք սովորաբար սիրումն մօտենալ կրակին: Այս բանիս զանցառութիւնը կարող է պատճառել աչքի բորբոքողութիւն ու ցնցողականութիւն անգամ, կարճ ասեմ: հարկաւոր չէ մոռանալ, որ մանկական կազմուածքը այնպէս քրնքուչ է, որ յաճախ նորա վերայ վտանգաւոր ներգործութիւն ունի այն բանը, որ չափահասների համար գրեթէ ոչ մի նշանակութիւն չունի:

Բաւական չէ մանուկին ցրտից պահպանել, պէտք է նոյնպէս պահպանել նորան և աւելորդ ջերմութիւնից: Չափազանց բարձր աստիճան բարեխառնութիւնը ունի թուլացուցիչ ներգործութիւն մանուկի վերայ, զա գրգռումէ ջղական համակարգութիւնը, պատճառելով ջղերի խանգարում և ցնցողականութիւն, որոնց առ հասարակ խիստ տրամադրած են երեսայք, և որոնք շատ անգամ պատճառ են լինում վաղաժամ մահուան: Վմանապէս հարկաւոր չէ մոռանալ և այն վտանգը, որ կապակից է երեսային տաք սենեակից յանկարծ դուրս պաղ օդի մէջ հանելուն հետ, զա է սովորական

պատճառը արդէն տարածուած պնեւմօնիային, այսինքն թոքերի բորբոքողութեան <sup>1)</sup>։

Արովհետեւ կազմուածքը ընդունակ է շրջապատող հանգամանքներին յարմարուելու, ուստի շատ հասկանալի է, որ եթէ մանուկը օրագիշերուայ քսան երեք ժամը անցուցանումէ բարձրաստիճան ատմօսփերայում, սորա համեմատ կարգաւորվումէ նորա մէջ կենդանական ջերմութեան պատրաստութիւնը։ Աւրեմն երբ որ օրագիշերուայ ընթացքում առ մի ժամ միայն տաք ատմօսփերայից տանումեն նորան դուրս պաղ օդի մէջ, այդ պաղ օդի ազդեցութիւնը նորա վերայ առաւել սաստիկ է ներգործում, քան եթէ մինչև այդ ժամանակը նա գտնուած լինէր ոչ բարձր, այլ միջին բարեխառնութեան մէջ։

<sup>1)</sup> Եւս մանկական հիւանդութեան մասին մի քանի մանրամասն տեղեկութիւնք, տես Բ. յաւելումը։

## ԳԼՈՒԽ XII.

ԽՆՍԲԱՍՏՈՒԹԻՒՆ ԵՐԵՒՍԵՒՆ ԵՏՄՆԵՀԱՆՈՒԹԵԱՆ ԺԵՄՄԵԿ:

**Մ**անուկը իւր գոյութեան առաջին ամիսներում ստանումէ կերակուրը մօր ստինքներից. այդ կերակուրը ընդունելու համար հարկաւոր է միայն ծծել, որ և կատարվումէ լեզուի, շրթունքների և թշերի գործակցութեամբ: Այս պատճառով նորածին մանուկի ծնօտքը (ծամելիքները) կարճ ու մանր են և առանց ատամների, իսկ սոցա շարժող մկնակները փոքր և քնքոյշ են:

Իսկայ մի քանի ամսից յետոյ, երբ նա սկսումէ մօտենալ այն դրութեան, որ պահանջումէ աւելի սննդարար կերակուր, դորա համեմատ կազմուածքի մէջ ևս յառաջանումէ փոփոխութիւն: Արեւի ոսկրները անդադար մեծանումն, ծնօտքը դառնումն առաւել երկար և պինդ. ընտերքը ամրանում և սրվումն, բերանի խոռոչը լայնանումէ, ծնօտքը շարժող մկնակները մեծանումն և զօրանում. վերջապէս այս փոփոխութեանց համեմատ մանուկը յայտնումէ ցանկութիւն բերանը դնելու ամենայն բան, որ ձեռքն է ընկնում, և այս նպաստաւորումէ ոսկրների և մկնակների զարգացման, ըստ որում ծամելու ժամանակ դոքա շարժողութեան մէջ են գտանվում:

Սովորաբար եօթներորդ ամսում սկսումէ յառաջանալ կազմուածքի մէջ առաւել նշանաւոր փոփոխութիւն, որ կանդ է առնում միայն երկրորդ տարուայ վերջերում: այդ փոփոխութիւնը է ատամնահանութիւնը: Այդ միջոցին կանոնաւոր խնամատարութիւնը երեխային ունի խիստ մեծ նշանակութիւն սորա առողջութեան և առ հասարակ սորա ապագայ բարեկեցութեան համար:



Մտամնահանութիւնը մի այնպիսի փոփոխութիւն է կազմուածքի մէջ, որը նոյն իսկ կազմուածքի բնութիւնն է պահանջում, ուստի բնականապէս դա բնաւ վտանգաւոր լինելու չէ նորա համար: Առողջ երեխայքը, պատշաճաւոր հոգարարձութեան ներքոյ, առանց մի տանջանք կրելու տանումն այդ փոփոխութեան: Բայց քնքոյշ կազմուածքով երեխաների համար, նաև երբ սոցա հոգարարձութիւնը անպիտան է, առամնահանութիւնը կապակից է մեծամեծ վտանգների հետ և ծնողներին շատ անհանգստութիւնք է պատճառում. ահա այս պատճառով կարևոր է ճիշդ հասկացողութիւն ունենալ այդ մասին:

Ընդհանուր օրէնքով մարմնական գործարանների գրութիւնը ամենայն հասակում համապատասխանումէ հարկաւորութեանց: Այսպէս, քանի որ մանուկը ծծով է կերակրւում, նա չունի ատամներ, բայց որում այդ միջոցին ատամները նորա համար ոչ միայն անօգուտ կլինէին, այլ և կգժուարացնէին ծծելը: Իսկ յետոյ, երբ որ սննդեան համար հարկաւորումն երեխային ոչ միայն ջրային, այլ և պինդ կերակուր, այն ժամանակ երեւումն ատամներ, վասն զի առանց ատամների նա կարող չէ ծամել կերակուրը, կարող չէ կերակուրը շոգունքով կակղեցնել և տալ նորան այնպիսի ձև, որ նա դիւրաւ կլուէր և մարտուէր: Այժմ կազմուածքի թուլութեան կամ հիւանդութեան պատճառով մարմինը խիստ դանդաղ է զարգանում, և երեխայն երկար ժամանակ պինդ կերակուրի կարօտութիւն չէ յայտնում, դորա համեմատ առամնահանութիւնը ընդերկար ձրգվումէ, և ահա սորանով իսկ հաստատուումէ այն կանոնը—թէ երեխային ծծից կարելու և կերակուրը համեմատ փոխելու համար, պարտ է միտ դնել երեխայի գրութեան, և ոչ թէ նայել թէ որքան ամիս է անցած ծնած օրից:

Դամանակաւոր կամ կաթի ատամները—թուով քսան հաս—բաղկանումն 8 կարող կամ առջևի ատամներից, չորս շան կամ կողմնական և ութը արմատական ատամներից: Արքա սկսումն դուրս ցցուիլ վեցերորդ կամ եօթներորդ ամսուայ մէջ, իսկ մեծանումն միանգամայն երրորդ տարուայ առաջին վեց ամսուայ: Աթմներորդ ամսուայ ժամանակաւոր ատամները սկսումն թափել և գոցա փոխանակ կամաց կամաց մեծանումն մշտական ատամներ, որոնցից վերջին չորսը դուրս են ցցւում քսանից մինչև քսան հինգ տարուայ միջոցում, ինչու համար և կոչւումն իմաստութեան ատամներ:

Մշտական ատամներ — երեսուն և երկու, ամեն մէկ ծնօտի մէջ տասներկեցական, այն է ութը առջևի կամ կտրոզ ատամներ, չորս շան կամ կողմնական և քսան արմատական:

Թէպէտ առաջին ատամը դուրս է ցցվում վեց եօթն ամիս անցանելուց յետոյ, բայց ատամների բողբոջները գոյանում են ծնօտների մէջ շատ առաջ ծննդից: Այժմ անտեղի է ընդարձակօրէն խօսել այդ մասին, ևս բաւականանում յայտնել, որ մի քանի կաթի ատամները արդէն երեխայի ծննդեան ժամանակ բաւականապէս ոսկրացած են, և թէ ատամնահանութիւնը կատարվում է որքան և է որոշ կարգով:

Յառաջագոյն սովորաբար սկսում են դուրս ցցուիլ ստորին ծընօտի երկու միջին կտրոզները, և ապա շուտով դոցա հանդիպակաց վերին ծնօտի կտրոզները: Ճամանակ ինչ անցանելուց յետոյ երեսուսուն երկու ծնօտների կողմնական կտրոզները, իսկ յետոյ զարձեալ մի սակաւ ժամանակ անցանելուց — սովորաբար տասներհինգ կամ տասներկեց ամիս—դուրս են ցցվում նախ առջևի արմատականները, և ապա շան ատամները, իսկ երբեմն ընդհակառակն: Վտանից մինչև երեսուն ամիսը երեսուսուն աղօրիքը կամ վերջին ծայրի ատամները, և ահա այսպէս լրանում է կաթի ատամների թիւը:

Ահա հասարակ ատամների բուսնիք ունի երկու աստիճան. առաջինը, երբ ատամնակապիճը փքվում է և ճնշում իւր չորս կողմը, իսկ երկրորդը—երբ ատամը ծակում է լինտերքը: Արկրորդ աստիճանը միշտ անյայտազ չէ հետևում առաջի աստիճանին, այլ ընդհակառակն, երբեմն սոցա երկուսի մէջ անցանում է բաւականին երկար ժամանակ, և այդ միջոցին երեխան բոլորովին հանգիստ է մնում: Հաճախ պատահում է, որ երեխան զգում է ատամների դուրս ցցուելու բոլոր նշանները, մինչդեռ տակաւին ոչ մի ատամ չէ երևում, իսկ մի քանի օր, մի շաբաթ և մինչև անգամ երկու շաբաթ անցանելուց յետոյ, ատամը դուրս է գալի առանց որ և է նեղութիւն պատճառելու երեխային:

«Ատամների դուրս ցցուելու առաջին աստիճանը ծնուցանում էրբանի մէջ զրգիս և մասամբ խանգարում է կազմուածքը: Թուրք սկսում է արտաթորել մեծ քանակութեամբ, երեխան լինում է անհանգիստ, մերթ ժպտում, մերթ լաց է լինում: Եւս շուտ արտասուները և ժպիտը հետևում են մեկ մեկու. աչքերը և թշերը կարմրում են, ախորժակը անկանոն է, նաև սաստիկ ծարաւութիւն է

զգում: Վրուներ անհանգիստ է, ընդհատվումէ երազներով, կարճ ասեմ—ամբողջ կազմուածքը հիւանդոտ գրութեան մէջ է գտանվում: Լինտերքի մէջ յառաջանումէ ջերմութիւն. սքրա սկսումեն փքուիլ և պատճառումեն ցաւ: Ինչ որ ձեռքն է ընկնում, բոլորը բերանն է դնում, և ինչպէս երևումէ, լինտերքի շփելը մեղմացնումէ ցաւի սաստկութիւնը: Ըղիքները այդ միջոցին սովորականից աւելի բացուած են լինում. ատամների դուրս ցցուելու ժամանակ շահաւէտ է անգամ, եթէ աղիքների մէջ մի թեթեւ ցաւ լինի, որի հետ բնաւ չէ կապակից որ և է խանգարումն կազմուածքի մէջ: Բաւական երկար ժամանակ անցանելուց յետոյ այդ բոլոր նշանները սկսումեն հետ զհետէ նուազիլ, և այնուհետեւ մնումէ երեսային մի կարճ ժամանակ կատարեալ հանգստութեան»:

«Ըսնուհետեւ շուտով սկսումէ ատամների դուրս ցցուելու երկրորդ աստիճանը: Ըստմ նա ինչ որ ձեռքն է ընկնում, իսկոյն բերանը չէ դնում, այլ ընդհակառակն ամենայն հպարտութիւն լնտերքին երկիւղով մերժումէ, և եթէ անզգուշութեամբ դպչի նորան մի բանով, իսկոյն լաց է լինում: Լնտերքի և բերանի մէջ յառաջանումէ ջերմութիւն. լնտերքի վերայ գոյանումէ մոյգ կամ բաց-կարմիր ուռեցք, որը, եթէ ճնշենք, ցաւ է պատճառում: Աշրեսի գոյնը փոփոխվումէ, թշերը յաճախ կարմրումեն, երեսան անհանգիստ և անբաւական է. մեկ ցանկանումէ պառկել, բայց հենց որ պառկեցնումեն, նա դարձեալ ցանկանումէ բռնած լինել ձեռքի վերայ — մեկ ծիծ խնդրումէ, և յետոյ ինքը իսկոյն երեսը դարձնումէ ծծից: Ըմեն բանի ձեռք է երկարացնում, բայց ոչ մինի վերայ իւր ուշիք չէ դադարեցնում: զանազան դրզմունքները ընդհատվելով հետևումեն մեկ մեկու, և նա ոչ մի բանի մէջ հանգստութիւն չէ գտնում: Ըստ բոլորը շատ անգամ կապակից են ջերմաստական և աղիքային ցաւերի հետ: Բայց հենց որ ատամները դուրս են ցցվում, իսկոյն այդ նշանները անհետանումեն<sup>1)</sup>»: Սակայն շատ երեսանների ատամները առանց այդպիսի դժուարութեանց դուրս են ցցվում, մանաւանդ շատ հեշտութեամբ դուրս են ցցվում առողջակազմ և լաւ խնամած երեսանների ատամները:

Կարողները սովորաբար առաւել դիւրաւ դուրս են ցցվում, քան թէ կողմնական ատամները. յառաջագոյն, այս վերջինները դեռ դուրս

<sup>1)</sup> Von Ammon, երես 121.

չցցուած, կազմուածքը բաւականապէս խանգարվումէ, թէպէտ, միտ դնելով այդ ատամների սաստիկ սրութեան, պէտք էր կարծել, որ դոցա զուրս ցցուիլը աւելի զիւրին է:

Ատամնահանութիւնը, ինչպէս ես արդէն վերը նկատեցի, մի բնական փոփոխութիւն է կազմուածքի մէջ և այս պատճառով ինքն ըստ ինքեան բնաւ վտանգաւոր չէ, բայց, քանի որ կատարվումէ այդ փոփոխութիւնը, ամենայն ինչ, որ անբարեխաղէ կազմուածքի համար, ներգործումէ նորա վերայ սովորականից ազդողազոյն. այդ ժամանակ պատահած ամեն հիւանդութիւնը զիւրաւ սաստկանումէ և կապակից է մեծամեծ վտանգների հետ: Իրական պատճառը կազմուածքի խանգարման ատամնահանութեան ժամանակ, անշուշտ, գրգռականութեան սաստկանայն է. ուրեմն այդպիսի անհանգիստ և վտանգաւոր անգամ ժամանակում երեսայի առողջութիւնը լաւապէս պահպանելու համար, հարկաւոր է անընդհատ լաւ հոգաբարձութիւն անել նորան: Ամենօրեայ փորձը հաստատումէ այս եզրակացութեան ճշմարտութիւնը, այդ փորձը ցոյց է տալի, որ ատամնահանութիւնը յառաջ է բերում հիւանդութեան նշաններ այն երեսանների մէջ, որոնք կերակրվումեն անկանոն կերպով և սակաւ լիւնումեն բաց օդի մէջ, որ, դորա ներհակ, համարեա թէ առանց այլևայլ նեղութեանց և հիւանդութեանց զուրս են ցցվում ատամները, երբ երեսայք առողջակազմ են, կերակուրը չափից աւելի չեն ուտում, յաճախ բաց օդի մէջ են գտանվում և առ հասարակ ֆիզիոլոգիայի ցոյցերին համեմատ խնամատարութիւն վայելումեն:

Աս արդէն բացատրեցի երեսանների խնամատարութեան կանոնները, այլ և քանիցս անգամ ասացի թէ մաքուր օդը որպիսի ծանրակշիռ նշանակութիւն ունի երեսայի առողջութեան համար. այս բոլորը կրկնել այս տեղ աւելորդ է, բայց որպէս զի սիրտս հանդարտ լինի—էլ մի անգամ հաստատեմ մայրերին, թէ ատամնահանութեան ժամանակ երեսային որ և է վտանգից պահպանելու համար մաքուր օդը ամենալաւ միջոցն է: Արեխայական հիւանդութեանց մեծագոյն մասի գլխաւոր պատճառը ջիղերի գրգռողութիւնն է, և միշտ բացի մաքուր օդից ոչ մի բան կարող չէ այնպէս հանդարտեցնել և մեղմացնել դորան: Աթէ մանուկը ամենայն օր մի քանի ժամ անցուցանումէ բաց օդի մէջ, իսկ մեացած ժամանակը ընդարձակ և լաւ օգամաբրած սենեակում, նաև եթէ սորա հետ միասին անդառութիւնը կատարվումէ կանոնաւոր կերպով, այն ժա-

մանակ ատամները դուրս են ցցվում առանց նեղութիւն պատճառելու: Բայց եթէ երեխան սահաւ է լինում բաց օդի մէջ և պահվումէ շափաղանց տաք և վառ սենեակում, որի մէջ օդը կարելի չէ պատշաճապէս մաքրել, այն ժամանակ ատամնաճանութեան հետ կապակից են դժուարութիւնք և վտանգներ, որովհետեւ այդպիսի կեանքը սաստկացնումէ ջիւղերի գրգռողութիւնը, որին ենթակայ է երեխան այդ միջոցին:

Այժմէ մանուկը լաւ է հագուած և եթէ եղանակը բարեխառն է կամ տաքիէկ, որչափ առաւել պահուի երեխան բաց օդի մէջ, այնչափ այդ շահաւէտ է նորա համար. սակայն հարկաւոր չէ մոռնալ, որ ատամնաճանութեան ժամանակ մանուկի կաղմուածքը կարգէ դուրս դուրազդաց է, և հետեւաբար պիտոյ է շատ զգաստ լինել, որ մի գուցէ երեխան փնաս ստանայ, սառն և թաց եղանակի ազդեցութեան ենթարկուելով: Ատամնաճանութեան ժամանակ ցուրտ կամ խոնաւ օդից, կամ թէ թափանցիկ հողմից դուրս կարող է յառաջանալ բորբոքումն երեխայի շնշափողի կամ կուրծքի մէջ <sup>1)</sup>: Այնքը կարող է պատահել, երբ որ հագուստը բաւականաչափ չէ պահպանում մարմնի և վերի ու վարի անդամների բնական ջերմութիւնը:

Այս տեղ կարեւոր է յիշատակել մի այլ ընդհանուր նախապահպանողական հնար, այն է ջերմ ջրով վաննաները: Ջերմ ջրով վաննայի մէջ լողանալուց հանդարտումեն ջղերի գրգռողութիւնքը, սաստկանումէ քնելու ցանկութիւնը, և ուստի յաճախ լինումէ շատ շահաւէտ ատամնաճանութեան ժամանակ և ստաջ ևս: Այսպիսի ժամանակ կարելի է երեխային աւելի երկար պահել վաննայի մէջ, քան թէ այն ժամանակ, երբ նոյնը անումեն նորան լուանալու դիտաւորութեամբ: Մարմինը շփելը նմանապէս ունի բարեյաջող և հանգստաբար ներգործութիւն ջղային համակարգութեան վերայ, ուստի այս բանը ևս պէտք է կատարել:

Ատամնաճանութեան ժամանակ հարկաւոր է փութաջանութեամբ աշխատել, որ երեխայի կերակուրը թեթեւ և սակաւազրգիւ լինի, և սովորական կերակուրը անգամ հարկաւոր է այդ ժամանակ ջրով խառնել: Այժմէ ատամնաճանութիւնը ծծից կարելուց առաջ սկսէ, այն ժամանակ մայրը ևս կամ ծծմայրը նմանապէս պէտք է գործածեն շափաւոր և չգրգռող կերակուր և չուտեն ծանր ու դժուարամարս

<sup>1)</sup> Տես յաւելում Բ:

բաներ: Աստարելով այս պայմանը, կաթի որակութիւնը լինումէ աւելի համապատասխան մանուկի գրութեան, և նպաստաւորումէ ջրերի գրգռողութիւնը մեղմացնելու: Բացի սորանից պիտոյ է ասել, որ մայրը, երեխայի ատամնահասնութեան ժամանակ, պարտաւոր է ևս առաւել զգուշանալ այն բոլոր բաներից, որ կարող է խանգարել առողջութիւնը, զոր օրինակ, սաստիկ հոգեկան վրդովմունքը, խոնջութիւնքը, անբոխմունքը և այլն. ըստ որում այս բոլորը անմիջապէս ներգործումէ երեխայի առողջութեան վերայ:

Արբ որ երեխայի ատամները դուրս են ցցվում, արիւնը ընթանումէ դէպի ուղեղը, որ շատ անգամ մեծամեծ վտանգներու պատճառ է լինում, ըստ որում դորանից դիւրաւ կարող է յառաջանալ ցնցողութիւնք, կամ հասարակ գրգռողութիւնը կարող է ուղեղի բորբոքման փոխարկուիլ: Աւստի այդ միջոցին հարկաւոր չէ երեխայի գլուխը տաք պահել, և առ հասարակ պիտոյ է հեռացնել ամենայն ինչ, որ գրգռողապէս ներգործումէ նորա վերայ, այդ պարագայում մեր աւելորդ ջանքը անգամ նորան զբաղեցնելու համար կարող է գրգռողութիւն պատճառել: Առ հասարակ քաղցրութեամբ, սիրով և հեղութեամբ վարուելով երեխայի հետ, կարելի է մեծապէս նպաստաւորել նորա հանգստութեան: Թուքի առատ թորումը ունի բարեկալից ազդեցութիւն, վասն զի ցրումէ և մեղմացնում գլխի բորբոքողութիւնը: Աղիքների ցաւը, որ շատ անգամ պատահումէ ատամնահասնութեան ժամանակ, այս պարագայում նմանապէս շատ օգտաւէտ է. դա հեռացնումէ արիւնը գլխից և թոքերից, ասել է հարկաւոր չէ երկիւղ կրել այդ ցաւից, եթէ միայն շափազանց սաստիկ չէ և չունի առանձին հիւանդութեան յայտարար նշաններ: Աթէ ատամնահասնութեան ժամանակ թուքի թորումը և ցաւը աղիքների մէջ վաղաժամ դադարեն ցրտի ազդեցութեան կամ մի ուրիշ խնամատարութեան կողմանէ եղած զանցառութեան պատճառով, այդ յաճախ պատճառումէ ցնցողութիւն կամ ուրիշ ծանր հիւանդութիւն:

Գոհասոր Իվանսօնը շատ ճիշդ նկատումէ, որ թէպէտ և հարկաւոր չէ շատ անհանգստանալ, երբ որ ատամնահասնութեան հետեւում է ընդհանուր խանգարումն կազմուածքի, սակայն այսու ամենայնիւ պէտք է մեծապէս զգուշանալ, որ մի՛ գուցէ մի մտազայ ծանր հիւանդութեան նշանները սխալմամբ ընդունենք իբրև սովորական խանգարումն, որ պատահումէ ատամնահասնութեան ժամանակ և սորա հետ միասին վերջանումէ: Արբեմն պատահումեն այդ տեսակ սխալ

ներ: Այդպիսի սխալներ չանելու համար կայ միակ միջոց, այն է մի մասնաւոր դիպուած քննելու ժամանակ չբաւականանալ ընդհանուր կանոնից յառաջ բերած կարծիքներով, այլ ուշի ուշով հետազօտելու է, թէ մի գուցէ խանգարումը, որ կապակից է ատամնահանութեան հետ և որ յատկապէս այդ իրողութիւնից է յառաջացած, ունի մի ուրիշ ծանր հիւանդութեան յայտարար նշաններ: Անտեղի եմ համարում երկարաբանել այդ մասին: Բժիշկ-ընթերցողս կարող է գտնել այս մասին մի բանի պիտանի գործնական ցոյցեր—Մանգէլ և Լւլանսօն բժիշկների պատուական շրագրութեանց մէջ «On the Management and Diseases of Children» (Արեխաների խնամատարութեան և նոցա հիւանդութեանց մասին):

Արբ որ ընտերքի ուռեցքը և բորբոքողութիւնը մեծ տանջանք պատճառումն երեխային, կամ երբ ծագումէ կասկած երեխայի առողջութեան որպիսութեան մասին և նշմարումն խանգարման այնպիսի նշաններ, որ ատամնահանութեան ժամանակ և սովորապէս չեն երևում, այսպիսի դիպուածում ծնողքը, անտարակոյս, մեծ համարում տալու չեն իւրեանց դատողութեան և պատահմունքին, այլ պարտաւոր են իսկոյն մի բժիշկ հրաւիրել, առանց սպասելու ցաւի սաստկանալուն: Այսպիսի պարագաներում միայն բժիշկը կարող է փրկել երեխային—անյապաղ օգնութիւն հասցնելով նորան, իսկ ինքը մայրը, իւր ժամանակին դիմելով բժիշկին, աղատ կմնայ տարածամ ափսոսանքից և դառն զղջումից: Բայց եթէ մանուկի հիւանդութիւնը սովորական ատամնահանութիւնից ծագած հիւանդութիւն է, նաև եթէ ցաւը շատ սաստիկ չէ, մայրը կարող է որքան և իցէ դիւրութիւն տալ նորան, մատով կամացուկ լինտերքը շփելով: Ահա այսպէս լինումէ ատամնահանութեան սկզբում: Բայց յետոյ, երբ ընտերքի բորբոքողութիւնը սաստկանումէ, շփելը վնասակար է. սակայն այս կողմանէ ևս բարւոք է ուշ դարձնել նոյն իսկ երեխայի վերայ և տեսնել, թէ արդեօք շփելը ախորժելի է նորան, թէ ոչ: Եթէ լինտերքը չափաւորապէս կակուղ չեն, շահաւետ է դնել նորա բերանը ողորկ բուստ (КОРЖИ), ըստ որում բուստը նպաստաւորումէ ատամնահանութեան. իսկ երբ որ ընտերքը բորբոքողական գրութեան մէջ են, փոխանակ բուստի, բարւոք է տալ հացի կեղև, որովհետև դա սաստկացնումէ թուքի թորումը, որով մեղմանումէ գրբոքողութիւնը:

Արբ որ ընտերքը սաստիկ գրգռած են և պատճառումն մեծ

ցաւ, նաև կազմուածքի մէջ նշանաւոր խանգարումն, հնարաւոր է կարճ միջոցում մեղմացնել երեխայի տանջանքը. հարկաւոր է միայն նշարակով (ЛЗНЦЕТЬ) ճեղքել լինտերքը առամի վերայ և թոյլ տալ արիւնին ազատօրէն հոսել: Այս բանս արդիւնաւոր է ատամնահանութեան սկզբում անգամ, թէև տակաւին կարելի չէ սպասել, որ այնուհետև անյապաղ երեխն առամները: Մայց երբ որ առամը արգէն միանգամայն պատրաստ է դուրս ցցուելու, երբեմն կարևորութիւն է պատահում այս հնարն գործածելու, երեխայի սաստիկ տանջանքներին վախճան տալու և վտանգից ազատելու դիտաւորութեամբ, բայց դարձեալ շատ անգամ երևումնն ատամները միայն մի քանի օր անցանելուց յետոյ: Սակայն այս մասին ես երկար ու ձիգ խօսելու միտք չունիմ, վասն զի դա վերաբերումէ յատկապէս բժիշկների մասնաւոր գիտութեան:

Արկորոգ աստիճանը ատամնահանութեան սակաւբար խանգարումէ կազմուածքը, բայց այսու ամենայնիւ հարկաւոր է ուշագրութեամբ դիտել ատամների մեծանալը, որպէս զի նորա (ատամները) պատշաճաւոր տեղում և պատշաճաւոր ուղղութեամբ մեծանան, մէկ մեկու շատ կպած չլինին: Այ միայն բերանի ձևը և գծագրութիւնը, այլ և ատամների գեղեցկութիւնը և պահպանութիւնը մեծ կախում ունին ինամատարութիւնից, և երկրորդ ատամնահանութեան ժամանակ կանոնաւորապէս հոգարարձութիւն անելուց:

Արեխաներին մատող հասակից սկսած հարկաւոր է սովորցնել պատշաճաւոր խնամք տանել իւրեանց ատամներին. հարկաւոր է սովորցնել նոցա ամենայն առաւօտ և գիշեր, նաև մի բան ուտելուց յետոյ անգամ, յատկ ատամնաւորձինով (зубная щетка, brosse à dents) ատամները մաքրել: Ատամների վերայ գոյացած մրուրը (отсѣдъ) ոչ միայն թունաւորումէ շնչառութիւնը, այլ և բաժանումէ լինտերքը ատամներից, որ և ատամներին և լինտերքին վնասակար է:



### ԳԼՈՒԽ XIII.

ԽՆՇՄՐՇՏՐՈՒԹԻՒՆ ԵՐԵՒՇԵՒ—ԾԾԻՑ ԿՏՐԵԼՈՒՑ ՄԻՆՉԵՒ ԵՐԿՐՈՐԴ  
ՏՐԵԿՍՆ ՀՍՍՈՎԸ.

Մանկական հասակը, որ այս գիրքը ունի գլխաւորապէս իւր աչքի առաջ, կարելի է բաժանել երկու. առաջինը—ծննդից մինչև ծծից կտրելը, և երկրորդը—ծծից կտրելուց մինչև կաթի ատամների միանգամայն դուրս ցցուիլը: Աստ մեծի մասին երեսոյսին ծծից կըտրումեն իններորդ և տասներորդ ամսուայ մէջ, իսկ կաթի ատամների դուրս ցցուիլը վերջանումէ քսան և չորրորդ ամսում կամ փոքր ինչ աւելի ուշ, ուստի սխալական չի լինիլ կոչել այս բաժինները մանկութեան առաջին և երկրորդ տարին: Սակայն գործածելով այս անունները, ես ցանկանումեմ ոչ միայն յայտնել ժամանակի շտիբը, այլ և կազմուածքի օրգանական և ֆիզիոլոգիական դրութիւնը, որով մանկութիւնը սովորաբար զանազանվումէ այս շրջաններում (periodы):

Երրորդ, ինչ որ ասած է նախընթաց գլուխներում, վերաբերվումէ յատկապէս մանկութեան առաջին շրջանին, բայց երկրորդը ևս ոչ պակաս ուշադրութեան արժանի է: Ա հարկէ երկրորդ տարին մահ առաւել սակաւ պատահումէ, քան թէ առաջին տարին, բայց առաւել շատ, քան թէ կեանքի յետագայ շրջաններում, և այս անհրաժեշտապէս բերումէ մեզ այն կարծիքին, թէ կաթի ատամների դուրս ցցուելու ժամանակ մանկական կազմուածքը կամ արտաքին պայմանները, որոնց մէջ ապրումեն մանուկները, ունին նոցա համար վնասակար, հիւանդութիւն յառաջ բերող, յատկու-

Թիւնք, որ հետևաբար կարևոր է խորապէս քննել, որպէս զի կարող լինինք նոցա զիմադրելու: Արրորդ և յետագայ տարիներում մահը խիստ շուտ սակաւանումէ, որով յայտնի է լինում թէ մահառիթ պատճառներից մի քանիսը յատկապէս մանկական հասակին են սեփական, իսկ միւսները, թէպէտ և շարունակումն են բարձրել, բայց առաւել թոյլ կերպով: Այս գլխու մէջ պիտոյ է քննեմ վերոյիշած պատճառները և ցոյց տամ նոցա առաջը յաջողութեամբ բըռնելու հնարները:

Թէ ինչո՞ւ համար երեխայք մեռնումն կեանքի երկրորդ տարուայ ընթացքում: Այն վտանգները, որոնց ենթակայ են երեխայք իւրեանց կեանքի առաջին տասն և երկու ամիսը, յառաջանումն, ինչպէս ես արդէն մեկնեցի վերևում, մասամբ մանկական կազմուածքի թուլութիւնից և մասամբ վատթար խնամատարութեան պատճառով: Այնք հարկաւոր է ասել և այն վտանգների մասին, որոնք պատահումն երեխաների կեանքի երկրորդ տարում: Այդ միջոցին կազմուածքի արագ զարգացողութիւնը տակաւին շարունակվումէ. ջղերի և անօթների համակարգութիւնքը ունին նոյնպիսի փրապետող նշանակութիւն, որպէս և կեանքի սկզբում, նա մանաւանդ սննդառութեան և աճեցողութեան գործողութիւնքը խիստ գրգռած դրութեան մէջ են գտանվում, ուստի մի շնչին պատճառով այդ գրգռած դրութիւնը կարող է հիւանդութեան փոխուիլ: Ատամնահանութիւնը, որ մի ծանրակշիւ փոփոխութիւն է կազմուածքի մէջ, շարունակվումէ մինչև երկրորդ տարին լրանալը, և որովհետև սորա, այսինքն ատամնահանութեան հետ կապակից է գրգռողութիւն ջղային համակարգութեան, ուստի և սաստկանումէ վտանգը ցրտից, անկանոն սննդառութիւնից և այլ պատճառներից: Թո՞ղ այդ, այդ ժամանակ ամենայն ինչ նոր է երեխայի համար և ունի նորա վերայ գրգռեցուցիչ ազդեցութիւն: Արկրորդ տարուայ սկզբում զգացողութիւնքը զեռ նոր սկսումն տալ իմացականութեան պարզ ու որոշ տպաւորութիւնք: Իմացականութիւնը (ինչքը) այդ միջոցին գիտակցումէ նորանոր զգացողութիւնք և ցանկութիւնք և մեծ բաւականութիւն է գտնում շրջապատող առարկաները զննելում: Ամբքը սկսումէ յայտնուիլ առաւել որոշակի, և առաւել հաստատ ու ճիշդ կերպով կառավարումէ մարմնական շարժողութեանց իւր բաղձանքները կատարելու համար: Խօսքերը և յարաբերութիւնքը մարդերի հետ ստանումն նորա համար առաւել մեծ նշանակութիւն և անդա-

դար գրգուսներն նորան դէպի գործունէութիւն. կարճ ասեմ, ամբողջ կազմուածքը ոչ թէ միայն գրգուս գրութեան մէջ է գտանւում, այլ անդադար ենթարկվում են նորանոր գրգուսութեանց ազդեցութեան: Չարմանալի չէ ուրեմն, որ այդ միջոցում, կազմուածքի թուլութեան միտ դնելով, պատահում են մահառիթ հիւանդութիւնք վատ հոգատարութեան և այլ վնասակար ազդեցութեանց պատճառով, որոնց զարգացած կազմուածքը տանում է յաջողապէս: Մասնիցս հասկացվում է, որ սպարդիւն չի լինել ընթերցողիս համար մի քանի նկատողութիւն անել երեխաների խնամատարութեան մասին, մանաւանդ այնպիսի նկատողութիւնք, որոնք յատկապէս վերաբերվում են կեանքի երկրորդ տարուան:

Կազմուածքի ընդհանուր որպիսութեան նայելով երկրորդ տարին առաջինից զանազանվում է միայն աստիճանով. ուստի այն կանոնները, որ մենք մեզ առաջնորդող ընդունեցինք ատամնահանութեան սկզբում, գործադրելի են և այժմ, միայն մի քանի աննշան փոփոխութեամբ, համեմատ այն փոփոխութեանց, որ այդ միջոցին յառաջնում են կազմուածքի մէջ: Այս պատճառով ես բաւական կհամարեմ հաստատել այն վերին աստիճանի ծանրակշիռ կանոնը— թէ ամենաճիշդ հնարը վտանգները սակաւացնելու, որոնց ենթարկվում են երեխայք ատամնահանութեան կամ ուրիշ մանկական հիւանդութեանց պատճառով, է լաւ խնամք տանել երեխային բնութեան ցոյցերին և մանկական կազմուածքի պահանջողութեանց համեմատ: Պատշաճապէս կատարելով այս կանոնը, նուազ և թոյլ կազմուածքի տէր երեխայք անգամ տանում են անվնաս բոլոր այդ վտանգներին, իսկ զանցառութիւնք այս կանոնով մեծամեծ վնասներ է պատճառում մինչև անգամ շատ առողջ և ուժեղ երեխաներին:

Հիւանդութիւնքը, որոնցից երեխայք մեռանում են իրանց մատաղ հասակում, ըստ մեծի մասին սերտ կապակցութիւն ունին մարտողութեան գործարանների հետ, և, անտարակոյս, այդ հիւանդութեանց գլխաւոր պատճառներից մինը սննդառութեան անկանոնութիւնն է: Այս կողմանէ, ծնողքը, թերևս, առաւելապէս միտումն ունին մոլորուելու. նոքա մասամբ իւրեանց անձնական զգացութեամբ, մասամբ ևս ազիտութեամբ մոլոր վումեն. ահա այս պատճառով այստեղ անօգուտ չի լինել մի քանի նկատողութիւնք անել կերակուրի մասին այդ մոլորութեան առաջը բանելու գիտաւորութեամբ:

Կերակուր.— Ծնողքը, իւրեանց զաւակներին կազդուրելու

ընական ցանկութիւն ունենալով, ընդունակ են տալու նոցա խիստ շատ, կամ խիստ յաճախ և կամ այնպիսի կերակուր, որ չափազանց սննդարար է նոցա համար: Այժմէ երեխային կերակրումն խիստ յաճախ, նա անշուշտ սովորումէ շատ ուտել իսկ միւս կողմից, եթէ երեխան զուրկ է որ և է զբօսանքից կամ չէ պարագում մարմնամարզութեան, նա յաճախապէս յայտնումէ ուտելու ցանկութիւն ոչ թէ իրօք կերակուրի կարօտութիւն զգալով, այլ յատկապէս անգործութեան պատճառով և ժամանակ անցկացնելու համար: Աշրեխաներին քաղցրեղէններով հանգստացնելու սովորութիւնը ոչ թէ փնասակարու վտանգաւոր է միայն առողջութեան համար, այլ բարոյական կողմանէ ևս շատ փնասակար է: Հարկաւոր է սովորեցնել երեխային ամենամատաղ հասակից սկսած որոշ ժամերում ուտել: Ստամոքսը, որպէս և միւս գործարանները, կատարելով իւր պաշտօնը, այսինքն մարտելով կերակուրը, պահանջում է հանգիստ իւր զօրութիւնը վերանորոգելու համար. բայց եթէ սա չունենայ հանգստութիւն, նաև կամեցած ժամանակին բան ուտէ, մարտողութիւնը անկանոն կերպով կրկատարուի, և հետևարար առողջութիւնը ընդհանրապէս կխանդարուի:

Շատ անգամ, առաւելազանց խնամարկութեամբ աշխատելով կազդուրել երեխային, մեծամեծ փնասներ են հասուցանում սորան, ըստ որում տալիս են երեխային այդ վախճանին համար չափազանց սննդարար և գրգռիչ կերակուր: Այս կողմանէ շատ անգամ մեծապէս սխալվումն: Արդարև, առողջ երեխան, եթէ թուլացած է պատահական նուազութեամբ (изнурение), կարող է արագապէս կազդուրել իւր զօրութիւնը շատ ուտելով, բայց եթէ թուլութիւնը յառաջացած է մարտողութեան խանգարման կամ ջգային համակարգութեան գրգռողութեան պատճառով, կերակուրը որքան չափաւոր է լինում, այնքան առաւել դա սնուցանումէ երեխային, և ընդհակառակն, որքան առաւել կերակուրը ինքն ըստ ինքեան սննդարար է և գրողապէս է ներգործում կազմուածքի վերայ, այնքան անբարեյաջողագոյն է առողջութիւնը վերանորոգելու:

Անթխտելի ընդհանուր կանոն է, թէ չափազանց վաղ կենդանական կերակուր գործածելը երեխայի համար աւելի փնասակար է, քան թէ չափազանց ուշ կերակրելը: Արբ որ դուրս են ցցվում երեխայի կտորիները և առջևի արմատական ատամները կամ աղօրէքը, պիտոյ է փօքր առ փօքր սովորեցնել նորան պինդ կերակուր ուտել: Առաջ ու առաջ կարելի է տալ նորան փօքր քանակութեամբ

վառեակի կամ գառան մտի ջուր, առանց խղի, մէջը խմորեղէն կերակուր աւելցնելով (լաւ եփած հաց), իսկ յետոյ թերխաշ ձու, դարձեալ փոքր քանակութեամբ, կամ պուդրինգ<sup>\*)</sup>, և այսպէս գնալով գնալով տալ առաւել պինդ կերակուր: Արբ որ ատամները լինումն ընդունակ կերակուրը պատշաճապէս ծամելու, կարելի է տալ փոքր ինչ վառեակի միս, — առաջին երկու կամ երեք օրը մի անգամ, իսկ յետոյ աւելի շուտ շուտ, եթէ այդ կերակուրս երեխայի ակտիւ-  
 ժակին համեմատ է և առանց դժուարութեան է մարսւում: Արբ որ առջևի ատամները դուրս գան, կարելի է տալ փոքր քանակութեամբ թեթեւ և լաւ պատրաստած բուսական կերակուր: Արեխայք մեծ յօժարութեամբ ուտումն ընդակազմը (цвѣтная капуста, գարնապիթ), գազար և առ հասարակ եփած բանջարեղէնք, և այդ կերակուրը դիւրաւ մարսւումէ, եթէ շարաւորապէս է գործածւում:

Չափազանց առատօրէն կերակրելուց, երեխայի թոյլ կազմուածքը կազդուրելու դիտաւորութեամբ, սովորաբար նա լինումէ նիհար և դիւրագրգիռ, և կատարեալ առողջութիւնը գտնում է այն ժամանակ միայն, երբ որ կերակուրը չափաւորապէս են տալիս: Արեած կերակուրի քանակութիւնից և որակութիւնից կարելի չէ եղբափակել, թէ դա օգտակար է կազմուածքին, ըստ որում կազմուածքի համար կերակուրի այն մասը օգտակար է, որը սա մարսում և իւրացուցանումէ: Աւրեմն զօրութիւնը կազդուրելու համար բարւոք է գործածել այնպիսի կերակուր, որ ունենայ կազմուածքին պիտանի շատ մասունքներ, նաև այդ կերակուրը տրվելու է երեխային այնքան, որքան կազմուածքի գրութիւնը պահանջումէ:

Մանկական հասակում ջղերի և անօթների համակարգութեան գործունէութիւնը սաստկազոյն է, ուստի դրականապէս միասակար են նորան գրգռեցուցիչ խմելիքներ — թէյ, սուրջ և այլն: Գոքա շահաւէտ կարող են լինել հիւանդութեան կամ ուժաթափութեան ժամանակ, սակայն այդ ժամանակ ևս կարելի է գործածել բժիշկի խորհրդատւութեամբ միայն:

Կարգացողիս ճիշդ գաղափար տալու համար, թէ որպիսի կերակուրը լաւագոյն է երկու տարեկան երեխայի կազմուածքին, ես բերումեմ քաղուածք Մանսէլ և Իվանսոն բժիշկների վերոյիշած

\*) ПУДИНГЪ, Ենդլիացոց ազգային կերակուր է. պատրաստւում է հացից, որ փշրում ու շաղկում են խղի, ձուաների, շաքարի և զանազան անուշահոտ համեմների հետ:

պատուական շարադրութիւններից. «Այրիու կամ երեք տարեկան քաջառողջ երեխան սովորաբար զարթումէ առաւօտեան հինգ կամ վեց ժամին, կամ փոքր ինչ վաղ, և խեղճն յայտնումէ ուտելու և խմելու ցանկութիւն: Աւտտի, հէնց որ երեխան զարթումէ, կարելի է տալ նորան փոքր ինչ հաց և քաղցր կաթ, կամ թէ (եթէ երեխան դեռ ևս չէ կարողանում հաց ուտել) փոքր ինչ թրջած հաց: Առաջին դիպուածում երեխան կարող է ուտել հացը ուղիղ իւր ձեռքից և վրայից խմել պաղ կաթ. իսկ երկրորդ դիպուածում թրջաց հացը պէտք է լինի տաք: Առ հասարակ այդ առաջին նախաճաշիկը տալու ժամանակ պիտոյ է վերահասու լինել, որ նա չուտէ առաւել, քան թէ որքան իրօք հարկաւոր է իրան: Այլ երջացներով այս նախաճաշիկը, մանուկը սովորաբար դարձեալ քնումէ մի կամ երկու ժամ: Սօս ինը ժամին, նա դարձեալ նախաճաշումէ: Այս երկրորդ նախաճաշը բաղկանալու է տաք ջրի մէջ թրջած հացից և թարմ կաթից: Հացի մէջ կարելի է փոքր ինչ շաքար ձգել: Սի կամ երկու ժամին երեխան կարող է ճաշել: Առաւել մատաղահասների համար ճաշը պէտք է լինի մտի կամ վառեկի արգանակ (բայց իւղոտ լինելու չէ) և հաց. իսկ երբ որ ատամների մեծ մասը դուրս ցցուին և երեխան կարողանայ ծամել, այն ժամանակ հարկաւոր է տալ նորան փոքր ինչ կենդանական կերակուր, օրինակ, մի կտոր վառեկի միս, ոչխարի կամ եղի խորոված կամ խաշած միս կարտօֆիլով կամ հացով կամ թէ ուրիշ որպիսի և իցէ լաւ պատրաստած բանջարեղէններով, օրինակի համար — շոգգամով (քենն) կամ ընդակաղամբով: Շաշից յետոյ հարկաւոր է տալ երեխային փոքր ինչ խմել: Առողջ երեխայի համար հարկաւոր չէ և արդարև նա ինքն էլ չէ ցանկանում ուրիշ խմելիք, բացի ջրից... Այս օրից յետոյ, ժամը վեցին կամ եօթին կարելի է տալ երեխային ընթրիք: Ընթրիքը պէտք է լինի տաք ջրի մէջ թրջած հաց և այլն, ինչպէս առաւօտեան նախաճաշը: Առողջ երեխան, օրուայ մեծ մասը բաց օդի մէջ անցներով, ընթրիքից յետոյ շատ շուտ քուն է մտնում և մինչև առաւօտ չէ պահանջում կերակուր: Այս կանոնով կարելի է սնուցանել երեխային անփոփոխ բոլոր նորա մանկութեան ընթացքում: Բայց չորս կամ հինգ տարեկան լինելուց յետոյ նախաճաշի և ընթրիքի ժամանակ հաց ու կաթը կարելի է առանց ջրի տալ, սառն կամ տաք, նայելով եղանակին և երեխայի ճաշակին: Առաւօտեան առաջին նախաճաշը կարելի է կամաց կամաց վերջացնել, բայց

այնուհետև ինը ժաման նախաճաշը հարկաւոր է տալ փոքր ինչ վաղ:

Վառաջ քան մի այլ առարկայի վերայ խօսելու, աւելորդ չեմ համարում մի անգամ էլ կրկնել թէ հարկաւոր է ամենայն զօրութեամբ աշխատել, որ երեսայի կերակրողութիւնը կանոնաւորապէս որոշած ժամերում լինի: Վործարանական կարգի բոլոր գործողութիւնքը առ հասարակ տրամադրուած են որոշ ժամերում կատարուելու, որ բաւականին հեշտացնումէ սովորեցնել երեսային կարգ ու կանոնի, մանաւանդ մատաղ հասակից: Պատշաճաւոր խնամատարութեամբ մանկութեան առաջին ամիսներում անգամ կարելի է շահաւէտ կացուցանել այդ տրամադրութիւնը<sup>1)</sup>: Վժուար է ասել, թէ ո՞ւմ համար առաւել օգտակար է այդ կարգ ու կանոնը պահելը — երեսայի թէ մօր համար: Վա մեծապէս նպաստաւորումէ ոչ միայն երեսայի բարեկեցութեան և առողջութեան պահպանութեանը, այլ և ազատումէ մօրը այն ծանր և մշտաւոր ստրկութիւնից, որի մէջ գտանվումէ նա, քանի որ երեսան հաւաստի է, որ իւր ցանկութեանց կամ հաճոյքներին անյապաղ կատարում տալու համար բաւական է մի ճիշ բարձրացնել: Մանուկին հարկ է այնպէս պահել, որ նա ինքն իրան հրամայող չհամարէ, այլ իմացած լինի, որ նորա ազազակի պատճառով բնաւ չեն խտորուելու արդէն սահմանած կանոնից և չեն զիջանիլ նորան կերակուր տալու մինչև նշանակած ժամանակը: Մանուկը հետ զհետէ հնազանդվումէ և լինումէ առաւել գոհ, ուրախ, քան թէ այն ժամանակ, երբ կատարումն, ի փաստ առողջութեանը, նորա ամեն մէկ հաճոյքը և թոյլ են տալի նորան ինքնակամ տնօրէնութիւն անելու մանկանոցի մէջ:

Վմանապէս կերակուրը կանոնաւոր քանակութեամբ տալուց յառաջ են գալի շատ նշանաւոր հետեանքներ: Շատ անգամ, ցանկանալով կատարել երեսայի հաճոյքը, տալիս են նորան կերակուր առաւել շատ, քան թէ որքան իրօք նա ցանկանումէ, և դորանից առաջ են գալի մատաղ հասակի համար շատ փնաստակար հետեանքներ — խանգարումն ստամոքսի և աղիքային ցաւեր: Վայց աշխատելով շտալ երեսային աւելորդ կերակուր, հարկաւոր է նոյնպէս զգուշանալ դորաներհակ տարասահման դրութիւնից, որպէս զի երեսան չտանջուի կերակրի սակաւութիւնից: Վայց իսի սխալը երբեմն առաջ է գալիս երեսա-

<sup>1)</sup> Տես իմ շարադրութիւնս «Digestion and Diet, p. 68».

յին շափաւորութեան և ժուժկալութեան սուփորեցնելու ցանկութիւնից: Բայց որպէս զի երեխայի կազմուածքը կարող լինի զիմանալ ապագայում զժուարութեանց և զըկողութեանց, դորա համար նորա սննդաուութիւնը մանկական և պատանեկական հասակում պէտք է կատարուի միշտ կանոնաւոր կերպով և կերակուրը լինի առատ, բայց ոչ շափից աւելի, առողջարար և սննդարար: Աննդաուութեան պակասութիւնը պատահումէ ժողովրդի միջին և լուսաւոր դասակարգերի մէջ անգամ, թէև ոչ այնպէս յաճախ, որպէս հակառակ շարիքը— շափազանցութիւնը կամ աւելորդութիւնը <sup>1)</sup>:

Լուսական չէ երեխային կերակրելու ժամանակը և կերակուրի քանակութիւնը կարգ ու կանոնի տակ ձգել, հարկաւոր է նաև չբժոսանալ, որ կերակուրի բազմակերպութիւնը նոյնպէս օգտակար է մատաղ հասակում, որպէս և կատարեալ հասակում, և թէ մի և նոյն և միօրինակ պատրաստած կերակուրի մշտատե գործածութիւնից նուազումէ ստամոքսի զօրութիւնը: Մի քանի շնչին փոփոխութիւնքը կերակուրի և նորա պատրաստութեան կողմանէ ունին բարեբեր, գրուող ներգործութիւն երեխայի մարտդական գործարանների վերայ: ( )րինակի համար, երբ մանուկին կերակրումն խմորեղէն կերակրով և կաթով, զժուար չէ երբեմն փոխակերպել այդ կերակուրը, գործածելով փոխ առ փոխ առևուրտ, բրինձ, սագօ, հացի միջուկ և այլն: Ամբ երբ երեխային կերակրումն արգանակով (մսի ջուր), կարելի է տալ նորան փոխ առ փոխ վառեկի, ոչխարի, երբեմն կովի կամ եզի մսի արգանակ և այլն: Այնպէս կարելի է փոփոխել մտեղէն և բանջարեղէն կերակուրը: Կերակրի այդպիսի բազմակերպութիւնը երեխայի համար ախորժակի է և առողջարար:

Շատ ծնողներ սուփորութիւն ունին ճաշի վերջանալու ժամանակ բերել երեխաներին սեղանի մօտ և տալ նոցա գինի, մրգեղէն, և քաղցրեղէն. զա կարող է ունենալ միայն վատ հետեանքներ երեխայի համար, և ուստի հարկաւոր չէ անել այդպէս: Առ հասարակ երբէք հարկաւոր չէ ուտել երեխայի առաջև այնպիսի բան, որը կարելի չէ տալ նորան: Միայն տեսանելը կերակուր կամ խմելք, նոյնպէս գրգռումէ երեխայի ախորժակը, որպէս լըյօք գրգռումէ

<sup>1)</sup> Կարգաւորը կարող է գտնել հանգուցեալ Զէմա-Գոպի—սուրբ Գևորգի հիանգունոցի բժիշկի շարագրութեան մէջ, (եր. 4 London, 1843) խրատական օրինակ, որը պատահել է նորա հօր ընտանիքի մէջ, թէ նրպիսի վատ հետեանքներ կարող են ունենալ կերակուրի պակասութիւնը ևս ցրտի ազդեցութիւնը:



աչքի գործունէութիւնը, կամ թէ տանջւողի կերպարանքը զարթեցնումէ մեր մէջ ցաւակցութիւն: Բացի սորանից, այդպէս ժամանակ երեխայի մէջ զարթումէ միտումն նմանակցելու, և որովհետև նա զեռ ևս կարող չէ հասկանալ, թէ ինչու համար իրան կարելի չէ անել նոյնը, ինչ որ անումեն միւսները, ուստի, անկատար մնալով իւր ցանկութիւնքը, գառնումէ նա մույլ և անբաւական:

Մաքրութիւն.—Այն իսկ պատճառներով, որը մենք արդէն առիթ ունեցանք յայտնելու, մաքրութիւնը շատ և շատ հարկաւոր է երեխայի առողջութեան համար, որպէս նորա կեանքի երկրորդ, նոյնպէս և առաջին տարում: Բայց որովհետև կազմուածքը երկրորդ տարում կատարելագոյն է և առաւել ընդունակ հզօրագոյն գործակատարութեան, ուստի ջրի բարեխառնութիւնը, որի մէջ երեխան լողանումէ առաւօտները, կարելի է ամառ ժամանակ կամաց կամաց սակաւացնել  $80^{\circ}$ -ից մինչև  $85^{\circ}$  և աւելի պակաս, նայելով երեխայի առողջութեան: Արբ եղանակը տաք է, իսկ մանուկը զօրեղ է և աշխոյժ, կարելի է առանց փրստի և վտանգի գործածել մինչև անգամ սենեակի բարեխառնութիւն ունեցող ջուր: Բայց ձմեռ ժամանակ, կամ եթէ երեխան նուազ կազմուածքի տէր է, հարկաւոր է զգուշանալ որ ջուրը չլինի խիստ սառն: Կարելի է ընդունել իրրև կանոն—մի տարի կամ տասն և հինգ ամիս անցանելուց յետոյ գործածել առաւօտեան լողանալու համար այնպիսի բարեխառնութեան ջուր, որից կաշին առաւել զովանայ, քան թէ տաքանայ:

Արբ առաւօտեան լողանալը չունի այլ նպատակ, բացի մաքրութիւնից, ինչպէս այդ սովորաբար լինումէ, գորա համար հարկաւոր է այնքան ժամանակ գործածել, որքան պահանջվումէ այդ նպատակին հասանելու համար. պահելով մանուկը ջրի մէջ, հարկաւոր է ձեռքով կամ փափուկ սպունգով լաւ շփել, և ապա շուտով և ջանազրութեամբ չորացնել նորա մարմինը:

Փորձառու Գուֆելանդը շատ օգտակէտ է համարում մանկական հասակին կանոնաւոր և իւր ժամանակին լողանալը, որովհետև լողանալը նպաստաւորումէ կանոնաւոր արիւնագարծութեան ժարմնի բոլոր մասների մէջ և խափանառիթ է լինում արիւնի դէպի մի տեղ վաղելուն, մի քանի գործարանների մէջ գրգռողութիւն յառաջացնելուն, զոր օրինակ. թոքերի, սրտի, ուղեղի, ստամոքսի և աղիքների մէջ: Սոյն իսկ պատճառներով, Գուֆելանդը համարումէ աւազանների (ВАННА) գործածութիւնը խիստ օգտակար հնար հիւան-

դուժիւնք բժշկելու ժամանակ: Առ հասարակ որ գործարանի վերայ  
ևս կամենանք մենք ներգործել, մեր բժշկական բոլոր հնարները ուղ-  
ղակի ներգործումեն նախ և առաջ ստամոքսի և աղեքների վերայ,  
և ահա այդ պատճառով պատահումէ յաճախ, որ արդէն եղած ներ-  
քին գրգռողականութիւնը առաւել սաստկանումէ նոյն իսկ  
գեղեց, որը բնդունվումէ այդ գրգռողութիւնը հեռացնե-  
լու համար: Աւազանները բոլորովին դուրկ են այդ պակասութիւ-  
նից: Պատշաճաւոր գործածութեան ժամանակ սորա միայն հանգս-  
տութիւն են պատճառում, բայց երբէք չեն սաստկացնում ներքին  
գրգռողականութիւնը, և շատ անգամ բոլորովին ազատումն դէպի  
ինչ ասես գեղերի դառնալու հարկաւորութիւնից:

Ազգուստը նոնպէս արժանի է խորին ուշադրութեան երե-  
խային խնամածելու ժամանակ, որովհետեւ դա ուղղակի ներգործումէ  
մորթի և առ հասարակ առողջութեան վերայ, և նորա ներգործու-  
թիւնը կարող է լինել օգտակար կամ վնասակար, նայելով թէ յար-  
մար է կազմուածքի որպիսութեան, թէ ո՞չ: Մատաղ հասակում  
մորթի միջնորդութեամբ կատարվումէ յաճախապէս առատ արտաշն-  
չութիւն, որը քիչ կամ շատ կեղտոտումէ մարմինը, և այդ պատ-  
ճառով հագուստի յաճախ փոփոխութիւնը նոյնչափ հարկաւոր է  
մաքրութեան և առողջութեան համար, որչափ և լուանալը ու լողա-  
ցնելը: Արովհետեւ ցրտի շնչին աղղեցութիւնը անգամ դիւրաւ  
կարող է դադարեցնել մորթի գործունէութիւնը, ուստի ամենայն  
գորութեամբ պիտոյ է աշխատել երեխային այնպէս հագուցնելու,  
որ մարմինը բաւականապէս պատսպարած լինի ցրտից: Աթէ մա-  
նուկը թոյլ կազմուածքի տէր է, կամ եթէ տեսնուի, որ նորա մէջ  
կենդանական ջերմութիւնը սակաւ է պատրաստվում, նորա հագուս-  
տը, որ անմիջապէս կպած է մորթին (այսինքն շապիկը) ձմեռ ժամանակ  
լինելու է փափուկ Ֆլանելից, իսկ ամառը, կամ երբ մանուկը ամուր  
կազմուածքի տէր է, այդ կարեւորութիւնը նուազագոյն է, իսկ եր-  
բեմն—ձանձրացուցիչ է անգամ: Առ հասարակ հարկաւոր է հետե-  
ւել կատարելու այս կանոնը, թէ հագուստը պիտոյ է պատրաստած  
լինի այնպիսի նիւթից, որ բաւականապէս կարող լինի պահպանել  
մարմնի ջերմութիւնը, առանց ծանրութիւն պատճառելու: Վժուար  
չէ կատարել այս կանոնը, բաւական է փոքր ինչ ուշադիր լինել  
երեխայի որպիսութեան: Արբեմն, միտ դնելով երեխայի կազմուած-  
քին, բամբակեղէն հագուստը պէտք է նախագաս համարուի, քան

Թէ ֆլանելը: Բայց եթէ մորթը չոր ու կոշտ է, գոյնը կապուտ ու դեղին, ասել է թէ մամբակեղէն հագուստը չէ պատշաճապէս պահպանուած մարմինը, և պէտք է նորա տեղ գործածել ֆլանել: Թէ գիշերային և թէ ցերեկային զգեստի մասին հարկաւոր յարմարուիլ տարուայ եղանակին:

Բացի առաջին ամիսներից յետ ծննդեան և բացի ձմեռից, երբ անտարակոյս հարկաւոր է առաւելագոյն ջերմութիւն, միւս ժամանակներում փետրալի անկողինների (ПУХОВЫЕ) և չափազանց կակուղ բարձերի տեղ պէտք է գործածել հասարակ անկողիններ մազով կամ բրդով լցրած, որոնք լինելու են փոքր ինչ առաձգական (УПРУГИЕ), որպէս զի մարմինը միանգամայն չխրուի նոցա մէջ: Փետրալի անկողիններ կարելի է գործածել, երբ նոքա լաւ թանձր կեկ լցուած են և ունին փոքր ինչ առաձգականութիւն: Քրափուկ փետրալի անկողինը ունենումէ իւր մէջ խրվող մարմնի վերայ նոյն ներգործութիւնը, որ ունենալու էր, եթէ մարմնի այդ մասը առաւել լաւ, ծածկած լինէր—քան թէ միւս մասերը, ուրեմն նա պատճառումէ նոյնպիսի վատ հետեանքներ, որպիսի պատճառումէ և չափազանց տաք հագուստը, այն տարրերութեամբ միայն, որ դա ևս առաւել փետասկար է, ըստ որում աւելի տաք պահումէ ոչ թէ բոլոր մարմինը, այլ միայն նորա մասը: Սովորաբար կարծումեն, թէ մարմինը տաքանումէ միայն վերմակներով, որով ծածկումեն նորան, և այդ պատճառով յաճախ պատահումէ, որ մարմնի մէկ մասը թողնումեն չափազանց տաքութեան մէջ, իսկ միւս մասը մի և նոյն ժամանակ մնումէ ցրտի ենթակայ:

Օւայրագոյն անխոհեմութիւն է ցերեկը երեխային բաւականաչափ տաք շոր չհագցնել, իսկ յետոյ քնացնել նորան փափուկ, տաք անկողնի և բարձերի վերայ: Ստարերենք այն դժբաղդ երեխայքը, որոնք, մի քանի տարի սորանից առաջ, մեր փողոցների և սկվերների վերայ իւրեանց ցրտից կապտկած ոտներով և հիւանդոտ երեսներով զարթեցնումէին անցուդարձողների ցաւակցութիւնը,— շատերը նոցանից գիշերները անցնումէին փափուկ անկողինների և բարձերի վերայ և չափազանց տաք վերմակների տակ, ասես թէ այն նպատակով, որ առաւել սաստկապէս զգան իւրեանց օրական սկլորութիւնը, և դորա հետեանքները յաճախ լինումէին յոյժ վտանգաւոր: Արբ մանուկը ասողջ է, նա քնումէ շուտով և քունը կազդուրեցուցիչ և զովացուցիչ է, նաև քուն մանելու համար բնաւ կարօտ չէ

փափուկ անկողինների և տաք վերմակների, որոնք միայն թուլացնում են մորթը և սաստկացնում են երեխայի բնածին միտումը պաղ առնելու և հիւանդութիւն ստանալու:

Արջին ժամանակներում Անգլիայում մեծապէս բարելաւացուցին կամ կատարելագործեցին երեխաների հագուստները, սկսել են գործածել երկար և տաք բրդեղէն կոշիկներ, ոտները և ծունկերը տաք պահելու համար, որոնք, առաջուան հագուստի ժամանակ, սովորաբար դողում էին և կապուտանում ցրտից:

Տարուայ բոլոր ժամանակներում հագուստը պիտոյ է լինի բաւականին տաք, որ երեխան ընդերկար դող կամ ցուրտ չզգայ, թէև այդ ցուրտը անշան անգամ կարող է լինել, բայց պահանջում է մեծ ներգործութիւն կազմուածքի կողմից, և ուստի զբօսանքը բաց օդի մէջ անախորժ է անում երեխայի համար: Առ հասարակ հագուստը պէտք լինի թեթև և այնպէս յարմար կարած, որ բնաւ արգելք չլինի ազատ շարժողութեան: Կուրծքը և ձեռքերը, մանաւանդ ձեռք ժամանակ, պէտք է բոլորովին ծածկուած լինին հագուստով: Շատ անգամ նուազ կազմուածքի տէր երեխայք մեծ փնաս են ստանում սենեակներում տաք շոր հագնելուց, մինչդեռ կուրծքը և ձեռքերը գրեթէ բոլորովին բաց են մնում, իսկ պատշապէս տաք հագցնում են նոցա միայն դուրս տանելու ժամանակ. այսպիսի հակառակ դրութիւնքը խիստ վտանգալի են և տրամագրում են երեխայքը մրսողութեան:

Խորհուրդ տալով մայրերին հոգալ, որ նոցա զաւակները ընդերկար չզգան ցրտի ազդեցութիւնը, եւ բոլորովին չեմ կամենում ասել, որ նոքա պահեն երեխաները միշտ միօրինակ բարեխառնութեան մէջ: Անհրաժեշտ է, եւ կարծում եմ որ խիստ մեծ միակերպութիւնը այս կողմանէ նոյնչափ փնասակար է առողջ երեխաների համար, նմանապէս և հասակաւորների համար, որչափ և յանկարծակի ցրտից դէպի տաք անցանելը: Առ հասարակ բարեխառնութեան մշտական միակերպութիւնից կազմուածքը կորցնում է աշխոյժը, կազմուածքի առողջ դրութեան ճշգրտոյն նշանը և բաւազոյն սեփականութիւնը, և այնուհետեւ նա հեշտ կարող է զոհ դառնալ ամենաչնչին առիթների, որոնք այլապէս ոչ թէ վտանգաւոր կլինէին նորա համար, այլ և կարող էին բաւականութիւն ևս պատճառել:

Սարմեամարդութիւն և մաքուր օդ. — Չափաւոր մարմնա-

մարզութիւնը և մաքուր օդը առողջութեան անհրաժեշտ հարկաւոր պայմաններն են և, ինչպէս ես արդէն ասացի վերը, մեծապէս ձեռնառու առողջութեան պահպանութեանը առամնահանութեան ժամանակ: Արքան երկար մնումէ մանուկը բաց օդի մէջ լաւ եղանակին, և որքան շատ և ազատարար վարժումէ նա իւր մկնակները, այնքան լաւ է նորա համար: Ամառ ժամանակ, լաւ և ցամաք եղանակին, կարելի է թողլ տալ նորան խաղալ կանաչի վերայ: Այսպէս, միանգամայն ինքն իրան թողած լինելով, մանուկը զգումէ ոչ թէ առաւել մեծ բաւականութիւն մարմնավարժութեան մէջ, այլ և առաւել լաւ զարգանումն նորա մկնակները և նա առաւել շուտով կանգնումէ ոտի վերայ և ման է գալի, քան թէ երբ սովորցնումն նորան այդ արհեստարար: Ան հասարակ ուրիշի միջնորդութեամբ կամ օգնութեամբ երեխային վաղաժամ մանգալ սովորացնելը պիտոյ է սաստկապէս արգելել: Մանուկը ինքը կսկսէ վարժուիլ մանգալու, երբ կզգայ իւր մէջ զորա համար բաւականին զօրութիւն: Այս է որ նա սկսէ մանգալ մի կամ երկու շարժումով ուշ, քան թէ վաղաժամ, որովհետեւ վաղաժամ ճիգն թափելուց օտերը և ողնայարը ծուլումն: Մայրերը և ծննդայրերը վարվումն շատ անխոհեմ, յորդորելով երեխաներին մանգալ, երբ սոցա անգամները զեռ բաւականապէս չեն ամրացած: Պէտք չէ մոռնալ, որ երեխաների ոսկորները պարունակումն իւրեանց մէջ առաւել շատ քանակութեամբ գործարանական նիւթեր, քան թէ հասակառունների ոսկորները, և այդ պատճառով նոքա կակուղ են և ձկուն (rigid): Ասակի հետ միասին կամաց կամաց մեծանումէ ոսկորները և աւելանումէ կրային նիւթի մասը, և այդ մեծանալը ունի որոշեալ համապատասխանութիւն առամնահանութեան, և այս պատճառով արագ կամ ծանրաշարժ առամնահանութիւնը կարելի է առ հասարակ համարել իրրե յայտարար նշան երեխայի ոսկորների զարգացման աստիճանին<sup>1)</sup>:

Չմեռը առաւօտեան 10 ժամից մինչև մէկը զկնի կէսօրին—ամենատաք և ամենաչոր ժամանակն է համարվում: Ան հասարակ ձմեռուայ ժամանակ հարկաւոր չէ անտես աննել լաւ եղանակը, որովհետեւ չէ կարելի յուսալ, որ նա երկարատեւ լինի, իսկ երեխայի առողջութիւնը վնաս է կրում, եթէ նա մի կամ երկու օր անգամ զրկվումէ մաքուր և պարզ օդից,

<sup>1)</sup> Տես Դ յաւելումս:

Պնդելոյ թէ խիստ օգտակար է կազմուածքի ամրութեան համար որքան կարելի է երկար պահել մանուկը բաց օդի մէջ, եւ հարկաւոր համարուեմ նախազգուշացնել ճնողներին, որ նոքա մեծ ուշ դարձնեն այդ ժամանակ երեխայի հագուստի վերայ և մինչև անգամ բոլորովին դուրս չհաննեն նորան, եթէ արդարև եղանակը վատ է կամ թէ մանուկը արտայայտուեւ հիւանդութեան նշաններ: Արբ որ մանուկը պահպանուեւ իւր բնական ջերմութիւնը մարմնավարժութեան կամ հագուստի օգնականութեամբ, կարելի է համարել նորան բոլորովին ազատ և ապահով ցրտի ազդեցութիւնից: Բայց նորա առողջութիւնը անկասկած կրուեւ փնտրել, երբ որ նա մրսուեւ հագուստի բաւականապէս տաք շինելուց, կամ թէ խիստ երկար ժամանակ օդի մէջ մնալուց: Բայց այս պարագայի մէջ, որպէս և առ հասարակ երեխայի խնամատարութեան վերաբերեալ բոլոր պարագաներում, մեր սեփական խոհեմութիւնը գլխաւորապէս պայմանն է մանուկը վտանգից և փնտսից պահպանելու համար:

Ք. ուն. — Քնի վերաբերութեամբ ևս կարգ ու կանոն պահելը մեծ նշանակութիւն ունի առողջութեան համար մանկական հասակում: Այս բաւական ընդարձակօրէն խօսեցայ զորա մասին (տես գլ. VIII), և այժմ ինչ մնում անել մի նկատողութիւն. հարկաւոր է աշխատել, որ երեխան կէսօրին քնելու սովորութիւնը միանգամայն թողնէ, երբ նորա ոյժը և զօրութիւնը բաւականին ամրացած և զարգացած է այդպիսի փոփոխութեան համար, որ լինուեւ սովորաբար երկրորդ և երրորդ տարուայ մէջ: Բայց նուազ կազմուածքի տէր և զիւրազրգիւ երեխաների համար շատ օգտակար է կէսօրուան քունը երեք տարեկան հասակից յետոյ ևս, ուստի ոչ թէ հարկաւոր չէ մոռացնել տալ նոցա ցերեկով քնելու սովորութիւնը, այլ ընդհակառակն հարկաւոր է հաստատ պահել նոցա մէջ այդ սովորութիւնը: Չմեռն հարկաւոր է հոգալ, որ մանուկը չբնէ այն ժամանակ, երբ առաւել յարմարաւոր է ձնակելու համար:

Արբ երեխան կզարթի քնից, հարկաւոր է իսկոյն հանել նորան անկողնից և հագուեցնել, նաև այն դիպուածում անգամ, երբ հարկաւոր լինելու է շուտով դարձեալ պաակեցնել նորան: Ընդհանր հարկաւոր է կատարել ճշդութեամբ, որովհետև մանկական հասակում, ինչպէս և կատարեալ հասակում, մնալ անկողնի մէջ, երբ կազմուածքը այլ ևս կարօտ չէ քունի, ունենուեւ շատ փնտաակար թուլացուցիչ ներգործութիւն, և մայրը պէտք է զգուշանայ

չսովորցնել երեխային այդ բանին իւր որպիսի և իցէ ժամանակաւոր յարմարութեան համար: Առողջ երեխաների քունը, սովորաբար, լինումէ շատ խոր և ունենումէ նոցա վերայ կենդանացուցիչ ներգործութիւն: Այդ պատճառով նոցա կազմուածքը, իսկոյն զարթնելուց յետոյ, կարօտ է գործունէութեան, և ուրեմն որքան քիչ ժամանակ մնան նոքա անկողնի մէջ զարթելուց յետոյ, այնքան այդ լաւ է նոցա առողջութեան և առ հասարակ նոցա բարեկեցութեան համար:

Այս տեղ յարմար է յիշել երկու երեխայ կամ աւելի ևս միասին անկողնի մէջ պառկեցնելու սովորութիւնը. շատ պատճառներ կան ցանկանալու, որ այդ սովորութիւնը խափանուի: Արեխաների առողջութեան համար առաւել օգտակար է քնացնել նոցա առանձին առանձին անկողնի մէջ, հետո միմեանցից: Այդ ժամանակ մանուկը շնչումէ առաւել մաքուր օդ, քան թէ երբ քնած է լինում ուրիշ երեխաների հետ միասին: Միւս ակնյայտի գերազանցութիւնը առանձնական անկողինների այն է, որ մանուկը այդ ժամանակ առաւել լաւ պատսպարած է լինում մրսելուց, որովհետեւ երբ անկողինը հասարակաց է երկու կամ երեք երեխայի համար, շատ անգամ պատահումէ, որ վերմակները, որով ծածկած են երեխայը, յանկարծ քաշվումէ դէպի մէկ կողմը, իսկ միւս կողմում եղած մանուկը մնումէ բաց և ցրտի ազդեցութեան ենթակայ: Իսկ երբ երեխայը հասնումեն չորս կամ հինգ տարեկան հասակին, առանձնական անկողինները ևս առաւել կարևոր են նոցա համար, որովհետեւ այդ ժամանակ մէջ տեղը ծագումէ բարոյական պայմաններ, որոնք պահանջումեն, որ երեխայը ստանձին առանձին քնած լինին: Տարակոյս չկայ, որ հասարակաց անկողինները ծնուցել են վատ սովորութիւնը, որ նկատած է բնասնիքների և ուսումնարանների մէջ: Բայց այս նկատմունքը առաւել վերաբերումէ յետագայ հասակին, քան թէ այս մեր հարցասիրած հասակին, և ուստի ես կանգ չեմ առնուլ գորա վերայ:

Հարկաւոր է նոյնպէս յիշել երեխային ձեռքի կամ ծունկի վերայ քնացնելու սովորութիւնը, յառաջ քան անկողնի կամ օրորոցի մէջ պառկեցնելը: Հանկալի է, որ ծնունդից մի քանի շաբաթ անցանելուց յետոյ, մայրը և ծծմայրը որքան կարելի է շուտով թողնեն այդ սովորութիւնը: Աչրբ մանուկը անհանդիստ է կամ գրեգոսած գրութեան մէջ է գտանվում, գուցէ նա, օրորվելով ձեքերի

կամ ծունկերի վերայ, մի քանի րոպէ վաղ քուն մտնէ, բայց այդ շնչին օգուար ստացվումէ խիստ թանկ գնով և շատ անգամ պատճառումէ վնաս երեխայի և երբեմն նմանապէս մօր անողջութեան ու բարեկեցութեան: Աթէ մանուկը սովորած է քնել մօր ծունկերի վերայ, զիշերով կամ ցերեկով զարթածին պէս խկոյն պահանջումէ, որ նորան անպատճառ ձեռքի վերայ առնեն, և չէ քնում մինչև որ կատարեն այդ: Բացի սորանից, երբ որ ձեռքի վերայ քնացրած երեխային պառկեցնումեն անկողնի մէջ, նա խկոյն զարթումէ և դարձեալ խնդրումէ ու պահանջում, որ բռնեն նորա ձեռքի վերայ, և այդ կարող է կրկնուել շատ անգամ: Ասև հարկաւոր է նկատել, որ ձեռքերի վերայ ննջեցնելու ժամանակ քունը չէ լինում այնքան խոր, չէ ունենում այն կենդանացուցիչ ներգործութիւնը, որպէս այն ժամանակ, երբ մանուկը հանդիստ քնումէ անկողնի մէջ: Աս հասարակ երեխայի սովորութիւնը ննջել մօր կամ ծծմօր ձեռքերի վերայ պատճառումէ սոցա մեծ նեղութիւն, և մի և նոյն ժամանակ ոչ մի օգուտ չունի երեխայի համար:

Բայց պէտք է ասեմ, որ այս սովորութիւնը թէև անկասկած վնասակար է, բայց խնամածու մօր համար դժուար է թողնել այդ: Արբ որ երեխան արդէն սովորած է ննջել ձեռքերի վերայ, այդ սովորութեան չկատարելը պատճառ է լինում նորան ճիշ բարձրացնելու և անհանգստանալու, իսկ մայրերը սակաւ ունենումեն բաւականին հաստատութիւն կամքի երեխայի լացին ու ճշին դէմ կենալու, թէև խելքը արդելումէ նոցա կատարել սորա ցանկութիւնքը: Սովորարար այդ դիպուածում նոքա վախենումեն, որ երկարատե ճշից ու լացից երեխան կարող է ստանալ ջղերի գրգռողականութիւն և ապա ցնցողականութիւն, և այդ երկիւղը խափանումէ նոցա մէջ բոլոր ուրիշ դատողութիւնքը: Սակայն այդ փոփոխութիւնը երեխայի խնամատարութեան վերաբերութեամբ կատարվումէ առաւել զիւրապէս, քան թէ ինչպէս կարծումեն, և եթէ համբերութեամբ պատշաճաւոր խնամք տարուի, ոչ թէ միայն վտանգաւոր է լինում, այլ կարճ միջոցում այնպիսի լաւ հեռեանքներ է ունենում, որ նորա օգտաւէտութեան մասին համոզվումեն վերջապէս ամենափութաջան մայրերը անգամ:

Նոգատարութիւն հիւանդութեան ժամանակ. — Շատ երեխայք մեռնումեն կեանքի երկրորդ տարում վարդախոյց (կարմրուկ, корь), շնչասպառ հազից (коклюшъ) և այլ մանկական հիւան-



գութիւններից, և այս պատճառով հարկաւոր է որ ծնողքը խորին ուշադրութիւն դարձնեն այս հարցի վերայ: Աս շունիմ մտադրութիւն երկար ու բարակ խօսել այս տեղ մանկական հիւանդութեանց բժշկութեան վերայ, որովհետեւ այդ բանը բոլորովին մայրերի կամ ծծմայրերի գործը չէ, այլ կնկատեմ միայն, որ առ հասարակ բոլոր երեխայական հիւանդութեանց զարգացման և նոցա հետեւանքների վերայ ունի ահագին ազդեցութիւն այն հոգաբարձութիւնը, որ անուամեն երեխաներին սոցա հիւանդութիւնից առաջ: Աշրեխաների մեծ մասը բոլորովին առողջանումեն մինչև անգամ սաստկագոյն փոխադրական (эпидемическiй) հիւանդութիւններից, և փորձը վկայումէ անկասկածելի ակնյայտութեամբ, որ գլխաւորապէս առողջանումեն այն մանուկները, որոնց վերայ կար կանոնաւոր հոգատարութիւն և որոնք շրջապատած էին բարեյաջող արտաքին պայմաններով: Մի խօսքով, որ կողմից և նայենք երեխայի վերայ ունեցած հոգատարութեան, ամենայն բան վկայումէ մեզ և հաստատում կանոնաւոր հոգատարութեան ծանրակշիռ նշանակութիւնը <sup>1)</sup>:

Անկանոն հոգատարութիւնը հիւանդութեան ժամանակ լինումէ շատ անգամ պատճառ երեխայի մահին, և այդ պատճառով աւելորդ չէ յառաջ բերել այստեղ մի քանի նկատմունքներ այս բանի մասին: Առ հասարակ հոգատարութեան անկանոնաւորութիւնքը լինումեն խիստ բազմակերպ, համեմատ ծնողների հակամիտութեանց և արտաքին պայմանների բազմակերպութեան, այն պայմանների, որոնց մէջ ապրումեն նոքա: Հաս մայրեր և ծծմայրեր ունին սովորութիւն յաճախ տալ երեխաներին զանազան գեղեր, որոնցմով խանգարումեն սոցա առողջութիւնը: Առքա սովորաբար շեն դատում, որ կազմուածքը իւր գործակատարութիւնքը կանոնաւոր կերպով լցուցանելու համար պահանջումէ որոշեալ պայմանների կատարումն, և ուստի ունի բնական ձգտողութիւն անձամբ անձին ուղղել իւր պատահական խանգարումն, եթէ միայն կատարումեն այդ ուղղութեան համար հարկաւոր պայմանները: Առքա բոս մեծի մասին կազմուածքը համարումեն մի մեքենայ, որը գործակատարութեան համար կարօտ է երբեմն երբեմն ստանալ արտաքին դրդումն—գանազան գեղեր: Աթէ երեխան հիւանդանումէ ցնցողականութեամբ, նոքա բոլորովին շեն աշխատում իմանալ դորա պատճառը, թէ ար-

<sup>1)</sup> Յն Բ. յաւելումքը:

ղեօք դա ատանահանութեան հետեանք է, թէ մարտդութեան խանգարման, կամ թէ վերջապէս փոքի ճճուների, և առանց մտածելու տայխ են խկոյն երեխային զեղ, որից դադարումէ ցնցողութիւնքը: Արովհետև շատ անգամ զեղը լինումէ բոլորովին անյարմար դիպուածին, հիւանդութիւնը և նորա պատճառը ազատ շարունակումեն ներգործել, և երեխայի համար եղած վտանգը ևս առաւել սաստկանումէ:

Եյս տեղ ասածը մի մտացածին բան չէ, այլ շատ հասարակ ճշմարտութիւն է: Ընդունելով հիւանդութիւնը մի արտաքին—իբր դրսից կազմուածքի մէջ մտնող—մի բան, անգէտ և շատ հոգացող մայրերը շտապումեն ցրել այդ հիւանդութիւնը զանազան զեղերով և այդպէս շատ անգամ երեխայի կեանքը ձգումեն վտանգի մէջ: Արբ որ առաւել կանոնաւոր կերպով հասկանան հիւանդութեանց պատճառը, երբ որ տեղեկանան, թէ դա այս կամ այն գործարանի կամ գործակատարութեան իւր բնական գրութիւնից խոտորուիլն է, որ իբրև խոտորումն առաջ է եկած որոշ պատճառից և որը կարելի է ուղղել, զնելով խանգարուած կազմուածքը իւր կանոնաւոր գործունէութեան համար պատշաճ պայմանների մէջ,—երբ որ այս կանոնաւոր հասկացողութիւնը կդառնայ հասարակաց սեփականութիւն, այն ժամանակ առողջութիւնը վերականգնելու համար առաւել յաճախ կդառնան զէպի բնութեան օգնականութիւնը և առաւել սակաւ—զէպի բժշկական հնարները բնութիւնը բռնաբար փոփոխելու համար: Իւր կոչումը կանոնաւոր կերպով և լաւ հասկացող բժիշկը, «է ծառայ և թարգման կամ մեկնիչ բնութեան», և ոչ թէ նորա տէրը, թշնամին կամ հակառակորդը: Այլնը հարկաւոր է նկատել և մօր մասին: Եհա ինչու ես համարձակ յայտնումեմ իմ համոզմունքս, թէ մայրերի և թէ ծծմայրերի երեխային զեղեր տալու սովորութիւնը յառաջացնումէ մեծամեծ վտանգներ: Աթէ դուք նկատումէք մօր մէջ ձգտողութիւն տալ իւր երեխաներին քաղցր սնդիկ (кашорель), զանազան կազդուրող, հանգստացնող, ցաւը կտրող զեղեր և այլն, կարողէք համարձակ կարծել, որ նորա երեխաների կէսը չէ ապրում, այլ վաղորօք գնումէ միւս աշխարհ:

Մինչև անգամ խորհուրդի համար զէպի բժիշկը դառնալուց յետոյ, մանուկը դարձեալ բոլորովին ապահով չէ զանազան զեղերի գործածութիւնից, ծանր հիւանդութեան ժամանակ երեխայի

գրութիւնը ոչ թէ սաստիկ շփոթումէ միայն մօրը, այլ և զարթեցնումէ ցաւակցութիւն բարեկամների և հարեանների մէջ, որոնցից համարեա ամեն մէկը առաջ է բերում այս կամ այն օրինակը, թէ ինչպէս նոյն իսկ ցաւով հիւանդ էր մի այլ մանուկ և ինչպէս օգնեցին նորան այսպիսի կամ այնպիսի դեղերը: Ի զուր մայրը նկատումէ նոցա, թէ բժիշկը արդէն անսաւ հիւանդին և նշանակեց նորան դեղ. — որքան սաստիկ է վտանգը և երկիւղը, այնքան առաւել մեծ եռանդով խորհուրդ են տալի բարեկամները և հարեանները փորձել գոզած հնարը, չհարցնելով բժշկից կամ թէ դադարելով տալ մանուկին սորա նշանակած դեղերը: Մայրը, սաստիկ շփոթուած լինելով երեխայի վտանգաւոր դրութեամբ, շատ անգամ կատարումէ այդպիսի խորհուրդները: Որա հետեանքը լինումէ սովորաբար այն, որ առաւել ևս սաստկանումէ վտանգը: Մարդիկ, որոնք սովոր են նախ և առաջ կշռել իւրեանց վարմունքը, յոյժ պէտքէ զարմանային, եթէ պատահէր նոցա լինել ականատես, թէ որպիսի վտանգաւոր անխոհեմութիւնք կատարվումեն երբեմն այդպիսի գիպուածներում, և որպիսի անձնատարէութեամբ սպասումեն փրկարար գործողութիւն այս կամ այն դեղից, առանց միտ գնելու, թէ, գործածելով զանազան դեղեր, այդ դեղերը փոխադարձաբար փոխումեն իւրեանց ներգործութիւնը: Մինչև անգամ յոյժ վտանգաւոր հետեանքների ժամանակ ամենեւին չէ նուազում անձնատարէութիւնը, այլ պահպանումէ իւրեան այսպիսի դատողութեամբ, վտանգը հեռացնելու համար բոլոր հնարաւոր և կարելի միջոցները գործ դրուեցան: Եւ շատ սխալական կլինէր կարծել, թէ այդպէս վարվումեն միայն անկիրթ մարդիկ: Անոնաւոր և ուղիղ տեղեկութիւնք մարդկային կաղմուածքի վերայ այնպէս սակաւ տարածուած են մինչև անգամ ժողովրդի միջին և վերին դասերի մէջ, որ, թէ և այդ դասերը, ունենալով լաւագոյն ընդհանուր լուսաւորութիւն, առաւել յաճախ դանդումեն դէպի բժիշկի խորհուրդը, քան թէ ստորին դասերը, բայց և նոցա մէջ շատ անգամ պատահումէ, որ երեխայքը զոհ գնումեն բազմաթիւ տգէտ խորհուրդատուների և զանազան բժշկական դեղերի չափազանց շատ գործածութեան:

Իւրի և հաւատ ընծայելով օտարների խորհուրդներին, մայրերը սովորաբար թաղցնումեն իւրեանց վարմունքը բժշկից, որի խորհուրդները կատարումէին մինչև այդ ժամանակ, և այդ խաբէութիւնը ինքն ըստ ինքեան է արդէն ծանրակշիւ շարիք, որովհետև մոլոր-

րեցնումէ բժիշկը երեսօայի հիւանդութեան իսկական պատճառի մասին: Շատ բնական է, որ մայրը, լինելով խիստ շփոթուած, սխալաբար գործ է տեսնում, և ամենայն լաւ բժիշկ ներողամիտ կլինի դէպի նորա սխալմունքները, որքան և լինեն սոքա անհաճոյ և անխոհեմ: Ահա արկէ ցանկալի է, որ մայրը չունենայ թուլութիւն լսելու և կատարելու ուրիշների խորհուրդները առանց բժշկի գիտութեան, որ բաց սրտով յայանէ բժշկին լսածը և հարցնէ նորա կարծիքը այդ մասին: Այն ժամանակ բժիշկը կամ կը յարմարացնէ այդ խորհուրդները ցաւի յատկութեան և սորա համեմատ կտայ հարկաւոր ուղղութիւն բժշկութեան այլ միջոցներին, կամ թէ կմերժէ այդ խորհուրդները և չէ կատարիլ, ցոյց տալով պատճառները, և իւր բժշկութեան եղանակը լաւագոյն համարելով: Աթէ մայրը կլինի անբաւական բժշկի բացատրութիւններով և ստիպողաբար կպահանջէ գործադրել կողմնական խորհուրդները, բժիշկը կամ կհետացնէ իւրանից ապագոյ պատասխանատւութիւնը, կամ թէ կգործածէ միջոցներ, որ այդ խորհուրդները կատարուին սակաւագոյն վտանգով և որքան կարելի է մեծ յառաջագիմութեամբ:

Աս բոլորովին չեմ պախարակում այն մայրերին, որոնք դարձնումեն բժշկի ուշքը օտարների խորհուրդների վերայ, և խոստովանումեն, որ խիստ փորձառու բժիշկները կարող են երբեմն մեծ օգուտ քաղել պատահական դիտողի արած հարեանցի նկատմունքներից: Բժշկի կարծառե այցելութեան պատճառով հիւանդութեան այս կամ այն երեւոյթը կարող է փախչել նորա ուշադրութիւնից և նկատելի լինել ուրիշ ժամանակ աւելի պակաս հասկացող դիտողին, և այս պատճառով կարելի է որ կհարկաւորի կատարել որպիսի և իցէ փոփոխութիւն բժշկութեան մէջ: Այսպէս բժիշկը երբեմն կարող է ստանալ օգտակար ցոյցեր օտար մարդից, բնաւ տեղիք չտալով պախարակութեան, իբր թէ ինքը լաւ չգիտէ իւր գործը և արուեստը: Աս պնդումեմ միայն այն, որ պէտք չէ տալ երեսօային ոչ մի տեսակ դեղ, նախապէս նորան նայող բժշկից խորհուրդ չհարցրած, և թէ, եթէ դեղը տուած լինին առանց բժշկի թոյլտւութեան, հարկաւոր չէ թագցնել այդ նորանից:

Մանր հիւանդ մանուկին հարկաւոր է պահել հանգիստ, լաւ օդամաքրութիւն ունեցող սենեակի մէջ, հետու ամենայն ազաղակից և ուրիշ երեսխաններից, և այդ օգտակար է ոչ թէ միայն հիւանդի,

այլ և միւս երեխաների համար, մանաւանդ եթէ հիւանդութիւնը փոխադրական է: Հիւանդ երեխայի կազմուածքը սովորաբար շատ գրգռողական է. այդ պատճառով հարկաւոր է դարձնել մեծ ուշադրութիւն, որ ոչ մի բան չխանգարէ նորա հանգստութիւնը, որ նորա սննեակի մէջ միշտ լինի պարզ օդ: Հանգստութիւն և կարգ ու կանոն պահպանելու համար ցանկալի է, որ հիւանդի սննեակի մէջ լինի միայն ծծմայրը, ըստ որում ուրիշները միայն փշացնումեն օդը և անհանգստացնում մանուկին<sup>1)</sup>: Հիւանդութեան ժամանակ մաքուր ու պարզ օդը առաւելապէս հարկաւոր է, քան թէ երբ և իցէ: Շատ մայրեր այդպիսի դիպուածներում հարկաւոր են համարում հիւանդին մրսելուց ազատելու համար պահել նորան փակած ու խիստ տաք օդի մէջ, բայց այդ պայմանը շատ անգամ, մանաւանդ եթէ հիւանդը ջերմախտ ունի, պատճառում ատաւել վատ հետեւանքներ, քան թէ այն, որի առաջը կամենումէին բռնել: Այդնը պէտք է նկատած և շափազանց տաք վերմակների մասին:

Հիւանդ երեխայի կերակուրը համարեայ թէ ծանրակշիռ խնդիրներից մինն է, որի մասին բժիշկները մեծ դժուարութիւնք կրումեն մանկական հիւանդութիւնքը բժշկելու ժամանակ: Այս կողմանէ բժշկին հարկաւոր է մեծ զգուշութիւն, — նա չպէտքէ բաւականանայ լոկ ցոյցերով, թէ որպիսի կերակուր հարկաւոր է տալ երեխային, այլ պէտք է համոզուի, թէ արդեօք ուղիք հասկացան այդ ցոյցերը և ուղիք կատարումեն, թէ ոչ: Արովհետև մանկական կազմուածքի մէջ իշխումեն ջրական և անօթական համակարգութիւնքը, ուստի բոլոր մանկական հիւանդութիւնքը քիչ կամ շատ կապակից են ջերմախտական գրութեան հետ: Այս պատճառով հարկաւոր է ընդունել իբրև ընդհանուր կանոն, որ հիւանդ երեխաների կերակուրը պէտքէ լինի թեթեւ և չափաւոր, մինչև անգամ և այն ժամանակ, երբ նոցա զօրութիւնը մեծապէս նուազած է: Իսկ զըրզող և խիստ անդարար կերակուրը միայն աւելացնումէ երեխայի թուլութիւնը, սաստկացնելով ջերմախտական գրութիւնը: Բայց

<sup>1)</sup> Երեխայական հիւանդանոցի Ռեխտ բժշկի փոքրիկ շարադրութեան մէջ «How to nurse Sick Children», կարելի է գտնել ուշադրութեան արժանի ցոյցեր հիւանդ երեխաների խնամատարութեան վերաբերութեամբ: Խորհուրդ եմ տալի նոյնպէս բոլոր մայրերին ևեօք բերել տիկին Այսթինգալի պատուական շարադրութիւնը այս վերնագրով «Notes on Nursing». այս շարադրութիւնը խոսում է առաւելապէս մանուկների վերայ, եւ ոչ թէ առ հասարակ հիւանդների:

Տիւանդի զօրութեան նուազելը շատ անգամ մոլորեցնումէ մայրերին, և սորա հարկաւոր են համարում հիւանդին կազդուրելու համար տալ նորան խիստ անզարար կերակուր և որքան կարելի է շատ: Սորա հետեանքները լինումեն խիստ վտանգաւոր երեխայի առողջութեան համար, և ամենականոնաւոր բժշկութիւնը երբեմն լինումէ այդ ժամանակ բոլորովին անօգուտ:

Վամանապէս շատ անգամ երեխայը մեռնումեն այն պատճառով, որ ծնողքը չեն դառնում իւր ժամանակին (վաղօրօք) դէպի բժշկի խորհուրդը, յուսալով օգնել այս կամ այն առանին հնարներով: Վմնածանր հիւանդութիւնքը սկսումեն երբեմն շնչին խանգարմամբ, որը զիւրաւ կարելի է անհետացնել, իւր ժամանակին օգնութիւն հասցնելով: Աւստի երբ որ մանուկը ցոյց է տալի հիւանդութեան նշաններ և չէ երևում զօրա ակնյայտնի, հեշտ հետացնելի, պատճառը, որքան շուտ դառնան դէպի բժշկի օգնականութիւնը, այնքան լաւ է: Մեկասկածելի է, որ շատ անգամ պատահումեն այնպիսի դիպուածներ, երբ բժշկի իւր ժամանակին հասցրած օգնութիւնը կարող է ոչ թէ միայն հետացնել մահը, այլ և նոյն իսկ հիւանդութիւնը:

Վասի քան այս գլուխը վերջացնելա, ևս կամենումեմ առաջ բերել էլ մի կամ երկու նկատողութիւն, որ համարումեմ օգտակար մայրերի համար: Արեխայի հիւանդանալու ժամանակ պէտքէ մարդ ուղարկել բժիշկ հրաւիրելու համար որքան կարելի է վաղ առաւօտուն, և ոչ թէ սպասել, ինչպէս շատ անգամ պատահումէ, մինչև երեկոյ, երբ վերջապէս խաւարը և գիշերային առանձնութիւնը երկիւղ պատճառումեն մօրը: Վիշերով բժշկին մարդ ուղարկելը ունի մեծ դժուարութիւնք, շփոթումէ բոլոր տունը, և վերջապէս գիշերով դժուարագոյն է լինում ճարել երեխայի համար հարկաւոր եղած դեղերը: Իւր ժամանակին հրաւէր ստանալով, բժիշկը այցելութիւն գնումէ հիւանդին յարմար ժամանակ, և այդ օգտակար է ոչ թէ միայն իսկ հիւանդի համար, այլ և ուրիշների համար ևս, որովհետև աղատումէ նոցա ժամանակի կորուստից, անհանգստութիւնից և շփոթ ու վրդովմունքից: Բացի գորանից, գիշերով բժիշկը սովորաբար հոգնած է լինում օրական աշխատութիւններից և պակաս ընդունակ է կատարել իւր գործը: Մանաւանդ որպիսի և իցէ սուր (острая) հիւանդութեան ժամանակ հարկաւոր է անպատճառ կատարել այս կանոնը—իսկոյն բժիշկ կանչել: Բժիշկ հրաւիրելու հա-

մար Հարկաւոր է նորան հրաւիրական տոմսակ ուղարկել մէջը ճիշդ հասցեն գրելով, ըստ որում բժիշկը, ծառաների մոտացկութեան պատճառով, կամ մի և նոյն ժամանակ համանուն անձից հրաւեր ստանալով, կարող է սխալուել և ուրիշ տուն գնալ, ( )գտակար է նոյնպէս ցոյց տալ այդ նամակի մէջ հիւանդութեան տեսակը և նըշանները: Այդ տեղեկութիւնը բժշկին կայ կարողութիւն, հիւանդի տեսութիւն գնալուց առաջ, անել մի քանի դատողութիւնք հիւանդի կազմուածքի մասնաւոր յատկութեանց մասին և բացատրել, թէ որպիսի նշանակութիւն կարող են ունենալ առաջիկայ բժշկութեան ժամանակ նոյն միջոցին տիրապետող տարափոխիկ (повражннн) հիւանդութիւնքը: Այդպիսի տեղեկութիւնքը օգտակար են լինում մանաւանդ բժշկին գիշերով հրաւիրելու ժամանակ, ունենալով գոնէ փոքր տեղեկութիւն բժշկելու հիւանդութեան վերայ, բժիշկը կարող է առնուլ իւր հետ անյապաղ օգնութիւն հասցնելու զեղեր: Ինչպէս և իցէ, օգտակար է նամակի մէջ տալ համառօտ տեղեկութիւն հիւանդի որպիսութեան վերայ, որովհետեւ այդ բանը գոնէ փոքր ինչ նախապատրաստութիւն է տալի բժշկին հիւանդութիւնը քննելու <sup>1)</sup>:

Հանկալի է որ մայրերը համոզուեն այն ճշմարտութեան մէջ, թէ երբէք հարկաւոր չէ երեխաներին վախեցնել բժշկի անունով, այդպէս շատ անգամ անուամն, որ նոքա առաւել հանգարա մնան, կամ ընդունեն առաւել անհամ զեղ: Աշրխայական հիւանդութեանց բրժշկութեան ժամանակ բաւականին մեծ ազդեցութիւն ունի բժշկութեան յառաջադիմութեանը վերայ հիւանդի յարաբերութիւնը բրժիշկի հետ: Արբ որ երեխայք նայումն բժշկի վերայ, ինչպէս իւրեանց բարեսիրտ ընկերի և բարեկամի վերայ, բժշկի ներկայութիւնը ոչ թէ միայն հանգստացնումէ նոցա, նպաստաւորումէ հարկաւոր զեղեր ընդունել տալու և օգնումէ առողջութեան, այլև շատ անգամ ունենումէ նոցա վերայ այնպիսի ազդեցութիւն, որ նոքա հեշտ գիմանումն բաւականին կակճեցուցիչ և անհաճոյ գիրահատութեան (операція): Ըայց տգէտ և անխոհեմ ծնողները ունին սովորութիւն վախեցնել երեխային, ասելով. «այսպէս հրամայեց բժիշկը», երբ որ երեխայք չեն կամենում ընդունել զեղը կամ թէ կատարել որպիսի

<sup>1)</sup> Եւ գրեցի այս բանի մասին մի յօդուած «Sending for the doctor» անունով, որը տպուած էր մի օրագրի մէջ, իսկ յետոյ վերստին տպուեցաւ «Chamber's Edinburgh Journal» մէջ, Aug. 30, 1834:

և իցէ իրանց համար անհաճոյ պատուէրը բժշկի: Այդ պատճառով երեսայք երբեմն այնպէս վախենումեն բժշկից, որ այդ հանգամանքը շատ անգամ մեծ արգելք է լինում յառաջագէտ բժշկութեան: Պատահումէ որ միայն բժշկի երեւիլը այնպէս սաստիկ վրդովումէ նոցա, որ խիստ դժուար է լինում բժշկին համար որոշել հիւանդութեան նշանները ահի ներգործութիւնից: Բացի սորանից, երեսայի այդպիսի յարաբերութիւնը բժշկի հետ մի բարոյական մեծ արգելք է առողջութեան վերականգնելուն:

Պատահումէ նոյնպէս, որ և ծառաները ծնողներից ծածուկ գործածումեն այդ մի և նոյն հնարը, որ մանուկը հարկադրուի հնազանդելու: Այդ պատճառով հարկաւոր եմ համարում զգուշացնել մայրերը, որ նոքա ոչ թէ միայն ինքեանք զգուշանան այդպիսի վարմունքից, այլ և ամենայն զօրութեամբ աշխատեն և հետեւեն իրանց ծառաներին այդպիսի բան անել չտալու: Յանկալի է, որ և ծնողները և ծառաները խօսեն երեսայի առաջև բժշկի վերայ սիրով և յարգանքով, և բժիշկը անկասկած արժանի է գորան, եթէ միայն հաւատ են ընծայում նորա բնաւորութեան և գիտութեան: Իսկ հակառակ դիպուածում, որքան շուտով փոխեն բժիշկը—այնքան լաւ է: Բայց, ինչպէս և իցէ, ոչ մի բանով կարելի չէ արգարացնել նոցա այդպիսի արարողութիւնքը, այն է խրտուիլակ (վախեցնող) շինել այն մարդը, որին յանձնումեն իրանց երեսանների առողջութիւնը և բարեկեցութիւնը: Բայց երբ որ ծնողները այս կողմանէ վարվումեն կանոնաւոր կերպով, և ինքն բժիշկը սիրով և քաղցրութեամբ վարվումէ երեսայի հետ, երեսան սովորումէ նայել նորա վերայ իբրև իւր լաւագոյն և միակ բարեկամի և ընկերի վերայ, որը կարող է ազատել նորան հիւանդութիւնից և տանջանքից:



ԵՐԵՒՇՅԻ ՄՏՇՆՈՐ ԴՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԿՆՆՈՆՆԵՐԸ:

Մինչև այժմ բացատրած կանոնները երեխաների հոգատարութեան մասին վերաբերվում են յատկապէս սոցա Փիղիբական գոյութեան: Այժմ ես կամենում եմ քննել նոցա գոյութեան միւս, ոչ պակաս ծանրակշիւ կողմը, — բարոյական և մտաւորական կրթութիւնը սոցա ամենամատաղ հասակի մէջ:

Մարդս իւր երկրպոյին կեանքի մէջ է մի բազմամասն էութիւն: Մենք կարող չենք պատկերացնել այս էութիւնը մեր աչքի առաջ և իբրև առանձին հոգևոր, կամ առանձին մարմնաւոր էութիւնք: Կա ապրումէ նիւթեղէն աշխարհի մէջ, պատած է իւրեան նման ուրիշ էակներով, իւր գոյութիւնը իսկ կախուած է նիւթական պայմաններից, և եթէ նորա խելքը չունենար նիւթեղէն գործարաններ, այդ կլինէր նոյնպիսի խոտորումն արարչութեան ընդհանուր օրէնքներից, որպիսի խոտորումն լինելու էր, եթէ գործարանաւոր մարմինը չունենար խելք իւր շարժողութիւնքը ուղևորելու: Այս պատճառով, որպէս զի մարդը ընդունակ լինի լցուցանել իւր երկրպոյին գոյութեան նպատակը և խորհուրդը, հարկաւոր է որ կրթութիւնը միշտ աչքի առաջև ունենայ սորա բնութեան ամբողջութիւնը, աշխատէ զարգացնել իւր մարմնի մէջ առողջ խելք և ոյժ. ասել է, եթէ Փիղիբական, բարոյական և մտաւորական կրթութիւնը որ և է կողմանէ կամ որ և է աստիճանով չէ հասնում այս նպատակին, այդ կրթութիւնը պակասաւոր է, և պակասաւոր է նոյն

չափով, որչափով չէ հասնում այդ նպատակին: Չափաւորել (սահմանափակել) կրթութիւնը, ինչպէս այդ լինումէ սովորաբար, զարգացնելով մի քանի—և այն ոչ բարձր—մտաւորական ընդունակութիւնքը, թողնելով առանց ուշադրութեան ֆիզիքական, նոյնպէս և բարոյական և բարձր մտաւորական զօրութեանց զարգացումն, նշանակումէ հրաժարուել ամենամեծ բարիքից, որպիսի կարող է կրթութիւնը տալ մարդուն: Տարի չէ անցանում, որ մեր համալսարանները չցոյց տան մեզ այդպիսի մոլորութեան օրինակներ. քանքարաւոր և ժրագլուխ երիտասարդները, չափից դուրս ճիգն թափելով, լինումն անպէտք կեանքի այն հասակում, երբ նոցանից սպասումն լաւագոյն պտուղներ, և այնպէս անդարձ կորչումէ այն նպատակը, որի համար ամենայն բան զոհ էր բերած: Այլ այս մեծամեծ յոյսերի կորուստը շատ անգամ լինումէ այնու մանաւանդ ծանր, որ տեսնումես աչքիդ առաջ և նախանձորդների յաղթանակը, որոնք գերազանցումն ոչ թէ ընդունակութեանց կամ ձիրքերի գերազանցութեամբ, կամ գիտութեան հարստութեամբ, այլ առողջութեամբ, աշխատասիրութեամբ և խոհեմ չափաւորութեամբ:

Արեխայի մտաւորական դրութիւնը իւր սկզբնական վիճակի մէջ պարունակումէ այն բոլոր արտաքին զգացմունքները, հոգեկան շարժմունքները և մտաւոր զօրութիւնքը, որոնցով մարդս հանդէս է գալի իւր կատարեալ հասակում: Տեսութեան, լսողութեան, ճաշակի, հոտառութեան և շոշափողութեան զգայարանքը, և ներքին ընդունակութիւնքը—զգալու, հասկանալու, մտածելու, իրականապէս նոյն են և երեխայի մէջ, միայն չեն զարգացած, բայց ապա զարգանումն ոմանք առաւել արագ, ոմանք առաւել դանդաղ: Արածնի մէջ միայն արտաքին զգայարանքը գործունէաբար յայտնի են կացուցանում իւրեանց լինելութիւնը, և այն սկզբում խիստ անկատար կերպով, այնպէս որ առաջին մի կամ երկու շաբաթուայ ընթացքում մանուկը, ըստ երևութին, չունի բոլորովին գիտակցութիւն ինչ ասես բանի: Այսը զարկումէ նորա աչքին, ձայնը հասանումէ նորա ականջին, բայց այս բոլորը, ըստ երևութին, չէ գործում նորա վերայ ոչ մի որոշ տպաւորութիւն, եթէ միայն գրգռողականութիւնը չէ հասնում այն աստիճանին, որ դառնումէ նորա համար սհաճելի, և այդպիսի գիպուածում ցոյց է ապի նա անկասկածելի (պարզ) նշաններ իւր անբաւականութեան: Այդ միջոցին նորա գործակատարութիւններից միայն մինը, ըստ երևութին, ունի որոշ նպատակ, այն է երբ

նա դարձնումէ իւր բերանը զէպի մօր ծծերը, պտրումէ պտուղը, դնումէ նորան իւր բերանի մէջ և ծծում, բայց և այս բոլորը կատարումէ նա անգիտակցաբար:

Արտաքին զգայարանքներ.—Մենդից մի կամ երկու շաբաթ յետոյ երեխայի աչքերը սկսումեն լոյս որոնել, և անակնունելի ձայները սարսափ են բերում նորա վերայ—սես թէ նա զարմանումէ: Այամաց կամաց զգայարանքները լինումեն ընդունակ որոշ տպաւորութիւնք ստանալու և խելքին հաղորդելու, բայց նոքա կատարելապէս զարգանումեն միայն մի քանի տարուց յետոյ: Այս կողմանէ մարդս ներկայացնումէ զարմանալի տարբերութիւն շատ ստորագաս շնչաւորներից, որոնք տեսնումեն և լսում որոշապէս իւրեանց գոյութեան առաջին օրից, և ոչ թէ միայն զանազանումեն և ուտում կացահարելով սերմն կամ միջատներ, որ են նոցա բնական կերակուրները, այլ կատարումեն շարժողութիւնք և վարվումեն համարեա նոյնպիսի որոշ և կանոնապատշաճ կերպով, որպէս և կատարեալ հասակում:

Այս մարդու և ստորագաս շնչաւորների մէջ եղած զարմանալի տարբերութեան պատճառը դժուար չէ մեկնել: Այն կենդանիների մէջ, որոնց մի քանի զգայարանքները իւրեանց գոյութեան առաջին օրից սկսումեն կատարելապէս գործ տեսնել, մենք անպատճառ նկատումենք, որ այդ զգայարանքները արդէն յարմարապէս զարգացած են: Մարդը և այն կենդանիք, որոնց զգայութիւնքը ծննդեան ժամանակ խիստ անկատար են, այդ զգայութեանց համեմատ դոցա գործարանքը ևս անկատար կամ չզարգացած գրութեան մէջ են. դոցա իւրաքանչիւր զգայութիւնը ստանումեն կարողութիւն գործակատարութեան համեմատ իւրեանց գործարանների զարգացման և համեմատ այդ գործարանների վարժողութեան այն առարկաների մէջ, որոնց հետ նշանակած է նոցա բնութիւնից կապակցութիւն ունենալ:

Չզգայութեանց կախում ունենալը իւրեանց համապատասխան գործարաններից անհրաժեշտապէս բերումէ այս երկու հետեանքին, որը պէտքէ ունենալ աչքի առաջ և այդ զգայութիւնքը կրթելու կամ լրագործելու ժամանակ: Առաջին, որովհետեւ զանազան գործարանները ունին և զանազան զգացութիւնք, այս կամ այն, մի կամ քանի գործարանները կարող են զարգացած լինել ուրիշներից առաջ, զոր օրինակ, տեսողութիւնը լսողութիւնից առաջ, ճաշակը հոտոտելիքից առաջ:

Արկրորդ. երբ որ կամենումենք զրգել այս կամ այն գործարանը զէպի գործունէութիւն, հարկաւոր է առաջ բերել այնպիսի առարկաներ, որոնք զարթեցնումեն կամ զրգուցնում զորա գործունէութիւնը: Աթէ կամենումենք կատարելագործել տեսողութիւնը, զորա համար հարկաւոր են լոյս և ներկայացնել աչքին տեսանելի առարկաներ, նա և հարկաւոր է, որ երկուքն էլ յարմար լինին տեսողութեան գործարանի բնութեան և քնքշութեան: Աթէ արգելք լինինք լսողութեան գործարանին որ և է ձայն հասանելուն, կամ եթէ թողնենք հասնել միայն բարձր և անակնունելի ձայներ, մենք կարողենք ոչ միայն փնասել, այլ և բոլորովին ոչնչացնել լսողութեան գործարանը (խլացնել): Աւ ընդհակառակն, յարմարցնելով այդ գործարանի (ականջի) վարժողութիւնքը իւր կազմութեան, մենք ձեռնտու կլինինք նորա զարգացողութեան և նորա ընդունակութիւնը կլրագործենք. նոյնը հարկաւոր է ասել և հոտոտելիքի, ճաշակի և շոշափելիքի մասին:

Մի քանի վայրենի ցեղերի լսողութիւնը, տեսողութիւնը և հոտոտելիքը այնպիսի կատարելութեան հասնումեն յարատե վարժողութեամբ, որ գժուար կլինէր հաւատալ, եթէ մեզ չհամոզէին անկասկածելի փաստերը: Արժեքով այդ զգայարանքները մատաղ հասակից, վայրենին (մարդ) հանումէ այնպիսի կատարելագործութեան, որ կարողանումէ նկատել թշնամին կամ կենդանին հետուից, մինչդեռ լուսաւորեալ մարդը չէ լսում մի ձայն և բնաւ չէ տեսնում մի փոքրիկ նշան: Մեր բազմաթիւ հօտերի հովիւները ճանաչումեն ամեն մէկ ոչխարը, այն ինչ անսովոր աչքին բոլոր ոչխարները թվումեն բոլորովին միատեսակ: Արդրերի շոշափողութեան և լսողութեան զգայարանքները անասելի կատարելութեան են հասնում, եթէ միայն այդ կոյրերը զուրկ չեն այլ ընդունակութիւններից և գործունեայ խելքի տէր են: Հայանի են օրինակներ, որ մի քանի կոյրեր վարժողութեամբ զարգացրած էին իւրեանց շոշափողութեան զգայարանքը մինչև այն աստիճան, որ շոշափողութեան օգնականութեամբ կարողանումէին որոշել բաց գոյնը մութ գոյնից շորի վերայ, իսկական փողը սուտ փողից, մինչդեռ այդ բաների մէջ այնպէս շնչին զանազանութիւն կար, որ մեծ գժուարութեամբ կարող էր նկատել խիստ փորձառու աչքը անգամ: Մենեցուն յայտնի է նոյնպէս, թէ որպիսի կատարելութեան հասնումէ կուրի լսողութիւնը:

Չգայարանքների այդպիսի անասելի նուրբ գիւրագացութիւ-

նը (впечатлительность) շատ հեշտ ձևով բերվում է հարկաւոր է միայն մատաղ հասակից սկսած անդադար, կանոնաւոր կերպով և ժրջանութեամբ վարժել զգայարանքները իրանց յարմար առարկաներով, և յաճախական վարժողութեամբ նոցա դիւրագագցութիւնը գնալով գնալով կսաստկանայ: Արբ որ տարածվում մի ձայն, մեր ականջը լսում է այդ ձայնը, շնայելով մեր լսել կամենալուն կամ չբկամենալուն. երբ որ լոյսը հասանում է (զարկում է) տեսողութեան գործարանին, մենք տեսնում ենք առանց միտ գնելու մեր կամեցողութեան կամ չկամեցողութեան, երբ որ օդի մէջ տարածուած է անուշահոտ բուրումն, մեր հոտոտելիքը զգում է նորա լինելութիւնը և նորա յատկութիւնքը առանց մեր կամքին: Բայց երբ զգայարանքը աւանձնացած են այն առարկաներից, որոնք գրգռում են նոցա գործունէութիւնը, նոքա մնում են անգործ և անգործութիւնից թուանում են, — նոցա համար դառնում են բոլորովին անխօր այնպիսի տպաւորութիւնքը, որոնք, նոցա առաւել զարգացած լինելու ժամանակ, ունին ակնյայտի, որոշ խտրութիւն: Անուկը մատաղ հասակից հետևում է այս կանոններին իւր զգայարանքները զարգացնելու համար. նա սիրում է վարժել տեսողութիւնը, նայելով փայլուն առարկաների և գոյն գոյն բաների վերայ, — զարգացնել իւր լսողութիւնը, ուշադրութեամբ ականջ գնելով ձայների ամենաշնչին տարբերութեան անգամ, — զարգացնել կամ կատարելագործել շոշափելիքը, շոշափելով ամենայն ինչ, որ պատահում է իւր ձեռքի տակ, — և եթէ նա չէ ցոյց տալիս նոյնպիսի ձգտողութիւն հոտոտելիքը վարժելու համար, այդ միայն այն պատճառով է, որ այդ զգայարանքը դեռ խիստ սակաւ է զարգացած, և համեմատաբար համարեա դեռ ևս անընդունակ է գործունէութեան համար: Բայց շատ մայրեր և ծծմայրեր բոլորովին չեն հասկանում, թէ որպիսի բարբեր նշանակութիւն ունի երեխայի այդ իւր զգայարանքները վարժելու ձգտողութիւնը: Արբ որ մանուկը զուարճանում է, վարժելով իւր ձայնը, շոշափելով կամ գնելով զանազան բաներ, նոքա, մայրերը և ծծմայրերը, սովորաբար մտածում են միայն հանգստութեան, կարգի և լուսութեան վերայ, բոլորովին չհասկանալով, որ երեխայի այդ գործողութիւնքը են նորա համար անձնակրթութիւն, որը յոյժ օգտակար և յոյժ թանկագին պտուղներ տալու համար կարօտ է միայն պատշաճաւոր ուղղութեան: Ա՛յնչև անգամ մտածող և լուսաւորեալ մարդիկ շատ

յաճախ թողնուածն առանց ուշադրութեան երեխայի զգայարանքների զարգացողութիւնը, բնաւ հոգս չեն տանում նոցա պատշաճաւոր զարգացման կամ պահպանողութեան, չեն գործնում բաւականին ուշադրութիւն այդ զգայարանքների մեծախորհուրդ նշանակութեան վերայ, որովհետեւ գոցա միջնորդութեամբ է խելքը ստանում իւր բոլոր հարստութիւնը: Աորածնի տեսողութեան գործարանը (աչք) խիստ քնքոյշ է, բայց շատ անգամ բոլորովին փոյթ չեն տանում պահպանել նորան օրական փայլուն լուսի ներդործութիւնից: Աչ պակաս անհոգութեամբ վարվում են և լսողութեան գործարանի (ականջ) հետ. խիստ բարձր և անահնունելի և ձայները երբեմն բոլորովին խանգարում են լսողական ջղերը և այդ պատճառով մանուկը իւր բոլոր կեանքում մնում է խուլ: Ան հասարակ բոլորովին չեն աշխատում կատարելագործել զգացողութիւնքը, կամաց կամաց վարժելով նոցա իրանց գործարանների գրութեան և զարգացման համեմատ: Արբեմն պատահում է, որ երեխայը մատաղ հասակում կուրանում են և խլանում, մինչդեռ, ունենալով փոքր ինչ գիտութիւն և խոհեմութիւն, կարելի էր ոչ միայն պահպանել նոցա լսողութիւնը և տեսողութիւնը, այլ և բաւականին կատարելագործել այս վերջինները:

Արովհետեւ զգացողութիւնքը ընդունակ են կատարելագործելու, տուած են մեզ մեր վայելչութեան համար, և որովհետեւ, զրկուելով նոցանից, զրկվում ենք անձնական ու հասարակաց զուարճութիւններից, ուստի շատ և շատ հարկաւոր է մեր կողմից խնամք տանել այդ զգացողութիւնքը պահպանելու և լրագործելու մանկական հասակից սկսած, երբ սոցա գործարանքը դեռ ևս խիստ քնքուշ են և ուստի առաւելագէս կախում ունին վարժողութեան եղանակից: Անփորական կարճատեսութիւնը (близорукость) ժողովրդի միջին և վերին դասակարգերի երեխաների մէջ վկայում է, որ նոցա վերայ ունեցած հոգատարութեան կողմանէ կայ մի որպիսի և իցէ սխալ, որից առաջ է գալիս այդ պակասութիւնը: Շատ հաւանական է, որ այդ պակասութեան առաջ գալու համար բաւականին ծանր նշանակութիւն ունի և այն հանգամանքը, որ միջին և վերին դասակարգերի երեխայքը ժամանակի մեծ մասը անցկացնում են շորս պատի մէջ փակուած: Տեսողութեան գործարանը, ինչպէս և այլ գործարանները, ունի ընդունակութիւն բաւականագէս յարմարուելու շրջապատող առարկաներին: Ասւտարներ, ծովաշրջիկների և կամ թափառական հնդիկների այդ գործարանը վարժողութիւնից ստանում է ընդունակութիւն միօրինակ լաւ

որոշել Հեռաւոր առարկաները, որպէս և մերձաւորները, և ընդհակառակն, երեխաների այդ գործարանը,—այն երեխաների, որոնք ժամանակի մեծ մասը անցկացնումեն չորս պատի մէջ կամ թէ մեր քաղաքների նեղ փողոցների մէջ,—դասնումէ բոլորովին անընդունակ որոշել Հեռաւոր առարկաները, կարճ ասեմ, դասնումէ կարճատես, որովհետեւ վարժվումէ միայն մտակայ առարկաների վերայ: Բոլորովին ուղիղ է, որ մեծ Հեռատեսութիւնը մեծապէս կախուած է աչքի շինուածքից, բայց այսու ամենայնիւ ուղիղ է և այն, որ տեսողութեան մշտական վարժողութիւնը միայն մտակայ առարկաների վերայ շատ օգնումէ կարճատեսութեան մեծանալուն:

Վեւրացնումեմ էլ մի նկատմունք, որպէս զի այս կամ այն գործարանի վարժողութիւնը լաւ պատու տայ, պիտոյ է գրգռողութեան տեսողութիւնը համեմատ լինի աւողջութեան, հասակին և առ հասարակ գործարանի դրութեան:

Մտաւորական ընդունակութիւնք.—Այս այժմ կքննեմ խելքի այն ընդունակութիւնքը, որոնց կարելի է կոչել նորա-ներքին ընդունակութիւնքը, այսինքն որոնք սովորաբար նշանակվումեն յետագայ անուններով. հոգեկան շարժողութիւն, գիտողութիւն, միտք: Վաս ընդունակութիւնքը կազմումեն այն հիմք, որի վերայ հաստատվումէ մարդու բարոյական, կրօնական և մտաւոր բնութիւնը: Ոոքա համար ևս գործադրելի է նոյն իսկ կանոնը, որը գործադրելի է արտաքին զգայարանքների համար, և այդ կանոնը կարող է լինել մեղ համար թանկագին առաջնորդող երեխայի մշտաւոր կրթութեան ժամանակ:

\*Արածնի ուղեղը այնպէս քնքոյշ է, և այնպէս անկատար դրութեան մէջ է գտանվում, որ բոլորովին անընդունակ է մի որ և է գործունէութեամբ յայտնի կացուցանել իւր լինելութիւնը. մենք չենք նկատում երեխայի մէջ փոքրագոյն նշաններ անգամ այս կամ այն բանի գիտակցութեան, բացի, կարելի է, Ֆիզիքական ցաւից և կերակուր ցանկալուց: \*Մաննապէս մանուկը ոչ մի բանով չէ յայտնում իւր մտաւորական գործունէութիւնը. նա համարեա թէ միշտ քնած է, իսկ քունը անկասկածելի նշան է խելքի բացակայութեան: Արեխայի ուղեղի կազմուածքը խիստ քնքոյշ է, ուստի հեշտ կարող է ենթադրուիլ խանգարման, ոչ թէ ժամանակաւոր, այլ և մշտական,—կարող է տեսողութեան և լսողութեան գործարանների պէս առ յաւիտեանս զրկուիլ իւր կանոնաւոր գործունէութեան ընդունակութիւ-

նից, մի խօսքով, հետևանքը կարող է լինել բթամտութիւն կամ յիմարութիւն:

Եւհայտաբաններն այդպիսի դրութեան մէջ են գտանելու՝ խելքը և ուղեղը յետ ծննդեան: Եւհայտ յետոյ կամաց կամաց սկսում են երեւիլ առաւել ընդարձակ մտաւորական գործունէութեան նշաններ, և երեխայի գիտակցութիւնը սկսում երեւիլ ուրիշ բաների մէջ ևս, բացի կերակուր ցանկալուց: Աորա նայուածքը և ժպիտները վկայում են, որ նորա մէջ արդէն զարթել է գիտակցութիւն, թէ և այդ ժպիտների և նայուածքի շարժառիթ պատճառները զեռ ևս շուտով կարող չէ նա մտքով բմբունել: Մի հմուտ և հանձարեղ մտանադիր լաւ է նկատել, թէ մանկութեան ամենամատաղ հասակում նըմարելի են երեխաների մէջ այնպիսի շարժողութիւնք, որ, անշուշտ, կարելի չէ վերագրել զգացողութեան, գիտութեան կամ փորձառութեան, զորք նշան են այն սիրալիր յարակցութեան, որ սկսում յղանալ նոցա մէջ: Արդէն վեց շաբաթուայ երեխայի մէջ, որի համար զեռ ևս բոլորովին օտար է չընկալատող աշխարհը, որը զեռ ևս այնպէս մութ է որոշում արտաքին առարկաները, որ ասես թէ բնաւ ձգտողութիւն չունի ձեռքը բռնելու կամ իրանից հեռացնելու այդ բաները,—արդէն այդ հասակի մէջ նկատելի են նշաններ, որ ցոյց են տալիս, թէ չընկալատողների զգացողութեանց արտայայտութիւնքը կարող են ազդեցութիւն ունենալ երեխայի վերայ: Եւ յն ժամանակ, երբ զեռ ոչ մի նիւթական առարկայ, ըստ երևութիւն, չէ գրաւում նորա ուշադրութիւնը, նա արդէն ցոյց է տալիս համազգացողութիւն, այսինքն այնպիսի շարժողութիւն զգացմունքի, որ համապատասխան է ուրիշների դէպի նա ունեցած զգացմունքին: Եւ յետ, քաղցր ձայնը, շարժումն ժպիտ նորա շրթունքների վերայ, և մենք ուրախանում ենք, տեսնելով որ այս փոքրիկ էակը արդէն ունի հոգեկան շարժողութիւնք: Աւ ո՞վ, յիրաւի, կարող էր թելադրել կամ ասել նորան, թէ դէմքի գծերի այս կամ այն ձևակերպութիւնը նշանակում է սէր դէպի նա: Կարող էր արդեօք մանուկը, որ չգիտէ իւր սեփական երեսի գրծերը, նմանակցիլ ուրիշի երեսի ձևակերպութեան, եթէ նա չոգևորուէր այդ ձևակերպութեան մէջ արտայայտված զգացմունքին համապատասխան զգացմունքով: Թող նորա օրորոցի մօտ կանգնած լինի ոչ ծծմայր, այլ մի բոլորովին օտար անձն. թող խանդարէ նորա հանգստութիւնը և պատճառէ նորան մինչև անգամ անբաւականութիւն, բայց բաւական է որ այդ անձն սիրով ժպտայ նորա առաջ, և ահա



երևխան, զգալով, որ սիրումն իրան, սիրով պատասխանում է<sup>1)</sup>» :

Այս տողերը պարունակում են իւրեանց մէջ երևխայի կանոնաւոր մտաւորական կրթութեան բանալին: 'Աւերքին շարժողութիւնքը, որպէս և արտաքին զգացողութիւնքը բոլորովին զանազան են միմեանցից և անկասարար հանդէս են գալի: Սոցանից իւրաքանչիւրը, երբ իւր գործարանը արդէն բաւականին զարգացած է, գրգռվում է իրան յարմար աւարկայով այնպէս, ինչպէս աչքը գրգռվում է դէպի գործունէութիւն, երբ լուսի նշոյլները կամ ճառագայթները ընկնում են աչքի ցանցամաշկի կամ ցանցաթաղանթի վերայ (réine, СВЯТАЯ ОБОЮБОУ): Օ, որ օրինակ, դարձուցէք ձեր ուշը վեց ամսուայ երևխայի վերայ,—նկատեցէք, թէ որպիսի պատասխան են գտնում նորա մէջ զանազան գրգռողութիւնք, որոնցով շարժում են նորա զգացմունքները: Արբ նա թոյլ է, տխուր, անբաւական, և դուք սկսում էք գգուել նորան, սկսում էք երգել նորա համար քնքրոյշ, սիրալիր ձայնով, միթէ չէ՞ հանգստանում նա: Արբ որ դուք կամենում էք գրգել նորան գործունէութեան, ոգևորել նորան, միթէ չէ՞ք հասնում այդ վախճանին, աշխուժութիւն տալով ձեր շարժուածքներին, ձեր ձայնին: Այժմ նորա ներկայութեանը պատահի անհաճոյ խօսակցութիւն իւր ծծմօր և ուրիշն մէջ, միթէ չէ՞ յայտնում նա իւր անբաւականութիւնը, ասես թէ տհաճելի խօսքերը ուղղապէս վերաբերվում են իրան, կամ թէ միթէ չէ՞ պատահում, որ նա այդպիսի պարագայում անբաւականութիւնից սկսում է լալ ու աղաղակ բարձրացնել: Միթէ չէ՞ պատահած ձեզ նկատել, որ երբ փափկասիրտ և բարեհամբոյր մայրը մտնում է մանկանոց և, կարծելով մանուկին քնած, դառնում է դէպի ծծմայրը հանդարտ քաղցր խօսքերով, մանուկը ոգևորվում է և քաղցր ու սիրալիր ժպտով իրը աշխատում է դարձնել իւր վերայ մօր ուշադրութիւնը: Այլ մի օրինակ: Արբ մի ատելի, խոժոռադէմ ոմն յանկարծ մտանայ երևխային, միթէ սա երկիւղից աղաղակ չէ՞ արձակում, միթէ չէ՞ աշխատում նա թաղցնել նորանից իւր երեսը մօր կուրծքի վերայ: Մի խօսքով, երևխայի մէջ քնքրոյշ, սիրալիր զգացմունքներ զարթեցնելու և այդ զգացմունքներին կանոնաւոր զարգացումն տալու համար, հարկաւոր է մեզ վարուել նորա և ուրիշների հետ նորա ներկայութեան ժամա-

<sup>1)</sup> L'Education Progressive ou Etude du Cours de la vie, par M-me Necker de Saussure. Paris, 1836, 1838. 3 vol. in —8. Vol. 4, p. 144.

նակ քաղցրութեամբ ու սիրով, — և այդպիսի զգացմունքների արտայայտութիւնը բնականաբար կզարթեցնէ երեխայի մէջ զոցա համապատասխան գործարանների գործունէութիւնը: Դայց եթէ, ընդհակառակն, մեր վարմունքի մէջ երևի մարկութիւն, անբաւականութիւն, վատ բնաւորութիւն, երեխայի մէջ ևս դոքա կզարթեցնեն մի և նոյն զգացմունքները, և ուրեմն ձեռնառու կլինին զարգացնելու ուղեղն այն մասները, որոնք համապատասխան են այդ զգացմունքներին, և դորանով վատ զգացմունքները կարող են տիրապետել երեխայի սրտի մէջ մինչև նորա մահը:

Կարելի չէ չզարմանալ, թէ որպիսի մատաղ հասակից երեխայի մտաւորական ընդունակութիւնքը կարողանում են ընդունել իրանց յարմար գրգռողութիւնք, թող այդ գրգռողութիւնքը ներգործեն նոցա վերայ անընդմիջապէս կամ թէ համազգացութեան միջնորդութեամբ: Տիկին Աէկէէր դը-Պոսսիւրը պատմումէ յետագայ զարմանալի օրինակը, որին ինքը ականատես է եղած. «մանուկը (ղեռ ինն ամսական) ուրախ խաղումէր մօր ծունկի վերայ, երբ ներս մտաւ մի կին, որի խաղաղ երեսի վերայ նկարած էր խորին վիշտ: Ընդ ինչ նա մտաւ սենեակ, մանուկը կենդանացուց իւր բոլոր ուշադրութիւնը կնոջ վերայ, որին ճանաչումէր, բայց չունէր մի առանձին համակրութիւն դէպի նա: Մանուկի երեսը կամաց կամաց սկսաւ ցոյց առլ անհանգստութիւն, վերջապէս խաղալիքները դուրս թօթափեցան նորա ձեռքերից, նա սկսաւ լալ և արագութեամբ ընկաւ մօր կուրծքի վերայ: Ընդ բոլորն ոչ երկիւղի և ոչ ցաւակցութեան զգացմունքներն էին, որ նուաճեցին նորա սիրտը, — նա ինքն չգիտէր թէ ինչ էր զգում, և արտասունքների մէջ պարուակր դիւրութիւն իւր ծանր զգացողութեան»: Ընդպիսի փաստերը ցոյց են տալի, թէ որպիսի փութաջան ուշադրութիւն հարկաւոր է դարձնել ոչ թէ միայն ֆիզիքական, այլ և բարոյական պատճառների վերայ, որոնք ներգործում են երեխայի վերայ:

Չնոդքը, անկասկած, խորապէս կզգային այս նկատմունքի ծանրակշռութիւնը, եթէ ծանօթ լինէին ֆիզիոլոգիական օրէնքներին, եթէ կատարելապէս հասկանային այն փաստը, թէ խելքը գործ է կատարում ոչ այլապէս, եթէ ոչ մարմնական գործարանների միջնորդութեամբ և թէ կեանքի բոլոր ընթացքում միշտ կախ է այդ գործարանների դրութիւնից: Խելքը կարող է տեսնել ոչ այլապէս, եթէ ոչ աչքի միջնորդութեամբ, բայց եթէ աչքը փշաց-

ուած լինի խիստ ազդու կամ խիստ թոյլ գրգռողութիւններից,—  
 ըստ որում ենթադրուած է եղել լուսի խիստ փայլուն ճառագայթ-  
 ներին, կամ թէ պահուած է եղել կատարեալ խաւարի մէջ,— խելքը  
 այդպիսի դիպուածում ոչինչ կարող չէ պարզ տեսնել: \*Աս կարող  
 է լսել միայն ականջի միջնորդութեամբ, բայց եթէ այդ գործարանը  
 խանգարուի խիստ ազդու ձայների ներգործութիւնից, կամ եթէ  
 բժանայ վարժողութեան պակասութիւնից, խելքը կկորցնէ ձայ-  
 ներ լսելու և որոշելու ընդունակութիւնը: Այժմ է, ընդհակառակն,  
 աչքերը և ականջները վարժուած լինին պատշաճաւոր կերպով,  
 պատշաճաւոր աստիճանով և հարկաւոր զգուշութեամբ, որպիսի պա-  
 հանջումէ նոցա կազմուածքի քնքշութիւնը, այն ժամանակ տեսո-  
 ղութիւնը և լսողութիւնը կընրբանան, կկատարեն իւրեանց պաշտօնը  
 լաւ ու գործունեայ կերպով, որովհետեւ կատարելով այս պայման-  
 ները, նոցա գործարանները վարժողութիւնից կզարգանան կատա-  
 րելապէս և լաւ կընդունեն իրանց յարմար գրգռողութիւնը: Աւրա-  
 քանչիւր զգացողութիւն կարող է կատարելագործուիլ, իրան հա-  
 մապատասխան գործարանը վարժելով, բայց ոչ թէ վարժելով այլ  
 զգացողութեանց գործարանները: Աւրաքանչիւր ընդունակութիւն  
 կարող է վարժուիլ միայն այն առարկաներով, որոնք բնութիւնից  
 նշանակած են նորա համար իբրև գրգռիչ: Ոչ մի տեսակ դատողու-  
 թիւնք կարող չեն կատարելագործել տեսողութիւնը,— ոչ մի տեսակ  
 դպրոցական (սքոլաստիքական, *схоластический*) կանոններ կամ բնա-  
 զանցական (մետաֆիզիքական, *метафизический*) վարդապետութիւնք  
 չեն կարող տալ ականջին ընդունակութիւն ձայները հեշտութեամբ  
 որոշելու: Աւստեսնելու, լաւ լսելու համար կայ միայն մի հնար,  
 և այլ հնար չկայ.— հարկաւոր է վարժել աչքը— նայելով, ականջը—  
 լսելով, թէ ոչ, պէտք է գատապարտել իւր անձն միշտ անկատար  
 մնալու, երբէք զարգացած տեսողութիւն և լսողութիւն չունենա-  
 լու: Արարիչը տուել է իւրաքանչիւր զգացողութեան առանձին գոր-  
 ծարան, և եթէ այդ գործարանը փշացուել է կամ խանգարուել, մեր  
 կամքի բոլոր փոյժը և ջանքը կարող չեն տալ խելքին այն տպա-  
 ւորութիւնքը, որոնց համար միջնորդ այդ գործարանը նշանակած է:

Հալի թանկագին յայտնագործութեան շնորհքով, մեզ հա-  
 մար այժմ բոլորովին պարզ է, թէ ինչու առաջուայ ժամանակ մտա-  
 ւորական և հոգեկան զօրութիւնքը կրթելու համար գործածած բոլոր  
 ջանքը ու աշխատութիւնքը, համեմատաբար, անյաջող էին: Այժմ

մեր առաջև դրած են կանոններ, որոնց գործադրութիւնը տուաւ արդէն բաւականին օգուտ և խոստանումէ մեծ յառաջագիմութիւնք ապագայում: Մտաբանութիւնը<sup>\*)</sup> (փրենոլոգիա) ցոյց տուաւ մեզ, որ զանազան հակամիտութիւնքը, կիրքերը, դիտողութեան և մտածողութեան ընդունակութիւնքը բոլորովին անկախ են միմեանցից, և իւրաքանչիւրը նոցանից կատարումէ իւր գործը ուղեղի մէջ եղած, իրան համապատասխան, մասի միջնորդութեամբ, որ սովորաբար կոչվումէ նորա գործարանը, նա ցոյց տուաւ, որ այդ ընդունակութիւնքը գործունէութիւնը գրգռելու համար ունին տեսակ տեսակ առարկաներ: Աւերջապէս ցոյց տուաւ, որ մենք կարող չենք կրթել մարդու մէջ այս կամ այն զգացողութիւնը, զոր օրինակ—ճշմարտասիրութեան կամ ցաւակցութեան զգացողութիւնքը, միայն մտաւորապէս բացատրելով բարոյական պարտականութեան պահանջողութիւնքը, ինչպէս չենք կարող որպիսի և իցի գատողութիւններով կատարելագործել տեսողութեան կամ լսողութեան զգայարանքը: Մի խօսքով, ֆրէնոլոգիան լոյս տարածեց գաստիարակութեան գիտութեան վերայ, որը, կարելի է, գեա ոչ շուտով կգնահատեն պատշաճապէս, բայց կգայ ժամանակ, երբ որ այդ լուսի բարեգործութիւնը կբացուի իւր բոլոր ընդարձակութեամբ, և այն ժամանակ ազագայ սերունդը կգնահատէ նորան արժանապէս: Այս շարագրութեանս սահմանները չեն ներում ինձ կանգ առնել այստեղ և ցոյց տալ ֆրէնոլոգիայի բազմակերպ գործադրութիւնը երեխաների զարգացման և առ հասարակ կրթութեան կատարելագործութեան համար, բայց ես այնչափ պարտական եմ դորա ցոյցերին, որ կարող չեմ չխօստովանել այդ, նաև ներումեմ ինձ հաստատել, որ խոհեմ և լու-

\*) Մտաբանութիւն (phrenologie) նորադոյն գիտութիւններից միւն է, որ էրբ թէ հնար է տալի կառափի մեխն եւ նորա կորնթարգութեան (выпуклости) նայելով կըշտել մարդուս ընդունակութիւնը եւ բնաւորութիւնը: Սորա հիմնողը Հաւլըն էր, որ իւր աշակերտ Շպլերցզէյմի հետ բաւականին յառաջագիմութիւն ունեցաւ Եւրոպայի մէջ: Հաւլի գրութիւնը այս է. տաբանութիւնքը ուղեղի եւ կառափի մակերեսայինների մէջ միորինակ են ամենայն տեղ, ուղեղի կորնթարգութիւնը եւ զօգաւորութիւնը (вогнусты), Հաւլի կարծիքով, նշանակումեն մարդուս միքերը եւ պակասութիւնքը, ասել է թէ կարելի է կշտել այդ միքերը եւ պակասութիւնքը, նայելով կառափի վերայ եղած անհարթութեանց: Բայց Հաւլի այդ գրութիւնը մի քանի տարի Եւրոպայի ուշը դրաւելուց յետոյ այժմ մոռացումի մէջ է գտնվում: Ֆրէնոլոգիան եւ կրանիոլոգիան (զանկարանութիւն) անհնարին է այժմ գիտութիւն համարել, թէեւ այս մեր թարգմանած գրքի հեղինակը մեծ նշանակութիւն է ընծայում գոցա:

սաւորեալ մայրերին տալիս է զա կարողութիւն և հնարք հեռացնել շատ գժուարութիւնք, որոնք այժմ նոցա յուսահատութեան մէջ են ձգուած:

Ես լաւ գիտեմ, որ կայ մի խիստ տարածուած կանխակալ կարծիք, թէ և բոլորովին անհիմն և միասակար, այն է թէ Փրէնօլօգիան կրօնի թնամի է. գիտեմ նոյնպէս, որ այդ նախապաշարմունքի ազդեցութեամբ շատերը հաւատ չեն ընծայիլ մեր գովասանութեան այն բարեբեր պատուների, որ պէտքէ սպասել Փրէնօլօգիայից, տեղի տալով նորան կրթութեան մէջ: Բայց ես ասումեմ, որ, ընդհակառակն, Փրէնօլօգիայի գործադրութեան օգտակատութիւնը հաստատվումէ մանաւանդ այն բանով, որ նա անհրաժեշտապէս մօտեցնումէ մեզ դէպի Եստուած և ամբացնումէ մեր մէջ հնազանդութիւնը Եստուածային կամքին, ցոյց տալով մեզ, որ այդ հնազանդութիւնը է մեր ամենարարեբար առաջնորդողն ոչ միայն ծանրակշիռ իրողութեանց այլև մեր օրական, վայրկենական գործերի մէջ ևս: Այն շատ գիպուածներ, որոնց մէջ նա ցոյց է տալի մեզ շատ պարզ և շատ խրատական կերպով Եստուածային բազուկի ներկայութիւնը, շատ գիպուածներ, որոնց մէջ առանց այդ գիտութեան Եստուածային կամքը կիմար մեզ համար անհասանելի: Մեկնելով և բացատրելով թէ ինչ է մարդկային խելքը—այդ վեհագոյն գործը Եստուծու, Փրէնօլօգիան ճիգն է թափում կրօնը մեր մտքերի և զգացմունքների անբաժանելի մասն կազմելու: Այս ոչ թէ նպաստաւորումէ մեզ մոռանալ Եստուած և ընկղմել նիւթապաշտութեան խաւարի մէջ, այլ ընդհակառակն, Եստուծու գոյութիւնը և Աորա ամենակարողութիւնը այնպէս ակներև է կացուցանում մեր իմացականութեան առաջև, կարելի է ասել—համարեա թէ շոշափելի է կացուցանում մեր զգայարանքների համար, որ շնորհունել նոցա անկարելի է: Եստուած ճշմարտութեան աղբիւր է, բայց եթէ ճշմարտութեան գիտութիւնը գործածվումէ դէպի չարը, մեղաւորը մենք ինքեանքս ենք, չար շինելով այն, ինչ որ ինքն ըստ ինքեան բարի է: Իւրաքանչիւր ճշմարտութիւն աստուածեղէն է, և եթէ Փրէնօլօգիան ճշմարտութիւն է, ուրեմն նա բղխումէ Եստուծուց, և հետևարար բարի է: Ի հարկէ, Փրէնօլօգիական ճշմարտութիւնքը կարող են, որպէս և այլ տեսակ ճշմարտութիւնք, չարաչար գործածուիլ տգէտ կամ մոլորեալ մարդերից, բայց այդ բանը բոլորովին չէ ապացուցանում, որ այդ ճշմարտութիւնքը ինքն ըստ ինքեան

լինին վտանգաւոր կամ փնասահար, ինչպէս և կրօնի ճշմարտութեանց շարաշար գործածութիւնը չէ ապացուցանում, որ կրօնը է շարիք:

Կարող են կարծել, թէ յայտնելով այսպիսի բարձր կարծիք ֆրէնօլոգիայի արժանաւորութեան մասին, ևս սխալվումեմ, իբր այն պատճառով, որ ֆրէնօլոգիան իմ պարապմանցս սիրելի առարկան է: Ըսյց ևս կարող եմ նաև ցոյց տալ պատանիների բարոյական և կրթական դաստիարակութեանը մէջ շատ փորձուած մարդիկ, որոնք ֆրէնօլոգիայի վերայ ունին նոյնպիսի և մինչև անգամ առաւել մեծ կարծիք, թէև նորա և շին յայտնած այդ այսպէս պարզաբար, — որոնք խոստովանումեն, որ ֆրէնօլոգիան մեծապէս նպաստաւորումէ կրօնական ճշմարտութեանց ազդեցութեան տարածման և սաստկանալուն: ( ) րինակի համար յիշումեմ այս տեղ գեղեցիկ գործնական (практический) շարագրութիւնը պ. Ստուրի Վլասգուից <sup>1)</sup>: Ստուրմարանը, որի կառավարիչը էր պ. Ստուրն և որի մէջ նա մինչև և այս օրս ունի ջերմեանդ մասնակցութիւն, ինչպէս յայտնի է, շատ բարձր տեղ բռնումէ մեր կրթողական դպրոցների մէջ ոչ միայն մտաւոր զարգացման յառաջադիմութեամբ, այլ ևս առաւել յառաջադիմութեամբ բարոյական և կրօնական կրթութեան — թէ տեսական (теоретический), և թէ գործնական: Ըստ ուսումնարանի մէջ ընդունած կրթութեան եղանակը ունեցաւ այնպիսի փասաւոր հետեանքներ բնաւորութեանց բարեկրթութեան վերաբերութեամբ, որ հազարաւոր երեխաների մէջ, որոնք ստացած են կրթութիւն վարժապետական ուսումնարանի (école normale, нормальная школа) պատուական դպրոցներում, չկայ ոչ մինը, որ յետոյ զատապարտուած լինի որպիսի և իցէ մահապարտ յանցանքի համար. այս մտնաւանդ հարկաւոր է նկատել այն պատուական դպրոցի մասին, որ եօթը տարի սորանից առաջ կար Սալմարկէտում, «ամենայն արատութեանց իսկական կենդրոնում»: Ըհա ինչու Շ ռոյանդիայի ազատ Ըկեղեցին այնպիսի եռանդով և փութաջանութեամբ պահպանումէ այն դպրոցը, որի կառավարիչը պ. Ստուրնն էր: Ա իրոյիչած դպրոցը միանգամայն գրաւումէ այդ եկեղեցու ուշը այն պատճառով, որ երեխաներին տալիս է ոչ միայն ֆիզիքական և մտաւոր կրթութիւն, այլև կրօնական և բարոյական: Ըհա այս պատճառով

<sup>1)</sup> On the training System of Education, Religious, Intellectual and Moral, as established in the Glasgow Normal Training Seminary. (Եղանակ կրօնական, մտաւորական և բարոյական կրթութեան Վլասգոյական վարժապետական ուսումնարանի մէջ):

պ. Ստոււի հետաքրքրութեան արժանի շարագրութիւնը, որի մէջ բացատրած են այդ դպրոցումը ընդունած կանոնները և կրթութեան եղանակը, համարվումէր շատերից ամենալաւ հրահանգներից մինը, ուստի տասն անգամ տպագրութիւն ունեցաւ: Բոլորեքեանք, որոնք պարապումէն կրթութեան, մեծ գովեստով ընդունեցին այդ շարագրութիւնը, և ոչ ոք մի ակնարկութիւն անգամ չարաւ այն մասին, թէ այդ շարագրութեան մէջ բովանդակված կանոններից և գործնական ցոյցերից կարող է ծագել որ և է վտանգ, այլ ընդհակառակն մասնաւորապէս բարձր գնահատած էին կրօնական կրթութեան եղանակը, որ բացատրած է նորա մէջ:

Ստաբանութեան (Փրէնսլօգիայի) միանգամայն անվնասակարութիւնը ապացուցանելու համար, ես բաւական եմ համարում կըցորդել վերը ասածիս, թէ կրթողական կանոնները, որ պ. Ստոււն բացատրած է իւր շարագրութեան մէջ և ինքն գործադրած է այնպիսի ակնյայտի յաջողութեամբ, են իսկ և իսկ Փրէնսլօգիական կանոններ և բոլորովին համաձայն այն կանոններին, որը ես բացատրեցի այս իմ շարագրութեան մէջ: Այս բնաւ միտք չունիմ հաստատելու, թէ պ. Ստոււի կրօնական վարդապետութիւնը բղխումէ Փրէնսլօգիայից, կամ թէ որ ես բոլորովին համաձայն եմ նորա հետ հաւատի բոլոր պարագաների կողմանէ: Այս այժմ խօսումեմ միայն դաստիարակութեան և մտքի զարգացման լաւագոյն եղանակների վերայ, և ոչ թէ նորա վերայ, թէ որպիսի կարծիքներ կամ որպիսի գաղափարներ հարկաւոր է հաղորդել երեխաներին: Արովհետեւ իմ շարագրութեան նիւթը յատկապէս երեխաների կրթութիւնն է սոցա առաջին հասակում, ուստի ինձ համար ներկայումս միայն կրթութեան եղանակների խնդիրները ունին մեծ նշանակութիւն, այս կամ այն կարծիքի կամ վարդապետութեան արժանաւորութեան խնդիրը վերաբերվումէ այն հասակին, երբ երեխայի ընդունակութիւնքը արդէն ըստ բաւականին զարգացած են: Ահա ինչու ես այս իմ շարագրութեանս մէջ բաւական եմ համարում խօսել միայն եղանակների խնդրի վերայ: Պ. Ստոււն ոչ պակաս ինձանից ուշ է դարձրել պարզապէս որոշելու դաստիարակութեան և կրթութեան եղանակների խնդիրը այն խնդրից — թէ որպիսի փաստեր և կարծիքներ հարկաւոր է տալ դեռահաս խելքին ընդհանուր կամ կրօնական գիտութեան ձևով: Այս տեղ աւելորդ չէ նկատել, որ ինքն պ. Ստոււն իւր շարագրութեան մէջ ոչ մի տեղ չէ յիշում Փրէնսլօգիան, ոչ մի տեղ չէ յայտ-

նում, թէ Հետեւած է ֆրէնսլօգիայի ցոյցերին: Բայց մտածող կարգացողի համար նորա գրքի համարեա իւրաքանչիւր երեսը ցոյց է տալի անկասկածելի վկայութիւն, որ ֆրէնսլօգիան եղած է նորա մշտական առաջնորդողը: Բացի սորանից, առանց ֆրէնսլօգիայի օգնականութեան պ. Ստուն կարող չէր հաստատել այնպիսի ամենայն կողմանէ հարուստ կրթութեան եղանակ, որ նաև միանգամայն համապատասխանուէ բնութեան պահանջմունքներին:

Եթէ ֆրէնսլօգիան կարող չէ անգամ այլ օգուտ տալ մեզ, բայց եթէ յայտնի կացուցանել ուղեղի զանազան ընդունակութեանց մասնաւոր յատկութիւնքը, արդէն այդ ևս մեծ ծառայութիւն է կրթութեան գործին, ըստ որում այդ ընդունակութիւններից մինը դէպի գործունէութիւն շարժելու համար, անսխալ և ամենահետ միջոցն է անընդմիջապէս ենթադրել այդ ընդունակութիւնը իւրեան յարմար կամ համապատասխան առարկաների ազդեցութեան: Հանկարծ նրբացնել տեսողութեան զգացողութիւնը, մենք վարժումենք մեր աչքը փութաջանութեամբ և արագապէս գննելով շրջապատող առարկաները, նոցա գոյնը, մեծութիւնը, Հեռաւորութիւնը: Հանկարծ զարգացնել լսողութեան զգացողութիւնը, մենք վարժումենք մեր ականջը լսելով և ձայներ որոշելով,—և մեր յառաջադիմութիւնը որպէս լսողութեան, նոյնպէս և տեսողութեան կողմանէ համապատասխան է բնութիւնից մեզ պարգևած զգացողութեանց կարողութեան աստիճանին և նոյնպէս այդ զգացողութեանց վարժողութեան յարատևութեան ու կանոնաւորութեան: Դոյն իսկ կանոնը ցոյց է տալի մեզ, որ եթէ մենք, ճշմարտութեան ներքին ըզգացմունքը կատարելագործելու դիտաւորութեամբ, բաւականանանք դառնալով միայն դէպի խելքը և ասելով, ճշմարտասէր եղիւր, նոյնպէս սակաւ յառաջադիմութիւն կունենանք, որպէս և այն ժամանակ, երբ տեսողութիւնը կատարելագործելու դիտաւորութեամբ վարժէինք մեր ականջը, զանազան ձայներ որոշելով: Հաւակցութեան և մտերմութեան զգացմունքները զարգացնելու համար բաւական չէ դառնալ դէպի բանականութիւնը, այդ զգացմունքները գովարանելով, որովհետև գովեստները կարող են ներգործել բանականութեան վերայ միայն: Բայց մենք պէտք է ուղիղ դառնանք դէպի իսկ զգացմունքները, ցոյց տալով համակրութիւն և պատիւ, և նոցա առաջը գնելով կարեկցութեան առարկաներ, որ զժբաղտաբար, պակաս չեն մեր շորս կողմում: Եթէ զգացողութեան ա-



առջ գրուի նորան գրգռող առարկայ, երեսայի կամքից անկախ, այդ զգացողութիւնը կգրգռի դէպի գործունէութիւն այնպէս, որպէս գրգռվումէ տեսողութիւնը երբ ընկնումեն աչքի վերայ լուսի ճառագայթներ: Ինչպէս կարող չենք, որքան էլ որ ճիպն թափենք, շտեմող կամ չլսող լինել, երբ լուսի ճառագայթները զարկումեն մեր աչքերին կամ թէ ձայները հասնումեն մեր ականջին, նոյնպէս չենք կարող արգելել որ և է ներքին զգացմունքի դէպի գործունէութիւն գրգելուն, երբ որ այդ զգացմունքի առաջ դրվումէ նորան գրգռեցուցիչ առարկայ:

Եւս ճշմարտութիւնը հաստատելու համար ես կպատմեմ մի բաւականին սրտառուչ զիպուած, որը պատահեցաւ ինձ մի քանի տարի առաջ, երբ ես Խտալիայումն էի: Մի անգամ, առաւօտուն, ես գնացի բարեկամիս մօտ, որին սովորաբար յաճախ այցելութիւն էի անում, և դեռ նոր հասել էի նորա բնակարանը, յանկարծ ըզգացի տկարութիւն: Բարեկամս տանը չէր, բայց ես մտայ ներս և պառկեցայ դիվանի (թախտ) վերայ: Եւստով յետոյ մտաւ ներս անհաստատ քայլերով և ուրախ ուրախ ժպտալով մի փոքրիկ աղջիկ, որ շատ շատ մի տարի վեց ամսական էր: Այսելով վերաս, նորա դէմքը յանկարծ փոխուեցաւ, աւելի ծանրաբարոյ կերպարանք ընդունեց. յետոյ կամաց կամաց սկսաւ մօտենալ ինձ, կարեկցութեամբ վերաս նայելով, և վերջապէս բացագանչեց նա. «Cocore malato, cocore malato?» — «Բժիշկը հիւանդ է, բժիշկը հիւանդ է»: Եւս պատասխանեցի, թէ արդարեւ հիւանդ եմ. նա նայեցաւ վերաս ցաւակցաբար և յետոյ յանկարծ դուրս վազեց: Մի քանի րոպէից յետոյ վերագարձաւ նա մի կտոր հաց ձեռքում բռնած և, տալով նորան ինձ, ասաց քնքուչ ձայնով. «Pane cocore, pane; cocore malato» — «հաց, բժիշկ, հաց, բժիշկը հիւանդ է»: Եւս կծեցի փոքր ինչ, և նա ըստ երևութիւն խիստ բաւականացաւ զորանով և բոլոր ժամակ մնաց մօտս, մինչև որ ես զգացի թեթեւութիւն և դարձայ իմ տուն: Տարիուկէտուայ երեսայի այդպիսի սաստիկ համակրութիւնը մեծ զարմացք բերաւ իմ վերայ այն ժամանակ, և ես մինչև այժմ չեմ կարող յիշել զորան առանց մի ներքին զուարճութիւն զգալու, թէև այնուհետև անցել է արդէն երեսուն և վեց տարի: Մշ ապաքէն դա ցոյց է տալի մեզ գեղեցիկ օրինակ, թէ բարոյական զգացմունքը գրգռվումէ անընդմիջաբար դէպի գործունէութիւնը, լինելով երես առ երես իրան գրգռող առարկայ

Հետ: Այդպիսի մատաղ հասակում, երբ բանականութիւնը հաղիւ  
 թէ կարող է ունենալ որպիսի և իցէ առաջնորդող ազդեցութիւն  
 վարմունքի վերայ, ցաւակցութեան զգացմունքը զարթեցաւ յան-  
 կարծ փոքրիկ աղջկայ մէջ, իմ կրած նեղութիւնքը նորա աչքին  
 դպչելով, և յայտնուեցաւ ամենայն զօրութեամբ, գրգելով նորան  
 տալ ինձ ուտել, որովհետեւ կերակուրը մխիթարութեան միակ մի-  
 ջոցն է տկար խելքի տէր և չփորձուած երեխաների համար: «Աորա  
 ուրախութեամբ իմ վերայ նայելը, երբ ևս սկսեցի ուտել նորա բե-  
 րած հացը, և երբ զգացի թեթեւութիւն, նոյնպէս պարզ ապա-  
 ցոյց է նորա ցաւակցութեան և սիրու զգացմունքներին, որպէս եթէ  
 նա յայտնած լինէր այդ զգացմունքները խիստ վայելուչ խօսքե-  
 րով: Այս օրինակը միթէ չէ՞ ցոյց տալի այն ընդհանրապէս տա-  
 րածուած և յաճախ շատերին առաջնորդող կարծիքի սխալ լինելը,—  
 իբր թէ խելքն է միակ աղբիւրը մեր արարողութեանց և թէ,  
 ուրեմն, երեխայի կրթութիւնը պէտք է սկսած այն ժամանակից,  
 երբ խելքը արդէն բաւականին զարգացած է այն խօսքերը հաս-  
 կանալու, որով զանուամեն դէպի նա: Անուամենք հոգաբարձու-  
 թիւն երեխայի կրթութեան, թէ ոչ, այսու ամենայնիւ մեր կամ-  
 քից անկախ, կրթութիւնը, այսինքն բնաւորութեան զարգացու-  
 մը և զորա հետ միասին մտական զարգացումն, սկսվումէ կեանքի  
 շատ մատաղ հասակից: Մենք կարող ենք, ի հարկէ, ըստ մեր կամ-  
 քի, չսկսել առ ժամանակ երեխային կանոնապատշաճ կերպով դաս-  
 տիարակել մինչև որ դա մի որոշեալ հասակ առնու, հինգ կամ վեց  
 տարեկան լինի: Այց բնութիւնը անգործ չէ մնում, չէ սպա-  
 սում մեզ, և կրթութիւնը կատարվումէ ինքնուրոյնաբար, առանց  
 որ և է կարգի, անկանոն և շատ անգամ վնասակար կերպով, պատա-  
 հական սպաւորութեանց և ամենայն ժամ անզաղար նորա վերայ  
 ներգործող հանգամանքների ազդեցութեան տակ: Այլ այդպէս այդ  
 կրթութիւնը վաղումէ մեղանից առաջ, և շատ անգամ յառաջ է բե-  
 րում այնպիսի արգելքներ, որոնց դէմ յետոյ մեր բոլոր քանքը և  
 փոյթը լինումեն անօգուտ և իզուր: Ապրոցը չէ միայն, որ կըր-  
 թումէ մանուկին: Առարձանալով երեխայական խաղերով փողո-  
 ցում կամ բակում, մանուկը կարող է սովորել իւր պատահական  
 ընկերներից ծուլութեան և այլ արատութեանց, և որքան էլ որ ըս-  
 լինի դպրոցը, որի մէջ նա զատտիարակվումէ, արատաւոր և անա-  
 ոակ մարդու անբարոյական օրինակը կարող է ներգործել նորա վե-

րայ նոյնչափ ազգու կերպով, որպէս և կարգ ու կանոնի, գործունէութեան և առաքինութեան օրինակը:

Խորապէս զգալով այս ճշմարտութիւնը, պ. Ստօուն պնդելով պնդումէ բարոյական (ոչ մտաւորական) կրթութիւնը խիստ մատաղ հասակից սկսելու հարկաւորութիւնը: «Ա, ա սուսմէ, որ իւր տասն և ութ տարեկան փորձառութիւնը փառաւոր կերպով հաստատեց այս կանոնի ճշմարտութիւնը և համոզեց նորան, որ բարոյական կրթութեան ազդեցութիւնը աւելանումէ երկրաչափական կամ քանոնողական յարաբերութեամբ (геометрическая пропорция), բաղդատելով մատաղ հասակի հետ: Այլ թէ այդ ազդեցութիւնը տասն և երկու տարեկան երեխայի վերայ ընդունենք իբրև 1, ինը տարեկանի վերայ կլինի 2, եօթը տարեկանի վերայ 4, հինգ տարեկանի վերայ 8, երեք տարեկանի վերայ 16<sup>1)</sup>: Աս համոզուած եմ որ այդ ճշմարտ է և առաւել մատաղ հասակի վերաբերութեամբ. պ. Ստօուն չափաւորումէ երեք տարեկան հասակով այնոր համար, որ նորա դպրոցի մէջ երեք տարեկանից փոքր երեխայք չէին ընդունվում:

Հիմնաւոր կանոնը, որին պէտք է ամենայն կարողութեամբ հետեւենք բարոյական և կրօնական զգացմունքը, նմանապէս և մտաւորական ընդունակութիւնքը կրթելու ժամանակ, — է ֆիզիօլօգիական օրէնքի գործադրութիւնը, այսինքն վարժել այդ զգացմունքները և ընդունակութիւնքը, ուստի ծնողների և դաստիարակների համար շատ և շատ հարկաւոր է ուղղապէս հասկանալ այդ օրէնքը: Աս բացատրել եմ այդ մանրամասնաբար իմ շարագրութեան մէջ «Ֆիզիօլօգիա առողջութեան և կրթութեան գործադրելի», իսկ այս տեղ կնկատեմ միայն, որ կանոնապատշաճ և անընդհատ վարժողութիւնը է ուղիղ հնարը ներքին ընդունակութիւնքը և արտաքին զգացողութիւնքը զարգացնելու, լրագործելու և ամրացնելու: Սակայն ակներև է որ, այս կողմանէ հաստատ յառաջադիմութիւն ունենալու համար, մեզ հարկաւոր է իմանալ ներքին զանազան ընդունակութեանց յատկութիւնը, և նոյնպէս թէ որպիսի առարկաները կամ առարկաների որ յատկութիւնքը զարթեցնումեն սոցա գործունէութիւնը: Միայն ունենալով այդ գիտութիւնը, կարող ենք մենք զարթեցնել ներքին ընդունակութեանց գործունէութիւնը սոցա հա-

<sup>1)</sup> P. 16.

մապատասխան առարկաների միջնորդութեամբ այնպէս, որպէս կատարուենք այդ արտաքին զգացողութեանց վերաբերութեամբ:

Այս գիտութիւնից զուրկ լինելը և էր պատճառը այն դժուարութեանց, որոնց հանդիպումէին մայրերը և դաստիարակիչները դաստիարակութեան մէջ: Վանի որ շալլը չէր ցոյց տուած մեզ ուղեղի գործունէութիւնը, մեզ պակասումէր փիլիսոփայութիւն կամ որ և է տեսութիւն (теория) մաքի, որից կարողանայինք տեղեկանալ մաքի սկզբնական ընդունակութեանց գործակատարութեան և նոցա որքանութեան, կամ գոնէ հետեւեցնէինք որպիսի և իցէ կանոններ, որոնց գործադրութիւնը տար մեզ կարողութիւն նոցա ճանաչելու: Բայց այժմ շալլի յայտնագործութիւնքը, հաստատուն հիմն դնելով մաքի փիլիսոփայութեան, շատ զիւրացուցին մեզ համար մարդու գործնական—օգտակար կատարելագործութիւնը դաստիարակութեան միջնորդութեամբ: Այս տեղ անտեղի կլինէր երկար ու բարակ խօսել, թէ ինչպէս հեռացուց ֆրէնոլոգիան այն դժուարութիւնքը, որոնք արգելք էին դաստիարակութեան կատարելագործութեանը և առաջադիմութեանը, այդ մասին մանրամասն տեղեկութիւնք կարելի է գտնել նոյն իսկ շալլի և ուրիշ ֆրէնոլոգների (մտարանների) շարադրութեանց մէջ<sup>1)</sup>: Բայց ես աւելորդ չեմ համարում մի ծանրակշիռ նկատողութիւն անել այս տեղ մաքի ընդունակութեանց մասին, որ ֆրէնոլոգիան այս կամ այն հիման վերայ հաստատելով ընդունումէ իբր սկզբնական: Բոլոր այդ ընդունակութիւնքը կամ նոցանից մի քանիսը, որ աստիճանի որ նոքա սկզբնական են, զանազան

<sup>1)</sup> Gall «Sur les fonctions du Cerveau»; Spurzheim's «Phrenology»,—Philosophical Principles of Phrenology,—«Phrenology in Connection with the study of Physiognomy», եւ «Elementary Principles of Education»; George Combe's «Sistem» եւ «Elements of Phrenology»; «The Phrenological» Journal. 20 հատոր, եւ այլն:

Այս գրքի առաջին տպագրութեանց մէջ մաքի սկզբնական ընդունակութեանց համառօտ նկարագիր կար. իսկ այս տպագրութեան մէջ չէ մտած այս նկարագրութիւնը, պատճառ խիստ համառօտ է եւ հետեւաբար անօրօտ ֆրէնոլոգիային անձնօթ մարդերի համար: Յանկացողքը ծանօթանալ ֆրէնոլոգիայի հետ, պէտքէ ուսանին նորան շալլի, Սպուրջհայմի եւ Գլեորգ Կոմբի շարադրութեանց մէջ: Այս շարադրութեան հեղինակը ունի խորին համոզմունք, թէ ֆրէնոլոգիան մտքի միակ եւ ուզիչ փիլիսոփայութիւնն է եւ, ընայելով իւր բոլոր անկատարելութեան, կարող է մեծապէս մեծնտու լինել կրթութեան արուեստին: Նա այդ համոզմունքի տէր դարձաւ, շալլի շարադրութիւնը ուսանելով եւ ուշի ուշով այդ ֆիլիսոփայի եղբակցութիւնքը սեփական գիտողութեամբ եւ փորձերով հաստատելով: Տես «Life and Correspondence» by George Combe, 1850 (ծանօթութիւն Մեզլիական տպագրողի):

անհատների մէջ համազօր չեն, համեմատելով մինը միւսի հետ, և կարելի է շարժել նոցա գործունէութիւնը առանձին առանձին կամ բոլորը միասին, արտաքին զգացողութեանց նման: Վարի մարդու ճշմարտասիրութեան զգացողութիւնը կարող է պակաս լինել, որպէս լաւ լսող մարդը կարող է ունենալ պակաս զարգացած տեսողութիւն: Աոյն իսկ կերպով մենք կարող ենք ունենալ յուսոյ, պատուի զգացողութիւնք, մի և նոյն ժամանակ բոլորովին զուրկ լինելով բարութեան զգացողութիւնից, ինչպէս և կարող ենք հոտտել առանց տեսնելու: Փաստերի կամ երեւոյթների լաւ և ճիշդ դիտողը կարող է խիստ լեւեակաբար կշռել այդ փաստերը, իսկ լաւ մտածողը կարող է լինել շատ վատ դիտող: Արեւի է ունենալ մեծ ընդունակութիւն երկրաչափութեան, նկարչութեան, զանազան լեզուներ ուսանելու, և մի և նոյն ժամանակ լինել բոլորովին անընդունակ երաժշտութեան, մինչև անգամ երաժշտութեամբ զուարճանալու:

Այսպէս ուրեմն արտաքին զգացողութեանց և խելքի ներքին ընդունակութեանց մէջ կայ նմանութիւն ինչ, զոր օրինակ զգուշութեան զգացմունքի գործունէութիւնը չէ կարելի շարժել այլպպէս, եթէ ոչ երկխօսով, — կարեկցութեան զգացմունքը — վշտակրութեամբ, մտերմութեան զգացմունքը — բարեկամի մերձաւորութեամբ, ինչպէս և լսողութեան զգայարանքի գործունէութիւնը շարժվում է ձայնով, իսկ տեսողութեան զգայարանքին — լուսով: Աւրեմն խելքի ներքին ընդունակութեանց կրթութեան մասին մենք պէտք է հետեւենք նոյն իսկ կանոնին, որի գործադրութիւնը մեծ յաջողութիւն ունի արտաքին զգացողութիւնքը կրթելու ժամանակ, այսինքն այս կանոնին. իւրաքանչիւր ընդունակութիւնը հարկաւոր է վարժել իրան համապատասխան առարկաներով: Աւ արգարե ջանալ կատարելագործել բարոյական ընդունակութիւնքը խրատներով և պատուէրներով, որոնք վերաբերվում են միայն բանականութեան, նոյնպիսի տիմարութիւն է, որպէս եթէ լսողութիւնը կատարելագործելու մտքով սկսելնք վարժել հոտտելիքը և կամ տեսողութիւնը:

Աւրեմն, երբ մենք կամենում ենք նուազեցնել կամ բոլորովին վերջացնել այս կամ այն մտաւորական ընդունակութեան գործունէութիւնը, պէտք է աշխատենք հետացնել նորանից նորան գրգռող կամ զարմեցնող առարկաների ազդեցութիւնը, — այլպպէս ասեմ — պէտք է փութաջան աշխատենք «չտանել նորան ի փորձութիւն»: Էտեւելով այս կանոնին, մենք կարող ենք յաջողութիւն ունենալ,

որքան կներէ մեզ բնութիւնը, բայց եթէ միտ չենք գնիլ այդ կանոնին, մեր բոլոր ջանքը և աշխատութիւնը կլինին ի զուր, որովհետև կհակառակեն Մարտի օրէնքներին: Վորձութիւն բառը չունի այլ իմաստ և նշանակութիւն, եթէ ոչ անընգմիջաբար շարժել ընդունակութեան գործունէութիւնը, դորան գրգռող կամ զարթեցնող առարկայի ներգործութեամբ, որովհետև այն ինչ գրգռող առարկան ներկայանումէ ընդունակութեան, ընդունակութիւնը սկսումէ իւր գործունէութիւնը մինչև անգամ հակառակ մեր կամեցողութեան:

ԲԵՐՈՅԵԿԵՆ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ ԻՄԵՆԿԵԿԵՆ ԵՒ ՏԳՆՅԵԿԵՆ ՀՍՍԵՎՈՒՄ:

Այսպէս ուրեմն ամենայն ինչ, որ փոխումէ մարդու մարմնական կամ մտաւորական գրութիւնը, փոխումէ նորան դէպի լաւը կամ դէպի վատը: Ուրեմն, թէպէտ կրթութիւնը, այս խօսքի տեխնիքական նշանակութեամբ, սովորաբար սկսվումէ մանուկի արդէն հինգ կամ վեց տարեկան լինելուց յետոյ, բայց իրականապէս մանուկի կրթութիւնը կամ շրջապատող հանգամանքների ազդեցութիւնը նորա վերայ սկսվումէ նոյն իսկ ծննդեան օրից և ժամից, և շատ անգամ զնումէ հաստատ հիմն նորա մարմնական և մտաւորական զարգացման յառաջ քան նորա մէջ գիտակցութիւն զարթնելը: Այն բոլորից սկսած, երբ մանուկը կարողանումէ յայտնել իւր կարօտութիւնքը և զգալ բաւականութիւն նոցա կատարելուց, երբ նորա մարմնական գրութիւնը սկսումէ ակնյայտնի բաւանալ կամ վատանալ իւր վերայ ունեցած հոգատարութեան կանոնաւորութեան կամ անկանոնաւորութեան համեմատ,—այդ բոլորից, թէև խելքը տակաւին, համեմատաբար, անգործունէութեան մէջ է և զեռ ևս կարող չէ յղանալ մի որոշ միտք, երեսայի մտաւորական և բարոյական կրթութիւնը արդէն սկսած է և, մեր կամքից անկախ—խնամք տանումնք կրթութեան, թէ ոչ, շարունակումէ անընդմիջաբար (не прерывно), քանի որ շարունակվումէ նորածին էակի կեանքը:

Աթէ մայրը միշտ կունենայ իւր աչքի առաջ այս ծանրակշիռ ճշմարտութիւնը և, կրթութեան ժամանակ, կաշխատէ յարմարացնել

իւր ջանքը և փոյթը բնութեան օրէնքներին, նորա աշխատութիւնքը միշտ կ'վարձատրուին յաջողութեամբ երեսայի բազաւորութեան կողմանէ: Իսկ հակառակ դիպուածում նորա արարողութիւնքը կարող են պատճառել երեսային մեծամեծ վնասներ ոչ միայն առաջ, քան թէ նա կարող կ'լինի մտածել կամ գատել, այլ առաւել վաղ, քան թէ նա կտո՛րրի խօսել: Սովորաբար ներողամիտ մայրերը բնաւ չեն աշխատում ուղղել երեսայի ակնյայտնի պակասութիւնքը, արգարանալով թէ «մանուկը զեռ ևս խիստ փոքր է, զեռ ևս ոչինչ չէ հասկանում», և թէ այդ պակասութիւնքը ուղղելու զեռ ևս շատ ժամանակ կայ գիմացը, երբ որ մանուկը առաւել կ'մեծանայ և կ'զարգանայ: Բայց այդ բոլորովին սխալ կարծիք է: Արեխայի վերայ ներգործումէ ոչ թէ գաստիարակիչների խելքը, այլ նոցա սէրը և քնքշութիւնը զէպի նա: Հետաձգել երեսայի բարոյական կրթութիւնը, մինչև որ զարգանայ նորա բանականութիւնը, նշանակումէ թոյլ տալ որ մի քանի տարուայ ընթացքում անխոհեմ ներողամտութիւնը անարգելք զարգացնէ և ամբացնէ նորա մէջ անձնասիրական, վատթար հակամիտութիւնք և ախտեր, — մի խօսքով, այդ նշանակումէ շեխել որոմները, որ նոքա մեծանան, հասնեն և ցանեն սերմեր:

Մանուկը իւր գոյութեան առաջին ժամանակը մինչև այն աստիճան ենթադրուած է իւր ծնողների բնական զերազանցութեան ազդեցութեանը, որ, ըստ երևութին, ասես թէ հասկանումէ բնազգողարար, որ իւր կեանքի ապահովութիւնը և բարեկեցութիւնը պայմանաւորումէ նոցանից կախ լինելով, և նա, ինքն ըստ ինքեան անզօր լինելով, մեծ յօժարութեամբ հնազանդումէ նոցա, որոնք միշտ սիրով և քնքշութեամբ վարվումեն իրա հետ: Այս այնքան ճշմարիտ է, որ եթէ մանուկը կամակորութիւն է անում, չէ լուծ և կատարում իւր դաստիարակիչների խօսքը, այդ նշան է, որ նա ֆիզիքականապէս տանջվումէ կամ գրգռած է մի տեսակ անկանոնաւորութեամբ հոգատարութեան կողմանէ: Առաջին մատաղ հասակում տիրութիւնը, տհաճութիւնը ցոյց են տալի, որ իրօք կայ պատճառ նեղութեան, և ոչ թէ յառաջ են գալի կամակորութիւնից կամ ինքնահաճութիւնից: Արդիսի պատճառով և առաջ եկած լինի այդ նեղութիւնը, պէտք է ամենայն հնար գործածել այդ նեղութիւնը հեռացնելու համար, քանի որ չէ արմատացած և չէ թողել երեսայի մէջ այնպիսի հետքեր, որ յետոյ կարող են դառնալ առ յաւիտեանս անփարատելի:



Այսպէս զգացողութիւնքը սկսում են արտայայտուիլ շատ յառաջ, քան թէ խելքը այնչափ զարգացած կամ լուսաւորուած է լինում, որ կարողանայ կառավարել կամ առաջնորդել նոցա. ուրեմն եթէ ծնողքը յետաձգեն երեխայի բարոյական կրթութեան հոգսը մինչև սորա բանականութեան զարգանալը, դորա բնաւորութեան կազմակերպութիւնը և բարեբաղդութիւնը կոյր պատահմունքի ենթակայ կ'լինին: Խիստ բարեպատե՛հ հանգամանքների մէջ միայն բարոյական կրթութեան այդօրինակ յետաձգելուց յառաջացած փնասը, կարող է լինել, համեմատաբար, ոչ մեծ: Բայց եթէ սորա վերայ աւելացնենք շարաբարոյ, անձնասէր կամ շարամիտ վերակացուների կամ վատ ընկերների ազդեցութիւնը, երեխայի բնաւորութիւնը կարող է այնպէս սաստիկ փշանալ, որ յետոյ ամբողջ տարիների ընթացքում ունեցած ջանքը և աշխատութիւնը չեն կարող ուղղել նորան: Արոյ՛հեաւ երեխան չափազանց գիւրազգաց է, ուստի մայրը և ծծմայրը կարող են մեծ ազդեցութիւն ունենալ նորա բնաւորութեան վերայ մանկութեան ամենամատաղ հասակում անգամ:

Մատաղահաս երեխաների խնամատարութեան կողմանէ յաճախապէս պատահում են երկու տեսակ սխալ, որոնց պատճառը, կարելի է ասել, մարդու բնածին միտումն է — մի տարասահման դրութեան մէջ ընկնել, երկիւղ կրելով մի այլ այդպիսի համանման դրութիւնից: Այդ սխալներից մինը է այս. տալիս են երեխային համարեա անսահման ազատութիւն, ներողամտութեամբ և առանց հակառակութեան կատարում նորա խելքին բոլոր եկածը: Իսկ դորան հակառակ սխալը այն է, որ երեխայի զգացմունքները, հակամիտութիւնքը, հասկացողութիւնքը միշտ զտ՛հ բերվում են մօր զգացմունքներին, հակամիտութեանց, հասկացողութեանց կամ կարծիքներին, և երեխայի բոլոր կեանքը, մինչև անգամ մանր ու մունր, անշան բաների վերաբերութեամբ, սահմանաւորվումէ այնպիսի կանոններով և այնպիսի ճշգրութեամբ և կատարվում, որ բոլորովին հակառակ է այդ իսկ կանոնների ոգուն, նաև ունի շատ փնասակար ներգործութիւն երեխայի բարեկեցութեան և զարգացման վերայ: Այս կրթութեան առաջին եղանակը գործ դնելով երեխայի մէջ զարգանումէ սիստեմատիքական կերպով այնպիսի հզօր անձնասիրութիւն, որից բոլորովին եղձանջվումէ նորա բարքը ու վարքը: Իսկ երկրորդ եղանակը, հակառակելով անզաղար երեխայի ամենայն արարողութեանը, ճնշումէ նորա մէջ ոգու աշխուժութիւնը, և հետեւաբար նա առ յաւիտեանս մնումէ տխուր և անբաղդ: Աւշ

զարձնենք և երրորդ սխալների վերայ, որը շատ անգամ ունենում են տկարամիտ, բայց մի և նոյն ժամանակ կարգից դուրս խնամածու մայրերը այն պատճառով, որ դժբա և դաստիարակիչքը որից ասես հարցնում են խորհուրդ և իւրաքանչիւրի ասածը անխտրաբար կատարում են: պիսի սխալներ չանելու համար դաստիարակիչքը պարտական են աշխատել ծանօթանալ մանկական կազմուածքի բնութեան հետ. եթէ նոքա հասկանային այս բանը և իմանային թէ որպիսի ծանրակշիռ նշանակութիւն ունի դա երեխային լուսապէս խնամելու համար, այն ժամանակ կուրորէն չէին հետևիլ զանազան նախապաշարմունքների և առաւել կհաստատային փորձառու և լուսաւորեալ բժիշկների խորհուրդներին:

Մանկութեան մատաղ հասակում, որպէս և կատարեալ հասակում, խելքի և մարմնի ինքնակամ, բազմակերպ և ներդաշնակաւոր գործունէութիւնը, որ շարժվում է մեր ընդունակութիւնքը գրգռող առարկաների ազդեցութեամբ, է մեր ամենավեհ զուարճութիւններից մինը, եթէ միայն այդ ազդեցութիւնը չափազանց սաստիկ չէ. իսկ անգործունէութիւնը և ծուլութիւնը են ամենաստորինը: Մարդու աշխուժութիւնը և թմրութիւնը կամ պաղութիւնը, որը հասնում է ապշութեան, են երկու ծայրայեղ անչափութիւնք, որոնցից առաջինի հետ կապակից է գիտակցութիւն իւր բազաւորութեան, իսկ երկրորդի հետ—տիրութիւն և անբաւականութիւն: Մեր մտաւորական այս յատկութիւնից բնականաբար բղխում է այս հետևանքը, մեր ստացած վայելչութիւններից ամենավեհը և ամենամաքուրը այն է, որ գործունէութեամբ է ստացվում և բաւականացնում մեր վեհագոյն զգացմունքները—բարեսիրութիւնը, պատուասիրութիւնը, ամօթխածութիւնը յոյսը, զարմացողութիւնը, գաղափարականութիւնը (Идеальность), մնաց որ երբ դա զարգացած և լուսաւորեալ խելքով կառավարվում է: Ընդ հակառակն, երբ որ մենք անձնատուր ենք լինում ստորին, անձնասիրական հակամիտութեանց, իսկ մեր բարոյական և մտաւորական զօրութիւնքը թողնում ենք պարսպ ու անգործ, մեր զգացած բաւականութիւնը ոչ թէ միայն ստորին է ըստ տեսակին և ըստ աստիճանին, այլ և հետ զհետ նուազում է դա, վասն զի որքան մեր խելքը առաւել զարգանանում է, այնքան առաւել մենք գիտակցաբար հասկանում ենք մեր արարողութեան վատթարութիւնքը:

Երկուստեք ուրեմն, մեր գործողութիւնքը երեխաների առողջութեան և բարեբաղդութեան վերաբերութեամբ երեք կանոնի համ-

մատ պէտք է լինին: Առաջին—երեխայի խնամատարութիւնը նպաստաւորելու է մարմնաւոր և մտաւորական գործակատարութեանց պատշաճաւոր և կանոնաւոր վարժողութեան: Արկրորդ, այս վարժանին հետամուտ լինելով, հարկաւոր է զգուշանալ, որ մտաւորական գործունէութիւնը շափազանց սաստիկ չլինի, որ մի գուցէ այդ վարժուող ընդունակութիւնքը բթմանայ և տկարանայ: Արորդ, բաւականութիւն տալով հակամիտութեանց և զգացմունքներին, որոնցմով պայմանաւորումէ մեր ընդունակութիւնը ընկերական կեանք վարելու, հարկաւոր է մեծապէս աշխատել արմատախիչ անել ամեն տեսակ երեսպաշտութիւն, որ բոլորովին հակառակ է բարոյական զգացմունքներին, բանականութեան պահանջութեանց:

Միշտ, ամեն տեսակ գիպուածներում, պիտոյ է միտ զնել երեխայի կարօտութեանց, զգացմունքներին, բնութեան, որը շատ կողմանէ նմանապէս տարբեր է կատարեալ հասակ ունեցողների բնութիւնից, այսպէս մեր բոլոր արարողութիւնքը երեխային խնամելու ժամանակ պէտք է համեմատ լինին այդ կանոնին: Սորան համաձայն, հարկաւոր է տալ երեխային որքան կարելի է շատ ազատութիւն անձամբ անձին ընտրել իւր համար պարագմունք և զրօսանք,—ցանկալի է որ նա, կարողութեան շափ, ինքն լինի գլխաւոր գործակատարը իւր բնաւորութեան զարգացման և կազմակերպութեան: Սենք ուրիշ ոչինչ լաւագոյն չենք կարող անել երեխայի բարեկեցութեան և բարտաւորութեան համար, բայց եթէ տալով կատարեալ ազատութիւն գոհացնելու նորա զգացողութիւնքը, ցանկութիւնքը, մտաւորական պահանջողութիւնքը, եթէ գոքա ինքն ըստ ինքեան չեն պարտաւելի: Այս կողմանէ ստորագաս կենդանիները ներկայացնումեն մեզ խրատական օրինակներ: Աատուի ձագը կամաց կամաց զարգացնումէ իւր մկնակները, բնագոգողութիւնքը (ИНСТИНКТЪ) և իւր բնութեան որակութիւնքը բոլորովին ազատարար — ինքնակամ վարժելով, բայց մայրը իւր արթուն հսկողութիւնը երբէք չէ խնայում նորանից, թէև տալիս է նորան կատարեալ ազատութիւն, բայց սակայն միշտ պատրաստ է պաշտպանելու նորան վտանգի ժամանակ: Աթէ մայր—կատուն խափանաւորի լինէր իւր ձագի զուարճութեանը, պահանջելով, որ նա զուարճանար կամ խաղար որոշեալ կերպով, սկսէր և վերջացնէր խաղը այս իսկ կամ այն իսկ ժամանակ, այդպիսի պայմանի մէջ երկարատե չէին լինիլ նոցա մէջ համաձայնութիւն և փոխադարձական սէր: Բայց կատուն, առաջնորդուելով իւր

բնագրողութեամբ, թողլ է տալի իւր ձագին խաղալ ըստ իւր կամքին, և եթէ ոչ միշտ մասնակից է լինում նորա խաղերին, գոնէ երբէք խափանառիթ չէ լինում նորան առանց հարկաւորութեան: Իսկ երբ պատահում է այդպիսի հարկաւորութիւն, երբ նորա ձագին սպանում է մի որ և իցէ վտանգ, նա արագութեամբ և վստահութեամբ գործ է գնում իւր իշխանութիւնը, և նորա այդպիսի վարմունքը բնաւ տհաճութիւն չէ պատճառում իւր ձագին. փոքրիկ կատուն, ըստ երևութիւն, զգում է, որ մայրը սիրելով իրան վարվում է այդպէս, և երկու կենդանիքը շարունակում են սիրել միմեանց առաջուայ պէս:

Մշտ այս իսկ կանոնին հարկաւոր է հետեւել երեխան ինամելու ժամանակ: Տուէք նորան կատարեալ ազատութիւն զգալ և վարուել իւր սեփական թելազրութեամբ, եթէ միայն նորա զգացմունքները և վարմունքը ֆիզիքական կողմից չեն վնասակար և բարոյական կողմից չեն դատապարտելի: Բայց այդ միջոցին եղեք միշտ արթուն և միշտ պատրաստ արգելել նորա այդ վարմունքը կամ տալ գորա այլ լաւագոյն ուղղութիւն, եթէ անխոհեմ են: Հարկաւոր է արգելել երեխայի պատարակելի վարմունքը, չկատարել նորա անխոհեմ պահանջողութիւնքը, — և այս բոլորը պէտք է կատարուի քնքշութեամբ, սիրով, և մի նոյն ժամանակ հաստատ կերպով, որ զգայ մանուկը, թէ անտեղի է որ և է հակառակութիւնը և թէ չեն կատարում նորա ցանկութիւնը յատկապէս սիրելով նորան: Այդ օրինակ վարուելով, մանուկը հեշտ սովորում է հնազանդութեան: Արքան և մատաղ լինի նա, բայց կոյր կամ անհաստատ իշխանութիւնը, առանց բանականութեան հետեւելու գործ դրած, և ոչ թէ սիրով ոգևորուած, նորա համար նոյնչափ վերաւորիչ է և ծանր, որչափ և հասակաւորի համար, և որպէս հասակաւորին, նոյնպէս նորան ստիպում է ընդդիմութիւն ցոյց տալ: Ինչևէ անգամ իւր գոյութեան առաջին ամիսներում մանուկը արգէն որոշում է և գնահատում ճշմարիտ, խոհեմ սէրը, որ ունին դէպի նա, և յօժարութեամբ հնազանդվում է, երբ որ միայն վարվում են իւր հետ պատշաճաւոր հմուտութեամբ և առողջամտութեամբ: Այս պատճառով, եթէ երեխայի բնութիւնը լինի անձնասէր, մուսլ, հաճոյասէր, համարեա միշտ մեղաւոր են ծնողները, և ոչ թէ ինքն մանուկը:

Մտածիցս պարզ երևում է, որ ուրիշ լաւագոյն բան կարելի չէ անել երեխայի համար, բայց եթէ տալ նորան բոլոր հնարները ա-

ողջ, կանոնաւոր կերպով վարժելու իւր զանազան գործակատարութիւնքը և ընդունակութիւնքը, իրանց զարգացման աստիճանին համեմատ, և ձեռնտու լինել ընածին ձգտողութեանց, և ոչ թէ նորան մեր ձգտողութեանց ծառայեցնել, որովհետև գորանից ոչինչ լաւ հետեանք կարող չէ առաջ գալ, եթէ մինչև անգամ մենք կարողանալինք ևս մանուկը մի պաշուծապատան (կամ պաշուծակ) շինել, որը շարժէր ըստ մեր կամքին: Առաջին անգամից կարելի է կարծել թէ — այդ եղանակով մեծացած երեխայքը, այսինքն, անսովոր անկախաբար վարժելու իւրեանց ընդունակութիւնքը և անվստահ իւրեանց սեփական նախազգուշութեան և խոհեմութեան վերայ, այլ ընդ հակառակն, սովորած ամենայն բանի մէջ յուսալ ուրիշների խոհեմութեան վերայ, — կլինեն պակաս կամակոր և առաւել սիրող, քան թէ այն երեխայքը, որոնք մեծացած են առաւելագոյն ազատութեամբ: Բայց իսկապէս դուրս է գալի, որ այդպիսի կրթութիւնը, մանաւանդ նուազ ակամայեցած նա ունեցող երեխաներին գործադրելով կազմուձէ տկար և անվճռողական բնաւորութիւնք, որ միանգամայն ներհակ են այն ազատ և վճռողական բնաւորութեանց, որին սովորաբար վիճակվում են երեխայք, որոնք սովորած են մատաղ հասակից մտածել և գործել ինքեանք իւրեանց համար, ի հարկէ իւրեանց կրթիչների վերատեսչութեան և առաջնորդութեան տակ, բայց ոչ թէ նոցա թելադրութեամբ:

Չհասկանալով կրթութեան այս երկու եղանակների մէջ եղած զանազանութիւնը, շատ անգամ կրթում են երեխաները այնպէս, որ իբր թէ նոցա համար միօրինակ օգտակար է — անկախաբար վարժել իւրեանց ընդունակութիւնքը, թէ միայն կրաւորական գործիք լինել ուրիշների զգացողութեանց և մտքին: Բայց ամեն մտածող մարդ, որ փորձուած է կրթութեան գործի մէջ, որ դիտած է մատաղ խելքերի զարգացումն, անհրաժեշտապէս համոզվում է, որ կրթութեան առաջին եղանակը դրականապէս գերազանց է քան երկրորդը: Մեր դպրոցական կրթութիւնը բաւականին բարելաւացաւ վերջին տարիները այն իսկ պատճառով, որ սկսեցին առաւել ընդարձակօրէն գործ գնել աշակերտի ընդունակութիւնքը անկախաբար վարժելու կանոնը, որպէս զի նա կարողութեան շափ իւր խելքի զարգացման և գիտութիւն ձեռք բերելու ազատ գործակատարը լինի: Բայց ես հաստատում եմ, որ այս կանոնը պէտք է գործադրել լինի ոչ թէ միայն դպրոցների, այլ և մանկանոցների համար: Վաղազովեան

վարժապետական սեմինարիան (ուսումնարան), որի աշակերտները մեծ յառաջադիմութիւն ունին բարոյական և մտաւորական լուսաւորութեան մէջ, լիապէս խոստովանումէ այս կանոնի բարոյական մեծախորհուրդ նշանակութիւնը: Առողջ դատողութիւնը չէ՛ ասում մեզ արդեօք, որ եթէ մենք անտեղի և անխորհուրդ քնքշութեան պատճառով, ամենայն հոգացողութեամբ կատարենք երեխայի բոլոր ցանկութիւնքը և զգացմունքները, խափանառիթ լինելով նորա բնածին ձգտողութեանց ինքնակամ լցուցանելու ցանկացածը և զգացածը, եթէ միշտ չըջնենք նորա ուշադրութիւնը այն բանից, որ հաւանելի է նորան, դէպի այն բանը, որ մենք համարումենք նորա համար լաւագոյն, այն ժամանակ ոչ թէ միայն կզրկենք նորան բարձրագոյն վայելչութիւնից, որ ստանումէ նա երբ ինքնակախ գործ է կատարում իւր բնական պահանջողութեանց և հակամիտութեանց համեմատ, այլ նաև մենք խափանառիթ կլինենք նորա մտաւոր գործունէութեան զբողողութեանը, որ մեծապէս նպաստաւորումէ զանազան մտաւորական ընդունակութեանց զարգացման և կատարելագործութեան: Այն ընդհանուր փաստը, թէ մանուկը, տեսնելով ուրիշի արածը, բնազդողաբար բացազանչումէ, ես էլ կանեմ նոյնը, եղել է կարծեմ սկզբնական աղբիւրը այն մտքին, թէ հարկաւոր է մեծապէս շահաւէտ կացուցանել երեխաների այդ հակամիտութիւնը նոցա կրթութեան համար:

Բացի այս բոլորից, կրթութեան եղանակը, որին հետեւելով ամենայն բանը անուամեն երեխայի փոխանակ, առանց դրդելու նորան դէպի անկախ գործունէութիւն, որքան այդ կարելի է, — թող դորա հետ կապակից լինի ժամանակաւոր շնչին անյարմարութիւն անգամ, այդպիսի եղանակը ունենումէ մի անհրաժեշտ շարիք. մանուկը բնկնումէ անօգնական և անելանելի դրութեան մէջ, կամ թէ կորստարեր սխալներ է անում, երբ որ նա մնումէ միայնակ և ինքն իրան համար գործ է տեսնում, որը ուշ կամ վաղ, բայց անպատճառ պէտք է պատահի: Արթճ ասեմ, այդ եղանակին համեմատ կրթութիւն ստանալով, մանուկը սովորումէ հետեւել իւր գործակատարութեանց մէջ ուրիշի կամքին և ուրիշի զգացմունքներին, և ոչ թէ ընդհանուր կանոններին, որոնք միանգամ ձանաչած և սեփականած լինելով, կարողանային միշտ նորանց առաջնորդել: Այլապէս ասենք, կրթութեան այդ եղանակը պատրաստումէ մանուկը դէպի բարոյական ստրկութիւնը, և որքան կատարելապէս գործ է գրվում

ներու, որ ասածդ ու արածդ կարողանայ ունենալ նորա վերայ որպիսի և իցէ ազդեցութիւն: Եւ այց, ինչպէս ես արդէն մեկնեցի և բացարեցի նախընթաց գլխու մէջ, այդ կարծիքը բոլորովին սխալ է: Թէպէտ և մանուկը զեռ ևս կարող չէ ունենալ որպիսի և իցէ կանոնաւոր կամ ուղիղ հասկացողութիւն շրջապատող հանգամանքների վերայ, բայց արդէն և մատաղ հասակում, ինչպէս վկայումէ Կիլիկիէի Վէկէրի դը Սոսիւրի<sup>1)</sup> յառաջ բերած գիպուածը, նորա շորս կողմը պատահածը զարթեցնումէ մանուկի մէջ իրան համապատասխան բզզացմունքների գործունէութիւնը, և ուստի մանուկի խելքը ստանում է որոշեալ ուղղութիւն շատ առաջ, քան թէ նա ընդունակ կլինի գատողութիւն անելու: Արովհետեւ զանազան ընդունակութեանց և դոցա գործունէութիւնը շարժող առարկաների մէջ կայ բնական կապակցութիւն, ուստի շատ և շատ հարկաւոր է, որ մանկութեան ամենադիւրագոց ժամանակը անցանէ այնպիսի հանգամանքներում, որոնք զարթեցնումեն երեխայի մէջ մարդկային բնութեան լաւագոյն զգացմունքները և ընդունակութիւնքը: Արովհետեւ երեխայի մտաւորական և բարոյական զօրութեանց կրթութեան համար մենք չենք կարող ուրիշ լաւ բան անել, բայց եթէ պատշաճապէս հոգս տանել դոցա կանոնաւոր և մշտական վարժողութեան, սորանից պարզապէս հետեւում է որ երեխայի բնաւորութիւնը և հակամիտութիւնքը պէտք է անհրաժեշտաբար և մեծապէս կախուած լինին նոցա բնաւորութիւնից և հակամիտութիւններից, որոնց հոգատարութեան յանձնած է մանուկը և որոնց մէջ անցկացնումէ նա իւր կեանքի առաջին տարիները:

Եւ այցի սորանից, ներկայումս խիստ տարածուած է մի այլ չափազանց վնասակար համոզմունք, թէ կիրքերը և բարոյական յատկութիւնքը մտաւորական կրթութեան հետեւանքներն են, և թէ այդ պատճառով բաւական է տալ խելքին որոշեալ կրթութիւն և որոշեալ կանոններ մեր ցանկացած բարոյական զարգացման հասնելու համար: Եւ այդ մոլորութեան ազդեցութեան տակ ծնողքը շատ անգամ լինումեն անբաւական և վերզմայլութեան մէջ են ընկնում, երբ նոցա զուակները, չնայելով որ ընդարձակապէս ուսած են թէ այս կամ այն զգացմունքը կամ կիրքը զատապարտելի են, այսու ամենայնիւ հրապուրանքի առաջ չեն կարող զսպել իրանց, իսկոյն առաջուայ

<sup>1)</sup> Տես վերը երես 187:

նման անձնատուր են լինում այդ կիրքերին: Մարերախտաբար, մարդկութեան համար բարոյականութիւնը և կրօնը ունին առաւել հաստատուն հիմն, քան թէ անհաստատ խելքի եղբակացութիւնքը: \*Առքահիմնուած են մարդուս բնածին զգացմունքների վերայ, չեն կարող գոյանալ և ոչնչանալ ոչ մի տեսակ մտաւորական լուսաւորութեամբ և տգիտութեամբ, և լիապէս զօրանումեն և ստանում իրանց նշանակութիւնը միայն իրանց բնական յատկութեանց համաձայն կրթութեամբ և զարգացմամբ: \*Աման արտաքին զգացողութեանց, մտաւորական բնդունակութիւնքը պէտք է միշտ վարժուած լինին իրանց համապատասխան առարկաներով, միայն այդ ճանապարհով կարող են նորքա ունենալ պատշաճաւոր ազդեցութիւն բնաւորութեան վերայ և կատարելապէս առաջնորդել մարդուս արարողութեանց: Սխառմատիկական գործադրութիւնը այս կանոնի պէտք է սկսել համարեա երեխայի ծննդեան առաջին ժամից, և ամենայն ջանք և փոյթ գործ զնելու է մանուկը միշտ առողջ բարոյական մթնոլորտի մէջ պահելու: Ազու ուրախ գրութիւն, առողջ գատողութիւն, գիտութիւն, հնարագէտ և յաջողակ անփոփոխ քնքշութիւն և անկեղծաւորութիւն, — ահա որպիսի յատկութիւնք է պահանջում մօրից նորա պարտականութիւնը իւր զաւակի կրթութեան վերաբերութեամբ: Սակաւ են այնպիսի անհասներ, որոնք աէր են այդ բոլոր յատկութեանց, բայց այդու ամենայնիւ մեր պարտականութիւնը ճանաչելով մենք գոնէ առաւել ընդունակ ենք լինում կատարելու այդ պարտականութիւնը, քան թէ երբ հանգիստ և անմտաբար բաւականանումենք եղածով: Հաւալի է մտածել, որ շատ անգամ մայրերը, անհոգութեան կամ այլ պատճառով, երեխաների հոգաբարձութիւնը զլիսովին յանձնումեն այդ գործին միանգամայն անընդունակ ծառաներին, և երբեմն ինքեանք երեխաների առաջև տալիս են ազատութիւն իւրեանց բարկութեան կամ թէ իւրեանց ախտերին, որը կարող չէ չունենալ երեխաների վերայ յոյժ վնասակար ազդեցութիւն:

Արեմն, չխարենք մենք մեր անձը և միշտ միտքերս պահենք, թէ մենք ինքներս պէտք է լինենք առաջ այնպէս, որպէս ցանկանումենք որ լինեն մեր զաւակները: Այժմէ մենք ցանկանումենք, որ մեր զաւակները լինին քնքշույշ, ազնիւ, սիրող, ճշմարտասէր, արդարադատ, մենք ինքներս պարտական ենք ունենալ այդ յատկութիւնքը և մանաւանդ ունենալ այն աստիճանի զարգացած,



որ նոքա միշտ առաջնորդեն մեր արարողութեանց, ոչ թէ միայն մեր զաւակների, այլ և ամենի վերաբերութեամբ, և այն ժամանակ այդ յատկութիւնքը կզարթեցնեն մեր զաւակների մէջ համապատասխան ընդունակութեանց գործունէութիւնը, ինչպէս լոյսը զարթեցնումէ տեսողութեան գործունէութիւնը, հոտը—հոտոտելիքի: Աթէ մենք չենք կարող կառավարել մեր կիրքերը, և լինումնք երեխայի հետ երբեմն առաւել քնքոյշ ու սիրալիր, երբեմն զարմացնումնք նորան մեր ակտերով կամ խստութեամբ, այդպիսի դիպուածում մեր յոյսերը զարգացնել նորա մէջ բարոյականութիւն և արդարադատ բնաւորութիւն նոյնչափ անհիմն է, որչափ եթէ մենք յուսայինք փուշից խաղող քաղել: Ի զուր է պատասխանել, թէ մանուկը, չունենալով զեռ ևս զարգացած խելք, չունի կարողութիւն հասկանալ մեր վարմունքի վատութիւնը: Օգալու և դատելու ընդունակութիւնքը բոլորովին զանազան են միմիանցից, նոքա կարող են գործ կատարել, և արդարեւ երբեմն կատարումն իւրեանց պաշտօնը բոլորովին անկախ միմիանցից, զգացմունքները կարող են յայտնել վճիռը, մինչդեռ խելքը զեռ ևս կարող չէ տալ հաշիւ այդ վճռի մասին: Եւստ դիպուածներում մենք ստիպուած ենք լինում գործ բռնել յառաջ, քան թէ կրկարողանանք պատշաճապէս կշռել ու վճռել թէ ինչ է հարկաւոր մեզ անել, այդ ժամանակ մեր արարողութեանց առաջնորդումէ զգացմունքը, և սակաւ է պատահում, որ լաւ կրթութեամբ մարդը—այդ զգացմունքով հրապուրած—այնպիսի գործ տեսնէ, որ հակառակ լինի բանականութեան: Եւս փաստը մի արտադրութիւն է այն զարմանալի ներդաշնակութեան, որ թագաւորումէ ինչպէս Փիզիքական, նոյնպէս և բարոյական աշխարհում,—այն ներդաշնակութեան, որ անհնարին է կացուցանում, որ լաւ արարմունքը, բացի իւր բարի նպատակից, կապակից չլինի ուրիշ երկրորդական բարի հետեւանքների հետ, կամ թէ ձգտողութիւնը դէպի չարը, բացի անընդմիջական չարիքից, չունենայ և այլ երկրորդական չար հետեւանքներ: Օր օրինակ, եթէ մայրը, ունենալով սէր դէպի իւր զաւակը, կուզէ իւր բնաւորութեան պակասութիւնքը այնպէս, որ նորա բոլոր արարողութեանց առաջնորդողը լինին բարձրագոյն և անխի զգացողութիւնք, դորա բարի հետեւանքը միայն երեխան չէ վայելում,—նա ինքն մայրը կդառնայ առաւել առողջ և առաւել բազմաւոր: Աւ ընդհակառակն, եթէ մայրը կտայ պատուութիւն իւր կիրքերին, անձնասիրութեան, հաճոյասիրութեանց, անարդարազա-

տութեան, գորանից վնասը ոչ միայն ինքն է կրում, այլ և մանուկը կլինի զժրատագ: Առաջին դիպուածում նա կարժանանայ հասարակաց սիրուն և յարգանքին, իսկ երկրորդում—կղառնայ ամենի համար երկիւզի և ատելութեան առարկայ:

Խիստ մոլորութեան նոքա, որոնք կարծումն թէ մի և նոյն նշանակութիւնը ունի յանձնել երեխայի հոգատարութիւնը խելօք, գործունեայ, սիրալիր կնոջ, թէ—յիմար, անգործունեայ, ծոյլ կնոջ: Բարեբարոյ և երեխայի բնութեան վերայ ուղիղ հասկացողութիւն ունեցող մայրը կարող չէ չխոստովանել, թէ որպիսի մեծախորհուրդ նշանակութիւն ունի երեխայի համար միշտ խելացի, բարեկիրթ, բարոյական մարդերով շրջապատած լինելը, կարող չէ չխոստովանել, որ յանձնելով իւր զուակի հոգաբարձութիւնը այդ գործին անընդունակ մարդոց իւր պարտականութիւնը երեսի վերայ թողած պէտք է լինի: Մօր վերայ կայ բնական պարտականութիւն խնամք տանել իւր զուակի բախտաւորութեան համար,—նա է սորա բնական դաստիարակիչը, և մի՞թէ կարելի է յուսալ, որ օտար մարդը—թող որպիսի ընդունակութեանց տէր և լինի նա—կարողանայ երեխայի համար լաւ մօր փոխանորդը լինել:

Թէպէտե ևս խիստ վեր եմ դասում մօր ազգեցութիւնը և նախամեծար եմ համարում, կամ, գոնէ, չեմ համարում նորան ստոր այն ազգեցութիւնից, որը կարող են ունենալ ուրիշ լաւագոյն և ընդունակագոյն դաստիարակիչները, բայց այսու ամենայնիւ ևս բոլորովին միտք չունիմ նուազեցնել խելօք, բարեբարոյ, համեստ, փորձառու դայեակների ծառայութեան արժանաւորութիւնը և զինը: Անդհակառակն, ևս մինչև անգամ ոչ փոքր բաւականութեամբ շտապումեմ վկայել, որ ինձ քանիցս պատահել է տեսնել այնպիսի դայեակներ, որոնք իւրեանց յատկութիւններով և տեղեկութիւններով երեխաներին հոգաբարձութիւն անելու առաւել ընդունակ էին, քան թէ այդ երեխաների մայրերը, և թէ ևս շատ անգամ եղած եմ ականատես նոցա անձնազոհ և անխոնջ աշխատութեան, իրանց ինամատարութեան յանձնած երեխաների բարեկեցութեան համար: Այն պակասութիւնը, որ եթէ ունին դայեակներից շատերը, համարեա կապակից են սոցա դրութեան հետ հասարակութեան մէջ և սոցա ստացած կրթութեան անկատարելութեանց հետ: Այս եթէ նոքա, չիմանալով մարդկային բնութեան օրէնքները, չնայելով իւրեանց բարի գործելու ցանկութեան, երբեմն պատճառումն վնաս երեխաներին, այդ պա-

տահումէ նոցա հետ ոչ այնքան յաճախ, որքան մայրերի հետ, որոնց զուակաները մեծացնումն: Հոյց տալով սխալները և մոլորութիւնքը երեխաների խնամատարութեան վերաբերութեամբ, ևս ունիմ աչքիս առաջև երեխաների բարեկեցութիւնը, և ոչ թէ կամենում Կախարակէլ դայականներին այն պակասութեանց համար, որոնցից նոցա համարեա անհնարին է ազատուել:

Բաւական չէ, որ մայրը և տան մարդիկը քնքշութեամբ և քաղցրութեամբ վարուեն երեխայի հետ. հարկաւոր է որ մի և նոյն ժամանակ մէկ մէկու հետ ևս այդպէս վարուեն: Այս արդէն ասացի, որ հարկաւոր չէ բարկանալ երեխայի առաջև, վասն զի բարկութիւնը կարող է ունենալ շատ փնասակար ազդեցութիւն նորա վերայ, թող անգամ այդ բարկութիւնը ուրիշին վերաբերուի:

Մեծագէտ զինաւորվել էին երեխայական դպրոցներին զէմ, հաստատելով, թէ խիստ վաղ է սկսել երեխաների կրթութիւնը երկու տարեկան հասակից: Պատասխանում ևս այդ նկատողութեան, որովհետև երեխայի կրթութիւնը ինքն ըստ ինքեան սկսում է կապէս այն վայրկենից, երբ դարձում է նորա մէջ գիտակցութիւն, սորանից ծագում է յետագայ խնդիրը, որն է լաւը—արդեօք երեխայի սկզբնական կրթութեան պատահական լինելը, թէ այդ կրթութիւնը յարմարեցուցած նորա բնական որակութեանց: Առիւ թէ ուրիշները ինձանից շատ վատարանում էին մանկական դպրոցները, որոնք ոչ այլ ինչ են, եթէ ոչ կատարեալ արգելանոցներ երեխաների համար, ուր նոցա շարժարումն զանազան մտաւորական և սխալաստիկական անպէտք բաներով: Աւրիշներից ոչ պակաս հասկանում ևս և խոստովանում այն բոլոր փնասք, որ այդ դպրոցները պատճառում են երեխաներին: Բայց այս տեղ հարկաւոր չէ մոռանալ, որ այդ դպրոցները եղծանուած օրինակ են այն բանի, ինչ որ ինքն ըստ ինքեան լաւ է: Առիւ թէ կարելի է երեխայի ֆիզիքական, բարոյական և կրօնական կրթութեան համար հնարել դպրոցից լաւ բան, դպրոցից, որի մէջ երեխայը կրթվում են միասին, ուր նոցա զգացմունքները և ընդունակութիւնքը վարժվում են միշտ յարաբերութեամբ մէկ մէկու հետ, և ուր նոցա ֆիզիքական զօրութիւնը, աշխոյժը զարգանում են և ամրանում նախանձի ազդեցութեամբ, որը յառաջանում է սովորաբար իրար նմանների հետ կապակցութիւն ունենալուց: Աւս մանկական դպրոցը պէտք չէ լինի բանտարկութեան տեղ երեխաների համար, պէտք է շնորհալի և ձանձրացնէ նոցա

մատուցողական պարագմունքով, այլ միայն պէտք է վարժէ նոցա զգացողութիւնքը և դիտողական ընդունակութիւնը, գոհացնելով նոցա հարցասիրութեան, որը այնպէս բնական է մանկական մատաղ հասակին: Նարկուոր է պարապեցնել երեխայք ցոյց տալով նոցա զանազան առարկաներ կամ նկարներ, դարձնելով նոցա ուշադրութիւնը ցուցած առարկաների գոյնի, ձևի, յատկութեան, գործածութեան վերայ,—մի խօսքով երեխաների հետ պարապելու ժամանակ հարկուոր է անպատճառ կատարել վերը բացատրած պայմանը.—[Թէ այս կամ այն ընդունակութեան գործունէութիւնը շարժելու համար, հարկուոր է առաջարկել այդ ընդունակութեան այնպիսի առարկայ, որը անմիջաբար շարժումէ նորա գործունէութիւնը <sup>1)</sup>: Բայց եթէ, փոխանակ հետեւելու բնութեան ցոյցերին, պարապեցնենք երեխայքը բառական խրատներով, նորան կտոժորեցնենք միայն ձայները թուժակի պէս արտասանել, առանց ամենեին հասկանալ տալու այն առարկան կամ միտքը, որոնց յայտարարքն են այդ ձայները: Արեխայքը սովորաբար ունին ձիրք և ընդունակութիւն արագութեամբ սեփականելու իւրեանց վարժապետների կամ ընկերների հնչմունքները (ЗВУКИ), բայց նոցա խելքը մի և նոյն ժամանակ բոլորովին չէ հասկանում ինչ որ յայտնում են այդ հնչմունքները: Խիստ շատ անգամ պատահել է ինձ տեսնել մանկական դպրոցների մէջ ինչպէս երեխայքը ճշգրութեամբ և անսխալ կարգով արտասանում են այս կամ այն երգի, ոտանաւորի բառերը, իսկ ինքեանք մի և նոյն ժամանակ ասես թէ պիտի վայր գլորվէին իւրեանց տեղերից, այնպէս տանում էր նոցա քունը: Այդպիսի պարագաներում ես սովորաբար տալիս էի նոցա հարցեր—երգի, ոտանաւորի, բովանդակութեան վերաբերութեամբ, բազմակերպելով մի և նոյն հարցը զանազան եղանակով, և մնում էի խիստ բաւական, եթէ գոնէ մի քանիսը նոցանից ցոյց էին տալի փոքրիկ նշան, որ հասկանում են թէ ինչ են նշանակում իրանց արտասանած բառերը: Արեխաների հարցաքննութեան ժամանակ—ոչ այն յիմար եղանակով, որ սովորաբար գործածվում է—համարեայ միշտ

<sup>1)</sup> Գեղեցիկատրական զգացողութիւնը (զազափարականութիւն, Впечатлительность) կարելի է մեծ յառաջագիմութեամբ զարգացնել դպրոցների մէջ ոչ թանկ, բայց գեղեցիկ նկարներով և այլ գեղարուեստական բաներով: Այդ տեսակ բաների պատշաճաւոր գործածութիւնը զարգացնում է երեխայի ճաշակը և ձեռնտու է լինում նորա բնութեան անարատութեան: Առ հասարակ երեխաների կրթութեան ժամանակ չեն գործնում այս բանի վերայ հարկուոր ուշադրութիւն:

երևում, որ նոքա չունին բոլորովին այնքան հասկացողութիւն, որքան, ըստ երևութիւն, հարկաւոր էր սպասել նոցանից, միտ գնելով նոցա հասկացողութեան ապացոյցներին, որ առաջարկումն նոցա վարժապետները: Բայց այս բոլորը ամենին չէ ապացուցանում, որ փաստակար է գործ գնել կրթութեան կանոնաւոր եղանակը մատաղ հասակից: Այդ ապացուցանում միայն, որ մինչև այժմ շատ բան երեխաների կրթութեան մէջ կատարվում էր ոչ համաձայն ճշմարիտ կանոններին, և թէ այն գիպուածներում անգամ, երբ վարժապետները կամ դաստիարակիչները առաջնորդվումն կրթութեան կանոնաւոր եղանակով, այդ եղանակի գործադրութիւնը իրօք ոչ միշտ լինում էր գոհացուցիչ: Այս վկայում է նոյնպէս, որ հարկաւոր է առաւել մեծ ուշադրութիւն դարձնել, քան թէ որքան դարձնումն այժմ, իւրաքանչիւր երեխայի մատուցական գրութեան վերայ, և վերջապէս ցոյց է տալի հարկաւորութիւնը կրթիչների համար առաջ ուսանել երեխաներին կրթելու արուեստը, և միայն այդ պայմանով նոցա աշխատութիւնքը կրթութեան մէջ կլինին միանգամայն բարեբեր:

Հասարակութիւնը սովորել է գլխաւորապէս կրթութիւն համարել միայն մատուցական լուսաւորութիւնը, և ծնողները առ հասարակ այնպէս սակաւ արժանաւորութիւն են տալիս լաւ խնամատարութեան ազդեցութեանը երեխաների բնաւորութեան կազմակերպութեան վերայ, որ թէպէտ և ես վախենում եմ վերջապէս ձանձրացնել կարգացողիս, անգագար կրկնելով մի և նոյնը, բայց չեմ կարող չկրկնել էլ մի անգամ, որ իմ կարծիքովս մանկական դպրոցները շատ շահաւէտ են երեխաներին համար, ըստ որում այդ դպրոցների մէջ միմեանց հետ յարաբերութիւն ունենալով գլխաւորապէս զարգանում և կանոնաւոր կերպով վարժվում են մեր ներքին զգացողութիւնքը և ընդունակութիւնքը: Մեր զգացողութիւնքը և ընդունակութիւնքը անմիջաբար վերաբերվումն ուրիշներին, և այդ պատճառով առանձնական կեանքը զրկում է մեզ այն առարկաներից, որոնք զրկում կամ բաւականացնում սոցա գործունէութիւնը: Արելի է ունենալ մտերմութեան զգացմունք դէպի մի որ և է մարդ, վախենալ մարդուց, լինել արգարադատ կամ քնքոյշ վերաբերութեամբ որ և է մարդու, բարկանալ մարդու վերայ, աշխատել արժանանալ որ և է մարդու յարգանքի: Ուրեմն այս Լստուծուց պարզեա՞ծ ընդունակութիւնքը զարգացնելու և մեր շահին գործածելու համար, անշուշտ, հարկաւոր է ապրել մեր նմանների հետ,

որ յարարերու թեամբ նոցա հետ գործունէարար և միշտ վարժունն—  
Ճշմարտասիրութեան, քնքշութեան, համբերութեան և փոխադար-  
ձական յարգանքի զգացողութիւնքը: Մենաւոր կեանքի մէջ, ընդ-  
հակառակն, մեր բազմակերպ ընդունակութիւնքը չունին իւրեանց  
գործունէութիւնը գրգռելու համար այլ առարկայ, բացի մեր անձից:  
Պարզ է, որ այդպիսի պարագայում,—չլինելով մարդիկ, որոնց կա-  
րողանային վերաբերուիլ մեր սիրու և մտերմութեան զգացմունք-  
ները և որոնց հետ կապակցութիւն ունենալով, կարողանայինք մեկ  
մեկու ներողամիտ լինել և մեկ մեկու հետ ճշմարտութեամբ գործ  
տեսնել,—մեր բարձրագոյն և անաչառ ընդունակութիւնքը, որոնք ա-  
ռաւելագունապէս ձեռնառու են մեր բարեբախտութեան, ակամայ կա-  
մօք մնումն առանց ամենայն վարժողութեան, և մենք միանգամայն  
զրկվումենք այն արդիւնքներից, որ կարելի էր քաղել նոցանից:  
Ահա հղօրագոյն հերքողութեանց մէկը ընդդէմ առանին կրթութեան  
և դաստիարակութեան:

Չեմ կարող շանել մի այլ ակնարկութիւն, թէ և անցողաբար,  
այն մոլորութեան վերայ, որ ես համարումեմ շատ վտանգաւոր, որ  
մեծապէս փնտաակար է կացուցանում մանկական դպրոցները: Աստի-  
արակիչները սոխորաբար ֆիզիքական և բարոյական կրթութիւնը հա-  
մարումն մի երկրորդական բան, մինչդեռ դա պէտք է լինի դոցա  
համար առաջին կարգի արժանաւորութեան առարկայ, դոքա մեծա-  
պէս հետամուտ են լինում մանկական դպրոցները սոխորական ուսում-  
նարանների դարձնել, դպրոցական դասատւութեամբ, ուսուցանելով  
հաւատի զանազան մութն բաները, որ երխաների համար միանգա-  
մայն անհասկանալի են: Աս շատ լաւ գիտեմ, որ դաստիարակիչ-  
ների գիտաւորութիւնքը ըստ մեծի մասին շատ վեհ և ազնիւ են:  
Իայց գիմելով իրանց նպատակին, այն է վաղօրօք սերմանել և ար-  
մատացնել երեխաների մէջ կրօնական զգացմունքը, նոքա գնումն  
այն ճանապարհով, որը ակնյայտնի հակառակ է մարդկային ընդունա-  
կութեանց աստիճան առ աստիճան զարգանալու կանոնին, որը նա-  
խասահմանած է ինքն Աբրահիւսը: Միթէ այլապէս չէինք վարուիլ,  
եթէ հարկաւոր լինէր սոխորացնել ոչ կրօնը, այլ մի ուրիշ առար-  
կայ: Այժմէ մարդկային կեանքի բաղդաւորութիւնը կախուած լինէր  
ոչ թէ մարդու բարեպաշտ լինելուց, այլ ընդարձակ թուարանական  
գիտութիւնք ունենալուց և այդ գիտութիւնքը յաջողութեամբ գործ  
գնելուց իւր արարողութեան մէջ, մեզ կհարկաւոր էր լուծել այս

հարցը, ի՞նչպէս հարկաւոր է դաստիարակել մարդը, որ նա թուարանական ընդարձակ տեղեկութեանց տէր լինի, որ այնչափ հարկաւոր է նորա բարեկեցութեան համար: Հարկաւոր է արդեօք սովորացնել նորան մատաղ հասակից արիֆմետիքական կանոնները և Նշվկլիդի խնդիրները (предложение), — թէ հարկաւոր է ընտրել այլ ճանապարհ, առաջ խնամք տանել նորա ֆիզիքական և մտաւորական զարգացման, զգացմունքների և ընդունակութեանց կրթութեան, որոնք կարեւոր են շրջապատող առարկաները գիտելու համար, և յետոյ անցնել դէպի թուերը, յարաբերութիւնքը (отношения), համեմատութիւնքը (пропорция), երբ որ զոցա համապատասխանիչ մտաւորական ընդունակութիւնքը բաւականին զարգացած կլինեն զոցա հասկանալու և գործ գնելու համար: Բննայն ոք, անկասկած, կհամաձայնի, որ վերջին ճանապարհը է լուսագոյնը, և թէ մատաղ հասակում սովորացնել երեխային արիֆմետիկայի կանոնները և Նշվկլիդի խնդիրները կնշանակէ միայն ի զուր նեղացնել նորան և ազդել նորան ատելութիւն դէպի թուարանական պարագմունքները: Ի հարկէ, կարելի է մանուկը թուլթակի պէս բերանացի կսովորէ, կրկրկնէ յիշողութեան օգնականութեամբ թուարանական այս կամ այն կանոնը, բայց նա չի հասկանալ նոցա, իսկ գիտութիւնը առանց հասկանալու միանգամայն անպտուղ է և երկար չէ մնում գլխու մէջ: Իսկ եթէ մենք կհետեւենք բնութեան ցոյցերին, մանկութեան առաջին տարիներում կպարսպեցնենք մանուկը ընդարձակապէս և կանոնաւոր կերպով ծանօթանալու շրջապատող առարկաներին, նոցա յատկութեանց, այդ կերպով մենք կգնենք շատ հաստատուն հիմն նորա համար ապագայում թուարանութիւնը յաջողութեամբ սովորելու, որովհետեւ կրթութեան այդպիսի եղանակը ոչ թէ միայն կտայ նորան գիտնական կանոնները գործ գնելու հարկաւոր տեղեկութիւնք, այլև, նորա ձիրքերի զարգանալուց յետոյ, կշինէ նորան առակել ընդունակ կանոնաւոր կերպով գնահատել իւր ստացած գիտութեանց կամ տեղեկութեանց գործնական (практическое) նշանակութիւնը:

Այնք վերաբերվում է և երեխաների կրօնական կրթութեան: Ես համոզուած եմ, որ մարդու համար չկայ այլ տեսակ բախդ, եթէ ոչ այն բաղդը, որը ունի ճշմարիտ կրօնական հիմն, և ես ոչ պակաս ուրիշներից համարում եմ ցանկալի, որ երեխաների մէջ որքան կարելի է վաղ տպաւորուած լինի զգացմունքը, — թէ մարդս

անմիջաբար կատուած է Աստուծուց: Սիտ զնելով խելքի նուազութեանը և զգացմունքների գործունէութեանը մանկութեան հասակում, եւ պնդումեմ, որ երեխան, սովորելով բերանացի յիշողութեան օգնականութեամբ կրօնական նորա համար անըմբռնելի վարդապետութիւնը (ДОГМА), կարող չէ նա բարեպաշտ դառնալ, որպէս, սովորելով բերանացի արհիմետիքական կանոնները կամ երկրաշափական խնդիրները, կարող չէ նա դառնալ թուարան: Բայց մենք կհասնենք միանգամայն ուրիշ հետեանքների, եթէ, հետեւելով բնութեան ցոյցերին, կսկսենք կրթութիւնը փութաջանութեամբ զարգացնելով զգացմունքները, հակամիտութիւնքը և դիտողական ընդունակութիւնքը, որոնք իրանց գործունէութիւնը ամենամատաղ հասակում անգամ յայտնի են կացուցանում, իսկ կրօնական խնդիրների սովորելը, որոնք որ խելքի հասկացողութեան են վերաբերվում, կթողնենք մինչև առաւել կատարեալ հասակը: Այս ճանապարհով մենք կարող ենք աստիճան առ աստիճան զարգացնել երեխայի մէջ պնդագոյն և առաքինի հակամիտութիւնք, որ կազմումեն հաստատուն և լուսագոյն հիմն ճշմարիտ բարեպաշտութեան: Եթէ հաւատի էութիւնը և պահանջողութիւնը լինէր միայն եկեղեցական սպասուորութեան արտաքին ծէսերը կատարել և հաւատի մի քանի մութն բաներին հաւատալ, այն ժամանակ կարելի կլինէր, ի հարկէ, ոչ թէ արդարացնել, այլ գոնէ բացատրել այդ ձգտողութիւնը—գաստիարակելու բնութեան ցոյցերին հակառակ:

Արքան ուղեն մեծակշիռ նշանակութիւն ունենան կրօնական վարդապետութիւնքը մեզ ուղղեորելու կատարեալ հասակում կամ թէ մեզ այս կամ այն աղանդի մէջ պահելու կողմանէ, այսու ամենայնիւ նոցա գիտնալը չէ գլխաւորագոյն մասն անձնական կրօնի, մնաց որ գոքա կազմումեն այդ կրօնի այն մասը, որը առաւելապէս անհասկանալի և անըմբռնելի է մանկական և տղայական հասակներում: Արօնական վէճերը ոչ միայն երբէք կարողացած չեն հաստատել խաղաղութիւն և բարի կապակցութիւն մարդերի մէջ, այլ ընդհակառակն ամենայն ժամանակ եղած են գլխաւոր պատճառը շատ խտագին և կամակոր հակառակութեան, որը շատ անգամ խուար է տարածել քրիստոնէական աշխարհի վերայ, և միշտ կլինեն—որի մասին եւ մեծ երկիւղ կրումեմ—անկարգութեանց և խռովութեանց հարուստ աղբիւր մինչև որ դադարին հաւատը մտաւորական վարժողութեանց և խորիմաստ ու մութը խորհրդածութեանց



ասպարէզ շինել: Հաւատը, այս խօսքի ճիշդ նշանակութեամբ, գործ ունի ուղղապէս մեր անարատ և բարձրագոյն զգացմունքների հետ: Հիսուսի Քրիստոսի վարդապետութեան մէջ անդադար կրօնական է, թէ հաւատի գլխաւոր էութիւնն է «լսել սրտին», իսկ «լսել սրտին», կեանքի ոչ մի հասակում չէ կարելի այնպիսի յառաջագիտութեամբ, ինչպէս մանկութեան հասակում: Այսպէս ուրեմն, ոչ թէ միայն կարելի է, այլև պէտքէ սովորացնել կրօնը մատաղ հասակից, բայց հարկաւոր է սկսել սրտի կրօնից: Պատուել հայրը և մայրը, լինել արգարադատ, ողորմած և ներող, բարի անել մեզ շիրողներին, չլինել նախանձոտ և խտասիրտ, այս պարտականութիւնքը կազմումեն ճշմարիտ կրօնի նոյն էական մասն, որպէս և պաշտելը մի ճշմարիտ Աստուած: Այս պարտականութեանց պատշաճաւոր կատարումն կախուած է առաւելապէս մեր բարոյական բնութեան կանոնաւոր զարգացողութիւնից, քան թէ մեր մտաւորական կատարելագործութիւններից կամ ձիբքերից, ասել է թէ նոցա կատարման աստիճանը կատարեալ հասակում մեծապէս կախուած է նոցա վարժողութեան աստիճանից մանկութեան հասակում, երբ որ զգացմունքներին հեշտ կարելի է տալ հարկաւոր ուղղութիւն: Մենք կարող ենք հաւատացած լինել, որ եթէ սկսենք մատաղ հասակից բանել մանուկը ուղիղ և ճշմարիտ ծանապարհով, նա կատարեալ հասակում, չէ մոլորուիլ, չէ շեղուիլ նորանից: Բայց այդ նպատակին կարելի է հասնել միայն երեսխային տալով հարկաւոր և պատշաճաւոր կրթութիւն, և ոչ թէ ուսուցանել նորան զանազան կրօնական վարդապետութիւնք կամ ծէսեր: Հարկաւոր չէ անձնատուր լինել հասարակութեան մէջ տարածուած թեթեամիտ կարծիքին, իբր թէ հաւատը կընկնի վտանգի մէջ, եթէ մանկական զբոսոյցները կրաւականան իւրեանց գլխաւոր աւարկայով—ֆիզիքական և բարոյական կրթութեամբ: Ճշմարտութիւնը վկայումէ միանգամայն դորա հակառակը, որովհետև մատաղ հասակում ճշմարիտ կրօնի հաստատուն հիմը պարունակվումէ իւր կենդանի, իսկական գոյութեան մէջ, որը արտայայտումէ երեսիան իւր սիրովը և մտերմութեամբը: Իսկ դորան հասնելու համար հապիւ թէ կայ ուրիշ լաւագոյն հնար, բայց եթէ լաւ մանկական զպրօցներ, — բացառութեամբ, ի հարկէ, այն դիպումներից, երբ որ երեսխայքը շրջապատած են լինում բարեկիրթ մարդիկներով և մեծանումեն լաւ շրջանի մէջ, ազնուագոյն զգացմունքները շարժվումեն դէպի գոր-

ծունէութիւն իրանց ծնողների և ընկերների լաւ օրինակներով, և միշտ վարժվումեն կատարելով հասարակաց կեանքի պարտականութիւնքը:

Որպէս զի կարգացողս շերկմտի, թէ արդեօք ունիմ ես բաւականին հիմն պատարակելու կրօնի դաստիարակութիւնը մեր մի քանի մանկական դպրոցների մէջ, և թէ արդեօք իրաւապէս այդ դաստիարակութիւնը այն աստիճանի վեր է մանկական խելքի զօրութիւնից, ինչպէս ես հաստատումեմ,— խնդրումեմ կարգալ այս քաղաւածքը մի փոքր շարադրութիւնից, որը լոյս տեսաւ արդէն վերոյիշեալ իմ նկատողութիւնքը կրօնական դաստիարակեան վերայ առաջին անգամ տպագրելուց յետոյ: Աս յոյս ունիմ, որ այս քաղաւածքը կհամոզէ կարգացողներս, որ իմ նկատումներս ճշմարիտ են: Ա վերոյիշեալ շարադրութիւնը ունի այս վերնագիրը. «The Heart; Lessons for the Jeung, by J. Ferguson, Teacher of the Model Infant-School, Edinburgh».

(Սիրտ. դասեր երեխաների համար. շար. Ֆէրգիւսօնի, Օրինակական մանկական Գպրոցի վարժապետին, Լշդիերուրդ): Յառաջարանութեան մէջ, որի տակը գրած է. փետրուար, 1847 թուակ., հեղինակը ասումէ, թէ դպրոցի տեսուչը հաւանութիւն է տուել նորա շարադրութեան և ընդունել է «իբրև օգտակար հրահանգ (руководство) երեխաների կրթութեան համար», և թէ ինքն հեղինակը համարումէ զորան «օգտակար և յարմար» իւր փոքրիկ աշակերտների համար: Աողմնասիրութեան ստուերը անգամ ինձանից հեռացնելու համար, ես ծայրէ ի ծայր կարտադրեմ առաջին և վերջին դասերը, և կնկատեմ այս տեղ, որ առաջին դասը որքան և իցէ յաջողագոյն է: Խնդրումեմ կարգալ այդ երկու դասը մեծ ուշադրութեամբ և կարգալով մտածել, ո՞րպիսի միտք կարող է ունենալ նոցա բովանդակութիւնը երեք, չորս կամ հինգ տարեկան երեխայի համար:

Առաջին դասի վերնագիրն. Սիրտ. զորա նիւթը սուրբ Գլբքից է առած և է յետագայ ասացուածը. «Սիրտը մութ է»:

- 1) Ո՞վ է ասում այդ խօսքերը. — Ըստուած:
- 2) Ո՞ւմ է ասում նա այդ. — Ըմենեցուն:
- 3) Ի՞նչ բանի վերայ է խօսում նա. — Սրտի վերայ:
- 4) Ի՞նչ է ասում Ըստուած ամենեցուն սրտի վերայ. — «Սիրտը խորոզ է, շար, սխալալ, ո՞վ կարող է իմանալ կամ ճանաչել նորան»:
- 5) Ի՞նչ են Ըստուածու բոլոր ասացուածները. — Կորա են ճըլ-

մարտութիւնք. (Թուղթ առ Տիտոս, գլ. Բ, համ. 2, և Սաղմոս, գլ. ԺԲ, համ. 7):

6) Ի՞նչու է ասում մեզ Մատուած, թէ մեր սիրտերը չար են.—Որ մենք ցանկանանք ունենալ նոր սիրտ: (Յայտ, գիրք Յով. առաք. գլ. Գ, համ. 17, 18, Լեւտար, ըստ Յովհ, գլ. Գ, համ. 7, 29):

7) Կարող էք դուք յառաջ մերել սուրբ Գրքից այն ասացուածը, որի մէջ Մատուած խոստանումէ նոր սիրտ նոցա, ով որ կցանկանայ ունենալ նոր սիրտ.—«Կտամ ձեզ նոր սիրտ և կնորոգեմ ձեր մէջ նոր ոգի, կհանեմ ձեր մարմնից քարեղէն սիրտը և կտամ ձեզ սիրտ մարմնեղէն»: (Սարգ. Եզեկ, գլ. Լ, Գ, համ. 26):

8) Ե՞րբ մարդը սկսումէ լինել բաղդաւոր.—Երբ նա ստանումէ նոր սիրտ:

9) Ինչու սկսումէ նա լինել բաղդաւոր, ստանալով նոր սիրտ.—Որովհետեւ նա սկսումէ սիրել Մատուած: (Թուղթ առ Հոով, գլ. Գ, համ. 5):

Սերջին, 24-դ դասի վերնագիրն է. «Օգէնք», նորա առարկան—ասացուածը սուրբ Գրքից «Սահ և կեանք լեզուի իշխանութեան ներքոյ են»:

1) Գալիլան ճրպիտի զէնքի օգնականութեամբ յաղթեց Սամսոնին.—Իւր լեզուի օգնականութեամբ:

2) Ե՞րբ դա բացեց և յայտնեց նորան իւր սիրտը.—«Երբ նա ամենայն օր թախանձանքով խնդրումեր նորանից, այնպէս որ նորա հոգին մաշուեցաւ ցաւից»:—(Գիրք Գատաւորաց, գլ. Ժ, Գ, համ. 16):

3) Ի՞նչ է ասում Մատուած Սողոմոնի բերանով Գալիլայի նման կանանց վերայ.—«Սահից դասն է այն կինը, որի սիրտը թակարդ է և որոգայթ, իսկ ձեռքերը—շղթայ, կապանք»:—(Լկ-զէսիաս, գլ. Լ, համ. 26):

4) Կարո՞ղ էք դուք մի աղօթք ասել, որը յարմար լինէր այս սրտի ստութեան վերաբերեալ դասերին.—«Տուր ինձ սիրտ սուրբ, Մատուած, և հոգի ուղիղ նորոգի՛ր իմ մէջ»: (Սաղմ. գլ. Ծ, համ. 12):

Մհա ձեզ երկու օրինակ այն դասերից, որ գրած են օրինակական մանկական դպրոցի համար և որը սովորացնումեն նոյն դպրոցի երեխաներին: Տարակոյս չունիմ, որ այդպիսի դասերը իրան յանձնած երեխաների մաքերի մէջ տպաւորելու ցանկութիւնը աղնիւ և պա-

տուական նպատակ է ունեցելը,—և ահա այս պատճառով շատ դժուար է ինձ յայննել կասկած կամ անհաւանութիւն այն ճանապարհի արժանաւորութեան մասին, որը ընտրել է նա իւր նպատակին հասնելու համար: Բայց սակայն խորապէս զգալով մեծախորհուրդ նշանակութիւնը այն առարկաների, որոնց վերայ խօսում եմ, կարող չեմ լսել և շատել թէ, իմ համոզմամբ, և՛ հեղինակը, և՛ տեսուչը զպրոցի, որը հաւանել է և զովել այդ դասերը, գտանվում են շատ վտանգաւոր մոլորութեան մէջ<sup>\*)</sup>: Այս բոլորովին չեմ կասկածում, որ այդ մանկական զպրոցներում կրթուող երեխաների մեծ մասը կարող են բերանացի սովորել այդ դասերի խօսքերը: Բայց արի տես, որ այդ դասերը—օրինակ, վերջին դասը,—կատարելապէս հասկանալու համար ոչ միայն հարկաւոր է ընդարձակ տեղեկութիւն ունենալ Աստուածաշնչից և լաւ գիտնալ մարդկային բնութիւնը, այլ նաև հարկաւոր է փորձառու և զարգացած մտքի տէր լինել, ուստի մի՞ թէ չեն մոլորվում նորա, որոնք կարծում են թէ երեխաների համար կարող է լինել օգտակար այս կամ այն կողմանէ և այս կամ այն աստիճանով բերանացի սովորել բառերը, որ մանկական խելքին պէտք է թուեն միանգայն անիմաստ: Այդպիսի դասատուութիւնը ոչ թէ անօգուտ է, այլ և վնասարեւ կորուստ ժամանակի և աշխատութեան: Փորձեցէք տալ սովորել բերանացի այդ դասը երկու անգամ մեծ հասակով երեխային, և յետոյ ուշի ուշով և անաչառ քննեցէք և տեսէք, թէ որքան մանուկը կրկարողանայ ըմբռնել այդ դասի մէջ պարունակուած միտքը: Այս հաւատացած եմ, որ այդ փորձից յետոյ դուք չէք պահանջիլ այլ ասպացոյց համոզուելու, թէ ոչ այդպիսի ճանապարհներով կարելի է անկել փոքրիկ երեխաների մէջ ճշմարիտ կրօնը: Երջպատողների զգացմունքները, բնութիւնը, վարմունքը, մտքուր և բարձր կրօնի պահանջողութեանց համաձայն, նաև երբեմն մի քանի բացատրողական նկատողութիւն կամ պատմութիւն, այս բոլորը առաւել մեծ օգուտ կրերէ երեխայի բարեպաշտութեան, միտ դնելով նորա խելքի տպաւորականութեան, քան թէ բոլոր կրօնը, հաւատի բոլոր վարդապետութիւնքը բերանացի լով սովորելը: Ասարակաց փորձը վկայում, որ

\*) Այս խօսքերը գրած լինելուց յետոյ, վերջիչեալ զպրոցը անցաւ ուրիշի մեռք և այժմ չէ կոչում օրինակական մանկական զպրոց: Բայց սակայն ևս բացի այս զպրոցից, մենք ունենք շատ երեխայական զպրոցներ, որոնց կարող են վերաբերուիլ լիապէս հեղինակի խօսքերը:

մանուկը առաւել հեշտութեամբ հասկանում և պատասխանումէ, երբ անմիջաբար դառնումն գէպի նորա զգացողութիւնքը, և թէ, ընդհակառակն, նա մնումէ բոլորովին համր, երբ դառնումն գէպի նա այնպիսի խօսքերով, որ նորա մատաղ խելքը կարող չէ հասկանալ և գնահատել:

Արյուսամ, որ ասածիցս պարզ երևումէ, թէ ամենայն բան, որ ներգործումէ երեսայի արտաքին զգայարանքների վերայ, որ զարթեցնումէ նորա ներքին զգացողութեանց գործունէութիւնը, կամ որ գրաւումէ նորա դիտողականութիւնը, հարկաւ ներգործումէ նորա մտաւորական գրութեան վերայ, կամ, այլապէս ասել, է գործիք նորա կրթութեան: Մինչև անգամ տեղադրութիւնը և կլիմայական պայմանները, որոնց մէջ ապրումէ մանուկը, նորան շրջապատող առարկաները, սովորական անցքերը, որոնք արժանայիշատակ են առնում նորա կեանքի օրերը մանկանոցի մէջ, և ոգին, որը արտայայտվումէ այդ անցքերի մէջ, նորան զբաղեցնող խաղերը,— այս բոլորը ներգործումէ նորա վերայ և դառնումէ լուսաւորեալ մօր տեսութեան տակ նորա զգացմունքները և խելքը կրթելու գործիք: «Վզուելով շունը կամ կատուն երեսայի առաջև»,—ասումէ տիկին Աէկկէր զը Սօսիւրը, այն հմուտ դիտողը, որի վերայ մենք քանիցս մասնացոյց եղանք,—«մենք զարգացնումենք նորա մէջ սիրոյ զգացմունքը գէպի կենդանիք, ցոյց տալով նորան մի օրպիսի և իցէ գեղեցիկ առարկայ և դարձնելով նորա ուշադրութիւնը այդ առարկայի մանրամասն պարազանների վերայ, մենք վարժումենք նորա դիտողականութիւնը և զարթեցնում նորա մէջ զարմացման զգացողութիւնը, որը հոգու գլխաւոր շարժողութիւններից մինն է: Դացանելով և դարսելով նորա առաջև զանազան առարկաների ձևակերպութիւնք, կամ նկարներ, մենք զարթեցնումենք նորա մէջ երեակայութիւնը, և այսպէս հազարաւոր զանազան ճանապարհներով կարող ենք վարժել նորա մէջ զարթած ընդունակութիւնքը: Մեկ անգամ շարժուած լինելով գէպի գործունէութիւն օրպիսի և իցէ տպաւորութեամբ, երեսայի խելքը բմրանումէ այդ տպաւորութիւնը և, անդադար վարժուելով, ստանումէ կարողութիւն պարզ ու ճիշդ դիտողութիւն անելու: Այսպէս խելքը ինքն իրան վարժումէ և կատարելագործում: Խելքի կրթութեան համար մանկութեան հասակում պէտք է աշխատել, որ երեսայի տպաւորութիւնքը լինին բազմակերպ, բայց ոչ շափից դուրս, և մի և նոյն

ժամանակ ներդործեն, կարելի եղածին չափ, նորա ամբողջ բարոյական բնութեան վերայ: Այդ ևս լուսագոյն ճանապարհն է կրթելու բարոյական զգացողութիւնքը, որ այդ հասակում կարօտ են շատ փութաջան հոգատարութեան <sup>1)</sup>:

Այս արդէն երկարօրէն խօսեցայ այն մասին, թէ հեշտագոյն հնարը մտաւորական ընդունակութեանց գործունէութիւնը զարթեցնելու համար է անմիջաբար ներգործել նոցա վերայ համապատասխան առարկաների միջնորդութեամբ: Մայց թէև խիստ պարզ է այս կանոնը և խիստ արդիւնաւոր սորա գործադրութիւնը ընդունակութեանց զարգացման և դոցա դէպի կենդանի գործունէութիւն շարժելու համար, որը գեղեցիկ կերպով բացատրուեմք վերը բերած քաղուածքը տիկին Ալեկէրի շարադրութիւնից, — բայց այնու ամենայնիւ խիստ սակաւ ենք տեսնում ծնողներ, և մինչև անգամ առանձնապէս ուսած դաստիարակիչներ, որոնք կատարելապէս դնահատէին այս կանոնը և գիտակցարար գործ զնէին: Ինձ պատահել է տեսնել, ինչպէս ծնողները գիտութեամբ շարժումէին երեխայի բարկութիւնը այս կամ այն թշուառ կենդանու կամ որ և է խաղալիկի դէմ, նոքա զուարճանումէին տեսնելով երեխայի անզօրութիւնը իւր բարկութեան սաստկութիւնը բաւականացնելու: Այս բանը նոքա անումէին, բոլորովին չկարծելով, որ գորանով զարգացնումեն երեխայի մէջ ամենավատթար կիրքերը:

Այս բոլորից կարելի է անել այս եղբակացութիւնը, առաջին քայլը երեխաների բարոյական կրթութիւնը բարւոքելու համար պէտք է լինի բարւոքել և կատարելագործել դաստիարակիչները և ընդարձակել տեղեկութիւնքը և գիտութիւնքը նոցա, որոնց հոգարարձութեան յանձնվումեն երեխայը:

Երեխաների մտքի զարգացման խնամատարութեան կողմանէ կայ մի ուրիշ ծանրակշիռ կանոն, որ նմանապէս բղխումէ մարդկային բնութեան բնական պայմաններից, հարկաւոր է վարժել մարդու բոլոր ընդունակութիւնքը, ասել է թէ հարկաւոր չէ վարժել մի քանի ընդունակութիւնքը չափազանց, իսկ միւսները թողնել թառամիլ անգործունէութիւնից: Այս կանոնը այնու մանաւանդ հարկաւոր է միշտ ունենալ աչքի առաջ, որ յաճախարար զանց են առնում գորանով, և ես բոլորովին չեմ դժուարանում ասե-

<sup>1)</sup> De l'éducation progressive, par M-me Necker de Saussure, vol. p. 158.

լու, որ եթէ բարոյական ընդունակութիւնքը նոյնպիսի ջերմեանդու-  
թեամբ վարժուած լինէին մանկութեան հասակում, ինչպէս վար-  
ժուած են լինում սնտախուութեան, ինքնասիրութեան, կեղծաւորու-  
թեան զգացմունքը, մանկութիւնը բարոյական կողմանէ կլինէր ա-  
ռաւել լաւ, քան թէ է այժմ <sup>1)</sup>: Մանկութեան հասակում բարո-  
յական զգացմունքները ընդունակ են ամենայն հրապուրանքի ձայ-  
նակից լինել, որ ասել է. եթէ երեխայք չունենային միշտ իւրեանց  
առաջն հակառակարանութիւնք կանոնների և վարմունքների մէջ,  
այն ժամանակ այդ զգացմունքները ամենայն օր կունենային նոցա վե-  
րայ առաւելագոյն ազդեցութիւն և կդառնային, վերջապէս, նոցա մըշ-  
տական և գլխաւոր առաջնորդողները կեանքի մէջ: Աւելիդէրսպայինի,  
Սոսուի, Նարուէլի և ուրիշների շարագրութիւնքը, կրթութեան  
և երեխաների հոգատարութեան վերաբերութեամբ, առաջարկումն,  
իրև ապացոյց ասածիս, բաղմամբ և խրատական օրինակներ: Վայց  
դժբաղդաբար, իմ աշխատութեան սահմանը չէ ներում ինձ կանգ  
առնուլ այդ օրինակների վերայ, և ես ստիպուած եմ բաւականանալ  
միայն ցոյց տալով այն շարագրութիւնքը, որոնց մէջ կարելի է գրտ-  
նել այդ տեղեկութիւնքը <sup>2)</sup>: Օ՛նողքը շատ և շատ օգուտ կբաղէին  
կարդալով և իմաստասիրելով այդ շարագրութիւնքը. նոցա մէջ կան  
միթարական օրինակներ, որոնք ցոյց են տալիս, թէ որպիսի օգուտ-  
ներ կարելի է քաղել, եթէ բարոյական, կրօնական և մտաւորական  
կրթութեան առողջամիտ կանոնները գիտակցաբար և յաջողակա-  
պէս գործ դրուէին: Առաջինը, այսինքն բարոյական և կրօնա-

<sup>1)</sup> Երգարագատութեան (ամթխածութեան) զգացողութիւնը շատ երեխաների մէջ  
զարթումէ խիստ մատաղ հասակում, բայց, յաճախ վերաւորուելով, միանգամայն  
բթանումէ յառաջ, քան նոցա չափահաս լինելը: Եյդ զգացմունքը վերաւորու-  
մն ոչ թէ գիտակցաբար բարոյականութիւնը արհամարհելու գիտաւորութեամբ, այլ  
ըստ մեծի մասին գորապատճառը այն է, որ ծնողները չեն հասկանում եւ ծանաչում  
գորա յատկութիւնքը: Սորանով պարզ երեւումէ, թէ ինչու, ընդելով դրա ընդդէմ  
զորձ գրած հնարներին, մեք այսպէս յաճախ տեսնումնք խաբելութիւն եւ ամե-  
նայն տեսակ ստութիւն բոլոր արուեստագործութեանց եւ պարագմունքների մէջ:  
Լաւագոյն եւ ճշմարտագոյն հնար ճշմարտասիրութեան զգացմունքը հաստատելու  
հասար մարդերի մէջ—է կատարելագործել ասանին եւ ընդհանրական (հասարակաց)  
կրթութիւնը:

<sup>2)</sup> Wilderspin on Infant Education.—The Training System of Education, Religious  
Intellectual, and Moral, as establishet in the Glasgow Normal Training Seminary,  
by David, Stou, Esq.—Simpson's Philosophy of Education.—Warne's Phrenology  
in the Family.—Mrs. Barwell's Nursery Governement. Bray's Education of the  
Feelings.

կան կրթութիւնը, թէպէտ և իրականապէս առաւել ծանրակշիռ նշանակութիւն ունի, քան թէ երկրորդը, այսինքն մտաւորականը, բայց այնու ամենայնիւ այդ կրթութիւնը երկար ժամանակ անտես էր եղած: Ահա ֆրէնսլօզփայի բաղմամբի օգուաներից մինն էլ մարդկութեան կատարելագործութեան համար այն է, որ նա լուսափայլ կացուց կրօնական և բարոյական կրթութեան հարկաւորութիւնը և ցոյց տուաւ դորա կատարելու հնարները:

Շատ հարկաւոր բան է սկսել երեխաների բարոյական կրթութիւնը առ սակաւ սակաւ վարժելով զանազան զգացողութիւնքը, զոցա զարթած օրից սկսած, և ոչ թէ այն ժամանակից, երբ արդէն կստանայ գերակշռութիւն այս կամ այն հակամիտութիւնը, իսկ ամենաքնքոյշ զգացմունքները կտկարանան անգործունէութիւնից: Փորձով իմանալով երեխաների դիւրագրաց լինելը, և հետեւաբար ընդունակ դիւրաւ ընրանելու ֆիզիքական և մտաւորական տպաւորութիւնքը, մենք պէտք է որքան կարելի է աշխատենք պատշաճաւոր և վայելուչ հոգաբարձութիւն անել երեխայի բարոյականութեան, երբէք մոռանալու չենք, որ ներքին զգացողութեանց զօրութիւնը, գործունէութիւնը և առ հասարակ կատարելագործութիւնը կախուած են նոցա վարժողութիւնից, և այս նոյնպէս անկասկածելի է, որպէս և այն, որ անտղութիւնը և լսողութիւնը, յարատե վարժողութիւնից, դառնումն ընդունակ մեծագոյն նրբութեամբ, արագութեամբ և ճշդութեամբ զանազանել առարկաները և ձայները, իսկ անվարժողութիւնից նուազումն և բթանում:

Պարապմունքների բաղմակերպութիւնը նմանապէս է գլխաւոր հնարներից մինը երեխայի յառաջագէմ կրթութեան: Մատաղ հասակում ջղային համակարգութիւնը դիւրաշարժ և դիւրագրդիւ լինելուն պատճառով, երեխան չէ կարողանում անընդհատ և երկար ժամանակ մի տեսակ բանի պարապել և իւր զօրութիւնը մի տեսակ բանի վերայ կենդորոնացնել, և այս հանգամանքը աչքի առաջ ունենալու է մանուանդ տկարամիտ խելքի տէր երեխաներին կրթելու ժամանակ: Ահհանգստութիւնը և անհամբերութիւնը, որը սովորաբար արտայայտումն երեխայք, երբ նոցա երկար ժամանակ պարապեցնումն մի առարկայով, պարզ վկայումէ, որ պարապմունքի և զբաղմունքի բաղմակերպութեան հարկաւորութիւնը է զէնք, է մի հնարք, Արարչից տուած, մեր կատարելագործութեան գլխաւոր պայմանը լցուցանելու համար, այսինքն մեր բոլոր ընդունակութեանց



զարգացման և վարժողութեան համար, և ոչ թէ մի քանիսը առաւելագոյն, քան միւսները: Արդէն հինգ կամ վեց ամսական մանուկը իւր արթուն ժամանակը միշտ նայումէ, լսումէ, զգումէ, շարժումէ, և նորա երեսի անզաղար փոփոխութիւնը վկայումէ նորա ստացած տպաւորութեանց բազմակերպութեան: Սերթ նա ժըպտումէ, երբ մայրը մանուկ սենեակ, մերթ զուարճանումէ մկնակների շարժողութեամբ, մերթ զարմանումէ կամ հարցաւեր է երեւում, խաղալով կամ գննելով մի նոր առարկայ, երբեմն յանկարծ զանումէ մնայլ և անբաւական, որովհետեւ իւր այս կամ այն ցանկութիւնը կատարելու արգելք է գտնում, մերթ ուրախանումէ փոքրիկ եղբօր կամ քրոջ անկնտունելի գալուստով, երբեմն էլ վախենումէ ներս մտանող անծանօթից,— և այս բոլոր զգացմունքները նա չէ յայտնում խօսքերով, և ուստի օտար անձը, որ չէ քննում և չէ սիրում երեխայ, կարող է չնկատել այդ բաները, բայց խելօք մայրը, նկատումէ և դոցանից ամեն մեկը նորա համար նոյնպէս պարզ է և հասկանալի, ասես եթէ արտայայտուած լինին շատ հասկանալի խօսքերով: Ահա տեսնումք ինչպէս բազմակերպ են երեխայի ըզգացմունքները նորա ամենամատաղ հասակում անգամ, ուրեմն կարելի է մի՞թէ կասկածել, թէ դոցա լաւ կամ վատ ուղղութիւնը, և դոցա դէպի լաւը ուղղելու եղանակը, չունին մեծ նշանակութիւն երեխայի ապագայ բարեկեցութեան ու երջանկութեան համար: Ուրեմն, կրկնումեմ, հարկաւոր է միշտ միտը պահել, որ բոլոր բարոյական զգացմունքների պատշաճաւոր վարժողութիւնը իրանց համապատասխան առարկաներով, իրանց զարգացման և զօրութեան համար, նոյնչափ հարկաւոր պայման է, որչափ հարկաւոր է և մտաւորական ընդունակութեանց վարժողութիւնը, մտաւորական կատարելագործութեան համար,— և թէ երեխան մեծ մնաս ստացած կլինի, եթէ նորա կենցաղավարութիւնը կամ խնամատարութեան եղանակը ուղեւորուած լինին միայն մի քանի մտաւորական ընդունակութիւնքը նախամեծարարը զարգացնելու, մինչդեռ միւս ընդունակութիւնքը և զարգացմունքները կրթանան միանգամայն անվարժողութիւնից: Մանաւանդ հեշտ և շուտ կարող է պատահել այդ, երբ մանուկը չունի ընկերներ և բազմակերպութիւն առօրական կեանքի մէջ, ուստի հարկաւոր է փութաջանութեամբ ցրել այդ շարիքները, մանաւանդ առանին կրթութեան ժամանակ:

Մտաւորական ընդունակութեանց զարգացումն աստի-

Ճան առ աստիճան. — Օճանազան մտաւորական ընդունակութեանց վարժողութեան ժամանակ հարկաւոր է ուշագիր լինել սոցա համապատասխանիչ զարգացման աստիճանին մանկական և տղայական զանազան հասակներում, և հարկաւոր է յարմարացնել հոգատարութիւնը նոցա հասակին համեմատ: Հայտնի է ամենեցուն այն փաստը, որ արտաքին զգայարանքները ամենը միասին և մի և նոյն ժամանակ չեն զարգանում, այլ ակնյայտնի կարգաւորութեամբ: \*Նոյնը նկատելի է և մտաւորական ընդունակութեանց մէջ, դոքա նոյնպէս կարգով զարգանումեն, միասին և մի նոյն ժամանակ չեն մեծանում: Անանքի մէջ, սովորաբար, այս հանգամանքի վերայ, երեխաների կրթութեան ժամանակ, նայումեն մեծ արհամարհութեամբ:

Արտաքին զգացողութեանց ոյժը և զօրութիւնը հաւասարաչափ է իրանց համապատասխան գործարանների զարգացման: Աթէ մի քանի կենդանիները գեղեցիկ տեսնումեն և լսում իսկոյն իւրեանց ծընըդից յետոյ, դորա պատճառը այն է, որ նոցա լսողութեան և տեսողութեան գործարանները այդ ժամանակ արդէն բոլորովին զարգացած են. իսկ միւսները մի քանի ժամանակ ծնըդից յետոյ մնումեն բոլորովին կոյր և միայն կամաց կամաց ստանումեն ընդունակութիւն որոշելու առարկաները: \*Աման սորան, մանուկը առաջ ըզգումէ և ապա տեսնումէ և լսում, — առաջ տեսնումէ և լսում, յետոյ հոտոտումէ, և այս կարգը բոլորովին համապատասխան է սորա գործարանների դրութեան: Օգացողական ջղերը (нервы) արդէն լաւ զարգացած են լինում այն ժամանակ, երբ աչքը կամ ականջը տակաւին չզարգացած դրութեան մէջ են, աչքը և ականջը ստանումեն արդէն կատարեալ զարգացումն, երբ քիթը գեռ փոքր է և տափարակ, իսկ ոնգները (քիթի ծակերը) նեղ: Բայց եթէ աչքը զրկուած լինի լուսից, կամ առ հասարակ եթէ արտաքին զգացողութիւններից մինը զուրկ լինի վարժողութիւնից, համապատասխան գործարանի զարգացումն բաւականին կը յապաղի, հետեւաբար և ոյժը մեծապէս կնուաղի: Այս երկու պայմանը հարկաւոր է միշտ ունենալ աչքի առաջ և կրթութեան ժամանակ, և միշտ հոգալ, որ արտաքին զգացողութեանց վարժողութիւնը համապատասխան լինի իրանց գործարանների դրութեան:

Վիտելով մտաւորական ընդունակութեանց գործունէութիւնը, մենք տեսնումենք, որ նոքա նոյնպէս զարգանումեն կարգով կամ հետեւաբար, և թէ նոցա այն գործարանները, որոնց գործունէու-

Թիւնը արտայայտումէ առաւել վաղ, դորա ուրիշներից առաւել վաղ զարգանումն: Մանուկը դիտումէ շատ առաջ, քան թէ համեմատում և դատումէ, որովհետև դիտողութեան գործարանները զարգանումն մտաւորական ընդունակութեանց գործարաններից առաջ: Ողջն իսկ պատճառով նա զգումէ և գնահատում մտերմութիւնը և քնքշութիւնը առաջ, քան թէ զգումէ ճշմարտասիրութիւն, փառասիրութիւն և շահասիրութիւն: Ըրդէն շատ մատաղ հասակից նա արտայայտումէ անյաղթելի հակամիտութիւն նմանակցելու, կամ թէ անել այն, ինչ որ անումն իրան շրջապատողները, և այդ հակամիտութիւնը, նայելով թէ ինչպէս կլինի ուղղուած, կարող է դանձաւ նոյնպիսի հզօր գործիք շարութեան, որպէս և գործիք բարութեան:

Ամենայն ընդունակութեան կանոնաւոր վարժողութիւնը միշտ պատճառումէ բաւականութիւն,—ուրեմն բնական հնարքը տալ երեխային առողջ բաւականութիւն է վարժել նորա զանազան ընդունակութիւնքը իրանց համապատասխան առարկաներով: Չունենալով կանոնաւոր հասկացողութիւն մարդկային խելքի բնական յատկութեանց վերայ, շատ ծնողներ վարվումն այս կանոնին հակառակ և աշխատումն զբաղեցնել մանուկը, զրգոնցնելով նորա արտաքին զգայարանքները, որորելով ձեռքերի վերայ, կամ թէ զարժեցնելով նորա մէջ զարմանք դէպի մի նոր բան: Ինչպէս արդէն վերը նկատած է, ծնողներից մեծ մասը չէ իմանում, թէ որպիսի մեծ նշանակութիւն ունի բնաւորութեան կազմակերպութեան համար ինքնուրոյն գործունէութիւնը և անձնառաջնորդութիւնը, նորա առ հասարակ ունին հակամիտութիւն շարժանց ծառայել իւրեանց երեխաների հաճոյքներին, խիստ շատ բան առնուլ իւրեանց վերայ և շտալ բնութեան բաւականին ազատութիւն կատարել իւր գործը: «Իմ կարծիքովս, մենք շատ անզամ աւելորդաբար զբաղեցնումնք երեխաներին» — շատ իրաւաբար նկատումէ տիկին Վէկկերը, — «Եի հարկէ մենք պէտքէ խափանառիթ լինենք նորա տաղակութեան, տաղակութիւնը մահաբուն է հոգու համար, բայց այդ հիւանդոտ գրութիւնը յառաջանումէ երեխայի մէջ զբաղմունքների աւելորդութիւնից, որոնցով մենք աշխատումնք ցրել նորա տաղակութիւնը: Չարագանցութիւնը մի բանի մէջ յառաջ է բերում նուազութիւն միւսի մէջ, և շարաւորապէս զրգուած գրութիւնը կարող է շարունակուել անորոշ ժամանակ: Արբան մեծ է մանուկի վայն-

լած հանգստութիւնը, այնքան առաւել նա ցանկանում է նորան, և ոգու այդպիսի դրութիւնը կարող է դառնալ մշտական: Բայց ամենեւին այդ չէ նկատուում մեծ ուրախութեան մէջ. մինչև անգամ այն երեսխաների համար, որոնք խիստ հակամիտ են դէպի ուրախութիւնը, սա միայն ժամանակաւոր հիւր է, որը միշտ ցանկալի է և որին մինչև անգամ կարելի է երբեմն հրաւիրել, բայց նոցա այցելութիւնը չպէտքէ շարունակուի չափազանց երկար: Աւրախութեան չափազանցութիւնը արտասուք է թափել տալիս, գրգռում է երեսայի քնքոյշ ջղերը:

Այս վերին աստիճանի ճշմարիտ նկատողութիւնքը մանաւանդ տեղիք ունին ջղային, դիւրագրգիռ տեսնելու ունեցող երեսխաների համար: Ինձ շատ անգամ պատահած է նկատել, որ երեսխաներին պարապեցնելու կամ զբաղեցնելու չափազանց վերմեռանդութիւնը ծնողների կողմանէ պատճառուակէր նոցա փնաս, և ես համոզուած եմ, որ այդ իսկ պատճառով ջղերի դիւրագրգռութիւնը, որ սեփական է մանկական հասակին, շատ անգամ մնում է բոլոր կեանքի ընթացքում, դառնում է վերջապէս մեծամեծ, մարմնական և մտաւորական տանջանքների աղբիւր: Բարոյական կողմանէ ծնողների այդպիսի վարմունքը նոյնպէս պատճառուակ է փնաս, որովհետեւ, թէպէտ առանց դիտաւորութեան, բայց այսու ամենայնիւ զբաղացնում է երեսխաների մէջ անձնասիրական զգացողութիւնք: Արր որ մանուկը անդադար դարձնում է իւր վերայ չըջապատողների բոլոր ուշադրութիւնը, նա կամաց կամաց սովորում է յուսալ ուրիշների վերայ ամենայն բանի մէջ, ինչ որ վերաբերվում է իւր յարմարութեան և զուարճութեան, և համարել բոլոր չըջապատողներին միայն իւր ցանկութիւնքը և հաճոյքը լցուցանելու համար աշխարհ եկած: Այդ պատճառով մատաղ հասակից յղանում է նորա մէջ մեծ կարծիք իւր անձի վերայ, որը յետոյ գնալով գնալով սաստկանում է,—նա դառնում է առաւել պահանջող, և, զգալով իւր իշխանութիւնը, դառնում է բռնակալ իւր փոքրիկ կալուածքների վերայ: Ահա ինչու շատ անգամ պատահում է, որ մայրը, վատնելով վերմեռանդ հոգատարութիւն իւր զուակին բուականութիւն և զուարճութիւն պատճառելու, յուսալով փոխանակ դորա ստանալ հարուստ վարձատրութիւն—նորա սէրը և յարգանքը, դառնապէս յուսարեկ է լինում, և փոխանակ սիրու և պատուի, հանդիպում է սառնութեան և անտարբերութեան նորա կողմանէ: Բայց եթէ նա հետևէր վերը

ասած կանոնին— թէ հարկաւոր է հոգալ զարգացնել երեխայի բոլոր ընդունակութիւնքը վարժելով իրանց համապատասխան աւարկաներով, մի՞թէ այլ հետեանքներ չէին ունենալ նորա ջանքը և հոգատարութիւնը: Մայրերի սովորութիւնը— փութաջանութեամբ կատարել իւրեանց զաւակների ամեն մեկ հաճոյքը և ցանկութիւնը— ունենումէ տարաբախտ հետեանքներ, և բոլորովին չէ լինում ազբիւր ուրախութեան: Ըստ սովորութիւնը զարգացնումէ երեխաների մէջ ինքնահաւանութիւն (самолюбие), ուրիշի վերայ իշխելու սէր, ծնողասիրութեան զգացմունքը առաւել բխնումէ, քան թէ զարթնումէ և ոգևորում, — և զարմանալի չէ այնուհետեւ, եթէ, ակնուեցած սիրուն փոխանակ, երեխայքը ցոյց են տալի անձնասէր, խրոխտ հպարտութիւն, որը վատ կրթութեան գլխաւոր նշանն է: Ի հարկէ, ինքնահաւանութեան զգացողութիւնը շարաւոր աստիճանով անձնական արժանաւորութեան գլխաւոր պայմանն է, իսկ հպարտութիւնը և ամբարհասածութիւնը են նորա շարաւոր գործածութիւնքը: Արբեմն այս զգացողութիւնը երեխաների մէջ այնպէս նուազ է լինում, որ հարկաւորումէ հրապուրել կամ գրգռել նորան, բայց խօսելով առ հասարակ, դա կարօտ է ոչ թէ զարգացման, այլ պատշաճաւոր հոգատարութեան:

Սակ, երբ որ մենք, խնամք տանելով երեխաներին, կենդրոնացնումենք մեր ուշադրութիւնը նոցա զգացողութեանց և պարագմունքի վերայ, նոցա հագուստի և արտաքին ձևի վերայ, և սակաւ կամ բոլորովին ուշադիր չենք լինում զարթեցնելու նոցա մէջ քնքոյշ և բարի զգացմունքներ զեպի այլ մարդիկ, կամ թէ սովորցնելու զգալ բաւականութիւն և զուարճութիւն, կատարելով իրանց պարտականութիւնքը անձնազոհութեան գնով անգամ, ինչ ուրիշ բան կարող ենք սպասել նոցանից, եթէ ոչ այն, որ նոքա միայն կմտածեն իւրեանց վերայ և կզառնան ստրուկներ արհամարհելի փառասիրութեան: Մենք ինքեանքս տալիս ենք երեխաներին այնպիսի կրթութիւն, որը զարգացնումէ նոցա մէջ անձնասիրութիւն, ինքնահաւանութիւն, սաստիկ ձգտողութիւն իւր անձին վերայ զարմանալ տալու, իսկ յետոյ վշտանումենք, երբ որ մեր ջանքը և աշխատութիւնը պսակվումեն յառաջագիտութեամբ<sup>2)</sup>: Իստ բնութեան, երեխայք բնաւ պահանջող և ինքնասէր չեն: Առքա մատաղ օրերից զգումեն իւրեանց կախում ունենալը, և պատշաճաւոր հոգատարութեան ժամանակ, ոչ թէ միայն պատրաստ են

պատասխանել սիրուն—սիրով և շնորհակալութեամբ, այլ մինչև անգամ զոհել իւրեանց սեփական ցանկութիւնքը բաւականութիւն տալու համար նոցա, որոնք արդէն կարողացած են զարթեցնել սոցա մէջ մտերմութեան զգացողութիւնը: Արբ որ երեխային չէ ոգևորում մայրը անկեղծ սիրով, որը կարող լինէր զարթեցնել նորա մէջ բարի զգացմունքներ, երբ որ երեխայի հաճոյքները կատարուան ոչ թէ սէր զգալով զէպի նա, այլ թուլութեան պատճառով, որ և է անհանգստութիւնը հետացնելու համար, այդպիսի պայմանների մէջ սէր, մտերմութիւն ասած զգացմունքների հարկաւ թառամուան անլարժողութիւնից, մարդկային բնութեան բարձրագոյն զգացմունքները նուազումեն, և որպիսի այլ պտուղներ կարող ենք ըստ պատել այդպիսի կրթութեանից, բացի երեխայի հակամիտութիւնքը եղծանվելուց, բացի բնութեան փշացվելուց, որի վերայ շատ անգամ պատահումէ լսել դառն գանգատներ ծնողների բերանից, մինչև դեռ մեղաւորը ինքեանք են:

Աթէ այդպիսի կրթութեան գիմաց գններք այն կրթութիւնը, որ առաջնորդած է գործի խորին հասկացողութեամբ և բարձր բարոյական կանոններով, — որպիսի մեծ զանազանութիւն կոտեսներ հետեանքների մէջ: Մայրը պէտքէ արթուն հսկողութիւն ունենայ երեխայի անձնասիրական զգացողութեանց վերայ, հաստատուն կերպով հակառակէ նորա մէջ նկատած վատ հակամիտութեանց, և մի և նոյն ժամանակ փութաջանութեամբ, քնքրյալ, սիրալիբ կերպով լուցուցանէ նորա բոլոր անիմաստ, օրինաւոր ցանկութիւնքը: Այլ մանուկը կհասուցանէ փոխարէնը ոչ թէ մտերմութեամբ, այլ և հաւատաւ ընծայելով մօր սիրուն, որը այլ պայմանների մէջ չէ լինում երբէք, և այս բանը զարմանալի կերպով վկայումէ, թէ որպիսի ճշգրութեամբ հասկանումէ մանուկը մարդկային զգացմունքների բնական արտայայտութիւնքը:

Մեծ հատոր կրկագմեր, եթէ ընդարձակ քննութեան տակ ձրգէինք բարոյական և մտաւորական կրթութեան խնդիրը մանկական և տղայական հասակում: Ահա այս պատճառով ևս հարկադրուած եմ այս տեղ ջրջ տալ միայն կանոնները, որոնց հետեւելը շահաւէտ կարող է լինել իրան անձը կրթութեան գործին նուիրողներին: Հետեւելով այս կանոններին, լուսաւորեալ ծնողները և դաստիարակիչները, որոնք ունին անսխալ տեղեկութիւնք մարդկային խելքի բնական յատկութեանց վերայ, կարող են սեփական փորձով գտանել հնար-

ներ զանազան ընդունակութեանց գործունէութիւնը զարթեցնելու և նոցա բնական ուղղութիւն տալու համար, իսկ տիտղոսութիւնը շի յապաղել ցոյց տալու նոցա, թէ որպիսի գրողութիւնքը առաւելագէտ յարմար են ամեն մէկ ընդունակութեան <sup>1)</sup>: Ինձ մնում է ցոյց տալ էլ մի կանոն երեխաների կրթութեան մասին: Ասեմ գորա մասին միայն մի քանի խօսք, որովհետեւ դա, մասամբ, միայն եզրակացութիւն է վերը բացատրած կանոններից և մանրամասնաբար բացատրած է իմ շաշարղութեանս մէջ «Physiology applied to Health and education» (Ֆիզիոլոգիա ատղջութեան և կրթութեան գործադրելի): Կանոնը այս է. մարդկային ընդունակութեանց զարգացումն և մարդկային բնաւորութեան կազմակերպութիւնը կատարվում են որոշեալ օրէնքներով, Երարչից հաստատած, խելքի և մարմնի համար, ուրեմն մեր բոլոր ջանքը և աշխատութիւնը կարող են բարեկաջող լինել միայն այն ժամանակ, երբ կայ համաձայնութիւն դոցա և այդ օրէնքների մէջ: Կենք կարող ենք, որքան և իցէ փոխել կամ բարւոքել գործունէութիւնը այս կամ այն գործարանի, կատարելով սորա գործունէութեան այս կամ այն պայմանը, բայց մենք կարող չենք փոխել նորա իսկ բնութիւնը: Եւ հասարակ մենք կարող ենք միայն փոխել, բայց չենք կարող ոչնչացնել կամ ստեղծել: Աւրեմն կրթութեան մէջ առաջադիմութիւն ունենալու համար, հարկաւոր է յարմարուել կրթութեան էակի բնութեան, որպէս զի մեր գործակատարութիւնքը բոլորովին համաձայն լինեն նորա կազմուածքի օրէնքների հետ, որ, ոչպակէս, ինքեանք այդ օրէնքները դառնան գործիք մեր նպատակին հասնելու համար:

Եւս կանոնը շատ անգամ մնում է առանց ուշադրութեան, գրեխաւորագէտ, մարդկային կազմուածքի օրէնքները չիմանալու պատճառով, և շատ անգամ պատահում է լսել, ինչպէս մարդիկ, ըստ երեւութին առողջամիտ, դատում են և ասում, թէ կարող են նոքա տրնկել կամ դուրս հանել այս կամ այն մտաւորական ընդունակութիւնը, և գործածում են շատ անյարմար հնարքներ իւրեանց այդ նպատակին հասնելու համար:

Կեր բոլոր ընդունակութիւնքը անկաճ են մեր մէջ Երար-

<sup>1)</sup> Կարգացողը կարող է գտնել այս հարցի վերայ առաւել ընդարձակ դատողութիւն իմ «Physiology applied to Health and Education»-ի մէջ:

չից, ունին որոշեալ յատկութիւնք և գործակատարութիւնք. ոչ կրթութեամբ, ոչ որ և է հնարքով կարող ենք աւելացնել նոր զգացողութիւն կամ նոր ընդունակութիւն, որպէս և կարող չենք մի այնպիսի բան անել, որ թղնու մի ճիւղի վերայ խնձոր բուսնի, իսկ միւսի վերայ սալոր: Միայն այն ժամանակ մարդս կարող է ուղիղ յարարելութիւն ունենալ Վստուծու և Վորա բոլոր արարածների հետ, երբ ճանաչումէ և խոստովանում, որ ինքը և բովանդակ տիեզերքը միշտ կառավարվումէին և կառավարվումեն Վանակարող և Վմենարարի Վստուծու սահմանած օրէնքներով, և թէ նա կարող չէ կատարելագէտ հասկանալ այդ օրէնքները, այլ պիտոյ է հեզութեամբ իմաստասիրէ, երախտագէտ լինելով գոցա համար, պէտք է յարգէ և հնազանդէ նոցա: Արուելով այդպէս և աշխատելով ճշմարտութեամբ և հաւատով յցուցանել մարդուս կեանքի խորհուրդը և նպատակը, անտարակոյս, նա կհնձէ բարի պատուներ, նորա վարձատրութիւնը կլինին յարմարութիւնք և կատարելագործութիւնք: Բայց եթէ նա մեծամտութեամբ այս սահմանից դուրս ոտք կոխէ և հետամուտ լինի կրթելու իրան կամ ուրիշներին իւր մտացածին օրէնքների համաձայն, այն ժամանակ, ի հարկէ, բացի զուր անհանգստութիւնից և աշխատութիւնից ոչ ինչ չի ստանալ:

Ա երջացնելով խօսքս, աւելորդ չեմ համարում մի քանի խօսք տալ իմ անձը արդարացնելու մտքով այն կրկնողութեան համար, որը արի ես, կամենալով այս շարագրութիւնը առաւել պիտանի կացուցանել, իրրև գործնական առաջնորդ մայրերի համար իրանց ծանրակշիւ և դժուար պարտականութիւնքը կատարելու ժամանակ: Այս ի բոլոր սրտէ խոստովանումեմ, որ մինչև անգամ տաղտկութիւն պատճառեցի, կրկնելով մի քանի այնպիսի ճշմարտութիւնք և կանոններ, որ երբ, հասարակ կերպով ասվումեն, գրեթէ ոչ մի ընդիմախօսութեան չեն հանդիպում և ամենեցուն յայտնի են համարվում: Բայց, ես այդ արի այն պատճառով, որ դառն փորձով համոզուած եմ, թէ որպիսի տարբեր բաներ են հասարակագէտ գիտնալ մի որ և իցէ բան և լիապէս ճանաչել մեր գիտցածի գործագրութեան ծանրախորհուրդ նշանակութիւնը: Մեկանոն կրթութիւն ստանալով, մենք միշտ հակամիտ ենք կարծելու, թէ գիտութիւն ձեռք բերելը է այն ամենայն բանը, որ պահանջվումէ մեզանից, և մենք բաւականապէս մտադիր չենք լինում այն բանին, որ առաւել



ծանրագին է, քան թէ լոկ գիտութիւնը, այսինքն մտադիր չինք լինում մեր իմացածի գործածութեան և գործադրութեան: Մենք շատ բան գիտենք, բայց մեր գիտութիւնը անկատար է և կցկտուր, ուստի չունի այն ազդեցութիւնը եղելութեան վերայ, որը պէտք է ունենար: Սորա օրինակները կեանքի մէջ պատահումն ամենայն քայլափոխի մէջ, ամենայն օր, և ամենայն ժամ անգամ: Հնուարեւելք, որ ընթերցողը կհասկանայ առարկան մանրամասնաբար իմաստասիրելու հարկաւորութիւնը, ես ներեցի ինձ մի և նոյն բանը քանիցս անգամ կրկնել, այլապէս այդ կրկնողութիւնքը միանգամայն անտեղի կլինէին:

Ըստ շարագրութիւնը նշանակած է ոչ միայն ընթերցանութեան համար, այլ նաև մայրերի համար տան կամ սեղանի գիրք լինելու, այս պատճառով առանձին մասերի գրութեան համար հարկ եղաւ տեղ տեղ կրկնողութիւն անելու: Այուսամ, կարգացողս միտ դնելով իմ կրկնողութեանց բարի նպատակին, խստութեամբ չե՛ղատապարտիլ ինձ, եթէ երբեմն կատարեցի այդ շախիւ կորցնելով:

## ՅԱԻԵԼՈՒԱԾՔ:



Ըմբռիկայի Միացած-Վաշանգներում ազգականների մէջ եղած ամուսնութեանց արգասիքը մասնաւորապէս հետազօտած է գօկտօր Լեմիսը, որ գրեց այդ առարկայի վերայ North American Medico-Chirurgical Review-ի մէջ vol. 1, 1857, և գօկտօր Գլէվին, որ նուիրած է այդ հարցին—«Higiéne des Familles» վերնագրով յօդուածը, որ տպած է American Journal of Insanity մէջ 1859: Գօկտօր Լեմիսը անուսէ յետագայ եզրակացութիւնքը. «Երկրորդ պորտի մէջ եղած 28 ամուսնութիւնից, և երրորդ պորտի մէջ եղած 6 ամուսնութիւնից, 27 հատը ունեցել են զաւակ—ընդ ամենը 192 երեխայ, իսկ եօթը անպտուղ են եղել: 28 ամուսնութիւնից երկրորդ պորտի մէջ 23-ը ունեցել են զաւակ, իսկ 5-ը անպտուղ են եղել. երրորդ պորտի մէջ եղած ամուսնութիւնից 4-ը ունեցել են զաւակ, իսկ 2-ը—ոչ: 92 հատ ծնած երեխաներից, 58 մեռած են ամենամատաղ հասակում: 24 դիպուածում մահատիժ պատճառները էին. 8 անգամ ձգտումն ջղերի (сназма), 1 անգամ գլխի ջրգողութիւն (головная водянка), 15 անգամ բարակացաւ (бугорчатка):

«134 կենդանի մնացած երեխաներից, 48-ը ըստ երեութիւն առողջ մեծացան. 32-ը միջակ առողջութեամբ մեծացան, առանց որ և է մասնաւոր հիւանդութեան. 23-ը խուլաւոր էին. 4 վերնոտ (эпигептнкъ), 4 ապուշ, 2 խելացնոր, 1—տուրբ Սկտտի պարով (съ пляской св. Витта), 2 համր, 2 կոյր, 2 խելանդամք, 5 ալքիւնօսք<sup>\*)</sup>, 6-ը աչքի արատաւորութեամբ, 9 չգիտած մնացին: Ըստ-

<sup>\*)</sup> Ալքիւնօսքի մարմինը և մազերը բնաւ զոյն չունին, իսկ աչքերը միանգամայն շատագուճած են:

պէս 134 երեխայից միայն քառասուն վեցը կատարեալ հասակները առին, ստողը մնալով: Վոկտօր Վէվիու զիտողութիւնքը երկու դասակարգի բաժանվումեն. առաջինին վերաբերվումեն 39 զիպուածք, մասամբ հեղինակի ծանօթների շրջանում հաւաքուած, մասամբ էլ իւր հիւանդներից կամ ուրիշ ստոյգ աղբիւրներից: Լմուսնութիւնքը ըստ մեծի մասին երկրորդ և երրորդ պորտերի մէջ էր եղած: Միայն երկու օրինակ կար, որ քեռերը ամուսնացած էին եղբօր կամ քրոջ աղջկերանց հետ:

Երկրորդ դասակարգին վերաբերվումեն 82 զիպուածք, հեղինակի ձեռքով հաւաքած և ստուգած: Ըստ բոլոր զիպուածները, բացի չորս ամուսնութիւնից քեռերի և եղբօր կամ քրոջ աղջկերանց մէջ, եղած էին ամուսնութիւնք երկու եղբօր կամ երկու քուեր որդւոց ու աղջկերանց մէջ, կամ սոցա զաւակների մէջ: Ըստ 82 ամուսնութիւնից 14-ը ամուլ (անպտուղ) էին, ուրեմն նայելով վերոյիշած առաջին դասակարգին, — որի մէջ 39 զիպուածից 8-ը ամուլ էին, — միասին կանէ 22 ամուլ 121 ամուսնութեան դիմաց: Ըստ 22 զիպուածից, 16-ը միանգամայն ամուլ էին, այսինքն բնաւ յղութիւն չէր յառաջացած, իսկ մնացած 6 զիպուածումը յղութեան առաջին ամիսներում վիժած էին: Վոկտօր Վէվի զիտողութեան հետևութիւնն այն է, որ ամուսնութիւնքը մերձաւոր ազգակիցների մէջ կամ միանգամայն անպտուղ են լինում, կամ ցաւազար և խեղանգամ պտուղներ են ունենում: Իժիշկ Վէվի կարծիքով, այդպիսի ամուսնութիւններից ծնանումեն ապուշներ, խախտուած ուղեղով, խուլ և համր անհասներ. — յաճախ պատահումեն բնածին խեղութիւնք, կուրութիւն, հեմիպլէգի (hemiplegia, կիսանդամալուծութիւն), առանձին կամ մասնաւոր ընդարմացումն (ընդարմանալն), այլ և կազմուածքի անկանոնութեանց մէջ յաճախագոյն պատահումեն առաւելութիւն (излишек) ձեռքի կամ ոտքի մատերի:

Ըստ կարելի է, որ մօտ ազգականների մէջ եղած ամուսնութիւնքը, — եթէ ամուսնակիցքը լաւ կազմուածքի տէր են և ապրումեն բարեյաջող պայմանների մէջ, նաև եթէ յետ ամուսնութեան պահումեն առողջութեան կանոնները, — չեն ունենալ այդպիսի տխուր հետևանքներ. բայց այդ մասին մենք չունինք անժխտելի փաստեր: Իացի դորանից, եթէ քաջառողջ ազգականների մէջ եղած ամուսնութեանց հետևանքը այդպէս են բարեյաջող պայմանների մէջ անգամ, ուրեմն ինչպէս պիտոյ է սաստկանայ վատ հետևանքները,

երբ որ ամուսնացողներն մինը, կամ երկուսն էլ տկար կազմուածքի կամ ժառանգական հիւանդութեանց տէր են (որ ոչ սակաւ պատահումէ ազգականների մէջ տղայոց մօտ մերձաւոր յարաբերութիւն ունենալուն պատճառով): Այս մտածութիւնքը արժանի են խորին ուշադրութեան ծնողների կողմանէ, որոնք իւրեանց խորհուրդներով կարող են խափանառիթ լինել շափաղանց վաղաժամ ամուսնութեանց, որ, անտարակոյս, ունին անասելի վնասակար ազդեցութիւն ամուսնացողների և նոցա զւակների վերայ:

Թէև Երեխայք Հինգ տարեկան Հասած մեծ քանակութեամբ մեռնումեն յատկապէս մարդոց անթիւ բաղմութեամբ անառողջ սեղերում հաւաքուելոց, բնակարանների օդի անմաքրութիւնից, նաև վատ, անկանոն խնամատարութեան ներքոյ գտանվելոց, բայց ուղղակի, անմիջական պատճառը մահի լինումէ մի որ և իցէ սուր Հիւանդութիւն: Աւստի ծնողքը պարտական են աշխատել հասկանալ այդ հիւանդութեանց պատճառները և յատկութիւնքը, որ մանւանդ Երեխայական և մանկական հասակներում սաստիկ փնասակար ներգործող են, որպէս զի կարող լինին դոցա դէմ գործ դնել նախապահպանողական հնարներ. իսկ եթէ չկարողանան, նոքա պարտական են դէմ ժամանակին բժշկական օգնականութեան դիմել:

Սիմոնը ասումէ, թէ Երեխաների մահը Հինգ տարեկանից առաջ գլխաւորապէս երկու տեսակ հիւանդութիւնից առաջ է գալի:

1. Ընդհանուր տարափոխիկ ախտերից, որոնք սեփական են մանկական հասակին, որպիսիք են. վարդախտ (корь, rougeole), տենդ շառագոյն կամ ջերմն հրատապ (скарлатина, la scarlatine), շնչարգել հազ (коклюшъ, la coqueluche), ծաղիկ ախտ (оспа, la variole, petite vérole), որ յատկապէս տիրապետումէ այդ հասակում:

2. Տիրապետող տարափոխիկ սպաղմատիկական (ձգտումն ջրզերի) ցաւերից, ընդերքի հիւանդութիւններից, թոքերի ջերմախտական ցաւերից:

Մենք կպարապենք միայն երկրորդ դասակարգին: Հնցողական հիւանդութիւնքը, որովայնալուծութիւնքը և թոքերի բորբոքողական հիւանդութիւնքը այնպիսի հիւանդութիւնք

են, որոնց առաջը բռնելու համար կան շատ հնարներ. բայց արի տես, որ դոցանից ամեն տարի մեռնումե 72,000 երեխայ, որ Մնգլիայում իւրաքանչիւր տարի մեռնողների գրեթէ վեցերորդ մասն է կազմում, որից պարզապէս երեւումե, թէ մինչև որ աստիճան տակաւին վատթար է երեխաների խնամատարութիւնը:

Չղային հիւանդութիւնք.—Մեռնողների երեք մասին երկուսը, հիմնուելով արժանահաւատ գիտողութեանց վերայ, պիտոյ է վերագրել ցնցողականութեան: Վլխաւորագոյն պատճառը այդ տեսակ հիւանդութեանց երեխայական հասակում, ինչպէս տեսանք, ճնշուած և ապականած օդ շնչելն է. իսկ թէ տակաւին որքան մեռումե մեզ անել այդ ահարկու մահի թիւը սակաւացնելու համար, մենք տեսանք (եր. 46) այն գիտողութեանց մէջ, որ արած են Վուրլինեան մանկարարձական տան մէջ, ուր 20 մահառիթ գիպուածներից 19 գիպուածոււմը, կեանքի առաջին երկու շաբաթներում, մահի պատճառը ցնցողականութիւնն էր: Թէ արգարև մահի գլխաւոր պատճառը ապականած օդն էր, հաստատուումե նորանով, որ յետոյ, երբ օդամաքրութեան մեքենաներ գործ դրուեցան, մահը սակաւացաւ:

Արովհետև ապականած օդը գլխաւոր պատճառն է ցնցողական հիւանդութեանց երեխայական հասակում, այս պատճառով ծծմայրը, հէնց որ նկատե մի նշան վասնգաւոր հիւանդութեան, պարտական է իսկոյն երեխայի սենեակի օդը մաքրել: Մյոգ հնարը բժշկութեան էական մասն է, և առանց դորա բոլոր զեղերը անօգուտ են: Վիշերով մանուանդ հարկաւոր է վերահասու լինել մանկանոցի օդը մաքուր պահելու. այդ կարևոր է ամենայն հանգամանքների մէջ, ևս առաւել այն ժամանակ, երբ երեխաների ջղային համակարգութիւնը խանգարած է:

Թանչք արիւնախտան.—10,000-ից աւելի երեխայք մեռնումեն Մնգլիայում ամեն տարի աղիքի խողովակի ցաւից: Աթէ ուր և իցէ առաւել յաճախ և սաստկապէս տիրապետումեն այդ հիւանդութիւնքը, այդ անկասկած նշանակումե, որ նոյն տեղի բնակարանները բաւականապէս չոր չեն, կամ գործարանական մնացորդները աներից և ջրի աղբիւրներից բաւական հեռու չեն տարվում: «Մրիւնախտան որովայնալուծութիւնքը», ասումե բժիշկ Ա Էստը <sup>1)</sup>:

<sup>1)</sup> Diseases of Infancy and Childhood. Edition 1859.



ւառաւել շատ պատահումն և առաւել սաստիկ են այն տեղերում, ուր առաւելապէս զարգացած են այդ փնասակար ազդեցութիւնքը: Ստուգուած է արդէն, որ հասակաւորների մէջ դոյն այդ պատճառներով յառաջանումն այդ որովայնալուծութիւնքը: Սինչև որ անհետանան այդ հիւանդութեան անտեսանելի, բայց միշտ ներգործող, ազդելները, մինչև որ հիւանդը ազատ լինի դոցա ներգործութիւնից, բոլոր բժշկական հնարները միանգամայն անօգուտ են: Այդպիսի հանգամանքներում բժիշկը մեծ օգուտ կբերէ, եթէ կարողանայ տպաւորել մեր ասած ճշմարտութիւնքը ծնողների մտքի մէջ, որով նաև նպաստամտոյց կլինի նոցա իւր խորհուրդներին առաւել ուշադիր անելու և հաւատ ընծայել տալու:

Բորբոքումն թոքերի (լեարդի), բորբոքումն շնչառական կոկորդի ճիւղերին, կժկանք. — Բնդհանուր Բեքիտարատուրայի 1851 թ. տուած հաշուից երևում, որ այդ հիւանդութիւններից մեռած են 28,763 երեխայ հինգ տարեկան չեղած: Այդ շնչառական գործարանների բորբոքողական հիւանդութեանց անմիջական կամ ծնուցանող պատճառը են մրտողութիւնը և ցուրտ ու խոնաւ օդի ներգործութիւնը: Բայց սակայն, այս դիպուածում այնքան չէ ներգործում պաղ և խոնաւ օդը, որքան ներգործում է ցրտի զգալը, երբ որ դիւրազգաց նուազ կազմուածքը ենթարկվում պաղ ատմօֆերայի, կամ պաղ օդի հոսանքին, որ արագապէս իջեցնում է բարեխառնութեան աստիճանը: Սակայն պաղ օդի ազդեցութիւնը, թէև թոքերի բորբոքողական հիւանդութեանց շարժառիթ պատճառն է, բայց այդպիսի հիւանդութիւնք ստանալու տրամադրութիւնը պայմանաւորվում փնասակար առտնին հանգամանքներով, և այդ տրամադրութիւնը բժշկութեան մէջ գլխաւոր արգելքներից մինն է: Հաճախ մանուկը, դեռ հիւանդութիւնը վրայ չհասած, արդէն այնպէս նուազ է լինում, որ կազմուածքի ուժի զօրութիւնքը չեն կարողանում տանել հիւանդութեան, և հարկաւ երեխան մեռնում է:

Բորբոքումն թոքերի յաճախագոյն պատահում է մանկութեան այն շրջանում, երբ սկսում են ատամները դուրս ցցուիլ, երբ, ինչպէս ճշմարիտ նկատում է դոկտոր Սէտըր, մաժուցիկ թաղանթի (слизистая оболочка) դիւրազգացութիւնը հասանում է ծայրագոյն զարգացման, և երբ, բաց ի գորանից, կան այլև շատ պայմաններ ջգային հիւանդութեանց զարգացման նպաստաւորող: Արեխայի ծննդեան առաջին վեց ամիսը օդատար ճանապարհների (воздухоносный путь)

մածուցիկ թաղանթը սակաւ դիւրազգաց է լինում. ահա այս պատճառով թորքերի հիւանդութիւնքը պատահումն այդ մատող հասակում առաւել վաղ, քան թէ յետագայ տասն ութը ամսում. իսկ երկու տարին անցնելուց և ատամները դուրս գալուց յետոյ այդ հիւանդութիւնքը պատահումն առաւել սակաւ և առաւել սակաւ վտանգաւոր են: «Մենք կարծումենք», ասում զօկտօր Վէստը, «որ կատարը Երեխայական հասակում վտանգաւորագոյն է, քան թէ կատարեալ հասակում, և թէ դա երեխայութեան ոչ ամենայն շրջանում անգամ միօրինակ վտանգաւոր է: Մենք պարտաւոր ենք ատամնահանութեան շրջանի մինչև վերջը կրկին հոգացողութեամբ պահպանել երեխան այն բոլոր ազդեցութիւններից, որ կարող են պատճառել բորբոքումն շնչառական գործարանների»<sup>1)</sup>: Հետոյ նա նկատում, թէ շնչառական գործարանների հիւանդօտ դիւրազգացութիւնը, ըստ երևութիւն, առաւելանում է այնչափ, որչափ այդ գործարանների առաջուայ քաշած ցաւերը սաստիկ են եղել:

Վտանգէս հարկաւոր չէ մտանալ, որ բորբոքումն շնչառական ճիւղերի կարող է յառաջանալ ուրիշ մանկական հիւանդութեանց ժամանակ ևս, օրինակ. վարդախտի և շնչարգել հազի ժամանակ, և կարող է առաւել վտանգաւոր անել այդ հիւանդութիւնքը: Ըսածս վերաբերվում է մանուկանոց շնչարգել հազին, որի վտանգաւորութիւնը գլխաւորապէս ծագում է դորա ուրիշ հիւանդութեանց հետ կապակից լինելուց: Ընդդէմ անբարեխաջող իրողութեան առաջը բռնելու համար հարկաւոր է, հէնց որ երեխն շնչարգել հազի առաջին նշանները, պահել երեխան սենեակի մէջ ամբողջ առաջին շաբաթը կամ տասն օր, ամառ ժամանակ անգամ, իսկ ձմեռը աւելի երկար. նաև հարկաւոր է աշխատել, որ երեխան ֆիզիքականապէս և բարոյականապէս հանգիստ լինի: Կերակուրը պէտք է մեծ խորոզութեամբ տալ: Ընդդէմ կանոնաւոր պահելով, կարելի է թեթեւացնել և բժշկել շնչարգել հազը աւելի յաջողապէս քան թէ սովորական բժշկութեամբ: Եթէ շնչարգել հազը սաստկանայ ատամնահանութեան ժամանակ, հարկաւոր է այդ միջոցին արթուն հսկողութիւն և անձանձիր հոգացողութիւն ունենալ երեխայի վերայ:

Ըստ մեր նկատողութեան մէջ բերած վիճակագրական տեղեկութիւնքը քաղեցինք Վրինգաու զօկտօրի հաշուից—անգլիական ժո-

<sup>1)</sup> West, op. citat.

զովուրդի ատոզջարանական գրութեան մասին, երես 58: Այդ հա-  
շիւք բովանդակումէ իւր մէջ շատ թանկագին տեղեկութիւնք առաւե-  
լապէս տարածուած և վտանգաւորագոյն հիւանդութեանց վերարե-  
բութեամբ, և մանաւանդ զորա մէջ ցոյց է տուած փաբատելի  
հիւանդութեանց պատճառները և առաջը բունչու հնարները,  
այսինքն այնպիսի հիւանդութեանց, որից զարնվումէ տէրութեան  
մէջ մեռնողների գրեթէ կէսը:

Արդէս զի բնագրում արձանագրած կանոնները երեխաների կերակուրի վերաբերութեամբ առաւել հասկանալի լինին կարգացողներին, շահաւէտ եւ համարում յաւելցնել այս տեղ մի քանի մասնաւոր տեղեկութիւնք երեխայի կերած բաների բաղադրութեան վերայ, մանաւանդ կաթի բաղադրութեան վերայ:

Մենայն կերակուր, որ ընդունակ է պահպանել կեանքը, պիտոյ է պարունակէ իւր մէջ մարմնի միջի ծախուած կամ մաշուած անկուածների պակասութիւնքը (потребляемая ткань) լցուցանելու և սովորական բարեխառնութեան աստիճանը (տեմպերատուրա) պահելու համար հարկաւոր տարերք. ուստի կերակուրը բաժանվում է սնընդականի և ջերմականի, նայելով թէ Խնչ է դորա յատուկ կամ գլխաւոր նպատակը—սնուցանել մարմինը, թէ բարեխառնութեան աստիճանը պահպանել:

Թթուածինը (кислородъ), ջրածնի (водородъ) և բորակածնի կամ մահածնի (азотъ) հետ միանալով պատճառու մէջ ջերմութիւն, ասել է թէ, ամենայն բան, որի մէջ կան ջրածին և բորակածին այնպիսի պայմաններում, որ հնարաւոր են կացուցանում զոցա միաւորութիւնը մարդու մարմնի մէջ թթուածինի հետ, կարող է լինել ջերմացուցիչ կերակուր: Սորան համաձայն շաբարը, օւլան (кваша) և ճարպը ունենալով վերոյիշած բաղադրութիւնը, խառնվում են, իբրև կերակուր ընդունած լինելով, թթուածինի հետ, որ մշտնու մարմնի մէջ շնչառական գործողութեամբ, այդ բաղադրութեան արդիւնքը—ջուրը և ածխածինը—գրեթէ միանգամայն ար-

1) Գոփոթը ճէմն կոկոր տեղի է տուել այս յաւելումին իւր այս գրքի 8-դ սպա-գրութեան մէջ:

տաթորվում են թորերի և մորթի միջնորդութեամբ, առանց միանալու մարմնի պինդ անկուածնների հետ: Արոր միակ խորհուրդը է ջերմութիւն պատրաստել:

Մարմինը սնուցանելու և սպառած անկուածները նորոգելու համար կարևոր են առաւել բազմամասն սնունդ: Մկնակները և առհասարակ գործարանական մասերը բաղկացած են թթուածնից, ջրածնից, ածխածնից և բորակածնից: Ասել է թէ այդ նիւթերի պակասութիւնքը լցուցանելու համար հարկաւոր են գոյն այդ տարերքը իւր մէջ պարունակող նիւթեր: Օսլան, շաբարը և ճարպը կարող չեն սնուցանել մկնակները, որովհետև գոցա մէջ չկայ գլխաւոր նիւթը — բորակածինը, որից շատ կայ սպիտակուցի (бѣлокъ), մածոյցի (клейковина), մանրաթելի և առհասարակ այն բոլոր կենդանական և բուսական նիւթերի մէջ, որոնք ընդունակ են նորոգել մկնակների սպառուածը: Աւշադրութեան արժանի է այն, որ բոլոր այդ նիւթերը, թող ուր ուզեն գտանվեն, թէ կենդանական, թէ բուսական լինին, գրեթէ համանման են իրանց քիմիական բաղադրութեամբ: Այսպէս ցորենի մածոյցը, սիսեռի ընդին (հունտ, белунинъ гороха), մկնակների մանրաթելը (фибринъ мускуловъ), կաթի պանրին կամ բնապանիրը (казениъ молока), ձուի ճերմուցը (альбуминъ, бѣлокъ, яйца), պարունակում են իրանց մէջ գրեթէ մի և նոյն համեմատութեամբ թթուածին, ջրածին, ածխածին և բորակածին:

	Ենթածին.	Ջրածին.	Բորակածին.	Թթուածին և այլն.
Կենդանական մանրաթելը (животный фибринъ) պարունակում է.	52,5	7	16,5	24,0
Բուսական մանրաթելը (растительный фибринъ) պարունակում է.	53,23	7,01	16,41	23,85
Ձուի ճերմուցը (альбуминъ, бѣлокъ яйца) պարունակում է.	53,14	7,10	15,77	23,99
Բուսական ճերմուցը (растительный бѣлокъ) պարունակում է.	57,74	7,11	15,65	25,50
Կաթի պանրին կամ բնապանիրը (казениъ коровьяго молока) պարունակում է.	53,50	7,05	15,77	23,68
Բուսական պանրին (растительный казениъ) պարունակում է.	53,46	7,13	16,04	23,37

Իսկ այն մարմինները, որոնց մէջ գտանվում են այդ տարերքը զանազան համեմատութեամբ, կարող չեն նորոգել անկուածի կորուստը և միշտ պահպանել կեանքը: Սորանից պարզապէս հետևումէ, որ կերակուրի նիւթի բաղադրեալ աննդարար մասերը պէտքէ միաւորուած լինին կերակուրի մէջ. մարսողութեան գործողութիւնը ինքը կբաժանէ նոցա կերակուրից և կհաղորդէ կազմուածքի հիւթին, որի մէջ նոքա փոփոխութիւն կրելով, այսինքն բաժանելով բաղադրեալ գործարանական հիւլէնները (атомы) պարզ անգործարանական հիւլէնների (մասունքների), հնարաւոր են անում կեանքի տեղողութիւնը:

Ղ' երկուցեղէն կերակուրի անունը յաճախ արվում է կերակուրի ամեն տեսակին, որ կարող է լցուցանել անկուածի կորուստը, որովհետև ձերմկուցը համարվում է անդարար մարմինների ներկայացուցիչը. ձերմկուցէ կերակուրը անուանվում է երբեմն նաև պլաստիկական, ըստ որում գորանով պայմանաւորվում է մարմնի ձևը: Սակայն պէտք չէ կարծել, որ ձերմկուցեղէն մարմինները բնաւ չեն նպաստաւորում մարմնի վերմութիւնը պահպանելու: Օւրկ լինելով բորակածնից, վերմացուցիչ (որ կուզվում է երբեմն շնչառական) կերակուրը մասնակից է լինում անդեան կողմնակի կերպով, բայց ձերմկուցեղէն կերակուրը, ունենալով իւր մէջ ածխածին և վրածին այնպիսի վիճակում, որ հնարաւոր է անում զոցա միաւորութիւնը թթուածնի հետ, թթվում է մարմնի մէջ, և այդպէս մասնակից է լինում մշտական բարեխառնութիւնը պահելու:

Եւսպէս մարզուս կերակուրը պարունակում է իւր մէջ վերմացուցիչ և ձերմկուցեղէն նիւթեր, ուստի բնական է կարծել, թէ մինը և թէ միւրը միաւորուած գտանվում են կաթի մէջ, որ քանի մի ամսուայ ընթացքում երկխայի միակ կերակուրն է կազմում: Աւարդարև, այդ հեղուկի մէջ գտնվում է մածեալ մասն, որից բաղկացած է ձերմկուցեղէն կերակուրը, — և շաքար, որ է վերմացուցիչ մարմին <sup>1)</sup>:

Ըստ վերլուծութեանց Ա՛ երնուայի և Բ՛ էքբերելի, մարդկային կաթի միջին բաղադրութիւնն այս է.

Ջուր . . . . .	889.08
Պինդ կամ հաստատուն մարմիններ . . . . .	110.92

---

1000.00

<sup>1)</sup> Ճարպը, թէև մասամբ և պլաստիկական տարր, բայց ըստ էութեան իսկ և իսկ վերմացուցիչ մարմն է, զա կուտակվում է մարմնի մէջ, երբ որ զորս մուտքը առաւել շատ է եւքից (ծախից):

Այդ պինդ մարմինները պարունակում են իւրեանց մէջ.	
Շաքար և լուծանելի աղեր . . . . .	43,66
(Ննապանիւր կամ պանրին և ձգական մարմիններ <sup>1)</sup> )	39,24
Ճ'արպ . . . . .	26,66
Աղեր . . . . .	1,39
	110,92

Աւրեմն կաթի մէջ շնչառական կերակուրի քանակութիւնը գրեթէ կրկնապատիկ առաւել է պլաստիկականի քանակութիւնից:

Սակայն նկատենք այս տեղ, որ այս արդիւնքը միջին թիւն է, 89 դիտողութիւնից ստացած: Մասնաւոր դիպումներում բազադրեալ պինդ մասերի քանակութիւնը, որպէս և նոցա փոխադարձական յարաբերութիւնը մեծապէս փոխվում են: Այսպէս maximum'ը (ամենաշատը) պինդ մարմինների հասանումէ 147,70, իսկ minimum'ը (ամենաքիչը) — 83,33 կաթի 1000 մասում: շաքարի քանակութիւնը փոխվումէ 59,55 մինչև 25,22, բնապանրի քանակութիւնը 70,92 մինչև 19,32, իսկ ճարպի քանակութիւնը 56,42 մինչև 6,66:

Յետագայ աղիւսակը ցոյց է տալի մարդկային կաթի միջին բազադրութեան բաղադատութիւնը մի քանի շորքոտանիների կաթի հետ: Գորանից երևումէ, թէ ինչ փոփոխութիւնք պէտք է անել

ԿԵՆՏԵՆՏԻ:	Զուր:	պինդ մասեր:	Շաքար:	Բնապանրի և ձգական մարմինների:	Ճ'արպ:	Աղեր անտարբեր:
Կեմադր . . . . .	889,08	100,92	43,64	39,24	26,66	1,88
Կով . . . . .	864,06	135,94	38,03	55,15	36,12	6,64
Էշ . . . . .	890,12	109,88	50,46	36,65	18,53	5,24
Աժ . . . . .	844,90	155,10	36,91	55,14	56,87	6,18
Մատակ մի . . . . .	904,30	95,70	32,76	33,35	24,36	5,23
Շուն . . . . .	772,08	227,92	15,29	116,88	87,95	7,80
Ուխար . . . . .	882,32	167,68	39,43	69,78	51,31	7,16

<sup>1)</sup> Ձգական մարմին (ВЯЖНОЕ ВЕЩЕСТВО) սովորումէ մի քանի սակաւ յայտնի կենդանական սկզբնական նիւթերը նշանակելու համար, որոնք սակաւ քանակութեամբ միաւորվում են բնապանրին հետ:

այդ կենդանիների կաթի քիմիական բաղադրութեան մէջ կնամարդու կաթին նմանեցնելու համար—ենթագրելով, որ Ա Երնուայի և Բեքերելի հաշուած միջին բաղադրութիւնը կաթի, առաջարկուեալ կանոնաւոր յարաբերութիւնը:

Ըստ Գիււմային մսակեր կենդանիների կաթի մէջ բնաւ չաքար չկայ, և այդ կարծիքը երևի թէ միանգամայն ուղիղ է վերաբերութեամբ այն դիպուածների, երբ նոցա կերակուրը բաղկացած է միմիայն կենդանական մարմիններից. իսկ եթէ միայն կենդանական չէ, կնշանակէ մսակերների կաթի մէջ ևս կայ չաքար, միայն առաւել սակաւ քանակութեամբ, քան թէ բուսականների կաթի մէջ, որ պարզ կարելի է տեսնել, եթէ համեմատենք այս մեր բերած աղիւսակի մէջ շան կաթի չաքարի քանակութիւնը ուրիշ կենդանիների կաթի քանակութեան հետ: Այս հասարակ իշակածը իւր բաղադրութեամբ առաւել մօտ նմանութիւն ունի կնամարդու կաթին. բայց արդէն պինդ մասերի քանակութեան կրած փոփոխութենից և մսակեր կենդանիների կաթի մէջ չաքար չլինելուց պարզ երևումէ, որ կաթի բաղադրութիւնը ոչ այնքան կենդանու տեսակից է կախուած, որքան կախուած է նորա կերած կերակուրից: Հետոյ, Ա Երնուան և Բեքերելը առաջարկումեն կնամարդու զանազան տեսակ կաթի աղիւսակը, թէ ինչ տարբերութիւն կայ լաւ կերակրած և վատ կերակրած կնամարդերի կաթերի մէջ, վատ կերակրած կնամարդի կաթը առաւել ջրոտ է և մէջը մածեալ մասեր ու ճարպ առաւել սակաւ են գտանվում:

Սակաւ պատահումէ, որ բոլորովին առողջ ծծմօր կաթը վատ ներգործութիւն ունենայ երեխայի վերայ: Այդպիսի դիպուածներում,—եթէ չկայ անհրաժեշտ կարեւորութիւն կաթը փոխելու,—չատ կարելի է, որ ծծմօր կերակուրը բոլորովին փոխելով, շատացնելով կամ սակաւացնելով կենդանական կամ բուսական կերակուրի քանակութիւնը, փոխելով ճաշի և զբօսանքի ժամանակը,—լաւագոյն արդիւնք ստանանք: Բայց եթէ երեխայի առողջութիւնը կարող չէ տանել այդ յետաձգութեան, հարկաւոր է իսկոյն կաթը փոխել: Արակուրի փոփոխութեան ներգործութիւնը կաթի բաղադրութեան վերայ երևումէ յետագայ օրինակից. խոտով և լիցերին ասուած բոյսով սնուցած այծի կաթը ունէր.

Ջուր. . . . . 824,57

Պինդ մասեր. . . . . 175,33



## Պինդ մասերի մէջ կար.

Ճ'արպ . . . . .	76.01
Բնապանիք և ձգական մարմիններ . . . . .	57.50
Շաքար . . . . .	85.98
Ըղեր . . . . .	5.84

Երբ որ այժմ կերակրումին ճակնդեղով, կաթի բաղադրութիւնը այսպէս էր.

Զուր . . . . .	987.74
Պինդ մասեր . . . . .	112.26

## Պինդ մասերի մէջ կար.

Ճ'արպ . . . . .	31.60
Բնապանիք և ձգական մարմիններ . . . . .	36.25
Շաքար . . . . .	38.35
Ըղեր . . . . .	6.05

Վերնուան և Բեքերելը իրանց արած հետազոտութիւններից առիթ ունեցան կարծելու, որ յաճախագոյն առողջ ծծմօր կաթի վատ ազդեցութիւնը երեխայի վերայ պատճառվում է կաթի բաղադրեալ պինդ մասերի աւելորդութեամբ, որ յառաջ է գալի գլխաւորապէս ճարպի շատանալուց, և մասամբ— բնապանի աւելորդութիւնից: Բայց այդ դիտողները չեն հաստատում, թէ ճարպի շատանալը անպատճառ վատ ներգործում է երեխայի վերայ, նոքա ասում են միայն, որ երբ երեխան անյարմարութիւն է դուրս, այդ միջոցին սովորաբար կաթի մէջ լինում է աւելորդ ճարպ: Բնական պայմաններում ճարպի միջին քանակութիւնը կաթի մէջ = 26,66 մասն 1,000 մասնում, այն ծծմայրներու կաթի մէջ, որոնց երեխայքը տկար են, ճարպի քանակութիւնը հասնում է մինչև 33,22: Ընդ քանակութիւնքը մեր առաջեւ ունենալով, հարկաւոր է այդպիսի դիպումներում տալ ծծմօր սակաւ սննդաբար կերակուր, փոխել կենդանական կերակուրը բուսական կերակուրի, այդ ժամանակ երեխան կընդունէ ջրոտ կաթ, բայց աւելի դիւրամարս, փոխանակ առաջուանին, որ, պինդ մասերի շատութեան պատճառով, շափազանց ծանրութիւն էր տալիս նորա մարսողութեան գործարաններին: Ընդհանրապէս մայրը, որի կաթը կարողացած չէր ուտել իւր առաջին երեխան, հնարք ունի միւս երեխային յաջողութեամբ ծիծ տալու:

Բնագրում բերած էինք օրինակներ, թէ բարկութիւնից կամ տիրութիւնից փոփոխութիւն է յառաջանում կաթի բաղադրութեան մէջ, և թէ այդ փոփոխութիւնը շատ վատ ներգործումէ կրեխայի վերայ: Երգեօք այդ փոփոխութիւնը կա՛նխ է այն փոփոխութիւնից, որ յառաջանումէ կաթի բաղադրեալ մասերի յարաբերութեանց մէջ, թէ՛ այդ միջոցին գոյանումէ մի որ և է թունաւոր մարմին, բնաւ կարելի չէ այդ բացատրել: Բայց սակայն անտարակուսելի է, որ այդ հանդամանքներում կաթի բաղադրութիւնը մեծապէս փոխվումէ, և այդ օպացուցանվումէ քիմիական վերլուծութեամբ, որ արած էին Ալեքնուան և Բեքերելը մի այդպիսի դիպումով: Սուրբ Լնտուանի հիւանդանոցի ծծմայրներից մինի միակ որդին մեռաւ թոքերի բորբոքողութիւնից: Սորա մահից առաջ, մօր կաթը վերլուծեցին և բաղադրութիւնն էր այսպէս.

Չուր . . . . .	889,49
Պինդ մասեր . . . . .	110,51

Պինդ մասերի մէջ կային.

Շաքար . . . . .	41,52
Բնապանիր և ձգական մասեր . . . . .	44,02
Ճարպ . . . . .	33,79
Էղեր . . . . .	1,18

Արեխայի հոգին տալու վայրկենին, մայրը մի քանի ժամ անընդհատ ջերմախտական դրութեան մէջ էր գտանվում: Կաթի քանակութիւնը արագապէս սակաւացաւ և յետագայ բաղադրութիւնը ունեցաւ.

Չուր . . . . .	908,93
Պինդ մասեր . . . . .	91,07

Պինդ մասերի մէջ կային.

Շաքար . . . . .	34,92
Բնապանիր և ձգական նիւթեր . . . . .	50,00
Ճարպ . . . . .	5,14
Էղեր . . . . .	1,01

Արեւելի չէ որոշել, թէ իսկապէս ինչ ազդեցութիւն էր ունեցել կաթի այդ փոփոխութիւնը երեխայի վերայ, և եթէ հիւանդութեան յայտարար նշանները շարունակուէին աճել, այն ժամանակ մենք չէինք ունենալ հիմն հաստատելու, թէ դոցա պատճառը կաթի փոփոխութիւնն էր եղել: Այց որովհետև այդ բաղադրութեան փոփոխութիւնը վկայուեւ, թէ կաթի որակութիւնը փոփոխուեւ, ենթարկվելով ջղային համակարգութեան դրութեան ազդեցութեանը, ուստի խոհեմ ծծմայրը, իւր բարկութեան կամ շփոթութեան ժամանակ, մի կամ երկու օր ծիծ տալու չէ երեխային, մինչև որ կաթը իւր կանոնաւոր բաղադրութիւնը ստանայ:

Հասակաւորների մարտողութիւնը կատարվում է շոգունքների, ստամոքի և աղիքների արտաթորած հիւթերի օգնութեամբ: Այսինքն ժամանակ շոգունքը խառնվում եննդանիւթի հետ և մեծապէս նպաստաւորում կրախմայական նիւթերի եփելուն. բայց սակայն Միզերի և Շմիտտի հետազոտութիւնքը յայտնի կացուցին, որ երեխաների շոգունքի արտաթորումն առաջին ամիսները շատ սակաւ ազդեցութիւն է գործում կրախմայական նիւթերի վերայ, կամ բնաւ չէ գործում: Աւրեմն եթէ երեխային կերակրենք այդպիսի բաներով, այդ բաները, դեռ չյարմարեցուցած մարտողութեան գործողութեան, մանելով ստամոքի մէջ հարկաւ կարող են վնասակար հետևանքներ ունենալ: Աւրեմն երեխայի կեանքի առաջին շրջանում, նորա մարտողութեան գործարանները յարմարեցուցած են միայն կաթը լաւապէս մարսելու և ամենայն զանցառութիւնը այդ բնական կերակուրով, նայելով Ֆիզիոլոգիական պայմաններին, պիտոյ է խանգարում պատճառէ նորա մարտողութեան:

Եթէ որ և է պատճառով անհրաժեշտապէս կարևոր է լինում փոխել մօր կաթը որ և է կենդանու կաթի, այդպիսի պարագայում պէտք է վերահասու լինել, որ երեխային չկերակրեն յատկապէս առաջին և վերջին անգամ կթած կաթովը, կովի ստինքները, օրինակ ամբողջապէս չեն լցուած միատեսակ կաթով. նորա մէջ, որպէս մի ամանի մէջ, սէրը երեսն է ելանում, և վերջին նուազի կրթած կաթը ամենաթանձրն է: Շարպի քանակութիւնը առաջին և վերջին անգամը կթած կաթին Ա էրնուային և Մեկերելի հաշուով այնպէս է, կովինը վերաբերվում է ինչպէս 25 : 60, իսկ եղինը ինչպէս 6 : 36, իսկ շաքարի և բնապանրի յարաբերութիւնքը կաթի մէջ գրեթէ անփոփոխ են մնում այդ միջոցին: Անամարդու

կաթի առաջին և վերջին, բաժինները նայելով նորա կուրծքի դու-  
թեան, միատեսակ բաղադրութիւն ունին: Բայց այդ հանգամանքի  
վերայ հարկաւոր է մեծ ուշ դարձնել, երբ երեխային կենդանինե-  
րի կաթով են կերակրում:

Յետագայ աղիւսակը նախընթաց օրինակներից առաւել պարզ  
ցոյց է տալիս կնամարդու կաթի բաղադրեալ մասերի համեմատա-  
կան քանակութիւնը, նմանապէս այն կենդանիներինը, որոնց կաթը  
երբեմն կնամարդու կաթի փոխանակ գործ կգրուին: Բաղադրեալ  
մասերը դասուորուած են իրանց համեմատական շտուտութեան կար-  
գով:

## 1. ԿՆԱՄԱՐԴ:

Շաքար . . . . .	43,64
Բնապանիր. . . . .	39,24
Ն'արպ . . . . .	26,66
Եղեր . . . . .	1,38

## 3. ԿՈՎ:

Բնապանիր. . . . .	55,15
Շաքար . . . . .	38,03
Ն'արպ . . . . .	36,12
Եղեր . . . . .	6,64

## 5. ԵՑԾ:

Ն'արպ . . . . .	56,87
Բնապանիր. . . . .	53,14
Շաքար . . . . .	36,91
Եղեր . . . . .	6,18

## 2. ԷՇ:

Շաքար . . . . .	50,46
Բնապանիր. . . . .	35,65
Ն'արպ . . . . .	18,53
Եղեր . . . . .	5,24

## 4. ՄՇՏԵԿ 21:

Բնապանիր. . . . .	33,36
Շաքար . . . . .	32,76
Ն'արպ . . . . .	24,36
Եղեր . . . . .	5,23

## 6. ՈՉԻՄԲ:

Բնապանիր. . . . .	69,78
Ն'արպ . . . . .	51,31
Շաքար . . . . .	39,43
Եղեր . . . . .	7,16

Իբրև ընդհանուր կանոն պէտք է ընդունել, որ պինդ կամ  
հաստատուն մասերի քանակութիւնը կաթի մէջ աւելանումէ առա-  
ջին օրից մինչև տասներհինգերորդ օրը, ամենամեծ քանակութեամբ  
գտանվումէ առաջի երկու ամսուայ ընթացքում և ապա կամաց կա-  
մաց սակաւանումէ: Յղութիւնը կամ դաշտանը, բացի տարապայ-  
ման զիպուածներից, չունի ազդեցութիւն կաթի որակութեան վե-  
րայ: Ծածմօր հասակը նմապէս չունի մի առանձին ազդեցութիւն  
կաթի որակութեան վերայ. սակայն լաւագոյն հասակը դորա հա-

մար, հիմնուելով ընդհանուր ֆիզիոլոգիական կանոնների վերայ, համարվումէ 20 մինչև 40 տարին:

Թուխ կնամարդոց մէջ պինդ մասեր առաւել շատ կան, քան թէ շէկ կնամարդոց կաթի մէջ, և միշտ առաջինի կաթը նախամեծար է համարվում: Արժանի է նկատելու, որ առատութեամբ և հեշտութեամբ արտաթորուած կաթի մէջ աւելի շատ պինդ մասեր կան, քան թէ քշութեամբ և զժուարութեամբ արտաթորուած կաթի մէջ:

Ազրակացութեան գալով Ա Երնուան և Ռեկերելը նկատուեան, թէ միմիայն քիմիական վերլուծութիւնը հնար է տալիս կաթի բաղադրութիւնը ճշդապէս բացատրելու: Տեսակարար կշիռով (УДѢЛНЫЙ ВѢСЪ) կարող չեն բացատրել կաթի իւրաքանչիւր բաղադրեցուցիչ մասերի քանակութիւնը, նմանապէս և խոշորացոյցը բաւական չէ:

Մենք կանգ չենք առնում այն փոփոխութեանց վերայ, որ յառաջանումեն կաթի մէջ մօր հիւանդութեանց պատճառով, որովհետև ամենայն հիւանդութեան ժամանակ պէտք է իսկոյն դադարել Երեխային կերակրել: Բժիշկները կարող են դիմել Ա Երնուայի և Ռեկերելի շարագրութեան. «Du lait chez la Femme, Paris, 1853.

Ատամնաճանութեան ընթացքը և աճեցողութիւնը արժանի են մեր ուշադրութեան ոչ թէ միայն այն պատճառով, որ անմիջապէս ներգործումեն երեխայի առողջութեան վերայ, այլ նաև այն պատճառով, որ ճիշդ գաղափար են տալիս երեխայի կազմութեան մասին, և նորա ապագայ ֆիզիկական յատկութեանց մասին անգամ:

Ուայտգիտ բժիշկը (Մանչեստերից), որ շատ պարապել է այս առարկային և հաւաքել է շատ վիճակագրական տեղեկութիւնք, անումէ յետագայ ծանրակշիռ եզրակացութիւնքը <sup>1)</sup>:

«Արգանդի մէջ լաւ լրագործած, առողջ ծնողք, լաւ կերակուր և լաւ բնակարաններ ունեցող երեխաների ատամնաճանութեան գործողութիւնը պէտքէ սկսի 5 և 8 ամիսների մէջ»:

«14 ամսական երեխան պէտք է տասն կամ աւելի ատամներ ունենայ, իսկ ամենաքիչը պէտք է լինի 6 ատամ:

«Առողջ երեխաների ատամնաճանութեան գործողութիւնը, ըստ կանոնին, պէտք է վերջանայ երկու տարեկան հասակում:

«Սաղաթամ ատամնաճանութիւնը, այսինքն առաջին ատամի հինգ ամսից առաջ դուրս ցցուիլը, միշտ բարեյաջողութեան նշան կարող է համարուիլ. բայց, ընդհակառակն, բոլոր քսան ատամի վաղաթամ դուրս ցցուիլը, միշտ լաւ աճեցողութեան յայտարար նշան է: Եւստ երեխայք, որոնց ատամնաճանութիւնը վերջանումէ 16, 18 ամսուայ մտ կամ առաւել վաղ, իններորդ ամսում արդէն ազատ ման են գալիս և ֆիզիկականապէս առ հասարակ շատ ուժեղ են»: (Երես 25, 26):

Բժիշկ Ուայտգիտի եզրակացութիւնքը իւր արած դիտողութիւններից այս է, ատամնաճանութեան գործողութեան յապաղումը և գորա հետ կապակից հիւանդութիւնքը առաւել կախուած են զարգացման ընդհանուր գործողութեանց անկանոնաւորութիւնից, քան թէ մասնաւոր գրգռողութիւնից:

<sup>1)</sup> Third Report of the Clinical Hospital, Manchester, 1859, by James Whitehead, M. D.

Լաւ կամ վատ աճեցողութեան միւս նշանը, որ սերտ կապակցութիւն ունի ատամնահանութեան հետ, ֆօնտիկուլների (fonticuli, родничекъ, աղբիւրներ, աղբերակներ) ոսկորանայն է:

«Ընդհանուր կանոնը այս է. լաւ զարգացած երեխան ֆօնտիկուլի՛ի ծածկուելու ժամանակ—14 ու կէս ամսուայ վերջերուս—սովորաբար այդ միջոցում ունենումէ, կամ պէտք է ունենայ 14 ատամ, և պէտք է հաստատուն քայլերով սկսէ ման գալ մի քանի շարաթ կամ մի քանի ամիս ֆօնտիկուլի՛ի ծածկուելուց առաջ: Իսկ այն երեխայքը, որոնց ֆօնտիկուլին մինչև վերոյիշած հասակը լայն բացուած է, յաճախապէս 2-ից մինչև 6 ատամ են ունենում և բոլորովին չեն ման գալիս: Արդու տարեկան հասակում անգամ, երբ ատամնահանութեան գործողութիւնը պէտք է արդէն վերջացած լինի, եթէ ֆօնտիկուլին դեռ չէ ծածկուած, երեխան յաճախ 8—12 ատամից աւել չէ ունենում:

«Լայպէս ֆօնտիկուլի՛ի ծածկուելը ճիշդ գաղափար է տալիս զարգացման գործողութեան դրութեան վերայ, վասն զի, բացի մի քանի անկանոն դիպուածներից, գորա հետ առ հասարակ կապակից են ատամնահանութեան համապատշաճ պայմանները, ման գալու կարողութիւնը և ընդհանուր ֆիզիկական աճեցողութիւնը»: (Արես 30, 41):

«Թէև լաւ զարգացած երեխաների մէջ ոչ սակաւ պատահումէ խտտումն ընդհանուր կանոնից, բայց դա չունի վատ հետեանքներ: Ընդ խտտումից յաճախագոյն պատահածը ատամնահանութեան յապաղումն է, որ երբեմն չափազանց երկար շարունակվումէ, բայց այն դիպուածներում, երբ ֆօնտիկուլին վաղ է ծածկուած և ման գալու կարողութիւնը բաւականին զարգացած է, երեխայի ապագայի մասին բնաւ երկիւղ կրել հարկաւոր չէ»: (Արես 50, 51):

Իժիշկ Ուայտգիտի այդ նկատողութիւնքը թանկագին են ֆիզիոլոգիկան և տերապեւտիկական կողմանէ, և արժանի են մանկական հիւանդութեանց պարապող բժիշկների ուշադրութեան: Ըմբողջ աշխատութիւնը պէտք է ուշադրութեամբ կարգալ, նորա գործնական և ժողովրդական մասերը իմաստասիրելու համար:

ՅԱՆՆԵՐԻՆՈՒՄ Ե, երես 52, 58.

Բժիշկներին կարծիքը ժողովրդական Փիղիօլօգիայի կարևորութեան և հասարակաց վարժարաններում առողջաբանութեան դասեր կարգալու մասին:

Կամենալով ցրել այն բոլոր կասկածները, որ կան Փիղիօլօգիայի և առողջաբանութեան սկզբնական գիտութեան—որպէս մի ճիւղի դաստիարակութեան—օգտաւէտ լինելու մասին, և կամենալով համոզել թէ հնարաւոր է ուսանել այդ գիտութիւնքը «դիւրաւ և մեծ յարմարութեամբ սովորական դպրոցներում»,— յետագայ վըճողական վկայագիրը, որ ստորագրած են Ա՛ւնդօնի գերահռչակ բժիշկները և վիրաբուժերը, նոյնպէս անդամալուծութեան և Փիղիօլօգիայի պրոֆեսորները, նորերս ներկայացուցած էին խորհուրդի գահերէցին (президентъ), լորդ Վրենվիլին, որպէս զի զապահանջէ կառավարութեան տեսչութեան տակ գտնված դպրոցների վարժապետներից այնքան տեղեակ լինել Փիղիօլօգիային, որ կարողանան հաղորդել իւրեան աշակերտներին:

«Վուք կամենումէիք իմանալ մեր կարծիքը, թէ արդեօք արգիւնաւոր կլինի սկզբնական Փիղիօլօգիայից և առողջապահութեան գիտութիւնից ընդհանուր տեղեկութիւնքը հաղորդել պատանիներին ուսման միւս առարկաների հետ, մենք ի ներքոյ ստորագրեալքս առանց այլեայլութեան և վճողարար պատասխանումենք—այո: Եւ առ ցանկալի է, որ այն հիւանդութիւններից մեծ մասը, որ թագաւորումէ աշխատաւորների դասակարգերի մէջ, իսպառ փարատուի, բայց մեզ յայտնի է, որ փութաջան աշխատութիւնքը բժշկական հնարների միջնորդութեամբ փարատել այդ հիւանդութիւնքը յաճախ մեծամեծ



գժուարութեանց են հանդիպում, իսկ երբեմն լինում են միանգամայն անօգուտ աշխատաւոր դասակարգի տգիտութեան պատճառով: Աւստի մենք կարծում ենք, որ սկզբնական ֆիզիօլոգիայի դասատվութիւնը գործադրութեամբ առողջարանութեան մեծապէս կնպաստաւորէ հիւանդութեանց առաջը բռնելու և մտքի ու խելքի կանոնաւոր զարգացողութեան. նաև մենք համոզուած ենք, որ այդպիսի դասատվութիւնը կարող է շատ արտօք լինել պատանինների համար և շատ դիւրաւ ու յարմարութեամբ կարող է կատարուիլ հասարակ դրպրոցներում լաւ կրթուած դպրոցական վարժապետների ձեռքով:

Լօնդօն, մարտ. 1853 թ.:

Ստորագրութիւնքը.

Իսկական մուրհակը Councils Office'ի մէջ:

## Ե. ՅԵՆՆԵԼՈՒԵՆԾ ՏՊԵԳՐՈՂԻ:

Երբ որ զորաց Ցերն Ետուած ոգնէ կ'ուզէ որք ազգին,  
Նորա Տէ՛նն կ'ուզարկէ ազգասիրական հոգին:

Եւրջ Շիբն:

Վանի որ լուսաւորութիւնը տարածվումէ մեր ազգի մէջ, քանի որ ազգը սկսումէ ճանաչել իւր անցեալը և ներկան, և աշխատումէ բարելաւացնել իւր որդւոց ապագայն, այնքան հայ մարդը սկսումէ պատուել իւր ազգութիւնը, և, լուսաւորելով եւրոպացոց գիտութիւններով, համոզումէ, որ լուսաւորութիւնը միայն արտաքին ձևերով եւրոպացւոց նմանելումը չէ, այլ նոցա գիտութեան հիւթը և նիւթը սեփականացուցանել ազգին, մարտել տալ ազգի կազմուածքին և այդպէս աճեցուցանել, բարելաւացնել ազգի բարոյականութիւնը, կենցաղավարութիւնը և ապագայն, թէ քաղաքական, թէ տնտեսական և թէ մտաւոր դրութեան կողմանէ: Շ'ըշմարիտ, ստոյգ լուսաւորութիւնը ո՛չ մէկ ժամանակ թշնամի չէ որ և իցէ ազգութեան, այլ, ընդհակառակն, օգնումէ ազգութեան ըսկզբնական և սեփական սկզբունքները և ձիրքերը բարելաւացնելու և զարգացնելու:

Եւս մտածմունքներին հետեւելով, կարծեմ որ առաւել բանական կերպով կը շարժէին հայ ծնողքը և սրբազան մկրտութեան սուրբ խորհուրդը կատարող սրբակրօն քահանայքը, եթէ, Պրիդրիկ, Աիկօլի, Օւլրար, Բգոլար և այլ օտարազգի սեփական անուանց տեղ, հայ զուակաց տային շահոց պատմութիւնից առած հայ անուններ. թէ իբրև յիշատակ մեր նախնեաց, թէ այն պատճառաւ, որ անուամբ ևս դիւրին լինի ճանաչել հայ մարդուն, թէ իբրև նշան, որ մենք պատվումենք մեր սեփականութիւնից ամենայն ինչ, որ չունի արատ, և այլն, և այլն: ()տարը կը պատուէ մեզ այն ժամանակ միայն, երբ մենք ինքներս մեզ կը պատուասիրենք և կը շարժենք միշտ պատուասիրապէս:

Աճար:	Վտուակ:	Սանածիճ:
Ամսօր:	Վուշար:	Սանաւաղ:
Ամպակ:	Վաղ:	Սանէճ:
Անուշաւան:	Վատ:	Սարուգէ:
Աշտ:	Լղնակ:	Սեսորայ:
Ապիրատ:	Լղնիկ:	Սաշտոց:
Անակ:	Լղիչէ:	Սերուժան:
Ասուածատուր:	Լրուանդ:	Սժէժ:
Աքանաղ:	Օարմայր:	Սիանդակ:
Ատոմ:	Օաւան:	Սիթիթար:
Արամ:	Բնձակ:	Սշակ:
Արմայիւ:	Թորդոմ:	Սուշ:
Արայ:	Թորոս:	Սուշեղ:
Արգամ:	Թոսնիկ:	Սուշէ:
Արղուարդ:	Իրաւափառ:	Յուսակ:
Արիստակէս:	Լոպ:	Յուսիկ:
Արմենակ:	Խոռ:	Յարուժիւն:
Արմոգ:	Խորէն:	Վերսէս:
Արշակ:	Կամսար:	Վորայր:
Արշաիթ:	Կայպակ:	Շահան:
Արտաշէս:	Կարգոս:	Շաղիտա:
Արտաւազդ:	Կարէն:	Շարայ:
Աւաղ:	Կենան:	Շարաշան:
Աետիթ:	Կոսնակ:	Շաւարշ:
Աշին:	Կորիւն:	Ոսկի:
Բար:	Համաղասայ:	Պածոյճ:
Բարիկ:	Հայկ:	Պերճ:
Բարկէն:	Հայկակ:	Պայ:
Բաղ:	Հարմայ:	Պարէտ:
Վազ:	Հաւանակ:	Պարոյր:
Վագիկ:	Հաուկ:	Սանատրուկ:
Վագրիկ:	Հորայ:	Սիսակ:
Վանիկ:	Հեթում:	Սլաք:
Վարեգին:	Հմայեակ:	Սկայորդի:
Վեղամ:	Հրահատ:	Սուր:
Վիսակ:	Հրանտ:	Սուքիաս:
Վիսանէ:	Հրաշեայ:	Սպանդարատ:
Վիւտ:	Սաժան:	Սահագն:
Վղակ:	Սաղիտաղ:	Սահան:
Վլակ:	Սամրրէ:	Սահէ:
Վնէլ:	Սանակ:	Սահրամ:

Վ օհրիծ:  
 Վ աղարշ:  
 Վ աղարշակ:  
 Վ աչէ:  
 Վ ասակ:  
 Վ արդ:  
 Վ արդան:  
 Վ արդգէս:

Վ րթանէս:  
 Վ րոյր:  
 Տաճատ:  
 Տէր:  
 Տիգրան:  
 Տիրան:  
 Տիրիթ:  
 Տիրուկ:

Տորք:  
 Տրդատ:  
 Յոյակ:  
 Փառէն:  
 Փառոս:  
 Քաջաջ:  
 Օշին:  
 Օտայ:

## ԻԿԱԿԱՆ ԵՆՈՒԵՆՔ.

Մնոյշ:  
 Մշխէն:  
 Մսողիկ:  
 Մրշանոյշ:  
 Մրծուիկ:  
 Մամբիշն:  
 Վալանէ:  
 Վասրիկ:  
 Մշրանեակ:  
 Օարուհի:  
 Թագուհի:  
 Իսկուհի:  
 Լուսիկ:  
 Խոսրովիդուխտ:

Նամագաստուհի:  
 Նոխիսիկ:  
 Սանէ:  
 Սարգարիտ:  
 Սանուշակ:  
 Սարբուհի:  
 Նագենիկ:  
 Նոյեմզարա:  
 Նուարդ:  
 Շուշան:  
 Շողակաթ:  
 Շուշանիկ:  
 Սկեհատ:  
 Սաթինիկ:

Սահականոյշ:  
 Սանդուխտ:  
 Սմրատանոյշ:  
 Սմրատուհի:  
 Սրբուհի:  
 Վարդանդուխտ:  
 Վարդանոյշ:  
 Վարդուհի:  
 Տաճատուհի:  
 Տիգրանուհի:  
 Տիրուհի:  
 Փառանձեմ:

Օ՞անօթ. Նայ գրականութեան մէջ սեփական անուանց մասին  
 հարցասիրելի հատուած կայ Ն. Հոգսէփ Վ. Վաթրճեանի  
 (Սիւրիթարեան ուխտէն) «Պատմութիւն մատենադրութեան  
 Նայոց» գրքի մէջ, հատոր 1, անգիր ժամանակ: Վիէննա:  
 1851. 16<sup>o</sup>, է. 62:

## Ի. ՅԵՒԵՂՈՒԸՆԻ ՏՊԸԳՎՈՂՆԻ

Թէ ինչպէս յառաջանումն բոյսերի, կենդանիների և մարդերի մէջ արական կամ իգական սեռերը: Տիրի Հեղինակի շարագրութիւնից:

1863 թ. տպուեցաւ մի փոքրիկ տետրակ «Memoire sur la loi de production des sexes chez les plantes, les animaux et l'homme, par M. Thury, professeur de l'Academie de Genève»: Այս շարագրութիւնը գրուեց բոլոր գիտնական եւրոպացոց ուշը, և իւր առաջին տարուայ ընթացքում, դուրս եկաւ դորա երկրորդ, առաւել մշակուած տպագրութիւնը: 1864 թ. Հէյդելբերգի Համալսարանի պրոֆեսսորը, դոկտոր պ. A. Pagenstecher'ը թարգմանեց այս գիրքը գերմանականի, կրիտիքական քննութեամբ: Վիտակցելով այդ յայտնագործութեան բոլոր ծանրակշուութիւնը քաղաքական անտեսութեան համար, — առնելով այդ գիտութիւնը իւր ընդարձակ նշանակութեամբ, — մենք յանձնառու եղանք հաղորդել մերայնոց, Ամմբի գրքի թարգմանութեան հետ, Դենեվի պրոֆեսսորի գործնական գլխաւոր եզրակացութեանց էութիւնը: Ներումենք մեզ կարծել, որ Տիրիի եզրակացութիւնքը, որ ամբողջ Աւրոպայի ուշը դարձուց իւր վերայ, անհետ չեն կորչիլ մեր համագգայինների մէջ ևս:

Մեզ իացոց, Յրանսիացոց և Վերմանացոց անկաբանները ապացուցին, թէ շորութիւնը, լոյսը և ջերմութիւնը նպաստաւորումն բուսականների մէջ առաւելապէս արական ծաղիկներ զարգանալու, և թէ ընդհակառակն, — խոնաւութիւնը, լուսի և ջերմութեան բացակայութիւնը նպաստաւորումն իգական ծաղիկներ զարգանալուն; — թէ առաջի պայմանների մէջ բոյսերը զարգանումն, կերպաւորումն կատարելապէս և այդպիսի զարգացման ժամանակ տալիս են առաւել շատ արական ծաղիկներ; իսկ երկրորդ պայմանների մէջ, այսինքն լուսի և ջերմութեան պակասութեան և խոնաւու-

Թեան ժամանակ, բոլոր բոյսերը, ինչպէս յայանի է, պակաս կատարելութեամբ են զարգանում և տալիս են առաւել շատ իրական ծաղիկներ, քան թէ արական: Տըրմութիւնը—ստուռ Տիւրին—ներգործում բոյսերի վերայ կողմնակի կերպով, բոլոր դորա հիւթերը լաւ, լիապէս և կատարելապէս մշակելով և իւրացուցանել տալով, և այդօրինակ նպաստաւորում բոյսերի գործարանների կատարել զարգացման: Աւտի արական սեռը կատարելապէս հասունութեան կամ կատարել մարմնական զարգացման արգասիք է: Girau de Bazareingues (Annales des sciences naturelles, Série, t. XXX, p. 408) ապացուցանում, որ բոյսերի զանազան ճիւղերի վերայ, նայելով նոցա հասակի մեծութեան, արական և իգական սերմերի քանակութիւնը այնչափ սակաւ է, որքան ճիւղը մատաղ է, այսինքն մատաղ ճիւղերի վերայ առաւել շատ են իգական սերմեր, իսկ անդրանիկ ճիւղերի վերայ—արական սերմեր: Լյուչիս Lychnis dioica բոյսի, 10,000 իգական սերմի գիմաց, Դիւրն համարել է. 1229 արական սերմ գլխաւոր, այսինքն անդրանիկ ճիւղի վերայ, որը անմիջապէս արմատիցն է բնուում (բոյսերի մէջ անդրանիկ ճիւղերը միշտ սկսում են բնուում արմատից և ներքեւից դէպի վեր, արմատից բուսած ճիւղերի մէջ ստորինները միշտ լինում են առաւել անդրանիկ, քան վերինները; նմանապէս այն ճիւղերը, որ բնուում են արմատից ելած ճիւղերի վերայ, նոյն կարգով լինում են ստորինները անդրանիկ, իսկ վերինները կրտսեր); 1085 արական սերմերը երկրորդ կարգի (հասակին համեմատ) ճիւղերի վերայ; 899 արական սերմեր երրորդ կարգի (այսինքն առաւել կրտսեր) ճիւղերի վերայ, և այլն ըստ կարգին: Անդրանիկների վերաբերութեամբ հեղինակը մատնացոյց է լինում երգեցող թռչունների վերայ, որոնց վերջին ձուն, թէև ըստ տարածութեան (по обьему) միշտ առաջիններից փոքրագոյն է, բայց նոցանից առաւել զարգացած է լինում և հետեւաբար դոցանից, իբրև առաւել զարգացածից, միշտ արու է ելանում:

Արուների և այծերի առաջին պտուղը լինում է միշտ իգական, որովհետև արուն, զեռ ևս ինքը կատարելապէս զարգացած չէ, ուստի նորա պտուղը ևս կատարելապէս զարգացած չէ լինում; իսկ յետագայ ծնունդները յաճախագոյն արական են լինում, որովհետև կանտնաւոր մերձաւորութիւնը առաւել զարգացած և առաւել լրագործուած կազմուածքների նպաստաւորում առաւել հասուն սաղմն գոյացնելու և արագապէս դոցա զարգացնելու:

Մարդոց մէջ ևս, որպէս և կենդանիների մէջ, առաջին զաւակը յաճախագոյն լինումէ աղջիկ. հարիւր անդրանիկ ծնունդի մէջ համարումեն 65 աղջիկ և 35-ը տղայ: Լպօրինաւոր ծնունդների մէջ աղջկերբ առաւել շատ են, քան թէ տղայք, պատճառ որ կնամարդու սեռական գործարանների գրգռողութիւնը սաստկագոյն է գաշտանի սկզբում կամ սկսելուց մի փոքր ինչ առաջ, որքան որ սեռական գործարանների գրգռողութիւնը սաստկագոյն է, այնքան սաղմն ևս առաւել զարգացած կլինի, այսինքն բեղմնաւորութեան ժամանակ կ'յառաջանայ առաւելապէս արական սեռն: Ըրէանների մէջ, որոնք խստութեամբ հետեւումեն հին Մովսիսական օրէնքներին, մերձաւորութեան վերաբերութեամբ, այսինքն երբ որ մերձաւորութիւնը լինումէ գաշտանի խպառ վերջանալուց, կամ գաշտանից մի շարաթ անցանելուց յետոյ, ընդհանուր հաշուով ծնանվումէ առաւել շատ տղայք, քան թէ աղջկերբ, ասել է թէ մերձաւորութիւնը գաշտանից մի շարաթ անցանելուց յետոյ—եթէ բեղմնաւորութիւն լինի—տալիս է առաւել շատ արական պտուղներ, իսկ մերձաւորութիւնը գաշտանի սկսելուց մի փոքր ինչ առաջ կամ գաշտանի սկզբում, տալիս է իգական պտուղ:

Կաթնասունների և մարդու մէջ որոշ ժամանակամիջոցներում ձուարանների մէջ աճումէ սաղմը—(ВЪ ЯИЧНИКАХЪ) (կնամարդու մէջ ամիսը մի անգամ; շների և կովերի մէջ տարին երկու անգամ; ճագարի մէջ շորս անգամ տարին և այլն. այսինքն երբ որ սկսումեն գաշտանները), — առանձին փամփուշտների մէջ (visicules de Graaef, гартіевы пүзырки): Արբոր այդպիսի սաղմաւոր փամփուշտը հասունանումէ, կնամարդի սեռական գործարանից (матка, matrice) սկսումէ արիւն հոսել, և այդ միջոցին փամփուշտը արաբվումէ և սաղմն բաւականին երկար խողովակի միջով (Ֆալլօպեան խողովակ, tubes de Fallope), հասնումէ արգանդի յատակին, և ահա այդ բոլոր ընթացքում սաղմն կարող է բեղմնաւորիլ: Կնթաղրումեն, թէ սաղմն իւր ճանապարհին որքան ուշ բեղմնաւորի, այնքան առաւել զարգացած է լինում և հարկաւ նորանից պէտք է գոյանայ արական պտուղ: Չունենալով կարողութիւն անձամբ կենդանիները փորձի տակ ձգելու և իւր տեսութիւնը (теорія) հաստատելու, պրոֆեսսոր Տիւրին խնդրեց պ. Գէորգ Կորնայից (Georges Cornaz Կախագահ երկրագործական ընկերութեան de la Suisse romande à Montet և տեղուչ այն հարուստ և անուանի կալուածքին, որ Montel'ում է), կենդանիների վերայ փորձ

փորձել, իւր ցոյցերին համեմատ: Պ. Վ. Արնան, կովերի վերայ փորձեց և 22 անգամ կարգով ստացաւ, իւր ցանկութեան համեմատ, կով և ապա 7 անգամ կարգով—որթ: Հիմնուելով այդ փորձերի վերայ, պ. Վ. Արնան յայտնումէ, թէ, իւր կարծիքով, Տիւրի պրոֆեսսորի կանոնը անսխալ է: Իւր յօդուածի վերջում, հեղինակը առաջարկումէ յետագայ գործնական եղբակացութիւնքը, իւր արած դիտողութիւններից եղջերաւոր անասունների վերաբերութեամբ.

1. Հաստաջագոյն հարկաւոր է իմանալ երկարատևութիւնը, յատկութիւնը և նշանները դաշտանի (արիւնի հոսման, течка) այն կովի, որի վերայ կամենում են փորձեր անել, ըստ որում, դա մի օրինակ չէ ամեն կովի մէջ: Հայտնի է, որ կովերի դաշտանները 24 մինչև 48 ժամ տևումէ:

2. Անտթանալով կովի հետ այդ պարագաների կողմանէ, յետագայ կերպով գործ են տեսնում.

ա) Այն ստանալու համար, հարկաւոր է տալ խառնուիլ նոցա խկոյն դաշտանի սկզբում:

բ) Որթ ստանալու համար, հարկաւոր է տալ խառնուիլ նոցա դաշտանի բոլորովին վերջանալուց յետոյ:

Հարկաւոր չէ փորձ փորձել այնպիսի կովերի վերայ, որոնց դաշտանի նշանները յայտնապէս չեն երևում, ինչպէս այդ երբեմն պատահումէ պարբար և միշտ գոմի (ախոռ) մէջ պահուած կովերի վերաբերութեամբ: Բնդհակառակն հարկաւոր է ընտրել արձակ արածւող և առողջ կովեր:

4. Վոյն այդ փորձերը կարելի է անել ձիերու, էշերի, ոչխարների, այծերի և այլ կենդանիների վերայ, թէև այդ անասունների վերայ մինչև այսօրս այդպիսի փորձեր չեն եղած, բայց այսու ամենայնիւ, տեսութիւնը խոստանումէ զոցա համար ևս նոյն արգասիքը (հետևանքը), որ ստացուեցաւ կովերից:

Ա՛յ երջացնումենք այս յօդուածը, մէջ բերելով Պատենշտեխեր պրոֆեսսորի խօսքերը, պրոֆեսսոր Տիւրիի դիտողութեանց մասին գրած կրիտիկայի յաստջա անտթիւնից. «Ա՛յ երջացնելով յառաջաբանութիւնս», ասում է նա, «ես պէտք է անկեղծութեամբ խոստովանեմ, որ այս գործի մասին մասնաւոր փաստերի դիտողութիւնը և նորանոր փորձերը առաւել ծանրակշիւ կլինին, քան թէ նոր տեսութիւնք մէջ բերելը: Այս նոցա համար, որոնք կասկածում են պրոֆեսսոր Տիւրիի տեսութեան ճշմարտութեան մասին, այդ պրոֆեսս-



սօրի առաջարկած փաստերը մեծակշիռ նշանակութիւն պէտք է ունենան ։

«Թո՛ղ գործնական մարդիկ պարապեն այդ հարցին, և եթէ յաջողի նոցա — որի մասին բնաւ կասկած չունենք — քաղել այդ յայտնագործութեանց պտուղները, թո՛ղ չմոռանան, որ այդ յաջողութիւնը Տիւրի պրօֆեսսօրի անաչառ և ուսումնական ձգտողութեան շնորհովն է ձեռք բերած ։

## Գ. ՅԵՒԵՂՈՒՆՆԵՐ ՏՊԵՂԳՐՈՂՆԵՐ:

### ՈՐՈՐՈՅԻ (ՕՐՕՐՕՅԻ) ԵՐԿԵՐ:

#### Ը.

Քուն էղիբ, պալաս, աչքըդ խուփ արա՛,  
Նաչխուն աչքերուդ քուն թող զայ վերայ.  
(Օր օր օր պալաս, օր օր ու նանի,  
Իմ (այս անունին) \* քունը կը տանի:

(Սկի խաչ վիզիդ՝ քեզի պահպան,  
Նարօտ կապիլ է ծարէն տէր պապան,  
(Օր օր օր, պալաս, օր օր ու նանի,  
Իմ (այս անունին) քունը կը տանի:

Սազի հիւուններ կախել եմ ես ալ;  
Նազար չես աւնուլ, քուն էղիբ, մի՛ լալ.  
(Օր օր օր, պալաս, օր օր ու նանի,  
Իմ (այս անունին) քունը կը տանի:

Ըս քանի՞ մօրըդ անքուն աչքովք  
Ընցել է օրեր օրոցքիդ քովք.  
(Օր օր օր, պալաս, օր օր ու նանի,  
Իմ (այս անունին) քունը կը տանի:

(Օրոցքըդ օրիմ, օրով բոյ քաշիս,  
Սըղկտան ծանով սիրտըս չի մաշիս.  
(Օր օր օր, պալաս, օր օր ու նանի,  
Իմ (այս անունին) քունը կը տանի:

\*) Զոր օրինակ. իմ Արամիս, Եղիսարեթիս եւ այլն:

Պուն ալ քուն էղիբ, ինծի ալ քուն տուր,  
 Սուրբ Աստուածամայր (այս անունին) քուն տուր.  
 Օր օր օր, պալաս, օր օր ու նանի.  
 Իմ (այս անունին) քունը կը տանի:

Թափայէլ Տէր-Գաբրիէլեան Պատկանեան:

Ի՛ն.

ՄՈՒԻՇՄԻՇԸ Ի ՊՍԵՒ ՍԻՐԿՎՍԸ ՈՐԴԻՈՅ ԻՄՈՅ:

Լս կուրացած աշքերովս միշտ քեզի տեսնալ եմ ուզում, <sup>1)</sup>  
 Մին բույէ չի տեսնալիս երեխի պէս լալ եմ ուզում: <sup>2)</sup>

Կամենումեմ՝ որ հասանիս իշխանական աստիճանի,  
 Օ՛ի լինիցիս կենցաղումս դուռն ամեն դատաստանի,  
 Որ կարենաս հոգիւ լինիլ զուլմից նեղացած ինսանի,  
 Վլիտիդ մարգարտաշար գգակ, հագուստդ ողջ ալ եմ ուզում:

Ուզումեմ՝ մինակ դու լինիս բոլոր աշխարհքի գատողն;  
 Շնչաւորքն ոտրդ պաշեն, լիզեն քաշիդ տակի հողն;  
 Վեզ ատողին մահն տանի, սպանվի վատրդ խօսողն;  
 Թէ ուզես գիտել՝ ես ո՞վ եմ, լաւ ընթերցիր վերջի տողն,  
 Սողմոնն արքայից աւել քեզի խօշ իկրալ եմ ուզում:

Եսումեմ՝ ինչ օր կուլինի, որ դու նստես թախտի վերայ;  
 Թագաւորքն՝ քեզի տեսան, ախ քաշեն քո բախտի վերայ;  
 Երգարներն կոխ անեն ծոցիդ սուրբ դրախտի վերայ;  
 Ճ՛շմարիտ ես զարմացել եմ իմ սրտիս շինախտի վերայ,  
 Որ էդ լուսին երեսումըդ ջուխս շարաշի խալ եմ ուզում:

Եսումեն՝ քեզպէս ջան չկայ, Տէրն քեզ պահի ինձ համար,  
 Որ ձերութեան ժամանակիս իմ կենացս լինիս սատար;  
 Վաս օր չի՛ տեսնաս, որդի ջան, այս է աղօթքս անդադար.  
 Չարն ու բարին լաւ իմանաս, քեզի վնաս չի՛ տայ օտար,  
 Վանզի թշնամացդ վերայ վերջումն խնդալ եմ ուզում:

1 եւ 2 ամենայն տանց վերջումն կրկնեայ զայսօտիկ տալս:

Ըքերբբս անց չի պտունն քեզ, դու ես նրանց միջի լոյսն,  
 Ըմէն դանով զըզուել եմ, քեզ եմ արել սրտիս յոյսն;  
 Թէ որ մին օր չի՛ տեսնամ քեզ, կու չորանայ կենացս բոյսն,  
 Ըյս է քեզ տուած երգումս. դու լինիս էն մաքուր Աոյսն՝  
 Ինձանից մի՛ հեռանալ, որ քեզ հետ միշտ խօսալ եմ ուզում:  
 Ինչպի հեզ ես, որ անունդ ես դրել գառն Ըստուծոյ,  
 Երբ որ դու իմ մօտումս չես, մին մարմին եմ առանց հոգւոյ,  
 Միշտ լինիս դու ընդ հօվանեաւ շօր, Որդւոյ և շոգւոյն Սրբոյ,  
 Որքան անուանի սուրբեր կայ՝ նրանք լինին պահպան քոյ,  
 Սէյեայդն եմ, այս է մուրադս. ո՛չ դովալթ, ո՛չ մալ եմ ուզում:

Գեորգ 8եր-Յովսէֆեան Մագաթեանց:

Գ.

Ննջէ՛ ո՛վ իմ սիրուն մանկիկ,

Ննջէ տեսնեմ դու մըջիկ

Ընոյշ անոյշ ննջէ հանգարտ,

Շանգստացիր քիչ մը արգ:

(Ր օր ասեմ քեզ որդեկիս,

Շատ օր տեսնես, շատ ապրիս,

(Ր օր ասեմ ազուոր տըղուս,

(Րեր մաղթեմ սիրելոյս,

(Ր օր ասեմ մատաղ մանկանս,

Որ ունենայ երկար կեանս:

Ըհ, երբ բզքեզ պիտի տեսնեմ,

Օերդ մէկ տըղեկ գեղադէմ

Գնալ, վազել ու վազվողել:

Շասակակցացդ հետ խօսել:

(Ր օր օր օր իմ տատրակիս,

(Ր օր ասեմ զաւակիս.

(Ր օր օր օր իմ գեղեցիկդ,

Վեզ, իմ հոգւոյդ հոտորիդ,

(Րեր մաղթեմ բոլոր սրտով,

(Ր օր ասեմ խնդումով:

Եւ երբ լինիս հսկայ կտրիճ,  
 Լինելու շես խարդախիչ  
 շայոց ազգին, մեր հայրենեաց,  
 շայերու բարեկամաց:

(Օրեր, օրեր քեզ շատ մաղթեմ  
 Որ՝ շայրենիք մեր վսեմ,  
 Վեղածիծաղ ժպտաներոյն  
 Եւ իւր օրհնեալ անունով,  
 Ըրծարծէ յիս բարի յոյսեր,  
 Ու ի քեզ էլ լաւ զգացումներ:

Եայց նաև պէտք է հեռանաս  
 Ըն գործերէն ազգաջնաս,  
 Որք ազգամուհ հոշակեն զմարդ,  
 Վան ազգասէր ոք հանդարտ:

(Օրեր մաղթեմ քեզ Մատուծոյ,  
 Վեզ, իմ օրդւոյդ միայնոյ,  
 Խարտեշագեղ գանդրամազիդ,  
 շրեշտականման իմ զաւկիդ:  
 (Օր օր օր օր օր օր օր օր,  
 Հայս զօրէ ձայն քոյոյ մօր:

Ըպա թէ որ այսց հակառակ  
 Շարժիս ՚ի գործսրդ, օրդեակ,  
 Վիտնաս որ ես էլ մայրըդ շեմ,  
 Ու օրհնելու տեղ կ'անիծեմ:

(Օր օր օր օր հարազատիդ,  
 (Օրեր մաղթեմ միածնիդ:  
 Կը պաղատիմ ես Տիրոջմէն,  
 Որ այս մտածմունքս փուճն ելլեն:  
 Եւ քեզ սիրոյդ զոր ես ծնայ,  
 Պահապան ինքը կենայ:

Միթէ այն օրն տեսնեմ պիտի,  
 Որ ծերութիւնս քեւ սփոփի.  
 Եւ երբ ազէկ մը ծերանամ,  
 Ըզքեզ նեցուկ ունենամ:

( ) ր օր ասեմ, օր օր օր օր,  
 Որ շնորհէ Հայրն երկնաւոր,  
 ( ) ր եր մաղթեմ որ շատնայ օրդ,  
 Հետոյ նեցուկ լինիս մօրդ,  
 Որ այն օրեր շատ շատ օր, օր  
 Մաղթեմ քեզի բոլոր օր:

Ը. ԳՆՈՆԻ:

Վ.

ԱՂԱՍԻ ԽՕՐ ԵՐԳԸ:

Օ, արթիր, մանուկ իմ նազելի, բաց այդ պայծառ աչերը,  
 Թերթերունքէդ քունը թօթուէ, գիրկը հանգիր քու մօրը,  
 Ինչ քեզ որքան բարի հրեշտակք հեքաթ ասին երազում,  
 Լո՛ւթմ' արի քեզ այն պատմեմ, ինչ պիտ' տեսնես աշխարում:

Օ, արթիր, որդեակ, քանի՛ քընես,  
 Ինչ աչերըդ այդ նաշխուն,  
 Ուր որ մայրըդ իւր բաղդ, փառքը,  
 Կեանք ու արևն է տեսնում:

Ղու՛ն կըմեծանաս, բոյ կըքաշես— չինար բոյիդ ես ղուրբան,  
 Վե՛զ ուժ կուտան Մասսի քաջքը, որ դու լինիս քաջ Արդան,  
 Իմ մատներով մի ոսկեթել մէջքիդ գոտի եմ կարել,  
 Գօտիիցըդ թուր կըկապեմ, այն էլ ինքս եմ սրբել:

Օ, արթիր, որդեակ, քանի՛ քընես,  
 Ինչ աչերըդ այդ նաշխուն,  
 Ուր որ մայրըդ իւր բաղդ, փառքը,  
 Կեանք ու արևն է տեսնում:

Մեր բակումը ձի է կայնած՝ քեզ է մընում անհամբեր,  
 Օ, արթիր, որդեակ, քանի՛ քընես, ա՛ռ քու թուրը մահաբեր,  
 Վու՛ Հայ ազգը հեծեծում է, ձեռքը, ոտքը շղթայած,  
 Վու՛ եղբարքը գերութեան մէջ... քաջ, միայն դո՛ւ ես քընած...

Օ, արթիր, որդեակ, քանի՛ քընես,  
 Ինչ աչերդ այդ նաշխուն,

Աւր որ մայրըդ իւր բաղդ, փառքը  
 Կեանք ու արեւն է տեսնում:

Չէ, իմ որդին շուտ կըզարթի, ձին կըհեծնէ սանձակոծ,  
 չայի արցունքը կըսրբէ, կըզազրացնէ լաց ու կոծ:  
 Չայ եղբայրներ, քիչ էլ կացէք, իմ Աղասին զարթեցաւ,  
 Վօտին կապեց, թուրը կախեց ու իր նըժոյգ ձին նըստաւ:

Ռաֆայէլ Տեր-Գաբրիէլեան Պատկանեան:

## ԱՂԻԻՍԱԿ ՊԱՐԶ ՏՈԿՈՍԻ:

Որ և իցէ փոխ տուած ստակի (կամ գրամի) գործածութեանը համար վճարելի փոխարինութիւնը (այսինքն փոխարէնը տալը կամ ստանալը) կասուի տոկոս կամ շահ:

Փոխ տուած ստակը (գրամը), որոյ համար շահը կը վճարուի, կասուի գրամագլուխ:

Վարամագլուխը և տոկոսը ի միասին կասուին գումար:

Վարամագլուխ տալու ժամանակը նշանակուածն, թէ ինչ ժամանակուամբ և որքան պէտք է լինի շահն: Օրօր օրինակ, եթէ կասեն թէ հարիւր մանէթին ամիսը 50 կոպէկ (կամ  $\frac{1}{2}$  մանէթ), կամ 70 կոպէկ (կամ  $\frac{2}{3}$  մանէթ), կամ 1 մանէթ շահ պէտք է լինի, 50 կ. (կամ  $\frac{1}{2}$  մ.), 70 կ. (կամ  $\frac{2}{3}$  մ.) և 1 մանէթը կը լինին շահի սակը: Կամ ասուածն, հարիւրին 3, հարիւրին 4, հարիւրին 7 և այլն, այս 3, 4, 7 և այլն, կ'լինին շահի սակը:

Տօկոսը լինումէ երկու տեսակ, պարզ (կամ հասարակ) և բաղադրեալ:

Պարզ տոկոսն (շահն) գրամագլխի միայն պարզ շահն է; իսկ եթէ պայման կը լինի, որ գրամագլխի շահը, որոշեալ ժամանակից ետոյ, միաւորվի գրամագլխի (մայր գումարի) հետ միասին և ետոյ նորիցը շահ տայ, այսինքն շահին շահ (կամ տոկոսին տոկոս), այդ կը լինի բաղադրեալ տոկոս:

Թէպէտ մեր առաջարկած տոկոսի աղիւսակը միմիայն պարզ տոկոսի համար է, բայց մենք ցոյց կը տանք թէ ինչպէս հաշուել (համարել) բաղադրեալ շահը ևս:

Մյս աղիւսակի տպագրելու նպատակն այն է, որ գիւրութեամբ (հեշտութեամբ) կարելի լինի գտանել որ և իցէ գրամագլխների շահը, որ և իցէ ժամանակի համար, գործ ածելով միմիայն հասարակ թուարանական յաւելումն (օլոթէնիէ), կամ հասարակ սչօտի վերայ (համարելու մեքենայ, համարիչ) գցելով:



Շահը համարելիս սովորաբար.

- ա) Տարին ընդունուած է հաւասար 360 աւուր, թէպէտ նա ունի 365 կամ 366 օր.
- բ) Տարուա ամէն մէկ ամիսը ընդունուած է հաւասար 30 օրին, թէպէտ ամիսները ունին 28, 29, 30 և 31 օր: Այսպէս, ամիսը համարելով 30 օր, տարին, այսինքն տասն և երկու ամիսը կը լինի 360 օր.
- գ) Շահը համարելիս, կոտորակները (գրօր) կէս կոպէկի կիսից պակասը չէ հաշուած (թողած է), իսկ կէս և առաւել կոպէկները հաշուած են:

Աղիւսակի մէջ սոկոսի հաշիւը սկսուած է մէկ մանէթ դրամագլխից սկսուած մինչև մէկ միլիօն և ցոյց է տուած նոցա շահը, մէկ օրից սկսած մինչև մէկ տարին: Այժմէ կամենայ ոք իմանալ երկու, երեք և այլն, տարեքանց շահը, կամ շահով աճիլը, կարող է վեր առնել մէկ տարուայ շահը երկու, երեք և այլն անգամ, եթէ շահը պարզ շահ է:

